Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ..... 131

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....150

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 153

Պաշտոնական դրամաշնորհներ..... 177

Այլ եկամուտներ 179

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....183

Տնտեսագիտական դասակարգում 184

Ծրագրային դասակարգում 188

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 403

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....410

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....411

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....412

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....413

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....414

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ.....871

«ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 1515-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների՝ հավելված N 11).....1519

«ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 1515-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ըստ ծրագրերի միջոցառումները կատարող պետական կառավարման մարմինների՝ հավելված N 11.1).....2365

2019 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտ

Ռազմավարական պլանավորում

Տնտեսության կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործման համար ՀՀ կառավարությունը մշակել է Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների, Արդյունաբերության զարգացման հնգամյա, Գործարար միջավայրի բարելավման, ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման, Հայաստանի զբոսաշրջության զարգացման 2020-2030թթ. ռազմավարական փաստաթղթերը: Պատրաստվել է նաև չափագիտության ոլորտի արդիականացման ռազմավարական ծրագիրը:

2019 թվականի ընթացքում ընդունվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը: Մշակվել են օրենքից բխող կարգավորումները: ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել նաև օրենսդրական փոփոխություններ՝ չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքների իրացման կամ դրոշմավորման կանոնների խախտումները ապաքրեականացնելու վերաբերյալ:

ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի հետ համատեղ աշխատանքների արդյունքում հրապարակվել է Հայաստանի ներդրումային քաղաքականության զեկույցը, որում դրական է գնահատվել Հայաստանի ներդրումային օրենսդրությունը, նշվել է մեկնարկած բարեփոխումների և համապատասխան մարմինների ինստիտուցիոնալ զարգացման շարունակականության անհրաժեշտության մասին, կատարվել են առաջարկություններ ներդրումների ու արտահանման լուրջ ներուժ ունեցող մի շարք ոլորտների զարգացման վերաբերյալ:

Արդյունաբերություն ու փոքր և միջին ձեռներեցության աջակցություն

2019 թվականի ընթացքում հավանության են արժանացել արդյունաբերության տարբեր ճյուղերում իրականացվող 57 ծրագրեր, որոնց իրականացման տևողությունը 3-5 տարի է, իսկ ընդհանուր արժեքը կազմել է 212 մլրդ ՀՀ դրամ: Այդ ծրագրերի գծով տրամադրվել են 14.8 մլրդ դրամի մաքսատուրքից ազատման արտոնություններ: Իսկ 13 ծրագրերի տրվել են նաև ավելացված արժեքի հարկը հետաձգելու արտոնություններ (ծրագրերի տևողությունը 3-5 տարի է), որոնց ընդհանուր գումարը կազմել է 10.1 մլրդ դրամ: Ծրագրերի շրջանակներում նախատեսված է ստեղծել 3320 աշխատատեղ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ հայկական ընկերությունները մասնակցել են 5 միջազգային ոլորտային ցուցահանդեսների՝ կենցաղային տեխնիկայի, սննդի վերամշակման, կոշիկի արտադրության, ոսկերչության ոլորտներում: Արդյունքում կնքվել են շուրջ 371.4 մլն ՀՀ դրամի չափով արտահանման պայմանագրեր: Հայաստանն ազգային տաղավարով մասնակցել է նաև Չինաստանի Շանհայ քաղաքում կազմակերպված Չինաստանի ներմուծման միջազգային 2-րդ ցուցահանդեսին, ինչպես նաև Պեկին ԷՔՍՊՈ-2019 այգեգործական համաշխարհային ցուցահանդեսին, որտեղ հայկական տաղավարը նվաճել է Պեկինի համաշխարհային ցուցահանդեսի ոսկե մեդալը: Հայկական գինեգործական 30 ընկերություններ ազգային միասնական տաղավարով մասնակցել են 9 միջազգային հեղինակավոր ցուցահանդեսի, ինչի արդյունքում ամրագրվել է արտահանման 200 նախնական պայմանավորվածություն:

Փոքր և միջին ձեռներեցներին օժանդակության նպատակով ստեղծվել է բիզնեսի պլանավորման, մեկնարկի, կառավարման ու ընդլայնման տեղեկատվական և խորհրդատվական առցանց հարթակ (www.isc.am): Ներդրումների աջակցման կենտրոնի «Հաջող սկիզբ» ծրագրին մասնակցել են 364 սկսնակ գործարարներ: Արդյունքում 238-ը մշակել են իրատեսական գործարար ծրագրեր, իսկ 159-ը ներկայացվել են ֆինանսական աջակցության: Ծրագրի օժանդակությամբ 2019 թվականի ընթացքում ստեղծվել են 82 նոր ՓՄՁ սուբյեկտներ: Գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ համատեղ մշակվել է սկսնակ գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրման նոր մեխանիզմ, որը նպաստելու է տրամադրվող վարկային երաշխավորությունների սահմանաչափի մինչև 7 մլն ՀՀ դրամ ավելացմանը:

2019 թվականի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նախաձեռնել և անցկացրել է արտադրող և արտահանող կազմակերպությունների հետ ճյուղային քննարկումներ՝ 12 ոլորտ ներկայացնող խմբերով, վեր հանել ոլորտային խնդիրները, կազմել խնդիրների լուծման ճանապարհային քարտեզ, և ներառված խնդիրներին տրվում են լուծումներ, մասնավորապես, օրենսդրական փոփոխությունների և վարչարարական խնդիրների պարզեցման տեսքով և այլն, որոնց վերաբերյալ պարբերական տեղեկատվություն է ներկայացվում Կառավարություն:

Արտաքին առևտուր, միջազգային համագործակցություն

2019 թվականի ընթացքում, Եվրոպական Միության «GSP+» (Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ) արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո արտահանումներ իրականացնելու նպատակով, որը հնարավորություն է տալիս արտահանումները դեպի Եվրամիության երկրներ իրականացնել առավել պարզեցված տարբերակով, REX (Գրանցված արտահանողների համակարգ) ապրանքների ծագման հավաստագրման համակարգում գրանցվել է

135 կազմակերպություն, ինչը հնարավորություն է ընձեռում տեղական ընկերություններին մեկ անգամ գրանցվելով համակարգում՝ իրենց ապրանքներն արտահանել ԵՄ երկրներ՝ օգտվելով Հայաստանի Հանրապետության համար նախատեսված արտոնություններից՝ առանց յուրաքանչյուր խմբաքանակի համար ծագման հավաստագրի ստացման: 2019 թվականի հոկտեմբերին Բրյուսելում տեղի են ունեցել ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի երկրորդ նիստը և ՀՀ-ԵՄ Աշխարհագրական նշումների ենթակոմիտեի առաջին նիստը. քննարկվել են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի Առևտրի և առևտրին առնչվող հարցերի շրջանակում ճանապարհային քարտեզների իրականացումը, ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր, ինչպես նաև աշխարհագրական նշումների օրենսդրությանն առնչվող այլ հարցեր:

Ստորագրվել են Եվրասիական տնտեսական միության և Սինգապուրի միջև ազատ առևտրի, ինչպես նաև ծառայությունների, առևտրի և ներդրումների մասին համաձայնագրերը: 2019 թվականի հոկտեմբերին ուժի մեջ է մտել նաև ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը: Հոկտեմբերից ուժի մեջ է նաև ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր համաձայնագիրը, որով նախատեսված է ԻԻՀ սակագնային պարտավորությունների նվազեցում մինչև գործող մաքսատուրքերի 75%-ի չափով: 2019 թվականի հոկտեմբերին Եվրասիական միջկառավարական խորհրդի շրջանակներում ստորագրվել է ԵԱՏՄ անդամ երկրների և Սերբիայի միջև ազատ առևտրի գոտու մասին համաձայնագիրը:

Զբոսաշրջություն

2019 թվականին շարունակվել են աշխատանքներն աշխարհում Հայաստանի ճանաչելիության, գրավչության բարձրացման և զբոսաշրջային վայրերի բարեկարգման ուղղությամբ: Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են 6 մարզերում զբոսաշրջային հիմանական ուղղություններ տանող ճանապարհների կամ զբոսաշրջավայրերին հարակից ենթակառուցվածքների նորոգման աշխատանքներ: ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ ՀՀ մարզերում կազմակերպվել է 5 ավանդական փառատոն, ապահովվել է Հայաստանի պաշտոնական տաղավարի առկայությունը միջազգային 4 հեղինակավոր ցուցահանդեսներին, նաև Հայաստան են հրավիրվել ավելի քան 50 ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգերներ տարբեր թիրախային շուկաներից: Մասնավորապես, հրավիրվել են երկրի համար թիրախային շուկաներ համարվող երկրների լրատվամիջոցների ներկայացուցիչներ, որոնք տարբեր լրատվամիջոցներով ներկայացրել են Հայաստանի

զբոսաշրջային գրավչությունները, ինչի արդյունքում արձանագրվել է նշված երկրներից զբոսաշրջիկների թվի աճ:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային կառավարման բնագավառ

2019 թվականի նոյեմբերի 14-ին ընդունվել է «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը: Օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումներով, ինչպես նաև մարզերում պետական կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնարար իրավական ակտի բացակայությամբ:

Օրենքով նկարագրվել են մարզպետների լիազորությունները, վերջիններիս հարաբերությունները պետական կառավարման համակարգի այլ մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ, նկարագրվել են բնագավառում լիազորված մարմնի լիազորությունները և այլն:

ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 3,657,994.3 հազ դրամ՝ 192 ծրագրերի իրականացման նպատակով: Հատկացված գումարները հիմնականում ուղղվել են դպրոցների ջեռուցման, հիմնանորոգման, բազմաբնակարան շենքերի տանիքների, ջրագծերի վերանորոգման, ինչպես նաև համանման այլ ծրագրերի իրականացման համար: Ընդ որում, ի տարբերություն նախորդ տարիներին իրականացված ծրագրերի՝ այս անգամ ծրագրերն իրականացվում են համայնքների կողմից ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Նշվածից բացի, մի շարք համայնքների կողմից ծրագրերի իրականացման համար կատարվել են նաև համապատասխան չափով համաֆինանսավորումներ՝ կախված համայնքային բյուջեի հնարավորություններից: Արդեն ավարտվել են թվով 145 ծրագրերի շինարարական աշխատանքները, 28 ծրագրերի շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան դրույթների կատարումը ապահովելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով հաստատվել է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2019 թվականի աշխատանքային ծրագիրը: 2019 թվականին մարզպետների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն 186 համայնքներում: Համայնքներում

հայտնաբերված այն խախտումները, որոնցում առերևույթ առկա են ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցագործության հատկանիշներ, ներկայացվել են իրավապահ մարմիններին:

ՀՀ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով 2019 թվականին իրականացվել է համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացը: Գործընթացի շրջանակներում 2019 թվականին ՀՀ համայնքներից ներկայացվել է 518 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթ, որոնք քննարկվել են ՀՀ Վարչապետի որոշմամբ ստեղծված՝ սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի 8 նիստերում: Հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել թվով 483 սուբվենցիայի ծրագրային հայտ: ՀՀ կառավարության թվով 17 համապատասխան որոշումներով հաստատվել են ՀՀ պետական բյուջեից 9,597 մլրդ դրամի չափով հատկացման վերաբերյալ որոշումները, որոնցով ապահովվել են 462 սուբվենցիոն ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման հատկացումները:

Միաժամանակ, համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1935-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով հստակեցվել են հավանության արժանացած ծրագրերի իրականացման քայլերը, դրանց իրականացման ընթացքում որակի և ծավալների նկատմամբ հսկողության և մշտադիտարկման մեխանիզմները, սուբվենցիայի ծրագրով մասնավոր ներդրողների մասնակցության ներգրավման համար խթանիչ միջոցների կիրառումը և այլն:

Դրա հետ մեկտեղ, Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 24-ի N 1910-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին համայնքների հետ կնքված սուբվենցիայի տրամադրման մասին պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» N 1910-Ա որոշումը, որով թույլատրվում է 2019 թվականին սկսած, սակայն եղանակային պատճառներով չավարտված և/կամ առկա շինարարական թերությունների վերացման համար թվով 148 սուբվենցիոն ծրագրերի պայմանագրերի ժամկետները երկարաձգել մինչև 2020 թվականի օգոստոսի 1-ը:

Վերոհիշյալ սուբվենցիոն ծրագրերն ուղղված են համայնքներում կապիտալ ներդրումներին, մասնավորապես՝ համայնքներում փողոցների, այգիների, պուրակների, խաղահրապարակների բարեկարգմանը, համայնքային շենքերի, մշակութային տների, մանկապարտեզների, հանդիսությունների սրահների կառուցմանն ու նորոգմանը, խմելու, կոյուղու, ոռոգման ջրագծերի

կառուցմանն ու նորոգմանը, գիշերային լուսավորության անցկացմանը, գազաֆիկացմանը, բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության տարրերի վերանորոգմանը, գյուղատնտեսական և կոմունալ ծառայությունների համար մեքենասարքավորումների ձեռքբերմանը:

Դպրոցների սեյսմակայունության բարձրացման նպատակով Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվել է «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը»: Ծրագրի շրջանակներում դպրոցաշինության ընթացքում ի հայտ եկած խնդիրների՝ մասնավորապես դպրոցների տարածքներում հայտնաբերված հնագիտական գտածոների, դպրոցների տարածքներում առկա ենթակայանների, այլ գործունեություն վարող տնտեսավարողների, դպրոցի շենք-շինությունների քանդման աշխատանքների կարգավորման և այլ խնդիրների լուծման նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին» 2019 թվականի մայիսի 23-ի թիվ 635-Ա որոշումը: Ավարտվել են Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 և Վանաձորի Ա. Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոցների կառուցապատման աշխատանքները: Նշված դպրոցներն անհրաժեշտ գույքով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1463-Ն որոշմամբ հաստատվել է կառուցված երկու դպրոցների գույքի ձեռքբերման համար 58,489 մլն դրամ հատկացնելու վերաբերյալ որոշումը:

Կոշտ կենցաղային թափոնների կառավարման և աղբահանության գործընթացի կարգավորման բնագավառում ՀՀ ԱԺ պատգամավորների հետ մշակվել են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու» և «Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք հավանության են արժանացել ՀՀ ԱԺ-ի կողմից: Օրենսդրական փաթեթով կանոնակարգվել են տնտեսավարող սուբյեկտների հետ աղբահանության ծառայությունների մատուցման իրավահարաբերությունները, և հստակեցվել են աղբահանության սակագները:

Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի բարելավման նպատակով Կառավարությունը միջոցներ է ձեռնարկել հանրապետության բոլոր բնակավայրերն աղբահանության համակարգում ընդգրկելու, աղբահանության արդյունավետ և ինքնածախսածածկող սխեմաների մշակման ու ներդրման, աղբահանության վարձերի վճարման տոկոսի բարձրացման, իրավաբանական անձանց հետ

աղբահանության պայմանագրերի կնքման ու դրույքաչափերի հստակեցման, հանրապետության ողջ տարածքում առկա աղբանոցների գույքագրման ուղղությամբ: Ամսական կտրվածքով ՀՀ բոլոր բնակավայրերից ստացվել և վերլուծվել են աղբահանության եկամուտներն ու ծախսերը:

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Յակոբեան Հիմնադրամի» հետ համատեղ մշակվել է հանրապետության բնակավայրերում կոշտ կենցաղային թափոնների և աղբավայրերի տեղեկատվական բազայի ծրագրային միջոցը: 2019 թվականի օգոստոսին ՀՀ մարզերում և Երևանում կազմակերպվել են ՀՀ մարզպետարանների համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացներ, և տեղեկատվական բազան առցանց լրացվել է համայնքների և մարզպետարանների կողմից, և ներկայումս ընթանում են տեղեկատվության հստակեցման աշխատանքները: Տեղեկատվական բազան հասանելի կլինի 2020 թվականի 2-րդ եռամսյակում:

Մշակվել է Հանրապետության ողջ տարածքում աղբի քանակի և տեսակի ուսումնասիրություն իրականացնելու համար տեխնիկական առաջադրանքը, որի արդյունքներով ՀՀ վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1310-Ա որոշմամբ ստեղծված հանրապետական մակարդակով աղբահանման և աղբի մշակման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կողմից գնահատվել են հայտ ներկայացրած միջազգային 9 կազմակերպությունների առաջարկությունները, և ընտրվել է «ԼԼ Բոլագեն» շվեդական ընկերությունը: Համակարգվել են շվեդական ընկերության կողմից հանրապետության բոլոր մարզերում գոյացող աղբի քանակի և տեսակի վերաբերյալ ուսումնասիրության աշխատանքները: Ուսումնասիրության ավարտական հաշվետվությունը կներկայացվի 2020 թվականի 2-րդ եռամսյակում:

Մշակվել է հանրապետությունում աղբի վերամշակման պիրոլիզի և սինթեզ գազաֆիկացման մեթոդով կիրառելիության, այդ թվում՝ ինստիտուցիոնալ, օրենսդրական դաշտի և բնապահպանական ազդեցությունների գնահատման և ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ համապատասխան փորձագետների կողմից իրականացվել են նշված ուսումնասիրության աշխատանքները: Ուսումնասիրության արդյունքներով ավարտական հաշվետվությունը 2019 թվականի սեպտեմբեր ամսին ներկայացվել է բոլոր շահագրգիռ մարմիններին և հրապարակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում:

Մշակվել է «Աղբահանության համակարգի ռազմավարությունը», որի ընդունմամբ ակնկալվում է ներդնել հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման և անվտանգ հեռացման կամ օգտահանման ու վերամշակման կայուն համակարգ՝ նպատակաուղղված բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբաթափության բացասական և վտանգավոր

ներգործության նվազեցմանն ու չեզոքացմանը, միևնույն ժամանակ թափոնների առավելագույնս օգտագործմանը՝ որպես երկրորդային ռեսուրս:

Իրականացման փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված միջազգային համաձայնագրի համաձայն «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշների ստանդարտներին համապատասխան սանիտարական աղբավայր և ներդնել աղբահանության արդյունավետ համակարգ: Ծրագրի շրջանակներում մշակվել և Բանկի կողմից հավանության է արժանացել Հրազդան համայնքի տարածքում սանիտարական աղբավայրի, ինչպես նաև Ակունք, Աբովյան և Մարտունի համայնքներում փոխաբեռնման կայանների կառուցման համար շինարարական կազմակերպության ընտրության միջազգային մրցութային փաթեթը: Միջազգային մրցույթը հայտարարվել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին, հայտերի ընդունման վերջնաժամկետ էր սահմանվել 2020 թվականի հունվարի 24-ը: Շինարարական կազմակերպության ընտրության համար հայտարարված մրցութային հայտերը բացվել են ս.թ. հունվարի 24-ին: Դիմել են 5 կազմակերպություններ (կոնսորցիումներ): Ներկայումս ընթանում է հայտերի գնահատման գործընթացը: Աղբավայրի և փոխաբեռնման կայանների շինարարության համար իրականացվում է ՇՄԱԳ փորձաքննություն: Արդեն իսկ իրականացվել է 2 հանրային լսում, և նախատեսվում է կազմակերպել 3-րդ հանրային լսումը:

Մշակվել և 2019 թվականի սեպտեմբերից փորձնական գործարկման փուլում է գտնվում ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակը (www.regions4growth.am), որով ներկայացվում են ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված՝ պետական աջակցությամբ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ / համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, ՀՀ տարածքների տնտեսական ակտիվությունը խթանելու, տեղական և օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով մարզային ներդրումային ծրագրերը, այդ թվում՝ ներդրումային համաժողովների շրջանակում ներկայացված, ՀՀ մարզերում առկա ռեսուրսների վերաբերյալ ամբողջական բազան: Հարթակը պաշտոնապես ներկայացվել է մարզպետարաններին, և վերջիններիս կողմից մարզերում իրականացվել են հարթակի ներկայացման/լուսաբանման աշխատանքները, հարթակի հղումը տեղադրվել է ՀՀ ՏԿԵՆ և մարզպետարանների պաշտոնական կայքերի ձախակողմյան հատվածում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում հիմնանորոգվելու է թվով տասը փողոց և ամբողջությամբ արդիականացվելու է քաղաքի արտաքին լուսավորության ցանցը: 2019 թվականին ամբողջությամբ

բարեկարգվել, հիմնանորոգվել, կահավորվել և արդիականացվել են թվով 9 քաղաքային փողոց՝ 12 կմ երկարությամբ, և 1 հրապարակ: Իրականացման ընթացքում են նաև ծրագրի բաղադրիչ հանդիսացող համայնքի ավտոկայանատեղերի կազմակերպման ռազմավարության և գործողությունների պլանի մշակման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած խնդիրների լուծման նպատակով ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ կապված նորոգվող և կառուցվող ճանապարհներում առկա էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ կոմունիկացիաների տեղափոխման կամ նորոգման խնդիրների հետ:

ՀՀ տարածքային աճի բևեռների զարգացման ընտրության նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Տարվա ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի՝ Ազգային քաղաքաշինական զարգացման գնահատումն իրականացնող խորհրդատվական խմբի հետ, որոնց շրջանակներում քննարկվել են «Կայուն քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի» շրջանակներում տարածքային աճի բևեռների ձևավորման գործընթացում ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները:

Տեղական ինքնակառավարման բնագավառ

Միավորված համայնքների ՏԻՄ-երի կողմից բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակի բարելավման և մատչելիության ընդլայնման նպատակով հաշվետու տարվա ընթացքում Կառավարությունը հանդես է եկել մի շարք օրենսդրական նախաձեռնություններով: Մասնավորապես՝ վարչատարածքային բարեփոխումների շրջանակում մշակվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերի համաձայն նախատեսվում է իրականացնել համայնքների միավորման 2 ծրագիր՝ ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո, Տավուշի մարզի Իջևան համայնքային փնջերում: Մշակվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծեր, ««Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր:

Հանրապետությունում շարունակվում են միավորված համայնքների աջակցության ծրագրերը, որոնց շրջանակներում միավորված համայնքներին, ըստ իրենց կարիքների, տրամադրվում է

անհրաժեշտ տեխնիկա և այլ աջակցություն: Մասնավորապես՝ 2019 թվականին ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ 13 միավորված համայնքների տրամադրվել է 19 միավոր կոմունալ և ինքնագնաց տեխնիկա: Այս ծրագրի շրջանակներում 18 միավորված համայնքների ընդհանուր առմամբ արդեն տրամադրվել է 171 միավոր կոմունալ ինքնագնաց և կցովի գյուղատնտեսական տեխնիկա:

Սոցիալական ներդրումների և Տեղական զարգացման ծրագրի 2-րդ բաղադրիչի 3 ծրագրերի շրջանակներում միավորված համայնքներին արդեն տրամադրվել է 20 միավոր տեխնիկա, ընթացիկ 12 ծրագրի ավարտին համայնքները ձեռք կբերեն ևս 57 միավոր տեխնիկա: Համայնքների աջակցության 22 ծրագիր գտնվում է նախնական և վերջնական փորձաքննության փուլերում, որոնց հաստատումից հետո միավորված համայնքներին կտրամադրվի լրացուցիչ 85 միավոր տեխնիկա: Նշենք, որ Տեղական զարգացման ծրագրի 2-րդ բաղադրիչն աջակցում է միջհամայնքային փոխհարաբերությունների ամրապնդմանը և համայնքներում համատեղ սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը:

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է Ալագյազ, Ծաղկահովիտ, Ախուրյան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Մեծավան, Սարչապետ, Տաշիր, Շնող, Ախթալա, Մեղրաձոր, Ճամբարակ, Շողակաթ, Գեղամասար և Վարդենիս (թվով՝ 15) միավորված բազմաբնակավայր համայնքներում: Այսպիսով, ներկայումս հանրապետությունում գործող բոլոր 52 միավորված համայնքներում շահագործվում է վերոնշյալ համակարգը, որը մեկ միասնական տեղեկատվական միջավայրում ներառելով նման համայնքների կենտրոնը և բնակավայրերը՝ հնարավորություն է տալիս ՏԻՄ-երի կողմից մատուցվող վարչական բնույթի ծառայությունները հավասարապես հասանելի դարձնել համայնքի ողջ տարածքում:

Տաշիր, Վարդենիս, Եղվարդ և Ծաղկահովիտ (թվով՝ 4) միավորված բազմաբնակավայր համայնքներում ստեղծվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ): Ստեղծման փուլում են Ակունք, Շնող, Բյուրեղավան և Ճամբարակ միավորված համայնքների սպասարկման գրասենյակները: Ներկայումս ՔՍԳ-ներ ունեն հանրապետության 45 համայնքներ: Միավորված 52 համայնքներից ՔՍԳ ունի 36-ը: Այս գրասենյակների շնորհիվ համայնքապետարանը հնարավորություն է ստանում «մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները:

Արխիվային գործ

Արխիվային պահպանությունում գտնվող արխիվային ֆոնդերի, փաստաթղթերի և նյութերի կազմի ու բովանդակության բացահայտման տեղեկատու-որոնողական միջոցների (այդ թվում՝ տվյալների էլեկտրոնային շտեմարանների) ստեղծման ու կատարելագործման, արխիվային փաստաթղթերի ու նյութերի վերականգնման և թվայնացման, բնօրինակ վավերագրական արժեքների ապահովագրական պատճենների ստեղծման բնագավառներում իրականացվել են շարունակական ծրագրավորված աշխատանքներ ու միջոցառումներ:

Միգրացիա

Միգրացիոն քաղաքականություն

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 6.7 բաժնով սահմանված առաջնահերթությունները հանդիսանում են միգրացիոն քաղաքականության առանցքը: Միգրացիոն ծառայության ջանքերն ուղղված են ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներով նախատեսված միգրացիայի և ապաստանի հիմնահարցերի լուծմանը:

Կարևոր խնդիրներից է համարվում միգրացիոն քաղաքականության շուրջ քաղաքական դիսկուրսը: Այս տեսանկյունից թեմատիկ քննարկումներ են ծավալվել պետական շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, ակադեմիական շրջանակների և անհատ փորձագետների հետ:

Միգրացիոն ծառայության ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ ՀՀ-ում օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ: Դրանց արդյունքում մշակվել է «Օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագրի» նախագիծը, որը հաստատվել է 18.03.2020թ. նախարարական կոմիտեի նիստում: Նախագիծը նախատեսվում է քննարկել նաև Թվայնացման հարցերի խորհրդում:

2019 թվականին Միգրացիոն ծառայությունը մասնակցություն է ունեցել 2020 թվականին Եվրոպական միության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համագործակցությամբ մեկնարկող նոր՝ «Տեղական դերակատարների հզորացում հանուն զարգացման» («Local Empowerment of Actors for Development (LEAD)» ծրագրի աշխատանքներին: Ծրագիրը նպատակ ունի ուղղորդել միգրանտների տնտեսական և մարդկային ներուժը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործին:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N44 արձանագրային որոշման, այն է՝ սկսած 2019 թվականից՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ, պատրաստել և հրապարակել Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլը, միգրացիոն ծառայության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 24-ին հրապարակվել է 2013-2017թթ. ՀՀ ընդլայնված միգրացիոն պրոֆիլը: Նույն որոշման շրջանակներում ընթացել են նաև ՀՀ ընդլայնված միգրացիոն պրոֆիլի 2018թ. և 2019թ. առկա ցուցանիշների հավաքման աշխատանքները:

Միգրացիոն ծառայության կողմից մշակվել և հրապարակվել է երեք մասերից կազմված «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր» պարբերականի 1-ին համարը և լրացուցիչ հատուկ թողարկում «ՀՀ-ում աշխատող օտարերկրացիների» վերաբերյալ:

Եռամսյա պարբերականությամբ թողարկվել են «Միգրացիոն տեղեկագրի» 23-րդ, 24-րդ և 25-րդ համարները:

Ամենամսյա պարբերականությամբ Անվտանգության խորհրդի գրասենյակ է ներկայացվել միգրացիայի ոլորտում անվտանգության սպառնալիքների վերաբերյալ պահանջվող ձևաչափով տեղեկատվություն:

Օտարերկրյա քաղաքացիներին ապաստանի տրամադրում

2019 թվականի ընթացքում ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով Միգրացիոն ծառայություն է դիմել 247 օտարերկրացի: Ապաստան ստանալու համար ամենամեծ թվով հայցերը ստացվել են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներից՝ 108-ը, Սիրիայից՝ 36-ը, Կուբայից՝ 33-ը, Իրաքից՝ 18-ը, Թուրքիայից՝ 8-ը, ՌԴ-ից՝ 7-ը, Պակիստանից՝ 7-ը, Հնդկաստանից՝ 4-ը, Վրաստանից՝ 3-ը, Ադրբեջանից՝ 3-ը, Եգիպտոսից՝ 3-ը, Եմենից՝ 2-ը, Ուկրաինայից՝ 2-ը, Բանգլադեշից՝ 2-ը, Լիբանանից՝ 2-ը, Աֆղանստանից՝ 2-ը, Կոնգոյից՝ 2-ը, ԱՄՆ-ից՝ 1-ը, Գվինեայից՝ 1-ը, Հորդանանից՝ 1-ը, Մարոկոյից՝ 1-ը, Բուլղարիայից՝ 1-ը:

Փախստական են ճանաչվել և ապաստան են ստացել 113-ը:

Ապաստան հայցողին փախստական չճանաչելու և ապաստանի տրամադրումը մերժելու մասին ծառայության 11 որոշում բողոքարկվել է ՀՀ վարչական դատարան: Նշված 11 հայցադիմումների վերաբերյալ Ծառայության կողմից ներկայացվել են առարկություններ:

«Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում տեղավորվել է 64 ապաստան հայցող օտարերկրացի:

Կազմակերպվել է ՀՀ-ում ապաստան հայցող՝ «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված 60 օտարերկրացիների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամական օգնության տրամադրում՝ բնակարան վարձակալելու համար:

Ապաստան հայցողների համար ապահովվել է 233 գրավոր և 359 բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում:

Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց տրվել է 172 տեղեկանք կարգավիճակի մասին՝ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներ ներկայացնելու և իրենց կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերի ժամկետը երկարաձգելու համար:

1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած անձինք

ՀՀ կառավարության կողմից 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատվել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը: 2005-2008 թվականների պետական բյուջեներով ծրագրի իրականացման համար նախատեսվել են համապատասխան գումարներ, ինչի արդյունքում 1065 ընտանիքներ ստացել են բնակարանի գնման վկայագրեր, որոնցից 718-ն իրացրել են այդ վկայագրերը՝ ձեռք բերելով բնակարաններ: 2009 թվականից հետո ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեում գումարներ չեն նախատեսվել:

Ըստ 2013 թվականին իրականացված հաշվառման տվյալների՝ վերոգրյալ առաջնահերթ ծրագրի շրջանակներում 895 ընտանիքներ, որից 641-ը՝ Երևան քաղաքում և 254-ը՝ մարզերում, համարվել են առաջնահերթ կարիքավորներ:

Ծրագրի շահառուների թիվը ճշգրտելու նպատակով ծառայությունը 2019 թվականին նախաձեռնել է ուսումնասիրություններ:

Հաշվի առնելով պահանջվող ֆինանսական միջոցների բավականաչափ մեծ ծավալը՝ նպատակահարմար է համարվել փախստականների բնակարանային ապահովության խնդիրը լուծել ոչ թե մեկ ընդհանուր ծրագրի շրջանակներում, այլ այն տարանջատել ըստ առաջնահերթության և փուլերի՝ մշակելով առանձին համապատասխան ենթածրագրեր, որոնց լուծումն ավելի իրատեսական է:

Հիմք ընդունելով վերահիշյալը՝ 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» թիվ 1666-Ն որոշումը, որն ուղղված է լուծելու Երևան քաղաքի 5 վարչական շրջաններում բնակվող առաջնահերթ ծրագրի շահառու հանդիսացող՝ Ադրբեջանից բռնագաղթած կարիքավոր 112 ընտանիքների խնդիրը:

Փախստականներին հանրակացարաններում բնակեցնելու և ոչ բնակելի տարածքներ հատկացնելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 3-ի N 21-Լ հրամանով ծառայությունում ստեղծվել է նոր հանձնաժողով: 2019 թվականի ընթացքում ծառայությունը խնդրի առնչությամբ ստացել է 62 դիմում: Կայացել է նշված հանձնաժողովի 7 նիստ, և արդյունքում հատկացվել է 5 հանրակացարանային սենյակ, 3 ոչ բնակելի տարածք:

2019 թվականի ընթացքում ՄԾ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի սպասարկման ենթակա Մոլդովական 29/1 հասցեի ինտեգրման կենտրոնում հատկացվել են ուղեգրեր 21 ընտանիքների, Արարատի մարզի Դարբնիկ համայնքի նախկին գյուղատնտեսական քոլեջի մասնաշենքում սոցիալական բնակարաններ են հատկացվել 5 ընտանիքի:

ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրում

2017 թվականի փետրվարի 23-ի թիվ 8 անձնագրային որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2016 թվականի հուլիսի 21-ի նիստի թիվ 28 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգ»-ի իրականացմանն ուղղված գործողությունների ծրագիրը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց ինտեգրումն ապահովելու համար վերոնշյալ փաստաթղթերը նախատեսում են 3 հիմնական գործողություն՝ հայոց լեզվի դասընթացների կազմակերպում, քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում, ժամանակավոր կացարանի տրամադրում:

2019 թվականին իրականացվել է 30 նոր ճանաչված փախստականների կարիքների գնահատում և անհատական ինտեգրման պլանների կազմում:

Ժամանակավոր կացարանի տրամադրումն ինտեգրման հայեցակարգի երրորդ գլխավոր ուղղությունն է: Ժամանակավոր կացարանի տրամադրումն իրականացվում է առկա սոցիալական բնակարաններում տեղավորման, ինչպես նաև բնակարան վարձակալելու համար գումարի տրամադրմամբ: Փոխհատուցումը նախատեսված է 60 000 ՀՀ դրամի չափով՝ 9 ամսվա ընթացքում: Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում, 17 փախստական ընտանիքներ օգտվել են նշված ծրագրից:

Միգրացիոն ծառայությունը ձեռնամուխ է եղել ՀՀ-ում գտնվող հարկադիր տեղահանված անձանց ինտեգրման և Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման մեկ

միասնական ռազմավարության մշակման աշխատանքներին, այդ նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ և կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ: Ռազմավարության նախագիծը 22.02.2020թ. ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքներ ստանալու նպատակով: Ներկայումս ստացված կարծիքները գտնվում են ամփոփման փուլում:

Տեղի են ունեցել նաև 2 հանդիպումներ ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած ու բռնի տեղահանված այլ անձանց ինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների համագործակցության ֆորումի շրջանակներում:

Վերադարձ և վերաինտեգրում

Կազմակերպվել են Վերադարձի և վերաինտեգրման հարցերով ֆորումի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հանդիպումները, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստան վերադարձի և վերաինտեգրման հետ կապված խնդիրներ, դրանց լուծմանը միտված քայլեր, ոլորտի պետական քաղաքականության հետ կապված հարցեր: Ֆորումի յոթերորդ հանդիպման թեման «Հայաստանի Հանրապետությունում գտնվող հարկադիր տեղահանված անձանց ինտեգրման և Հայաստանի Հանրապետություն վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման քաղաքականության միասնական ռազմավարության» նախագծի ներկայացումն էր:

2019 թվականին մշակվել է «ՀՀ հարկադիր վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ծառայությունն ակտիվորեն մասնակցել է միգրացիայի հարցերով միջազգային համաձայնագրերի, մասնավորապես՝ հետընդունման (ռեադմիսիայի) մասին մի շարք միջպետական համաձայնագրերի նախապատրաստման և կնքման գործընթացներին: 2013 թվականի ապրիլի 19-ին «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում կիրարկման երկկողմ համաձայնագրեր են ստորագրվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Չեխիայի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության հետ:

Կիրարկման արձանագրությունների ստորագրման շուրջ քննարկումներն ընթացքի մեջ են Լեհաստանի Հանրապետության և Լատվիայի միջև:

Բացի այդ, մշակվել են երկկողմ ռեադմիսիոն համաձայնագրերի նախագծեր Իրանի Իսլամական Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության, Ուզբեկստանի

Հանրապետության և Ֆիլիպինների Հանրապետության հետ կնքելու նպատակով, որոնք դիվանագիտական ուղիներով ներկայացվել են համաձայնեցման:

2019 թվականի փետրվարից շահագործվող Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (ՌՀԿԷՀ) միջոցով ներկայումս հետընդունման հայցեր ստացվում են Գերմանիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Ավստրիայի և Ֆրանսիայի միգրացիոն հարցերով զբաղվող համապատասխան մարմինների ներկայացուցիչների կողմից: Նշված երկրներից ստացված հայցերի վարման ամբողջ գործընթացը տեղի է ունենում ՌՀԿԷՀ-ի միջոցով: ԵՄ անդամ երկրներից համակարգին միանալու գործընթացում է նաև Ռումինիան:

Միգրացիոն ծառայությունը ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ նախաձեռնել է «ՀՀ քաղաքացի պոտենցիալ աշխատանքային միգրանտներին կողմնորոշման, ինչպես նաև ՀՀ-ում աշխատող օտարերկրացիներին իրավական խորհրդատվության տրամադրում» ծրագիրը, որի շրջանակում մշակվել են հինգ առանձին գործողությունների ծրագրեր: Գործողությունների ծրագրերից գործարկվել է դեռևս մեկը՝ «Անօրինական միգրացիայի կանխարգելմանն ուղղված արշավ՝ Հայաստանից դեպի ԵՄ երկրներ»: Դրա շրջանակում Միգրացիայի միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ նկարահանվել են վերաինտեգրման հաջողության պատմություններ՝ աշխարհի տարբեր երկրներից կամավոր Հայաստան վերադարձած, հաջողությամբ վերաինտեգրված ու տնտեսական գործունեություն ծավալող ՀՀ քաղաքացիների մասին:

Գյուղատնտեսություն

2019 թվականի ընթացքում մեկնարկել կամ անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվել գյուղատնտեսության զարգացման պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմքում դրված է գյուղատնտեսական գործունեության արդյունավետության, գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսությունում տնտեսավարողի ֆինանսական բեռի թեթևացումը: 2019 թվականի ընթացքում գյուղատնտեսության աջակցության տարբեր ծրագրերի շրջանակում տրամադրվել է 5.5 մլրդ ՀՀ դրամ: 2019 թվականին գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շահառուների թիվը կազմել է շուրջ 9300՝ ընդհանուր առմամբ տնտեսավարողների կողմից պետական աջակցության ծրագրերի օժանդակությամբ կատարվել է շուրջ 43 մլրդ դրամի ներդրում: 2018 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ շահառուների թիվն ավելացել է ավելի քան 1.6 անգամ, իսկ ներդրումները՝ շուրջ 1.8 անգամ:

2019 թվականին մեկնարկել է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացումը: Հայաստանում գյուղատնտեսական հողերի չօգտագործման խնդիրը լուծելու նպատակով «Հողերի գլոբալ գործընկերության 2-րդ փուլի շրջանակներում իրականացվող հողերի կայուն կառավարման խթանմանը աջակցություն» ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության ու ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև ստորագրվել է ծրագրային փաստաթուղթ, որի մեկնարկը նախատեսվում է 2020 թվականին:

Էներգետիկա

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն նպատակաուղղվել է ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, տեղական վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկ բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են՝ սեփական վերականգնվող էներգապաշարների տնտեսապես հիմնավորված պոտենցիալի իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի պահպանումը և զարգացումը, այդ թվում՝ գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված աշխատանքների իրականացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը և տարածաշրջանային էներգահամակարգերին ինտեգրումը:

Էլեկտրաէներգետիկայի և գազի ոլորտներ

Մշակվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախագիծը, որն անհրաժեշտ լրամշակումներից հետո 2020 թվականի ընթացքում կներկայացվի կառավարության քննարկմանը:

Շարունակվել են Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցման աշխատանքները:

Մշակվել և իրանական կողմի քննարկմանն են ներկայացվել մինչև 2040թ. գազ-էլեկտրաէներգիայի դիմաց նոր պայմանագրերի նախագծերը: Աշխատանքներ են տարվում դրանք հնարավոր սեղմ ժամկետում վերջնականացնելու և ստորագրման նախապատրաստելու նպատակով:

Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի, ենթակայանի և փոխակերպիչ կայանի կառուցման նպատակով 2020թ. առաջին կիսամյակում կհայտարարվի միջազգային մրցույթ:

Ավարտվել են Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի կառուցման և «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Երկու ենթակայաններն էլ դրվել են լարման տակ:

Հյուսիս-Հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան) նախաձեռնության իրականացման հետ կապված՝ շարունակվել են աշխատանքները նախագծի տեխնիկական մոդելավորման նպատակով: Նախաձեռնության իրագործման արդյունքում Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգը ձեռք կբերի լիովին նոր կարգավիճակ, կդառնա տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական հաբ, որը թույլ կտա էականորեն ավելացնել էլեկտրաէներգիայի տարանցման, փոխհոսքերի, արտահանման և ներմուծման ծավալները:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԲԸ-ին տրամադրվել է 254 ՄՎտ տեղակայվող հզորությամբ համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի լիցենզիա (կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թ. հոկտեմբերի 14-ը): Դրա համաձայն՝ սահմանված ժամկետներում Երևանի ՋԷԿ-ի տարածքում նախատեսվում է կառուցել համակցված շոգեգազային ցիկլով նոր էլեկտրակայան: Էներգետիկ համակարգը կհամալրվի նորագույն չափանիշներով արտադրող կայանով:

Մինչև 2030թ. ՀՀ գազամատակարարման և գազաֆիկացման գլխավոր սխեման վերջնականացնելու և հաստատելու նպատակով շարունակվել են աշխատանքները «Գազպրոմ Արմենիա» ընկերության հետ: Փաստաթուղթը հիմք է հանդիսանալու Հայաստանի գազամատակարարման, բաշխման, փոխադրման համակարգերի զարգացման, հուսալիության և անվտանգության բարձրացման նպատակով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող աշխատանքների, ծրագրերի և ներդրումների համար:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում և ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական և գազի շուկաներ

Շարունակվել են Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝

2019 թվականին մշակվել և ՀԾԿՀ-ի համապատասխան որոշումներով հաստատվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրի կանոնները, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրի կանոնները, հաղորդման ցանցային կանոնները, բաշխման ցանցային կանոնները, մեծածախ և մանրածախ շուկաների պայմանագրերի նոր օրինակելի ձևերը, որոնք ուժի մեջ են մտնելու 2021 թվականի փետրվարի 1-ից:

2019 թվականի մայիսի 29-ին ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին (եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման մասով)» արձանագրությունը, որը հիմք է հանդիսանում ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ստեղծման համար: Ընդհանուր շուկայի լիարժեք գործարկումը տեղի կունենա 2025 թվականին, երբ կվերջնականացվեն անհրաժեշտ իրավական և տեխնիկական կարգավորումները: Շարունակվել են ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորմանն ուղղված գործողությունների իրականացման պլանի, ճանապարհային քարտեզի, Էլեկտրաէներգիայի փոխադարձ առևտրի կանոնների, միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման կանոնակարգի, էլեկտրաէներգետիկայի բնագավառում բնական մենաշնորհների ծառայություններին միասնական մուտքի կանոնների մշակման աշխատանքները:

Շարունակվել են ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայի ձևավորմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես՝ ԵԱՏՄ շրջանակներում գազի մատակարարման և տեղափոխման բնագավառում անդամ պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցման, գազի ընդհանուր շուկայի տեղեկատվական փոխգործակցության փոխանակման մեխանիզմի ներդրման, գազի տեղափոխման սակագների ձևավորման, գազի իմիտացիոն բորսային առևտրի իրականացման աշխատանքները: ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայի գործարկումը նախատեսվում է 2025 թվականին:

Ատոմային էներգետիկա

2019 թվականի ընթացքում Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում շարունակվել են արդիականացման աշխատանքները, այդ թվում՝ Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ռեակտորի և 3-րդ տուրբոգեներատորի վերանորոգման ու արդիականացման, ինչպես նաև 4-րդ տուրբոգեներատորի արդիականացման աշխատանքները:

Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման և արդիականացման ծրագրի շրջանակներում շարունակվել են ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը և նախատեսված սարքերի ու սարքավորումների

մատակարարումները: Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին 2015 թվականի փետրվարի 5-ի համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների օգտագործման ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն է՝ հայկական կողմը նախաձեռել է համաձայնագրում համապատասխան փոփոխություններ վարկային միջոցների օգտագործման ժամկետը երկարացնելու նպատակով, որոնք դեռևս քննարկման փուլում են ռուսական կողմի հետ:

Վերականգնվող էներգետիկա

55 մՎտ հզորությամբ Մասրիկ-1 արևային կայանի կառուցման նպատակով 2019 թվականին անհրաժեշտ փոփոխություններ են նախապատրաստվել ՀՀ կառավարության և «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ի միջև կքնված համաձայնագրում, ծրագրի վերջնականացման և հնարավոր սեղմ ժամկետում կայանի կառուցման աշխատանքները մեկնարկելու նպատակով:

Գումարային 120 մՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային ևս 5 կայանների կառուցման ծրագրերի համար պատրաստ են նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորումները: Ծրագրերի իրականացման նպատակով 2020 թվականին կհայտարարվի միջազգային մրցույթ:

ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1922-Լ որոշմամբ հավանություն է տրվել «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրին, որի շրջանակներում ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզերի վարչական սահմաններում նախատեսվում է երկու փուլով իրականացնել 400 մՎտ արևային ֆոտովոլտային կայանների կառուցում:

01.01.2020թ. դրությամբ մինչև 500 կՎտ հզորություն ունեցող 1944 ինքնավար էներգաարտադրողներ (գումարային շուրջ 32.9 մՎտ հզորությամբ) կնքել են պայմանագրեր «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ, ևս 123 ինքնավար էներգաարտադրողներ (գումարային շուրջ 5.4 մՎտ հզորությամբ) ստացել են տեխնիկական պայմաններ:

01.01.2020թ. դրությամբ կառուցման փուլում են գտնվել մինչև 5 մՎտ դրվածքային հզորությամբ 31 արևային կայաններ՝ գումարային շուրջ 117.6 մՎտ դրվածքային հզորությամբ: Ըստ լիցենզիաների էլեկտրաէներգիա են արտադրում 12 արևային կայաններ՝ 10 մՎտ և 4 հողմային կայաններ՝ 4.23 մՎտ դրվածքային հզորությամբ: Կառուցման փուլում է գտնվում մեկ հողմային էլեկտրակայան՝ 4ՄՎտ հզորությամբ և 9.95 մլն կՎտժ տարեկան արտադրությամբ:

01.01.2020թ. դրությամբ տրված լիցենզիաների համաձայն էլեկտրաէներգիա են արտադրում 189 փոքր ՀԷԿ-եր՝ գումարային շուրջ 375 մՎտ դրվածքային հզորությամբ և տարեկան էլեկտրաէներգիայի շուրջ 973 մլն կՎտժ փաստացի միջին տարեկան օգտակար առաքմամբ: Կառուցման փուլում են գտնվում ևս 26 ՓՀԷԿ՝ նախագծային շուրջ 58 մՎտ գումարային հզորությամբ և 203.4 մլն կՎտժ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ, որոնց ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է շուրջ 24690 մլն ՀՀ դրամ:

2019 թվականին շարունակվել են Մեղրի ՀԷԿ-ի կառուցման նպատակով հնարավոր ներդրողներ ներգրավելու աշխատանքները:

Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է Ազգային ժողով, որը 2020 թվականի մարտի 25-ին ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Նպատակն է ՀՀ պետական գնումների շրջանակներում պետական կարիքների ապահովման նպատակով էներգասպառող սարքավորումների ձեռք բերմանը ներկայացվող նվազագույն էներգետիկ բնութագրերի պահանջները սահմանող կարգավորող շրջանակի ներդրումը:

Նախաձեռնվել է էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային նոր ծրագրի մշակման գործընթաց 2021-2030թթ. համար: ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից հայտարարվել է մրցույթ:

Վիճակագրական կոմիտեն 2019 թվականի փետրվարի 7-ին հրապարակել է ՀՀ 2017 թվականի էներգետիկ հաշվեկշիռը: ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվել է ՀՀ 2018 թվականի էներգետիկ հաշվեկշռի նախագիծը, որը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը:

ԵՏՀ խորհրդի կողմից 2019 թվականի օգոստոսի 8-ին ընդունվել է «Էներգասպառող սարքավորումների էներգաարդյունավետության պահանջների մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը, որով սահմանվել են թվով 18 անվանախումբ սարքավորումների համար (հեռուստացույցներ, սառնարաններ, օդորակիչներ, լվացքի և չորացնող մեքենաներ, լուսատուներ և այլ) էներգաարդյունավետության, էներգապիտակավորման, դրանց շուկայահանման միասնական պահանջներ, որոնք ուժի մեջ կմտնեն 2021 թվականի սեպտեմբեր ամսին:

Շարունակվել են «Բարձրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» և «Մայրուղային գազատարերով հեղուկ և գազանման ածխաջրածինների տեղափոխման վերաբերյալ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի նախագծերի քննարկման աշխատանքները:

ԵՄ EU4Energy ծրագրի շրջանակներում 2019 թվականին ճշգրտվել են տեխնիկական աջակցության ուղղությունները՝ մոտ զրո էներգասպառմամբ շենքերի ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներում, արդյունաբերական ձեռնարկություններում էներգաաուդիտի իրականացման ստանդարտի ներդրման գործընթացում, նոր կառուցվող բազմաբնակարան շենքերի և պետական միջոցների հաշվին կառուցվող օբյեկտների էներգաարդյունավետության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ընդունված ՀՀ կառավարության 12.04.2018թ. 426-Ն որոշմամբ) կիրարկումն ապահովող ստանդարտների և շենքերի էներգապիտակավորման ստանդարտի (ՀՍՏ 362-2013) հարմոնիզացիայի իրականացման գործընթացում: Ծրագրի ավարտը նախատեսվում է 2020 թվականի հունիս ամսին:

Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում մաքուր էներգիայի զարգացմանն աջակցելու ծրագրեր իրականացնելու նպատակով «Էներգաարդյունավետ» վարկային ծրագրի շրջանակներում 31.12.2019թ. դրությամբ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության (ՀՎԷԷ) հիմնադրամի կողմից վարկավորման համար դրական եզրակացություն է տրվել 3028 արևային ջրատաքացուցիչների և 131 արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրմանը: Վարկավորման գումարը կազմում է շուրջ 1.393 մլրդ ՀՀ դրամ:

Սուբվենցիոն ծրագրեր

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի շրջանակներում իրականացվել է 2018 թվականին կատարված աշխատանքների ուսումնասիրություն, և գնահատվել են Հայաստանի 47 բնակավայրերի արհեստական փողոցային լուսավորության արդիականացման և արևային ՖՎ համակարգերի տեղակայման սուբվենցիոն ծրագրերը:

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի շրջանակներում 2019 թվականին քննարկվել են 83 արհեստական փողոցային լուսավորության արդիականացման, արևային ՖՎ համակարգերի տեղակայման և գազաֆիկացման սուբվենցիոն ծրագրեր:

Ընդերքի բնագավառ

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2019 թվականին իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրներն են բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման, հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականության օրենսդրական նոր հենքի ստեղծման նպատակով ինստիտուցիոնալ համակարգի ուսումնասիրության իրականացումը և նախկինում իրականացված ախտորոշիչ ուսումնասիրությունների հիման վրա հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակումը:

2019 թվականին իրականացվող պետական քաղաքականությունը շարունակվել է հետևյալ ուղղություններով.

- միջազգային չափորոշիչներին համահունչ, հետախուզված և գնահատված ընդերքի պաշարների՝ սահմանված կարգով փորձաքննության ապահովումը,
- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,
- երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովումը,
- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում նոր հաշվառվող տվյալների թվայնացումը և հրապարակումը,
- ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմումը և հրապարակումը,
- ընդերքօգտագործող կազմակերպությունների իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման և վարման համար օրենսդրական հենքի ապահովումը:

Հանքարդյունաբերության ոլորտի մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտմանը նպաստելու, ոլորտի օրենսդրական համապարփակ կարգավորումների ամրագրման նպատակով մշակվել և 2019 թվականի ապրիլի 23-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-24-Ն, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական

հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-25-Ն ու «Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-26-Ն ՀՀ օրենքները:

Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացի վարչարարության պարզեցման, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման չափանիշների ու պայմանների վերանայման և հստակեցման, ինչպես նաև վարչական վիճակագրական ռեգիստրի վարումն ապահովելու նպատակով մշակվել և 2019 թվականի նոյեմբերի 13-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-256-Ն և «Պետական տուրքի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-257-Ն օրենքները:

Մեկ պատուհանի սկզբունքի կիրառմամբ տրամադրվել է 33 ընդերքօգտագործման իրավունք (օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով՝ 17 և երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով՝ 16), Հայաստանի Հանրապետության տարածքից հանքային հումքի տեսակների արտահանման՝ 9 մեկանգամյա լիցենզիա և 1 գլխավոր լիցենզիա:

Մերժվել է օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն հայցելու 15 և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն հայցելու՝ 17 դիմում, դադարեցվել է 28 ընդերքօգտագործման իրավունք:

Ընդերքաբանական փորձաքննության է ներկայացվել օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների հաշվարկման (վերահաշվարկման) և/կամ երկրաբանատնտեսագիտական գնահատման (վերագնահատման) աշխատանքների արդյունքների մասին 21 հաշվետվություն, որոնցից 7-ը՝ մետաղական:

Ընդերքօգտագործման իրավունք ունեցող 204 ընկերություններ զգուշացվել են ընդերքօգտագործման վճարման ապառքների մասով և աշխատանքային նախագծում ամրագրված պահանջներն ու օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու հիմքով: Արդյունքում մարվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առկա 632.3 մլն դրամ ապառքներից շուրջ 600 մլն դրամը:

Հայաստանը տարեսկզբին հրապարակեց Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության առաջին ազգային զեկույցը, որը հրապարակային և համակարգված ձևով ներկայացրեց ոլորտում նախկինում ոչ հրապարակային հանդիսացող մեծածավալ տեղեկատվություն՝ նպաստելով հաշվետվողականության, թափանցիկության և քաղաքականությունների ձևավորման արդյունավետության աճին: ԱՃԹՆ Համաշխարհային

համաժողովի ժամանակ Հայաստանը 52 երկրների շարքում արժանացավ ԱՃԹՆ-ի նախագահության բարձր մրցանակին, որը տրվում է յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ:

Միջուկային անվտանգություն

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի նպատակն է «Լիցենզավորման մասին» և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» օրենքների դրույթների՝ միմյանց համապատասխանության ապահովումը, ինչպես նաև կարգավորող մարմնի՝ միջազգային պայմանագրեր կնքելու և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությունների ամրագրումը:

Ընդունվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի № 1085-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի № 967-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի № 400-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի № 975-Ն որոշումները: Որոշումներով ամրագրվել են պահանջներ, որոնց կատարմամբ հիմնավորվում է ՀԱԷԿ-ի անվտանգ և հուսալի շահագործումը արտանախագծային ժամկետում:

2019 թվականին տրվել են 27 լիցենզիաներ, որից 11ը՝ իրավաբանական անձանց, 16-ը՝ ֆիզիկական անձանց: Երկարաձգվել են 25 լիցենզիաների գործողության ժամկետներ, որոնցից 9-ը՝ իրավաբանական անձանց, 16-ը՝ ֆիզիկական անձանց տրված լիցենզիաների գծով: Իրականացվել է 7 լիցենզիաների վերաձևակերպում, որից 2-ը՝ իրավաբանական անձանց, 5-ը ֆիզիկական անձանց տրամադրված լիցենզիաներն են: Իրականացվել է 12 լիցենզիաների գործողության դադարեցում և 1 լիցենզիայի գործողության կասեցում, ինչպես նաև իրավաբանական անձանց տրված 15 լիցենզիաների պայմանների և պահանջների փոփոխություն: Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության տեսակետից կարևոր աշխատանքներ իրականացնելու նպատակով տրվել է 9 թույլտվություն:

Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման նկատմամբ պահանջները հաստատելու մասին» № 1085-Ն որոշմամբ: 2019

թվականի ընթացքում անցկացվել են 53 ստուգումներ, որից 3-ը՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) տեսուչների հետ համատեղ: Ստուգումների արդյունքների հիման վրա կազմվել է 24 կարգադրագիր:

Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների թույլ տված խախտումների արձանագրման հիման վրա իրականացվել է 12 վարչական պատասխանատվության վարույթ:

Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի շրջանակներում ԱԷՄԳ-ի հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակում Երևան քաղաքի հանրակրթական մի շարք դպրոցներում և բնակելի տարածքներում իրականացվել են ռադոն գազի չափումներ: Ստացված արդյունքների հիման վրա տրվել են համապատասխան ցուցումներ: Վանաձոր, Ստեփանավան, Դիլիջան, Իջևան քաղաքների ջրամատակարարման ակունքներում իրականացվել են ռադոն գազի կոնցենտրացիայի չափումներ, որոնց արդյունքում թույլատրելի նորմերը գերազանցող կոնցենտրացիաներ չեն հայտնաբերվել:

Իրականացվել են ՀԱԷԿ-ի շուրջ գամմա-ճառագայթման դոզայի հզորության չափման ժամանակակից ավտոմատ համակարգի և վթարային իրավիճակներում որոշումների ընդունմանն աջակցող «JRODOS» համակարգի տեղադրման աշխատանքներ:

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտում 2019 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- Համաձայն 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրված վարձակալության պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից, 2019 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ապահովվել են 2001.2 մլն դրամի չափով ՀՀ պետական բյուջեի մուտքեր:

Համաձայն Վարձակալության պայմանագրի, Վարձակալի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է պայմանագրային 2-րդ տարվա (2018թ.) պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) իրականացման հաշվետվությունը: ՊԿԱԾ-ի շրջանակներում ջրառի կետերում տեղադրվել են 185 հոսքաչափեր, ճնշման մոնիթորինգի համար 300 լոգերներ: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրագծեր, կոյուղագծեր, օրվա կարգավորիչ ջրամբարներ և կապտաժներ:

Իրականացվել են 2017 թվականի ՊԿԱԾ-ի շրջանակներում ստեղծված գույքի ուսումնասիրության և ընդունման-հանձնման աշխատանքներ:

Ուսումնասիրվել են Վարձակալի կողմից ներկայացված և Վարձատուի միջոցներով իրականացվող 26 անուն աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները, որոնցից 8-ը գտնվում են շինարարության փուլում, իսկ մնացածը՝ հայտերի մշակման գործընթացում:

Իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի ամբողջական շահագործման հանձնման ուղղությամբ, այդ թվում՝ նոր օպերատորի ներգրավման միջոցով:

Սակագնի բարձրացում թույլ չտալու համար, «Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի հետ 2019 թվականի հուլիսի 25-ին կնքվել է N 13 համաձայնագիրը, որի արդյունքում 2020 թվականի համար սահմանվել է նույն սակագինը, որը գործում էր 2017 թվականին:

Մշակվել են «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգը և հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրամբարաշինության և ջրային պաշարների կառավարման հայեցակարգին և Հայաստանի Հանրապետության ջրամբարաշինության և պաշարների կառավարման և զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի զարգացմանն ուղղված հայեցակարգն ու միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» և «Ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ հզորացմանն ուղղված հայեցակարգին և ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ հզորացմանն ուղղված միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը, ստացվել և ամփոփվել են դրանց վերաբերյալ շահագրգիռ մարմինների կարծիքները:

- Ոռոգման նպատակով ջրառ իրականացնող «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 82.78 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը՝ 2018 թվականի 79.06 հազ. հա-ի դիմաց:
- Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2019 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2019 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 26.53 մլրդ դրամ՝ 2018 թվականի 23.85 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 2.7 մլրդ դրամ:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 22.46 մլրդ դրամ՝ 2018 թվականի 20.62 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել 1.84 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.06 մլրդ դրամ՝ 2018 թվականի 3.23 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 830 մլն դրամ:

2019 թվականին համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի խնայողություն: 2019 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 209.91 մլն կՎտժ կամ 7.76 մլրդ դրամ՝ 2018 թվականի 224.64 մլն կՎտժ-ի կամ 8.42 մլրդ դրամի դիմաց, կամ պակաս է ծախսվել 14.74 մլն կՎտժ: Ոռոգման ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 151.41 մլն կՎտժ կամ 5.87 մլրդ դրամ:

- 2019 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 12.5 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:
- 2019 թվականի հունիսի 6-ին ընդունվել է «Ոռոգման նպատակով 2019 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության N 698-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2019 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն խոր.մ:

2019 թվականի հունիսի 8-ից մինչև նոյեմբերի 1-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 147.2 մլն խոր. մ ջուր, (նախորդ տարվա ոռոգման շրջանում բաց էր թողնվել 200.623 մլն խոր. մ ջուր), իսկ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել 160.026 մլն խոր. մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900.43 մ, նախորդ տարվա նույն օրվա դրությամբ՝ 1900.39 մ:

- «Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն հանձնվել է հավատարմագրային կառավարման «Արփա-Սևան» ԲԲԸ-ին:

«Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում» ծրագրի «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում» միջոցառման շրջանակներում 2019 թվականին հատկացվել է 205.8 մլն դրամ:

«Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավում» միջոցառմամբ Արփա-Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են պայմանագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան: Միջոցառման ներդրումների չափը 2019 թվականին կազմել է 1786.5 մլն դրամ: Հիմնանորոգման աշխատանքները տևել են 3 տարի՝ 4998.4 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Թունելով ջուր տեղափոխելու նպատակով հիմնանորոգման աշխատանքները դադարեցվել են 2019 թվականի ապրիլի 1-ին: Շինարարական աշխատանքները վերսկսվել են 2019 թվականի սեպտեմբերի 5-ից և ամբողջությամբ ավարտվել են դեկտեմբերի 20-ին:

- 2019 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը Երևան քաղաքում եղել է 23.6 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում 19 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 18 ժամ/օր:
- Ջրամբարաշինության (Կապսի, Վեդու, փոքր ու միջին ջրամբարներ) և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ իրականացվել են համապատասխան աշխատանքներ: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են, իսկ շինարարական աշխատանքները մեկնարկել են 2020 թվականին՝ շուրջ երկու տարի տևողությամբ: Կապսի ջրամբարի մասով 2019 թվականի ընթացքում մշակվել են ինքնահոս համակարգի կառուցման մանրամասն նախագծման և տեխնիկական վերահսկողության մրցութային փաստաթղթերն ու առաջադրանքի պայմանները, որոնք ներկայացվելու են KFW բանկի հաստատմանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2020 թվականին՝ շուրջ երեք տարի տևողությամբ: ՊՄԳ շրջանակներում հանրապետությունում ավելի քան 30 փոքր և միջին ջրամբարների կառուցման աշխատանքների մասով տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, սակայն ֆինանսավորման բացակայության պատճառով փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների և նախնական նախագծանա-խահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ դեռևս չեն իրականացվել: Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել լրացուցիչ մասնագիտական, այդ թվում՝ դաշտային աշխատանքներ, ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական հիմնավորվածությունը գնահատելու նպատակով:

Տրանսպորտ

Ճանապարհային տնտեսություն

Հաշվի առնելով տրանսպորտային ենթակառուցվածքների կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման բնագավառում՝ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) հիմնական և միջին նորոգումը, վերակառուցումը և ընթացիկ պահպանումը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության ներքո: Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2019 թվականին իրականացվել է պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, ինչպես նաև պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանում,

շահագործում: Պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերով 2019 թվականին իրականացվել են առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող ճանապարհահատվածների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ:

2019 թվականին վարկային միջոցների հաշվին շարունակվել է Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Բագրատաշենի կամուրջի վերակառուցման, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի լրացուցիչ վարկային ծրագրերը:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում 2019 թվականին ընթացքում վերականգնվել են շուրջ 70.5 կմ ընդհանուր երկարությամբ 9 ճանապարհահատվածներ:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2020 թվականի ընթացքում նախատեսված է միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոճանապարհների 244.41 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների իրականացում, որոնց նախագծերը պատվիրվել են 2019 թվականի ընթացքում:

Երկաթուղային տրանսպորտ

Երկաթուղային ուղևորափոխադրումների արդյունավետության, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով շարունակվել է շարժակազմի նորացման և արդիականացման գործընթացի իրականացումը:

Հայաստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտի համակարգի երկարաժամկետ զարգացման ծրագրի շրջանակներում մշակվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի գործունեության զարգացման և բազմազանեցման հայեցակարգի նախագիծը:

Երկաթուղային գծանցների շահագործումը կանոնավոր կազմակերպելու, երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից հաստատված ուսումնասիրությունների հիման վրա կազմված երկաթուղու բոլոր գծանցների անհրաժեշտ հագեցվածության և տեխնիկական վիճակի արձանագրած թերությունների վերացման

միջոցառումների ծրագրի շրջանակներում թվով 62 գծանցներում վերացվել են արձանագրված 97 տարբեր թերություններ:

Օդային տրանսպորտ

Ռուսաստանի Դաշնության հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ ՀՀ կառավարությունը 15.11.2018թ. թիվ 1283-Ա որոշմամբ հավանություն է տվել «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագրի ստորագրմանը: Այնուհետև Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքը: Տվյալ համաձայնագիրը թույլ կտա օպերատիվ կերպով իրականացնել պատահարների և լուրջ միջադեպերի քննության գործընթացը:

Ջրային տրանսպորտ

Ավարտվեց Հայաստանի Հանրապետության կողմից 2019 թվականի փետրվարի 1-ին ստորագրված Եվրասիական տնտեսական միության «Նավագնացության մասին» համաձայնագրի նախագծի ներհանրապետական համաձայնեցման գործընթացը: Դրական եզրակացությամբ նախագիծը ներկայացվել է ՀՀ սահմանադրական դատարանի քննարկմանը:

Համաձայնագիրը նախատեսում է դյուրացնել ԵԱՏՄ անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավերի մուտքը ԵԱՏՄ անդամ պետությունների ներքին ջրային ուղիներ, երկկողմ և տարանցիկ բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրումը, ինչպես նաև նավերի քարշակումը: Համաձայնագիրը ջրային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելիս կնվազեցնի վարչական գործընթացները բիզնեսի համար:

Ավտոմոբիլային տրանսպորտ

Շարունակվել են աշխատանքները հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի ներդրման ուղղությամբ: «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ կնքված երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման ու սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման համակարգի մշակման ծառայությունների մատուցման պայմանագրային պարտավորությունների շրջանակներում ստեղծվել է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման գործընթացի վերահսկողության ծրագրային համակարգը: Իրականացվել է

ուղևորահոսքի հաշվարկ: Մշակման ընթացքում են միասնական երթուղային ցանցի օպտիմալ երթուղիների ուղեգծերը: Միասնական երթուղային ցանցի ներդրման աշխատանքները շարունակվում են:

Քաղաքացիական ավիացիա

Հաշվետու տարվա ընթացքում քաղաքացիական ավիացիայի բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել է ինստիտուցիոնալ համագործակցություն ԵՏՀ տրանսպորտի և ենթակառուցվածքի հարցերով խորհրդատվական կոմիտեի քաղաքացիական ավիացիայի ենթակոմիտեի շրջանակներում.
- Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) 40-րդ ասամբլեայի շրջանակներում Վրաստանի ավիացիոն գործակալության հետ կնքվել է համագործակցության մասին հուշագիր: Կանադայի ավիացիոն ծառայության հետ հանդիպման ընթացքում նախնական համաձայնություն է ձեռք բերվել ուսումնասիրություններ իրականացնել թռիչքների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ և այդ նպատակով կնքել օդային հաղորդակցությունները կարգավորող միջկառավարական համաձայնագիր: Սինգապուրի ավիացիոն իշխանության հետ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն համահեղինակությամբ մասնակցել է 40-րդ ասամբլեայի քննարկմանը ներկայացված «Տեխնոլոգիական առաջընթացին համահունչ մեկ ավիացիա» և «Քաղաքացիական ավիացիոն իշխանությունների իրավախորհրդատուների ֆորում» փաստաթղթերի մշակմանը, որոնք ընդունվել են ասամբլեայի կողմից.
- Մշակվել է ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ընդունվել է 09.12.2019թ. ՀՕ-258-Ն օրենքով.
- Մշակվել է ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի առաջին պարբերության «զ» կետով նախատեսված արտոնությունների կիրառման ժամկետների, ավիափոխադրողի, չվերթերի հաճախականության պահանջների և չսպասարկվող ուղղության վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկատվության հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1936-Ն որոշմամբ.
- Վերը նշված օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում 2019 թվականին տրված թույլտվությունների հիման վրա 2020 թվականի հունվարից «Ռայանէյր» ավիաընկերությունը դեպի Երևան չվերթեր է սկսել իրականացնել իտալական Հռոմ և Միլան քաղաքներից, իսկ 2020

թվականի մարտի վերջից՝ նաև գերմանական Մեմինգեն քաղաքից դեպի Գյումրի և Բեռլին քաղաքից՝ դեպի Երևան ուղղություններով, իսկ արդեն 2020 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում ավիաընկերությունը կիրականացնի նաև հունական Սալոնիկ քաղաքից դեպի Երևան և Աթենք քաղաքից դեպի Գյումրի քաղաքներ կանոնավոր չվերթեր, ինչպես նաև կիպրական Պաֆոս քաղաքից դեպի Երևան: 2020 թվականի մայիսից լատվիական «Էյր Բալթիկ» ավիաընկերությունը նախատեսում է կանոնավոր չվերթեր իրականացնել Ռիգայից դեպի Երևան և հակառակ ուղղությամբ, իսկ 2020 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում հայկական շուկա է նախատեսում մուտք գործել հունգարական «Վիզ Էյր» ավիաընկերությունը, որը սկզբնական շրջանում չվերթեր կիրականացնի Վիեննայից և Վիլնյուսից դեպի Երևան և հակառակ ուղղություններով, իսկ ամառվանից՝ նաև Լառնակա Երևան և հակառակ ուղղությամբ:

- Մշակվել է «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային տրանսպորտով փոխադրվել է 3196395 ուղևոր, որը 2018 թվականի համեմատ աճել է 11.89%-ով:

Թռիչքային պիտանիություն

- Օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի տրամադրում՝ 49 հատ.
- Օդանավ շահագործողի վկայականին կից «Շահագործման հատուկ դրույթների» տրամադրում՝ 22 հատ.
- Քաղաքացիական օդանավի գրանցման սերտիֆիկատի տրամադրում՝ 23 հատ, պետական օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրում՝ 1 հատ, քաղաքացիական օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրում՝ 34 հատ, օդանավի աղմուկի վկայականի տրամադրում՝ 21 հատ, օդանավի ապագրանցման սերտիֆիկատի տրամադրում՝ 3 հատ, օդանավի թռիչքի թույլտվության տրամադրում՝ 2 հատ.
- Օդանավի ՌՎՍՄ (RVSM) պայմաններում թռիչքներ իրականացնելու թույլտվություն՝ 12 հատ, օդանավի ՌՆԱՎ (RNAV) պայմաններում թռիչքներ իրականացնելու թույլտվության տրամադրում՝ 31 հատ.
- Թռիչքային պիտանիության պահպանման կառավարման կազմակերպության վավերացման սերտիֆիկատի տրամադրում (PART M SUBPART G)՝ 10 հատ.
- Օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպության վավերացման սերտիֆիկատի տրամադրում (PART 145)՝ 8 հատ.

- Օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպության վավերացման սերտիֆիկատի տրամադրում (PART M SUBPART F)՝ 1 հատ:

Օդային փոխադրումների կարգավորում

- Օտարերկրյա օդանավ շահագործողներին դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրամադրում, որից կանոնավոր չվերթների՝ ընդհանուր թվով 153 և երկու և ավելի ոչ կանոնավոր չվերթների՝ ընդհանուր թվով 36 թույլտվություն.
- Օտարերկրյա օդանավ շահագործողներին կամ օդանավ շահագործող չհանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս մեկանգամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման համար ընդհանուր թվով 512 թույլտվության տրամադրում.
- ՀՀ օդանավ շահագործողներին դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման ընդհանուր թվով 34 թույլտվության տրամադրում.
- ՀՀ օդանավ շահագործողներին կամ օդանավ շահագործող չհանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս մեկանգամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման համար ընդհանուր թվով 94 թույլտվության տրամադրում.
- ՀՀ-ում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման 3-ական թույլտվության տրամադրում.
- ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործողների կողմից կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիր կրողների մոտ կատարվել է 3 նոր երթուղու փոփոխություն.
- ՀՀ-ում գրանցված 2 օդանավ շահագործողների՝ «Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ-ին և «Արմենիա Էյրվեյզ ավիաընկերություն» ՓԲԸ-ին օդանավ շահագործողի երկարաձգված վկայականների տրամադրում:

Օդանավակայանների սերտիֆիկացում և օդային երթևեկության կազմակերպում

2019 թվականի նոյեմբերի 7-ից Հայաստանի Հանրապետության և Վրաստանի օդային տարածքում ներդրվել է միասնական «Մայրուղիներից ազատ Հարավկովկասյան օդային տարածքի» հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս իրականացնել թռիչքներ Հայաստան-Վրաստան

օդային սահմանի հատման պարզեցված գործընթացներով: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է նմանատիպ հայեցակարգի ներդրման առաջամարտիկներից մեկը և Եվրոպական մի շարք երկրների համար ծառայում է որպես լավագույն օրինակ:

Սահմանված ընթացակարգերի համաձայն իրականացվել է սերտիֆիկացված աերոդրոմների և գործունեության թույլտվություն ստացած աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների վերահսկողություն:

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» և «Զվարթնոց Հենդլինգ» ՓԲ ընկերություններին տրվել են վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքների թույլտվություններ:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն

2019 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ մտած «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն անվանափոխվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, համաձայն որի նախարարությանը վերապահվել են ամբողջովին նոր գործառույթներ:

Մշակվել և շրջանառության մեջ է դրվել Հայաստանի ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությունը: Առաջին անգամ ռազմարդյունաբերական համալիրը մասնակցել է ԱՄԷ «IDEX» միջազգային ռազմական ցուցահանդեսին, Մոսկվայում լայնացված ցուցադրությամբ՝ «Արմիա 2019» ցուցահանդեսին: Նախապատրաստել և անց է կացվել ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովի 3 նիստ, որտեղ քննարկվել են ռազմարդյունաբերական ոլորտի զարգացմանը վերաբերող հարցեր:

Ապահովվել է մասնակցությունը աշխատանք առանց սահմանների թվային էկոհամակարգի նախագծի ստեղծմանն ուղղված աշխատանքներին՝ հանդիպում-քննարկում ձևաչափով, նյութերի ուսումնասիրություն, մասնագիտական դիրքորոշման տրամադրում: Մշակվել է Հայաստանի թվայնացման ռազմավարությունը:

Պետական շահագրգիռ մարմինների հետ անցկացվել են մի քանի խորհրդակցություն-քննարկումներ, որոնց արդյունքում հստակեցվել և հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության գեոստացիոնար ուղեծրով արբանյակ ունենալու հարցը: Կազմակերպվել են մի քանի հանդիպումներ ԵԱՏՄ տարածքում ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների վրա վթարային կանչի սարքերի և դրա հետ կապված համակարգի ներդրման ուղղությամբ՝ մի քանի նախարարությունների և

ռուսաստանյան «Գլոնասս» ընկերության մասնակցությամբ: Աշխատանքներ են կատարվել Արարատյան դաշտում շարժական կապի թվով 200 բազային կայանների համար խանգարումներ առաջացնող ռադիոլոկացիոն սարքավորումների վերահամալրման ուղղությամբ: Հայաստան է հրավիրվել ինքնաթիռ-լաբորատորիա, և կոորդինացվել է դրա աշխատանքը: Արդյունքում տվյալ ռեգիոնում զգալիորեն բարելավվել է շարժական կապի ծառայությունների որակը:

Արցախում ԲՏԱ նախարարության, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ և ԱՀ կապի օպերատորների մասնակցությամբ հանդիպում-քննարկման արդյունքում իջեցվել է ՀՀ և ԱՀ միջև ռոումինգի սակագինը: Արդյունքում «Վեոն Արմենիա» ընկերության ռոումինգի ելքային մուտքային զանգերը նվազել են համապատասխանաբար 15%-ով և 11%-ով, իսկ «Յուքոմ»–ի մոտ՝ համապատասխանաբար 15%-ով և 44.4%-ով՝ հավասարվելով «ՄՏՍ Հայաստան»–ի սակագներին:

Գործողության մեջ են դրվել թվով 32 նամականիշ, 5 գեղաթերթիկ մեկ նամականիշով և մեկ նամականիշով 7 բացիկ:

Հանվել է ելից փաթեթների մաքսային զննման և ձևակերպման համար սահմանված սակագինը, ինչպես նաև բանակցությունների արդյունքում «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող միջազգային փոստային ծառայությունների սակագների բարձրացում չի իրականացվել:

2019 թվականի սեպտեմբերին ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության՝ Սիլիկոնյան հովիտ այցի ընթացքում ՀՀ ԲՏԱ նախարարի և «Դրեյփեր Վենչուր Նեթվորկի» հիմնադիր և գործադիր տնօրեն Թիմ Դրեյփերի միջև կնքվեց համագործակցության հուշագիր, համաձայն որի 2020 թվականին պետական ֆինանսավորմամբ 15 ձեռներեցների հնարավորություն կընձեռվի սովորելու Սիլիկոնյան հովտի թոփ ձեռնարկատիրական համալսարանում: Դասընթացի տևողությունը լինելու է 7 շաբաթ, որի ավարտին մասնակիցները հնարավորություն կունենան իրենց ստարտափ գաղափարը և արտադրանքը ներկայացնել վենչուր կապիտալիստներին, ներդրողներին, որը բացառիկ հնարավորություն է ընկերությունների համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում ունենալ Դրեյփեր կրթական բրենդը: Նույն այցի շրջանակներում ՀՀ ԲՏԱ նախարար Հակոբ Արշակյանի և Հայկական բարեգործական ընդհանուր միության Սիլիկոնյան հովտի մասնաճյուղի ղեկավար Երվանդ Զորյանի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ իրականացնելու «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը, որը կֆինանսավորվի ՀՀ պետական բյուջեից:

2019 թվականի հոկտեմբերի 6-9-ը տեղի է ունեցել «Դիջիթեք Էքսպո» ցուցահանդեսը: Ցուցահանդեսը յուրահատուկ էր նրանով, որ տաղավարներ էին հատկացվել նորաստեղծ

ստարտափ, ինժեներական և ռազմարդյունաբերական ընկերություններին: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2019 թվականի ցուցահանդեսին ներկայացավ 2 առանձին տաղավարներով, որտեղ ներկայացված էին հայկական ստարտափ շուրջ 17 և ինժեներական 25 ընկերություններ, որոնցից 10-ը՝ ռազմարդյունաբերության ոլորտից:

2019 թվականի հոկտեմբերի 6-9-ը տեղի է ունեցել Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը, որի շրջանակներում Հայաստան են ժամանել ավելի քան 20 երկրների նախարարական պատվիրակություններ:

ՀՀ կառավարության աջակցությամբ 2019 թվականի հոկտեմբերի 10-12-ը Երևանում առաջին անգամ կայացել է «Միասին դեպի թվային ապագա» կարգախոսի ներքո «N2» համաժողովը, որին ներկա էր նաև ICANN-ի նախագահ և տնօրեն Յորան Մարբին: «N2» համաժողովը բաղկացած է մի քանի միջոցառումներից (ArmNOG, Հայկական IGF, RIPE NCC Բանկային աշխատաժողով, Արևելաեվրոպական DNS Ֆորում, ISOC IoT SIG Workshop), որոնք կազմակերպվում, հյուրընկալվում և հովանավորվում են տեղական և միջազգային առաջատար կազմակերպությունների կողմից՝ նպատակ ունենալով զարգացնելու ինտերնետը, ապահովելու դրա կայունությունը և հետագա առաջմղումը՝ ի շահ համայն մարդկության: Այս համագործակցությունն ու համատեղ ջանքերը արտացոլված են N2 համաժողովի նշանաբանում՝ «Միասին դեպի թվային ապագա»:

Քաթարի Էմիր, Նորին Գերազանցություն Շեյխ Թամիմ Բին Համադ Ալ-Թհանիի բարձր հովանու ներքո Քաթարի պետության Դոհա քաղաքում 2019 թվականի հոկտեմբերի 29-31-ը տեղի ունեցավ Մերձավոր Արևելքի խոշորագույն տեխնոլոգիական գիտաժողով-ցուցահանդեսը (QITCOM)՝ «Անվտանգ խելացի քաղաքներ» խորագրի ներքո:

2019 թվականին առաջին անգամ հայկական պատվիրակությունը միջոցառմանը մասնակցում էր «Հայաստան» միասնական տաղավարով, որտեղ ներկայացված էին 11 հայկական տեխնոլոգիական ընկերություններ: Միջոցառումն ընդգրկել է ավելի քան 500 մասնակից, շուրջ 300 միջազգային և տեղական ընկերություններ, 100 միջազգային և տեղական ստարտափեր: Միջոցառման շրջանակում կազմակերպվել է նաև «Սմարթ Սիթի Էքպո» ցուցահանդեսը, որը եզակի հնարավորություն է ընձեռել տարածաշրջանի պետություններին՝ ցուցադրելու սեփական ինովացիոն լուծումները համաշխարհային մեծություն ունեցող կազմակերպություններին: Մերձավոր Արևելքի կարևորագույն այս միջոցառմանը մասնակցում էին 21 երկրների նախարարներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ:

2019 թվականի հոկտեմբերի 29-31-ը Հայաստանը միասնական տաղավարով մասնակցել է նաև Տաշքենդում կայացած «INNOWEEK.UZ–2019» միջոցառմանը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հայկական կրթական ծրագրերը Ուզբեկստանի դպրոցներում և բուհական

լաբորատորիաներում ներդնելու հետ կապված մի շարք հարցեր: Արդյունքում «YEA Engeneering»–ի հետ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ուսումնական լաբորատորիաները Ուզբեկստանի դպրոցներում և բուհերում ներդնելու վերաբերյալ: Փոխըմբռնման մեկ այլ հուշագիր էլ ստորագրվել է «ERP Smart System»-ի հետ՝ CRM համակարգի համագործակցության վերաբերյալ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության նախաձեռնությամբ կազմավորվել է նախարարին կից մասնագիտական խորհրդակցական մարմին, որը գործում է 6 տարբեր ուղղություններով՝ ինժեներական նորարարությունների և ստարտափ էկոհամակարգ, թվայնացում, նորմատիվ իրավական դաշտ, տեխնոլոգիական ոլորտում կրթություն և գիտահետազոտություն, տեխնոլոգիական շուկաների զարգացում, ռազմարդյունաբերություն, պաշտպանական տեխնոլոգիաներ:

Ազգային վենչուրային ֆոնդ ստեղծելու նպատակով կազմվել է ֆոնդի կոնցեպտը, և շարունակվել են բանակցությունները համաշխարհային ճանաչում ունեցող վենչուրային ընկերությունների և միջազգային գործընկերների հետ:

Շարունակվել են Ինժեներական քաղաքի նախագծման աշխատանքները, որին կհաջորդի շինարարական աշխատանքների փուլը:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների պետական աջակցության մասին» օրենքի համաձայն հարկային արտոնություն ստանալու նպատակով 2019 թվականի ընթացքում դիմել են 248 նորաստեղծ ընկերություններ, որոնցից հավաստագրվել են 230-ը:

Մշակվել է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ռազմավարությունը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համատեղ 2019 թվականի դեկտեմբերի 16-20-ը Դիլիջանի «UWC» միջազգային դպրոցում իրականացվել է «ՆերՈւժ» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափերի ծրագիրը: 4-օրյա տևողությամբ ծրագրին մասնակցել են աշխարհի 17 երկրներից (Վրաստան, Բելառուս, Չինաստան, Չեխիա, Էստոնիա, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Մալթա, Իռլանդիա, Լեհաստան, Իսպանիա, Լիբանան, Հարավային Կորեա, Ռուսաստան, ԱՄԷ, ԱՄՆ) ընտրված 47 տեխնոլոգիական ստարտափ ընկերություններ՝ ընդհանուր թվով 80 մասնակիցներով: «ՆերՈւժ» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագրի ընդհանուր ֆոնդը կազմել է 136 մլն դրամ, որից հաղթող ստարտափ ընկերություններին տրամադրվել են 15-30 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամաշնորհներ:

2019 թվականին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացվել է «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհների ծրագիրը, որի նպատակն է ոգեշնչել ձեռներեցության զարգացումը տեխնոլոգիական ոլորտում և նպաստել այդ ոլորտի

նորարարական գաղափարների առևտրայնացմանը: Դրամաշնորհային ծրագրով ֆինանսական օժանդակություն է տրամադրվել բարձր տեխնոլոգիական ոլորտի թիմերին, նորաստեղծ ընկերություններին և տեխնոլոգիաների ոլորտում մինչև 3 տարվա գործունեության պատմություն ունեցող ընկերություններին, ՓՄՁ-ներին՝ նորարարական պրոդուկտների ու ծառայությունների ստեղծմանը և զարգացմանը և/կամ դրանց շուկա դուրս բերմանն օժանդակելու համար:

Վավերացման գործընթաց է անցնում 2018 թվականի հոկտեմբերի 2-ին Աստանայում ստորագրված «ԱՊՀ մասնակից պետությունների՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի նախագիծը՝ վերջինիս ստորագրման առաջարկությունը ներկայացնելու նպատակով:

Մշակվել և ներպետական ընթացակարգեր է անցնում «Հասարակության թվային զարգացման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվական փոխգործակցության վերաբերյալ» համաձայնագրի նախագիծը:

2019 թվականի ընթացքում կազմակերպվել է հայկական միասնական տաղավարով հայկական տեխնոլոգիական ընկերությունների մասնակցությունը մի շարք միջազգային ոլորտային ցուցահանդեսների՝ VivaTech 2019 Ֆրանսիայում, InnoWeek.uz 2019 Ուզբեկստանում, QITCOM 2019 Քաթարում, SWITCH 2019 Սինգապուրում: Արդյունքում հայկական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև մասնակից երկրների ներկայացուցիչների միջև ձեռք են բերվել համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններ, կնքվել են փոխըմբռնման հուշագրեր:

Աշխատանքներ են իրականացվել Սինգապուրի Հանրապետությունում «Սինգապուրյան նորարարությունների և տեխնոլոգիաների շաբաթ» ցուցահանդեսին մասնակցության կազմակերպման ուղղությամբ: Մասնակցության արդյունքում մեծ հավանականությամբ սպասվում է 2.36 մլն դոլարի ներդրում:

Քաղաքաշինություն

Քաղաքաշինության ոլորտի հիմնական խնդիրներից են համարվել՝

- ՀՀ կառավարության 23.02.2017թ. նիստի N8 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման (տեղայնացման)» ծրագրի

շրջանակներում (որտեղ ընդգրկված են նախկին ԽՍՀՄ ժամանակներից դեռևս գործողության մեջ մնացած նորմատիվ փաստաթղթեր՝ ռուսերեն լեզվով) միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխման և արդիականացման շարունակական աշխատանքների իրականացումը՝ անհրաժեշտ փաստաթղթերի բազայի ստեղծմամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել նախագծային և շինարարական աշխատանքների որակական երաշխիքներ, միասնական շուկայում հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիություն ու տեխնոլոգիաների արդիականացում: 2019 թվականին նախատեսվել է մշակել թվով 4 նորմատիվատեխնիկական փաստաթուղթ, սակայն պետական գնման պայմանագիր է կնքվել միայն մեկ շինարարական նորմերի հավաքածուի մշակման (տեղայնացման) համար, իսկ մնացածի դեպքում 4 անգամ հայտարարվել է մրցույթ, սակայն մասնակցության հայտերի բացակայության պատճառով մրցույթները չեն կայացել:

- Հանրապետության բոլոր համայնքներում 2017-2023թթ. ընթացքում տեղական մակարդակի ծրագրային փաստաթղթերով (գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր) ապահովման նպատակով «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում նախատեսվել է ՀՀ Վայոց ձորի, Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի ու Գեղարքունիքի մարզերի և Դիլիջան համայնքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակումը: Գնումների գործընթացներով պայմանավորված՝ պետական գնման պայմանագրերը կնքվել են հիմնականում 4-րդ եռամսյակում և դրա հետևանքով, պայմանագրերի օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների ավարտման ժամկետը նախատեսվել է 2020 թվականը, ուստի ծրագրի իրականացման շրջանակներում 2019 թվականին ավարտուն աշխատանքներ չեն ներկայացվել:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է եղել բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը: Արտակարգ իրավիճակների ոլորտում 2019 թվականին իրականացվել են հետևյալ ծրագրերը.

<u>Փրկարար ծառայությունը</u> 2019 թվականին իրականացրել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների լուծման, քաղաքացիական պաշտպանության

համակարգի կատարելագործման, արձագանքման արդյունավետ կազմակերպման, աղետների վաղ ազդարարման և հուսալի կապի համակարգերի զարգացման, Հայաստանի Հանրապետության անտառամերձ ու բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներում կամավոր հրշեջ-փրկարարական ջոկատների ձևավորման և նրանց կարողությունների զարգացման, ՓԾ ստորաբաժանումների տարածքներում շինարարական և կահավորման աշխատանքների ապահովումը:

- Ձմռան ամիսներին հանրապետական նշանակության ավտոճանապարհների վրա իրականացվել է շուրջօրյա հերթապահություն՝ ձնաբքի պատճառով խցանման մեջ հայտնված ավտոմեքենաների դուրս բերման և բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով:
- Արտակարգ իրավիճակների կանխարգելման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ (սողանքների, վտանգավոր քարաթափումների, սելավային հոսքերի և գետերի վարարումների կանխարգելման ուղղությամբ):
- Իրականացվել է ամենօրյա աշխատանք քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստման ուղղությամբ:
- Սիսիան, Բերդ, Ամասիա, Ալավերդի և Թումանյան խոշորացված համայնքների 72 բնակավայրերում անօդաչու թռչող սարքի միջոցով իրականացվել են բնակավայրերի նկարահանումներ, կազմվել են սպառնացող վտանգների քարտեզներ, մշակվել են համայնքների «Աղետների ռիսկի կառավարման պլանները», ստեղծվել են աղետների ռիսկի կառավարման համայնքային խորհուրդներ:
- Մշակվել են «Արմենիա» միջազգային օդանավակայաններ ՓԲԸ «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում գործելու և ՀՀ պետական կառավարման մարմինների հետ փոխհամագործակցության պլանները:
- Աշխատանքներ են իրականացվել «Երևան քաղաքի անվտանգության հայեցակարգ»-ի և ՀՀ Ազգային ժողովի արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ուղղությամբ:
- Լրամշակվել է քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը:
- Ձեռնարկված քայլերի արդյունքում Փրկարար ծառայության բոլոր աշխատակիցները ապահովված են համազգեստով և հանդերձանքով, իսկ ստորաբաժանումները՝ անհրաժեշտ քանակությամբ վառելիքաքսուքային նյութերով:
- Իրականացվել են փրկարար ծառայության ստորաբաժանումներում շենքային և կենցաղային պայմանների բարելավման աշխատանքներ:
- Իրականացվել է տեխնիկական միջոցների մասնակի վերազինման գործընթաց, մասնավորապես՝ դրամաշնորհային տարբեր ծրագրերի շրջանակում փրկարար ծառայությունը

ստացել է 10 միավոր ճապոնական «Nissan-Patrol» արագ արձագանքման փրկարարական ավտոմեքենաներ, 36 հրշեջ ավտոմեքենաներ, 3 ավտոսանդուղք և 1 կարգավար մեքենա, Փրկարար ծառայության Արագածոտնի, Արարատի, Վայոց ձորի, Լոռու, Կոտայքի, Տավուշի, Սյունիքի մարզային փրկարարական վարչությունների հրշեջ-փրկարարական ջոկատներին հատկացվել են 2214 միավոր անտառային հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված գույք, սարքավորումներ, գործիքներ և մարտական հագուստ-հանդերձանք.

- Հիմնվել է Արտանիշ համայնքի հրշեջ-փրկարարական հենակետը.
- Բարձրացվել են հրշեջ-փրկարարների և փրկարարների աշխատավարձերը.
- 2019 թվականին վավերացվել է 2 համաձայնագիր (Ղազախստան, ԱՊՀ) և 4-ը (Ֆրանսիայի Հանրապետության, Քաթարի, Քուվեյթի և Բուլղարիայի Հանրապետության համապատասխան կառույցների հետ) գտնվում են միջպետական համաձայնեցման փուլում.
- Ռուսաստան-ՄԱՋԾ զարգացման տրաստային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմում Հայաստանում անտառային հրդեհների կառավարման կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանն է հատկացվել գույք-սարքավորումների նոր խմբաքանակ.
- Իրականացվել են արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություններ, տրվել են համապատասխան ցուցումներ՝ տեխնիկական անվտանգության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

<u>Սեյսմիկ պաշտպանության</u> ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել է սեյսմոլոգիական ցանցից ստացվող տվյալների վերլուծություն, երկրաշարժերի հիմնական պարամետրերի որոշում և երկրաշարժերի Ազգային կատալոգի լրացում.
- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքների ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով հավաքագրվել և վերլուծվել են երկրաֆիզիկական բլոկի ու երկրաքիմիական դիտակայանների տվյալները: Իրականացվել է առանձին պարամետրերով սեյսմածին անոմալիաների վիճակագրության ուսումնասիրում.
- Ֆրանսիայի ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի Շրջակա միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտի հետ համագործակցության շրջանակներում նվիրաբերված GURALP (Գուռալփ) տիպի սեյսմոգրաֆներից ևս մեկ սեյսմոմետր և աքսելերոմետր տեղադրվեցին Սյունիքի մարզի Ալվանք համայնքում.
- Սեյսմիկ ռիսկի գնահատման նպատակով շարունակվում են համայնքների քարտեզների թվայնացման և տվյալների բազայի համալրման աշխատանքները: Իրականացվել է 9 համայնքի հատակագծերի AutoCAD ձևաչափի փոփոխում և տեղափոխում երկրատեղեկատվական

համակարգերում, ինչպես նաև 6 համայնքի քարտեզների թվայնացում, տվյալների բազայի լրացում, վերանայում և ճշտում.

- Պատրաստվել է Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման պիլոտային ծրագրի նախագիծը, ինչը թույլ կտա իրականացնելու ՀՀ քաղաքների բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքները.
- ԱՄՆ (NASA) և ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության» միջև ստորագրվել է Տիեզերական գեոդեզիական հետազոտությունների վերաբերյալ նոր փոխըմբռնման հուշագիր:

<u>Հիդրոօդերևութաբանության մոնիտորինգի</u> ոլորտում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Երևանի աէրոլոգիական կայանը վերսկսել է մթնոլորտի վերին շերտերի զոնդարկումն արդեն նոր, ավելի կատարելագործված համակարգի միջոցով.
- Սևանա լճի դիտակետերում կատարվել են ջրի մակարդակի, ջերմաստիճանի ամենօրյա 2 ժամկետային դիտարկումներ: Ամեն ամիս կազմվել է Սևանա լճի ջրային հաշվեկշիռը.
- Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործություն իրականացնելու աշխատանքները բարելավելու նպատակով հակակարկտային ծառայությունը սպասարկման վերցրեց ևս հինգ նոր հակակարկտային գազագեներատորային կայանքներ, որոնք տեղադրվել են Լոռու մարզում: Հակակարկտային ծառայությունը սպասարկել է նաև երեք հրթիռային արձակիչ հակակարկտային կայանքներ՝ ընդհանուր առմամբ պաշտպանության տակ վերցնելով 82280 հա տարածք:

<u>Ճգնաժամային կառավարման ուսուցման</u> ոլորտում իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման որակի բարելավման ուղղությամբ, ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ և ՌԴ ԱԻՆ Քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի միջև ստորագրվել է փոխգործակցության համաձայնագիր, ինչպես նաև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր ԱԻՆ ՃԿՊԱ և Ֆրանսիայի Հանրապետության Մարդկանց, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության խթանման ասոցիացիայի միջև:

Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի ծառայությունները բարելավելու նպատակով ներդրվել է «911 SMS» հաղորդագրությունների միջոցով բնակչության իրազեկման համակարգը: ՀՀ ԱԻՆ-ի պաշտոնական կայքում տեղեկատվության զետեղման նպատակով վերլուծվել, մշակվել և կայքում տեղադրվել են 12549 (2018թ.՝ 14024) արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերաբերյալ բնագրեր, հոդվածներ, տեսալուսանկարահանումներ, տարաբնույթ տեղեկատվություն և վերլուծություններ:

Պետական պահուստի կառավարման ոլորտում մշակվել և շրջանառվել են նախագծեր՝ ուղղված նյութական պահուստի համակարգի արդիականացմանը և ընդլայնմանը, մասնավոր տնտեսավարողների ներգրավմանը ռազմավարական պահուստի ձևավորման գործընթացում:

Իրականացվել են միջոցառումներ համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման փուլային ներդրման ուղղությամբ:

Արտաքին քաղաքականություն

2019 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունը շարունակել է աշխատանքներն՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումների խթանմանը, արտաքին հարաբերությունների ակտիվացմանը, ավանդական դաշնակիցների և գործընկերների հետ փոխգործակցության ամրապնդմանը, համագործակցության նոր ձևաչափերի հաստատմանը: Հայկական դիվանագիտությունն իր գործունեությամբ հաստատել է, որ ինքնիշխանությունը Հայաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն սկզբունքն է և երկու մյուս սկզբունքների՝ համահայկականության և փոխգործակցության հետ մեկտեղ ապահովում է միջազգային ասպարեզում հայ ժողովրդի շահերի և արժեքների առաջմղումը:

Հայաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն գերակայությունը շարունակել են մնալ Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, արցախյան խնդրի խաղաղ կարգավորումը: Տարվա ընթացքում շարունակվել են ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված աշխատանքները՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո:

2019 թվականի ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների, ԱԳ նախարարների (Փարիզ՝ 16.01.2019, Դավոս՝ 22.01.2019 (ոչ պաշտոնական), Վիեննա՝ 29.03.2019, Մոսկվա՝ 15.04.2019, Վաշինգտոն՝ 20.06.2019, Նյու-Յորք՝ 23.09.2019, Բրատիսլավա՝ 04.12.2019) միջև՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի միջնորդությամբ և մասնակցությամբ:

Ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու և խաղաղության համար բարենպաստ միջավայր ձևավորելու հանձնառության շրջանակում նոյեմբերի 17-ից 21-ը տեղի է ունեցել Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի ՋԼՄ ներկայացուցիչների փոխանակման ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտության առաջնահերթությունների շարքում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային ջանքերում: Ֆրանսիայի նախագահը ստորագրել է ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր ճանաչելու մասին հրամանագիր,

նախաձեռնություններ և բանաձևեր են ընդունվել Իտալիայի Պատգամավորների պալատի, Պորտուգալիայի խորհրդարանի, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի, ԱՄՆ Սենատի կողմից:

Հաշվետու տարում շարունակվել են Ռուսաստանի հետ բոլոր ուղղություններով դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության հետագա ամրապնդմանն ու ընդլայնմանն ուղղված ջանքերը: Տարին նշանավորվել է բարձր մակարդակներում քաղաքական ակտիվ երկխոսությամբ, տարածաշրջանային և միջազգային հարթակներում քայլերի համակարգմամբ, տարբեր բնագավառներում սերտ համագործակցությամբ, այդ թվում՝ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ:

2019 թվականին Հայաստանը նախագահել է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մարմիններում: Մեծ ուշադրություն է դարձվել Միության և երրորդ երկրների հետ համագործակցության խորացմանը:

Քայլեր են ձեռնարկվել ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող համագործակցության հետագա խորացման ու կառույցի նորմատիվ-իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ:

Տարվա ընթացքում շարունակվել է Եվրոպական Միության հետ տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման ուղղությամբ ակտիվ գործունեությունը: Տեղի են ունեցել բազմաթիվ բարձրաստիճան փոխայցելություններ: 2019 թվականին զգալիորեն աճել է ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

Հաշվետու տարում Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունները զարգացել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում: Պահպանվել է ակտիվ երկխոսությունը բոլոր մակարդակներում:

2019 թվականին շարունակվել է Իրանի Իսլամական Հանրապետության հետ բարիդրացիական փոխշահավետ համագործակցությունը, տեղի են ունեցել հանդիպումներ երկու երկրների ղեկավարների, ԱԳ նախարարների և այլ մակարդակներով:

Հաշվետու տարում հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում դրական տեղաշարժ չի նկատվել՝ Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշման պատճառով:

Քայլեր են ձեռնարկվել Հայաստանի և Եվրասիական տարածաշրջանի երկրների միջև հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ:

Եվրոպական երկրների հետ համագործակցության խորացումն ու զարգացումը մնում է որպես ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություն: Ձևավորվել է Կիպրոս-Հայաստան-Հունաստան համագործակցության եռակողմ ձևաչափը:

Տարին ակտիվ է եղել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ բարձրաստիճան շփումների և բազմաբնույթ համագործակցության ընդլայնման ու խորացման առումով:

Հայաստանը մեծապես կարևորում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ հարաբերությունների ու համագործակցության զարգացումը և մեծ ուշադրությամբ հետևում է Մերձավոր Արևելքում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներին: Փետրվարից Սիրիայում գործում է հայկական մարդասիրական առաքելությունը, որը նպատակ ունի օժանդակություն ցուցաբերել հումանիտար ծանր վիճակում հայտնված մեր հայրենակիցներին և Սիրիայի բարեկամ ժողովրդին:

Հայաստանը շարունակել է աշխատանքները Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի երկրների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունը խորացրել է իր ներգրավվածությունը ՄԱԿ-ի կառույցներում, ՖՄԿ-ում, ԱՊՀ-ում, ԵԽ-ում, ԵԱՀԿ-ում, ՆԱՏՕ-ում:

2019 թվականի մարտի 22-ին Հայաստանը ստանձնել է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակով հանձնաժողովի (CSW) նախագահությունը: 2019 թվականի հոկտեմբերի 17-ին Հայաստանն ընտրվել է Մարդու իրավունքների խորհրդի անդամ 2020-2022թթ. ժամանակահատվածի համար:

ՀՀ ԶՈՒ խաղաղապահ ուժերի ստորաբաժանումները շարունակել են իրենց մասնակցությունը Լիբանանում, Մալիում, Կոսովոյում և Աֆղանստանում իրականացվող խաղաղապահ գործողություններին:

Կառավարության մշտական ուշադրության կենտրոնում է եղել արտերկրում ՀՀ քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հյուպատոսական ծառայության կողմից հաշվետու տարում սպասարկվել է 155 հազար քաղաքացի:

ՀՀ քաղաքացիների համար սահմանվել է առանց մուտքի վիզայի ռեժիմ Կատարի, Սերբիայի և Չինաստանի կողմից:

Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Հյուսիսային Մակեդոնիայի, Դոմինիկայի Ընկերակցության, Ջիբութիի հետ:

2019 թվականին ՀՀ նախագահը կատարել է 19, իսկ ՀՀ վարչապետը՝ 23 օտարերկրյա այցեր: Տեղի է ունեցել ԱԳ նախարարի 32 օտարերկրյա այց՝ 6 պաշտոնական և 26 աշխատանքային: Պետական, պաշտոնական և աշխատանքային այցերով Հայաստանի Հանրապետություն են այցելել երեք տասնյակից ավելի բարձրաստիճան պատվիրակություններ:

Արդարադատություն

Հայաստանի Հանրապետության արդարադատության ոլորտի քաղաքականության հիմնական թիրախային ուղղությունները տեղ են գտել ՀՀ կառավարության միջոցառումների ցանկում, որտեղ առանձնացվել են դատաիրավական, հակակոռուպցիոն, քրեակատարողական և պրոբացիոն բնագավառները:

Դատաիրավական ոլորտ

Իրականացված ուսումնասիրության և միջազգային փորձի հիման վրա մշակվել է Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրի տեսլականը: Վերջինիս հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1441-Լ որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը:

Մշակվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որը 2019 թվականի դեկտեմբերի 11-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից:

Մշակվել և 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը:

Հաշվետու տարում իրականացվել է «էլեկտրոնային դատարանների համապարփակ համակարգի» թեստավորում: Իրականացվել են e-draft.am էլեկտրոնային հարթակների ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Ուսումնասիրվել են ՀՀ ԱՆ մի շարք էլեկտրոնային համակարգերի արդիականացման մեխանիզմները: Իրականացվել է արդարադատության ոլորտի մարմիններում առկա էլեկտրոնային համակարգերի և տվյալների բազաների գույքագրում: Իրականացվել են նաև Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության շրջանակներում պետական ծառայությունների ոլորտի արդիականացման աշխատանքներ:

2019 թվականին միջոցառումներ են իրականացվել դատաիրավական նոր ռազմավարության իրականացման ուղղությամբ, այդ թվում՝ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության համակարգող խորհրդի ձևավորման աշխատանքներ:

Իրականացվել են «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2019-2021թթ. ազգային ռազմավարության», «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարության», «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵՄ կոնվենցիայի իրականացմանն ուղղված միջոցառումներ:

Հակակոռուպցիոն ոլորտ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում լրամշակվել և 2019 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախանշվել են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Կառավարության առաջիկա 3 տարիների գործունեության ուղղությունները և դրանց կիրառման համար անհրաժեշտ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը: Մասնավորապես, սահմանվել է հակակոռուպցիոն մարմնի տարանջատված մոդել՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Հակակոռուպցիոն կոմիտեի տեսքով՝ ստեղծելով վերջիններիս համար համագործակցության հնարավորին գործուն և ճկուն կառուցակարգեր: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ որպես հիմնական ուղղություններ նախատեսված են նաև կոռուպցիայի կանխարգելումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը, հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում նոյեմբերի վերջին ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը հանդիսանում է կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման հարցերով իրավասու ինքնավար մարմին:

2019 թվականի մայիսի 21-ին գործարկվել է Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը: Ըստ վիճակագրության՝ Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացված ազդարարումների քանակը 188 է:

Հաշվետու տարում մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ամբողջությամբ վերափոխել հայտարարագրման համակարգը, ընդլայնել հայտարարագրման բովանդակությունը և հայտարարատուների շրջանակը, ներդնել ծախսերի հայտարարագրման և իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու ինստիտուտներ:

Մշակվել, շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում լրամշակման փուլում է գտնվում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող մասնագիտացված մարմին:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համատեղ մշակվել և 2019 թվականի հունիսի 3-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական բարեփոխումների արդյունքում քրեակատարողական ոլորտում կատարվել են 11 ուղղությամբ բարեփոխումներ, պատժախուց տեղափոխված անձանց իրավունքները և դրանց սահմանափակման կառուցակարգերը համապատասխանեցվել են Սահմանադրական դատարանի որոշման պահանջներին:

Բանտային առողջապահության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունքում ստեղծվել են անհրաժեշտ երաշխիքներ և կառուցակարգեր՝ կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացման և երաշխավորման համար: Քրեակատարողական ծառայությունից անկախ ստեղծված «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ն արդեն իսկ սկսել է ծավալել իր գործունեությունը:

2019 թվականի նոյեմբերի 28-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշումը:

Քրեական ենթամշակույթի հաղթահարման և դրա նկատմամբ զրո հանդուրժողականություն ցուցաբերելու նպատակով Արդարադատության նախարարության կողմից մշակվել,

Կառավարության հավանությանն է արժանացել և 2020 թվականի հունվարի 22-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար նախատեսվել է քրեական պատասխանատվություն:

2019 թվականի հոկտեմբերի 15-ից «Նուբարաշեն», իսկ հոկտեմբերի 16-ից՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում սկսվել է հիմնարկներում պահվող անձանց սննդով ապահովելու գործառույթը մասնավոր ընկերությանը պատվիրակելու փորձնական ծրագիրը: Ծրագրի հետևողական կենսագործումը կնպաստի հանձնուքների թվի կրճատմանը և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ընտանիքների՝ այս առումով հոգսի թեթևացմանը, ինչպես նաև հանձնուքներով արգելված իրերի փոխանցման հնարավոր ռիսկերի կառավարման աստիճանի բարձրացմանը: 2020 թվականի ընթացքում բոլոր քրեակատարողական հիմնարկներն անցում կկատարեն սննդի մատակարարման նոր մեխանիզմին:

Քրեակատարողական ծառայությունում վարչարարությունը կրճատելու, ծառայության գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու նպատակով ներդրման փուլում է գտնվում e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը: Համակարգի ամբողջական ներդրման համար արդեն իսկ հայտարարվել է երկու մրցույթ, որոնց հիման վրա կապահովվի և՛ տեխնիկական հագեցվածությունը, և՛ օպտիկական կապը:

Առաջիկայում ներդրվող համակարգն ամբողջությամբ ներառելու է կալանավորված անձանց և դատապարտյալների առնչությամբ օրենսդրությամբ իրականացվող բոլոր գործառույթների, անհրաժեշտ փաստաթղթերի, պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի կրման ռեժիմների փոփոխման, տեսակցությունների, ուսման, աշխատանքի, ինչպես նաև կարևորություն ներկայացնող այլ տեղեկություններ: Համակարգը թույլ է տալու մշակել ՔԿ հիմնարկներում պահվող անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, վերլուծել և պատշաճ վերահսկողություն սահմանել ՔԿ հիմնարկների ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ:

Առաջնորդվելով անազատության մեջ պահվող անձանց և նրանց տեսակցող հարազատների համար հարմարավետ պայմաններ ստեղծելու հրամայականով՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 2019 թվականին իրականացվել են տեսակցության ութ սենյակների հիմնանորոգման աշխատանքներ: Իրականացված բարեփոխումների արդյունքում հիմնարկի տեսակցության սենյակները համապատասխանեցվել են միջազգային չափորոշիչներին:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացվել է արտաքին կոյուղու, իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում՝ սանհանգույցների, լոգարանների հիմնանորոգման աշխատանքներ, ընդ որում, կառուցվելու են նաև հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ պայմաններով սանհանգույցներ և լոգարաններ:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկում կապիտալ վերանորոգվել է ճաշարանը:

«Հրազդան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են արտաքին կոյուղու ցանցի հիմնանորոգման աշխատանքները:

Արդարադատության նախարարի 2019 թվականի մարտի 28-ի թիվ N 98-Ա հրամանի հիման վրա Պրոբացիայի ծառայությունում 2019 թվականի ապրիլի 1-ից կիրառվում է պրոբացիայի շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքը, որի նպատակը վերասոցիալականացման գործընթացն առավել թիրախավորված դարձնելն է:

Ծառայությունում 2019 թվականի ընթացքում հաշվառվել է 3320 շահառու, որոնցից 242-ը կանայք են, 34-ը՝ անչափահաս, իսկ 26-ը՝ օտարերկրյա քաղաքացիներ: Նրանց նկատմամբ նշանակվել է 1544 պատիժ և 1927 վերահսկողություն, ընդ որում 151 շահառու ունի կրկնակի պատիժ կամ վերահսկողություն: Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման նպատակով 595 շահառուների համար իրականացվել են 55 միջոցառումներ: Հաշվետու ժամանակահատվածում պրոբացիայի ծառայությունը վերազինվել է համակարգիչներով և տպիչներով: Ավարտվել են ծառայության պաշտոնական կայքէջի՝ probation.am-ի, պատրաստման վերջնական աշխատանքները, և այն պարբերաբար թարմացվում է:

Ներման ոլորտ

2019 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Ներման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով: Հաշվետու ժամանակահատվածում Արդարադատության նախարարություն է ներկայացվել 80 ներման խնդրագիր: 3 դատապարտյալի շնորհվել է ներում:

Հարկադիր կատարման ոլորտ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում 2019 թվականին ընթացք է տրվել թվով 1.389.278 կատարողական վարույթների, որից 24.323-ը տեղափոխվել են 2018 թվականից: Հարուցվել և վերսկսվել է 1.364.955 կատարողական վարույթ: Կարճվել է թվով 476.767 կատարողական վարույթ, ավարտվել է 897.450-ը, ընդամենը կարճվել և ավարտվել է 1.374.217 կատարողական վարույթ: Բռնագանձվել է շուրջ 35.9 մլն դրամ:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի հետ միասին մշակել և շրջանառության մեջ էր դրել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից և ներկայումս գործածության մեջ է:

Նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրավակիրառ պրակտիկայում հանդիպող մի շարք հարցերի տրվել են իրավական կարգավորումներ՝

- առավել հստակեցվել են կատարողական վարույթի կողմերի ծանուցման կառուցակարգերը,
- սահմանվել է պարտապանների կողմից հայտարարագրի ներկայացման նոր կարգ:

Հիշյալ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ իրականացվել են ծրագրային որոշակի աշխատանքներ, կատարողական վարույթներով, թե՛ որպես պարտապան, և թե՛ որպես պահանջատեր կողմ առավել շատ հանդիպող կազմակերպությունների ծանուցումներն էլեկտրոնային փոստի միջոցով իրականացնելու ուղղությամբ: Արդյունքում ներկայումս ավելի քան 30 կազմակերպություններ՝ այդ թվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, իրավաբանական անձինք կատարողական վարույթով իրենց հասանելիք ծանուցումներն ստանում են իրենց իսկ կողմից տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեներին: Առավել հստակեցվել է պարտապանի գույքի կամ դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու չափը, հերթականությունը և կարգը: Շարունակվել են հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացները: Պարտապանի գույքի և դրամական միջոցների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման առավել արդյունավետ համակարգ ունենալու նպատակով Պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ ներդրվել է էլեկտրոնային նոր ծրագիր, ինչը ներկայումս գտնվում է կատարելագործման փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ներդրվել է ծրագրային նոր ապահովում արգելադրված գումարների բռնագանձումն ինքնաշխատ եղանակով իրականացնելու համար: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել նախորդ տարիներին արգելադրված և բռնագանձման

ենթակա գումարների բռնագանձումն ինքնաշխատ եղանակով իրականացնելու համար, ինչն աշխատանքային ծանրաբեռնվածության և ծրագրային հնարավորության բացակայության պատճառով նախկինում հնարավոր չի եղել:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ

2019 թվականին փոփոխություններ են իրականացվել ՔԿԱԳ բնագավառում: 2019 թվականի հուլիս 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվեց ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2019 թվականի սեպտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման «մեկ պատուհան» ծառայությունը, որի շրջանակներում «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքից բխող գործառույթների կատարումը պայմանավորված չէ որևէ վարչատարածքային միավորով: «Մեկ պատուհան» ծառայությունը հնարավորություն ընձեռեց դիմողներին ինքնուրույն ընտրելու այն ՔԿԱԳ մարմինը, որտեղ կցանկանան կատարել համապատասխան ՔԿԱԳ գրանցումը, ինչն իր հերթին դրական ազդեցություն է ունենում քաղաքացիների սպասարկման վրա և նվազեցնում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը նաև ամբողջությամբ անցավ քաղաքացիական կացության ակտերի գրանցման փաստը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերի ձևաչափին, մասնավորապես՝ էլեկտրոնային վկայականների և տեղեկանքների, որոնք համապատասխան գործարքներ կատարելիս մշտապես հասանելի են քաղաքացիների համար իրենց պատկանող www.e-citizen.am կայքի պաշտոնական, ինչպես նաև դիմողի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեներում: Անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող www.e-verify.am պաշտոնական կայքում:

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտ

2019 թվականին զգալի աշխատանքներ են իրականացվել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում: Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից տրվել է 261 խորհրդատվություն, հարուցվել է 83 վարչական վարույթ, տրվել է ավելի քան 70 գրավոր կարծիք, ներկայացվել է 80 ծանուցում, իրականացվել է 29 ուսուցում 1132 հոգու համար: Գործակալությունը 2019 թվականի ընթացքում նաև մշակել և հրապարակել է 5 ուղեցույց:

Սփյուռք

2019 թվականի մայիսի 8-ի «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն ՀՀ սփյուռքի նախարարությունը միացման ձևով վերակազմակերպվել է վարչապետի աշխատակազմին՝ վարչապետի աշխատակազմում ստեղծելով սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ: 2019 թվականին հստակեցվել են գրասենյակի գործունեության ուղղությունները և նախատեսվել է առաջիկա տարիների աշխատանքը:

Սփյուռքի մարդկային, ֆինանսական, տնտեսական և մտավոր ներուժի կենտրոնացումը Հայաստանի Հանրապետությունում

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համատեղ կազմակերպել են «ՆերՈւժ» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափեր ծրագիրը: Ծրագիրը նպատակ ունի ստեղծել հարթակ և տալ հնարավորություն սփյուռքի նորաստեղծ ընկերություններին իրենց ստարտափերը Հայաստան բերելու, գործունեություն ծավալելու և երկրում ստարտափերի էկոհամակարգը բարելավելու համար: «ՆերՈւժ» ծրագրին այս տարի մասնակցել են 17 երկրից ընտրված 47 տեխնոլոգիական ստարտափերի 80 ներկայացուցիչներ: Մրցանակային պարգևներից բացի՝ չորս օրերի հավաքի ընթացքում՝ դեկտեմբերի 17-20-ը, ստարտափերները հնարավորություն ունեցան ծանոթանալ և շփվել հայկական ատարթափ էկոհամակարգի դերակատարների հետ, ստանալ գործնական ուսուցում և ուղղորդում հայաստանյան և միջազգային փորձագետների կողմից, ներկայացնել իրենց ստարտափը ժյուրիին՝ կազմված միջազգային և տեղական ներդրողներից, աքսելերատորների ու ինկուբատորների ներկայացուցիչներից, տեխնոլոգիական ոլորտի փորձագետներից: Դեկտեմբերի 20-ին Դիլիջանում կայացել է ծրագրի ամփոփումը, և դրամաշնորհների են արժանացել 6 ատարթափեր: Ծրագրի գումարի մի հատվածը կներդրվի ատարթափերի հետագա ինկուբացիայի, աքսելերացիայի և գլոբալ շուկաներ դուրս բերելու միջոցառումների իրականացման համար: Բացի այդ, ծրագրի 14 գործընկերներն ու աջակիցներն իրենց կողմից տարաբնույթ մրցանակներ են տրամադրել ինչպես դրամաշնորհի արժանացած, այնպես էլ չարժանացած ստարտափերին՝ ըստ իրենց նախասիրության և ընտրության (տեխնիկական, դրամական, ձեռնարկատիրական, խորհրդատվական, աշխատանքային տարածքի և այն):

Նշենք նաև, որ 2018 թվականին կայացած «ՆերՈւժ» սփյուռքի երիտասարդների ատարթափ ծրագրի շրջանակներում դրամաշնորհի արժանացած 9 ստարտափներն էլ հաջողությամբ սկսել են իրականացնել իրենց բիզնես գաղափարները՝ Հայաստանում ստեղծելով 14 նոր աշխատատեղեր:

Հայաստանի և Սփյուռքի միջև փոխշահավետ համագործակցության ապահովում

2019 թվականին շարունակվել է Հայաստանի և Սփյուռքի համապատասխան ոլորտների մասնագետների միջև համագործակցությունը, նախանշվել են առաջիկա տարիներին համատեղ իրականացվելիք ծրագրերը: Այդ նպատակով կազմակերպվել են 3 համաժողովներ:

Հուլիսի 4-6-ը Երևանում տեղի է ունեցել 5-րդ Հայ բժշկական համաշխարհային համագումարը, որի նպատակն է համախմբել աշխարհասփյուռ առողջապահական բժշկական ուժերը, համակարգել նրանց աշխատանքը, նախատեսել համատեղ իրագործման ծրագրեր: Համագումարին մասնակցել են 435 բժիշկներ աշխարհի 21 երկրներից: Համագումարը մեծ ներդրում կունենա Հայաստանի և սփյուռքահայ բժիշկների համագործակցության, բժշկագիտության, առողջապահության ոլորտի հետագա զարգացման մեջ: Համագումարի այս տարվա կարգախոսն է եղել՝ «Հայաստան-Սփյուռք-Արցախ՝ միաձուլում ի փառս առողջության»:

Հոկտեմբերի 10-11-ը սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ տեղի է ունեցել «Հայկական առևտրային ցանցի» Հայաստան-սփյուռք գործարար կապերի զարգացման 4-րդ խորհրդաժողովը: Հայաստան-սփյուռք գործարար կապերի ամրապնդման, Հայաստանի տնտեսական զարգացման օրակարգը քննարկելու համար համաժողովին մասնակցել են 197 հոգի, որոնցից 110-ը եղել են 25 տարբեր երկրներից ժամանած սփյուռքահայ գործարարներ:

Հոկտեմբերի 25-26-ը տեղի է ունեցել Ֆրանսիայի «Ակցիա-առողջություն Հայաստան Ֆրանսիա» կազմակերպության Սրտաբանության եվրակովկասյան 7-րդ համաժողովը, որն իրականացվել է սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և առողջապահության նախարարության աջակցությամբ: Համաժողովին Հայաստանից, Արցախից և Սփյուռքից մասնակցել են շուրջ 380 սրտաբաններ, բուժաշխատողներ, առողջապահության ոլորտի մասնագետներ: Համաժողովի ընթացքում քննարկվել են սրտաբանության և դրան հարակից ոլորտներին առնչվող կարևոր հարցեր, ներկայացվել են նորարարությունները, իրականացվել է փորձի փոխանակում՝ նպատակ ունենալով աջակցել Հայաստանում սրտաբանության ոլորտի զարգացմանը:

Սփյուռքի ներուժը Հայաստանի կառավարման համակարգում ներգրավելու արգելքների և խոչընդոտների վերացումը

Ուսումնասիրվել են ՀՀ-ում գործող այն իրավական ակտերի դրույթները, որոնք հնարավոր առնչություն ունեն սփյուռքահայերի հետ: Մշակվում են մի շարք օրենսդրական ակտերում փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան սփյուռքահայերին ներգրավվելու Հայաստանի հանրային կյանքում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Հայրենադարձության քաղաքականության մշակում, ինտեգրում և դրա իրականացմանն ուղղված մեխանիզմների ներդրում

2019 թվականին հայրենադարձության ոլորտում աշխատանքները կազմակերպվել են համաձայն ՀՀ կառավարության ծրագրի և իրականացվել են հետևյալ ուղղություններով.

Մշակվել է «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը քննարկվում է ՀՀ ԱԺ Կրթության, գիտության, մշակույթի, սփյուռքի և սպորտի հանձնաժողովում՝ օրենքի մշակման նպատակով ձևավորված աշխատանքային խմբի շրջանակներում:

Մշակվել է «Հայրենադարձության ռազմավարության» նախագիծը:

Առաջարկներ են ներկայացվել ՀՀ մաքսային կարգավորումների ոլորտում՝ հայրենադարձվողների, վերադարձողների անձնական օգտագործման գույքի տեղափոխության նպատակով բարելավումների մասին:

Շարունակվել են աշխատանքները Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի միջգերատեսչական մոնիթորինգային հանձնաժողովում:

Մշակվել է հայրենադարձների և վերադարձողների աջակցման փաթեթ (ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն պետական ծառայության հետ համատեղ), որի մեջ ներառված են բնակարանային («Օջախ» բնակարանային հիպոտեկային ծրագիր), բիզնեսի («1+1» ծրագիր), առողջապահության աջակցման ծրագրեր, ինչպես նաև «Մեկ պատուհանի սկզբունքով» գործող ինտեգրման կենտրոնի նախագիծ: Հիշյալ փաթեթն արդեն իսկ ներառվել է ՀՀ կառավարության 2020-2023 թթ. ծրագրում, շահագրգիռ գերատեսչություններից ստացվել են համապատասխան կարծիքները:

Գրասենյակում կազմակերպվել են հայրենադարձների ու վերադարձողների ընդունելություններ (շուրջ 350 հոգի), և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ խորհրդատվության տրամադրում, խնդիրների վերհանում ու այլ պետական մարմինների առաջ միջնորդությունների ներկայացում, նամակագրության վարում և հեռախոսակապով հաղորդակցում (շուրջ 700 հոգի),

հայրենադարձների ցանկերի կազմում և վարում, վտանգված ու խնդրահարույց համայնքներում իրավիճակի գնահատում և այլն:

Միջազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների ժամանակ պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ հայրենադարձվողներին ու վերադարձողներին ընդգրկել տարբեր սոցիալական ու կրթական ծրագրերում:

Հայաստանում հայրենադարձների հաստատման, ինտեգրման ընթացքում հաճախ նկատվող խոչընդոտների ու խնդիրների, դրանց լուծման ուղիների վերաբերյալ իրականացվել են տեղեկատվական, քարոզչական և հանրային աշխատանքներ:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքներում, այդ թվում՝ հայրենադարձության գործընթացի մշակման, արդյունավետ իրականացման աշխատանքներում համապատասխան գործիքներ կիրառելու մասնագիտական փորձառություն ունեցող հետազոտական ու գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, իրականացվել են ԲՈՒՀ-երի ուսանողներին կամավորական աշխատանքներում ներգրավելու քայլեր:

Հայապահպանություն

2019 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 29-ը կայացել է «Քայլ դեպի տուն» հայրենաճանաչության ծրագիրը, որին մասնակցել են 13-18 տարեկան 357 սփյուռքահայ պատանիներ և աղջիկներ աշխարհի 28 երկրներից: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են Հայոց լեզվի դասընթացներ, այցելություններ Հայաստանի գիտակրթական ու նորարարական կենտրոններ, պատմամշակութային վայրեր: Տեղի են ունեցել հանդիպումներ պետական, հասարակական, մշակութային գործիչների հետ: Ճամբարում կազմակերպվել են մի շարք մշակութային ու մարզական միջոցառումներ:

Սփյուռքի համայնքների ինքնակազմակերպմանն աջակցելու նպատակով կազմակերպվել են Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են 21 սփյուռքահայ երիտասարդներ 5 երկրներից:

Կազմակերպվել են սփյուռքի մշակութային գործիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են 19 պարուսույցներ և խմբավարներ 8 երկրներից:

Կազմակերպվել է սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի աշխատանքային 9 այց Սփյուռքի համայնքներ՝ Ռուսաստան, ԱՄՆ, Կիպրոս և Ուկրաինա: Հանդիպումների ընթացքում նախանշվել են համայնքային բազմաբնույթ խնդիրներ, քննարկվել դրանց լուծման ուղիները և հնարավոր աջակցության ցուցաբերումը, ներկայացվել են ՀՀ կառավարության Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերն ու միջոցառումները:

Հանդիպումների ընթացքում համայնքների ներկայացուցիչների կողմից բարձրացված խնդիրները դուրս են բերվել, կազմվել է դրանց լուծման վերաբերյալ աշխատանքային պլան-ժամանակացույց:

2019 թվականին մշակվել են նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ մի շարք նոր ծրագրեր և միջոցառումներ, որոնք իրականացվելու են 2020 թվականից սկսած: Դրանց շրջանակներում նախատեսվում է ՀՀ հանրային ոլորտում ներգրավել սփյուռքահայ մասնագետներին, իրականացնել սփյուռքի համայնքների լայնածավալ ուսումնասիրություններ և բացահայտել մարդկային ներուժը, մշակել սփյուռքը ներկայացնող ներկայացուցչական կառույցի ստեղծման մեխանիզմները:

Կրթություն

Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող հիմնարար գործոն:

Հանրակրթության ոլորտում շարունակվել են հիմնական բարեփոխումները, որոնց նպատակներն են միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր (ինչպես նաև՝ նախադպրոցական) մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Կրթության մատչելիության, հասանելիության ընդլայնման համատեքստում «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը օրենքով սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով և ընդունվել առաջին ընթերցմամբ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համագործակցությամբ մասնակիորեն վերանայվել են Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները: Մշակվել են Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելները, որոնք կներդրվեն «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:

2019 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում հիմնվել է 18 նախակրթարան՝ շուրջ 400 երեխայի ընդգրկմամբ:

2019 թվականին Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման ծրագրի իրականացման իրավական կարգավորման արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ից ծրագրում ընդգրկվել են ՀՀ

բոլոր մարզերը, որի արդյունքում ծրագրում ընդգրկված դպրոցների թիվը նախկին 196-ի փոխարեն կազմում է 758, ուսուցիչների թիվը՝ 1166-ի փոխարեն 3073:

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում 2019-2020 ուսումնական տարում հեռավար ուսուցման փորձնական կարգը, որը կնպաստի մասնագետների պակաս ունեցող մարզային դպրոցներում հեռավար կրթության միջոցով բացը լրացնելուն: Մեկնարկել է Հեռավար ուսուցման կենտրոնի (ՀՈՒԿ) աշխատանքի փորձնական փուլը. ընտրվել են դպրոցները և դասընթացավարները, 2019-2020 ուստարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի Անտառամեջ և Արարատի մարզի Սիսավան համայնքների միջնակարգ դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են ֆիզիկա (Անտառամեջ) և քիմիա (Սիսավան) առարկաների հեռավար դասընթացներ:

Շարունակվել են տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը, հանրապետության դպրոցների համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման աշխատանքները:

2019 թվականի սեպտեմբերին Արագածոտնի մարզի 117 դպրոցներն անցում կատարեցին «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրին՝ սնունդ տրամադրելով նախակրթարանների և 1-4-րդ դասարանների 7514 սովորողի: Ընդհանուր առմամբ 2019-2020 ուսումնական տարում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում սնունդ են ստացել ՀՀ Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի, Շիրակի, Արագածոտնի (Ազգային ծրագիր) շուրջ 600 հանրակրթական դպրոցների նախակրթարանների և 1-4-րդ դասարանների շուրջ 50000 սովորող:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններն ուսուցիչներով ապահովելու նպատակով շարունակվել են ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները:

Սեյսմիկ և այլ վտանգների տեսանկյունից իրականացվել են աշխատանքներ դպրոցների շենքերի բարելավման, աղետների պատրաստվածության ու արձագանքման կարողությունների հզորացման ուղղություններով:

Շարունակվել են համընդհանուր ներառական կրթության ներդրման աշխատանքները: 2019 թվականին Երևանի, Արագածոտնի և Շիրակի մարզերի յոթ հատուկ դպրոցներ վերակազմակերպվել են տարածքային հոգեբանամանկավարժական կենտրոնների: Իրականացվել է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում, որի արդյունքներով Երևան քաղաքի, Արագածոտնի և Շիրակի մարզերի հատուկ դպրոցներից կատարվել է երեխաների տեղափոխումը

հանրակրթական դպրոցներ: ԱՄՆ-ի միջազգային զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզի մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և թիրախային 9 դպրոցների ռեսուրսային սենյակների վերանորոգման աշխատանքներ:

Համաձայն ՀՀ կառավարության 13.12.2018թ. N 1464-Ն որոշման՝ պետական բուհերի բակալավրի կրթական ծրագրով առկա համակարգում սովորող երկու և ավելի երեխա ունեցող 25 ուսանողների, ինչպես նաև ապրիլյան պատերազմի օրերին ծառայած և մարտական հերթապահություն իրականացրած բուհերի (այդ թվում ոչ պետական) 569 ուսանողներին (ընդամենը՝ 594) հատկացվել է ուսման վարձավճարի փոխհատուցում՝ 33 մլն դրամի չափով: Փոխհատուցվել է ապրիլյան պատերազմի օրերին ծառայած և մարտական հերթապահություն կատարած ուսանողների վարձավճարների 20%-ից 10%-ը, մնացած 10%-ը կփոխհատուցվի 2020 թվականին: Երկու և ավելի երեխա ունեցող 25 ուսանողների ուսման վարձը փոխհատուցվել է ամբողջովին:

ՀՀ պետական բյուջեի «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» միջոցառման իրականացման գործընթացը կանոնակարգելու նպատակով մշակվել և հաստատվել է «Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին» ծրագրի իրականացման կարգը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ապահովության և անվտանգության աստիճանը բարձրացնելու նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից հատկացված շուրջ 14 մլն դրամի շրջանակում 6 դպրոցներ, ըստ իրենց ներկայացրած ծրագրի, բարելավել են աղետներին դիմակայունության մակարդակի և աղետներին արձագանքման իրենց կարողությունների աստիճանը:

Կրթության որակի, կառավարման, դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 08.30.2019թ. N 33-Լ հրամանով հաստատվել է «ՀՀ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) ամբողջականացման գործողությունների պլանը», որով սահմանվել է համապատասխան իրավական ակտերում փոփոխություն կատարելու, հայեցակարգի, ձեռնարկների մշակման և այլ միջոցառումների կատարման ժամանակացույցը:

ԵՄ և Համաշխարհային բանկի աջակցությամբ ընթանում են աշխատանքներ հանրակրթական չափորոշիչների, STEM (Գիտություն, Տեխնոլոգիա, Ճարտարագիտություն և Մաթեմատիկա) կրթության, առարկայական ծրագրերի մշակման ուղղությամբ:

Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 02.09.2019թ. N 34-Լ հրամանով հաստատվել է «Հանրակրթության կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգը»:

Բարեփոխումների հայեցակարգում նկարագրվում են հանրակրթության ոլորտի խնդիրները, առկա վիճակը, ինչից հետո առաջարկվում են լուծումներ, և ներկայացվում են դրանց իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքները:

Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30.10.2019թ. N 42-Լ հրամանով հաստատվել են ուսուցիչների մասնագիտական որակավորումների բնութագրերը: Հրամանում ներկայացվում են պարզաբանումներ «Ուսուցիչների մասնագիտական որակավորումների բնութագրեր» հասկացության մասին, սահմանվում են բնութագրերի հիմնական ուղղությունները, մասնագիտական որակավորումների բնութագրիչները:

2019 թվականի հուլիսի 1-ից ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամն իրականացնում է «Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացման» փորձնական ծրագիրը, որի շրջանակում 60 վերապատրաստող մենթորները, կիրառելով ծրագրի շրջանակում մշակված մոդուլներն ու գործիքակազմը, իրականացնում են հանրակրթական դպրոցների առարկայական ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման փուլային ծրագիր:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտի զարգացման և կատարելագործման նպատակով շարունակվել են արտադպրոցական կրթական ծրագրերի մշակման և ներդրման գործընթացները, որոնք նպաստել են սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:

«Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման արդյունքում ՀՀ բոլոր մարզերում գործում են թվով 284 ինժեներական լաբորատորիաներ և ռոբոտաշինական խմբակներ: Ծրագրում ընդգրկված է թվով 7500 սովորող:

«Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» կրթական ծրագրի իրականացման շրջանակում մշակվում և լրամշակվում են ծրագրեր, նախագծեր, գնահատման գործիքներ: Իրականացվում են անհատական և հեռավար ուսուցման նախագծեր, մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման ծրագրեր, բլոգային–նախագծային ուսուցման վերապատրաստումներ, բաց հավաքներ, ճամբարներ: Կազմակերպվել և իրականացվել են աշխատանքներ Ստամբուլի գործընկեր դպրոցների հետ: Կրթական ծրագիրը ներկայացվել է Շիրակի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Տավուշի մարզերում:

«Բրիտանական խորհրդի» հետ համագործակցության արդյունքում հանրապետության ևս 6 դպրոցներում հիմնվել են «Անգլերենի ակումբներ», ընդհանուր առմամբ գործում է 15 ակումբ:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության արդյունքում հանրապետության 10 դպրոցներում հիմնվել են Մասնագիտական կողմնորոշման ակումբներ:

«Ձեռնարկատիրական կրթության ներդրումը դպրոցում» ծրագրի շրջանակում 2019 թվականին վերապատրաստվել են հանրապետության բոլոր դպրոցներից ընդգրկված շուրջ 8000 ուսուցիչ: Ծրագիրը ներդրված է հանրապետության բոլոր դպրոցների տարրական դասարաններում:

«Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի ներդրման շրջանակներում 2019 թվականին վերապատրաստվել են հանրապետության շուրջ 350 դպրոցներից ընդգրկված շուրջ 3000 ուսուցիչ: Ներկայումս ծրագիրը ներդրված է հանրապետության շուրջ 700 դպրոցում:

Մասնագիտական կրթության բնագավառում իրականացվել են մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի և միջազգային չափանիշներին ու պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, կրթության որակի ապահովմանը: Մասնագիտական կրթության ոլորտի իրականացվելիք բարեփոխումների հիմնական նպատակներից են լինելու, մասնավորապես, կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգերի կատարելագործումը, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների համար սոցիալական և ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացումը:

Հայաստանի Հանրապետության 10 հանրակրթական ուսումնական հաստատություններ միացած են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ասոցացված դպրոցների ցանցին, որի շրջանակներում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում իրականացվող ծրագրերին և միջոցառումներին: Մասնավորապես, 2019 թվականի սեպտեմբերին Բուլղարիայում տեղի ունեցած “KARST UNDER PROTECTION – GIFT FOR THE FUTURE GENERATIONS” մրցույթի շրջանակներում Երևանի թիվ 198 ավագ դպրոցը արժանացել է 3-րդ մրցանակի:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ոլորտում Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնն իրականացրել է 40 ՄԿՈՒ հաստատությունների թվով 42 (17-ը՝ Երևանի և 23-ը՝ մարզային) կարիերայի պատասխանատուի վերապատրաստում:

Նոր մասնագիտություններ են ներդրվել ՄԿՈ ուսումնական հաստատություններում, մասնավորապես.

- «Սառնարանային տնտեսություն» մասնագիտությունը՝ «Տեխնիկ՝ սառնարանային տնտեսության» որակավորմամբ, ներդրվել է Երևանի տարածաշրջանային թիվ 2, Արարատի տարածաշրջանային և Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջներում.

- «Ծխախոտի աճեցման և վերամշակման տեխնոլոգիա» մասնագիտությունը՝ «Տեխնոլոգ՝ ծխախոտի աճեցման և վերամշակման» որակավորմամբ, ներդրվել է Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում.
- «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտությունը ներդրվել է Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի քոլեջում:

ՄԿՈՒ բովանդակության արդիականացման, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման նպատակով 2019 թվականին մշակվել, վերանայվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատվել են թվով 24 ՆՄՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներ և համապատասխան մոդուլային ծրագրեր:

Իրականացվել են վերապատրաստումներ մասնագիտական կրթության համակարգի աշխատողների և համակարգի աշխատանքներում ներգրավված այլ անձնակազմերի թվով 602 անձանց համար:

Իրականացվել է ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քարտեզագրում և 2 հաստատության միավորում՝ Հրազդանի պետական բժշկական քոլեջը միացման ձևով վերակազմակերպվել է՝ միանալով Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջին: Գործընթացը շարունակական է:

Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են փորձարարական դուալ ուսուցման համակարգի ընտրված մասնագիտությունների գծով թվով 7 ուսումնական պլան և մոդուլային ուսուցման ծրագիր:

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետ համագործակցության շրջանակում իրականացվել է ԱՄԿ «Հմտությունների զարգացման ռազմավարական պլանավորման և համապատասխան ցուցանիշների ներդրման» փորձնական ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է ՀՀ Լոռու մարզում իրականացնել աշխատաշուկայի հետազոտություն: Նման հետազոտությունների առկայությունը շատ կարևոր է, որոնք հետագայում հնարավորություն կտան պետպատվերի տեղերի բաշխումն իրականացնել բացառապես աշխատաշուկայի կանխատեսումների հիման վրա՝ խթանելով ՆՄՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ընդունելության պլանավորումը:

Միջազգային կազմակերպությունների կողմից Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան և Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշեևի անվան պետական գյուղատնտեսական, Ալավերդու և Արարատի պետական քոլեջներին տրամադրվել է նյութատեխնիկական բազա:

Շրջանառվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ներկայացվել է Ազգային ժողովի գիտության, կրթության,

մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի կողմից Ազգային Ժողովում հրավիրված խորհրդարանական լսումներում: Հաշվի առնելով նախագծի առանցքային դրույթների նորարարական բնույթը՝ հանրության հետ կառուցողական երկխոսություն ապահովելու նպատակով 2019 թվականի հոկտեմբերից մեկնարկել են հանրային քննարկումներ՝ հարցազրույցների, բանավեճերի, մամուլի ասուլիսների, թիրախային խմբերի հետ հանդիպումների ձևաչափով՝ օգտագործելով տարբեր հարթակներ:

Մշակված են և գտնվում են քննարկումների ու վերանայման փուլում բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային ռազմավարության նախագիծը և միջազգայնացման ռազմավարության նպատակների ու խնդիրների իրագործման պլանավորման նախնական տարբերակները:

Բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակը՝ studyinarmenia.am, ստեղծված է, միջազգայնացման ցուցիչները և գործիքակազմը մշակված են: Ներկայումս իրականացվում է հարթակի բաժիններում տեղեկատվության մշակում և մուտքագրում:

ԵՄ-ի Erasmus+ ծրագրի շրջանակներում ՀՀ բուհերի կողմից շարունակվում են դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքները: Erasmus+ ծրագրի Կարողությունների զարգացման գործողության ներքո 2019 թվականի մայիս-նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է 20 ծրագիր, որոնցից 7-ը համակարգվել են հայկական բուհերի կողմից:

Հայագիտության, սփյուռքի, լեզվի ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները:

Կազմակերպվել է Համահայկական հայագիտական 9-րդ օլիմպիադան՝ 80 մասնակցով և մասնակիցների համար կրթամշակութային ծրագրերի իրականացմամբ:

Իրականացվել է 57 սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում, Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոն, որում ներկայացվել են 800 նկարի ցուցահանդես, Բաց վարպետաց դաս առանձին հաստատությունների համար:

Սփյուռքին տրամադրվել են դասագրքեր և այլ ուսումնաօժանդակ նյութեր՝ շուրջ 63000 անուն ուսումնական նյութեր: Իրականացվել է սփյուռքահայ շուրջ 800 դիմորդների (լրացվում են միայն սփյուռքահայերի կողմից) ընդունելություն ՀՀ բուհեր և քոլեջներ, որոնցից 70-ը՝ պետական պատվերի շրջանակներում: ՀՀ կառավարության 25.04.2019թ. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի), առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը հաստատելու մասին» թիվ 476-Ն որոշմամբ սփյուռաքահայերին անվճար տեղերը հատկացվում են հայագիտության, մանկավարժության և արվեստների բնագավառներում:

ՀՀ պետական բյուջեի աջակցությամբ օտարերկրյա համալսարաններում՝ Բուխարեստի պետական, Զալցբուրգի, Վենետիկի Կա՛Ֆոսկար և Պրահայի Կարլի համալսարաններում, դասավանդվել են հայոց լեզու և այլ հայագիտական առարկաներ:

Հայոց լեզվի դասավանդման վերաբերյալ ստորագրվել է հուշագիր ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Վենետիկի Կա՛Ֆոսկար համալսարանի միջև:

Ստեղծվել է համատեղ հայ-վրացական աշխատանքային խումբ՝ Վրաստանում հայերենով ուսուցմամբ հանրային դպրոցների մի շարք հիմնախնդիրների լուծման ճանապարհները նախագծելու համար:

Լեզվի կոմիտեի կողմից իրականացվել են լեզվի վիճակի շարունակական դիտարկում և գնահատում, ՀՀ-ից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանն ուղղված քայլեր: Քայլեր են իրականացվել ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրի նախագծի ստեղծման ուղղությամբ: Թվային տիրույթում և սոցիալական ցանցերում հայերենի քարոզչության ու առաջմղման նպատակով հուլիսից գործարկվել է կոմիտեի պաշտոնական կայքէջը՝ langcom.am և լեզվիկոմիտե.հայ հասցեներով: Գործում է ֆեյսբուքյան ակտիվ էջ:

Գիտություն

2019 թվականին գիտության ոլորտում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են շուրջ 14.4 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 93.3%-ը:

2019 թվականին իրականացվել են հետևյալ առաջնահերթ գերակա խնդիրները.

- ֆինանսավորման արդյունավետության բարձրացում,
- տրամադրվող միջոցների ուղղումը դեպի երկրի տնտեսության պահանջներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղություններ,
- երիտասարդ գիտնականների համար Հայաստանում ապրելու և ստեղծագործելու պայմանների ստեղծում,
- կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում,
- հայագիտության ոլորտի հետազոտությունների խթանում և միջազգային գիտական համագործակցության զարգացում:

Վերոնշյալ գերակա խնդիրների լուծման համար իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատում,
- գիտության ոլորտի օպտիմալացում և կառուցվածքային բարեփոխումների իրականացում,

- երկակի նշանակություն ունեցող և պաշտպանական խնդիրներին միտված ծրագրերի, ինչպես նաև տնտեսության պահանջներից բխող գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,
- գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում,
- գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորման, ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավման խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում,
- հայագիտության հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

Առողջապահություն

Բնակչության առողջությունը պետության կայուն զարգացումն ապահովող հիմնական գործոններից և ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից է:

2019 թվականին առողջապահության ոլորտի բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում դրվել է յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի ապահովումը՝ բուժօգնության տրամադրման հավասարության, արդարության, մատչելիության սկզբունքների վրա հիմնված բժշկական օգնության որակի ապահովման ճանապարհով:

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է եղել հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների ուսումնասիրման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը:

Բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության բնագավառում տարվող քաղաքականությունը նպատակ է ունեցել ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության բարձր մակարդակ, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցում՝ սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման նկատմամբ մշտական վերահսկողության ապահովման միջոցով:

Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովման նպատակով նախաձեռնվել է ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման չափորոշիչների փուլ առ փուլ ներդրման գործընթաց:

Առողջության առաջնային պահպանման ոլորտի գործունեությունը՝ որպես առաջնագծի, առավելագույնս նպատակաուղղված է եղել հիվանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանը:

Ընդլայնվել է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված այն շահառուների ցանկը, որոնք իրավունք ունեն օգտվել պետական պատվերի շրջանակներում սրտի վիրահատական ծառայություններից:

Մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել մոր և մանկան առողջության ցուցանիշների բարելավմանը՝ ուղղորդված առողջապահական ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով մոր ու մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրային ուղղությունների ուժեղացման միջոցով: 2019 թվականին վերսկսվել է նախորդ տարի ընդհատված՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ անպտուղ զույգերին բժշկական օգնության ծառայությունների մատուցումը:

2019 թվականի հուլիսից ծառայությունների հաստատված փաթեթների շրջանակներում մինչև 18 տարեկան բոլոր երեխաների հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումն ամբողջությամբ իրականացվում է պետական պատվերով՝նախկին մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների փոխարեն:

2019 թվականի փետրվարից ներդրվել է գլխուղեղի սուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիայի ծրագիրը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ուղղությամբ իրականացվել են աշխատանքներ՝ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ:

Կարևորելով նշված մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու խնդիրը և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու նպատակով՝ 2019 թվականին իրականացվել են բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցման աշխատանքներ:

Դեղապահովման ոլորտում քաղաքականությունն ուղղված է եղել դեղերի մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև բնակչությանն առավել արդիական ու արդյունավետ դեղերով ապահովմանը՝ դեղերի ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական

վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով:

ՀՀ կառավարությունը շարունակում է մարզային բժշկական կազմակերպությունները վերանորոգելու, վերակառուցելու և վերազինելու աշխատանքների իրականացումը՝ հանրապետության ամբողջ տարածքում ժամանակակից բժշկական ծառայությունների հասանելիությունը բարձրացնելու նպատակով: Աշխատանքներ են իրականացվել ոլորտը նորագույն սարքավորումներով վերազինելու ուղղությամբ:

Սոցիալական պաշտպանություն

2019 թվականը առանձնացավ կատարված աշխատանքների և՛ ծավալի ու ընդգրկվածության, և՛ բովանդակային առումով: Գոհացուցիչ արդյունքներ արձանագրվեցին սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված համագործակցային միջավայրի ստեղծման, պետություն-ոչ պետական հատվածի համագործակցության զարգացման ու ինստիտուցիոնալացման ուղղությամբ:

Շոշափելի քայլեր ձեռնարկվեցին մատուցվող ծառայությունների հասցեականության, որակի ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

<u>Աշխատանք և զբաղվածություն</u>

ՀՀ կառավարության առաջարկով 2020 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձի չեմ է սահմանվել 68000 դրամը:

Ազգային ժողովի մի շարք պատգամավորների հետ սերտ համագործակցության արդյունքում մշակվել և ընդունվել են աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության շրջանակների ընդլայնում նախատեսող իրավական հիմքերը: Ընդունված օրենքներով ամրագրված նշված կարգավորումներն ուժի մեջ են մտնելու 2021 թվականի հուլիսի 1-ից: Լրացում է կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Տրվել է աշխատանքային հարաբերություններում խտրականության սահմանումը և հստակ ամրագրվել, որ աշխատանքային օրենսդրությամբ խտրականությունն արգելվում է:

Ամրագրվել է դատարանի կողմից նախկին աշխատանքում վերականգնված անձանց սոցիալական փաթեթի իրավունքի պահպանման երաշխիք:

Սոցիալական փաթեթի՝ համավարկառու հանդիսացող շահառուին ևս սոցիալական փաթեթի հիփոթեկային բաղադրիչից օգտվելու հնարավորություն է տրվել (եթե վերջինս հանդիսանում է բնակարանի սեփականատեր (համասեփականատեր)):

ՀՀ կառավարության 20.06.2019թ. N 803-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 17.04.2014թ. N 534-Ն որոշման մեջ: Փոփոխությունները նպատակ են ունեցել բարձրացնել «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագրի արդյունավետությունը՝ սահմանափակ ռեսուրսներով ավելի մեծ քանակությամբ շահառուների զբաղվածության ապահովման համար, ինչպես նաև պարզեցնել ծրագրի իրականացման ընթացակարգը:

ՀՀ կառավարության 14.11.2019թ. N 1616-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 17.04.2014թ. N 534-Ն որոշման մեջ, համաձայն որի՝

- զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ստացված ֆինանսական միջոցների հետ վերադարձման պայմանը հանվել է,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում» ծրագրի շրջանակներում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի փոխհատուցումը տրամադրվելու է 1 տարի՝ 6 ամսվա փոխարեն, իսկ ուղեկցող ունենալու համար հաշմանդամություն ունեցող անձին դրամական օգնություն տրամադրվելու է ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածի համար (նախկինում տրամադրվում էր մինչև 6 ամիս ժամկետով),
- բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտները ճանաչվել են աշխատաշուկայում անմրցունակ և հնարավորություն ստացել առաջնահերթության կարգով ընդգրկվելու զբաղվածության կարգավորման պետական բոլոր ծրագրերում:

ՀՀ կառավարության 18.07.2019թ. N 917-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 12.05.2016թ. N 493-Ն որոշման մեջ, որով գիտական աստիճան ունեցող օտարերկրացիներին՝ որպես բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետների, իրավունք է վերապահվել առանց աշխատանքի թույլտվության աշխատելու Հայաստանի Հանրապետությունում:

2019 թվականին մշակվել է ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է՝

- լիազորված մարմնին վերապահել զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի իրականացումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն,

• աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշները լրացնել նոր չափանիշներով, այն է՝ անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ հանդիսանալը, ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) հանդիսանալու հանգամանքը, ինչպես նաև երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող անձ հանդիսանալու հանգամանքը:

• զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի բաշխումը՝ ըստ տարածքների, չսահմանել ՀՀ կառավարության որոշմամբ, քանի որ պայմանավորված տարածքներում տնտեսության իրավիճակային, չնախատեսված զարգացումներով՝ անհրաժեշտ է լինում առանձին տարածքներում արագ մեծացնել կամ փոքրացնել նախատեսված ծրագրերի թիվը, որը գործող ընթացակարգերով արագ կազմակերպել հնարավոր չէ (գործընթացն իրականացվում է Կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով): Արդյունքում, հնարավոր չի լինում զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի միջոցով արագ արձագանքել տնտեսության զարգացումներին և ծրագրեր իրականացնել այն տարածքներում, որտեղ դրա պահանջը տարվա ընթացքում առաջանում է:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է՝

• հստակեցնել լիազորված մարմնի իրավասությունները, որը հնարավորություն կտա ընդունելու օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր,

• զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի բաշխումը՝ ըստ տարածքների, դարձնել առավել ճկուն ու հասցեական և աշխատաշուկայի փոփոխություններին արագ արձագանքող՝ այդպիսով ծրագրերը դարձնելով առավել թիրախավորված և, որպես արդյունք, բարելավելով կատարողականի ցուցանիշները,

• աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշները լրացնել նոր չափանիշներով, որը հնարավորություն կտա մանկատան շրջանավարտներին, ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին և երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող անձանց, որպես աշխատաշուկայում անմրցունակ, ընդգրկվել զբաղվածության ամենամյա պետական ծրագրի շրջանակներում անմրցունակ անձանց համար իրականացվող ծրագրերում:

Միաժամանակ հարկ է նշել, որ նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 20-ի նիստում:

2019 թվականին մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման

նախագիծը, որով ամրագրվում են առաջիկա տարիների համար բնակչության զբաղվածության մակարդակի մեծացման հնարավոր միջոցառումներն ու ուղիները:

Կենսաթոշակային ապահովություն

2019 թվականի ընթացքում կենսաթոշակային ապահովության ոլորտում իրականացված աշխատանքներն ուղղված են եղել օրենսդրության կատարելագործմանը՝ կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների իրավունքի իրացման պայմանները հստակեցնելու, նշանակման և վճարման գործընթացում առկա ռիսկերը նվազեցնելու, ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու, կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման գործընթացի վարչարարությունը պարզեցնելու նպատակով:

Կառավարության ծրագրի 4.2-րդ մասով նախատեսված՝ կենսաթոշակների բարձրացման, ինչպես նաև մինչև 2023 թվականը ծայրահեղ աղքատությունը վերացնելու, աղքատությունն էապես նվազեցնելու դրույթների իրականացումն ապահովելու միջոցառումների շրջանակում «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 28.03.2019թ. ՀՕ-7-Ն օրենքով ներդրվեց նոր եզրույթ՝ «Նվազագույն կենսաթոշակի չափ»: Կառավարության 25.04.2019թ. N 472-Ն որոշմամբ այդ չափը սահմանվել է ծայրահեղ աղքատության գծի՝ 2019 թվականի համար կանխատեսված չափին հավասար՝ 25500 դրամ: Կենսաթոշակները վերահաշվարկվել են 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ կենսաթոշակների վճարված և նոր չափով հաշվարկված գումարների տարբերություններն ընդգրկվել են մայիս ամսվա վճարման ցուցակներ: Արդյունքում ավելացել է 21785 աշխատանքային կենսաթոշակ ստացողների կենսաթոշակների չափը:

Օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ՀՀ կառավարությունը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» 29.11.2018 N 1408-Ն որոշմամբ 2019 թվականի հունվարի 1-ից ծայրահեղ աղքատության գծին հավասար՝ 25500 դրամ է սահմանել.

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության (երրորդ խումբ) զինվորական կենսաթոշակի չափը,
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը,

- ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը:

Արդյունքում ավելացել են 64084 նպաստառուի նպաստների և 3307 զինվորական կենսաթոշակ ստացողների կենսաթոշակների չափերը:

Մշակվել և ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվելու դեպքում աստիճանաբար անցում կկատարվի կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգին՝ ապահովելով վճարումների հասցեականությունը և էապես նվազեցնելով առկա ռիսկերը:

Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու, նրանց ակտիվ գործունեությունն ու բարեկեցության աստիճանի բարձրացման նպատակով ՀՀ կառավարության 04.07.2019թ. N 824-Ն որոշմամբ Հայրենական մեծ պատերազմի վետերանների պատվովճարի չափը սահմանվել է 100000 դրամ (նախկինում սահմանված 50000 դրամի փոխարեն): Ըստ այդմ, հաշվետու տարվա սեպտեմբեր ամսից սկսած՝ Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարները վճարվում են նոր չափով:

ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1920-Ն որոշմամբ սահմանվել են հիմնական կենսաթոշակի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, զինվորական կենսաթոշակների չափերը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի, աշխատանքային ստաժի և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի նոր չափերը: Նպատակը կենսաթոշակառուների, ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողների շրջանում ծայրահեղ աղքատությունը հաղթահարելն է:

Շարունակվում են աշխատանքային գրքույկների հաշվառումը և աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու (թվայնացման) աշխատանքները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության միջև համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կենսաթոշակային ապահովության, առանձին պետական նպաստների ոլորտներում իրականացվող քաղաքականության մեջ կատարվող փոփոխությունների իրազեկում,
- տրամադրվել են մեթոդական աջակցություն, խորհրդատվություն և տեղեկատվություն,

- համագործակցության շրջանակներում, նախարարության և Սոցիալական ապահովության ծառայության տեղեկատվական ոլորտի մասնագետների աջակցությամբ աշխատանքներ են տարվել Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի համակարգում «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի ենթահամակարգի ներդրման ուղղությամբ:

Նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով, որպես ժողովրդագրական իրավիճակի բարելավման քայլեր, մշակվել են համապատասխան նախագծեր, որոնց ընդունվելու դեպքում 2020թ. հուլիսի 1-ից նախատեսվում է խնամքի նպաստի իրավունք սահմանել նաև գյուղական բնակավայրերում բնակվող ընտանիքների համար՝ մինչև երեխայի 2 տարին լրանալը (ընդ որում, գյուղական բնակավայրում բնակվող ծնողին խնամքի նպաստը նախատեսվում է նշանակել և վճարել անկախ ծնողին՝ որպես վարձու աշխատողի, խնամքի նպաստ նշանակելու և վճարելու հանգամանքից), ինչպես նաև բարձրացնել երեխայի ծննդյան միանվագ նպաստի և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը:

<u>Սոցիալական աջակցություն</u>

Պետական նպաստներ

2019 թվականին շարունակվել են ընտանիքների անապահովության գնահատման համակարգով տրամադրվող նպաստների (ընտանեկան կամ սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն) հատկացման աշխատանքները: Շարունակվել են պետական նպաստների, այդ թվում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակի ընդլայնմանը, ինչպես նաև հասցեականության բարձրացմանն ուղղված աշխատանքները: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (այսուհետ՝ նպաստ) բարեփոխումների համար ՀՀ վարչապետի որոշմամբ 2019 թվականի տարեսկզբին ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ վարչապետի խորհրդականի ղեկավարությամբ: Աշխատանքների առաջին փուլն ավարտվել է, և ընտանիքի անապահովության գնահատման նոր բանաձևը, որն առավելապես վերաբերում է դրամական օգնության տրամադրմանը, ներկայացվել է վարչապետին: Վարչապետի հանձնարարությամբ ընդլայնված աշխատանքային խումբը համակարգի ամբողջական վերանայման առաջարկությունը կներկայացնի 2020 թվականի երկրորդ կիսամյակում, որը, բացի դրամական օգնությունից, նախատեսելու է նաև սոցիալապես անապահով ընտանիքին սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում՝ գնահատված սոցիալական կարիքների հիման վրա:

Ընտանեկան նպաստի ծրագրի ծածկույթը 2019 թվականին կազմել է ընդհանուր բնակչության շուրջ 10.3%-ը: 2018 թվականին ընդհանուր բնակչության ընտանեկան նպաստի ծածկույթը կազմել էր 11.89%:

2019 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 105621 ընտանիքներից ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացել են ամսական միջինում 86757-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների 82.14%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն՝ միջինում 4989 ընտանիք կամ ընդհանուր հաշվառվածների 4.7%-ը, նպաստի միջին չափը կազմել է 31350 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 3468 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 8120 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 106 ընտանիքի: Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 20.00 միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքներն օգտվում են նվազ սակագնով բնական գազի (ոչ ավելի տարեկան 600մ^3, տարեկան 23400 դրամի չափով) և էլեկտրական էներգիայի համար վճարելու իրավունքից (առանց սահմանափակման՝ միջինում 15840 դրամի չափով)՝ որպես առանձին սպառողական խումբ (պետական բյուջեն չի ֆինանսավորում): Արտոնությունից օգտվում են բնական գազի սպառող շուրջ 70 հազար և էլեկտրական էներգիայի սպառող շուրջ 97 հազար ընտանիքներ:

Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման իրավունք է տրվել մինչև 1934թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձանց (վճարվել է շուրջ 4890 ավանդատուի), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ ՀՀ սահմանամերձ համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014թ. օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց (վճարվել է 800 ավանդատուի), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած անձանց (վճարվել է 13 ավանդատուի):

Ինտեգրված սոցիալական ծառայություններ

2019 թվականի ընթացքում կացարաններ են տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված 3 անձանց:

Մեկնարկել է մանկատան շրջանավարտներին բնակարանի գնման վկայագրերի տրամադրման գործընթացը, և 55 շրջանավարտների համար կայացվել են ԲԳՎ-ի տրամադրման որոշումներ:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրման ծրագրում՝ Նպաստ+ ծրագիր, ընդգրկվել է 1001 նպաստառու ընտանիք:

2019 թվականի ընթացքում իրականացվել են սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացմանն ուղղված աշխատանքներ՝ այցելություններ հանրապետության բոլոր մարզեր, հանդիպումներին մասնակցել են միջգերատեսչական համագործակցության կողմերը, աջակցող ցանցի անդամները: Մեկ պատուհանի սկզբունքով գործարկվում են 27 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՍԾՏԿ):

<u>Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների հիմնահարցեր</u>

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտի պետական քաղաքականությունն ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումը կապահովի բոլոր նախադրյալները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանելու՝ անկախ կյանքի և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմաններ ու հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ:

Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում ՄԱԿ-ի 2006 թվականի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու ուղղությամբ, որը նոր հարթակ և հնարավորություն կստեղծի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության համար:

Աշխատանքներ են տարվում հաշմանդամության գնահատման նոր մոդել ներդնելու ուղղությամբ, որի նպատակն է բժշկասոցիալական փորձաքննությունից անցնել անձի

ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել անձի առողջական խնդիրների, նրա կարողությունների և միջավայրային գործոնների ունեցած ազդեցության համատեքստում և որոշել յուրաքանչյուր անձի անհատական ծառայությունների փաթեթը:

Հաշմանդամության գնահատման նոր մոդելի իրավական հիմքերն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունցիոնալության գնահատման համակարգի ներդրում» ծրագիրը:

Միաժամանակ, հաշմանդամություն ունեցող անձի ֆունկցիոնալության գնահատման նոր մոդելի ներդրման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ վարչապետի 19.06.2019թ. N 798-Ա որոշմամբ ստեղծվել է համակարգող խորհուրդ:

2019 թվականից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցները (այդ թվում՝ ձայնաստեղծ սարքեր, աչքի, վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, անվասայլակներ, քայլակներ և այլն) տրամադրվել են պետական հավաստագրերի միջոցով: Արդյունքում մեծացել է աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպությունների մրցակցությունը, որն անմիջականորեն ազդում է նաև տրամադրվող պարագաների և մատուցվող ծառայությունների որակի վրա:

Պետական աջակցություն է ցուցաբերվել մրցույթի արդյունքում ընտրված հասարակական կազմակերպություններին՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար: 2019 թվականին ցերեկային կենտրոններում խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ է ստացել ամսական 190 երեխա:

Մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 07.11.2019թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1540-Ն որոշումը, որով նախատեսվում է մտավոր և հոգեկան խնդիրներ (այդ թվում՝ աուտիզմ) ունեցող անձանց խնամքի և սոցիալական վերականգնողական ծառայություններ մատուցող կազմակերպություններում մասնագիտացված աշխատանք կամ խնամք իրականացնողների նվազագույն աշխատավարձը 2020 թվականի հունվարի 1-ից ավելացնել 30%-ով:

31.12.2019թ. դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 192013, որից 8623-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա: Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը նախորդ տարվա

համեմատ աճել է 3553-ով: 2019 թվականի ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 16227 անձ (նախորդ տարվա համեմատ աճել է 4140-ով), վերափորձաքննվել է 32722 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 3729-ով):

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում 2019 թվականին շարունակվել է ծերացման հիմնահարցերի լուծմանն ուղղված՝ սոցիալական պաշտպանության ոլորտում պետության որդեգրած ակտիվ և առողջ ծերություն ու տարեցների համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Իրականացվել են ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության ու վերջինիս իրականացման 2017-2021թթ. միջոցառումների ծրագրի՝ 2019 թվականի համար նախատեսված միջոցառումները:

Մասնավորապես՝ մշակվել և շրջանառության մեջ են դրվել մի շարք իրավական ակտերի նախագծեր՝ կապված տարեցների խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու, ընտանիքում տարեց հիվանդ անդամ ունեցող ընտանիքին սոցիալական աջակցություն ցուցաբերելու, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու և այլնի հետ:

Նախարարության նախաձեռնությամբ տարվա ընթացքում ՀՄՊ 30 վետերան անվճար օգտվել է առողջարանային բուժման և հանգստի ծառայություններից:

2019 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին նպատակային սոցիալական աջակցություն ցուցաբերելու մասին» ՀՀ օրենքը:

Ոլորտի հիմնախնդիրների լուծման և, մասնավորապես, խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման քաղաքականության ներդրման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և Տարեցների պաշտպանության ցանցի կողմից իրականացվել են մի շարք հետազոտություններ և ուսումնասիրություններ, մասնավորապես, իրականացվել է հետազոտություն տուն-ինտերնատներում խնամվողների սոցիալական կարիքների և այլընտրանքային ծառայությունների նկատմամբ նրանց պահանջարկի համալիր գնահատման ուղղությամբ: Միաժամանակ, նախարարության և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից վերանայվել են խնամքի տրամադրման չափորոշիչները:

2019 թվականին տարեցների հիմնահարցերի ոլորտում ծառայություններ են պատվիրակվել և պետական աջակցություն է ցուցաբերվել մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված հինգ ոչ պետական կազմակերպությունների՝ տարեց, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև անօթևան անձանց խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Տարվա ընթացքում հանրապետությունում պետական նպատակային ծրագրերի շրջանակում խնամքի (շուրջօրյա խնամքի հաստատություններում, տնային պայմաններում և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում) ծառայություններ է ստացել դրա կարիքն ունեցող շուրջ 6500 տարեց և հաշմանդամություն ունեցող անձ:

<u>Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր</u>

Կանանց հիմնահարցեր

Շարունակվել է «Թրաֆիքինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագիրը, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել 8 շահառուի, «Միանվագ դրամական օգնություն» ծրագրի շրջանակներում համապատասխան դրամական աջակցություն է տրվել 6 անձի: Իրականացվել են թրաֆիքինգի խնդիրներին վերաբերող տարեկան 1 հեռուստահաղորդման պատրաստման աշխատանքները: Մասնավորապես, պատրաստվել է սոցիալական գովազդային տեսահոլովակ, որը տեղադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆեյսբուքյան էջում և կայք-էջում, antitrafiking և youtube սոցիալական կայքերում:

Ընտանիքում բռնության կանխարգելմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել են մի շարք իրավական ակտեր, որոնք կարգավորում են ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման և ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման հարաբերությունները: Վերոնշյալ գործընթացը նպաստել է, որ 2020 թվականի բյուջեում ներառվեն երեք նոր նախաձեռնություններ՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց երկու ապաստարանների համաֆինանսավորում՝ ընդհանուր առմամբ 60 շահառուի համար, բոլոր մարզերում ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների համաֆինանսավորում՝ ընդհանուր առմամբ 1800 շահառուի համար, և ընտանիքում բռնության ենթարկված անձանց ֆինանսական աջակցության տրամադրում՝

ընդհանուր առմամբ 150 շահառուի: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի բյուջեում ավելացվել են նաև գենդերազգայուն ցուցիչներ:

Երեխաների հիմնահարցեր

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական նպատակը երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման ապահովումն է, երեխաների ապաինստիտուցիոնալացումը, խնամքի այլընտրանքային ձևերի զարգացումը, ինչպես նաև գիշերօթիկ խնամքի հաստատությունների լուծարումը, մանկատներում երեխաների թվի կրճատումն ու երեխաների՝ ընտանիք վերադարձի ապահովումը, շուրջօրյա խնամքի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելումը:

Ոլորտում օրենսդրական հիմքեր ապահովելու նպատակով մշակվել և հաստատվել են մի շարք իրավական ակտեր, մասնավորապես.

- 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատվել է խնամատարության նոր կարգը, որում ամբողջովին վերանայվել են խնամատարության ընթացակարգերը, հստակեցվել խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անհրաժեշտ չափորոշիչները և մոնիթորինգի մեխանիզմները, խնամատարության տեսակները և ֆինանսավորման ընթացակարգը.
- 23.05.2019թ. N 630-Ն որոշմամբ հաստատվել են որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպման և անցկացման ընթացակարգերը, դասընթացների ծրագրի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները.
- 03.10.2019թ. N 1371-Ն որոշմամբ սահմանվել է 18-23 տարեկան անձանց նկատմամբ, որպես պետության կողմից տրամադրվող հետխնամքի աջակցությունը, մասնագիտացված խնամատարության իրականացման կարգը, որը հնարավորություն է ընտանիքում 18 տարին լրացած երեխաների խնամքի կազմակերպման համար.
- 25.10.2019թ. N 1552–Ն որոշմամբ հաստատվել է երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նոր անհատական կազմը և կանոնադրությունը: Հանձնաժողովի անդրանիկ նիստն անցկացվել է 2019թ. նոյեմբերի 19-ին.
- 31.10.2019թ. N 1507-Ն որոշմամբ՝ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ լուծարվել է 1 մանկատուն, 2019թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ 3 գիշերօթիկ խնամքի հաստատություն, իսկ վերջին՝ չորրորդ գիշերօթիկ խնամքի հաստատությունը կլուծարվի 2020թ. հունիսի 25-ին:

Միաժամանակ, 2019 թվականին մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ուղարկվել «Ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի,

ինչպես նաև ՀՀ կառավարության «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման նախագծերը:

Բարելավվել է խնամատարության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացը: Մասնավորապես, «Մանուկ» տեղեկատվավերլուծական բազայում գործարկվել է խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման ենթաբաղադրիչը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջին անգամ կազմակերպվել են խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստումներ, վերապատրաստվել է խնամատար ծնող դառնալ ցանկացող 25 անձ: Իրականացված համադրումների արդյունքում երեխաների խնամքը խնամատար ընտանիքում ապահովելու համար տրամադրվել է 15 դրական եզրակացություն: 2020 թվականի պետական բյուջեով 90 խնամատար ընտանիքում 94 երեխայի խնամքի իրականացման համար նախատեսվել է 152.8 մլն դրամ, և առաջին անգամ երկու հոգեզավակի խնամքի իրականացման համար հատկացվող ֆինանսավորումը կրկնապատկվել է, մինչդեռ նախկինում ավելանում էր միայն 30 տոկոսով:

Որդեգրման գործընթացը դիտելով իբրև երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման տարբերակ կենսաբանական ընտանիքում ապրելու անհնարինության պայմաններում՝ իրականացվել են որդեգրման մշտադիտարկման արդյունավետության բարձրացման, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչների վերանայման, որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների կյանքի և դաստիարակության նկատմամբ հետագա վերահսկողության ընթացակարգերի ներդրման աշխատանքներ:

ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների որդեգրման համակարգի բարեփոխման, ինչպես նաև փաստահավաք գործունեության իրականացման նպատակով ՀՀ վարչապետի 26.08.2019թ. N 1197-Ա որոշմամբ հաստատվել է աշխատանքային խմբի անհատական կազմը, որն արդեն իսկ գումարել է չորս նիստ և իր լիազորությունների շրջանակներում անդրադարձել է ոլորտում առկա հիմնախնդիրներին՝ իրականացնելով համապատասխան վերլուծություններ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ: «Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպում և անցկացում» ծրագրի իրականացման նպատակով դրամաշնորհի տրամադրման համար հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում շահած հասարակական կազմակերպությունն իրականացրել է որդեգրել ցանկացող շուրջ 60 անձանց վերապատրաստման դասընթացները:

Ընդլայնվել է հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը: Հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոններին (19 կազմակերպության) մասնակի պետական ֆինանսավորմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրակված ծառայությունների միջոցով անհրաժեշտ ծառայություններ են տրամադրվում շուրջ 530 երեխայի:

2020 թվականին ՀՀ պետական բյուջեում ներառվել է «Երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» և «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու, մուտքը հաստատություններ կանխարգելելու և աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառումները:

Վերոհիշյալ միջոցառումներն իրականացվելու են Երևանում և հանրապետության 10 մարզերում ՀԿ-ներին պատվիրակման միջոցով: Նախատեսվում է շուրջ 30 խոշոր բնակավայրերում ծառայությունը պատվիրակել շուրջ 3800 երեխայի համար: Ընդ որում, ցերեկային ծառայությունն ընդգրկում է շարժական թիմի և սոցիալական օգնականի ծառայության բաղադրիչները՝ հնարավոր դարձնելով ծառայությունների տրամադրումը նաև շրջակա գյուղական համայնքներին: Միջոցառումներն իրականացնելու նպատակով իրականացվում են մրցույթներ: Ծառայությունների տրամադրումը կմեկնարկի 2020 թվականի հունվարից:

Երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների լուծարման արդյունքում այդ հաստատությունների շուրջ 200 երեխա վերադարձել են կենսաբանական ընտանիքներ: Երեխաները և նրանց ընտանիքներն ընդգրկվել են աջակցության ծրագրերում: Ներկայում այդ ընտանիքները ստանում եմ նաև բնաիրային փաթեթներ, իսկ այն երեխաները, որոնց անհնար էր ընտանիք վերադարձնել, տեղավորվել են դեռևս Գյումրիում գործող գիշերօթիկ խնամքի հաստատությունում: 2020 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է նաև Վանաձորի մանկատան գործունեությունը: «Վորլդ Վիժն» Հայաստան կազմակերպության հետ համատեղ իրականացվել է մանկատան երեխաների կարիքների խորքային գնահատումը: Հիմք ընդունելով գնահատման արդյունքները՝ երեխաների մի մասը վերադարձել է ընտանիքներ, և շուրջ 20 երեխայի դեպքում է, որ ժամանակավորապես ուղղորդվել են այլ շուրջօրյա հաստատություններ: Իսկ մանկատանը խնամք ստացող 18 տարին լրացած անձինք ընդգրկվում են աջակցության և բնակարանով ապահովման ծրագրում:

2020 թվականի հունիսի 1-ից կդադարեցվի նաև Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության գործունեությունը:

Կատարելագործվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հետ աշխատող շուրջ 300 մասնագետի հմտություններն ու կարողությունները՝ ընթացիկ վերապատրաստման և վերարտակավորման միջոցով:

Ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում շուրջօրյա հաստատություններից ընտանիք է վերադարձել շուրջ 400 երեխա, այդ թվում՝ կենսաբանական ընտանիք է վերադարձել շուրջ 300 երեխա, որդեգրվել է 19 երեխա, խնամատարության է հանձնվել 48 երեխա:

<u>Ժողովրդագրություն</u>

Ժողովրդագրության բնագավառում կատարած աշխատանքները բխել են ՀՀ վարչապետի 04.04.2019թ. N 347-Ա որոշմամբ ստեղծված «Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհրդի» նիստերի արդյունքում տրված հանձնարարականներից և դրանց իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքներից:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ և խնդրահարույց: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 2959.2 հազ. մարդ՝ 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով 6.1 հազ. մարդով:

2019 թվականին նախորդ տարվա համեմատ ծնունդների բացարձակ թիվը նվազել է 443-ով կամ 1.2 տոկոսով՝ կազմելով 36131 երեխա: Միաժամանակ աճել է մահացածների թիվը՝ 501 մարդով կամ 1.9 տոկոսով՝ կազմելով 26252 մարդ: Ծնունդների նվազման և մահացությունների թվի աճի հետևանքով նվազել է բնական հավելաճը՝ կազմելով 9879 մարդ: 2019 թվականին, ի տարբերություն նախորդ տարվա, ամուսնությունների թիվն աճել է 5.0 տոկոսով կամ 739-ով: Միաժամանակ, 2019 թվականին ամուսնալուծությունների թիվն աճել է 60-ով կամ 1.6 տոկոսով: Պետք է նշել, որ ամուսնությունների թվաքանակն աճում է վերջին 9 տարիների անընդմեջ (բացառությամբ՝ 2014թ.) անկման շրջափուլից հետո:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհրդի հանձնարարականների շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Առաջարկություն է ներկայացվել փոփոխել 1-ին և 2-րդ երեխայի միանվագ և երեխայի խնամքի նպաստի չափերը, ընդ որում, 2020 թվականի հուլիսի 1-ից գյուղական բնակավայրերում երեխայի խնամքի նպաստ ստանալու է նաև վարձու աշխատող չհանդիսացող ծննդաբերող մայրը: Համապատասխան որոշումը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2020 թվականի հունվարին.

- 2019 թվականի սեպտեմբերի 23-ի Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհրդի նիստում հավանության են արժանացել երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 3 ծրագրեր, և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ. ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը համապատասխան ընթացակարգեր անցնելուց հետո գործողության մեջ է մտնելու 2020 թվականի հուլիսի 1-ից.
- Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհրդի աշխատանքների հանձնարարականների շրջանակներում ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գյուղաբնակ երիտասարդ ընտանիքների եկամտաստեղծ գործունեությանը միտված պետական աջակցության» 7 ծրագրային փաթեթ.
- ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ռազմավարության» նախնական տարբերակը.
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ իրականացվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրադրության վարչատարածքային առանձնահատկությունները» թեմայով հետազոտությունը, որը ներառել է նաև 5 ֆոկուս-խմբային քննարկումներ Լոռու և Արարատի մարզերում.
- Ժողովրդագրական իրավիճակի բարելավման, բնակարանային ծրագրերի և ժողովրդագրական ռազմավարության մշակման աշխատանքների շրջանակներում (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ) անցկացվել են 3 մասնագիտական և 2 լրագրողական իրազեկման միջոցառում-քննարկումներ (ներառյալ՝ լրագրողների այց Լոռու մարզ):

<u>Համագործակցություն միջազգային, ոչ պետական և բարեգործական կազմակերպությունների հետ</u>

Շարունակվել է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի ու բարեփոխումների իրականացումը միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությամբ: Աշխատանքներ են տարվել մի շարք երկրների հետ միջոլորտային համագործակցության հաստատման և զարգացման ուղղությամբ:

Միջազգային պայմանագրերով ստանձնած և միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ պայմանավորված՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ պարտավորությունների կատարման շրջանակներում Աշխատանքի միջազգային կազմակերպություն են ներկայացվել ԱՄԿ NN 87, 98, 135, 144, 151, 154 կոնվենցիաների կիրարկման վերաբերյալ

հերթական ազգային զեկույցները, ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել Եվրոպայի Խորհրդի «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի» կիրարկման վերաբերյալ հերթական ազգային զեկույցի նախագիծը (հաշվետու ժամանակաշրջան՝ 2015-2018 թթ.): ՀՀ կառավարության կողմից զեկույցին հավանություն տալուց հետո այն կներկայացվի Եվրոպայի խորհուրդ:

Օտարերկրյա պետությունների համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցությամբ ստորագրվել, լրամշակվել, շրջանառվել և/կամ համաձայնեցման, այդ թվում՝ ներպետական, տարբեր ընթացակարգեր են անցել հետևյալ փաստաթղթերը/միջազգային պայմանագրերը (նախագծերը).

- «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագրի իրականացման ընթացակարգեր (ստորագրվել է 2019թ. մարտին),
- ՀՀ 2019-2023թթ. «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիր (ստորագրվել է 2019 թվականի մայիսի 14-ին՝ ՀՀ կառավարության, սոցիալական գործընկերների և Աշխատանքի միջազգային կազմակերպության միջև),
- «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում),
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի գործողությունների ծրագիր (ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 23-ին Թեհրանում),
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև աշխատուժի օգտագործման մասին» փոխըմբռնման հուշագրի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի, զբաղվածության և սոցիալական բարեկեցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Քուվեյթի Պետության Կառավարության միջև սոցիալական հարցերի ոլորտում փոխըմբռնման հուշագրի» նախագիծ,
- Մեկնարկել են աշխատանքներ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրության հնարավոր վավերացման ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվել Եվրոպական Միության հետ համագործակցության, ՄԱԿ, ԵԽ, ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում, ինչպես նաև միջազգային երկկողմ հարթակներում:

Աշխատանքներ են իրականացվել հայ-իրանական, հայ-վրացական, հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովների նիստերի արդյունքում ստորագրված փաստաթղթերի դրույթների կատարման շրջանակներում:

Միջազգային գործընկերների կողմից դրամաշնորհային աջակցություն ստանալու նպատակով վերջիններիս են ներկայացվել զարգացման մի շարք ծրագրային առաջարկներ՝ ուղղված աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում ընթացող բարեփոխումների խթանմանը, որոնց մի մասը հաստատվել է և կիրականացվի 2020 թվականին:

Մշակույթի ոլորտ

2019 թվականին մշակույթի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունը նպատակաուղղվել է ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախանշված հիմնական խնդիրների լուծմանը, մասնավորապես՝

- դրամաշնորհների հատկացման բաց մրցութային համակարգի ներդրում,
- աբոնեմենտային համակարգի ներդրման ծրագրի իրականացում,
- ուսումնամեթոդական և գործնական օգնություն մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտական և մանկավարժական կազմին,
- «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման» ծրագրի իրականացում,
- «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում,
- մարզերում երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների զարգացման ծրագրի իրականացում,
- Հայաստանում միջազգային փառատոների և մրցույթների, հեղինակավոր նախագծերի իրականացում,
- ներառական ծրագրերի իրականացում մայրաքաղաքում և մարզերում,
- հեռուստաթերթերի պատշաճ մակարդակի ապահովում, հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում մշակութային բաղադրիչի ընդլայնում,
- հայկական պատմամշակութային ժառանգության, արվեստի ներկայացում ցուցահանդեսների, հայկական մշակույթի օրերի շրջանակներում և այլ ձևաչափերով,

- օտար մշակույթների ներկայացում հայ հանդիսատեսին՝ ազգային առանձնահատկություններն արտացոլող տարբեր միջոցառումների՝ մշակույթի օրերի և այլ ձևաչափերով,
- մասնակցություն միջազգային կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և գործընթացներին՝ հայ ստեղծագործական միավորների զարգացման և միջազգային համագործակցության խթանման համար:

Մշակութային ժառանգության ծրագրի շրջանակում հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պահպանության ոլորտում շարունակվել են ծրագրերը, որոնք նպատակաուղղվել են պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը, պահպանությանը, ուսումնասիրմանը, դիտանցումներին, պեղումներին, վերականգնմանը և օգտագործմանը: 107 նոր հայտնաբերված օբյեկտի տրվել է նորահայտ հուշարձանի կարգավիճակ: Կազմակերպվել է պահպանություն՝ 3 մարզերում իրազեկման արշավի մասնակցությամբ, վարձակալությամբ հանձնվել է 5 հուշարձան (քարանձավ): Հրապարակվել է Գիտատեղեկատվական և գիտահանրամատչելի գրականության ու հուշարձանների տարեգիրքը:

Հայոց մշակութային ժառանգության պատկերն ամբողջացնելու նպատակով շարունակվել է այլ պետությունների տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների հայտնաբերման և հաշվառման գործընթացը: ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ռուսաստանի ինտերնետային կայքերի, ձեռագրացուցակների վերաբերյալ մատենագիտական տվյալների և համապատասխան գրականության ուսումնասիրման արդյունքում հայտնաբերվել և հաշվառվել-գրանցվել է 53 արժեք:

«Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» ծրագրի շրջանակներում արտերկրում (Հնդկաստան և Արևմտյան Հայաստան) հաշվառվել է 370 հուշարձան:

Իրականացվել են մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության աշխատանքներ:

ՀՀ տարածքից արտահանվող, ժամանակավոր արտահանվող պետական, ինչպես նաև ոչ պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների արտահանման նպատակով 2019 թվականին ընդունվել է 1139 հայտ, որոնց սահմանված կարգով համապատասխան ընթացք է տրվել:

Շարունակվել են թանգարանների ոլորտում իրականացվող ծրագրերը, որոնք ուղղվել են թանգարանային հավաքածուների գիտական ուսումնասիրությանը, պահպանությանն ու համալրմանը, թանգարանային ցուցադրությունների արդիականացմանը, նոր հարթակների ստեղծմանը, հանրահռչակմանը, պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանը,

ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացմանը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, թանգարանային մասնագետների վերապատրաստմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

ՀՀ օրենքը թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին քննարկման փուլում է մասնագիտական լայն շրջանակների հետ: Առաջիկայում կառաջարկվի օրենքի նոր նախագիծ, որը հիմնված կլինի ոլորտի համալիր ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալների, միջազգային փորձի և տեղական առանձնահատկությունների վրա:

Կառավարման արդյունավետությունը մեծացնելու նպատակով մշակվել և ընդունվել են ՀՀ կառավարության 13.02.2020թ. «Փայտարվեստի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 886-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 168-Ն և 20.02.2020թ. և «Հայ հոգևոր երաժշտության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի N 419 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 184-Ն որոշումները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի հուլիսի 31 445-Ա/2 հրամանի համաձայն ստեղծվել է նախարարության ենթակայության ներքո գործող թանգարանների կառավարումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով մասնագիտական խորհուրդ: Թանգարանների միջազգային խորհրդի հրահանգների հիման վրա մասնագետների խումբը համապատասխան առաջարկներ է տրամադրում թանգարաններին:

Կազմակերպվել է «Թանգարանների կառավարում և ղեկավարում» թեմայով վերապատրաստման եռօրյա դասընթաց միջազգային փորձագետների ներգրավմամբ, որին մասնակցել են Հայաստանի, Արցախի և Ջավախքի թանգարանների շուրջ 35 տնօրեններ և ոլորտի մասնագետներ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության բնագավառում իրականացվել են 22 ծրագրեր, որոնց մեջ հատկապես նշանակալի են հետևյալները՝

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում գրանցվել է «Հայկական տառարվեստը և դրա մշակութային դրսևորումները» Հայաստանի Հանրապետության հայտը.
- Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ «Սուրբ Թադեի վանքի ուխտագնացություն» թեմայով ՅՈՒՆԵՍԿՕ ներկայացվող հայտի պատրաստման ծրագիրը:

Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի գրանցման ու կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» N 36-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի փետրվարի 21-ի N 130-Ն ՀՀ կառավարության որոշումը, որի արդյունքում ցանկը համալրվել է ևս 5 արժեքով (որդան կարմիր, կոխ ըմբշամարտ, պարկապզուկ և այլն):

Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մարտի 14-ի N 238-Ա ՀՀ կառավարության որոշումը, որով լրացում է կատարվել ոչ նյութական մշակութային արժեքների ցանկում:

Արվեստների բնագավառում իրականացվող ծրագրերն ուղղվել են հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կինոարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, անհատի և հանրության հոգևոր-մշակութային առաջընթացի գործում մշակույթի դերի բարձրացմանը, հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման գործընթացի ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների, այդ թվում՝ դեբյուտանտների, դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրմանն աջակցմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը:

Ընդունվել է ՀՀ կառավարության 08.08.2019թ. N 996-Ա որոշումը «Ժողովրդական երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին»:

Հիմնադրվել է «Սոմա» պլաստիկ հետազոտությունների թատրոն-լաբորատորիան, որի նպատակն է վիզուալ-կատարողական արվեստների կատարելագործումը, միջազգային ստեղծագործական գործընթացներում ընդգրկվածությունը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները նպատակաուղղվել են խաղարկային, մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների արտադրությանն աջակցմանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, կինոարվեստի պրոպագանդմանը, տարածմանը, մատչելիության ապահովմանը, հայկական կինոյի գործունեության շարունակականության ապահովմանը:

Կինոարվեստի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն ու հիմնական ուղղությունները, միջազգային համագործակցությունը, ինչպես նաև կինոարվեստին պետական աջակցություն ցուցաբերելու կարգը և պայմանները կարգավորելու նպատակով մշակվել, մասնագետների շրջանակներում քննարկվել և շահագրգիռ գերատեսչությունների դիտակմանն են ներկայացվել «Ոսկե Ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի նախաձեռնությամբ և ԵՄ աջակցությամբ կազմված աշխատանքային խմբի՝ «Կինոարվեստի մասին» և «ԻՖԿԱ Հայաստանի անկախ կինոգործիչների համայնք» ՀԿ-ի կողմից մշակված «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքների նախագծերը: ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հանձնաժողովի նախաձեռնությամբ իրականացվում են երկու նախագծերի համադրման աշխատանքները:

Գրքի և գրչության ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերն ուղղված են եղել գրականության զարգացմանն ու տարածմանը, տպագիր արտադրանքի միջոցով հոգևոր-մշակութային ժառանգության փոխանցմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին (մամուլ, գրականություն) աջակցմանը՝ պահպանելու իրենց լեզուն, գրականությունը, ավանդույթները, մշակույթը, գրական, մշակութային, ազգային փոքրամասնությունների համար լույս տեսնող լրատվամիջոցների և պարբերականների գործունեության շարունակականությանը, գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությանը, հանրապետական գրական ծրագրերի (փառատոներ, շնորհանդեսներ, հոբելյանական ցերեկույթներ, վարպետության դասեր, ընթերցումներ, քննարկումներ և այլն) կազմակերպմանը, ստեղծագործողների և մշակութային հետազոտողների աշխատանքների խթանմանը, գրադարանների գրքային հավաքածուների համալրմանն ու պահպանմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության (անձեռնմխելի հավաքածուներ) թվայնացմանը, տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովմանը, ոլորտի մասնագետների վերապատրաստմանը, միջազգային

համագործակցության ընդլայնմանը, մատենագիտական տվյալների կազմմանն ու հրապարակմանը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիրը նպատակաուղղվել է կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղվել են մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը, համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը:

Ազգային արխիվի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները նպատակաուղղվել են ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանությանը, համալրմանը, հաշվառմանը, արխիվային փաստաթղթերի վերանորոգմանը, փաստաթղթերի գիտատեխնիկական մշակմանը, ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի թվայնացման աշխատանքների իրականացմանը, ֆիլմերի թվայնացմանը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացմանը, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովմանը:

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության բնագավառ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվել են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով՝ օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստում, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում, ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստումներ, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացում, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցության տրամադրում, մանկապատանեկան

մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույքով ապահովում:

Սպորտի բարձրագույն նվաճումների բնագավառում 2019 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված 35 ազգային ֆեդերացիաները պետական աջակցության գումարներով կազմակերպել են 147 ուսումնամարզական հավաք, Հայաստանի Հանրապետության 100 առաջնություններ (մեծահասակների, երիտասարդների, պատանիների), մասնակցել են 195 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների:

Տարբեր տարիքային խմբերի (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) Եվրոպայի և աշխարհի առաջնություններում, Եվրոպական երկրորդ խաղերում և համաշխարհային ունիվերսիադայում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկները նվաճել են 222 մեդալ, այդ թվում՝ 61 ոսկե, 84 արծաթե և 77 բրոնզե մեդալ:

Կատարվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Մշակվել և ընդունվել են ՀՀ կառավարության՝ 19.03.2020թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի № 925-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 332-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի № 1486-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 342-Ն որոշումները: Արդյունքում օլիմպիական խաղերի չեմպիոններին, շախմատի համաշխարհային օլիմպիադայի չեմպիոններին, ինչպես նաև օլիմպիական խաղերի մրցանակակիրներին և շախմատի համաշխարհային օլիմպիադայի մրցանակակիրներն ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի № 925-Ն որոշման համաձայն պատվովճար ստացող մարզիկների ցանկում:

Մշակվել և շրջանառվել է «Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության ոլորտների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որի արդյունքում ոլորտը կունենա քաղաքականության մշակման իրավական հիմք:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի N 925-Ն որոշման համաձայն 33 աշխարհի չեմպիոններ 2019 թվականի ընթացքում ստացել են պատվովճար, տարվա ընթացքում ավելացվել է ևս մեկ աշխարհի չեմպիոն, տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերի 19 գլխավոր և ավագ մարզիչներ 2019 թվականի ընթացքում ստացել են վարձատրություն:

ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի «Օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու և

շախմատ մարզաձևերի) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում (նաև հաշմանդամների), եվրոպական խաղերում, շախմատի համաշխարհային օլիմպիադայում, Եվրոպայի օլիմպիական երիտասարդական փառատոնում, համաշխարհային ունիվերսիադայում, պատանեկան օլիմպիական խաղերում, շախմատի պատանեկան օլիմպիադայում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին, ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին, բժիշկներին շնորհվող դրամական մրցանակների չափերն ու շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի 462 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1282-Ն որոշման համաձայն տարեվերջյան պարգևատրում են ստացել 130 մարզիկ, 130 անձնական մարզիչ, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 11 գլխավոր մարզիչ, 11 երկրորդ մարզիչ, երիտասարդների Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 10 գլխավոր մարզիչ և 10 երկրորդ մարզիչ, պատանիների Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 6 ավագ մարզիչ և 8 երկրորդ մարզիչ, 9 բժիշկ:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառներում կառավարության քաղաքականությունն ուղղված է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը, մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը, հասարակության լիարժեք անդամ հաշմանդամություն ունեցող մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը: Մասսայական սպորտի ոլորտում իրականացվող ծրագրերի հիմքում դրված է բնագավառի գերակայություններ համարվող տարիքային ու սոցիալական տարբեր խմբերի, անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը: 2019 թվականին իրականացվել են 12 խոշոր մարզական մասսայական միջոցառումներ՝ ընդգրկելով բնակչության բոլոր տարիքային և սոցիալական խմբերը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց: Մարզական մասսայական միջոցառումներին ընդհանուր թվով մասնակցել են 225.489 մարդ:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է ցուցաբերվում «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և

սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց ինքնադրսևորվելուն և հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելուն: Ծրագրերի նպատակն է հաշմանդամային սպորտի զարգացման խթանումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակությանն ինտեգրվելու գործընթացի խթանումը, բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը, սահմանափակ կարողություններ ունեցող անձանց շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորումը, առողջ կենսակերպ վարելու անհրաժեշտության գիտակցումը, հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդումն ու համակողմանի ներդաշնակ զարգացումը, մարզվածության վիճակի բարելավումը, աշխատունակության բարձրացումը և գործառական հնարավորությունների ընդլայնումը: Մարզիկները ՀՀ առաջնություններից բացի մասնակցել են նաև Եվրոպայի և աշխարհի առաջնությունների և ձեռք են բերել 2 ոսկե, 3 արծաթե և 2 բրոնզե մեդալներ:

Երիտասարդական քաղաքականության ոլորտում արված քայլերը նպաստել են հետևյալ նպատակների իրականացմանը՝

- հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանում,
- երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում,
- երիտասարդների առողջ ապրելակերպի խթանում, հոգևոր-մշակութային արժեքների պահպանում և զարգացում, ռազմահայրենասիրական դաստիարակություն,
- տեղական, ազգային և միջազգային մակարդակներում երիտասարդական համագործակցության, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության խրախուսում:

2019 թվականին իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- ««100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթ» ամենամյա ծրագիրը, որի նպատակն է երիտասարդներին ներգրավել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում: «100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթի արդյունքում բացահայտվում և հաղթող են ճանաչվում նորարարական գաղափարներ ներկայացնող երիտասարդներն ու երիտասարդական կազմակերպությունները.
- «Երիտասարդական պորտալի պահպանում» ամենամյա ծրագիրը, որի նպատակն էր երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, երիտասարդական պետական քաղաքականության թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը.

- «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2019» ծրագիրը, որի նպատակն էր հանրային կյանքին երիտասարդների մասնակցության խթանումը, 2019 թվականի ընթացքում նշանակալի հաջողություններ ցուցաբերած երիտասարդների, երիտասարդական խմբերի և երիտասարդական հասարակական կազմակերպությունների խրախուսումը, նրանց ձեռքբերումների արժևորումը.
- «Ճանաչողական և համագործակցության այց Հայաստան» ծրագիրը, որի նպատակը հայկական արժեքների քարոզման միջոցով վիրահայ երիտասարդներին Հայաստանն առավել ճանաչելի դարձնելն ու հայապահպանությանն օժանդակելն էր.
- «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը, որի նպատակն է ՀՀ համայնքների համաչափ զարգացմանը, մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացմանը նպաստելը: Ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթի արդյունքում ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք է հռչակվել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքը:

«ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում Վանաձորում իրականացվել են մի շարք միջոցառումներ և ծրագրեր:

Երիտասարդական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնելու համար հայտարարված մրցույթների արդյունքում տրվել է 57 դրամաշնորհ, այդ թվում՝ 5 դրամաշնորհ ՀՀ 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաք Վանաձորում գործող հասարակական կազմակերպություններին: Արդյունքում աջակցություն է տրամադրվել հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

- Միջազգային միջոցառումներին մասնակցելու համար ավիատոմսի ծախսի փոխհատուցում է տրամադրել 14 երիտասարդի.
- Վճարվել է Եվրոպայի խորհրդի «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն» ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության 2019 թվականի վճարը.
- www.antitrafficking.am կայքի պահպանման միջոցառման իրականացման նպատակով հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ: Մրցույթում հաղթած կազմակերպության կողմից իրականացվել են www.antitrafficking.am կայքի պահպանման և թարմացման աշխատանքները.
- Իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթը և դրա դեմ պայքարը արծարծող լրագրողական մրցույթ» ծրագիրը, որի նպատակն էր խրախուսել ՀՀ-ում մարդկանց շահագործման/թրաֆիքինգի երևույթի և դրա դեմ պայքարի լուսաբանումը,

խրախուսել այն լրագրողներին, ովքեր իրենց աշխատանքում անդրադառնում են մարդկանց թրաֆիքինգի երևույթին.

- Երիտասարդների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 186-Ն որոշմամբ, համաձայն որի բարելավվել են «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի պայմանները:

Բնապահպանության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում բնապահպանության ոլորտում աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի հիմնական ուղղությունների և գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով 2019 թվականի համար նախատեսված շրջակա միջավայրի ոլորտի 27 միջոցառումների կատարման ապահովմանը:

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում

Հաշվետու տարում իրականացվել է «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովում, ինչպես նաև տնկարկների պահպանություն և պաշտպանություն:

Համաձայնություն է ձեռք բերվել Կովկասի բնության հիմնադրամի հետ՝ 2020 թվականին Հայաստանին կտրամադրվի շուրջ 900000 եվրո դրամաշնորհ՝ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն իրականացնող աշխատակիցների աշխատավարձերի հավելավճարների և այլ ընթացիկ ծախսերի համաֆինանսավորման նպատակով: Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) մշակվել և նախագծվել են հետագա շահագործման համար 5 երթուղիներ, իսկ 6-րդ երթուղին նախագծման փուլում է: «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում շարունակվում են սոցիալ տնտեսական և

բնապահպանական ուղղվածության 14 դրամաշնորհային ծրագրերը 350000 եվրո ընդհանուր բյուջեով, որոնցից 8-ը մեկնարկել են 2019 թվականին: Վերջինիս շրջանակներում 2019 թվականի ընթացքում պլանավորվել է «Շիկահող» պետական արգելոցի և «Սոսու պուրակ» արգելավայրի շուրջ 600 սահմանայուների տեղադրման աշխատանքների իրականացումը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում 2019 թվականի ընթացքում իրականացվել են անտառավերականգնման աշխատանքներ՝ 128,1 հա (2018թ.՝ 26.3 հա), տնկարանի հիմնում և խնամք՝ 9.2 հա (2018թ.՝ 5.95 հա), տնկանյութի աճեցման աշխատանքներ, այդ թվում՝ սերմնաբուսակներ՝ 7480 հատ (2018թ.՝ 5260 հատ) և տնկիներ՝ 36500 հատ (2018թ.՝ 31970 հատ):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջև 2019թ. օգոստոսի 20-ին կնքվել է «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների» կատարման պետական գնման պայմանագիր: Ըստ ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի՝ Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի արդյունագործական պաշարները կազմել են. սիգ՝ 2019թ.՝ 667տ. 2018թ.՝ 737տ., արծաթափայլ լճածածան (կարաս, Սևանա լճի համար հանդիսանում է անցանկալի ձկնատեսակ)՝ 2019թ. պաշարները խզման եզրին են, 2018թ.՝ 30-35տ, Սևանի իշխան (ընդհանուր պաշարը)՝ 2019թ.՝ չափազանց քիչ քանակությամբ, 2018թ.՝ 1-1.5տ., խեցգետին՝ 2019թ. ուսումնասիրություններ չեն իրականացվել, 2018թ.՝ 2312տ: Սևանա լիճ է բաց թողնվել իշխանի ամառային ենթատեսակի 22.5 գրամ միջին զանգվածի 11 հազար և գեղարքունի ենթատեսակի 3.5 գրամ միջին զանգվածի 40 հազար մանրաձուկ:

ՀՀ ԳԱԱ-ն ձեռք է բերել ջրային համակարգերում կենսապաշարների հաշվառման ժամանակակից սարքավորում (էխոլոտ):

2019 թվականին «Անտառային մոնիթորինգ կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են Սևանա լճի մինչև 1901.5 բացարձակ նիշն ընկած տարածքների մանրամասն ուսումնասիրություններ և գնահատում, ինչպես նաև ընտրված տեղամասերի համար հանույթ անօդաչու թռչող սարքերի միջոցով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված 2019-2021թթ. համար Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված էր 2019 թվականին մաքրել 98 հա տարածք, որից 4-ը՝ ջրածածկ: Լիարժեք մաքրված տարածքները կազմում են շուրջ 30 հա, ևս 50 հա անտառածածկ տարածքներում հիմնականում ավարտվել են ծառերի, թփերի հատման աշխատանքները: Անտառածածկ տարածքների աննախադեպ խտությունը, անկանխատեսելի խորությամբ ճահճուտները, եղանակային անբարենպաստ պայմանները նախատեսվածից ավելի

կոճղերի առկայությունը լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծել աշխատանքները պայմանագրով նախատեսված ժամկետում ավարտելու համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ

ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգն իրականացվել է 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 19 դիտակետից, որոշված ցուցանիշների քանակը՝ 40480:

Իրականացվել է Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգ՝ 2040 ցուցանիշ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում ջրի որակը «լավ» է (2-րդ դաս), բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավից» «միջակ» է (2-3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա, Շնող, Ողջի, Նորաշենիկ և Կարճևան գետերը, որտեղ ջրի որակը «վատ» է (5-րդ դաս):

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացվել է 11 քաղաքներում՝ 215428 անալիզ: 2019 թվականին մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն Երևան քաղաքում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի պարունակությունը փոփոխվել է 0.079-0.188մգ/մ^3 սահմաններում: Ալավերդի քաղաքում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի պարունակությունը փոփոխվել է 0.040-0.054 մգ/մ^3 սահմաններում, փոշու միջին ամսական կոնցենտրացիայի պարունակությունը՝ 0.106-0.198մգ/մ^3 սահմաններում: Վանաձոր քաղաքում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի պարունակությունը փոփոխվել է 0.017-0.056մգ/մ^3 սահմաններում, փոշու միջին ամսական կոնցենտրացիայի պարունակությունը՝ 0.106-0.182 մգ/մ^3 սահմաններում: Հրազդան քաղաքում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի պարունակությունը փոփոխվել է 0.086-0.221 մգ/մ^3 սահմաններում, Արարատ քաղաքում՝ 0.068-0.218մգ/մ^3 սահմաններում: Մնացած աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաները գտնվել են համապատասխան ՍԹԿ-ների սահմաններում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոերկրաբանական մոնիթորինգ

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են 6 ջրավազանային կառավարման տարածքի 100 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ հորատանցքերում և բնաղբյուրներում: Նախորդ (2017-2018թթ.) տարիների համեմատ 2019 թվականին նկատվել են Արարատյան գոգավորության ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումներ: Մակարդակի իջեցումները պայմանավորված են նախկինում պահեստավորված հորատանցքերի վերագործարկմամբ, որոնք օգտագործվում են ձկնաբուծական նպատակներով:

Ճնշող մեծամասնությամբ Արարատյան գոգավորության ջրերի համեմատաբար ցածր մակարդակները նկատվում են օգոստոս ամսին: Այդ պատճառով տարբեր տարիների համեմատության համար ընտրվել է այդ ամիսը և ոչ թե միջին տարեկանը:

Համաձայն Կառավարության 2019թ. սեպտեմբերի 19-ի N1257-Ն որոշման, Արարատյան դաշտի ազատ հոսքով խորքային հորերի խնդիրները լուծելու նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է գումար, ինչի շրջանակներում 2019 թվականին Արարատյան դաշտում լուծարվել է 8 խորքային հոր՝ խնայելով 500 լ/վրկ ջուր, կոնսերվացվել է 43 խորքային հոր՝ խնայելով 828.8 լ/վրկ ջուր: Բացի այդ, սեփականության իրավունքով ջրօգտագործներին պատկանող հողատարածքներում գտնվող ազատ հոսքով խորքային հորերից ջրօգտագործողների անձնական միջոցների հաշվին կոնսերվացվել է 28 հոր՝ խնայելով 441 լ/վրկ ջուր: Արարատյան դաշտի ազատ հոսքով խորքային հորերի լուծարման և կոնսերվացման արդյունքում խնայվել է 1765.8 լ/վրկ ջուր: Փականային ռեժիմի է բերվել 20 խորքային հոր՝ խնայելով 1248 լ/վրկ ջուր: Ընդամենը 2019 թվականի ընթացքում խնայվել է 3017.8 լ/վրկ ջուր:

Թափոնների հաշվառում, դասակարգում և վերլուծություն

Ուսումնասիրվել և վերլուծվել են 2018 թվականին ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական 1237 հաշվետվության տվյալները, հավաքվել և մշակվել է տեղեկատվություն՝ թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և թափոնների հեռացման վայրերի մասին, իրականացվել է շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) մնացորդային քանակների որոշում՝ 1296 հետազոտություն:

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և սեփական վերլուծությունների արդյունքում մշակվել է թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների և երկրորդային

հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման եղանակների ու մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն

2019 թվականին ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ներկայացվել թվով 231 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ:

Տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 63 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերին: Փորձաքննության գործընթացում են գտնվում 59 նախատեսվող գործունեությունների, հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություններ են տրամադրվել թվով 115 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ, այդ թվում՝ 2018 թվականին մուտքագրված գործունեություններին:

4 նախատեսվող գործունեության վերաբերյալ տրվել է փորձաքննական բացասական եզրակացություն:

Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն

Հիմնական ֆոնդը համալրվել է թվով 20 ցուցանմուշով, համալրված ցուցանմուշները անձնագրավորվել, քարտագրավորվել, պիտակագրավորվել և լուսանկարահանվել են, մշտական ցուցադրությունը համալրվել է 10 ցուցանմուշով, թանգարանային ցուցանմուշներն ախտահանվել են 4 անգամ, վերականգնվել է թվով 30 ցուցանմուշ, մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրվել 3760 ցուցանմուշ, որով ավարտվել են մուտքագրման աշխատանքները: Կատարվել է հիմնական ֆոնդի բուսաբանության բաժնի թվով 500 ցուցանմուշի անվանումների ճշտում համապատասխան մասնագետների հետ: Գիտական անձնագրերի նորացման նպատակով կատարվել է ցուցանմուշների թվով 1600 լուսանկարների մշակում և տպագրում: Կատարվել են 2019 թվականի պլանով նախատեսված թանգարանի հիմնական ֆոնդի հաշվառման աշխատանքները, որոնց արդյունքում առանձնացվել են պիտանելիությունը կորցրած ցուցանմուշները: Վերջիններիս դուրս գրման արդյունքում հիմնական ֆոնդի փաստացի թիվը 2019

թվականի տարեվերջին կազմել է 6670 ցուցանմուշ (դուրս է գրվել պիտանելիությունը կորցրած և չվերականգնվող թվով 77 ցուցանմուշ):

Կատարվել է թվով 250 գրքերի և ամսագրերի մշակում, 35 միավոր գրքի վերականգնում և 32 գրքի տրամադրում, մշակվել և տպագրվել են ցուցասրահներում ներկայացված ցուցանմուշների գիտական բացատրագրեր թվով 20 հատ, մշակվել և տպագրվել է բնապահպանական թեմաներով թվով 1000 բացիկ, կազմակերպվել է 10+1* ժամանակավոր ցուցահանդես: Սպասարկվել է 23701 այցելու, անցկացվել է 919 էքսկուրսիա: Շիրակի մասնաճյուղում սպասարկվել է 694 այցելու, անցկացվել է 37 էքսկուրսիա:

Հաշվետու տարում Կենդանաբանական այգում իրականացվել են կենդանիների ազատավանդակներում էլեկտրոնային հովիվ համակարգի ներդրման, վերանորոգման, ինչպես նաև այգու տարածքի քարերի հավաքման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, կենդանիների ազատավանդակներում կոտրված դռների, բետոնե աստիճանների կառուցման, արգելապատնեշների հիմնային հատվածների ցանցապատման, ճաղավանդակների ձևափոխման և ուժեղացման, ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ:

Անտառների կառավարում

Մեկնարկել են անտառապատման և անտառվերականգնման լայնածավալ աշխատանքներ: Առաջին անգամ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է մոտ 425 մլն դրամ գումար 150 հա-ի վրա աշխատանքների իրականացման համար:

Հոկտեմբերի 1-ից 20 հազարական դրամով բարձրացվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի պահպանություն իրականացնող 611 աշխատակիցների աշխատավարձերը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի բոլոր մասնաճյուղերի պահպանություն իրականացնող աշխատակիցները Հայաստանի անկախացումից ի վեր առաջին անգամ ապահովվել են ամառային և ձմեռային արտահագուստով (806 կոմպլեկտ):

Ստեփանավանի անտառտնտեսության տարածքներում տեղադրվել է 10 սենսորային հսկիչ սարք, որոնք կարող են հսկել 2-10 կմ շառավղով տարածքներ՝ կախված անտառի լանդշաֆտից: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համար ձեռք են բերվել 10 տեսանկարահանող, 3 անօդաչու սարք և գիշերային նկարահանման 8 անվտանգության տեսախցիկ:

Կներդրվի Նորքի անտառների 45 հա տարածքում կաթիլային ոռոգման համակարգը: Կառավարության համապատասխան որոշմամբ տրամադրվել է 6 մլն դրամ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով:

Անտառվերականգնում և անտառապատում

2019 թվականի գարնանը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտների հաշվին իրականացվել են 22 հա անտառապատման աշխատանքներ, հիմնադրվել է տնկարան՝ 1.7 հա:

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2019 թվականի աշնանը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացվել են 810 հա անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ, որից ցանք և տնկում՝ 150 հա, բնական վերաճի օժանդակում՝ 200 հա և կոճղաշիվային վերաճի օժանդակում՝ 460 հա: Հիմնադրվել է տնկարան՝ 7.4 հա: Ձեռք է բերվել 8 տրակտոր:

ՄԱԶԾ գրասենյակի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդնումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում 2018-2019 թվականների ընթացքում կատարվել են 2345 հա անտառվերականգնման աշխատանքներ, որից 2045 հա՝ բնական վերաճի օժանդակում և 300 հա՝ կոճղաշիվային վերաճի օժանդակում:

2019 թվականի աշնանը ՄԱԶԾ գրասենյակի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է նոր պայմանագիր, համաձայն որի 2019-2020թթ. ընթացքում կիրականացվեն 1650 հա անտառվերականգնման աշխատանքներ: 2019 թվականի աշնանն իրականացվել են 1085 հա անտառվերականգնման աշխատանքներ, որից 985 հա՝ բնական վերաճի օժանդակում և 100 հա՝ կողճաշիվային վերաճի օժանդակում:

Անտառպաշտպանություն

2019 թվականի գարնանը Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից իրականացվել են անտառպաթոլոգիական հետազոտություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառածածկ տարածքներում առկա են շուրջ 9230 հա տերևակեր վնասատուներով և մասնակի հիվանդություններով համատեղ վարակված 5272 հա տարածքներ, իսկ աշնանը հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառածածկ տարածքներում առկա են 11325 հա վարակված տարածքներ, որից 10779 հա՝ տերևակեր վնասատուներով և 7098 հա՝ հիվանդություններով, որից 6975 հա՝ համատեղ վարակված տարածքներ:

Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիաքիմիական պայքարի աշխատանքներ իրականացնելու համար հայտարարված մրցույթը չի կայացել համապատասխան սարքավորումներով կահավորված ուղղաթիռի բացակայության պատճառով:

Ձեռք է բերվել 2700 կգ թունաքիմիկատ՝ հաջորդ տարի օգտագործելու նպատակով:

Անտառպահպանություն

2019 թվականին Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից կազմվել է 393 անտառխախտման արձանագրություն, այդ թվում՝ 388 անտառխախտման արձանագրություն 15198 ապօրինի հատված ծառերի վերաբերյալ:

2019 թվականին արձանագրվել է անտառային հրդեհների 80 դեպք՝ 2409.34 հա ընդհանուր տարածքով, որից անտառածածկ՝ 1876.02 հա, իսկ ոչ անտառածածկ՝ 533.32 հա: Հրդեհները մարվել են Արտակարգ իրավիճակների նախարարության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի աշխատակիցների, ինչպես նաև հարակից համայնքների բնակչության կողմից:

Անտառօգտագործում

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից մթերվել է 33484 խմ ծավալով փայտանյութ, որից շինափայտ՝ 1620 խմ: Ազգաբնակչությանը անվճար տրամադրվել է 87543 պահեստային խմ թափուկ վառելափայտ:

Իրացում

Հատումներից իրացվել է 1250.9 խմ շինափայտ՝ 39689.8 հազ. դրամ գումարով, 44362 խմ վառելափայտ՝ 496368.8 հազ. դրամ գումարով 280 խմ տախտակ՝ 24580 հազ. դրամ գումարով, 95.8 խմ երեսթափ՝ 407.7 հազ. դրամ գումարով, այլ իրացում՝ 1954 հազ. դրամ:

Իրացումից հասույթը կազմել է 563000.3 հազ. դրամ (առանց ԱԱՀ):

Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն թվով 8 համայնքների տրամադրվել են սուբվենցիաներ բնապահպանական ծրագրերի իրականացման համար՝ 149471.4 հազ. դրամի չափով: Մասնավորապես՝ Ալավերդի համայնքին տրամադրվել է 76266.43 հազ.դրամ, Օձուն համայնքին՝ 27596.86 հազ.դրամ, Քաջարան համայնքին՝ 21108.6 հազ.դրամ, Կապան համայնքին՝ 15092.93 հազ.դրամ:

Բնապահպանական ծրագրերի իրականացումն ըստ ոլորտների	Տրամադրված սուբվենցիայի գումարը հազ.դրամ
Բնապահպանական միջոցառումներ	111957.9
Համայնքային էներգախնայող լուսավորության համակարգերի տեղադրում	28571.13
Համայնքների կանաչապատ տարածքների վերականգնում և ընդլայնում	18755.43
Աղբահանություն, աղբարկղերի ձեռքբերում	11083.3
Ջրագծերի կառուցում, վերանորոգում, հեղեղատարների մաքրում	13601.8
Արևային ֆոտովոլտային կայանի ձեռք բերում և տեղադրում	10600.8
Այլ միջոցառումներ	29345.44
Առողջապահական միջոցառումներ	37513.5
Ընդամենը	149471.4

Պետական գույքի կառավարում

2019 թվականին ՀՀ կառավարության կողմից որդեգրված՝ պետական գույքի կառավարման քաղաքականության հիմնական շեշտադրումն է եղել պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գույքի կառավարման քաղաքականության առանձին բնագավառներում իրականացվել են և շարունակելու են իրականացվել պետական գույքի կառավարման արմատական բարեփոխումներ, մասնավորապես՝ պետական գույքի կառավարման և մասնավորեցման ծրագրային գործընթացը շարունակելու, պետական գույքի մասնավորեցման, օտարման, լուծարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման ընթացակարգերը պարզեցնելու և վարչարարությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Պետական գույքի մասնավորեցման և օտարման բնագավառներում կատարվել են վաճառքի նոր ձևերի կիրառման և վաճառքի կազմակերպման արդիական գործիքակազմի ներդրման, ինչպես նաև վաճառքի նախապատրաստման, կազմակերպման և իրականացման գործընթացների թափանցիկության ու դրանց արդյունքների հրապարակայնության ապահովման, որոշակի ժամանակահատվածի համար օտարման ենթակա գույքի անվանացանկի սահմանման, դրանում ընդգրկված յուրաքանչյուր գույքի շուկայական արժեքի որոշման և հանրային իրազեկման ապահովման ուղղությամբ նախատեսված աշխատանքները, ինչպես նաև ապահովվել է տարածքային և ոլորտային մակարդակով մասնավորեցման ու օտարման գործընթացների ծրագրային իրականացումը և վերջին հաշվով՝ մասնավորեցման և օտարման գործընթացի արմատական բարեփոխումը:

2019 թվականին մշակվել է Պետական գույքի կառավարման հայեցակարգը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 1834-Լ որոշմամբ:

Մշակվել է էլեկտրոնային աճուրդի ծրագիրը, որը հաջողությամբ փորձարկվել է: Ներկայումս էլեկտրոնային աճուրդը ներդնելու համար սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել էլեկտրոնային աճուրդի կազմակերպումը կանոնակարգող ՀՀ կառավարության որոշման նախագիծը, մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Գնորդների գնային առաջարկների հիման վրա դժվար իրացվելի պետական սեփականություն համարվող անշարժ գույքի վաճառքը կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման նպատակն է՝ օտարման ենթակա դժվար իրացվելի պետական սեփականություն համարվող գույքի օտարման տարբեր ձևերով (աճուրդով, մրցույթով) վաճառքի ներկայացված և գնահատված արժեքի մեծության 40 տոկոսով նվազեցված, սակայն չվաճառված անշարժ գույքը վաճառել գնային առաջարկների հիման վրա, որի շնորհիվ կապահովվի դժվար իրացվող գույքի վաճառքը և կավելանան ՀՀ պետական բյուջեի մուտքերը:

Կատարվել են պետական գույքի մասնավորեցման 2018-2020թթ. եռամյա ծրագրով 2019 թվականի համար նախատեսված ծրագրային առաջադրանքները, որի վերաբերյալ հաշվետվությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում մինչև 2020 թվականի մայիսի 1-ը կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմի քննարկմանը:

Պետական գույքի օտարման և մասնավորեցման բնագավառներում հնարավորինս սահմանափակվել է ներդրումների դիմաց ուղղակի վաճառքի ձևով պետական գույքի շուկայական գնահատված արժեքից ցածր գնով վաճառքի կազմակերպման գործընթացը:

Պետական գույքի հաշվառման և գրանցամատյանի վարման համակարգն արդիականացնելու նպատակով իրականացվել է հաշվառման փաստաթղթային համակարգից էլեկտրոնային ինտեգրացված համակարգին անցում կատարելու գործընթացը (ՀՀ կառավարության 2019թ. ապրիլի 25-ի N 506-Ն որոշում): Էլեկտրոնային համակարգի միջոցով հնարավորություն է ստեղծվում ապահովելու տեղեկատվության թափանցիկությունը, բարձրացնելու հանրային օգտակարությունը, խուսափելու ավելորդ վարչարարությունից, հաստատելու արդյունավետ համագործակցություն պետական մարմինների միջև, և հաշվառման բազայում առկա տեղեկատվությունը հասանելի դարձնելու բոլոր պետական մարմիններին: Միաժամանակ համակարգը հնարավորություն է ընձեռում հաշվառման օբյեկտների վերաբերյալ ստանալ ոչ միայն պատկերային, այլ նաև օգտագործման վիճակի վերաբերյալ տեղեկություններ:

ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի «Պետական անշարժ գույքի օտարման կամ վարձակալության տրամադրման աշխատանքները կանոնակարգելու նպատակով հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը, ինչպես նաև օտարման կամ վարձակալության տրամադրման համար ներկայացվող, օտարման ենթակա, վարձակալության տրամադրման ենթակա, օտարման և

վարձակալության տրամադրման ոչ ենթակա պետական անշարժ գույքի ցանկերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 949-Ն որոշմամբ կանոնակարգվել են ներդրումային հավանական հետաքրքրություն ունեցող պետական գույքի օտարման նախապատրաստական աշխատանքները: Որոշման 2-րդ կետի համաձայն ստեղծվել է հանձնաժողով: Վերջինիս քննարկմանն է ներկայացվել օտարման ենթակա 31 անվանում անշարժ գույքի ցանկը, որտեղ ընդգրկված գույքն առաջարկվում է օտարել կամ տրամադրել վարձակալության:

Բնակչության սոցիալական խնդիրների լուծման ոլորտում՝ հանրակացարանային տարածքների նվիրատվության ճանապարհով, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով լուծվել են 100 ընտանիքի (231 անձ, 106 բնակելի տարածք) բնակարանային խնդիրները:

Պետական գույքի անհատույց օգտագործման հանձնելու գործընթացում վարչարարական քաշքշուկների վերացման, տարածքների անհատույց տրամադրման կիրառելի, արդար և բոլոր շահառուների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող ու գործունեության համար լիարժեք աջակցությունն ապահովող չափանիշներ և պայմաններ սահմանելու համար մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1073-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 05.03.2020թ. ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Պետական սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախագծով առաջարկվում է բոլոր սուբյեկտների համար տարածքների անհատույց օգտագործման տրամադրման դեպքում բացառել տարատեսակ մոտեցումների առկայությունը, հստակեցնել սուբյեկտներին ներկայացվող պայմանները (չափորոշիչները), բարեփոխել գործարար ծրագրերի օրինակելի ձևը, ստեղծել պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետ գործիքակազմ, որի արդյունքում կվերացվեն պետական գույքի անհատույց օգտագործման հանձնելու գործընթացում վարչարարական քաշքշուկները: Կսահմանվեն նաև տարածքների անհատույց տրամադրման կիրառելի, արդար և բոլոր շահառուների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող և գործունեության համար լիարժեք աջակցությունն ապահովող չափանիշներ և պայմաններ, ինչպես նաև բոլոր սուբյեկտների համար հստակ և միասնական պահանջներ սահմանելու շնորհիվ կբարձրացվեն գործընթացի արդյունավետությունը և ծառայությունների մատուցման որակը:

Պետական մարմինների տնօրինմանը, տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքի, պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի վարձակալության տրամադրման գործընթացը մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ իրականացնելու նպատակով մշակվել է «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու և ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն և 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի արդյունքում վարձակալության տրամադրման գործընթացը կլինի թափանցիկ ու հրապարակային, ինչպես նաև վարձակալական վճարների մեծությունը կսահմանվի՝ ելնելով շուկայական գնահատման արդյունքներից: Համաձայն ՀՀ վարչապետի 20.03.2020թ. N 02/16.16/11205-2020 հանձնարարականի՝ շահագրգիռ պետական մարմինների առաջարկությունների և դիտողությունների հիման վրա «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731, 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի լրամշակված տարբերակները 23.03.2020թ. ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագծով առաջարկվում է պետական մարմինների տնօրինմանը, տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքի, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացն իրականացնել մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ, ինչը կնպաստի գործընթացների թափանցիկության և հրապարակայնության աճին, ՊՈԱԿ-ներին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման տրամադրված գույքի վարձակալությունից գանձվող միջոցների բաշխման գործընթացում միասնական սկզբունքների սահմանում (80%-ն ուղղել պետական բյուջե, իսկ 20%-ը՝ ՊՈԱԿ-ի բյուջե), իսկ վարձակալական վճարների մեծությունը սահմանել՝ շուկայական գնահատման արդյունքներից ելնելով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019 թվականին ընդունվել են հետևյալ օրենքները.

- 09.07.2019թ. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2018 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՕ-140-Ն ՀՀ օրենքը,
- 19.06.2019թ. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-84-Ն ՀՀ օրենքը: Սույն օրենքով մասնավորեցման ծրագրի ցանկից հանվում են «Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» և «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ները.
- 19.11.2019թ. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-222-Ն օրենքը: Սույն օրենքով մասնավորեցման ծրագրի ցանկից հանվում են «Էներգաիմպեքս» և «Հայփոստ» ՓԲԸ-ները: Օրենքի նպատակը նշված հաստատությունների կառավարման և գործունեության արդյունավետության, ինչպես նաև հետագա զարգացման նախապայմանների ստեղծումն է, կապի ոլորտում՝ կարևոր գործառույթներ իրականացնող մարմնի կառավարման համակարգում պետության ուղիղ ներգրավվածությունը.
- 04.12.2019թ. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-259-Ն օրենքը: Սույն օրենքով մասնավորեցման ծրագրի ցանկից հանվում է «Մաշկաբանության և սեռավարակաբանական բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ն:

25.07.2019թ. ընդունվել է «Պետական գույքի կառավարման 2018-2020 թվականների ծրագրի կատարման 2018 թվականի հաշվետվությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N 467-Ն որոշումը:

25.07.2019թ. ընդունվել է «ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 971-Ն որոշումը: Որոշմամբ տեղաբնակներին բնակելի տարածքների նվիրատվության համար մեղմացվել և պարզեցվել են առաջադրվող պահանջները, որի արդյունքում կարճ ժամկետում կիրականացվի բնակելի տարածքի նվիրատվության գործընթացը: Միաժամանակ, որոշմամբ հաստատված հավելվածով նվիրատվությամբ տրամադրվում են բնակելի տարածքներ (106 սենյակ) այնտեղ բնակվող բնակիչներին: Այսպիսով բնակչության սոցիալական խնդիրների ոլորտում կլուծվի 100 ընտանիքի բնակարանային խնդիրը:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի թիվ 305-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության

որոշման նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Նախագծով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել բնակելի տարածքներ (57 սենյակ) այնտեղ բնակվող բնակիչներին: Այսպիսով բնակչության սոցիալական խնդիրների ոլորտում կլուծվի ևս 52 ընտանիքի բնակարանային խնդիրը:

Մշակվել և 06.02.2020թ-ին ընդունվել է «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» ՀՀ կառավարության N115-Ա որոշումը, որով թույլատրվել է սեփականաշնորհել բնակելի տարածքներ (14 սենյակ) այնտեղ բնակվող բնակիչներին: Այսպիսով բնակչության սոցիալական խնդիրների ոլորտում կլուծվի ևս 11 ընտանիքի բնակարանային խնդիրը:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, «Պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման նպատակով էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1073-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, «Օտարման ենթակա պետական գույքի գնորդների գնային առաջարկների հիման վրա վաճառք կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի լրամշակված տարբերակը 26.03.2020թ. ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Նախագծով առաջարկվում է պետական գույքի կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները բացահայտելու համար պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը հստակ ամրագրված ժամանակահատվածում հանձնել Կոմիտեի ենթակայությանը, որի արդյունքում կապահովվի պետական սեփականություն համարվող անշարժ գույքի կառավարման ոլորտում պետական գույքի ամբողջական հաշվառումն ու հրապարակայնությունը, թափանցիկ գործընթացների միջոցով կվարվի լիարժեք միասնական քաղաքականություն:

Ընդհանուր առմամբ, օրենսդրական բարեփոխումների նպատակով, 2019 թվականի ընթացքում շարունակվել են պետական գույքի կառավարման ոլորտում մեթոդական բնույթի օրենսդրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել, հստակեցնել կառավարման գործառույթները և լրացնել այն բացերը, որոնք առաջանում են նոր իրավական ակտերի կիրառման արդյունքում:

Անշարժ գույքի կադաստր

2019 թվականին Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից իրականացված աշխատանքների հիմնական նպատակներից է հանդիսացել Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդիականացումը, որի իրականացման գլխավոր նախապայմանը առաջիկա տարիներին հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու համար ամբողջական անցումն է առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգին՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջանառությունից:

Համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվում է կրճատվել գործող տարածքային ստորաբաժանումների թիվը:

Կոմիտեի հաջորդ խոշոր և հավակնոտ ծրագիրը հանդիսացել և մնում է գերակա քարտեզագրական կարողությունների և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա Հայաստանի Հանրապետության ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումը՝ նպատակ ունենալով տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն լուծումներով կայացնել ոլորտի կադաստրների համակարգը, որն էլ իր հերթին կնպաստի տարածական որոշումների օպերատիվության բարձրացմանը և հողային քաղաքականության պատշաճ վարմանը: Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով երկրատեղեկատվական համակարգի բազային քարտեզի ստեղծմանն ուղղված՝ 2019 թվականին նախատեսված Հայաստանի ամբողջ տարածքի օդալուսանկարահանման աշխատանքները, տեխնիկական նկատառումներից ելնելով, տեղափոխվել են 2021 թվական: Այս ուղղությամբ շարունակվում են նախորդ տարիներին սկսված քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները:

2019 թվականին իրականացվել են աշխարհագրական անվանումների քարտադարանի վարման և ատլասների թարմացման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ:

2019 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական գնահատման և հարկման համակարգի ներդրման ուղղությամբ

Կադաստրի կոմիտեի կողմից մշակված «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտնելու 2021 թվականից: Նշված օրենքի մշակման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է նաև միասնական տարածագնահատման նոր գոտևորում (որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի մինչև 2020 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը), ձևավորվել են շինության և հողամասի բազային արժեքները, ինչպես նաև օրենքով սահմանված կադաստրային գնահատման նոր կարգերում կիրառվող բնութագրիչների գործակիցներն ու մեծությունները:

Հասարակական կարգի պահպանություն

2019 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանությունը կատարել է իր առջև դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել է կայուն հասարակական կարգն ու անվտանգությունը:

Անդրադառնալով ՀՀ-ում արձանագրված հանցագործությունների շարժընթացին՝ հարկ է նշել, որ 2019 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 8.8%-ով կամ 2172 դեպքով (2018թ.՝ 24678, 2019թ.՝ 26850):

Չնայած հանցագործությունների թվի որոշակի աճին, պետք է փաստել, որ 2019 թվականի ընթացքում իրականացված լայնածավալ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում էականորեն կրճատվել է դրա տեմպը՝ շուրջ չորս անգամ (2019թ. հունվար ամիս՝ 35.3%, դեկտեմբեր ամիս՝ 8.8%):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննվող քրեական գործերով (նյութերով) անցնող 32623 հանցագործության դեպքերից 58%-ով առկա է որպես մեղադրյալ ներգրավված անձ:

Հասարակական կարգի պահպանումն ու հասարակական անվտանգության ապահովումը պատշաճ կազմակերպելու նպատակով 2019 թվականի ընթացքում ոստիկանության ստորաբաժանումները հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգություն են ապահովել թվով 5292 (2018թ.՝ 5767) զանգվածային միջոցառումների ժամանակ:

<u>Հանցավորության մակարդակի շարունակական նվազում, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի շարունակական բարձրացում</u>

Խնդրի համակարգային լուծումը ՀՀ կառավարությունը դիտարկում է Պարեկային ոստիկանության՝ շարժական շուրջօրյա պարեկային միասնական ստորաբաժանման ստեղծման

համատեքստում, ինչը ենթադրում է Պարեկային ծառայության ենթակառուցվածքի՝ օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորում, տեխնիկական վերազինում, ռադիոկապի համակարգի արդիականացում, պարեկային տրանսպորտային միջոցների ձեռքբերում և կահավորում, ՀՀ ոստիկանությունում ծառայության ընդունվելու համակարգի կատարելագործում, պարեկային մասնագիտացմամբ ոստիկանների մասնագիտական որակավորման համար նախատեսված ուսումնական ծրագրերի ստեղծում, Պարեկային ծառայության միջոցով քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանություն, իրավախախտումներին և հանրորեն վտանգավոր դեպքերին արագ (օպերատիվ) արձագանքում, երթևեկության կազմակերպում, հանցագործությունների և պատահարների վերաբերյալ հաղորդումների հավաքագրման ժամանակակից համակարգի ստեղծում, ոստիկանական ուժերի ու միջոցների առավել օպերատիվ կառավարում, իրավախախտումների՝ հատկապես սեփականության դեմ ուղղված և (կամ) հանրային վայրերում կատարվող հանցագործությունների արդյունավետ կանխարգելում, հանցագործության դեպքերի քրեաբանական վերլուծության և կանխատեսման համար նախատեսված ծրագրային համակարգերի մշակում և կիրառում (միջոցառումը նախատեսված է ՀՀ կառավարության 2019-2022թթ. գործունեության ծրագրով): Միջոցառման իրականացման նպատակով՝

- օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման համար Համաշխարհային բանկը հատկացրել է 760 հազար ԱՄՆ դոլար,
- Երևան քաղաքի մուտքերում տեղադրվել են տրանսպորտային միջոցի պետհամարանիշ կարդացող 30 տեսախցիկ,
- Երևանում, Շիրակում և Լոռիում ՃՊԾ, ՊՊԾ և Հերթապահ մասի ավտոմեքենաների վրա տեղադրվել են տեղորոշման համակարգեր (GPS),
- իրականացվում են ծրագրային ապահովման մշակման աշխատանքներ, ինչը նախատեսվում է ավարտել 2020 թվականի հուլիսին: Մատակարարվել է համակարգի շահագործման համար նախատեսված 10 սերվեր:

<u>Կառուցվածքային, կազմակերպահրավական և բովանդակային բարեփոխումներ</u>

2019 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշումը, որով ՀՀ ոստիկանությունում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ՝ ստորաբաժանումների իրավասության շրջանակը վերանայելու և

գործառույթները հստակեցնելու նպատակով: Կազմհաստիքային փոփոխությունների արդյունքում վերահայտավորվել են ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի բոլոր ծառայությունները:

Գյումրիում կազմավորվել է ՃՈ գրանցման-հաշվառման և քննական հյուսիսային կենտրոնը:

Ձևավորվել են Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը (ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունների հենքի վրա) և Հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունը (ՔՀԳ վարչությունից առանձնացված անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության, զորահավաքային աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության բաժնի և հասարակական կարգի ապահովման վարչության միաձուլմամբ): Նշված կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնելու են հանցավորության կանխարգելման և բացահայտման ոլորտի քաղաքականության մշակումը, ինչպես նաև համակարգելու են դրա իրականացումը ՀՀ ոստիկանության համակարգում:

Մշակվել է «ՀՀ ոստիկանության զարգացման 2020-2023թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Որպես ռազմավարական նպատակներ են սահմանվել ՀՀ ոստիկանության կառուցվածքի փոփոխությունը, ապառազմականացումը, գործառույթների հստակեցումը, պարեկային ծառայության հիմնադրումը, համայնքային ոստիկանության գործունեության արդյունավետության բարձրացումը, հետաքննության արդյունավետության բարձրացումը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդումը, ՀՀ ոստիկանությունում ծառայության անցնելու արդար և արդյունավետ իրավական ընթացակարգերի նախատեսումը և անցումը քաղաքացիական ծառայության:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ արդարադատության նախարարի գլխավորությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ռազմավարության նախագծի լրամշակման նպատակով: 24.12.2019թ. տեղի է ունեցել աշխատանքային խմբի առաջին հանդիպումը, նախանշվել են ռազմավարության հիմնական ուղղությունները: Ներկայումս հանրային քննարկման փուլում են ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրերը:

<u>Խոշտանգման դեպքերի նվազում</u>

2019 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի խոշտանգումները կանխելու և բացահայտելու նպատակով իրավական հիմքեր են նախատեսվել ՀՀ ոստիկանության

շենքերի մուտքերին և ելքերին, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների՝ հարցաքննության համար նախատեսված տարածքներում տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ տեղադրելու և տեսաձայնագրում իրականացնելու համար: Պիլոտային ծրագրի շրջանակներում նման տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ և տեսաձայնագրող համակարգեր արդեն իսկ ներդրվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում և ենթակա թվով 4 տարածքային բաժիններում ու Շիրակի, Արագածոտնի, Լոռու, Կոտայքի մարզային վարչությունների ենթակա ընդհանուր թվով 5 տարածքային բաժիններում:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրի ներքին կանոնակարգը Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներին համապատասխանեցնելու, ՄԱԿ-ի 1984 կամընտիր արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները կատարելու, ՁՊՎ-ներում պահվող անձանց (ձերբակալվածներ, կալանավորվածներ, դատապարտվածներ) կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու նպատակով:

<u>Օրենսդրության բարելավում</u>

2019 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունվել է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում տուգանային միավորների համակարգի ներդրման նպատակով մշակված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

2019 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունվել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առկա իրավական, ինչպես նաև օրենքների գործնական կիրառության ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծում տալու հանգամանքով:

2019 թվականի հունիսի 7-ին ընդունվել է «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով կանոնակարգվել են պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ՀՀ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ կապված հարաբերությունները: Օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ մշակվել և շրջանառվել է «Պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ լրամշակվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» նոր օրենքների ընդունմամբ, ինչպես նաև պարեկային ոստիկանության մոդելի ներդրմամբ: Նախագծի ընդունմամբ կապահովվի քաղաքացիական ծառայության ներդրումը ՀՀ ոստիկանությունում:

Մշակվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով կանոնակարգվում է ՀՀ ոստիկանությունում ծառայության ընդունվելու գործընթացը: Նշված ընթացակարգերի վերանայման արդյունքում հնարավորինս կբացառվի սուբյեկտիվ մոտեցումը, և հնարավոր կլինի մրցույթի արդյունքների հիման վրա որոշել պարեկային ոստիկանության թեկնածուներին այս կամ այն պաշտոնում (ըստ կոնկրետ ծառայությունների, ուղղությունների) նշանակելու հնարավորությունն ու նպատակահարմարությունը, ինչպես նաև կապահովվի նրանց նպատակային ուսուցումն ու վերապատրաստումը:

Մշակվել և շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը:

Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովում

ՀՀ ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմագրավելու կարողությունների արդյունավետության բարձրացման և ՀՀ-ում պատշաճ անվտանգային միջավայր ձևավորելու նպատակով նախապատրաստվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի 1008-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է ամբողջացնել պետական պահպանության ենթակա ռազմավարական նշանակության կարևորագույն օբյեկտների ցանկը: Նախագիծը գտնվում է արտաքին շրջանառության փուլում:

Կոռուպցիայի դեմ պայքար

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից իրականացվել են լայնածավալ աշխատանքներ: 2019 թվականին հայտնաբերվել է 1280 կոռուպցիոն բնույթի հանցագործության դեպք:

Կոռուպցիոն հանցագործություններից 324-ը կաշառակերության դեպքեր են, 225-ը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացման, 135-ը՝ պաշտոնեական կեղծիքի, 299-ը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, 60-ը՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու և այլն:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների արդյունքում 2019 թվականին բացահայտվել է պետությանը, կազմակերպություններին և անձանց հասցված շուրջ 497 միլիարդ դրամի, 6 միլիոն ՌԴ ռուբլու, 7.2 միլիոն ԱՄՆ դոլարի և 5120 Եվրոյի վնաս (վերականգնվել է շուրջ 652 միլիոն դրամի վնասը):

Կոռուպցիոն բնույթի ցանկացած դրսևորման դեմ սկզբունքային պայքար տարվում է նաև ՀՀ ոստիկանության ներսում:

Բռնությունից զերծ հանրություն

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի կիրառման շրջանակներում 2019 թվականի ընթացքում արձանագրված՝ ընտանիքում բռնության 1886 դեպքերից 796 դեպքով բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացվել է նախազգուշացում, իսկ 260 դեպքով՝ անհետաձգելի միջամտության որոշում, հաշվառման է վերցվել 1056 բռնություն գործադրած անձ, որից իգական սեռի ներկայացուցիչ՝ 123, անչափահաս՝ 5:

Մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումներ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մասնագիտական կրթության ոլորտում կատարվել են հետևյալ բարեփոխումները:

Կրթական ծրագրերի արդիականացումն ապահովելու նպատակով, ինչպես նաև ՀՀ ոստիկանությունում տեղի ունեցող կառուցվածքային և հաստիքային փոփոխությունների պահանջները հաշվի առնելով՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կողմից մշակվել և 2019 թվականի հուլիսի 23-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի թիվ 380-Ն հրամանով հաստատվել է միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.01.5 «Ոստիկանության սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչը, համաձայն որի «Ոստիկանության սպա» որակավորման մասնագետն այսուհետ կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝ հետաքննության տեսուչ, պարեկային տեսուչ, համայնքային ոստիկանության և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում նախնական մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման նպատակով 2019 թվականի ընթացքում իրականացվել է հետադարձ կապի ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքում վերանայվել և հաստատվել են առարկայական ծրագրերը՝ հաշվի առնելով ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների առաջարկությունները և պահանջները: Ծրագրերի բարելավման իմաստով հարցումներ են իրականացվել նաև սովորողների շրջանում:

Հարկային քաղաքականություն

Հարկային համակարգի կարգավորումներ

2019 թվականին հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանը, փոքր ձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործմանն ու կիրառության շրջանակի ընդլայնմանը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծմանը: Այս առումով իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնց արդյունքում մշակվել է ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագիծ, որը 2019 թվականի հունիսի 25-ին ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից: Կատարված փոփոխություններով, մասնավորապես, ներդրվել է միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ, 2020 թվականի հունվարի 1-ից շահութահարկի դրույքաչափը 20 տոկոսից նվազեցվել է 18 տոկոս, 2020 թվականի հունվարի 1-ից եկամտային հարկի բարձր և պրոգրեսիվ դրույքաչափերի փոխարեն ներդրվել է 23 տոկոս միասնական դրույքաչափ, իսկ այնուհետև մինչև 2023 թվականն այն աստիճանաբար նվազեցվելու է տարեկան 1 տոկոսով՝ 2023 թվականի հունվարի 1-ից սահմանվելով 20 տոկոս, մինչև 2023 թվականն աստիճանաբար բարձրացվելու են ակցիզային հարկի դրույքաչափերը:

Ակտիվ քայլեր են իրականացվել նաև միջազգային հարկային հարաբերությունների բնագավառում: Այս առումով հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնմանը, ինչի արդյունքում 2019 թվականի ընթացքում Սինգապուրի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության հետ ստորագրվել են կրկնակի հարկումը բացառող նոր համաձայնագրեր:

Հարկային և մաքսային վարչարարություն

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացված միջոցառումները բխել են ՀՀ կառավարության ծրագրից, ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրից, ինչպես նաև հարկային և մաքսային վարչարարության ոլորտին վերաբերող՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված այլ ծրագրերից: Ստորև ներկայացվում են հարկային և մաքսային վարչարարության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքները:

ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի վերադարձման ընթացակարգի պարզեցում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2019 թվականի սեպտեմբերի 23-ի ՀՕ-172-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ կատարվել են մի շարք էական բարեփոխումներ՝ կապված ԱԱՀ-ի գումարների վերադարձման գործընթացի հետ, մասնավորապես.

- վերադարձման ենթակա գումարներ են համարվել նաև 2017թ. 2-րդ կիսամյակին նախորդող կիսամյակների համար հարկային մարմին ներկայացված հաշվարկներով առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները,
- մինչև ՀՀ հարկային օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի, ինչպես նաև օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ԱԱՀ-ի դեբետային գումարների փոխհատուցման համար սահմանվել է պարզեցված ընթացակարգ,
- 2017թ. 2-րդ կիսամյակին նախորդող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ բյուջեից հաշվանցման ենթակա մինչև 5 մլն դրամ ԱԱՀ-ի գումարների մնացորդի մուտքագրումը պետական գրանցում (հաշվառում) ստացած հարկ վճարողի միասնական հաշվին կատարվել է առանց հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման և առանց հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության,
- բարձրացվել է պարզեցված ընթացակարգով վերադարձման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի առավելագույն չափը՝ 20 մլն դրամից այն դարձնելով 40 մլն դրամ:

Հարկ վճարողների սպասարկում

Տնտեսավարող սուբյեկտների մոտ ծագող հարցերի ու խնդիրների օպերատիվ լուծման նպատակով ակտիվորեն գործել է հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնը՝ 2019 թվականի ընթացքում ստանալով 250253 հարցադիմում (հարկային մասով՝ 80%, մաքսային մասով՝ 20%):

«Օրինապահ հարկ վճարող» կարգավիճակի տրամադրման համակարգով 2019 թվականին ներկայացվել է օրինապահ հարկ վճարողի հավաստագրի ստացման թվով 132 դիմում, որոնցից թվով 93 հարկ վճարողի դիմում բավարարվել է:

2019 թվականի ընթացքում հարկ վճարողների համար անցկացվել է 62 ուսումնական միջոցառում 696 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ, որոնց մասնակցել են 1052 հարկ վճարողներ և (կամ) նրանց ներկայացուցիչներ:

ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունների զարգացում

Վարչարարության գործընթացի պարզեցման և հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգին ամբողջական անցում կատարելու նպատակով շարունակվել են ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես, ներդրվել է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգը, նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման համակարգը, նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաներում անհպում (NFC) վճարային համակարգը, կամերալ ուսումնասիրությունների իրականացման ինքնաշխատ համակարգը, «Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում» ներդրվել է ԱԱՀ-ի ինքնաշխատ լրացման (pre-filing) համակարգը, գործում է Տվյալների Մեծ Շտեմարանների (Big Data) համակարգը և այլն:

Հարկային և մաքսային ընթացակարգերի բարելավում

Ակտիվորեն և լայն թափով իրականացվում են ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության Գյումրիի ԱՏԳ սպասարկման կենտրոնի շինարարական աշխատանքները:

Պետական սահմանի անցման կետերում մշակվել և ներդրվել են մաքսային հսկողության իրականացման ռիսկի պրոֆիլներ, ինչի արդյունքում սահմանին նվազել են հերթերը և սահմանահատման վրա ծախսվող ժամանակը:

2019 թվականի ընթացքում ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվել են 8703 ծածկագրին դասվող մարդատար տրանսպորտային միջոցների հայտարարագրման և բացթողնման 189,018 մաքսային գործառնություններ՝ 2018 թվականի 64,082 հատի դիմաց, որից 55,157-ը ՀՀ ՊԵԿ հյուսիսային մաքսատուն-վարչության կողմից, որից միայն 45,981 մարդատար տրանսպորտային միջոցների հայտարարագրման և բացթողնման մաքսային գործառնություններ իրականացվել են 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Մշակվել և ներդրվել է մաքսային տարանցում ընթացակարգով ներկայացվող հայտարարագրերի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատման հնարավորությունը:

ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան տեղեկատվական հարթակի «ապրանքի հայտարարագիր» համակարգում կիրառության մեջ է դրվել «նախնական հայտարարագիր» արդիականացված բաժինը:

Տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց սահմանահատման գործընթացի հարմարավետությունն ապահովելու նպատակով վերանայվել են որոշ մաքսային մարմինների

աշխատանքային ժամերը, ըստ անհրաժեշտության և մաքսային գործառնությունների իրականացման ծավալների սահմանվել են վեցօրյա և յոթնօրյա աշխատանքային շաբաթներ:

Վերացվել են տրանսպորտային միջոցի վրա տեղադրված վնասակար արտանետումների չեզոքացուցիչների առկայության ստուգման, տրանսպորտային միջոցի հետախուզման մեջ գտնվելու փաստի վերաբերյալ համապատասխան տվյալների ստացման, ինչպես նաև ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության ծառայողի կողմից տրանսպորտային միջոցի զննման և դրա արդյունքում համապատասխան եզրակացության տրամադրման ընթացակարգերը:

<u>Հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող հսկողություն</u>

2019 թվականին հարկային մարմնի կողմից իրականացված համալիր հարկային ստուգումների քանակը 2018 թվականի համեմատ նվազել է 5.6%-ով: Իրականացված համալիր ստուգումների թվի կրճատման պայմաններում, արձանագրված լրացուցիչ պարտավորությունների գումարն աճել է 81.2%-ով, միաժամանակ աճել է նաև մեկ ստուգմանը բաժին ընկնող լրացուցիչ պարտավորության գումարը՝ 92%-ով:

Մոնիտորինգային կենտրոնի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաներով, հաշվարկային փաստաթղթերով իրականացվող գործարքների մոնիտորինգի արդյունքների հիման վրա 2019 թվականի ընթացքում հարկ վճարողներին բացառապես էլեկտրոնային եղանակով ուղարկվել են ծանուցումներ: 2019 թվականի ընթացքում իրականացված մոնիտորինգի արդյունքներով հարկ վճարողներին բացառապես էլեկտրոնային եղանակով ուղարկվել է 13991 ծանուցում, և նույն համակարգի միջոցով ստացվել է 3165 բացատրություն: Միաժամանակ, 2019 թվականի նոյեմբերի 1-ից համակարգը լրացվել է եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի իրականացման նոր մոդուլով:

2019 թվականի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրությունների հիման վրա կայացվել են թվով 1322 վարչական ակտեր, որոնցով առաջադրվել է 4.05 մլրդ դրամ պարտավորություն, որից 1.05 մլրդ դրամի վերաբերյալ վարչական ակտերն անվավեր են ճանաչվել, 1.65 մլրդ դրամի վերաբերյալ վարչական ակտերը վիճարկվում են դատական կարգով, անբողոքարկելի դարձած և փաստացի Հարկատու 3 համակարգ մուտքագրված վարչական ակտերով առաջադրված գումարներից վերականգնվել է 501.8 մլն դրամ: Նշված գումարը խիստ հարաբերական է՝ նկատի ունենալով հարկերի միասնական հաշվից պարտավորությունների մարման առաջնահերթությունը:

Հարկային մարմնի գործողությունների բողոքարկում

2019 թվականի ընթացքում հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է հարկ վճարողների կողմից ներկայացված 1539 բողոք, որից 55.6%-ը կամ 856 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է, իսկ 183 բողոք կարճվել է:

Միջազգային համագործակցություն

«Հարկային տեսուչներ առանց սահմանների» ծրագրի շրջանակում ստորագրվել է տեխնիկական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր Հայաստանի և Իտալիայի հարկային ծառայությունների միջև:

Պետական եկամուտների կոմիտեի ու Նիդերլանդների հարկային և մաքսային ծառայության միջև ստորագրվել է 2019-2020 թվականների երկկողմ համագործակցության ծրագիր: Փոխգործակցության արդյունքում նախատեսվում է 2019-2020 թվականների ընթացքում ՀՀ ՊԵԿ համապատասխան մասնագետների վերապատրաստում և փորձի փոխանակում Նիդերլանդների Թագավորության հարկային և մաքսային ծառայության կողմից կազմակերպվելիք սեմինարների և դասընթացների ընթացքում, մասնավորապես, հարկային վարչարարության զարգացման և գնահատման, կարգապահական ռիսկերի կառավարման, էլեկտրոնային առևտրի հարկման և այլ թեմաներով:

Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջև Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին»:

ՀՀ կառավարության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունվել է «Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից մաքսային կցորդի կարգավիճակը և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1807-Ն որոշումը:

2019 թվականի նոյեմբերի 18-19-ը Երևանում տեղի ունեցած «Թվային լուծումներ՝ միջսահմանային համագործակցության և առևտրի դյուրացման համար» խորագրով տարածաշրջանային համաժողովի շրջանակներում Վրաստանի, Իրանի և Հայաստանի մաքսային մարմինների միջև ստորագրվել են մի շարք փաստաթղթեր:

Միջազգային և օտարերկրյա կառույցների հետ (այդ թվում՝ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, ՏՀԶԿ-ի, Եվրասիական տնտեսական միության, ԱՊՀ անդամ

պետությունների) 2019 թվականի ընթացքում իրականացվել են համագործակցության մի շարք ծրագրեր:

Պետական ծախսեր

Ծրագրային բյուջետավորում

2019 թվականին կառավարությունը շարունակել է Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների իրականացումը:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով դեռևս նախորդ տարիներին ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման շրջանակներում իրականացված աշխատանքները, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը կազմել է ծրագրային բյուջետավորման ձևաչափով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ:

Մշակվել և կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները՝ պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները (ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշում):

Միաժամանակ մշակվել և համացանցում տեղադրվել է Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի համառոտ ուղեցույցը (քաղաքացու բյուջե), որի միջոցով այն առավել հանրամատչելի և տեսանելի է դարձել հանրության համար:

Գենդերային բյուջե

Ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության շրջանակներում առաջին անգամ նախատեսվել է գենդերային զգայուն բյուջետավորման պիլոտավորում՝ ներառելով համապատասխան չափելի արդյունքային ցուցանիշներ, որոնք կապված են գենդերային հավասարության ռազմավարության իրականացումն ապահովող ծրագրերի հետ: Այս կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության 10 միջոցառումների գծով, փորձնական կարգով, ներառվել են արդյունքային ցուցանիշներ ըստ սեռային բաշխվածության:

Միաժամանակ, 2021 թվականի պետական բյուջեի նախագիծն ամբողջությամբ որպես գենդերային զգայուն բյուջե մշակելու նպատակով 2019 թվականին մշակվել և պետական մարմիններին է տրամադրվել գենդերային զգայուն բյուջետային ծրագրերի սահմանման մեթոդական ձեռնարկ:

Արտաբյուջեներ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2019 թվականի նոյեմբերի 14-ի նիստում երկրորդ ընթերցմամբ ընդունվել է օրենքների փաթեթ՝ մի շարք օրենքներում արտաբյուջետային ֆոնդի միջոցներին վերաբերող դրույթները հանելու վերաբերյալ: Վերջինով պայմանավորված՝ արտաբյուջետային ծրագրերը ներառվել են ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքի համապատասխան մարմինների բյուջետային ծրագրերում:

Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգի ներդրում

Բյուջետային հսկողության ռեսուրսատարությունը, սխալների կատարման և շեղումների հավանականությունը նվազեցնելու և պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) նախագծման աշխատանքները, որի նպատակն է բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերի հաշվարկման (ծախսակազմման) միասնական մեխանիզմի կիրառումը:

Համակարգը թույլ է տալիս հայտատու մարմիններին առցանց ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերի բաղկացուցիչ մաս կազմող ծախսերի հաշվարկ-հիմնավորումները՝ իրենց կողմից նախապես մշակված և ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցված ձևաչափերով, ինչպես նաև հնարավորություն է տալիս հայտատու մարմնի և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան լիազորություն ունեցող օգտատերերին հաստատել/մերժել, ինչպես նաև ամփոփել ստացված հայտերի տվյալներն ըստ ծրագրային, գործառական և տնտեսագիտական դասակարգիչների՝ թույլ տալով անհրաժեշտ մանրամասնությամբ ստանալ ծրագրերի/միջոցառումների թվերի բացվածքները:

Սույն թվականի հունվար ամսին ավարտվել են համակարգի մշակման և թեստավորման աշխատանքները: Նախատեսվում է Համակարգի ներդրումը հայտատու մարմիններում ավարտել մինչև 2020 թվականի դեկտեմբերի երրորդ տասնօրյակը:

Հանրային ֆինանսների կառավարում

ՀՀ կառավարության 16.05.2019թ. № 650-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 321.1 կետին համապատասխան՝ մշակվել է Պետական

ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների (ՊՖԿՀԲ) ռազմավարության և ՊՖԿՀԲ 2019-2023 թվականների գործողությունների ծրագրի նախագիծ, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1716-Լ որոշմամբ:

Բյուջետային գործընթացի պլանավորում

Բյուջեի տեղեկատվության թափանցիկությունն ապահովելու նպատակով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» ՀՀ վարչապետի 2020 թվականի հունվարի 9-ի N 5-Ա որոշմամբ, ի տարբերություն նախորդ տարվա բյուջետային գործընթացի, նախատեսվում է հետևյալը.

Մասնակցային գործընթացների բարելավման մասով՝

- քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) հետ քննարկումներ բյուջետային հայտերի վերաբերյալ,
- ՔՀԿ-ի հետ քննարկումների արդյունքների վերաբերյալ հայտատու մարմինների կողմից տեղեկատվության ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն,
- ՀՀ Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում 2021 թվականի բյուջետային ծրագրերի շուրջ քննարկումների արդյունքներով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առաջարկությունների վերաբերյալ ամփոփաթերթերի ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն,
- Քաղաքացու բյուջեի մշակում և հանրայնացում:

Գործընթացի թափանցիկության բարձրացման մասով՝

- Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) հայտերի և, ըստ անհրաժեշտության, այլ պարզաբանող նյութերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում,
- ՄԺԾԾ հաստատվելուց հետո՝ ՄԺԾԾ հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումների և ըստ անհրաժեշտության այլ պարզաբանող նյութերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում:

Գործընթացի ժամկետների վերանայման վերաբերյալ.

- ՄԺԾԾ մշակման մեթոդական ցուցումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրում ավելի վաղ ժամկետում՝ մինչև հունվարի 15-ը,
- Հայտերի մշակման համար նախատեսված ժամանակահատվածի ավելացում՝ մինչև մարտի 2-ը և մինչև մարտի 16-ը,
- Մակրոկանխատեսումների ներկայացում ավելի վաղ ժամկետում՝ մինչև մարտի 16-ը,

- Մինչև սույն թվականի ապրիլ ամսվա վերջ կամփոփվեն ՀՀ 2020 թվականի քաղաքացու բյուջեի՝ նոր ձևաչափով մշակման աշխատանքները, որը հիմք կհանդիսանա նաև ՀՀ հանրային իշխանության մարմինների կողմից առանձին ձևաչափով 2021 թվականի քաղաքացու բյուջեի (յուրաքանչյուրը՝ իր ոլորտային մասով) ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման և վերջինիս կողմից, որպես բյուջետային գործընթացի մաս, 2021 թվականի քաղաքացու բյուջեի մշակման և հանրայնացման համար:

<u>Բյուջեի կատարում</u>

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1307-Լ որոշմամբ հաստատված «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում ՀՀ գործողությունների չորրորդ ծրագրի 2-րդ կետին համապատասխան՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի № 1937-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի 29 ապրիլի № 566-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Միաժամանակ նախագիծը դրվել է հանրային քննարկման՝ www.e-draft.am կայքում: Նախագծով վերանայվել են մրցութային գործընթացի ընթացակարգային մի շարք դրույթներ, այդ թվում՝ հստակեցվել են հանձնաժողովի գործունեության ընթացակարգերը, ավելացվել են դրույթներ հանձնաժողովի անդամի, հրավիրված փորձագետի (մասնագետի) կամ քարտուղարի՝ հայտերի նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախման դեպքում ինքնաբացարկի ներկայացման, մասնակիցների՝ մրցույթին համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու վերաբերյալ դրույթներ, ինչպես նաև սահմանվել են էլեկտրոնային ծրագրային ապահովման առկայության դեպքում մրցույթների անցկացումը, պայմանագրերի կնքումը, հաշվառումը և կնքված պայմանագրի արդյունքների ընդունումը էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացնելու պայմանները: Միաժամանակ, նախագծի մշակման գործընթացում հաշվի են առնվել նաև հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպված մի շարք քննարկումների ընթացքում բարձրացված հարցերը:

<u>Գնումներ</u>

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ՀՀ ֆինանսների նախարարության, պատվիրատուների և հասարակական միավորների կողմից գնման գործընթացների շրջանակներում

ախտորոշված խնդիրները կանոնակարգելու նպատակով գնումների հետ կապված ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների կատարման գործընթացը:

Արձանագրված խնդիրներին տրված լուծումները մշակելիս և հաստատելիս հաշվի են առնվել գնումների համակարգի կիրառման արդյունքում կուտակած փորձի վերլուծությունը՝ հնարավորինս հավասարակշռելով պետության՝ որպես գնորդի, և տնտեսվարողի՝ որպես մատակարարի հետաքրքրությունների շրջանակը՝ բացառելով գնումների գործընթացի արդյունավետության հաշվին փոխզիջումը:

Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը, որոնք հաստատվել են 11.04.2019թ. թիվ 409-Ն, 02.05.2019թ. թիվ 516-Ն, 22.08.2019թ. թիվ 1096-Ն և 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշումներով:

Իրականացված փոփոխություններն ուղղված են գնման ընթացակարգերում մրցակցության, գրավչության և պայմանագրերի կատարման թափանցիկության աստիճանի բարձրացմանը, պայմանագրերի կատարման որակի ապահովման համակարգի ներդրմանը, ինչպես նաև սկսնակ և փոքր բիզնեսի՝ ընթացակարգերին մասնակցելու հնարավորությունների մեծացմանը, ձևական պահանջներով մասնակիցներին ծանրաբեռնելու հնարավորությունների նվազեցմանը, խտրական բնութագրերով ընթացակարգերի կազմակերպման հնարավորությունների սահմանափակմանը, պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու դեպքում պատասխանատվությունից խուսափելու դեպքերի կանխարգելմանը, պաշտպանության հետ կապված գնումների կատարման առանձնահատկությունների կարգավորմանը, պայմանագրերի կատարման թափանցիկության աստիճանի բարձրացմանը:

Միաժամանակ, հիշյալ որոշումները հաստատվելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անցկացվել են պետական կառավարման համակարգի բոլոր մարմինների՝ գնումների ընթացակարգերի կազմակերպման համար պատասխանատու աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ:

Կառավարության պարտք

2019 թվականի ընթացքում կառավարության պարտքի կառավարումն իրականացվել է «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ կառավարության պարտքի կառավարման նպատակներին համապատասխան: 2019 թվականի ընթացքում իրականացված

գործառնությունների արդյունքում ապահովվել են ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները.

- կառավարության պարտքի՝ մինչև մարումը միջին ժամկետը կազմել է 9.1 տարի՝ սահմանված ուղենշային 8-11 տարի միջակայքի դեպքում,
- առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական պարտատոմսերի կշիռը պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալի մեջ կազմել է 12.7%՝ սահմանված առավելագույնը 20% ցուցանիշի դիմաց,
- ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կազմել է 83.8%՝ սահմանված նվազագույնը 80% ցուցանիշի դիմաց,
- ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կազմել է 22.5%՝ սահմանված նվազագույնը 20% ցուցանիշի դիմաց,
- ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կազմել է 20.8%՝ սահմանված նվազագույնը 20% ցուցանիշի դիմաց:

2019 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետությունը միջազգային կապիտալի շուկայում հաջողությամբ տեղաբաշխեց 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի մարման ժամկետով արտարժութային պետական պարտատոմսեր՝ 4.2 տոկոս եկամտաբերությամբ և 3.95 տոկոս արժեկտրոնային եկամտաբերությամբ: Տեղաբաշխման ցածր եկամտաբերությունը պայմանավորված էր հիմնականում ներդրողների կողմից տրված՝ երկրի ռիսկի ցածր գնահատականով: Եթե 2015 թվականի մարտին թողարկված 10 տարի մարման ժամկետով պարտատոմսերի եկամտաբերության ձևավորման մեջ երկրի ռիսկի բաղադրիչը գնահատվել էր 551.8 բազիսային կետ (5.518 տոկոսային կետ), ապա նոր թողարկված նույն ժամկետայնությամբ պարտատոմսերի համար ներդրողների կողմից երկրի ռիսկը գնահատվել է 242.8 բազիսային կետ (2.428 տոկոսային կետ): Արդյունքն արտացոլում է Հայաստանի Հանրապետության բարելավված միջազգային ընկալումը: Ցածր եկամտաբերությանը նպաստել է նաև ուղենշային համարվող ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության նվազումը:

Սա Հայաստանի կողմից միջազգային կապիտալի շուկայում արտարժութային պետական պարտատոմսերի երրորդ թողարկումն էր, որի նպատակը 2020 թվականին մարվող եվրապարտատոմսերի վերաֆինանսավորումն էր: Նոր թողարկմանը զուգահեռ՝ Հայաստանը հայտարարել էր իր՝ 2013 թվականին թողարկված պարտատոմսերի հետգնում, որի արդյունքում հետգնվեց շրջանառության մեջ առկա ծավալի ավելի քան 80 տոկոսը (402,415,000 ԱՄՆ դոլար կամ 189.8 մլրդ դրամ):

2019 թվականի ընթացքում մշակվել է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022 թվականների ռազմավարական ծրագիրը:

Հաշվապահություն և աուդիտ

2019 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՕ-282-Ն, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՕ-283-Ն, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՕ-284-Ն օրենքները: Նոր օրենսդրական փաթեթով նախատեսվում է պետական կարգավորման որոշակի գործառույթներ պատվիրակել մասնագիտական կազմակերպություններին՝ ներդնելով նոր՝ մասնագիտացված կառույցներ–հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը: Օրենքներով նախատեսվում է նաև ճշգրտել պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը՝ ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերություններ ներգրավելուն: Բարեփոխումների նպատակն է նաև հստակեցնել նշված կազմակերպությունների շրջանակը՝ աուդիտի պահանջը տարածելու իրապես հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունների, այլ ոչ թե ֆորմալ առումով օրենքի պահանջին բավարարող կազմակերպությունների նկատմամբ:

2019 թվականի ընթացքում հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման տվյալներում իրականացված մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված խնդիրների և անճշտությունների վերհանման ու ճշտման նպատակով 2019 թվականին ևս շարունակվել է «Մասնագիտական տեղեկատու» պարբերականների տրամադրման գործընթացը: Մասնավորապես, 2019 թվականին հանրային հատվածի կազմակերպություններին են տրամադրվել թվով երեք պարբերականներ, որոնք անդրադարձել են մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված հիմնական խնդիրներին և օրենսդրական փոփոխություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ

2019 թվականին ՀՀ տնտեսությունը շարունակեց աճել նախորդ տարվա նկատմամբ ավելի արագ տեմպերով և գրանցվեց բարձր՝ 7.6% տնտեսական աճ, որը պայմանավորված էր հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի բարձր աճով: Գրանցված տնտեսական աճն ուղեկցվել է հիմնականում ներքին պահանջարկի աճով:

2019 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ կազմելով ՀՆԱ-ի 8.2%-ը: Ընթացիկ հաշվի բարելավումը հիմնականում պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի կրճատմամբ՝ ներմուծման համեմատ արտահանման առաջանցիկ աճի հաշվին:

2019 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 0.7%, իսկ միջին գնաճը՝ 1.4%: Ելնելով ցածր գնաճային զարգացումներից՝ ՀՀ ԿԲ-ն իրականացրել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ տարվա ընթացքում երկու անգամ իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը (սահմանելով 5.5%): Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները և ներգրավված ավանդները 2019 թվականին շարունակել են աճել բարձր տեմպերով, իսկ ՀՀ դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել:

2019 թվականին տնտեսական աճի բարձր տեմպերի պայմաններում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով հարկաբյուջետային քաղաքականության զսպող ուղղությունը պահպանվել է: Արդյունքում պետական բյուջեի պակասուրդը նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 1%-ը: Նվազել է նաև ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 50%:

2019 թվականի պետական բյուջեի կատարումը համապատասխանել է հարկաբյուջետային կանոններով սահմանված չափանիշներին: Պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդի մեծությունը, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը ցածր է եղել անվանական ՀՆԱ-ի աճի պատմական միտումների հիման վրա հաշվարկված ցուցանիշից:

Համախառն առաջարկ

2019 թվականին տնտեսության զարգացումն ընթացել է նախորդ տարվա համեմատ ավելի արագ տեմպերով: Գրանցվել է իրական ՀՆԱ-ի 7.6% աճ, ինչը 2.4 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Ընդ որում՝ ՀՆԱ-ի աճին դրական են նպաստել ծառայությունների (5.2 տոկոսային կետ), արդյունաբերության (1.9 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային

կետ) ճյուղերը՝ աճելով համապատասխանաբար 10.3%-ով, 10.2%-ով և 4.2%-ով, իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն (0.5 տոկոսային կետ)՝ նվազելով 4%-ով:

Գծապատկեր 1. 2018-2019 թվականներին ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ





2019 թվականին արդյունաբերությունն[1] աճել է 9%-ով՝ պայմանավորված և՛ արտաքին, և՛ ներքին պահանջարկի աճով: Արդյունաբերության աճին նպաստել են մշակող արդյունաբերությունը՝ 5 տոկոսային կետով (աճը՝ 7.6%), և հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթաճյուղը՝ 4.1 տոկոսային կետով (աճը՝ 23.9%):

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթաճյուղի աճը պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման 24.9% աճով:

Մշակող արդյունաբերության աճին էական նպաստում են ունեցել այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 2.2 տոկոսային կետով (աճը՝ 41.2%), խմիչքների արտադրությունը՝ 2 տոկոսային կետով (աճը՝ 15.4%), սննդամթերքի արտադրությունը՝ 1.1 տոկոսային կետով (աճը՝ 4.1%), և ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 1 տոկոսային կետով (աճը՝ 6.8%):

2019 թվականին գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը իրական արտահայտությամբ նվազել է 3.8%-ով: Գյուղատնտեսության նվազմանը հիմնականում նպաստել է բուսաբուծությունը՝ 3.5 տոկոսային կետով (նվազումը՝ 7.7%): Բուսաբուծության նվազումը

[1] Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

պայմանավորված է եղել հացահատիկի 41.2%, պտուղ, հատապտուղների՝ 15.6%, կարտոֆիլի բերքի՝ 2.6%, բանջարեղենի 1.1% նվազմամբ: Միևնույն ժամանակ խաղողի համախառն բերքն աճել է 21%-ով, իսկ բոստանինը՝ 0.9%-ով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի նվազմանը նպաստել է նաև անասնաբուծությունը՝ 0.6 տոկոսային կետով (նվազումը՝ 1.2%): Անասնաբուծության նվազումը պայմանավորված է եղել մսի և կաթի արտադրության համապատասխանաբար 0.8% և 4.3% նվազմամբ: Ձվի արտադրությունը նույնպես բացասաբար է ազդել՝ նվազելով 0.9%-ով:

2019 թվականին շինարարության ճյուղի տարեսկզբից արձանագրված աճի բարձր տեմպը աստիճանաբար դանդաղել է: Ճյուղում գրանցվել է 4.6% աճ, որին 2.5 տոկոսային կետով նպաստել է պետական բյուջեի միջոցներով (աճը՝ 8.9%, չնայած միջազգային վարկերի հաշվին իրականացվող շինարարությունը նվազել է 4.4%-ով՝ շինարարության աճին հակազդելով 0.9 տոկոսային կետով)[2] և 1.5 տոկոսային կետով՝ բնակչության միջոցներով (աճը՝ 6.1%) իրականացված շինարարությունը: Շինարարության աճին բացասաբար է ազդել նաև մարդասիրական օգնության միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումը (նպաստումը՝ 0.7 տոկոսային կետ, նվազումը՝ 39.8%):

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարությանը նպաստել են հիմնականում էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ենթաճյուղը՝ 8.1 տոկոսային կետով (աճը՝ 51.1%), մշակող արդյունաբերությունը՝ 2 տոկոսային կետով (աճը՝ 52.7%), ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված գործունեությունը՝ 1.3 տոկոսային կետով (աճը՝ 4.8%): Շինարարության աճին հիմնականում բացասաբար են ազդել կրթության ենթաճյուղը՝ 3.1 տոկոսային կետով (նվազումը՝ 57.4%) ու մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում ենթաճյուղը՝ 1 տոկոսային կետով (նվազումը՝ 23.5%):

Շինարարության աճն ուղեկցվել է շինարարության ոլորտում վարկավորման (հիփոթեքային վարկավորման) ծավալների զգալի աճով:

2019 թվականին ծառայությունների և առևտրի ճյուղերում գրանցվել է բարձր աճ: Ծառայություններն աճել են 15%-ով, ինչին հիմնականում նպաստել են մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղը՝ 5 տոկոսային կետով (աճը՝ 22.3%), ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 3.4 տոկոսային կետով (աճը՝ 16.5%), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 2.2 տոկոսային կետով (աճը՝ 26.1%):

[2] Պետական բյուջեից կատարված կապիտալ ծախսերի աճը գերազանցում է պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը, ինչը պայմանավորված է շինարարության իրականացման և պետական բյուջեից ֆինանսավորման ժամկետների տարբերությամբ:

Առևտրի շրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 8.9%-ով, ինչին նպաստել են մեծածախ առևտուրը՝ 5.5 տոկոսային կետով (աճը՝ 11.5%) և մանրածախ առևտուրը՝ 3.7 տոկոսային կետով (աճը՝ 7.7%): Ավտոմեքենաների առևտուրը բացասաբար է ազդել առևտրի շրջանառությանը՝ 0.3 տոկոսային կետով (նվազումը՝ 7.3%)[3]:

Առևտրի և ծառայությունների աճի հիմնական գործոններն են եղել վարկավորման ծավալների բարձր, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամտի աճերը:

2019 թվականին ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալները նվազել են, իսկ ուղևորափոխադրումներինը՝ աճել: Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը նվազել է 49.6%-ով, ինչին 50.9 տոկոսային կետով բացասաբար է ազդել ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումները (նվազումը՝ 60.6%), որն էլ իր հերթին պայմանավորված է եղել ներհանրապետական բեռնափոխադրումների[4] 73% նվազումով (նպաստումը՝ 53.4 տոկոսային կետ): Երկաթուղային, մայրուղային խողովակաշարային և օդային բեռնափոխադրումների ծավալներն աճել են համապատասխանաբար 11.5%, 4.1% և 14.4%-ով՝ հակազդելով բեռնափոխադրումների ընդհանուր ծավալի նվազմանը (նպաստումները՝ համապատասխանաբար՝ 1.1, 0.2 և 0.01 տոկոսային կետեր):

Ուղևորափոխադրումների ծավալն աճել է 4.4%-ով՝ պայմանավորված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով իրականացված ուղևորափոխադրումների 3.6% աճով (նպաստումը՝ 3.1 տոկոսային կետ): Ուղևորափոխադրումներին դրական են նպաստել նաև էլեկտրական տրանսպորտով (0.9 տոկոսային կետով), օդային տրանսպորտով (0.4 տոկոսային կետով) և երկաթուղային տրանսպորտով (0.02 տոկոսային կետով) իրականացված ուղևորափոխադրումները (աճերը համապատասխանաբար՝ 6.8%, 25.9% և 11.1%):

Կապի ծառայությունները նախորդ տարվա համեմատ աճել են: Կապի ծառայությունների 0.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման 64.4% աճով (նպաստումը՝ 2.9 տոկոսային կետ): Կապի ծառայություններին բացասաբար է ազդել հեռահաղորդակցության 2.9% նվազումը (նպաստումը՝ 2.4 տոկոսային կետ), որին հիմնականում նպաստել են բջջային (3.1 տոկոսային կետով) և լարային (1.5 տոկոսային կետով) հեռախոսային ծառայությունների նվազումները (համապատասխանաբար՝ 7.4% և 20.2%): Իսկ ինտերնետ հասանելիության 4.5% աճը հակազդել է հեռահաղորդակցության նվազմանը՝ 1.7 տոկոսային կետով:

---

[3] Ցուցանիշը ներառում է միայն մասնագիտացված խանութների միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, ինչպես նաև դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը: Այդ իսկ պատճառով ավտոմեքենաների ներմուծման բարձր աճի տեմպերը ցուցանիշում չեն արտացոլվում:

[4] Ըստ ՀՀ ՎԿ-ի պաշտոնական տվյալների բեռնափոխադրումների ծավալը արտահայտող ցուցանիշները ներառում են միայն վարձակալված մեքենաներով իրականացված փոխադրումների տվյալները: Արդյունաբերության ճյուղում գործող ընկերությունների մեծ մասը բեռնափոխադրումներն իրականացնում են սեփական տրանսպորտային միջոցներով, ինչը արտացոլվում է միայն տարեկան զեկույցներում:

Աշխատանքի շուկա

2019 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է գործազրկության մակարդակի նվազմամբ և միջին ամսական աշխատավարձի աճով:

Գործազրկության մակարդակը 2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 18.9%: Զբաղվածների թիվը նույն ժամանակաշրջանում աճել է 4.3%-ով՝ կազմելով 946.8 հազար մարդ, իսկ գործազուրկների թիվը նվազել է 5.8%-ով՝ կազմելով 220.5 հազար մարդ[5]:

2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.8%-ով՝ կազմելով 182,673 ՀՀ դրամ, իսկ իրական աշխատավարձը՝ 4.3%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 8.4%-ով՝ կազմելով 161,669 ՀՀ դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 3.8%-ով, կազմելով 193,244 ՀՀ դրամ[6]:

Համախառն պահանջարկ

2019 թվականին տնտեսական աճը պայմանավորված է եղել ներքին պահանջարկի աճով:

Վերջնական սպառման աճը պայմանավորված է եղել հիմնականում մասնավոր սպառման աճով: Սպառումն իրական արտահայտությամբ աճել է 11.2%-ով, ինչը պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների աճերով: Մասնավոր սպառումն աճել է 12.8%-ով (նպաստումը տնտեսական աճին՝ 10.2 տոկոսային կետ): Պետական սպառումը նույնպես աճել է՝ կազմելով 1.5% (տնտեսական աճին նպաստումը՝ 0.2 տոկոսային կետ):

Կապիտալ ներդրումների[7] աճը պայմանավորված է եղել հիմնականում պետական ներդրումների աճով: 2019 թվականին կապիտալ ներդրումները նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են 4.7%-ով: Ներդրումներին դրական են նպաստել հիմնականում արդյունաբերության և ծառայությունների որոշ ենթաճյուղերում (մասնավորապես՝ էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, մշակող արդյունաբերության, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտներում) կատարված ներդրումների աճը[8]:

[5] 2019 թվականի զբաղվածության և գործազրկության ցուցանիշները դեռևս նախնական են:
[6] Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալներով:
[7] Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:
[8] Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Ավելի մանրամասն տե՛ս Շինարարություն հատվածում:

Զուտ արտահանման բացասական նպաստումը ՀՆԱ-ի աճին զգալիորեն նվազել է: 2019 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 10.3%-ով՝ նախորդ տարվա համեմատ արագանալով 7.4 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված տնտեսության արտահանելի հատվածի աճով: Ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները 2019 թվականին աճել են 9.1%-ով՝ նախորդ տարվա համեմատ դանդաղելով 3.7 տոկոսային կետով: Արդյունքում, չնայած անվանական արտահայտությամբ զուտ արտահանման վատթարացմանը, դրա բացասական ազդեցությունը ՀՆԱ-ի աճին զգալիորեն նվազել է:

Գներ և սակագներ

2019 թվականին ՀՀ սպառողական շուկայում ցածր գնաճային միջավայրը պահպանվել է: 12 ամսյա գնաճը կազմել է 0.7% հիմնականում պայմանավորված ներմուծվող մի շարք ապրանքների ցածր գնաճով, ինչպես նաև որոշ գյուղմթերքային ապրանքների գների նվազմամբ:

Միջին գնաճը կազմել է 1.4%, որին առավելապես նպաստել է «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 1.9% գների աճը (դրական նպաստումը գնաճին՝ 0.8 տոկոսային կետ), ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել հիմնականում հացի, թռչնամսի, ձվի, բանջարեղենի գների աճերը: Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ խմբում արձանագրվել է 4.3% գնաճ (դրական նպաստումը գնաճին՝ 0.2 տոկոսային կետ): Ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրվել է 1.5% գնաճ (դրական նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորվել է կոշիկի և հագուստի գների աճով: Բնակչությանը մատուցված ծառայությունների գծով արձանագրվել է 0.5% գնաճ (դրական նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ), որին հիմնականում նպաստել է ամբուլատոր ծառայությունների, հիվանդանոցների ծառայություններ գների աճը:

Ելնելով ցածր գնաճային զարգացումներից՝ ՀՀ ԿԲ-ն իրականացրել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ տարվա ընթացքում երկու անգամ իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը և սահմանելով այն 5.5%:

Գծապատկեր 2. 2019 թվականի դեկտեմբերի միջին և 12-ամսյա գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ





Արտաքին հատված

2019 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը, նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ կազմելով ՀՆԱ-ի 8.2%-ը և շեղված մնալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակից: Ընթացիկ հաշվի բարելավումը պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի կրճատմամբ՝ հիմնականում ծառայությունների հաշվեկշռի բարելավման հաշվին, ինչպես նաև սկզբնական և երկրորդային եկամուտների աճով:

Դոլարային արտահայտությամբ ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ-ի 14.5%-ը՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 1.2 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է եղել արտահանման առաջանցիկ աճով ներմուծման աճի համեմատ (համապատասխանաբար 12.2% և 9%[9])՝ մասնավորապես, ծառայությունների արտահանման երկնիշ՝ 16% աճով, ներմուծման 4.2% աճի դիմաց: Տնտեսություն ներհոսող դրամական փոխանցումները 2019 թվականին աճել են 1.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ՌԴ տնտեսական զարգացումներով: Ընթացիկ հաշվի պակասուրդի բարելավմանը նպաստել է նաև զուտ ներդրումային եկամուտների բացասական մնացորդի կրճատումը: Նշված զարգացումների արդյունքում 2019 թվականին՝ նախորդ տարվա համեմատ, ընթացիկ հաշվի պակասուրդը բարելավվել է ՀՆԱ-ի 1.2 տոկոսային կետի չափով:

[9] Այս հատվածում ներկայացվում են դոլարային աճերը (անվանական) ըստ ՀՀ վճարային հաշվեկշռի տվյալների, իսկ Համախառն պահանջարկի բաժնում՝ իրական աճերն ըստ Ազգային հաշիվների:

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան, % ՀՆԱ-ի նկատմամբ



Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2019 թվականին կազմել է 38.7%՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 0.9 տոկոսային կետով: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման մասնաբաժինը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել է ՀՆԱ-ի 53.1%-ը: Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը տարվա արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 8.5%-ը՝ նախորդ տարվա 9.1%-ի դիմաց:

Ներմուծման և արտահանման աճերով պայմանավորված՝ 2019 թվականին ընթացքում ընդլայնվել է արտաքին առևտրաշրջանառությունը, իսկ առևտրային հաշվեկշիռը ցուցաբերել է վատթարացման միտում, որը պայմանավորվել է ապրանքների ներմուծման առաջանցիկ աճով[10]: Դոլարային արտահայտությամբ ապրանքների արտաքին առևտրի բացասական մնացորդը (2873.5 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 12.1%-ով:

Գծապատկեր 4. Առևտրային հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)

[10] Այսուհետ ներկայացված է արտաքին առևտրի վիճակագրությունը ըստ բեռնամաքսային հայտարարագրերի (ներմուծում՝ ՍԻՖ գներով):



Արտաքին ապրանքաշրջանառությունը (8154.1 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա համեմատ աճել է 10.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 9.4%-ով՝ կազմելով 2640.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 10.8%-ով՝ կազմելով 5513.8 մլն ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ներմուծման աճ՝ հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվությամբ, ներքին պահանջարկով, ինչպես նաև մեծ քանակով ավտոմեքենաների ներկրմամբ: Ներմուծման 10.8% աճի 7.8 տոկոսային կետը ապահովվել է «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի հաշվին, ինչը հիմնականում պայմանավորված էր 2020 թվականի հունվարի 1-ից ավտոմեքենաների ներկրման մաքսատուրքերի բարձրացման սպասումներով: Ներմուծման աճին նշանակալի նպաստել են նաև «Հանքահումքային արտադրանք» և «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 1.9 և 1.5 տոկոսային կետերով):

Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման[11] բացի «Մարդատար ավտոմեքենաներ»-ի (6.4 տոկոսային կետ) տարվա ընթացքում ներմուծման աճին ամենամեծ դրական նպաստումն են ունեցել «Վերջնական սպառման ապրանքներ»-ը (2.2 տոկոսային կետով) և «Միջանկյալ սպառման ապրանքներ»-ը (1.9 տոկոսային կետով, այդ թվում՝ արդյունաբերական մատակարարումները՝ 0.9 տոկոսային կետով):

2019 թվականին արտահանումն աճել է 9.4%-ով՝ հիմնականում պայմանավորված տնտեսության արտահանելի հատվածի, մասնավորապես՝ մշակող և հանքագործական

[11] Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) 2019թ. պաշտոնական տվյալները կհրապարակվեն ընթացիկ տարվա վերջին, ուստի այս հատվածում ներկայացված են ՀՀ ՖՆ գնահատականները:

արդյունաբերության աճով: Արտահանման աճին ամենամեծ դրական նպաստումն է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը՝ 4.4 տոկոսային կետով: Աճին դրական են նպաստել նաև «Հանքահումքային արտադրանք» (հիմնականում պայմանավորված Թեղուտի հանքավայրի վերաբացմամբ), «Պատրաստի սննդի արտադրանք» և «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 4.1, 3.6 և 1.8 տոկոսային կետերով):

Արտահանման աճը հիմնականում զսպել է «Մանածագործական իրեր» (2.4 տոկոսային կետով) ապրանքախումբը:

Ներմուծման ծածկման գործակիցը: Հիմնականում պայմանավորված ապրանքների և ծառայությունների արտահանման առաջանցիկ աճով՝ ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ բարելավվել է. 2019 թվականին արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման շուրջ 73%-ը:

Գծապատկեր 5. Ներմուծման ծածկման գործակիցը, տոկոսներով



2019 թվականին ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: 2019 թվականի արտաքին առևտրաշրջանառության 30.6%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 28.1%-ը՝ ԵԱՏՄ), 21.3%-ը՝ ԵՄ և 48.1%-ը՝ այլ երկրներին: ՀՀ արտաքին

առևտրաշրջանառության 10.4% աճին ամենամեծ դրական նպաստումն են ունեցել այլ երկրները՝ 8 տոկոսային կետով (հիմնականում՝ Չինաստան արտահանման մոտ 81% աճի հաշվին):

2019 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկերների շրջանակում ընդգրկված էին. ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (առևտրաշրջանառության 27.1%, նախորդ տարվա 26.1%-ի դիմաց) և Ուկրաինան (համապատասխանաբար՝ 2.1% և 2.3%), իսկ ԵՄ և այլ երկրներից. Չինաստանը (առևտրաշրջանառության 11.6%, նախորդ տարվա 10.4%-ի դիմաց), Շվեյցարիան (6.3% և 6.3%), Գերմանիան (5.5% և 5.9%), Իրանը (5% և 4.9%), ԱՄՆ-ն (4.1% և 3.1%), Թուրքիան (3.3% և 3.5%), Իտալիան (3.2% և 3.2%) և Բուլղարիան (2.9% և 3.5%): Հանրապետության թվով 40 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (շուրջ 83%-ով) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Երկկողմանի փոխարժեք: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը 2019 թվականին կազմել է 480.4 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա միջին փոխարժեքի (483) նկատմամբ արժևորվելով 0.5%-ով:

Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի նախորդ տարվա արժեզրկման տեմպի դանդաղմանը տարեսկզբից հաջորդել է ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը, որը պահպանվել է ամբողջ տարվա ընթացքում: Արդյունքում նախորդ տարվա համեմատությամբ միջին արժեքով ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ արժևորվել է 6.1%-ով:

ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ նույնպես արժևորվել է. 2019 թվականին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ արժևորվել է 4%-ով:

Դրամավարկային հատված և ֆինանսական շուկա[12]

2019 թվականին փողի բազան ընդլայնվել է մեծամասամբ զուտ միջազգային պահուստների հաշվին: 2019 թվականի փողի բազան կազմել է շուրջ 1322.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 8.8%-ով: Ընդ որում, զուտ միջազգային պահուստներն աճել են 39.4%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 43.4%-ով:

Փողի բազայի աճին հիմնականում նպաստել է ՀՀ ԿԲ-ում արտարժույթով թղթակցային հաշիվների աճը: Այսպես, փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 7.1%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է 3.3 տոկոսային կետ), արտարժույթով պահուստներն աճել են 50.9%, իսկ դրամով պահուստները՝ նվազել 13.4%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է, համապատասխանաբար՝ 10.3 և -3.9 տոկոսային կետ):

Փողի զանգվածի աճը պայմանավորվել է հիմնականում դրամային դեպոզիտների աճով: 2019 թվականին փողի զանգվածը կազմել է 3085.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով

[12] Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

11.2%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն աճել են 6%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 10.7%-ով:

Փողի զանգվածի աճին բանկային համակարգից դուրս կանխիկը ունեցել է 0.9 տոկոսային կետով դրական նպաստում, դրամային ավանդները՝ 11.2 տոկոսային կետով, իսկ արտարժույթով ավանդները ունեցել են բացասական նպաստում 0.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. 2019 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ





2019 թվականին դոլարայնացման մակարդակը նվազել է: Ռեզիդենտների արտարժութային ավանդներ/ընդամենը ավանդներ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 7.5 տոկոսային կետով՝ կազմելով 45.2%, իսկ ռեզիդենտների վարկավորման ընդհանուր կառուցվածքում արտարժույթով վարկերի կշիռը նվազել է 4.6 տոկոսային կետով՝ կազմելով 49.3%:

2019 թվականին ավանդների ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են բարձր տեմպերով: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից ներգրավված ավանդներն աճել են 12.2%-ով, որին 14.1 տոկոսային կետով դրական նպաստել են դրամային ավանդների աճը, իսկ արտարժութային ավանդներն ունեցել են բացասական նպաստում 1.9 տոկոսային կետով:

2019 թվականին վարկերի ծավալները նախորդ տարվա համեմատ շարունակել են աճել բարձր տեմպերով: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը

կազմել է 18%[13]՝ 2018 թվականի 16.6%-ի համեմատ: Վարկերի աճին 13.7 տոկոսային կետով նպաստել է դրամային վարկերի աճը, իսկ 4.3 տոկոսային կետով՝ արտարժութայինը: Վարկերի աճին հիմնականում նպաստել են սպառողական (7.7 տոկոսային կետ), հիպոտեքային (3.7 տոկոսային կետ) և առևտրի ոլորտին տրամադրված (2.4 տոկոսային կետ) վարկերի աճերը:

Գծապատկեր 7. Ռեզիդենտների վարկերի և ավանդների ծավալների աճը (նախորդ տարվա նկատմամբ, %)





Տոկոսադրույքներ: Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների միջև սպրեդը 2019 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նկատմամբ գրեթե չի փոփոխվել՝ կազմելով շուրջ 4.8 տոկոսային կետ: Ընդ որում՝ դրամով վարկերի և ավանդների միջև տոկոսադրույքների սպրեդը նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 3.7, իսկ արտարժույթով սպրեդը մնացել է անփոփոխ՝ կազմելով 5.1 տոկոսային կետ:

ՀՀ դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույքները նվազման միտում են դրսևորել: 2019 թվականին ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 12.1%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.7 տոկոսային կետով: Իսկ ՀՀ դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տոկոսադրույքը կազմել է 8.5%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.2 տոկոսային կետով:

[13] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Արտարժույթով վարկերի և ավանդների տոկոսադրույքների միտումների պատկերն այլ է: Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը 2019 թվականին կազմել է 3%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 0.2 տոկոսային կետով: Իսկ արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 8.1%՝ աճելով 0.2 տոկոսային կետով:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկա: ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում ՊՊ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը, չնայած պարտատոմսերի տոկոսադրույքների նվազման միտումներին, մնացել է գրեթե նույնը՝ պայմանավորված ըստ ժամկետայնությունների կառուցվածքի փոփոխությամբ: Եթե 2018 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել էր 8.85%, ապա 2019 թվականի այն կազմել է 8.97%՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 0.12 տոկոսային կետով: Սակայն, միևնույն ժամանակ, տեղաբաշխված պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 0.2, միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 0.28, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 0.53 տոկոսային կետով՝ ի հաշիվ ժամկետայնության աճի: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 206.5 մլրդ դրամ՝ 2018 թվականի 154 մլրդ դրամի դիմաց, իսկ տեղաբաշխման միջին կշռված ժամկետայնությունը՝ 4188 օր, 2018 թվականի 4145-ի համեմատ:

2019 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.05 անգամ (2018 թվականին՝ 1.62 անգամ), իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.99 (2018 թվականին՝ 0.86):

ՀՀ եվրապարտատոմսերի երկրորդային շուկայում և՛ 2013 թվականին, և՛ 2015 թվականին թողարկված արժեթղթերի եկամտաբերությունները զգալիորեն նվազել են: Միջազգային կապիտալի շուկայում 2013 թվականին 6.25% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2018 թվականին արձանագրված 4.69%-ի դիմաց 2019 թվականին միջինում կազմել է 3.64%՝ նվազելով 1.05 տոկոսային կետով: Իսկ 2015 թվականին 7.5% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2018 թվականին արձանագրված 5.72%-ի դիմաց 2019 թվականին միջինում կազմել է 4.42%՝ նվազելով 1.32 տոկոսային կետով: Պետք է նշել, որ ՀՀ եվրապարտատոմսերի եկամտաբերությունների նվազումը տեղի է ունեցել միջազգային ֆինանսական շուկայում տոկոսադրույքների նվազման միտումների պայմաններում: Այսպես, ԱՄՆ 10 տարի ժամկետայնության պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունը նախորդ տարվա

նկատմամբ նվազել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 2.1%: Սակայն տոկոսադրույքների նվազումը ավելի փոքր է եղել եկամտաբերության կորի կարճաժամկետ հատվածում (օրինակ՝ 1 տարի ժամկետայնությամբ տոկոսադրույքների եկամտաբերությունը նվազել է 0.3 տոկոսային կետով), ինչը բնութագրական է նաև ՀՀ եվրապարտատոմսերի երկրորդային շուկայի համար:

2019 թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունը երրորդ անգամ մուտք է գործել միջազգային կապիտալի շուկա՝ միաժամանակ իրականացնելով 10 տարի մարման ժամկետով 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով պետական արտարժութային պարտատոմսերի թողարկում և 2013 թվականին թողարկված եվրապարտատոմսերի հետգնում: Այս գործարքի նպատակը 2020թ. մարվող եվրապարտատոմսերի վերաֆինանսավորումն էր:

Նոր թողարկված եվրապարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերությունը կազմել է 4.2%, արժեկտրոնի եկամտաբերությունը՝ 3.95%: Հիշեցնենք, որ նույն՝ 10 տարի մարման ժամկետով 2015 թվականին թողարկված ՀՀ եվրապարտատոմսերի թողարկման եկամտաբերությունը կազմել էր 7.50%, իսկ արժեկտրոնի եկամտաբերությունը՝ 7.15%: Տարբերությունը պայմանավորված է ոչ միայն ԱՄՆ նույն ժամկետայնությամբ ուղենիշային պարտատոմսերի եկամտաբերության նվազմամբ (2015 թվականին՝ 1.98%, իսկ 2019 թվականին՝ 1.77%), այլ նաև եվրապարտատոմսերի եկամտաբերության ձևավորման մեջ առկա երկրի ռիսկի բաղադրիչի նվազմամբ, որը 2015 թվականին գնահատվել էր 5.51 տոկոսային կետ, իսկ 2019 թվականին՝ 2.42 տոկոսային կետ: Պետք է նշել, որ այս արդյունքի վրա դրական ազդեցություն է ունեցել մինչև թողարկումը (2019 թվականի օգոստոսին) միջազգային վարկանշավորող «Մուդիս» կազմակերպության կողմից ՀՀ սուվերեն վարկանիշի բարձրացումը «B1» նիշից «Ba3»-ի: 2019 թվականի նոյեմբերին ՀՀ սուվերեն վարկանիշը մեկ նիշով բարձրացրել է նաև «Ֆիտչ» վարկանշավորող կազմակերպությունը՝ «B+»-ից դեպի «BB-»: Ընդհանուր առմամբ, այս զարգացումները արտացոլում են միջազգային ֆինանսական շուկաներում Հայաստանի Հանրապետության բարելավված ընկալումը:

Միաժամանակ, թողարկմանը զուգահեռ, իրականացվել է 2013թ. թողարկված 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ եվրապարտատոմսերի հետգնում 103.375 գնով: Արդյունքում հետգնվեց շրջանառության մեջ առկա 500,072,000 ԱՄՆ դոլար ծավալով եվրապարտատոմսերի ավելի քան 80%-ը (402,415,000 ԱՄՆ դոլար):

Նշենք, որ տեղաբաշխումից հետո այս պարտատոմսերի եկամտաբերությունը ևս նվազել է՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ին հասնելով 4.05%-ի:

Հարկաբյուջետային հատված

2019 թվականի ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը պահպանվել է. տնտեսական աճի բարձր տեմպերի պայմաններում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով նպատակադրվել և իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.9%-ը՝ նախորդ տարվա 22.3%-ի դիմաց, իսկ հարկեր և տուրքերը՝ ՀՆԱ-ի 22.35%-ը նախորդ տարվա 20.95%-ի դիմաց: Ընդ որում, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի վերջին տարիներին աննախադեպ էական բարելավումը պայմանավորվել է ՀՀ կառավարության ստվերի դեմ իրականացվող պայքարով, հարկային վարչարարության բարելավմամբ և ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճով:

2019 թվականի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1565.5 մլրդ դրամ, իսկ հարկեր և տուրքերը կազմել են 1464.3 մլրդ դրամ[14]:

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում աճել է 0.8 տոկոսային կետով, որում ընթացիկ ծախսերի կշիռն աճել է 0.3 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը՝ 0.5 տոկոսային կետով: 2019 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.9%-ը, որից ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 21.9%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները՝ 2.9%-ը (որից 0.5%-ը ՌԴ-ից ստացված ռազմական վարկի հաշվարկային գումարն է):

2019 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1629.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.6%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են շուրջ 1437.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով՝ 10.6%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 193 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 27%-ով: Իսկ առանց ՌԴ-ից ստացված ռազմական վարկի հաշվարկային գումարի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը կազմում է 6.3%:

Արդյունքում, զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում պետական բյուջեի պակասուրդը նվազել է: Պետական բյուջեի պակասուրդը 2019 թվականին կազմել է 63.9 մլրդ դրամ՝ նախորդ տարի ձևավորված 105.4 մլրդ դրամի համեմատ: ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 1%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: Առանց 2019 թվականի ՌԴ-ից ստացված ռազմական վարկը հաշվի առնելու, պետական բյուջեի պակասուրդը կազմում է ՀՆԱ-ի 0.5%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 1.26 տոկոսային կետով:

[14] Առավել մանրամասն տե՛ս «Պետական բյուջեի եկամուտներ» բաժնում:

Պակասուրդի ֆինանսավորումը արտաքին աղբյուրներից ներգրավվող միջոցների հաշվին իրականացվել է 77.3 մլրդ դրամի չափով, որի պայմաններում 2019 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 38.8%՝ նախորդ տարվա 40.2%-ի համեմատ նվազելով 1.4 տոկոսային կետով: Արդյունքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 50%, նախորդ տարվա նկատմամբ նվազելով 1.3 տոկոսային կետով:

Հարկաբյուջետային ազդակը: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ ունեցել է 0.9 զսպող ազդեցություն՝ պայմանավորված ծախսերի ընդլայնող (+0.5) և եկամուտների[15] զսպող (-1.5) ազդեցություններով:

Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը 2012 թվականից



2019 թվականի պետական բյուջեի կատարումը համապատասխանել է հարկաբյուջետային կանոններով սահմանված չափանիշներին: Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) գերազանցել են պետական բյուջեի պակասուրդի մեծությանը, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը ցածր է եղել անվանական ՀՆԱ աճի պատմական միտումների հիման վրա հաշվարկված ցուցանիշից: Քանի որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը ցածր է եղել 60% շեմից, պետական բյուջեի ընթացիկ ծախսերի ծավալի սահմանափակման դրույթը չի գործել (տե՛ս Աղյուսակ 1 և Ներդիր 1):

[15] Եկամտային ազդակի հաշվարկներում ՀՀ պետական բյուջեի եկամուտներին ավելացվել են հարկերի միասնական հաշվի զուտ մուտքերը, որոնք համարվում են հարկ վճարողների կողմից փաստացի վճարված գումարներ (առավել մանրամասն տե՛ս «Պետական բյուջեի եկամուտներ» բաժնում):

Աղյուսակ 1. 2019 թվականի բյուջեի կատարման համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

Կանոնը	Ուղենիշային ցուցանիշ	Ուղենիշային ցուցանիշի արժեքը	2019թ. փաստացի ցուցանիշ, մլրդ դրամ
Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (**կապիտալ ծախսերը) պետք է լինեն պակասուրդից ոչ պակաս**	Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	63.9	193.0
Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը պետք է համապատասխանի ՀՆԱ-ի նախորդ տարիների երկարաժամկետ աճերին	Նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, %	6.1	5.9*
Պետական բյուջեի ընթացիկ ծախսերը չպետք է գերազանցեն հարկերի և պետական տուրքերի ընդհանուր գումարը**	Հարկային եկամուտների և տուրքերի ծավալ, մլրդ դրամ	-	1437.1

**Հաշվարկված է որպես 2017 թվականի նկատմամբ 2019 թվականին արձանագրված աճի կես*

***Պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ*

Ներդիր 1

Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային կանոնները

ՀՀ հարկաբյուջետային նոր, արդիականացված կանոնների համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների նախագծերի ընդունմամբ, որոնք ուժի մեջ են մտել 2018 թվականի հունվարի 27-ից: Հարկաբյուջետային նոր կանոններն իրենց արտացոլումն են գտել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերում, ինչպես նաև «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում: Հարկաբյուջետային կանոններն ամբողջացվել են 2018 թվականի օգոստոսի 23-ին՝ ՀՀ Կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ (ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել է 2018 թվականի օգոստոսի 29-ին):
Կանոնների արդիականացված համակարգն ուղղված է արդյունավետ հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության համար հիմքերի ստեղծմանը, պետական պարտքի կայունացմանը և առավել ճկուն ուղենիշներ է պարունակում երկարաժամկետ տնտեսական աճը խթանող հարկաբյուջետային քաղաքականության համար:
Կանոնների համակարգի հիմնական բաղադրիչներն են.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:

- Կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:
- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությամբ:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել էր 53.7% (գերազանցել էր ՀՆԱ 50%-ը), ինչը հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. ծրագրի մշակման և ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում դրա ներկայացման համար: Ըստ ծրագրի, նախատեսվում էր մինչև 2023 թվականը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազեցնել 50 տոկոսից՝ 2023 թվականին հասցնելով 49.8 տոկոսի:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա նկատմամբ զգալիորեն նվազել էր, կազմելով արդեն 51.3%: Այս պայմաններում մշակվեց և 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում ներկայացվեց ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. վերանայված ծրագիրը, որը նախանշում է 49.7% ցուցանիշ 2023 թվականի համար:

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի բյուջեի մասին օրենքով (այսուհետ՝ Օրենք), ելնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող զարգացումներից, ինչպես նաև օրենսդրության փոփոխություններից և վարչարարական միջոցառումներից ակնկալվող մուտքերից, ծրագրվել էր ստանալ շուրջ 1,496.5 մլրդ դրամ եկամուտներ, որից 1,457.0 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 39.5 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: Հարկ է նշել, որ 2019 թվականին առաջին անգամ պետական բյուջեի մասին օրենքով պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցները ներառվել են բյուջեի ցուցանիշներում: Բացի այդ, Օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ կետի և 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են նաև Օրենքով չհաստատված արտաբյուջետային միջոցների շրջանառությունը[16] (14.3 մլրդ դրամ), դրոշմանիշային վճարների գումարները (8 մլրդ դրամ), ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և դրանց արդյունքում ձևավորված եկամուտները (364.6 մլն դրամ): Բացի այդ, կառավարությունը, ի լրումն եկամուտների ցուցանիշների վերոնշյալ փոփոխությունների, իր լիազորությունների շրջանակում ևս 90 մլրդ դրամով վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը, որից 77.6 մլրդ դրամը՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով, այդ թվում՝ հարկային եկամուտների գերակատարման հաշվին պետական բյուջեում նոր միջոցառումների նախատեսմամբ պայմանավորված՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի ծրագրի գծով՝ 65.8 մլրդ դրամ: Արդյունքում կառավարության լիազորությունների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ընդհանուր առմամբ ավելացվել է 112.6 մլրդ դրամով (7.5%-ով)՝ կազմելով շուրջ 1,609.1 մլրդ դրամ: Նշված գումարից շուրջ 1,569.0 մլրդ դրամը կազմել է ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 40.1 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը:

2019 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,565.5 մլրդ դրամ եկամուտներ՝ ապահովելով կառավարության կողմից ճշտված ծրագրի 97.3% կատարողական: Հարկային եկամուտների և պետական տուրքերի՝ Օրենքով հաստատված տարեկան ծրագիրը կատարվել է 103.8%-ով[17]: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 98.4%-ով, իսկ եթե ճշտված ծրագրում հաշվի չառնենք հարկային եկամուտների

[16] Որոշ արտաբյուջետային ծրագրեր չեն ներառվել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքում՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ պետական բյուջեի կազմման ժամանակահատվածում առանձին արտաբյուջետային դրամաշնորհային համաձայնագրեր գտնվել են բանակցման գործընթացում:

[17] Օրենքով հաստատված ծրագրային ցուցանիշի հետ համադրելիության ապահովման նպատակով փաստացի ցուցանիշից բացառվել են առանց սահմանափակման իրականացվող ծախսերի արդյունքում ստացված եկամուտները և դրոշմանիշային վճարները՝ 8.9 մլրդ դրամի չափով:

գերակատարման հաշվին պետական բյուջեում նոր միջոցառումների նախատեսմամբ պայմանավորված ծրագրի ավելացումը, ապա հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ճշտված ծրագրի կատարողականը կկազմի 103%: Այլ եկամուտների ծրագիրը կատարվել է 110.6%-ով, պաշտոնական դրամաշնորհներինը՝ 30.8%-ով: Նշենք, որ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 44.9 մլրդ դրամ՝ 100.5%-ով ապահովելով ծրագիրը:

Գծապատկեր 9. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտները



ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները 16.7%-ով կամ 223.8 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: Մասնավորապես՝ հարկային եկամուտների և պետական տուրքերն աճել են 16.4%-ով կամ 206.2 մլրդ դրամով, պաշտոնական դրամաշնորհները՝ 10.1%-ով (1.1 մլրդ դրամով), այլ եկամուտները՝ 22.8%-ով (16.5 մլրդ դրամով):

Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը, 2018=100%



Արդյունքում 2018 թվականի համեմատ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտներում 0.3 տոկոսային կետով ավելացել է այլ եկամուտների տեսակարար կշիռը, և նույնքան նվազել հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) գծով նույն ցուցանիշը: Պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը մնացել է անփոփոխ:

Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



2019 թվականին բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 23.9%՝ կանխատեսված 22.1%-ի և նախորդ տարվա 22.3%-ի դիմաց, որը պայմանավորված է ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտների առաջանցիկ անվանական աճով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել էր 1,401.9 մլրդ դրամ հարկերի ու տուրքերի ստացում: Պետական հիմնարկների արտաբյուջետային մուտքերը, առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումների արդյունքում ձևավորված եկամուտները և կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները ներառյալ՝ 2019 թվականի ճշտված ծրագիրը կազմել է 1,488.7 մլրդ դրամ, որի դիմաց ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,464.3 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր՝ 98.4%-ով ապահովելով ճշտված ծրագրի կատարումը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին է ապահովվել ՀՀ պետական բյուջեի եկամուտների 93.5%-ը: Հարկ է նշել, որ 2019 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել հարկերի վերադարձված գումարների աճը: Մասնավորապես՝ 2019 թվականի ընթացքում ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձված գումարը կազմել է 83,900.1 մլն դրամ, ինչը 5.8%-ով կամ 4,573.6 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: ԱԱՀ-ի դեբետային գումարների վերադարձը կազմել է 78,387.7 մլն դրամ, ինչը 7.2 անգամ կամ 67,567.6 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, իսկ Tax free հաշիվներով ԱԱՀ-ի վերադարձված գումարը կազմել է 874.6 մլն դրամ՝ 4.8%-ով կամ 40.2 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: 2019 թվականի ընթացքում բնակարան ձեռքբերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին է վերադարձվել վճարված եկամտային հարկի 7,910.9 մլն դրամ գումար, որը նախորդ տարվա համեմատ աճել է 69%-ով կամ 3,231.0 մլն դրամով: 2019 թվականի ընթացքում վերը նշված վերադարձերի ընդհանուր գումարը կազմել է 171,070.1 մլն դրամ, որը 78.8%-ով կամ 75,405.5 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Առանձնակի կարևոր է նաև այն, որ, նպատակ ունենալով նպաստել հարկ վճարողների շրջանառու միջոցների աճին, Կառավարության նախաձեռնությամբ 2019 թվականի սեպտեմբեր ամսին ՀՀ հարկային օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, որոնց շրջանակներում, մասնավորապես, սահմանվել է, որ մինչև 2017 թվականի երկրորդ կիսամյակի համար հարկային մարմին ներկայացված հաշվարկներով առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները

(ԱԱՀ-ի դեբետային գումարներ) նույնպես մուտքագրվում են միասնական գանձապետական հաշիվ և այդ կերպ վերադարձվում հարկ վճարողներին: Օրենսդրական այս փոփոխության արդյունքում հարկ վճարողներին վերադարձված ԱԱՀ դեբետային գումարները կազմել են 42.8 մլրդ դրամ, որը ներառված է 2019 թվականի ընթացքում հարկ վճարողներին վերադարձված՝ 78,387.7 մլն դրամ ԱԱՀ-ի դեբետային գումարների վերոնշյալ ընդհանուր ցուցանիշի մեջ: Հատկանշական է, որ այս պայմաններում 2018 թվականի համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով արձանագրվել է աճ՝ 16.4%-ով կամ 206.2 մլրդ դրամով: Նշենք, որ նախորդ տարվա համեմատ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է աճ: Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2019 թվականին կազմել է 22.35%, որը 1.6 տոկոսային կետով գերազանցում է կանխատեսված և 1.4 տոկոսային կետով՝ 2018 թվականի համապատասխան ցուցանիշը:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ հարկերի միասնական հաշվի ներդրման պահին, հարկերի անցումային գերավճարը կազմել էր 132.7 մլրդ դրամ: 2018 և 2019 թվականների ընթացքում հարկերի անցումային գերավճարից մարված հարկային պարտավորությունների արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ այն կազմել է 5.9 մլրդ դրամ, որը կարող է փոփոխվել հարկ վճարողների կողմից ներկայացվող հարկային հաշվարկների ճշգրտման արդյունքում: Հարկ ենք համարում նշել, որ հարկերի միասնական հաշվի ներդրման և գործարկման ժամանակ առաջ են եկել որոշ տեխնիկական անհամապատասխանություններ՝ կապված անցումային գերավճարից մարումների հաշվառման հետ, որոնք, ի դեպ, չեն ներառվում պետական բյուջեի ընդամենը եկամուտների հաշվարկում: Վերջինս բացատրվում է այն հանգամանքով, որ միասնական հաշվի ներդրման և գործարկման ընթացքում ի հայտ եկած անհամապատասխանությունների վերացման և հարկ վճարողների՝ ըստ համապատասխան հարկատեսակների հարկային պարտավորությունների մնացորդների ճշգրիտ արտացոլման նպատակով 2019 թվականի մարտ ամսին իրականացվել է տեղեկատվական հոսքերի փոխանակման համապատասխանեցում: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, նախորդ տարվա հետ պետական բյուջեի հարկային եկամուտների համեմատական վերլուծությունն ըստ հարկատեսակների ներկայացված են առանց հարկերի անցումային գերավճարի հաշվին կատարված հարկային պարտավորությունների մարումների[18]:

2019 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 34.6%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին, որը կազմել է 506.5 մլրդ դրամ (առանց անցումային

[18] 2019 և 2018 թվականների անցումային գերավճարներից համապատասխանաբար 1.5 և 6.7 մլրդ դրամ գումարներ փոխանցվել են հարկերի միասնական հաշվին՝ որպես գերավճարի վերադարձ, որոնք ներառված են հարկատեսակների եկամուտների մեջ, բայց պետական բյուջեի ընդամենը եկամուտների հաշվարկում ներառված չեն (նվազեցվել են հավաքագրված հարկային եկամուտների հանրագումարից):

գերավճարի՝ 474.4 մլրդ դրամ): Նշված գումարից 364.6 մլրդ դրամը (առանց անցումային գերավճարի՝ 353.5 մլրդ դրամը) ստացվել է ներմուծման հարկումից, որից շուրջ 117.3 մլրդ դրամը (առանց անցումային գերավճարի՝ 106.2 մլրդ դրամը) գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքներից, 141.9 մլրդ դրամը (առանց անցումային գերավճարի՝ 120.9 մլրդ դրամը)՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2018 թվականի համեմատ աճ է արձանագրվել ներմուծումից գանձված ավելացված արժեքի հարկի գծով և նվազում՝ ներքին տնտեսությունից ավելացված արժեքի հարկի գծով՝ համապատասխանաբար 20.5%-ով և 10.2%-ով: Ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա դրական ազդեցություն է գործել ներմուծման ծավալների աճը 245.9 մլրդ դրամի չափով կամ 10.2%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 10.8%-ով: Ներմուծման մեջ հատկանշական է ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճը՝ պայմանավորված մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ներկրման համար նախատեսված արտոնյալ ժամկետի տրամադրման հանգամանքով: 2019 թվականի ընթացքում իրականացվել են 8703 ծածկագրին դասվող մարդատար տրանսպորտային միջոցների հայտարարագրման և բացթողնման 189,018 մաքսային գործառնություններ՝ 2018 թվականի 64,082-ի դիմաց, որից միայն 45,981 մարդատար տրանսպորտային միջոցների հայտարարագրման և բացթողնման մաքսային գործառնություններն իրականացվել են 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: ԱԱՀ-ի մուտքերի վրա դրական ազդեցություն են գործել նաև ՀՆԱ-ի 9.1% անվանական աճը և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման հաշվին հարկային հսկողության և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հավաքագրված լրացուցիչ մուտքերի աճը:

Միևնույն ժամանակ, առկա են եղել ԱԱՀ-ի մուտքերի վրա բացասական ազդեցություն ունեցած գործոններ, մասնավորապես, բոլոր հարկ վճարողների համար ԱԱՀ-ի շեմի բարձրացումը: ՀՀ հարկային օրենսգրքի մինչև 2019 թվականի հունիսի 29-ը գործող խմբագրությամբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու շեմը 2019 թվականի համար կազմել է 58.35 միլիոն դրամ: Միաժամանակ, 2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից) ԱԱՀ-ի շեմը վերականգնվել է մինչև 2019 թվականի հունվարի 1-ը գործող՝ տարեկան կտրվածքով իրացման շրջանառության 115 միլիոն դրամի մակարդակում: Ընդ որում, մինչև վերոնշյալ դրույթի ուժի մեջ մտնելը հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման

շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ:

2019 թվականի հուլիսի 1-ից ԱԱՀ վճարողների մոտ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները ենթակա են սահմանված կարգով մուտքագրման միասնական հաշվին (նախկինում վերադարձը կատարվել է կիսամյակային կտրվածքով): Եռամսյակի արդյունքներով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների վերադարձը վերաբերում է 2019 թվականի հուլիսի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին: 2017 թվականի երկրորդ կիսամյակին նախորդող կիսամյակների համար ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը ենթակա է սահմանված կարգով մուտքագրման միասնական հաշվին: Ընդ որում, 2019 թվականի հոկտեմբերի 19-ի դրությամբ մինչև 5 մլն դրամ ԱԱՀ-ի դեբետային գումարները վերադարձվել են հարկային մարմնի կողմից առանց հարկ վճարողի դիմումի: 2019 թվականի երրորդ եռամսյակից սկսած պարզեցված ընթացակարգ է կիրառվել նաև եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման մասով (մինչև փոփոխությունը կիրառվում էր միայն ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքների մասով), և պարզեցված ընթացակարգով վերադարձման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի չափը սահմանվել է 40 մլն դրամ՝ 20 մլն դրամի փոխարեն: ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 54-րդ կետի համաձայն, 2019 թվականի հուլիսի 1-ից ԱԱՀ-ից ազատման արտոնություն է սահմանվել ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների (էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցներ) ներմուծման և (կամ) օտարման մասով: Բացի այդ, ԱԱՀ-ի մուտքերի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել նաև անվանական ՀՆԱ-ի՝ կանխատեսվածից ցածր մակարդակը. 2019 թվականի փաստացի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի 6,551.8 մլրդ դրամ մակարդակ՝ կանխատեսված 6,756.2 մլրդ դրամի դիմաց: ՀՆԱ-ի կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 204.4 մլրդ դրամ: Վերջինս, այլ հավասար պայմաններում, համարժեք է 13.7 մլրդ դրամ ԱԱՀ-ի՝ հաշվի առնելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 6.69% ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցությունը (204.4*6.69%):

Ստորև ներկայացվում են մի շարք այլ օրենսդրական փոփոխություններ, որոնք 2019 թվականի ընթացքում կարող էին բացասական ազդեցություն ունենալ ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա:

2019 թվականի հունիսի 6-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-63-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000

և 8711 60 ծածկագրերին դասվող՝ միայն էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը ազատվում են ԱԱՀ-ից:

2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-87-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հուլիսի 20-ից) սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը Հայաստանի Հանրապետության տարածքում ազատվում է ԱԱՀ-ից:

ՀՀ կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի թիվ 865-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 938-Ն որոշմամբ (ընդունվել է 2018 թվականի օգոստոսի 9-ին) բարձրացվել են Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 16%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով 233.8 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 181.3 մլրդ դրամ): Նախորդ տարվա համեմատ շահութահարկի գծով մուտքերն աճել են 9.3%-ով կամ 15.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտի շահութահարկի աճով:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2018 թվականի համախառն եկամուտները կազմել են 7,532.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 778.3 մլրդ դրամով կամ 11.5%-ով: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2018 թվականի հարկվող շահույթը կազմել է 847.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 107.6 մլրդ դրամով կամ 14.5%-ով: Աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարողների 2019 թվականի եկամուտները կազմել են 148.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 4.6 մլրդ դրամով կամ 3.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 440.8 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 409.9 մլրդ դրամ) *եկամտային հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 30.1%-ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի մուտքերն աճել են 21.9%-ով կամ 73.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատողների թվաքանակի աճով շուրջ 42.5 հազարով, ինչպես նաև միջին ամսական անվանական աշխատավարձի 5.8% աճով: Եկամտային հարկի մուտքերի վրա դրական ազդեցություն է գործել 2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի

Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն ՀՀ օրենքի ընդունումը (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից), որով սահմանվել է, որ՝

- 2018 թվականի հուլիսի 1-ից հետո մինչև վերոնշյալ օրենսդրական փոփոխությունն ուժի մեջ մտնելը (2019 թվականի հունիսի 29-ը) ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված՝ ավտոմեքենայից տարբերող գույքի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկով հարկման օբյեկտների հաշվառումն իրականացվում է հաշվառման դրամարկղային մեթոդով,
- եկամտային հարկը վճարվում է ավտոմեքենայի վաճառքի գնի 1 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր ձիաուժի հաշվով 150 դրամ: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից: Բացի այդ, նույն օրենքով սահմանվել է, որ խնդրո առարկա դրույթը տարածվում է նաև մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն, ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող՝ 2018 թվականի հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ:

Միաժամանակ, եկամտային հարկի մուտքերի վրա իր բացասական ազդեցությունն է թողել բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարների աճը: Ինչպես նշվել է՝ 2019 թվականին նշված գումարները կազմել են 7,910.9 մլն դրամ, ինչն իր հերթին նշանակում է, որ նշված գործոնի հետևանքով ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա բացասական ազդեցության չափը կազմում է 7.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված գումարն աճել է 69%-ով կամ 3,231.0 մլն դրամով:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 9.5%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով 138.6 մլրդ դրամ(առանց անցումային գերավճարի՝ 127.5 մլրդ դրամ): Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 78.1 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 68 մլրդ դրամ), հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 60.5 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 59.5 մլրդ դրամ): 2018 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերի աճ է արձանագրվել և՛ տեղական արտադրության, և՛

ներմուծվող ենթակացիզային ապրանքների գծով՝ համապատասխանաբար 31.2%-ով (16.2 մլրդ դրամով) և 27.6%-ով (12.9 մլրդ դրամով): ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ծխախոտի և օղու արտադրանքի ներմուծումից ստացված մուտքերի աճով: Ակցիզային հարկի գծով մուտքերի աճի հիմնական գործոններ են հանդիսացել որոշակի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացումը, ինչպես նաև ակցիզային հարկով հարկման ենթակա առանձին ապրանքատեսակների մասով տեղական արտադրության և ներմուծման ծավալների աճը:

2019 թվականի հունվարի 1-ից բարձրացվել են ակցիզային հարկով հարկվող մի շարք ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը, մասնավորապես՝

1) սպիրտային խմիչքների (բացառությամբ պտղային և հատապտղային օղու, կոնյակի, վիսկիի և ռոմի) ակցիզային հարկի դրույքաչափը 2019 թվականի հունվարի 1-ից կազմում է ակցիզային հարկով հարկման բազայի 84 տոկոսը, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 835 դրամ, 2018 թվականին գործող 73 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 725 դրամի փոխարեն,

2) վիսկիի և ռոմի ակցիզային հարկի դրույքաչափը 2019 թվականի հունվարի 1-ից կազմում է ակցիզային հարկով հարկման բազայի 76 տոկոսը, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 4560 դրամ, 2018 թվականին գործող 66 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3970 դրամի փոխարեն,

3) ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափը 2019 թվականի հունվարի 1-ից կազմում է ակցիզային հարկով հարկման բազայի 15 տոկոսը, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 8370 դրամ, 2018 թվականին գործող 7275 դրամի փոխարեն:

2018 թվականի հունիսի 13-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-357-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունվարի 4-ից)՝

1) հանվել է կոնյակի, բրենդիի և այլ սպիրտային թրմերի ակցիզային հարկի դրույքաչափերի արժեքային (տոկոսային) բաղադրիչը, որը կազմում էր ակցիզային հարկով հարկման բազայի 50 տոկոսը,

2) սահմանվել է, որ ակցիզային հարկ վճարողների կողմից շշալցված կոնյակի, բրենդիի և այլ սպիրտային թրմերի իրացման դեպքում (այդ թվում՝ անհատույց) այդ ապրանքների իրացման գինը (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) նախկին 3500 դրամի (ներառյալ՝ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը) փոխարեն մեկ լիտրի համար (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի) չի կարող պակաս լինել՝

- մինչև 3 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 4000 դրամից,
- 4-ից մինչև 5 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 4500 դրամից,

- 6-ից մինչև 7 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6000 դրամից,
- 8-ից մինչև 10 տարի ներառյալ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9000 դրամից,
- 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14000 դրամից:

2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից) սահմանվել է, որ ակցիզային հարկից ազատվում են կենտրոնացված մատակարարումների կազմակերպման շրջանակներում անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը կենտրոնացված մատակարարին:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքատեսակների գծով նաև արձանագրվել է արտադրության և ներմուծման ծավալների աճ: Մասնավորապես՝ դիզելային վառելիքի ներմուծման ծավալները կազմել են 133,749.4 հազար լիտր, ինչը 19,233.4 հազար լիտրով կամ 16.8%-ով ավելին է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Բենզինի ներմուծման ծավալները կազմել են 175,464.2 հազար լիտր, ինչը 36,911.2 հազար լիտրով կամ 26.6%-ով ավելին է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Ծխախոտի արտադրանքի արտադրության, ներմուծման հանրագումարի և արտահանման տարբերությունը 2019 թվականին կազմել է 451,305.6 հազար տուփ, ինչը 61,386.6 հազար տուփով կամ 15.7%-ով ավելին է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Օղու արտադրանքի արտադրության, ներմուծման հանրագումարի և արտահանման տարբերությունը 2019թ. կազմել է 17,369.1 հազար լիտր (40 տոկոսանոց սպիրտի հաշվով), ինչը 2,603.8 հազար լիտրով կամ 17.6%-ով ավելին է, քան նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.5%-ն ապահովվել է *մաքսատուրքի* հաշվին՝ կազմելով ավելի քան 95.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 18.6%-ով կամ 14.9 մլրդ դրամով, որը պայմանավորված է ինչպես երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքներից գանձվող մաքսատուրքի գծով մուտքերի աճով, այնպես էլ ԵՏՄ անդամ պետությունների կողմից փոխանցված մաքսատուրքերի ընդհանուր գումարի աճով: Մասնավորապես՝ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքներից գանձվող մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են շուրջ 19.8 մլրդ դրամ՝ 181.3%-ով (կամ 12.7 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճով: ԵՏՄ անդամ պետությունների կողմից

հավաքագրվող մաքսատուրքերի գծով մուտքերն աճել են 3%-ով կամ շուրջ 2.2 մլրդ դրամով: Այսինքն՝ ընդհանուր մաքսատուրքի գծով մուտքերի աճի մեջ ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքներից գանձվող մաքսատուրքի աճի նպաստումը կազմել է 85.5%, իսկ ԵՏՄ շրջանակներում ստացված մաքսատուրքերի աճինը՝ 14.5%:

2019 թվականին ԵՏՄ անդամ երկրներից փոխանցված մաքսատուրքը կազմել է 75,369.1 մլն դրամ (այդ թվում՝ հատուկ, հակադեմպինգային, փոխհատուցման տուրքը կազմել է 943.9 մլն դրամ)՝ 2018 թվականին վճարված 73,204.7 մլն դրամի փոխարեն՝ աճելով 3%-ով կամ 2,164.4 մլն դրամով, ընդ որում՝ ԵՏՄ երկրներից ավել եկած մաքսատուրքը (ԵՏՄ երկրներից բաշխված և ԵՏՄ երկրների միջև բաշխվող մաքսատուրքերի տարբերությունը) կազմել է 12,000.1 մլն դրամ: Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների արժեքից գանձվող մաքսատուրքն աճել է 12,747.2 մլն դրամով կամ 181.3%-ով: 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված ներմուծման մաքսատուրքի գումարներից ԵՏՄ պետությունների միջև բաշխվել է 62,829.1 մլն դրամ, որից փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 766.5 մլն դրամ, Ռուսաստանի Դաշնություն՝ 53,571.3 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 4,432.6 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 2,865.0 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 1,193.8 մլն դրամ: 2019 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված հատուկ, հակադեմպինգային, փոխհատուցման տուրքի գումարներից ԵՏՄ պետությունների միջև բաշխվել է ավելի քան 539.8 մլն դրամ, որից փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 6.6 մլն դրամ, Ռուսաստանի Դաշնություն՝ 460.3 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 38.1 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 24.6 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 10.3 մլն դրամ:

Հատկանշական է, որ երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքի գծով մուտքերի վրա իրենց ազդեցությունն է ունեցել ԵՄ անդամ չհանդիսացող երկրներից ներմուծումների աճը, որը կազմել է 342.3 մլն ԱՄՆ դոլար կամ 14.7%, իսկ ԵՄ անդամ պետություններից ներմուծումների աճն, ընդհակառակը, նվազել է 5.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 0.4%-ով:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մի շարք որոշումներով կատարվել են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով հաստատված ներմուծման

մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխություններ, որոնք կարող էին ազդել 2019 թվականի բյուջեի եկամուտների վրա:

2019 թվականին *շրջանառության հարկի* գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 31.6 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 29 մլրդ դրամ)՝ կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 2.2%-ը: Շրջանառության հարկի գծով նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 54.1% (10.2 մլրդ դրամով) աճ՝ հիմնականում պայմանավորված առևտրի և ծառայությունների ծավալների համապատասխանաբար 10.8% և 15.9% աճով: Շրջանառության հարկի գծով մուտքերի աճի մյուս կարևոր գործոնն է հանդիսանում հանրային սննդի կազմակերպման գործունեության համար 2018 թվականի հուլիսի 1-ից նախկինում կիրառված արտոնագրային հարկման համակարգն ընդհանուր հարկման համակարգով կամ շրջանառության հարկով հարկման համակարգով փոխարինելը:

2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն ՀՀ օրենքով 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունն արտոնագրային հարկով հարկման համակարգից տեղափոխվել է շրջանառության հարկի կամ հարկման ընդհանուր (ԱԱՀ-ի և շահութահարկի) համակարգեր: Մասնավորապես, նույն օրենքով սահմանվել է, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով կարող են համարվել շրջանառության հարկ վճարող նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում: Նույն մասով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում համարվում են շրջանառության հարկ վճարող՝ անկախ Օրենսգրքով սահմանված սահմանափակումներից, բացառությամբ այն դեպքերի, երբ շրջանառության հարկ վճարող համարվող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2.1 մասով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն: Միաժամանակ սահմանվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով 6 տոկոս դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի երեք տոկոսը կազմող գումարի չափով:

Եթե այդ նվազեցումից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսը:

2019 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 63.7 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 58.3 մլրդ դրամ) *բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար*՝ կազմելով հարկերի և տուրքերի 4.3%-ը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մուտքերի աճով, որոնք կազմել են 19.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 109%-ով կամ 10.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ոչ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ծավալների կրկնակի աճով, ինչպես նաև ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների շուրջ 13% աճով:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար գանձվող բնօգտագործման վճարները կազմել են 3.9 մլրդ դրամ: Առանց անցումային գերավճարի վերջիններս կազմել են 3.4 մլրդ դրամ՝ 19.4%-ով կամ 549 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը, ինչը հիմնականում պայմանավորված է արդյունահանման ծավալների աճով: Մասնավորապես՝ 2019 թվականին ավազի, խճի և կավի արդյունահանման ծավալները կազմել են 2,609.6 հազար տոննա՝ 23.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Տուֆի արդյունահանման ծավալները կազմել են 73.9 հազար տոննա՝ 30.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար մուտքերը կազմել են շուրջ 1.8 մլրդ դրամ, որը 25.8%-ով կամ 362.6 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա մուտքը՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում շահագործվող ավտոմեքենաների քանակի աճով:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար մուտքերը կազմել են 907.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.6%-ով կամ 24.2 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ սահմանը հատած այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների քանակի կրճատմամբ:

Հաշվետու տարում 37.2 մլրդ դրամ է կազմել արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար

վճարվող ռոյալթիին: Առանց անցումային գերավճարի նշված մուտքը կազմել է 32.5 մլրդ դրամ, որը 17.4%-ով կամ 6.8 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի նվազումը պայմանավորված է արդյունահանման ծավալների կտրուկ նվազմամբ: Մասնավորապես, եթե ընդհանուր հանքարդյունաբերության ճյուղի ավելացված արժեքը նվազել է 14.2%-ով, ապա ռոյալթիի գծով մուտքերի համար առանցքային նշանակություն ունեցող պղնձի խտանյութերի ֆիզիկական ծավալների անկումը կազմել է 25.9%: Չնայած իրական ծավալների նվազմանը, պղնձի խտանյութի 5.9%-ի չափով գնաճը (Լոնդոնի մետաղական բորսայի տվյալների համաձայն՝ պղնձի 2018 թվականի միջին գինը 2018 թվականին կազմել է 6,525 ԱՄՆ դոլար՝ 2017 թվականի 6,163 ԱՄՆ դոլարի նկատմամբ), որոշակիորեն մեղմել է բացասական ազդեցությունը, սակայն, այնուամենայնիվ, ընդհանուր ազդեցությունը եղել է բացասական:

Բնապահպանական հարկի գծով 2019 թվականի մուտքերի վրա կարող էր ազդեցություն ունենալ ՀՀ հարկային օրենսգրքի 167-րդ, 169-րդ և 170-րդ հոդվածների համաձայն՝ 2019 թվականի հունվարի 1-ից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու համար Օրենսգրքով սահմանված բնապահպանական հարկի դրույքաչափերի 10 տոկոսով բարձրացումը:

Հաշվետու ժամանակահատվածում 18.7 մլրդ դրամ են կազմել *սոցիալական վճարները,* որոնք կազմել են հարկերի և տուրքերի 1.3%-ը: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 7.4%-ով կամ 1.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է սոցիալական վճար վճարողների քանակի (շուրջ 42.5 հազարով), ինչպես նաև միջին ամսական աշխատավարձի աճով (5.8%-ով):

Չնայած նրան, որ սոցիալական վճարների գծով մուտքերն աճել են վերը նշված գործոնների հաշվին, այնուամենայնիվ հարկ է նշել, որ սոցիալական վճարների գծով մուտքերի վրա իր բացասական ազդեցությունն է թողել 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի հունիսի 21-ին ՀՕ-337-Ն օրենքը, որի համաձայն սոցիալական վճարը վճարողների կողմից աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից կատարվում է 2.5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան 12500 դրամի չափով՝ նախկինում սահմանված 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան 25000 դրամի համեմատ: Նշված օրենքի արդյունքում ՀՀ պետական բյուջե չի հաշվեգրվել շուրջ 7.5 մլրդ դրամ:

Հաշվետու տարում շուրջ 8.6 մլրդ դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված

վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 16.3%-ով կամ 1.2 մլրդ դրամով:

Շուրջ 4.9 մլրդ դրամ են կազմել *ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները*՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 19.7%-ով կամ 1.2 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է 3 կազմակերպության կողմից 2018 թվականի 4-րդ եռամսյակի ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մի մասը 2019 թվականի փոխարեն 2018 թվականի 4-րդ եռամսյակում վճարելու հանգամանքով:

2019 թվականին շուրջ 4.4 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 4.1 մլրդ դրամ) մուտքեր են ստացվել *արտոնագրային հարկի* գծով: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 34.1%-ով կամ 2.1 մլրդ դրամով, որը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով: Արտոնագրային հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն են թողել հանրային սննդի ոլորտում 2018 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց համաձայն 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի գործունեության մասով կիրառվել է ընդհանուր հարկման համակարգ կամ շրջանառության հարկով հարկման համակարգ՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը կիրառված արտոնագրային հարկման համակարգի փոխարեն:

Հաշվետու տարում շուրջ 3.5 մլրդ դրամ են կազմել *ճանապարհային հարկի* գծով մուտքերը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 7%-ով կամ 228 մլն դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող սուբյեկտների և ՀՀ-ում գտնվելու օրերի քանակի աճով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու դեպքերի աճով: Չնայած վերը նշվածին, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 2019 թվականի հունիսի 29-ից ՀՀ-ում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելը չի համարվում ճանապարհային հարկով հարկման օբյեկտ, և նշված փոփոխությունը կիրառվել է նաև 2019 թվականի հաշվետու տարվա համար վճարման ենթակա ճանապարհային հարկի գծով հարկային պարտավորությունների նկատմամբ, ինչը իր բացասական ազդեցությունն է ունեցել ճանապարհային հարկի մուտքերի վրա:

953.5 մլն դրամ է մուտքագրվել *հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների* գծով՝ 29.5%-ով կամ 216.9 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 2019 թվականին հավաքագրված գումարը գերազանցում է նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 19.12.2018թ. N 725-Ն որոշմամբ հաստատված տարեկան մեծությունը

(804.95 մլն դրամը) 148.54 մլն դրամով կամ 18.45%-ով, ինչը պայմանավորված է հիմնականում վճար վճարողների կողմից սահմանվածից ավել կատարված վճարումներով:

49.4 մլն դրամ են կազմել *ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարները*, որոնք 3.5 անգամ կամ 35.3 մլն դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հարկ վճարողների քանակի աճով:

2019 թվականին շուրջ 752.9 մլն դրամ է կազմել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող *միասնական մաքսային վճարը*, որը 26.5%-ով կամ 157.9 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ՀՀ տարածք ներմուծվող փոստածրարների քանակի աճով:

2019 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 3.8 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 3 մլրդ դրամ) *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 0.3%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերը նվազել են 25.5%-ով: Մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է հարկային օրենսդրության խախտման համար գանձված տուգանքների գծով, որոնք կազմել են 3.1 մլրդ դրամ: Առանց անցումային գերավճարի նշված ցուցանիշը կազմել է 1.6 մլրդ դրամ՝ 15.7%-ով կամ 304.3 մլն դրամով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ցուցանիշի անկումը պայմանավորված է նրանով, որ 2018 թվականին արձանագրված խախտումների դիմաց վճարումներից 90%-ը մուտքագրվում էր համապատասխան հարկատեսակների գանձապետական հաշիվներին, իսկ 10%-ը՝ Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի արտաբյուջետային հաշվին, և քանի որ նախատեսվել էր 2020 թվականի հունվարի 1-ից փակել պետական մարմինների բոլոր արտաբյուջետային հաշիվները՝ 2019 թվականին արդեն որոշ հարկատեսակների մասով արձանագրված խախտումների դիմաց վճարումների զգալի մասն ամբողջությամբ ուղղվել է պետական բյուջեի համապատասխան հարկատեսակների հաշիվներին:

Հարկային վարչարարության բնագավառում իրականացվել են հետևյալ օրենսդրական փոփոխությունները:

2018 թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստը

հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր կամ թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, իսկ ապօրինի գործունեություն իրականացնողների մոտ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուից (այդ թվում՝ ապօրինի գործունեություն իրականացնողներից կամ սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից) գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար 250000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ նախկին օրենսդրությամբ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար գանձվում էր տուգանք՝

- 60000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը մեկից երեք էր,
- 150000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը չորսից վեց էր,
- 300000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը յոթից ինն էր,
- 600000 դրամի չափով, եթե չձևակերպված և (կամ) առանց գրանցման հայտի աշխատող հանդիսացող վարձու աշխատողների քանակը գերազանցում էր ինը:

2018 թվականի հունիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն ՀՀ օրենքի 52-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) առաջադրված գումարների նկատմամբ դրանց անբողոքարկելի դառնալու երկամսյա ժամկետի համար տույժեր չեն հաշվարկվում:

2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից) ընտանեկան ձեռնարկատիրության հարկման համակարգի շեմը 18 միլիոն դրամից բարձրացվել է 24 միլիոն դրամ: Ընդ որում, մինչև վերոնշյալ դրույթի ուժի մեջ մտնելը ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 18 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում չեն կարող վերականգնել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի կարգավիճակը:

2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-73-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից) 2019 թվականի հունվարի 1-ից ինքնազբաղված անձանց հարկման համակարգի շեմը բարձրացվել է 9 միլիոն դրամից 24 միլիոն դրամ:

2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 45.9 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ 15.6%-ով կամ 6.2 մլրդ դրամով գերազանցելով ՀՀ կառավարության տարեկան ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 21.1%-ով կամ շուրջ 8 մլրդ դրամով: Կանխատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշների գերազանցումը պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու պետական գրանցման համար վճարվող տուրքերի աճով:

2019 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել շուրջ 2.4 մլրդ դրամ՝ 19.6%-ով (391.6 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 29.1%-ով (537.1 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը հիմնականում պայմանավորված է դատական գործերի քանակի աճով: Նշված գումարից 207.5 մլն դրամը կազմել են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները, որոնք 23.5%-ով կամ 39.5 մլն դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի վրա որոշակի դրական ազդեցություն կարող էր ունենալ 2019 թվականի հուլիսի 9-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-133-Ն ՀՀ օրենքը (ուժի մեջ է մտել 2019 թվականի օգոստոսի 4-ից), որով սահմանվել է պետական տուրք հարկադիր կատարման ծառայություն ուղարկված կատարողական թերթի թղթային պատճենը տրամադրելու համար՝ բազային տուրքի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 138.1 մլն դրամ՝ 9.2%-ով (11.6 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված ցուցանիշը և 7.7%-ով (9.9 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել շուրջ 2.2 մլրդ դրամ՝ 4.1%-ով (կամ 84.8 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ նախատեսվածից շատ թվով քաղաքացիներ են դիմել հյուպատոսական ծառայություններ ստանալու համար, որը վերաբերում է առավելապես անձնագրային ոլորտի ծառայություններին: Անձնագրային ոլորտի ծառայությունների տեսակարար

կշիռը հյուպատոսական ծառայությունների ընդհանուր թվում կազմում է 75%: Նախորդ տարվա համեմատ հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձված պետական տուրքի մուտքերը նվազել են 6.7%-ով կամ 156.4 մլն դրամով:

Պետական տուրքերի 17.2%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 7.9 մլրդ դրամ, որը 53.2%-ով (2.7 մլրդ դրամով) գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 46.1%-ով (2.5 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար գանձվող տուրքերի և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձվող տուրքերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու դիմաց ստացվել են ավելի քան 3.4 մլրդ դրամ պետական տուրքեր, որոնք 90%-ով (1.6 մլրդ դրամով) գերազանցել է ծրագրված մուտքերը և 73.6%-ով (1.5 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի աճը հիմնականում 2019 թվականին ներմուծված ավտոմոբիլների քանակի զգալի աճի արդյունք է՝ պայմանավորված ԵԱՏՄ անդամ այլ պետությունների համեմատ ՀՀ տարածք ավտոմոբիլների ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի և ժամկետների՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը սահմանված արտոնություններով:

Շուրջ 1.8 մլրդ դրամ պետական տուրք է ստացվել ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար, որը 84.9%-ով (804.4 մլն դրամով) գերազանցել է ծրագրված մուտքերը և 70%-ով (721.4 մլն դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը: Տվյալ տուրքերի գծով ծրագրի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը նույնպես հիմնականում պայմանավորված է 2019 թվականին ՀՀ տարածք ներմուծված տրանսպորտային միջոցների քանակի զգալի աճով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վերահաշվառման գործարքների քանակի աճով:

ՀՀ տարածք ներմուծված տրանսպորտային միջոցների քանակի աճը հանգեցրել է նաև լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքերի աճի, որոնք կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 9.7%-ով (110 մլն դրամով) գերազանցելով ծրագրված մուտքերը և 10.6%-ով (119.2 մլն դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը:

1.2 մլրդ դրամ է ստացվել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմաց, որը 18.4%-ով (186.8 մլն դրամով) գերազանցել է ծրագրված մուտքերը և 17.3%-ով (176.8 մլն դրամով)՝

նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է գործարքների թվի և, մասնավորապես, կատարված գործարքների թվի աճով:

Հաշվետու տարում 177.6 մլն դրամ են կազմել ՀՀ պետական ռեգիստրում պետական գրանցման համար գանձված տուրքերը, որոնք 12.8%-ով (22.4 մլն դրամով) գերազանցել են ծրագրված մուտքերը և 11.3%-ով (20 մլն դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է գործարքների թվի աճով:

2019 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-215-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի նոյեմբերի 30-ից) սահմանվել է, որ անշարժ գույքի պետական ռեգիստրի հետ պետական գրանցման համար օրենքով նախատեսված տուրքը տարաժամկետ կարգով վճարելու պայմանագրի հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ օրինական ճանաչված ինքնակամ կառույց հանդիսացող ավտոտնակի և համապատասխան հողամասի նկատմամբ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տուրքի գումարը վճարվում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից՝ երկու տարվա ընթացքում, եռամսյակային պարբերականությամբ՝ պետական տուրքի մեկ ութերորդի չափով:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2019 թվականին պետական բյուջե է վճարվել 500 հազար դրամ, որը 28.6%-ով զիջել է կանխատեսված ցուցանիշը և 11.5%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը՝ պայմանավորված տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակի նվազմամբ: 2019 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը կազմել է 100՝ կանխատեսված 140-ի և 2018 թվականի 113-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 437.5 մլն դրամ պետական տուրք՝ 1.6%-ով (6.9 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված ցուցանիշը և 6.1%-ով (25 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը պայմանավորված է հայտատուների թվի աճով:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2019 թվականին գանձվել է շուրջ 2.6 մլրդ դրամ պետական տուրք՝ 19.9%-ով (636.6 մլն դրամով) զիջելով ծրագրված մուտքերը, ինչը պայմանավորված է անձնագրային ծառայությունների համար դիմած ՀՀ քաղաքացիների՝

նախատեսվածից պակաս թվով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 1.5%-ով (38.2 մլն դրամով):

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 23.7%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար, որոնց գծով պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 10.9 մլրդ դրամ՝ 96%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 2.6%-ով (կամ ավելի քան 272.9 մլն դրամով) գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի բնագավառի և վիճակախաղերի ու շահումներով խաղերի բնագավառի համար գանձված տուրքերի համապատասխանաբար 30.3% և 97.9% կատարողականով: Նախորդ տարվա համեմատ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձված մուտքերի աճը հիմնականում ձևավորվել է վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի ու պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար վճարվող տուրքերի աճի և տրանսպորտի բնագավառի համար վճարվող տուրքերի նվազման արդյունքում:

Հաշվետու տարում վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի համար գանձված տուրքերը կազմել են շուրջ 8.8 մլրդ դրամ, որոնք 2.1%-ով կամ 309.9 189.8 մլն դրամով զիջել են ծրագրված մուտքերը՝ պայմանավորված 2019 թվականին շահումով խաղերի թվով 1, խաղատան թվով 2 և վիճակախաղի կազմակերպման թվով 1 լիցենզիաների գործողության դադարեցմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 3.7%-ով կամ 309.9 մլն դրամով՝ պայմանավորված «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում պետական տուրքի դրույքաչափի բարձրացմամբ:

Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառի լիցենզավորման գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 637 մլն դրամ՝ 98.4%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 31.6%-ով կամ 152.9 մլն դրամով, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տնտեսավարող սուբյեկտներին և լիցենզառուներին տրված թույլտվությունների քանակի աճով:

Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գծով մուտքերը կազմել են 353.7 մլն դրամ, որը 9.7%-ով զիջել է կանխատեսված ցուցանիշը՝ պայմանավորված տնտեսավարող սուբյեկտներին փաստացի տրամադրված լիցենզիաների և ներդիրների թվով: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 9.6%-ով կամ 30.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է տրամադրված լիցենզիաների և ներդիրների թվի աճով:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է 248.8 մլն դրամ, որը 3.4%-ով գերազանցել է կանխատեսված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է Էներգետիկայի բնագավառում լիցենզիաների տրամադրման նախատեսվածից ավել հայտերի քանակով, որը կապված է արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման նոր սահմանաչափի սահմանման հետ: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 16.3%-ով, ինչը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով: 2018 թվականի հուլիսի 1-ից էլեկտրական էներգիայի ներկրումը և արտահանումը դադարել են համարվել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ, փոխարենը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են համարվել էլեկտրական էներգիայի մեծածախ առևտուրը և մատակարարումը (ներառյալ՝ երաշխավորված): Միևնույն ժամանակ, 2018 թվականի փետրվարի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-102-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից) էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և էլեկտրական էներգիայի մատակարարման (ներառյալ՝ երաշխավորված) համար պետական տուրքը սահմանվել է տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով՝ 5000-ապատիկի փոխարեն:

Առողջապահության բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է շուրջ 217.9 մլն դրամ, որը 4.4%-ով (9.2 մլն դրամով) գերազանցել է կանխատեսված և 19.6%-ով (35.7 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ պայմանավորված լիցենզավորվող կազմակերպությունների քանակի աճով:

Բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների լիցենզավորումից պետական բյուջե մուտքագրված պետական տուրքի գումարը կազմել է 187.5 մլն դրամ, որը 6%-ով (10.6 մլն դրամով) գերազանցել է կանխատեսված և 13.3%-ով (22 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները:

Հաշվետու տարում շուրջ 118 մլն դրամ ստացվել է տրանսպորտի բնագավառի լիցենզավորման գծով՝ 69.7%-ով զիջելով նախատեսված և 63.9%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է 2019 թվականի հունիսի 19-ի «Մի շարք վարչական իրավախախտումների և պետական տուրքի համար կիրառված տույժերի համաներման մասին» ՀՀ օրենքի և 2019 թվականի հունիսի 25-ի ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության N 69 օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն կանխատեսված հավաքագրվելիք պետական տուրքերը և համապատասխան տույժերը չգանձելու հանգամանքով: 2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին» ՀՕ-69-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից) վերացվել է ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար պետական տուրքը: Մինչև 2019 թվականի հունիսի 29-ը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար սահմանված էր պետական տուրք՝ Երևան քաղաքում՝ ամսական բազային տուրքի 12-ապատիկի չափով (կամ եռամսյակային՝ 34-ապատիկի չափով, կամ տարեկան՝ 120-ապատիկի չափով), այլ քաղաքներում՝ ամսական բազային տուրքի 8-ապատիկի չափով (կամ եռամսյակային՝ 23-ապատիկի չափով, կամ տարեկան՝ 80-ապատիկի չափով), այլ վայրերում՝ ամսական բազային տուրքի 5-ապատիկի չափով (կամ եռամսյակային՝ 13.5-ապատիկի չափով, կամ տարեկան՝ 45-ապատիկի չափով), սահմանամերձ գյուղերում՝ ամսական բազային տուրքի 4-ապատիկի չափով (կամ եռամսյակային՝ 9-ապատիկի չափով, կամ տարեկան՝ 30-ապատիկի չափով):

Անվտանգության բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 86.1 մլն դրամ՝ 19.9%-ով գերազանցելով նախատեսված և 16.1%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը հիմնականում պայմանավորված է զենք ձեռք բերելու իրավունք ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված դիմումների աճով:

Փոստային կապի բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 81 մլն դրամ, որը 17.4%-ով (12 մլն դրամով) գերազանցել է կանխատեսված և 12.3%-ով (8.9 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է լիցենզառուների քանակի աճով:

Հեռահաղորդակցության բնագավառում իրականացվող գործունեության լիցենզավորման դիմաց 2019 թվականին գանձվել է 64.9 մլն դամ պետական տուրք՝ 5.6%-ով (3.4 մլն դրամով) գերազանցելով ծրագրված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիաների՝ նախատեսվածից ավել քանակով, ինչպես նաև ժամկետանց պարտավորությունների համար հաշվարկված տույժերի հավաքագրմամբ: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 27.6%-ով (24.7 մլն դրամով)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2018 թվականին մեկ ընկերության կողմից վճարվել էր միանվագ գումար՝ որպես տույժ: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-265-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2018 թվականի օգոստոսի 1-ից) կատարվել են փոփոխություններ, ինչի արդյունքում զգալիորեն նվազել են հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար սահմանված տարեկան պետական տուրքերի դրույքաչափերը:

2019 թվականին պետական տուրքերի 42.3%-ը բյուջե է վճարվել *օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների* դիմաց՝ կազմելով շուրջ 19.4 մլրդ դրամ, որը 26.4%-ով (4

մլրդ դրամով) գերազանցել է ծրագրային ցուցանիշը և 33.4%-ով (4.9 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Կանխատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշների գերազանցումը պայմանավորված է օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու և ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի աճով:

Հաշվետու տարում նշված խմբում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ (68.9%) ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար մուտքերը կազմել են շուրջ 13.4 մլրդ դրամ՝ 7.4%-ով (922.7 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 13.7%-ով (1.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է մեկնած ուղևորների քանակի 11.7% աճով:

2019 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-258-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի դեկտեմբերի 12-ից) սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի վճարումից ազատվում են նաև օդային տրանսպորտով մեկնող այն ֆիզիկական անձինք, որոնք նույն կետով սահմանված արտոնության ժամկետներում մեկնում են այդ ուղղությամբ առաջին թռիչքի մեկնարկի պահին նախորդող վերջին 12 ամիսներին չսպասարկված IATA կոդով օդանավակայաններ առևտրային ավիափոխադրումներ իրականացնող ավիաընկերությունների միջոցով, եթե այդ ավիաընկերությունները դեպի այդ նույն օդանավակայաններ չվերթեր են իրականացնում IATA ամառային և ձմեռային ժամանակահատվածներում:

Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 3.7 մլրդ դրամ պետական տուրք՝ 3.8 անգամ (2.8 մլրդ դրամով) գերազանցելով կանխատեսված և 4.6 անգամ (2.9 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է հետևյալ օրենսդրական փոփոխություններով:

2018 թվականի հունիսի 13-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-359-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունվարի 4-ից)՝

1) կոնյակի, բրենդիի և այլ սպիրտային թրմերի շարքին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների արտադրության և իրացման համար պետական տուրքը 15000-ապատիկի փոխարեն սահմանվել է հետևյալ դրույքաչափերով՝

- արտադրության իրականացման և մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) արտադրանքի իրացման իրավունք ձեռք բերելու համար տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով,
- արտադրողի կողմից 100 հազար լիտրից ավելի իրացված արտադրանքի (բացառությամբ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2208 20 890 ծածկագրին դասվող արտադրանքի) յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ 25 դրամ,
- արտադրողի կողմից 100 հազար լիտրից ավելի իրացված ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ 100 դրամ,

2) կոնյակի, բրենդիի և այլ սպիրտային թրմերին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը 15000-ապատիկի փոխարեն սահմանվել է հետևյալ դրույքաչափերով՝

- «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման իրավունք ձեռք բերելու համար տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով,
- ներմուծողի կողմից 100 հազար լիտրից ավելի ներմուծված արտադրանքի (բացառությամբ՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2208 20 890 ծածկագրին դասվող արտադրանքի) յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ 25 դրամ,
- ներմուծողի կողմից 100 հազար լիտրից ավելի «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծված ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ 100 դրամ:

2019 թվականի հունիսի 3-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-59-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 29-ից և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը)՝ չներկած կամ ներկած, պատրաստի կամ թրծած բովախառնուրդների (կլինկերների) ձևով պորտլանդ ցեմենտի, կավահողային ցեմենտի, խարամային ցեմենտի, սուպերսուլֆատային ցեմենտի և նույնանման հիդրավլիկ ցեմենտների (բացառությամբ սպիտակ, արհեստականորեն ներկած կամ չներկած ցեմենտից և ցեմենտի թրծած բովախառնուրդներից ու պորտլանդցեմենտից) «Բացթողնում՝ ներքին

սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման յուրաքանչյուր տոննայի համար (մինչև մեկ տոննայի համար տուրքը հաշվարկվում է յուրաքանչյուր կիլոգրամի համար 14 դրամ) սահմանվել է տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 14-ապատիկի չափով:

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված պետական տուրքի գումարներից ավելի քան 1 մլրդ դրամը ստացվել է վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար՝ 26.4%-ով (216.2 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 24.8%-ով (206 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար գանձված տուրքերը կազմել են 401.2 մլն դրամ՝ 64%-ով (156.5 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 69.2%-ով (164.1 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Մուտքերի աճը հիմնականում արձանագրվել է ՀՀ ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների գծով՝ պայմանավորված 2020 թվականից վարորդական վկայականների տրամադրման կարգի փոփոխությամբ, որով բարդացվել է վարորդական վկայական ստանալու գործընթացը:

Սև մետաղի թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների արտահանման համար գանձված տուրքերը կազմել են ավելի քան 221.3 մլն դրամ՝ 3.9 անգամ (164.1 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 2.1 անգամ (116.5 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է սև մետաղի թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների արտահանման ծավալների աճով:

2019 թվականի հուլիսի 9-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-125-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2019 թվականի սեպտեմբերի 10-ից) սահմանվել է, որ ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին (իսկ 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկների) դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (նույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ

ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա) սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 60-ապատիկի չափով: Նախկինում պետական տուրք սահմանված էր ԱՏԳ ԱԱ 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (նույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների վրա՝ բազային տուրքի 80-ապատիկի չափով:

Գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի արտահանման համար գանձված պետական տուրքերը կազմել են 213.1 մլն դրամ՝ 52.6%-ով (236.5 մլն դրամով) զիջելով կանխատեսված և 43.4%-ով (163.2 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի արտահանման ծավալների նվազմամբ:

«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված փաստաթղթերի վրա ապոստիլ (հավաստող մակագրություն) դնելու կամ այդ փաստաթղթերն օրինականացնելու համար գանձված տուրքերը կազմել են 188.8 մլն դրամ՝ 6%-ով (10.8 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 6.4%-ով (11.3 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար գանձված տուրքերը կազմել են շուրջ 102.6 մլն դրամ՝ 4.9%-ով (4.8 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված և 19.1%-ով (16.4 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները:

Պաշտոնական դրամաշնորհներ

2019 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 12.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 30.8%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 27.7 մլրդ դրամ: Նշված ցուցանիշը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում տրամադրվել է 7.9 մլրդ դրամ՝ կազմելով տարեկան ծրագրված մուտքերի 25.3%-ը: Նպատակային դրամաշնորհների կատարողականի ցուցանիշը պայմանավորված է ծրագրերի կատարման ցածր աստիճանով: Մասնավորապես, 5 ծրագրերի շրջանակներում նախատեսված 2.8 մլրդ դրամ դրամաշնորհների

գծով մուտքեր չեն ստացվել, իսկ 14 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 27.7%-ով, որը կազմել է 7.8 մլրդ դրամ:

2019 թվականի ընթացքում ստացված նպատակային դրամաշնորհներից 1.5 մլրդ դրամ (նախատեսվածի 18.7%-ը) տրամադրվել է Եվրոպական միության, 1.5 մլրդ դրամ (նախատեսվածի 23.5%-ը)՝ Ռուսաստանի Դաշնության, 1.2 մլրդ դրամ (նախատեսվածի 86.8%-ը)՝ Գլոբալ հիմնադրամի, 1.1 մլրդ դրամ (նախատեսվածի 56.2%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW), 620.1 մլն դրամ (նախատեսվածի 14.6%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 547.1 մլն դրամ (նախատեսվածի 67.4%-ը)՝ ԱՄՆ-ի, 490.4 մլն դրամ (նախատեսվածի 20.8%-ը)՝ Եվրոպական ներդրումային բանկի, 518.2 մլն դրամ (նախատեսվածի 27.5%-ը)՝ Համաշխարհային բանկի, 288.9 մլն դրամ (նախատեսվածի 38.2%-ը)՝ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի, 36.2 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը)՝ ՄԱԿ-ի, 18.5 մլն դրամ (նախատեսվածի 264%-ը)՝ Բուլղարիայի Հանրապետության և 18.1 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը)՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Նշենք նաև, որ 2019 թվականին Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի, Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները՝ համապատասխանաբար 1.8 մլրդ դրամի, 816.4 մլն դրամի, 346.5 մլն դրամի և 144.1 մլն դրամի չափով, չեն ստացվել:

Հաշվետու տարում Եվրամիության կողմից բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակներում ստացվել է շուրջ 4.5 մլրդ դրամ, որոնք նախատեսվել էին 2017-2018 թվականներին 6.5 մլրդ դրամի չափով: Դրամաշնորհներն ամբողջությամբ չեն ստացվել՝ նախապայմանների ոչ ամբողջական կատարման պատճառով: Նշված 4.5 մլրդ դրամից 2.1 մլրդ դրամը տրամադրվել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը» ծրագրի շրջանակներում, 830.5 մլն դրամը՝ «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ծրագրի և 1.5 մլրդ դրամը՝ «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագրի» շրջանակներում:

Եվրամիության կողմից բյուջետային աջակցության նպատակով մի շարք ծրագրերի շրջանակներում 2019 թվականին նախատեսված 8.9 մլրդ դրամ ընդհանուր գումարով դրամաշնորհները չեն ստացվել: 2019 թվականին հայկական կողմը պաշտոնապես դիմել էր եվրոպական կողմին՝ ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրերով ամրագրված որոշ նախապայմանների վերախմբագրման և իրականացման ժամկետների

երկարաձգման խնդրանքով, որի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերին ֆինանսավորման համաձայնագրերում կատարվել են որոշակի փոփոխություններ, և հատկացումները ակնկալվում է ստանալ 2020-2021 թվականների ընթացքում:

2018 թվականի համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 10.1%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ պայմանավորված Եվրամիության կողմից 2017-2018թթ. նախատեսված բյուջետային աջակցության դրամաշնորհների տրամադրմամբ: Նպատակային դրամաշնորհների գծով արձանագրվել է մուտքերի անկում 29.5%-ով կամ 3.3 մլրդ դրամով:

Այլ եկամուտներ

2019 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 88.8 մլրդ դրամ՝ 10.6%-ով (8.5 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ծրագրված և 22.8%-ով (16.5 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, ինչպես նաև ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից մուտքերով: Այլ եկամուտներից ավելի քան 44 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մուտքերը, որոնք ապահովվել են 106.9%-ով:

ՀՀ կադաստրի կոմիտեի 2018 թվականի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 538 մլն դրամ՝ նախորդ տարվա 378.7 մլն դրամի դիմաց, որը ծրագրով նախատեսված չէր:

2019 թվականին *պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության* դիմաց պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 2.4 մլրդ դրամ, 75.6%-ով ապահովելով ծրագիրը և 2.9%-ով (72.8 մլն դրամով) զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է ջրի սակագնի բարձրացում թույլ չտալու նպատակով «Վեոլիա Օ կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի փոփոխությամբ, որի արդյունքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից ՀՀ պետական բյուջե փոխանցված վարձակալական վճարները կազմել են 2,001.2 մլն դրամ՝ 31.9%-ով զիջելով ծրագրված ցուցանիշը և 5.6%-ով՝ 2018 թվականի փաստացի ցուցանիշը:

Հաշվետու տարվա ընթացքում *բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից* ստացվել են ավելի քան 12.7 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 1.5 անգամ (4.3 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան

ծրագրված և 1.7 անգամ (5.1 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը և նախորդ տարվա համեմատ դրանց աճը պայմանավորված է ներդրվող ավանդների մեծությամբ և 2019 թվականին պետական բյուջեով չպլանավորված եվրապարտատոմսերի թողարկմամբ: 2019 թվականին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 132 ավանդային պայմանագիր՝ 1033 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Նախորդ տարի կնքվել էր 118 ավանդային պայմանագիր՝ 883 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Հաշվետու ժամանակահատվածում ներդրված ավանդների միջին մեծությունը կազմել է 7.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ավանդի միջին մեծությունն աճել է 500 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2019 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշների նկատմամբ փաստացի ցուցանիշների գերակատարմամբ և ծախսերի տարեկան ծրագրային ցուցանիշների համեմատաբար ցածր կատարողականով, որի պայմաններում առաջացել են լրացուցիչ ժամանակավոր ազատ դրամական միջոցներ, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվի միջոցների մնացորդն ավելի ցածր, բայց վճարումների անխափան իրականացման համար բավարար մակարդակում պահելու հանգամանքով: 2019 թվականի ընթացքում ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 5.5%, որը նախորդ տարվա համեմատ մնացել է գրեթե անփոփոխ:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են ավելի քան 2.2 մլրդ դրամ շահութաբաժիններ՝ 4.7%-ով գերազանցելով տարեկան ծրագրված մուտքերը և 1.8%-ով (38.8 մլն դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է պետական մասնակցությամբ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե վճարված շահութաբաժինների աճով:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարները կազմել են շուրջ 10 մլրդ դրամ՝ 85.4%-ով ապահովելով ծրագիրը, որից 9.8 մլրդ դրամը ստացվել է ռեզիդենտներին, 122.4 մլն դրամը՝ ոչ ռեզիդենտներին (Վրաստանին) տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները զիջել են ծրագրային ցուցանիշը 14.8%-ով, իսկ Վրաստանի կողմից վճարումները կատարվել են 100%-ով: Նախորդ տարվա համեմատ տոկոսավճարներից մուտքերը նվազել են 2.6%-ով կամ 261.3 մլն դրամով: Մուտքերի կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ անկումը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտներից ստացված տոկոսավճարների ծրագրի թերակատարմամբ:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 15.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի

100.9%-ը: Մասնավորապես՝ ծրագրի գերազանցում է արձանագրվել ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից կիրառված պատժամիջոցների արդյունքում ստացված մուտքերի գծով, որոնք կազմել են 11.8 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 123.6%-ը, որը պայմանավորված է երթևեկության ինտենսիվության և արձանագրվող իրավախախտումների թվի զգալի աճով: Հիմնականում նույն գործոնով պայմանավորված՝ 2018 թվականի համեմատ իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերն աճել են 6.6%-ով կամ 962.9 մլն դրամով, իսկ ՀՀ ոստիկանության կողմից արձանագրված ճանապարհային իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից մուտքերը՝ 23.2%-ով կամ 2.2 մլրդ դրամով: Նախորդ տարվա համեմատ իրավախախտումների համար գանձված մուտքերի աճը զգալիորեն պայմանավորված է նաև օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներից գանձված գումարների ու Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից գանձված մուտքերի համապատասխանաբար 40.3%-ով (512.9 մլն դրամով) և 166.9%-ով (320.4 մլն դրամով) աճով, որոնք կազմել են 1.8 մլրդ դրամ և 512.3 մլն դրամ:

Հաշվետու տարում *ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից* ստացված եկամուտները կազմել են 34 մլրդ դրամ՝ 9.2%-ով (2.9 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ծրագիրը և 24.1%-ով (6.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը: Նշված գումարից 28.5 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային եկամուտները, որոնք 6.8%-ով (1.8 մլրդ դրամով) գերազանցել են ծրագիրը և 25.8%-ով (5.8 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը:

Հաշվետու տարում 5 մլրդ դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները, որոնք 26.1%-ով (1 մլրդ դրամով) գերազանցել են ծրագրված ցուցանիշը և 17.6%-ով (752.1 մլն դրամով)՝ 2018 թվականի մուտքերը: Մուտքերի աճը պայմանավորված է կատարված գործարքների թվի աճով;

6.4 մլրդ դրամ են կազմել ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները, որոնց գծով արձանագրվել է ծրագրային և նախորդ տարվա փաստացի ցուցանիշների համապատասխանաբար 55.5% (2.3 մլրդ դրամով) և 70.7% (2.7 մլրդ դրամով) աճ՝ պայմանավորված 2019 թվականին ներմուծվող ավտոմոբիլների քանակի աննախադեպ աճով:

6.1 մլրդ դրամ են կազմել մաքսավճարի գծով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի մուտքերը, որոնք 17.9%-ով (929.8 մլն դրամով) գերազանցել են ծրագրված

մուտքերը և 48.5%-ով (2 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, ինչը պայմանավորված է արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից մաքսային ձևակերպումների քանակի աճով:

2.2 մլրդ դրամ են կազմել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների դիմաց վճարումները, որոնք, վարույթների թվաքանակի աճով պայմանավորված, համապատասխանաբար 53.4%-ով (757.5 մլն դրամով) և 31.3%-ով (518.9 մլն դրամով) գերազանցել են ծրագրված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները:

Նախորդ տարվա համեմատ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտների աճ է արձանագրվել նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում ստացված մուտքերի գծով, որոնք կազմել են 3.8 մլրդ դրամ՝ 139.8%-ով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը, սակայն 35.7%-ով (2.1 մլրդ դրամով) զիջելով ծրագրված ցուցանիշը:

Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դիմաց ստացված մուտքերից 7.2 մլրդ դրամը հավաքագրվել է ՀՀ ոստիկանության կողմից՝ հասարակական կարգի պահպանության և անվտանգության ծրագրի շրջանակներում, որը 2.6%-ով զիջել է ծրագրված ցուցանիշը և 3.1%-ով (234.1 մլն դրամով)՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը:

2019 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 976.4 մլն դրամ *ոչ պաշտոնական դրամաշնորհներ*՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Միջոցները մուտքագրվել են ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային հաշին: Նախորդ տարվա համեմատ ոչ պաշտոնական դրամաշնորհներից մուտքերը նվազել են 72.9%-ով կամ 2.6 մլրդ դրամով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները կազմել են 10.4 մլրդ դրամ՝ 40.5%-ով (3 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ծրագիրը և 174.5%-ով (6.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը:

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր տարեկան 1,648.1 մլրդ դրամ ծախսերի կատարում: 2019 թվականին առաջին անգամ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները և դրանց հաշվին նախատեսվող ծախսերը հաստատվել են պետական բյուջեի մասին օրենքով՝ նպաստելով պետական ֆինանսների թափանցիկության աստիճանի բարձրացմանը: Ելնելով օրենսդրության պահանջներից՝ պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 1,762.9 մլրդ դրամ, որի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 1,629.4 մլրդ դրամ: Պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 92.4%-ով, իսկ շեղումների ընդհանուր գումարի 47.5%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 52.5%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է բյուջեի ծախսերի 95.3%-ը կամ 1,553.1 մլրդ դրամը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 95.7%-ով: Բյուջեի ծախսերի 4.7%-ը՝ 76.3 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից ստացված դրամաշնորհների և վարկերի հաշվին, որը կազմել է ծրագրի 54.3%-ը: Հարկ է նշել, որ չնայած բյուջետային ծախսերի ծրագրվածից ցածր կատարողականին՝ հաշվետու տարում ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների՝ սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ժամանակին կատարումը: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 12.6%-ով կամ 182.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով[19]: ՀՆԱ-ի անվանական մեծության 9.1% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելի բարձր աճը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության աճին. այն կազմել է 24.9%՝ 2018 թվականի 24.1%-ի և կանխատեսված 24.4%-ի դիմաց: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է եկամուտների էական գերակատարման արդյունքում ծախսերի ծրագրի վերանայմամբ:

[19] 2019 թվականին ծրագրային բյուջետավորման ներդրման արդյունքում ամբողջությամբ փոխվել է պետական բյուջեի ծախսերի ձևաչափը, ուստի նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատությունը ներկայացվում է միայն տնտեսագիտական դասակարգմամբ:

Տնտեսագիտական դասակարգում

<u>Ընթացիկ ծախսեր</u>

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 1,437.1 մլրդ դրամ՝ 95.8%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 10.6%-ով կամ 138,2 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերից շուրջ 172.6 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը կազմել է տարեկան ծրագրի 98.9%-ը և 13%-ով (19.8 մլրդ դրամով) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Աշխատավարձի գծով ծախսերի աճը պայմանավորված է պետական իշխանության մարմինների աշխատավարձի ֆոնդում նրանց 2018 թվականի աշխատավարձի ֆոնդի 10 տոկոսի չափով պետական ծառայողների պարգևատրման ֆոնդ նախատեսելու հանգամանքով:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 92.7%-ը՝ 192.1 մլրդ դրամ, որը 23.4%-ով կամ 36.5 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 157.6 մլրդ դրամ ուղղվել է կառավարության պարտքի սպասարկմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 98.3%-ը: Մասնավորապես՝ 69.8 մլրդ դրամ (99.2%) տրամադրվել է ներքին պարտքի և 87.8 մլրդ դրամ (97.6%)՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Ներքին պարտքի սպասարկման ծախսերի տնտեսումները պայմանավորված են եղել գանձապետական պարտատոմսերի՝ կանխատեսածի համեմատ փաստացի եկամտաբերության տարբերությամբ և շուկայի մասնակիցների՝ հետաքրքրության ցածր աստիճան դրսևորելու հանգամանքով պայմանավորված՝ ավելի փոքր ծավալով հետգնումների իրականացմամբ: Արտաքին պարտքի սպասարկման ծախսերի տնտեսումները հիմնականում պայմանավորված են եղել 2018-2019 թվականների ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների ծրագրային ցուցանիշների թերակատարմամբ, ինչպես նաև 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR կանխատեսումային և 2019 թվականին վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերությամբ:

Պարտքի սպասարկման ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 13.3%-ով կամ 18.5 մլրդ դրամով: Մասնավորապես՝ ներքին պարտքի սպասարկման ծախսերն աճել են 9%-ով կամ 5.8 մլրդ դրամով, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերը՝ 17%-ով կամ 12.8 մլրդ դրամով: Պարտքի սպասարկման ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է 2018 թվականի համեմատ պարտքի

ծավալի 6.4% աճով: Բացի այդ, աճին նպաստել են նաև պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի աճը 92.2 մլրդ դրամով և դրանց կառուցվածքում երկարաժամկետ պարտատոմսերի մասնաբաժնի աճը 8.5 տոկոսային կետով, արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման միջին տոկոսադրույքի աճը՝ 2.3%-ից 2.4%, ինչպես նաև արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությունը (մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքն աճել է 0.7%-ով՝ 483.06-ից 486.55):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի միջին կշռված անվանական տոկոսադրույքը կազմել է 4.8% և նախորդ տարվա համեմատ նվազել է 0.2 տոկոսային կետով: Արտաքին վարկերի գծով տվյալ ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկերի սպասարկման ծախսերի հաշվարկման հիմքում ընկած LIBOR դրույքաչափի վարքագծով: Նշենք, որ 2018 թվականին 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR դրույքաչափի միջին ցուցանիշը կազմել էր 2.49%, իսկ 2019 թվականին՝ 2.32%, ընդ որում հիշյալ տոկոսադրույքի հիման վրա է իրականացվում արտաքին վարկերի շուրջ 23%-ի սպասարկումը:

Պայմանավորված արտաքին վարկերի կառուցվածքով՝ սպասարկման ծախսերի 81.6%-ը կազմել են միջազգային կազմակերպություններին վճարված տոկոսավճարները, որոնց ծավալն աճել է 8.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ մասնաբաժինը նվազել է 2.1 տոկոսային կետով՝ պայմանավորված պարտքի կառուցվածքում օտարերկրյա պետությունների հանդեպ պարտքի ծավալի աճով և վերջինների վարկերի տոկոսադրույքներով: Օտարերկրյա պետություններին վճարված տոկոսավճարների ծավալն աճել է 4.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 18.2%:

Վճարված տոկոսավճարների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի գծով վճարված տոկոսավճարների տեսակարար կշիռը կազմել է 31.8% և նախորդ տարվա համեմատ աճել է 6.2 տոկոսային կետով:

Շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը նվազել է 0.5 տոկոսային կետով: Դրան նպաստել է 2016 թվականից արձանագրված պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության նվազման միտումը, որը շարունակվել է 2019 թվականին: Եկամտաբերության նվազմանը նպաստել են նաև 2018-2019թթ. ընթացքում բարձր եկամտաբերությամբ պետական գանձապետական պարտատոմսերի մարումները: Շրջանառության մեջ գտնվող արտարժութային պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը նվազել է մեկ տոկոսային կետով՝ պայմանավորված 2019 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կապիտալի շուկայում 500 մլն ԱՄՆ դոլար

ծավալով տեղաբաշխված արտարժութային պետական պարտատոմսերի ցածր եկամտաբերությամբ (4.2%) և 2020 թվականի մարման ենթակա պարտատոմսերի մասնակի հետգնմամբ:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 113.4 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով տարեկան ծրագրի 98.6%-ը: Նշված գումարից 94.2 մլրդ դրամը տրամադրվել է պետական կազմակերպություններին, 19.2 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին, որոնք տարեկան ծրագրի նկատմամբ կազմել են համապատասխանաբար 99.1% և 96.3%: Նախորդ տարվա համեմատ սուբսիդիաների գծով ծախսերն աճել են 1.9%-ով կամ 2.1 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է որոշ ծախսերի վերադասակարգմամբ, մասնավորապես՝ ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության և ոռոգման համակարգի առողջացման ծրագրին աջակցության նպատակով նախատեսված միջոցները, որոնք 2018 թվականին դասվում էին դրամաշնորհներին, 2019 թվականին դասակարգվել են որպես սուբսիդավորում: Միևնույն ժամանակ, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտի որոշ կազմակերպությունների տրամադրվող միջոցները դասակարգվել են որպես դրամաշնորհներ՝ 2018 թվականի սուբսիդավորման փոխարեն:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 10.4%-ը կամ 150 մլրդ դրամ տրամադրվել է դրամաշնորհներին՝ ապահովելով 93.1% կատարողական: Նշված գումարից 146.2 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, որից շուրջ 51 մլրդ դրամը՝ համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որն իրականացվել է տարեկան ծրագրով նախատեսված ողջ ծավալով և 5.9%-ով (2.8 մլրդ դրամով) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: 3.8 մլրդ դրամ է տրամադրվել միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության համար՝ կազմելով տարեկան ծրագրի 85.6%-ը: 2019 թվականին 16.2 մլրդ դրամ կապիտալ դրամաշնորհներ են տրամադրվել համայնքներին, որը կազմել է ծրագրված հատկացումների 77.1%-ը և 80.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Նշված գումարից 6.5 մլրդ դրամը կազմել են կապիտալ սուբվենցիաները, որոնք կատարվել են 62.4%-ով և նախորդ տարվա համեմատ աճել են 2.6 անգամ:

2018 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 18.7%-ով կամ 23.7 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհների, պետական հատվածի այլ մակարդակներին կապիտալ դրամաշնորհների և համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրված դոտացիաների գծով ծախսերի աճով: Մասնավորապես՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ դրամաշնորհների աճը հիմնականում պայմանավորված է մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտներին հատկացված միջոցների վերոհիշյալ վերադասակարգմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերի 31.5%-ը՝ 453.2 մլրդ դրամ, ուղղվել է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը՝ ապահովելով ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով տարեկան ծրագրի 97.6% կատարողական: Մասնավորապես՝ 319.2 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 134 մլրդ դրամ՝ նպաստները, որոնք կազմել են տարեկան ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 99.4%-ը և 93.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով բյուջեի ծախսերն աճել են 2.4%-ով (3.2 մլրդ դրամով), ինչը հիմնականում պայմանավորված է այլ նպաստների գծով ծախսերի աճով՝ կապված ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների գծով ծախսերի աճի հետ: Կենսաթոշակների գծով ծախսերը հաշվետու ժամանակահատվածում աճել են 8.3%-ով (24.5 մլրդ դրամով), ինչը հիմնականում պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին կատարված հատկացումների աճով, ինչպես նաև 2019 թվականի հունվարի 1-ից նվազագույն կենսաթոշակի չափի սահմանմամբ՝ 25500 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 198.3 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով տարեկան ծրագրված ցուցանիշի 90.9%-ը և 5.2%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</u>

ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 2019 թվականին կազմել են 192.3 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 73.3%-ը: Մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 193 մլրդ դրամ, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 73.5%-ով: Կապիտալ ծախսերի ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Վերջիններիս շրջանակներում նախատեսվել է կապիտալ ծախսերի 49%-ը՝ 128.5 մլրդ դրամ, որոնց կատարողականը կազմել է 71.7 մլրդ դրամ կամ 55.8%: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 27%-ով կամ 41 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման ու շենքերի և շինությունների շինարարության ծախսերի աճով: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից 2019 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 723.1 մլն դրամ՝ նախատեսված 23.2 մլն դրամի դիմաց: Նշենք, որ 2018 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել էին 3.9 մլրդ դրամի միջոցներ:

Ծրագրային դասակարգում

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 193 ծրագրերի իրականացում, իսկ ՀՀ կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 205, որոնցից փաստացի միջոցներ են օգտագործվել 199-ի գծով: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 1146 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 1056-ը կամ 92.1%-ը:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,629.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 92.4%-ը: Շեղումը կազմել է 133.5 մլրդ դրամ, որը հիմնականում արձանագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ պաշտպանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների ծրագրերում:

Պետական բյուջեի փաստացի ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 27.9%, ունեցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերը:

ՀՀ Նախագահի աշխատակազմին Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման ապահովման նպատակով 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 96.3% կատարողական: Նշված ծախսերի գերակշիռ մասն ուղղվել է ՀՀ նախագահի գործունեության և ներկայացուցչականության ապահովման ծախսերին, որոնք կազմել են 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 97.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է որոշ հոդվածների գծով միջոցների տնտեսմամբ:

Հանրապետության նախագահի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տրամադրվել է 23.3 մլն դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 97%-ը՝ պայմանավորված գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել համակարգիչներ, գրասենյակային կահույք և այլ վարչական սարքավորումներ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին և արտասահմանյան պատվիրակություն-ների ընդունելություններին ծախսերը կազմել են համապատասխանաբար 287.4 մլն դրամ և 9.4 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշների 91.6%-ը և 99.4%-ը: ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կազմել են 10 հազ. դրամ:

2019 թվականի հունիսի 7-9-ը Երևան և Դիլիջան քաղաքներում Մտքերի գագաթնաժողովի անցկացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառմանը մասնակցել են տարբեր բնագավառներ ներկայացնող ավելի քան 300 ազդեցիկ անհատներ աշխարհի տարբեր երկրներից, ներկայացվել են Հայաստանի գործարար հնարավորությունները, ներդրումային գրավչությունը: Միջոցառումը նպաստել է Հայաստանի ճանաչելիության և հեղինակության բարձրացմանը: Միջոցառման ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ հյուրերի և ՀՀ գործարար շրջանների ներկայացուցիչների, կառավարության համապատասխան ոլորտային պատասխանատուների հետ, հաստատվել են գործնական կապեր, քննարկվել են ներդրումային ծրագրեր, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ: Գագաթնաժողովից հետո Հայաստան գործնական այցելություն կատարեցին մի քանի համաշխարհային մակարդակով խոշոր ընկերությունների պատվիրակություններ («Thales», «Dassault Systèmes», «Schneider Group» «PwC» «IBM»):

ՀՀ Ազգային ժողովին հաշվետու տարում ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովման նպատակով տրամադրվել է 5.8 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 93.4%-ը: Ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի գործունեության ապահովման, օրենսդրական, վերլուծական և ներկայացուցչական ծառայությունների, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերի կատարողականով:

ՀՀ Ազգային ժողովի գործունեության ապահովման, օրենսդրական, վերլուծական և ներկայացուցչական ծառայությունների ծախսերը կատարվել են 95.5%-ով՝ կազմելով 5.4 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է որոշ ծախսային հոդվածների գծով առկա տնտեսումներով:

ՀՀ Ազգային ժողովի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տրամադրվել է 207.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 70.8%-ը: Նախատեսված սարքավորումներն ամբողջությամբ ձեռք չեն բերվել՝ պայմանավորված գնումների անավարտ գործընթացներով:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 299 հազ. դրամ կամ նախատեսված միջոցների 72.7%-ը: Ծրագրված ցուցանիշից ծախսերի շեղումը պայմանավորված է Ազգային ժողովի աշխատակազմում իրականացված կառուցվածքային փոփոխություններով, որոնց արդյունքում վերապատրաստման դասընթացներին մասնակցել են նախատեսվածից պակաս թվով ծառայողներ:

Միջազգային խորհրդարանական կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարները կազմել են 163 մլն դրամ՝ ապահովելով 90.3% կատարողական: Ծախսերը կատարվել են ներկայացված վճարային փաստաթղթերին համապատասխան:

ՀՀ Ազգային ժողովի շենքային պայմանների բարելավման ծախսերը կազմել են 980 հազ. դրամ (100%), որն ուղղվել է ՀՀ Ազգային ժողովի շենք-շինությունների ջեռուցման համակարգի կապիտալ վերանորոգմանը և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերմանը:

ՀՀ Ազգային ժողովի շենքային ապահովվածության բարելավման նպատակով նախատեսված 51.3 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված մրցույթը տարեվերջին կայանալու հանգամանքով:

ՀՀ Վարչապետի աշխատակազմի պատասխանատվությամբ 2019 թվականին նախատեսված 13 ծրագրերից կատարվել է 10-ը, որոնց գծով ծախսերը կազմել են 14.5 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 76.6%-ը: Ծրագրված ցուցանիշներից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման ծրագրի, Տեսչական վերահսկողության ծրագրի և ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովման ծրագրի կատարողականով:

Հաշվետու տարում *Պետական հատվածի արդիականացման* ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 32%-ը: Մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրման և նույն ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված համապատասխանաբար շուրջ 1.2 մլրդ դրամի և 48.6 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված մրցութային փաստաթղթերի մշակման և ավարտական տեսքի բերելու համար ներգրավվելիք միջազգային խորհրդատուի հետ պայմանագրի կնքման գործընթացի երկարաձգմամբ: Նշված օգնությունը նախատեսվել է «Համաշխարհային բանկի Պետական հատվածի արդիականացման երրորդ վարկային ծրագրի Կառավարության ֆինանսական կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ստեղծում» բաղադրիչի շրջանակներում:

Ցածր կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերման համար նախատեսված ծախսերի գծով, որոնք կատարվել են 56.3%-ով՝ կազմելով ավելի քան 1 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ միջոցառման իրականացման համար տարվա ընթացքում նախատեսված մրցույթները չեն կայացել՝ պահանջներին բավարարող մասնակիցների բացակայության պատճառով: Մրցույթը կայացել է տարեվերջին, և ժամկետների սղությամբ պայմանավորված՝ միջոցառումն իրականացվել է մասամբ: 2019 թվականին ծրագրի շրջանակներում իրականացված մրցույթի արդյունքների հիման վրա կնքվել են պայմանագրեր՝ ձեռք

բերվող ապրանքների մի մասը մատակարարվել է 2019 թվականին, իսկ մյուս՝ հիմանական մասի մատակարարումը տեղափոխվել է 2020 թվական: Միջոցառման շրջանակներում նախատեսվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ոստիկանության համար օպերատիվ կառավարման պիլոտային համակարգերի (ծրագրային ապահովում) մատակարարումը և տեղադրումը (մարզերում), ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերումը,
- «Էլեկտրոնային նորմատիվ իրավական ակտերի համակարգի» մատակարարումը և տեղադրումը, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերումը,
- «Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի» մշակումը և համապատասխան սարքավորումների ձեռք բերումը,
- «Քաղաքացիների հետ հետադարձ կապի միասնական պորտալի, զանգերի կենտրոնի և Mobile ID համակարգերի մատակարարման և տեղադրման» ծրագրային ապահովման մշակումը և համապատասխան սարքավորումների ձեռք բերումը:

Միջոցառման շրջանակներում 2020 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել նաև պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS) ծրագրային ապահովման մշակման և համապատասխան սարքավորումների ձեռք բերման, ինչպես նաև լիցենզավորման համակարգի ծրագրային ապահովման մշակման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 263 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 37.9%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ միջոցառման իրականացման համար անցկացված մրցույթների առաջին փուլի չկայացման հետևանքով նախատեսված համակարգերը չեն ներդրվել, ինչի արդյունքում վերապատրաստումների կազմակերպման կարիք չի եղել, և ծրագրի կառավարման խմբի համար նախատեսված պահպանման ծախսերի մասով առաջացել են տնտեսումներ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին սկսվել են և 2020 թվականին ավարտին կհասցվեն քաղաքացիական ծառայության ոլորտում կարիքների վրա հիմնված վերապատրաստման համակարգի մշակման և Հայաստանի Պետական Կառավարման Ակադեմիայի կարողությունների զարգացմանն օժանդակման (քաղաքացիական ծառայության ոլորտում շարունակական վերապատրաստում ապահովելու նպատակով) աշխատանքները: Միջոցառման շրջանակներում կատարվել են ծրագրի մոնիթորինգի և հաշվետվությունների մշակման, գնումների փաստաթղթերի կազմման և գնումների գործընթացի վերահսկման ու ծրագրի միջոցառումներն իրականացնող մարմինների խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ, կազմակերպվել են

շահառուների վերապատրաստումներ, ֆինանսական աուդիտ, քաղաքացիների ու քաղաքացիական հասարակության հետ քննարկումներ:

ՌԴ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ-ին անդամակցության շրջանակներում ՀՀ-ին տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 25.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 6.8%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքները չմատակարարելու հանգամանքով: Միջոցներն օգտագործվել են պետական բյուջեն ձևավորելու գործընթացի ավտոմատացման համակարգի մշակման և վերջինիս պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացման համակարգերի հետ ինտեգրման, տեղեկատվության փոխանակման հնարավորության ստեղծման նպատակով:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 154.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 89.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման և հասարակական սեկտորի զարգացմանը նպաստող նյութերի ստեղծման, միջոցառումների, կլոր սեղանների, հանրային քննարկումների և դասընթացների կազմակերպման նպատակով քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության համար նախատեսված միջոցները՝ 14.9 մլն դրամի չափով, չեն տրամադրվել՝ նրանց կողմից աջակցության պահանջ չներկայացնելու պատճառով: Տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են երեք միջոցառումներ, որոնցից երկուսի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ: Մասնավորապես՝ 103.7 մլն դրամը հատկացվել է կուսակցությունների դաշինքներին աջակցությանը: Միջոցառման շրջանակներում աջակցություն է ցուցաբերվում Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին:

Հասարակական կազմակերպություններին աջակցության համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 30.7 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 91.2%-ը, որը պայմանավորված է միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումներով: Հատկացված միջոցներն օգտագործվել են Արցախում 2019 թվականի սեպտեմբերին տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններին քաղաքացիական հասարակության կողմից ընտրություններին դիտորդական առաքելության իրականացման համար: Գումարը հատկացվել է «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» խորհրդատվական հասարակական կազմակերպությանը և «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնին:

20 մլն դրամ ուղղվել է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին աջակցությանը: Միջոցառման նպատակն է քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման և հասարակական սեկտորի զարգացմանը նպաստող նյութերի ստեղծման, միջոցառումների, կլոր սեղանների, հանրային քննարկումների, դասընթացների կազմակերպման նպատակով աջակցության ցուցաբերումը: Միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել 11 հասարակական կազմակերպությունների: Միջոցներն ուղղվել են կրթական, մշակութային միջոցառումների, զանազան քննարկումների կազմակերպմանը, գրասենյակային և տրանսպորտային ծախսերի փոխհատուցմանը:

2019 թվականին *Հանրային կարծիքի ուսումնասիրությունների* ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների համար նախատեսված 27.8 հազար դրամի միջոցները չեն օգտագործվել: Վերջինս պայմանավորված է նրանով, որ քննարկումների արդյունքում միջոցառման իրականացումը նպատակահարմար չի գտնվել, և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հատկացված 123.3 մլն դրամի միջոցները գրեթե ամբողջությամբ վերաբաշխվել են այլ ծրագրերի միջև:

Մարդասիրական ծրագրերին աջակցության ծրագրի շրջանակներում տեղական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից իրականացվող մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցման համար նախատեսված 1.4 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված պահանջարկի բացակայությամբ: Միջոցառման շրջանակներում նախատեսվել էր միջոցներն օգտագործել «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթի մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար:

Հանրային իրազեկման ծրագրի շրջանակներում իրականացվել են վեց միջոցառումներ, որոնց շրջանակներում կատարված ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.1%-ը: Տվյալ ծրագրում ընդգրկված չորս միջոցառումների գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝ պետական մամուլի հրատարակման համար ծախսերը կազմել են 83.2 մլն դրամ,

որն օգտագործվել է Հայաստանի Հանրապետություն և Ռեսպուբլիկա Արմենիա թերթերի հրատարակման համար:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման համար նախատեսված 175.5 մլն դրամի միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ: Միջոցառումը հնարավորություն է տալիս «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության միջոցով ԱՊՀ երկրներից տեղեկատվություն ստանալ և այն տարածել ԱՊՀ երկրներում: «Միր» միջպետական հեռուստառադիոընկերությունը հայկական բաժնեմասով միակ օտարալեզու հեռուստառադիոընկերությունն է, որը հեռարձակվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և փոխադարձ հնարավորություն է տալիս ինչպես ԱՊՀ և մի շարք այլ երկրների բնակչությանը ծանոթանալ հայկական մշակույթին և մշակութային արժեքներին, այնպես էլ Հայաստանի բնակչությանը՝ ծանոթանալ ԱՊՀ մյուս պետությունների մշակույթին և մշակութային արժեքներին:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 96.8 մլն դրամ: Միջոցառումը բնակչությանը հնարավորություն է տալիս ՋԼՄ-ներին և պետական հիմնարկներին ստանալ տեղեկատվություն, ապահովել պատմական նշանակություն ունեցող նյութերի պահպանումն ու արխիվացումը: Միջոցառումն իրականացվել է նախատեսված ծավալով. 2019 թվականի ընթացքում ձեռք բերված տեղեկատվության ծավալը կազմել է 5125 մեգաբայթ, պահպանված և արխիվացված լուսանկարների թիվը՝ 14000 հատ:

Հաշվետու ժամանակահատվածում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի լուծարման գործընթացով պայմանավորված պարտավորությունների մարման համար հատկացվել է 16.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի լուծարման գործընթացով պայմանավորված 2019 թվականի հունվարի 1-ից հետո կուտակված ֆինանսական պարտավորությունների և դրանց չվճարման արդյունքում ձևավորված տույժերի վճարմանը:

Հանրային կապերի և տեղեկատվության ոլորտի ուսումնասիրությունների, վերլուծությունների և տպագիր, էլեկտրոնային ու հեռարձակվող մամուլի ամենօրյա մշտադիտարկումների նպատակով հանրային իրազեկման ծախսերը կազմել են 698 մլն դրամ՝ ապահովելով 95.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է աշխատանքային գործառույթների փոփոխությամբ, մրցույթների ոչ լրիվ ծավալով իրականացմամբ, կայացած մրցույթի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ, հաստիքների ոչ լրիվ համալրման արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառումն իրականացվում է «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2019 թվականին միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում,

● Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում,

● Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում,

● Տեղեկատվական-թեմատիկ գրքերի և բրոշուրների թողարկում և թարգմանություն,

● Հաղորդումների պատրաստում, որոնք լուսաբանում են ՀՀ կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները,

● Սոցիալական հարթակներում ՀՀ կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, ՀՀ կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում,

● Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ամփոփագրերի և վերլուծական հոդվածների պատրաստում,

● Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում,

● ՀՀ-ի համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում,

● Տարածաշրջանային երկրների ներքաղաքական զարգացումների մասին (Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) թեմատիկ տեղեկանքների պատրաստում,

● Թուրքիայի և Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում, ինչպես նաև Թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում,

● ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների տեղեկատվական սպասարկում (ասուլիսներ),

● Հայաստանի ԲՈՒՀ-երում կենտրոնի փորձագետների ներգրավում ուսումնական պրոցեսում,

● ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում, ամփոփագրերի պատրաստում,

● Քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսուցողական նյութերի պատրաստում և ուսումնական ծրագրերի իրականացում,

- ՀՀ կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները լուսաբանող հաղորդումների պատրաստում,
- Փաստագրական վավերագրական ֆիլմի արտադրություն,
- Օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ Հայաստան մեդիա տուրերի կազմակերպում:

Հանրությանը «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի տեսլականի ուղերձների ներկայացման համար օգտագործվել է նախատեսված միջոցների 56.5%-ը՝ շուրջ 27.7 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվել է ձեռք բերել ցուցապաստառների տպագրություն և գովազդային ծառայություններ՝ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի տեսլականի ուղերձները հանրությանը ներկայացնելու և պատշաճ ձևով հաղորդակցվելու նպատակով, ինչպես նաև հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացման և ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների լուսաբանման համար: Շեղումը պայմանավորված է ժամկետների սղության պատճառով նախատեսված աշխատանքների մի մասի կատարման հանգամանքով: Աշխատանքների մնացած մասը կիրականացվի 2020 թվականին: Միջոցառման շրջանակներում կատարվել են «Հայաստանն իմ օջախն է, ժողովուրդն իմ ընտանիքը» ցուցապաստառների տպագրության և գովազդային ծառայությունների ձեռքբերման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում *Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման* ծրագրին ուղղվել է 3.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 39.7%-ը: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է կոմպետենցիաների վերապատրաստման տևողության կրճատմամբ, որը նախկին 72 ժամի փոխարեն սահմանվել է 24 ժամ: Ծրագրի շրջանակներում նախատեսված 700 քաղաքացիական ծառայողի փոխարեն վերապատրաստվել է 1529 քաղաքացիական ծառայող:

Հաշվետու ժամանակահատվածում 7.2 մլրդ դրամ է օգտագործվել *ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովման* ծրագրի շրջանակներում՝ 94%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Հատկացված միջոցներն ուղղվել են թվով 20 միջոցառումների իրականացմանը: Շեղումը հիմնականում առաջացել է ծառայությունների և ծրագրերի համակարգման ծախսերում, որոնք կազմել են 4.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.8%-ը՝ հիմնականում պայմանավորված մրցույթների ոչ լրիվ ծավալով իրականացմամբ, կայացած մրցույթների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ, ինչպես նաև հաստիքների ոչ լրիվ համալրմամբ:

Օրենսդրության իրավական ակտերի կարգավորման ծախսերը կազմել են 56 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 74.3%-ը: Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատմանը,

հստակեցմանը և պարզեցմանն ուղղված աշխատանքների ու ծրագրերի իրականացման ապահովումը, նոր կարգավորող օրենսդրական նորմերի ուսումնասիրությունը, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծությունը և ազդեցության գնահատումը: Միջոցառումը կոչված էր գնահատելու իրավական ակտերի կիրարկումից հետո առաջացող իրական ծախսերն ու արդյունքները, և կառավարության համար միջոց էր հանդիսանում ընտրել խնդրի հնարավոր լուծումներից որևէ մեկը: Միջոցառման շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամին: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է 2019 թվականի երկրորդ կիսամյակից «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի լուծարմամբ:

Տվյալների փոխանակման միջգերատեսչական կապի ապահովման նպատակով կատարված ծախսերը կազմել են 542.9 մլն դրամ կամ նախատեսվածի 88.6%-ը: Շեղումը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում միջգերատեսչական ցանցի և համացանցի կենտրոնացված գնմամբ պայմանավորված՝ իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների և ուսումնական հաստատությունների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում, որի արդյունքում կատարվել է ՀՀ ուսումնական հաստատությունների, հանրապետական գործադիր մարմինների, ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների, մարզպետարանների և այլ պետական մարմինների միջգերատեսչական ցանցի և համացանցի կենտրոնացված գնում:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) քարտուղարությանն աջակցության ծախսերը կազմել են 19.9 մլն դրամ՝ ապահովելով 84.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է տարվա ընթացքում հաստիքների ոչ լրիվ համալրված լինելու արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման նպատակն է Ազգային ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքների նախագծերի հաստատման ենթակա փաստաթղթերի կազմումը, հանրային իրազեկման միջոցառումների իրականացումը և դոնոր կազմակերպությունների հետ աշխատանքի համակարգումը: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության վերաբերյալ հանրային իրազեկման 4 միջոցառում,
- ազգային ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքների թվով 4 նախագծերի մշակում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության տարեկան զեկույցի ներկայացում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության միջազգային քարտուղարությանը,

- իրավական 2 ակտերի նախագծերի մշակում,
- ԱՃԹՆ-ի վավերացման նախապատրաստական թեմայով թվով 3 ուսուցման կազմակերպում, ինչպես նաև առցանց համակարգի կիրառմամբ ընթացիկ խորհրդատվության տրամադրում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 2020-2021 թվականների աշխատանքային ծրագրի կազմում,
- արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության մեթոդական թվով 4 ուղեցույցների մշակում:

ՀՀ կառավարական շենքերի և այլ գույքի սպասարկման ծառայությունների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 462.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում իրականացվել են Կառավարական թիվ 1 շենքի, ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող տարածքների սպասարկման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների և ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների ծախսերը կազմել են համապատասխանաբար 387.1 մլն դրամ և 651.8 հազար դրամ:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման և մահարձանի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցությանն ուղղվել է 9.5 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների ծախսերը կազմել են 85.9 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների սպասարկման համար կատարված ծախսերը կազմել են 48 մլն դրամ: Միջոցները հատկացվել են «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ին՝ «Վեոլիա Ջուր» ընկերությանը խմելու ջրի դիմաց գոյացած պարտքի մարման համար:

Պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման ծախսերը կազմել են 5.4 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 76.2%-ը: Միջոցները հատկացվել են Հանրային խորհրդի ծախսերին: Շեղումը պայմանավորված է

Հանրային խորհրդի կողմից նախատեսվածից պակաս գումարով ֆինանսավորման հայտերի ներկայացմամբ:

«Մեր ժամանակների հերոսը» խորագրով մրցանակաբաշխության հաղթողներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 41.3 մլն դրամ աջակցություն: Միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են և ուղղվել են ՀՀ անկախության հռչակման 28-րդ տարեդարձի կապակցությամբ կազմակերպված «Մեր ժամանակների հերոսը» խորագրով մրցանակաբաշխության հաղթողներին աջակցության տրամադրմանը:

Ծառայությունների և ծրագրերի համակարգման միջոցառմանը հատկացված 430 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ:

Կառավարություն-քաղաքացի փոխգործակցության ապահովմանն ուղղված ծրագրի շրջանակներում օգտագործվել է 11 մլն դրամ՝ ապահովելով 95.7% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի «Բաց կառավարման հետազոտություն և զարգացում» ծրագրի շրջանակներում Կառավարական թիվ 1 շենքի քաղաքացիների ընդունելության տարածքի վերանորոգման և կահավորման աշխատանքներին: Շեղումը պայմանավորված է պայմանագրի՝ նախատեսվածից ցածր գնով կնքմամբ:

Պետական սեփականություն հանդիսացող տարածքների տեխնիկական հագեցվածության բարելավման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 84.6 մլն դրամ, որն ուղղվել է պետական սեփականություն հանդիսացող տարածքների համար տեխնիկական միջոցների ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակահատվածում «Ձյունիկ սառնարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոխհատուցման տրամադրման համար հատկացվել է շուրջ 15 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցները հատկացվել են «Ձյունիկ սառնարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող սառնարանային տարածքում գտնվող վտանգավոր սննդամթերքի տեղափոխման, ախտահանման և ոչնչացման, ինչպես նաև սառնարանային տարածքի մաքրման ու ախտահանման ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Պետական սեփականություն հանդիսացող տարածքների ու կառույցների կահավորման, տեխնիկական հագեցվածության և պայմանների բարելավման ծախսերը նույնպես կատարվել են նախատեսված ծավալով, որոնք կազմել են 291.7 մլն դրամ: Միջոցներն ուղղվել են պետական սեփականություն հանդիսացող տարածքների կահավորմանը, գրասենյակային, կենցաղային և տեխնիկական սարքավորումների ձեռքբերմանը, հարակից տարածքի հիմնանորոգմանը:

Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը ՀՀ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական

համակարգերի ստեղծման և պահպանման համար կատարված ծախսերը կատարվել են 99%-ով, որոնք կազմել են 91.2 մլն դրամ: Միջոցառման նպատակն է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանումը, արդիականացումը և զարգացումը: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շլյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը: Միջոցառումն իրականացվել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից, որը ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի թիվ 217-Ա որոշմամբ ճանաչվել է որպես Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն շլյուզ (պետական բաղադրիչի օպերատոր):

2019 թվականին ՀՀ վարչապետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով օգտագործվել է 147.6 մլն դրամ՝ ապահովելով 88.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են Վարչապետի աշխատակազմին անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերմանը:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ մատուցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպման ծրագրով ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, հայ աշխարհահռչակ ծանրորդ, Օլիմպիական խաղերի, Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն Յուրի Վարդանյանի հուղարկավորության հետ կապված ծախսերի փոխհատուցման շրջանակներում նախատեսված 1.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ նույն նպատակով միջոցներ հատկացվել էին 2018 թվականի պետական բյուջեից:

Տեսչական վերահսկողության ծրագրի շրջանակներում օգտագործվել է 4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 88.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է քաղաքաշինության և ճարտարապետության, առողջապահության և բնապահպանության բնագավառներում վերահսկողության ծառայությունների գծով ծախսերի կատարողականով՝ պայմանավորված տեսչական մարմինների աշխատակազմերի ոչ լրիվ համալրմամբ ու գնումների գործընթացների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերման արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 13 միջոցառումներ, որոնք ուղղվել են տարբեր բնագավառներում տեսչական մարմինների

պահպանմանը և կարողությունների զարգացմանն ու տեխնիկական հագեցվածության ապահովմանը:

Հաշվետու ժամանակահատվածում *Արդյունահանող ճյուղերի զարգացման* ծրագրի ծախսերը կազմել են 31.7 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 13.3%-ը: Նշված գումարից 20.6 մլն դրամն օգտագործվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն (ԱՃԹՆ) աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 20.7%-ը: Համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2018 թվականի մարտի 20-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2021 թվականի հունվարի 31-ը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցում՝ իրականացնելով Արտահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստանդարտը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Հաշվետվությունների ներկայացում և հաստատում,
- Կարողությունների զարգացում և առաջմղում,
- Հաղորդակցություն և տեղեկատվական արշավ,
- Իրական սեփականատերերի բացահայտում և ծրագրի կառավարում:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող հիմնական միջոցառումներն են ԱՃԹՆ-ի ստանդարտի համաձայն զեկույցի հրապարակումը, նախնական ուսումնասիրության իրականացումը, ԱՃԹՆ-ի միջազգային և տարածաշրջանային համաժողովներին, ուսումնական միջոցառումներին և հանդիպումներին մասնակցությունը, ԱՃԹՆ-ի ստանդարտի վերաբերյալ կազմակերպված վերապատրաստումները և սեմինարները, տեղեկատվական արշավների և իրազեկման բարձրացման միջոցառումների կազմակերպումը, այդ թվում՝ համաժողովներ, մարզային հանդիպումներ, համացանցով և սոցիալական ցանցերով միջոցառումներ, իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծումը, ինչպես նաև այդ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ PR փորձագետի, թարգմանչական և իրավաբանական ծառայությունների գնումը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ նախատեսված աշխատանքների մի մասը կատարվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) միջոցների հաշվին: ԱՃԹՆ-ի իրականացման իրազեկման նպատակով նախատեսված 2 մարզի 2 հանդիպումների փոխարեն կայացել են 4 հանդիպումներ 3 մարզում, որոնք ֆինանսավորել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) միջոցներից: Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի իրականացման և արդյունահանող

ճյուղերի վերաբերյալ նախատեսված 2-ի դիմաց պատրաստվել է 4 տեղեկատվական տեսահոլովակ, որոնք տարածվել են համացանցով և սոցիալական ցանցերով: Արդյունքում պետական բյուջեի միջոցները տնտեսվել են, տնտեսված միջոցների հաշվին կազմվելու է 2020 թվականի ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցը:

Շուրջ 11.1 մլն դրամ օգտագործվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանքարդյունաբերական ոլորտի քաղաքականության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 8%-ը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակմանը, որի առանցքում Հայաստանում կայուն տնտեսական աճին հանքարդյունաբերության ոլորտի նպաստի ամրապնդումն է:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- հանքարդյունաբերական ոլորտի տնտեսական ազդեցության գնահատում,
- հանքարդյունաբերական ոլորտի բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատում,
- կարողությունների զարգացում,
- հանքարդյունաբերական ոլորտի ռազմավարության մշակում:

Նախատեսված է գնահատման և ռազմավարության մշակման աշխատանքները պատվիրակել մասնավոր ընկերություններին՝ մրցույթի միջոցով: Կարողությունների բարձրացման բաղադրիչի միջոցով ենթադրվում է հզորացնել ոլորտային գերատեսչությունների աշխատակիցների կարողություններն ու հմտությունները: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ չեն ավարտվել ծրագրի շրջանակներում նախատեսված երեք զեկույցների մշակման աշխատանքները: Մասնավորապես՝ ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծության իրականացումը երկարաձգվել է որակական խնդիրների պատճառով, քանի որ հետազոտությունն իրականացնող ընկերության կողմից ներկայացված զեկույցներն ընդունելի չեն եղել շահագրգիռ նախարարությունների կողմից, ուստի ընկերությանը հատկացվել է հավելյալ ժամանակ՝ շտկելու առկա թերությունները և բարելավելու զեկույցի որակը: Հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատման վերլուծությունը երկարաձգվել է տեխնիկական պատճառով, քանի որ հաղթող ընկերությունը հրաժարվել է ծառայությունների մատուցումից, ինչի արդյունքում բանակցություններ են մեկնարկել երկրորդ հաղթողի հետ, և զեկույցը գտնվում է մշակման փուլում: Ինստիտուցիոնալ ներկա խնդիրների և գործելակերպերի համապատասխանության գնահատման հետազոտության իրականացումը հնարավոր է միայն վերոնշյալ երկու հետազոտությունների առկայության դեպքում: Միջոցառման շրջանակներում ծախսերն ուղղվել են Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական ազդեցության գնահատման առաջին փուլի ծառայությունների վճարմանը, ինչպես նաև փոխհատուցվել են 2019 թվականի հոկտեմբերի 7-ից 9-ը Հանքարդյունաբերության,

հանքանյութերի, մետաղների և կայուն զարգացման հարցերով միջկառավարական ֆորումի (ՄԿՖ) 15-րդ տարեկան գլխավոր հանդիպմանը մասնակցելու նպատակով գործուղման ծախսերը:

Սննդի անվտանգության ապահովման ծրագրերին աջակցության ծախսերը կազմել են 286.7 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 68.5%-ը: Ծրագրում ընդգրկված երեք միջոցառումների գծով առկա են շեղումներ, սակայն ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայությունների ծախսերով, որոնք կատարվել են 69.9%-ով՝ կազմելով 168.9 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Տվյալ ծախսերը ֆինանսավորվում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին, որոնք գոյանում են օրենքով սահմանված կարգով՝ ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար տնտեսավարող սուբյեկտներից գանձված վճարներից, կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորին գործունեության եզրակացություն տրամադրելու համար գանձված վճարներից և տնօրինվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ֆոնդում գոյացած միջոցների 50%-ն օգտագործվում է աշխատողների նյութական խրախուսման նպատակով: Միջոցառման շրջանակներում միջոցներն օգտագործվել են աշխատակիցների խրախուսման, գործուղումների, տրանսպորտային նյութերի ձեռքբերման, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման, տպագրության և պահպանման այլ ծախսերի ֆինանսավորման նպատակով: Ֆոնդի միջոցների մյուս 50%-ն ուղղվում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համակարգի զարգացման և հսկիչ գնումների ֆինանսավորման համար: Նշված ծախսերը 2019 թվականին կազմել են 4.3 մլն դրամ՝ ապահովելով 67.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային գույք և համակարգչային տեխնիկա:

Ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի անվտանգության ապահովման ծախսերը կազմել են 113.6 մլն դրամ կամ նախատեսվածի 66.6%-ը, որը պայմանավորված է կայացած մրցույթների արդյունքում լաբորատոր փորձաքննությունների՝ նախատեսվածից ցածր գներով: Արդյունքում իրականացվել են նախատեսվածից շատ լաբարատոր փորձաքննություններ՝ նախատեսված 3513-ի դիմաց դրանց թիվը կազմել է 3871: Միջոցառման շրջանակներում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ սննդի շղթայի բոլոր փուլերում կատարվող գործառնությունների ժամանակ մարդու կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության երաշխիքների ապահովման, ինչպես նաև անասնաբուժական պետական հսկման ենթակա բեռների և

սննդամթերքի ներմուծման գործընթացներում պետական վերահսկողության իրականացման ընթացքում, բեռի անվտանգությունը որոշելու նպատակով ՀՀ կառավարության կողմից սահմանված դեպքերում իրականացվել է ներմուծվող սննդամթերքի փորձաքննություն, որի համար սննդամթերք ներմուծող տնտեսավարող սուբյեկտից գանձվել է փորձաքննության վճար՝ փորձաքննությունների գնացուցակի համաձայն: Միջոցառման շրջանակներում միջոցներն օգտագործվել են Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքի փորձանմուշների լաբորատոր հետազոտությունների համար:

Սփյուռքի բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրի ծախսերը կազմել են 383.5 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 86.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության կառուցվածքային փոփոխություններով, որոնց արդյունքում 2019 թվականի գնումների պլանում ներառված որոշ աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար գնման գործընթացներ չեն իրականացվել, ինչպես նաև թափուր հաստիքների առկայությամբ:

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.9 մլն դրամ կամ 2.4%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսված վեց միջոցառումների փոխարեն մասնակիորեն իրականացվել է միայն մեկ միջոցառում՝ պայմանավորված կառավարության կառուցվածքային փոփոխություններով և ՀՀ սփյուռքի նախարարության լուծարմամբ: Հատկացված միջոցներն ուղղվել են «Աշխատանք սփյուռքի համայնքներում» միջոցառման իրականացմանը, որը կատարվել է 20.6%-ով: Միջոցառման նպատակն է իրականացնել գործուղումներ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգով ամրագրված, բազմաբնույթ խնդիրների լուծման, ճանաչողության, կապերի հաստատման, տարբեր համայնքների հրավերներին և միջոցառումներին արձագանքելու, տեղերում լինելու և ստեղծված իրավիճակները հստակ պատկերացնելու համար: Միջոցառման շրջանակներում աշխատակիցները աշխատանքային այցերով եղել են հայ համայնքներում, մասնակցել են տեղերում կազմակերպված մշակութային, համայնքային միջոցառումների, հանդես են եկել կառավարության ծրագրերի ներկայացմամբ, պատասխանել են բազմաթիվ հարցադրումների և այլն: Միջոցներն օգտագործվել են գործուղման ծախսերի համար:

<u>ՀՀ սահմանադրական դատարանի</u> գործունեության ապահովմանը 2019 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 682.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 94.1% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովման ծախսերի կատարողականով, որը կազմել է 94.4% կամ 664.6 մլն դրամ՝ կապված հիմնականում որոշ հոդվածների գծով առկա տնտեսումների հետ:

ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդից օգտագործվել է նախատեսված միջոցների 85.4%-ը՝ 12.1 մլն դրամ, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 78.6%-ը՝ 5.6 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով, որոնք առաջացել են գնումների գործընթացի արդյունքում:

Բարձրագույն դատական խորհրդին Դատական իշխանության գործունեության ապահովման և իրականացման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 11.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 95.5% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 19 միջոցառումներ, ընդ որում, բոլոր միջոցառումներում առկա են շեղումներ, որոնք հիմնականում պայմանավորված են թափուր հաստիքների առկայությամբ և շարունակական ծախսերի խնայողությամբ:

Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովման և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 2.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 94.4%-ը:

ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով տրամադրվել է 718.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 98.5%-ը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական, քրեական, վարչական դատարանների բնականոն գործունեության և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական, քրեական, վարչական դատարանների կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով տրամադրվել է շուրջ 1.4 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 99.1%-ը:

ՀՀ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով տրամադրվել է 692.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 99.4%-ը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը տրամադրվել է շուրջ 2.1 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 97.2%-ը:

ՀՀ ընդհանուր իրավասության մարզային դատարանների բնականոն գործունեության և նրանց կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովման ծախսերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 95.8%-ը:

ՀՀ Սնանկության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սնանկության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով տրամադրվել է 370.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 96.5%-ը:

Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորման և կառավարման միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 64.2%-ը՝ 155.7 մլն դրամ: Պահուստային ֆոնդից ծախսերը կատարվում են ԲԴԽ որոշումներով՝ չնախատեսված դեպքերի համար:

Հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով նախատեսված միջոցների 89.1%-ը՝ 627.1 մլն դրամ, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ դատախազությանը հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 3 ծրագրերն իրականացնելու նպատակով տրամադրվել է շուրջ 5.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 98.9%-ը:

Դատախազությանը հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ շուրջ 5 մլրդ դրամ (նախատեսվածի 98.8%-ը) տրամադրվել է *Դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության* ծրագրի իրականացմանը: Շեղումը հիմնականում արձանագրվել է քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերում, որոնք կազմել են 4.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.9%-ը՝ պայմանավորված 2018 թվականին համաներման ակտի ընդունմամբ, որի արդյունքում բազմաթիվ դատապարտյալներ ազատվեցին պատժի հետագա կրումից, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ, ըստ որի փոփոխության է ենթարկվել վաղաժամկետ ազատվելու գործընթացը:

Հաշվետու տարում ՀՀ դատախազության պահուստային ֆոնդից օգտագործվել է 103.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 98.9%-ը:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին հատկացված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, որոնք կազմել են 10.9 մլն դրամ:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կազմել են 20 հազ. դրամ (100%):

Դատախազության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով օգտագործվել է շուրջ 44 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.7%-ը: Շեղումը պայմանավորված է ապրանքների՝

նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Միջոցներն ուղղվել են տրանսպորտային և վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված 362.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվել են 10609 փորձաքննություններ՝ կանխատեսված 10886-ի դիմաց:

Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 83.6%-ով՝ կազմելով 14.3 մլն դրամ: Հաշվետու տարում ՀՀ դատախազության ծառայողների համար կազմակերպվել է 27 դասընթաց՝ նախատեսված 40-ի դիմաց, մասնակիցների թիվը կազմել է 301՝ նախատեսված 360-ի դիմաց:

ՀՀ հատուկ քննչական ծառայությանը 2019 թվականին տրամադրվել է 726.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.3% կատարողական: Նշված գումարից 711.2 մլն դրամն ուղղվել է քրեական վարույթի իրականացման միջոցառմանը, որի կատարողականը կազմել է 98.3%: Շեղումն առաջացել է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումների, շարունակական ծախսերի խնայողության, ինչպես նաև նախատեսված համազգեստները մասամբ ձեռք բերելու արդյունքում:

Վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 75.8%-ով՝ կազմելով 1.1 մլն դրամ: Տնտեսումն առաջացել է ուսուցման խմբերի միավորման արդյունքում, որոնց քանակը նախատեսված 5-ի փոխարեն կազմել է 3: Վերապատրաստված ծառայողների քանակը կազմել է 17՝ նախատեսված 18-ի դիմաց:

Հաշվետու տարում ՀՀ հատուկ քննչական ծառայության պահուստային ֆոնդին հատկացված 14.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

170 հազ. դրամ (100%) են կազմել ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 27 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 171.6 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 75.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ճանապարհային ցանցի բարելավման, Քաղաքային զարգացման, Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման, Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ու Տարածքային զարգացման ծրագրերի կատարողականով, որոնց ուղղվել է համապատասխանաբար 45.1 մլրդ դրամ, 19.4 մլրդ դրամ, 5 մլրդ դրամ, 5.6 մլրդ դրամ և 60.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշների 78.3%-ը, 67.3%-ը, 37.1%-ը, 46.9%-ը և 90.3%-ը:

Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացման համար օգտագործվել է ավելի քան 649.7 մլն

դրամ՝ 96.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարությունում թափուր հաստիքների առկայությամբ, գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով, ծառայողական ավտոմեքենաների կրճատմամբ, ինչպես նաև կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսերի կատարողականով: Նշված գումարից շուրջ 610.1 մլն դրամն ուղղվել է տարածքային կառավարման քաղաքականության մշակման և ծառայությունների մատուցմանը, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 97.7%-ը: Համապատասխանաբար 4.4 մլն դրամ և 20.6 մլն դրամ օգտագործվել է արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսերը կազմել են 14.7 մլն դրամ կամ նախատեսվածի 63.6%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մրցույթի արդյունքում սարքավորումները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով, իսկ որոշ ապրանքների համար հայտարարված մրցույթին մասնակից չի գրանցվել: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքերի և շինությունների հիմնանորոգման համար նախատեսված 2.4 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ գումար հատկացնելու վերաբերյալ որոշումը հաստատվել է դեկտեմբերին, ուստի ժամանակի սղության պատճառով մրցույթ չի հայտարարվել, և գործընթացը չի սկսվել:

Հաշվետու ժամանակահատվածում 2.8 մլրդ դրամ են կազմել *Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման* ծրագրի ծախսերը՝ ապահովելով 74.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքներում ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի վերականգնման և շինարարության աշխատանքների ցածր կատարողականով: Նշված ծախսերը կազմել են 2.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 73.4%-ը՝ հիմնականում պայմանավորված շինարարական աշխատանքների 2 ծրագրում նախատեսվածից պակաս աշխատանքների կատարմամբ՝ պայմանավորված պայմանագրերի փոփոխությամբ, ինչպես նաև ապրանքների մատակարարման հետ կապված՝ համայնքների ցուցակի և պահանջվող տեխնիկայի ցանկի ճշտմամբ: Օգտագործված գումարի շրջանակներում տարբեր մարզերում իրականացվել է շինարարական աշխատանքների 10 ծրագիր, գնվել և ՀՀ տարբեր մարզերի համայնքներին են հանձնվել 2274 միավոր կահույք, 67 միավոր տեխնիկա և 100 աղբարկղ:

286.7 մլն դրամ օգտագործվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի կառավարման նպատակով՝ կազմելով ծրագրված

ցուցանիշի 88.7%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում ապրանքների և ծառայությունների նախատեսվածից ցածր գնով ձեռքբերմամբ, տրանսպորտային նյութերի՝ նախատեսվածից փոքր ծավալով գնմամբ և թափուր հաստիքների առկայությամբ:

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ խոշորացվող համայնքներում հանրային ծառայությունների բարելավման, ընդլայնման, միջհամայնքային ենթածրագրերի նախագծման, ընտրության և իրականացման նպատակով օգտագործվել է 427.6 մլն դրամ՝ ծրագրվածի 69.7%-ը, ինչը պայմանավորված է արևային կայանների տեղադրման հետ կապված ընթացակարգային խնդիրներով, որոնց պատճառով աշխատանքների սկիզբը հետաձգվել է հաջորդ տարի: Օգտագործված գումարի շրջանակներում վճարվել են նախորդ տարի կատարված աշխատանքների դիմաց պահված երաշխիքային գումարները և ձեռք է բերվել գույք: Ծրագրի նպատակն է Հայաստանի հարավում ընտրված համայնքների կարողությունների բարելավումը, որպեսզի վերջիններս կարողանան իրենց բնակիչներին ապահովել ենթակառուցվածքներով և հանրային ծառայություններով: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ևս 4.4 մլն դրամ (նախատեսվածի 91.3%-ը) տրամադրվել է ծրագրի 4 խորհրդատուների վարձատրությանը, ինչպես նաև ապրանքների ձեռք բերմանը: Շեղումը պայմանավորված է խնայողություններով:

Նախատեսված 8.8 մլն դրամի դիմաց 31.3 մլն դրամ է օգտագործվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օժանդակության տրամադրման, միջհամայնքային ենթածրագրերի նախագծման, ընտրության և իրականացման աշխատանքների ֆինանսավորման նպատակով: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2018 թվականին նախատեսված ապրանքների մատակարարման ուշացման պատճառով 2019 թվականին վճարումների իրականացմամբ:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրին հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել է 26.1 մլն դրամ կամ նախատեսվածի 94%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսված 1605 ծառայողի փոխարեն վերապատրաստվել է 1499 ծառայող, որից 778-ը՝ համայնքային ծառայողներ, 648-ը՝ համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ, 73-ը՝ մարզպետարանների աշխատակիցներ: Շեղումը պայմանավորված է վերապատրաստվողների փաստացի թվով:

Հաշվետու ժամանակահատվածում *Կոշտ թափոնների կառավարման* ծրագրի իրականացման համար պետական բյուջեից հատկացված 3.7 մլրդ դրամի դիմաց փաստացի օգտագործվել է 159.7 մլն դրամը (4.3%): Ծրագրում նախատեսված 6 միջոցառումներից մասնակիորեն կատարվել են 2-ը: Մասնավորապես՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզի կոշտ թափոնների կառավարման խորհրդատվության համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 124.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 54.3%-ը: Ծրագրի շրջանակներում ընտրված խորհրդատվական կազմակերպությունների կողմից 2019 թվականին նախատեսվել էր իրականացնել աղբավայրի նախագծման, վերաբեռնման կայանների նախագծման, սարքավորումների և տեխնիկայի տեխնիկական բնութագրերի կազմման աշխատանքներ, դրանց մրցութային գործընթացներին աջակցություն, աղբահանության սխեմաների մշակում, կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) ընկերության ստեղծմանն ուղղված իրավական և ինստիտուցիոնալ աշխատանքներ, իրազեկման արշավներ, աղբահանության վարձավճարների քաղաքականության մշակում: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային մրցույթը հայտարարվել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին, ուստի ժամկետի սղության պատճառով պայմանագրեր չեն կնքվել, և ընտրված խորհրդատվական կազմակերպությունների կողմից կատարվել են մասնակի աշխատանքներ, մասնավորապես՝ իրականացվել են աղբավայրի նախագծման և ծրագրի շրջանակներում նախատեսված մրցութային գործընթացներին աջակցության աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հատկացված 151.6 մլն դրամից օգտագործվել է 35.3 մլն դրամը, քանի որ ծրագրի շրջանակներում հաշվետվությունների ներկայացումը և հաստատումն անմիջական կապ ունեն նոր աղբավայրի կառուցման շինարարական աշխատանքների հետ, որոնք նախատեսված են մյուս ծրագրերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված աշխատանքների ձեռք բերման մրցույթը չի ավարտվել և կապալառուի հետ պայմանագիրը չի կնքվել, ուստի խորհրդատուների կողմից հաշվետվությունները չեն ներկայացվել:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման» վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով նախատեսված համապատասխանաբար 259.4 մլն դրամը և 1.8 մլրդ դրամը չեն օգտագործվել, քանի որ միջազգային մրցույթը հայտարարվել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին, և հայտերի ընդունման վերջնաժամկետ էր սահմանվել 2020 թվականի հունվարի 24-ը:

Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագրերին հատկացված համապատասխանաբար 1.1 մլրդ դրամը և 268.2 մլն դրամը չեն օգտագործվել, քանի որ նոր աղբավայրի կառուցման աշխատանքների համար հայտարարված մրցույթը գնահատման փուլում է և նախատեսվում է ավարտել 2020 թվականի 2-րդ եռամսյակում:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից *Ճանապարհային ցանցի բարելավման* ծրագրին ուղղվել է շուրջ 45.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 78.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների, պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, ինչպես նաև ճանապարհային տրանսպորտի բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Մասնավորապես՝ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների համար նախատեսված 14.3 մլրդ դրամից օգտագործվել է 12.8 մլրդ դրամը (89.3%-ը): Շեղումը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով և ներկայացված կատարողական ակտերով, ինչպես նաև ճանապարհներում թերությունների առկայության հետևանքով կատարված աշխատանքների մի մասի ավարտական ակտերի չհաստատման և պայմանագրի գումարի 5 տոկոսների չվճարման հանգամանքներով: 2019 թվականին կնքված միջին նորոգման աշխատանքների կապալի պայմանագրերով նախատեսված 148.4 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներից դեկտեմբերի 30-ի դրությամբ կատարվել և ընդունվել են 139.2 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների միջին նորոգման աշխատանքները, իսկ մնացած 9.2 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների միջին նորոգման աշխատանքները չեն ավարտվել անբավարար եղանակային պայմանների պատճառով: Իրականացվել են նաև ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ամառային (2967.8 կմ) և ընթացիկ ձմեռային (3396.1 կմ), ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող ու առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և մետաղական արգելափակոցների պահպանման ու վերականգնման (669.5 կմ) աշխատանքներ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների համար հատկացված միջոցներն օգտագործվել են 96.6%-ով՝ կազմելով շուրջ 1.3 մլրդ դրամ: 2019 թվականի ընթացքում կատարվել են 1235.9 կմ երկարությամբ ընթացիկ ամառային և 2303 կմ ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ: Ծախսերի խնայողությունը

պայմանավորված է նվազեցման գործակիցների կիրառմամբ, գնման գործընթացի արդյունքում արձանագրված ավելի ցածր գներով, ինչպես նաև ձյան տեղումների սակավության արդյունքում ձմեռային պահպանման աշխատանքների՝ նախատեսվածից պակաս ծավալով:

16.1 մլն դրամ՝ նախատեսված միջոցների 97%-ը, ուղղվել է Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի կարգավորմանը, ինչի շրջանակներում միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին և վարորդներին 2019 թվականին տրամադրվել է 91 թվային տախոգրաֆի քարտ:

Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողության, ուսումնասիրությունների և փորձաքննությունների համար հատկացված 218.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի ընթացքում կատարվել են ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում, երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն, ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում, ավտոճանապարհների և դրանց ինժեներական կառույցների (կամուրջներ, թունելներ, մետաղական արգելափակոցներ) վիճակի պարբերական ուսումնասիրությունների իրականացում, տեխնիկապես հիմնավորված վերականգնողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, կապալառու կազմակերպությունների աշխատանքի դիտարկում և գնահատում, լաբորատոր փորձարկումների իրականացում: ՊՈԱԿ-ի կողմից գույքագրվել և տեսաձայնագրվել են 290.3 կմ երկարությամբ միջպետական նշանակության ճանապարհահատվածներ և 326.1 կմ երկարությամբ հանրապետական նշանակության ճանապարհահատվածներ: Իրականացվել են ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Իրականացվել է 74 օբյեկտների վերականգնման աշխատանքների մշտադիտարկում: 2019 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կատարվել են 112 ավտոմոբիլային ճանապարհների, 11 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների տեխնիկական առաջադրանքների մշակում, նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների գնման հայտերի կազմում, ինչպես նաև 90 օբյեկտների հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ընդունում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ծրագրի շրջանակներում ավտոճանապարհների բարեկարգման աշխատանքներին տրամադրվել է ավելի քան 4.4 մլրդ դրամ կամ նախատեսված

միջոցների 83.1%-ը: Ծրագրի շրջանակներում վերականգնվել է 70.5 կմ ճանապարհ՝ նախատեսված 60 կմ-ի դիմաց (կատարվել են նաև 2020 թվականի համար նախատեսված աշխատանքներ): Ծախսերի ծրագրից շեղումը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքները ավարտվել են 2019 թվականի դեկտեմբերին, և ավարտված շինարարական օբյեկտները շահագործման ընդունող հանձնաժողովների ակտերի ստորագրման գործընթացը հնարավոր չի եղել ավարտել հաշվետու տարվա ընթացքում, որի արդյունքում հետավարտական երաշխիքային գումարների վճարումները տեղափոխվել են 2020 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի և լրացուցիչ ծրագրի շրջանակներում համակարգման և կառավարման գծով ծախսերը կազմել են համապատասխանաբար 1.7 մլն դրամ (98.3%) և 666.1 մլն դրամ (60.4%): Վերջինիս հիմնական պատճառն այն է, որ տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրերի շրջանակներում հաշվետվությունները ներկայացվել են 2019 թվականի դեկտեմբերին 30-ին, որոնց դիմաց վճարումները հետաձգվել են 2020 թվական:

Ասիական զարգացման բանկի իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի համակարգման և կառավարման ծախսերը կազմել են 523.8 մլն դրամ կամ նախատեսվածի 51.3%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ խորհրդատուի կողմից նոյեմբեր և դեկտեմբերի ամիսների համար մատուցված ծառայությունների դիմաց հաշիվները ներկայացվել են տարեվերջին և գտնվում են ստուգման փուլում: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին մատուցվել են Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կմ38+450-կմ90+191 (Թումանյան-Բագրատաշենի սահմանային անցակետ) 51.74 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման շինարարական աշխատանքների և հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքների հեղինակային հսկողության, նախագծային փոփոխությունների և արդիականացման, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) իրագործման և ծրագրի ֆինանսական աուդիտի խորհրդատվական ծառայություններ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման ծրագրի համակարգման և կառավարման ծախսերը կատարվել են 51%-ով՝ կազմելով 61.5 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի հետ կապված առկա դատական գործերով, ինչպես նաև խորհրդատուների կողմից հաշվետու ժամանակահատվածում հաշիվները չներկայացնելու հանգամանքով:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագրի (Տրանշ 3) շրջանակներում օգտագործվել է նախատեսված

միջոցների 83.9%-ը՝ 4 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքները հաշվետու տարում չեն ավարտվել, մասնավորապես՝ Թալին-Գյումրի ավտոճանապարհի 6-րդ ենթահատվածում կատարվել են նախագծային փոփոխություններ, ճշգրտվում են հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքների ծավալները: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները, ինչպես նաև լաբորատոր սարքավորումների ձեռքբերում:

Նույն ծրագրի համակարգման և կառավարման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 75.8%-ը՝ պայմանավորված նրանով, որ ինժեների կողմից ներկայացված թիվ 7 փոփոխման հրահանգը գտնվել է ԱՋԲ-ում՝ հաստատման փուլում: Ծրագրի Տրանշ 2-ի համակարգման և կառավարման ծախսերը կատարվել են 56.1%-ով՝ կազմելով 404.7 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի կառավարման խորհրդատու ինժեների պայմանագրի ժամկետը լրացել է հուլիս ամսին, և Ժամկետի երկարաձգման ու ավարտի հստակեցման, կապալառուի աշխատանքների ամփոփման, վերջնական հաշվետվությունների ներկայացման արդյունքում անհրաժեշտ էր ներկայացնել պայմանագրի փոփոխման կարգադրագիր, որը գտնվել է ԱՋԲ-ի կողմից հաստատման փուլում:

Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի (Տրանշ 3) շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 795.7 մլն դրամ (37.4%) և 794.3 մլն դրամ (41.4%): Ծրագրի շրջանակներում իրականացվում է Լանջիկ-Գյումրի շուրջ 27.5 կմ ճանապարհահատվածի կառուցումը: Քանի որ ծրագիծն ամբողջությամբ անցնում էր պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտու տարածքով, ՀՀ Շիրակի մարզի Բենիամին համայնքում իրականացվել են նախագծային փոփոխություններ: Ծախսերի՝ ծրագրից շեղումը պայմանավորված է նրանով, որ վճարումների հաստատումը ԵՆԲ-ից ստացվել է 2020 թվականին:

ԵՆԲ աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգման և կառավարման միջոցառման շրջանակներում օգտագործվել է 490.4 մլն դրամ կամ նախատեսվածի 67.1%-ը, քանի որ խորհրդատուի կողմից իրականացված Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների վերահսկողության ծառայությունները հաշվետու ժամանակահատվածում գտնվել են ԵՆԲ-ի կողմից ընդունման գործընթացում: Նույն ծրագրի վարկային բաղադրիչի գծով նախատեսված 170 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Նշված միջոցների հաշվին նախատեսվել էր շարունակել Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների վերահսկողության ծառայությունների ձեռքբերումը: Խորհրդատուի կողմից համապատասխան ծառայությունները մատուցվել են, սակայն պայմանագիրը կնքված չլինելու պատճառով վճարումները հետաձգվել են:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգման և կառավարման նպատակով օգտագործվել է 366.8 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 82.3%-ը՝ պայմանավորված խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների համար հաշիվները ոչ ամբողջությամբ ներկայացնելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են Քաջարան-Ագարակ հատվածի մանրամասն նախագծման աշխատանքները:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցման և հիմնանորոգման համար նախատեսված 2.9 մլրդ դրամից օգտագործվել է 1.4 մլրդ դրամը կամ 47.6%-ը: Միջոցառման շրջանակներում նախատեսվել էր հիմնանորոգել Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի (Թումանյան-Բագրատաշենի սահմանային անցակետ) 51.74 կմ երկարությամբ հատվածը: Ծախսերի ցածր կատարողականը կապված է պլանավորված տեմպով աշխատանքների իրականացմանը խոչընդոտող անընդհատ երթևեկության, հորատապայթեցման աշխատանքների օրերի ու ժամերի համաձայնեցման գործընթացի հետաձգման, հողերի օտարման հետ կապված խնդիրների, աշխատանքների ընթացքում ի հայտ եկած՝ նոր կոմունիկացիաների տեղափոխման հետ կապված խնդիրների հետ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հողային, հորատապայթեցման, ջրահեռացման խողովակների և հենապատերի կառուցման, վաքերի տեղադրման, կամուրջների հիմնանորոգման, ծածկի ֆրեզավորման, նոր կոյուղագծի կառուցման, կապի մալուխների տեղափոխման աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի համար նախատեսված շուրջ 1.1 մլրդ դրամից օգտագործվել է 9.3%-ը՝ 98.3 մլն դրամ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կամրջի կառուցման աշխատանքները գտնվել են նախագծման փուլում, և կապալառուի ներկայացրած նախագիծը հաշվետու տարում չի ընդունվել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից ու գտնվել է ստուգման փուլում: Նույն ծրագրի համակարգման և կառավարման ծախսերը կազմել են 104 մլն դրամ կամ նախատեսվածի 41.1%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների մի մասի համար 2019 թվականին հաշիվներ չեն ներկայացվել:

2019 թվականին պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծախսերը կազմել են 15.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 89.7%-ը: 2019 թվականին պետական բյուջեի միջոցներով ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 243.1 կմ ընդհանուր երկարությամբ

պետական նշանակության ավտոճանապարհներից հիմնանորոգվել է 153.3 կմ-ը. աշխատանքների մի մասը չի ավարտվել եղանակային վատ պայմանների պատճառով: Ծախսերի կատարողականը պայմանավորված է նաև ճանապարհներում թերությունների առկայության հետևանքով կատարված աշխատանքների մի մասի ավարտական ակտերը չհաստատելու և պայմանագրի գումարի 5 տոկոսները չվճարելու հանգամանքներով:

Հաշվետու տարում 77.4 մլն դրամ է տրամադրվել 3 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման համար, որը կազմել է նախատեսված միջոցների 25.6%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է եղանակային վատ պայմաններով, ինչպես նաև թերությունների առկայության հետևանքով կատարված աշխատանքների մի մասի ավարտական ակտերը չհաստատելու և պայմանագրի գումարի 5 տոկոսները չվճարելու հանգամանքներով:

2019 թվականի 1.6 մլրդ դրամ տրամադրվել է *Փախստականների ինտեգրմանն աջակցության* ծրագրին, որը կատարվել է 99.7%-ով: Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցների հիմնական մասը՝ շուրջ 1.5 մլրդ դրամ (100%), տրամադրվել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստական 112 ընտանիքների բնակարանային ապահովմանը:

31.4 մլն դրամ է (98.4%) տրամադրվել ապաստան հայցողների կեցության խնդիրների լուծման միջոցառումների իրականացմանը, որի շրջանակներում 66 հոգու տրամադրվել է ժամանակավոր կացարան, սնունդ, մատուցվել են իրավաբանական խորհրդատվական անվճար ծառայություններ:

36.3 մլն դրամ (97.5%) ուղղվել է ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծմանը, որի շրջանակներում «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի կողմից սպասարկման ենթակա հանրակացարանների թվով 11 բնակարաններում և պահեստում կատարվել են մասնակի շինվերանորոգման աշխատանքներ, որոշ մասնաշենքերում աստիճանավանդակների, հարթ տանիքի մասնակի շինվերանորոգման և խմելու ջրի ու կոյուղու խողովակաշարը նորով փոխարինելու աշխատանքներ:

ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց համար քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպման նպատակով հատկացված 960 հազար դրամից օգտագործվել է 240 հազարը (25%)՝ պայմանավորված շահառուների՝ կամավորության սկզբունքով դասընթացին մասնակցելու հանգամանքով:

Նախատեսված ամբողջ ծավալով՝ շուրջ 2.1 մլն դրամ օգտագործվել է ապաստանի ընթացակարգում թարգմանչական ծառայությունների ձեռք բերման նպատակով: Միջոցառման շրջանակներում 106 ապաստան հայցողների մատուցվել են իրենց հասկանալի լեզվով հարցազրույցի անցկացման, ինչպես նաև ապաստանի ընթացակարգում անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանչական ծառայություններ՝ նախատեսված 30-ի դիմաց:

Ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողներին դրամական օգնության ծախսերը կատարվել են 70.2%-ով՝ կազմելով 2.6 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ շահառուներին գումարները տրամադրվում են երեք ամիս ժամկետով, վճարային ժամանակաշրջանի ընթացքում եղել են շահառուներ, որոնց դրամական օգնություն տրամադրելու որոշումները դադարեցվել են՝ նախքան երեք ամիսը լրանալը: 2019 թվականին ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողների թիվը կազմել է 60՝ նախատեսված 65-ի դիմաց:

ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրման համար օգտագործվել է 9.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 87.6%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ եղել են շահառուներ, որոնց վճարումները դադարեցվել են մինչ սահմանված ինն ամիսը լրանալը, շահառուներ, որոնց վճարման իրավունքը ծագել է 2018 թվականին և տեղափոխվել 2019 թվական, ինչպես նաև շահառուներ, որոնց վճարման իրավունքը ծագել է 2019 թվականին և շարունակվելու է 2020 թվականին: 2019 թվականին բնակարաններ վարձակալելու նպատակով փոխհատուցում ստացող ընտանիքների թիվը կազմել է 39՝ նախատեսված 25-ի դիմաց:

Երկաթուղային ցանցի զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսված 377.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որը տրամադրվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին՝ որպես ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց սուբսիդավորում:

Պետական գույքի կառավարման ծրագրի շրջանակներում պետական բյուջեից տրամադրվել է 579.4 մլն դրամ՝ 42.1%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացված խոշոր մուտքերով, որոնք նախատեսված 1.3 մլն դրամի դիմաց կազմել են 699.9 մլն դրամ:

623.6 մլն դրամ (88.1%) կազմել են պետական գույքի կառավարման համակարգման, խորհրդատվության և մոնիտորինգի ծառայությունների համար օգտագործված միջոցները: Շեղումը հիմնականում պայմանավորված է էներգետիկ ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ:

Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի սպասարկման համար «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 2.3 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 63.3%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պետական գույքի ավտոմատացման ծրագրի սպասարկման անհրաժեշտությունն առաջացել է հունիս ամսից:

Ավելի քան 2.1 մլն դրամ (71.5%) օգտագործվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկման նպատակով հատկացված 8.5 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագիրը չի շահագործվել, ուստի կայքի սպասարկման անհրաժեշտություն չի առաջացել:

ՀՀ վիճակագրական կոմիտեի շենքային պայմանների բարելավման համար նախատեսված 2.3 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ շենքի սեյսմիկ վիճակից ելնելով՝ նպատակահարմար չի համարվել ծախսեր իրականացնելը:

Պետական գույքի կառավարման ծրագրում ընդգրկված մնացած 10 միջոցառումները կատարվել են նախատեսված ծավալով, որոնց հատկացվել է ընդհանուր առմամբ 651.3 մլն դրամ: Մասնավորապես՝ 313.7 մլն դրամ հատկացվել է «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայություններ» միջոցառմանը, որի շրջանակներում սպասարկվել են Կառավարական թիվ 2 և 3 շենքերը, իրականացվել է պետական գույքի հաշվառման թվով 7334, գույքի գնահատման 3326 և գույքի գույքագրման և ուսումնասիրությունների անցկացման 323 աշխատանքներ: 145.7 մլն դրամ են կազմել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա շահութահարկի գծով կամ շրջանառության հարկի գծով պարտավորությունների կատարման ծախսերը: 61 մլն դրամի և 52.7 մլն դրամի ֆինանսական աջակցություն է տրամադրվել համապատասխանաբար լուծարման գործընթացում գտնվող առևտրային կազմակերպությանը և մասնավորեցման ծրագրում ընդգրկված առևտրային կազմակերպությանը: «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական բյուջեից հատկացվել է 30.8 մլն դրամ, որի շրջանակներում ՀՀ կառավարության որոշումներով իրականացվել է թվով 483 պետական գույքի աճուրդով վաճառքի կազմակերպում և անցկացում: 16.1 մլն դրամ և 7.9 մլն դրամ են կազմել համապատասխանաբար «Նյուտեք Շին» ՍՊԸ-ին և «Բիզնես-Պլաս» ՍՊԸ-ին պատկանող գույքը սնանկության դատարանի որոշումների հիմքով ՀՀ-ին փոխանցելու նպատակով սնանկության կառավարչի վարձատրության ծախսերը: 15 մլն դրամ հատկացվել է Կառավարական N 2 շենքում տեղակայված սարքերի և սարքավորումների հետերաշխիքային սպասարկման նպատակով, որի շրջանակներում իրականացվել է Կառավարական N 2 շենքում տեղակայված վերելակների, ջեռուցման, հովացման և էլեկտրասնուցման համակարգերի սպասարկումը: 7.4 մլն դրամի պետական աջակցություն է տրամադրվել հիմնադրամներին՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալական

վճարների մասով: 895.2 մլն դրամ են կազմել ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները:

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում շուրջ 27.8 մլն դրամ հատկացվել է ՀՀ Լոռու մարզպետարանին՝ մարզի Գուգարքի համայնքի էներգետիկների 3-րդ փողոցի հրդեհված N 5 բազմակացարան ոչ հիմնական շինության նախկին բնակիչներ հանդիսացող 7 ընտանիքի բնակարանային խնդիրը բնակարանի գնման վկայագրի տրամադրման միջոցով լուծելու համար: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով:

196.7 մլն դրամ (ծրագրի 97.1%-ը) օգտագործվել է *Միգրացիոն բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման* ծրագրի շրջանակներում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պահպանման ծախսերի տնտեսմամբ: Միգրացիոն բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման միջոցառման շրջանակներում օգտագործվել է 183.1 մլն դրամ (ծրագրի 96.9%-ը), արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և Միգրացիոն ծառայության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովմանը՝ համապատասխանաբար 2.4 մլն դրամ (99.8%) և 5.5 մլն դրամ (98.2%), իսկ արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար և ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 5.6 մլն դրամ և 72 հազար դրամ:

Շուրջ 51.1 մլն դրամ՝ նախատեսված միջոցների 95.6%-ն *Այլընտրանքային աշխատանքային ծառայության* ծրագրի շրջանակներում տրամադրվել է 161 այլընտրանքային աշխատանքային ծառայողներին որպես դրամական բավարարում և դրամական փոխհատուցում՝ նախատեսված 186-ի դիմաց: Շեղումը հիմնականում պայմանավորված է փաստացի ծառայողների քանակով:

Քաղաքային զարգացման ծրագրի ծախսերի 2019 թվականի կատարողականը կազմել է 67.3% կամ 19.4 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է տվյալ բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրին պետական աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսված 600 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ հաշվետու ժամանակահատվածում մրցութային փաթեթները ԵՆԲ-ի կողմից հաստատված չեն եղել: Մրցութային փաթեթները հաստատվում են որոշ ուսումնասիրությունների հիման վրա,

մասնավորապես՝ սեյսմիկ աուդիտի, էներգախնայողության աուդիտի, ինչպես նաև նախագծային աշխատանքների հիման վրա, ուստի մրցութային փաթեթների հաստատումը հնարավոր կլինի վերը նշված բոլոր աշխատանքները կատարելուց հետո: Ծրագրի շրջանակներում նախատեսված է Երևանի քաղաքապետարանի կողմից հանրային շենքերում իրականացնել էներգաարդյունավետության և էներգախնայողության աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 43.6%-ը՝ 286.5 մլն դրամ, ինչը պայմանավորված է տրանսպորտի ոլորտի վերակազմավորման և Երևանի տրանսպորտի մարմնի ստեղծման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մրցութային գործընթացը հաջորդ տարի տեղափոխելու հանգամանքով: 2019 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել է Արգավանդ-Շիրակ ճանապարահահատվածի շինարարական աշխատանքների վերահսկողությունը, ավարտվել են Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր ցանցի և միասնական տոմսային համակարգի մշակման աշխատանքները:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 72.8%-ը՝ 6.8 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվում են Բաբաջանյան–Աշտարակ և Արգավանդ-Շիրակ ճանապարհահատ-վածի հանգույցների կառուցման աշխատանքներ: Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ Բաբաջանյան փողոցի Բ4 թաղամասի բնակիչները խոչընդոտել են շինարարական աշխատանքների իրականացմանը՝ բարձրացնելով նախագծային փոփոխություններ կատարելու հարցը: Առկա է չլուծված դատական վեճ հողի օտարման և տարաբնակեցման հետ կապված, ինչի պատճառով շինարարական աշխատանքները նախատեսված ծավալով չեն իրականացվել:

ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների վարկային ու դրամաշնորհային ծրագրերի և նույն ծրագրի տեխնիկական համագործակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 902.7 մլն դրամ (նախատեսվածի 39.6%-ը), 470.1 մլն դրամ (նախատեսվածի 25.5%-ը) և 130.3 մլն դրամ (նախատեսվածի 36.3%-ը): Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ համայնքային փողոցների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ խնդիրներ՝ կապված առկա ստորգետնյա էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոմունիկացիաների տեղափոխման կամ նորոգման հետ: Աշխատանքների ժամանակին չկատարման համար խոչընդոտ են հանդիսացել նաև եղանակային պայմանները: 2019 թվականին ամբողջությամբ բարեկարգվել, հիմնանորոգվել, կահավորվել և արդիականացվել է 12 կմ

քաղաքային ճանապարհ և 1 հրապարակ՝ իրենց հարակից մայթերով և փողոցային լուսավորության համակարգով:

Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային և դրամաշնորհային ծրագրերից յուրաքանչյուրի շրջանակներում օգտագործվել է 143.7 մլն դրամ՝ նախատեսվածի համապատասխանաբար 14.4%-ը և 13.3%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է հորատանցման աշխատանքների դադարեցմամբ՝ կապված պայթեցումից առաջացած ցնցումներից Ֆիրդուսի թաղամասի խարխուլ սեփական տների բնակիչների բողոքների հետ: Իրավիճակի լուծման և ծրագրի հետագա ընթացքի վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել հորատանցման աշխատանքների վերսկսման նպատակով պայմանագրի նոր հավելվածի նախապատրաստման համար: ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 364.4 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ այս գումարի օգտագործման նախապայմանն այն է, որ ԵՆԲ-ի վարկային և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի դրամաշնորհային միջոցների օգտագործումը պետք է հավասարվի ՎԶԵԲ-ի օգտագործված վարկային միջոցներին:

ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության վարկային և դրամաշնորհային ծրագրերի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 288.7 մլն դրամ (նախատեսվածի 49.6%-ը), 31.9 մլն դրամ (նախատեսվածի 18.7%-ը) և 288.9 մլն դրամ (ծրագրի 45.2%-ը): Շեղումը պայմանավորված է նրանով, որ հաշվետու տարում շինարարական աշխատանքները չեն մեկնարկել, իսկ նախագծային աշխատանքները գտնվել են հաստատման փուլում:

Ամբողջությամբ օգտագործվել են Երևանի քաղաքապետին տեղական ինքնակառավարման լիազորությունների իրականացմանն աջակցության, Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայությունների, Երևան քաղաքի փողոցների ճանապարհաշինարարական աշխատանքների, Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման և վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են համապատասխանաբար 1.1 մլրդ դրամ, 2.2 մլրդ դրամ, 3.3 մլրդ դրամ, 2.7 մլրդ դրամ և 602.2 մլն դրամ: Մասնավորապես՝ Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայությունների շրջանակներում ապահովվել է 1673 կմ

երկարությամբ փողոցների և 2570 օբյեկտների արտաքին լուսավորությունը: Երևան քաղաքի փողոցների ճանապարհաշինարարական աշխատանքների շրջանակներում վերանորոգվել են 815 կմ երկարությամբ 550 փողոց, 789 մայթեր, բակային տարածքներ և միջբակային տարածքներ, ճաքալցվել է 70 փողոց: Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայություններից օգտվողների թիվը կազմել է շուրջ 20 մլն ուղևոր, որից ավելի քան 1.1 մլնը արտոնություններից օգտվողներն են, իսկ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններից օգտվողների թիվը կազմել է 4.3 մլն ուղևոր, որից 869.4 հազարը՝ արտոնություններից օգտվողներ:

Ավիացիայի բնագավառում վերահսկողության և կանոնակարգման ապահովման շրջանակներում օգտագործվել է 524.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 88.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի պահպանման ծախսերի տնտեսմամբ: Մասնավորապես՝ Ավիացիայի բնագավառում վերահսկողության և կանոնակարգման ծառայություններին տրամադրվել է 518.5 մլն դրամ կամ նախատեսվածի 88.4%-ը: Նախատեսված ծավալով օգտագործվել է օդային փոխադրումների ծառայության կազմակերպման և իրականացման համար նախատեսված 5.8 մլն դրամը, որն ուղղվել է Եգիպտոսում գտնվող քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխման նպատակով ավիաչվերթների իրականացմանը: Արտասահմանյան գործուղումների համար հատկացված 191.6 հազար դրամը չի օգտագործվել, քանի որ գործուղման փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետից ուշ:

2019 թվականի ընթացքում 3.5 մլրդ դրամ է օգտագործվել *Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման* ծրագրի շրջանակներում, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 65.2%-ը: Շուրջ 3.4 մլրդ դրամն ուղղվել է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներին, որը կատարվել է 65%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է պայմանավորված է նրանով, որ մի շարք դպրոցներում շինարարական աշխատանքները չեն սկսվել նախագծային փաստաթղթերի ուշացման պատճառով, որն իր հերթին պայմանավորված էր լրացուցիչ փորձաքննության անհրաժեշտությամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են շինարարական աշխատանքներ 10 դպրոցներում, այդ թվում՝ Արարատի մարզի 1 դպրոցում, Երևան քաղաքի 4 դպրոցներում, Գեղարքունիքի մարզի 1 դպրոցում, Լոռու մարզի 2 դպրոցում, Վայոց ձորի մարզի 1 դպրոցում, Սյունիքի մարզի 1 դպրոցում: Մշակվել է 19 նոր նախագիծ: 70.9 մլն դրամ են կազմել ծրագրի կառավարման ծախսերը, որոնք կատարվել են 66.4%-ով՝ պայմանավորված մրցույթների արդյունքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների նախատեսվածից ցածր գներով, կապի և կոմունալ ծառայությունների նախատեսվածից փոքր ծավալի սպառումով, աշխատակազմում թափուր հաստիքների առկայությամբ:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման շրջանակներում 48.4 մլն դրամ (նախատեսվածի 82.8%-ը) տրամադրվել է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կառուցված դպրոցների գույքով ապահովման համար: Շեղումը պայմանավորված է գնման մրցույթների արդյունքում ապրանքների՝ նախատեսվածից ավելի ցածր գներով ձեռքբերմամբ: Միջոցներն ուղղվել են Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 և Վանաձորի Ա. Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոցների կառուցապատման աշխատանքներին: Կառուցված դպրոցները բավարարում են ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին, մասնավորապես՝ սեյսմակայուն են առնվազն 9 բալ երկրաշարժի դեպքում, էներգախնայող են և այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավորություններ ունեն, մատչելի են հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մասնավորապես՝ ապահովված են վերելակով:

Տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 90.3%-ը՝ կազմելով շուրջ 60.3 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրման և Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: 2019 թվականին ենթակառուցվածքների զարգացման նպատակով օգտագործվել է ՀՀ մարզերին հատկացված սուբվենցիաների 65.9%-ը՝ 6.4 մլրդ դրամ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին նախատեսված 259 համայնքից փաստացի սուբվենցիա է ստացել 248 համայնք: Եղանակային պատճառներով պայմանավորված՝ չավարտված և առկա շինարարական թերությունների վերացման համար թվով 148 սուբվենցիոն ծրագրերի պայմանագրերի ժամկետները երկարաձգվել են մինչև 2020 թվականի օգոստոսի 1-ը:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է հատկացված միջոցների 37.4%-ը՝ 1.8 մլրդ դրամ: Դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակը տարածքային զարգացման պիլոտային 8 ծրագրերն են, որոնք կաջակցեն և կզարգացնեն մարզերում տարածքային, տեղական սոցիալ-տնտեսական պայմանները: Դրամաշնորհային ծրագրի նպատակներում հաշվի են առնվում նաև ազգային մակարդակով հաստատված ոլորտային ռազմավարությունները: Ծրագրերի իրականացման վերջնական արդյունքում նախատեսվում է ստեղծել 544 աշխատատեղ, ինչպես նաև բարձրացնել 336 ձեռնարկությունների մրցունակությունը: Ծրագրերի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են 180 նոր աշխատատեղեր և բարձրացվել է 160 ձեռնարկությունների մրցունակությունը: 2019 թվականին ծրագրի ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է նախատեսված աշխատանքների գնման գործընթացներում առաջացած խնդիրներով, ինչպես նաև Եվրոպական Միության ընթացակարգերով կատարված

աշխատանքների ընդունման սահմանված ժամկետայնությամբ: Կազմակերպություններից մի քանիսի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները գտնվում են ուսումնասիրման փուլում և դեռևս չեն ընդունվել Եվրոպական Միության կողմից:

Տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ 502 համայնքներին նախատեսված ֆինանսական աջակցությունը՝ ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաներն ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով շուրջ 51.1 մլրդ դրամ:

Սահմանամերձ համայնքներին հաշվետու տարում տրամադրվել է 731.3 մլն դրամի պետական աջակցություն՝ կազմելով նախատեսված միջոցների 78.7%-ը, ինչը պայմանավորված է համայնքների կոզմից գազի, էլեկտրաէներգիայի և ջրի սպառման ծավալներով: Միջոցառման շրջանակներում ապահովվում է «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումը, որով նախատեսվում է փոխհատուցել (ամբողջությամբ կամ մասնակի) սահմանամերձ համայնքների բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի գծով ծախսերը: 2019 թվականին գումարը տրամադրվել է ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերի 16 համայնքների և 38 բնակավայրերի:

Հաշվետու տարում շուրջ 4.9 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Արծվաշեն բնակավայրի վարչական ղեկավարի և աշխատակազմի պահպանման ծախսերի համար, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.1%-ը: Շեղումը պայմանավորված է կոմունալ ծախսերի համար հատկացված գումարների տնտեսմամբ:

Տարածքային զարգացման ծրագրում ընդգրկված մնացած 5 միջոցառումներն իրականացվել են նախատեսված ծավալով: Մասնավորապես՝ 5.8 մլն դրամի պետական աջակցություն է տրամադրվել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Վարագավանի և Պառավաքարի բնակավայրերին՝ մանկապարտեզների հիմնանորոգման համար, 477.3 հազար դրամ հատկացվել է ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքի գրադարանային պայմանների բարելավման համար, 2.1 մլն դրամ՝ ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի համայնքի նախադպրոցական հիմնարկի պահպանման համար, 1 մլն դրամ՝ համայնքների բազմաբնակարան շենքերի (Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի N 5 Ա շենքի) տեխնիկական վիճակի հետազննության աշխատանքներին և 289.2 մլն դրամ՝ չգազաֆիկացված համայնքների (ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազ գյուղի, Մեղրի և Ագարակ քաղաքների) գազաֆիկացման համար:

Ավիացիայի բնագավառում վերահսկողության և կանոնակարգման ապահովմանն աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվել է շուրջ 422.8 մլն դրամ կամ հատկացված միջոցների 54.1%-ը: Մասնավորապես՝ 422.8 մլն դրամ (56.1%) են կազմել ավիացիայի բնագավառում վերահսկողության և կանոնակարգման ապահովման միջոցառման ծախսերը՝ հիմնականում պայմանավորված որոշ միջոցառումների և գնումների գծով աշխատանքների անհրաժեշտության բացակայությամբ: Նույն հանգամանքով պայմանավորված՝ չի օգտագործվել նաև ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով նախատեսված 27.3 մլն դրամը:

Պետական գույքի կառավարման կոմիտեի ծրագրերի իրականացմանն աջակցությունը կազմել է շուրջ 6.1 մլն դրամ (100%), այդ թվում՝ 28 մլն դրամ տրամադրվել է շարժական գույքի պահառության կազմակերպման նպատակով, որն օգտագործվել է նախատեսված ծավալով, և 21.9 մլն դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

Շուրջ 21.9 մլրդ դրամ՝ ծրագրվածի 83.8%-ը, ուղղվել է *Ոռոգման համակարգի առողջացման* ծրագրին: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Մասնավորապես՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման ծրագրի խորհրդատվության և կառավարման միջոցառման շրջանակներում օգտագործվել է 344 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 32.1%-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ խորհրդատվական ծառայությունների մասով Գերմանիայի զարգացման վարկերի բանկ ուղարկված մասհանման հայտերի հաստատումները հաշվետու տարում չեն ստացվել: 2019 թվականի ընթացքում շարունակվել է նախագծահետազոտական աշխատանքների իրականացումը, ազդարարվել է 2020 թվականի կատարվելիք շինարարական աշխատանքների իրականացման մրցութային գործընթացի նախաորակավորման փուլի մեկնարկը, ինչպես նաև դեկտեմբեր ամսին կայացած աշխատաժողովի ընթացքում KfW բանկի, միջազգային փորձագետների, խորհրդատուների, Ջրային կոմիտեի և շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ՀՀ Շիրակի մարզի Ջրաձոր համայնքի վերաբնակեցման գործընթացի կազմակերպման մանրամասները: Նույն ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում նախատեսված 206.9 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված շրջակա միջավայրի և սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման հետաձգմամբ: Չեն օգտագործվել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

նախատեսված 85.7 մլն դրամի միջոցները՝ պայմանավորված նախատեսված փորձագիտական ծառայությունների մատուցման դիմաց ներկայացված կատարողականների ուշացմամբ, որոնց վճարումը հետաձգվել է 2020 թվական: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Կումայրիի ոռոգման ջրատար թունելի ընդլայնման, խողովակաշարի համակարգի կառուցման, մոտ 740 հեկտար տարածքի ավելի արդյունավետ ոռոգումն ապահովելու նպատակով ոռոգման սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացումը: Ծրագրի նպատակն է ապահովել Ախուրյանի գետի երկայնքով ջրի պաշարների կայուն օգտագործումը, բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության ազդեցության, շրջակա միջավայրի էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանումը, Կապս ջրամբարի շրջակա միջավայրի բնակչության անվտանգության ռիսկը:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.9 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 70.7%-ը, ինչը պայմանավորված է ներտնտեսային ոռոգման ցանցի շինարարական աշխատանքների մեկնարկի հետաձգմամբ, քանի որ Զարգացման ֆրանսիական գործակալության հետ դրամաշնորհային համաձայնագիրը դեռևս չի ստորագրվել, և դեռևս հստակեցված չեն Վեդի ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ցանցերի շինարարական աշխատանքների փորձնական տարածքները: Ծրագրի շրջանակներում ավարտվել են մոտեցնող և հեռացնող խողովակաշարերի կառուցման շինարարական և ջրամբարի պատվարի հիմնական (հողային, կավային) ցեմենտավորման և բետոնավորման աշխատանքները: Վեդի պատվարի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2021 թվականի մարտին: Մշակվել են Վեդի ջրամբարի իշխման տակ գտնվող և Վեդի գետից ինքնահոս սնվող ընդհանուր 4000 հա հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցման մանրամասն նախագծերը: Նույն ծրագրի խորհրդատվության և կառավարման համար նախատեսված 595.7 մլն դրամի դիմաց օգտագործվել է 346.4 մլն դրամ՝ ծրագրված միջոցների 58.2%-ը՝ պայմանավորված «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի գործունեության դադարեցմամբ, որի հետևանքով պահպանման ծախսերի մասով առաջացել է տնտեսում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգման նպատակով նախատեսված շուրջ 413 մլն դրամից օգտագործվել է 58.4 մլն դրամը (14.1%-ը)՝ պայմանավորված Գեղարդալճի ինքնահոս համակարգի շինարարության իրականացման խնդիրների առկայությամբ՝ Գողթ համայնքի բնակչության

բողոքների պատճառով, որոշ կատարողականների ուշ ներկայացմամբ, ինչպես նաև կատարված նախագծային փոփոխություններով:

Նույն ծրագրի խորհրդատվության և կառավարման համար նախատեսված 195.3 մլն դրամի դիմաց օգտագործվել է 147.5 մլն դրամ (ծրագրվածի 75.5%-ը)՝ պայմանավորված «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի գործունեության դադարեցմամբ:

Ծրագրի նպատակներն են՝ կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Ծրագիրը բաղկացած է 3 մասերից.

- Ոռոգման համակարգի բարելավում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի՝ Մեղրիում, Գեղարդալճում, Բաղրամյան-Նորակերտում և Քաղցրաշենում՝ չորս ինքնահոս համակարգերի կառուցման միջոցով: Նախատեսված է մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող, հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում 13 ընտրված պոմպակայանների հեռացնող ջրանցքների մոտ՝ 58 կմ վերականգնման միջոցով:
- Կառավարման տեղեկատվություն՝ տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում հետևյալ ոռոգման կազմակերպությունների շահագործման, պահպանման ու կապիտալ նորոգման կարիքների վերլուծության և «Ջրառ» կազմակերպությունների ու ՋՕԸ-ների տեխնիկական աուդիտի իրականացման նպատակով:
- Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգման նպատակով օգտագործվել է 1.6 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 77.3%-ը: Շեղումը պայմանավորված է երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման համար ընթացող մրցութային գործընթացների չեղարկմամբ և կրկին անցկացմամբ, որի արդյունքում էլ՝ կնքվելիք պայմանագրերով նախատեսվող կանխավճարները չեն փոխանցվել: Այս ծրագրի խորհրդատվության և կառավարման համար նախատեսված 636.2 մլն դրամի դիմաց օգտագործվել է 213.2 մլն դրամ (ծրագրվածի 33.5%): Ծրագրի շրջանակներում շարունակվել են մեխանիկականից ինքնահոսի անցման, մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերանորոգման շինարարական աշխատանքները, իսկ երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման համար ընթանում են մրցութային գործընթացներ:

Ոռոգման համակարգի առողջացման ծրագրում ընդգրկված՝ համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեցող ոռոգման համակարգի առողջացմանն աջակցության, ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության և Ոռոգում-ջրառ

իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերը կազմել են համապատասխանաբար 3.8 մլրդ դրամ, 10.9 մլրդ դրամ և 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են՝ ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնածախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը:

61.1 մլն դրամ է կազմել ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն աջակցությունը, որը տրամադրվել է ծրագրի 17.5%-ով: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ընդունվել է նոյեմբեր ամսին, և որոշմամբ նախատեսված աշխատանքների համար հայտարարված մրցույթների մեծ մասը չի կայացել մասնակիցների չներկայանալու պատճառով:

2019 թվականին ոռոգման համակարգերի հիմնանորոգման համար նախատեսված 348.8 մլն դրամից օգտագործվել է 59.7%-ը՝ 208.4 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աշխատանքների կատարման վերաբերյալ որոշումները հաստատվել են հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին, ինչպես նաև ռելիեֆով: Խորքային հորերի հորատման և վերականգնման աշխատանքները շարունակվում են և կավարտվեն 2020 թվականին:

Ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրման ծախսերը կազմել են 31 մլն դրամ կամ ծրագրվածի 68.8%-ը: Շեղումը պայմանավորված է աշխատանքների բարդությամբ, ինչի հետ կապված՝ նախագծող կազմակերպությունը դիմել է պայմանագրի երկարաձգման համար: Միջոցառման շրջանակներում իրականացվում են 2016 թվականից սկսած՝ ոռոգման համակարգերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման աշխատանքներ:

Ջրատեխնիկական կառույցների տեխնիկական վիճակի ուսումնասիրությունների նպատակով տրամադրվել է 10.5 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 65.4%-ը՝ պայմանավորված Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի լուծարմամբ:

Ափապաշտպան կառույցների վերականգնման աշխատանքների համար հատկացված 1.1 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ՝ Արաքս գետի գարնանային հորդացումների ժամանակ 39 սահմանային սյան հատվածում տեղի ունեցած գետի ափի ինտենսիվ ողողման հետևանքները վերացնելու համար:

ՀՀ պետական բյուջեից շուրջ 2 մլրդ դրամ է հատկացվել *Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարման* համար, որն օգտագործվել է ամբողջ ծավալով: Հատկացված գումարով

1.8 մլրդ դրամն ուղղվել է Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավման, 205.8 մլն դրամը՝ Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծախսերին: Ծրագիրն իրականացվել է 2017-2019թթ.: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացվել են Արփա-Սևան N2 թունելի շուրջ 21.3 գծմ երեսակների վերականգնման, 25.2 գծմ հատակների վերականգնման և ավելի քան 427.6 քմ տորկրետ լցամղման աշխատանքներ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

Հաշվետու ժամանակահատվածում 349.8 մլն դրամ ուղղվել է *Կոլեկտորադրենաժային ծառայությունների* ծրագրին և ապահովել 87% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի բարելավման ծախսերի կատարողականով, որը կազմել է 26.1 մլն դրամ կամ 39.8%: Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում էր հիմնանորոգել 559 մ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցեր, սակայն շինարարական աշխատանքները պայմանագրով նախատեսված ժամկետում չկատարելու հիմքով շինարարական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը լուծվել է:

323.7 մլն դրամ (96.2%) ուղղվել է Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների ֆինանսավորմանը, որոնց շրջանակներում իրականացվել են 192.52 կմ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման աշխատանքներ՝ նախատեսված 182 կմ-ի փոխարեն, իսկ փաստացի ջրահեռացման ծավալը կազմել է 1586.17 մլն խմ՝ նախատեսված 1550 մլն խմ-ի փոխարեն:

Հաշվետու ժամանակահատվածում 48.1 մլն դրամ ուղղվել է *Վերականգնվող էներգետիկայի* ծրագրի իրականացմանը՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 57.5% կատարում: Ցածր կատարողականը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի կատարողականով, որի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 7.9%-ը՝ 3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Քարքառում, իրականացնել հետախուզական հորատում էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսների առկայությունը և որակը հաստատելու նպատակով, սակայն կատարված աշխատանքների արդյունքները ցույց են տվել, որ երկրաջերմային կայանը տնտեսապես կենսունակ չի լինի էլեկտրաէներգիայի մատակարարման այլ տարբերակների համեմատությամբ, ուստի էլեկտրակայանի տեխնիկատնտեսական իրագործելիության հիմնավորման աշխատանքները չեն իրականացվել: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 45.2 մլն դրամ կամ ծրագրված

միջոցների 98.3%-ը, որն ուղղվել է գործարքային խորհրդատվության, գործառնությունների խորհրդատվության փորձագետի, սոցիալական պաշտպանության իրավական փորձաքննության աշխատանքների, ինչպես նաև ծրագրի կառավարման ծախսերին: Ծրագրի նպատակն է՝ օժանդակել Հայաստանի Հանրապետությանն արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի նախապատրաստման հարցում:

2019 թվականին *Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման* ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 46.9%-ը՝ 5.6 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Մասնավորապես՝ չեն օգտագործվել Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման վարկային ու դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգման միջոցառումների համար նախատեսված համապատասխանաբար 840.3 մլն դրամ և 1.4 մլրդ դրամի միջոցները, ինչպես նաև նույն ծրագրի իրականացման համար մատուցվող խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար ՎԶԵԲ և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցության շրջանակներում նախատեսված համապատասխանաբար 260.3 մլն և 218.8 մլն դրամի միջոցները, իսկ Եվրոպական ներդրումային բանկի աջակցության շրջանակներում նախատեսված 328 մլն դրամի օգտագործվել է 53.8 մլն դրամը: Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքների հետաձգումը պայմանավորված է խորհրդատվական պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, որի երկարացման նպատակով դոնոր կազմակերպությունների հետ ընթանում են բանակցություններ: Նշվածով պայմանավորված՝ ամբողջությամբ չի իրականացվել նաև ծրագրի շրջանակներում նախատեսված խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլի համար նախատեսված 1.8 մլրդ դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներն իրականացնող խորհրդատուի հետ բանակցությունների անցկացմամբ, որի մասով համաձայնություն ձեռք է բերվել միայն դեկտեմբերին, ինչի արդյունքում կկնքվի պայմանագրի փոփոխություն՝ աշխատանքների բնականոն ընթացքը ապահովելու համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվել են ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքներից դուրս մնացած 579 գյուղական բնակավայրերից ընտրված որոշ համայնքների

ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնում, ինչպես նաև Արմավիրի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում: Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վարկային ծրագրի երրորդ փուլի շրջանակներում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ նախատեսված էր համապատասխանաբար 302.3 մլն դրամ և 115.6 մլն դրամ ուղղել 6 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգմանը, որի դիմաց օգտագործվել է միայն 80.5 մլն դրամ՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի մասով: Վերջինիս կատարողականը պայմանավորված է շինարարական աշխատանքների համար հայտարարված մրցույթներն ավարտված չլինելու հանգամանքով, իսկ Եվրոպական ներդրումային բանկի աջակցության մասով միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ ծրագրի վարկային համաձայնագրի փոփոխությունը գտնվել է ստորագրման փուլում:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ենթակառուցվածքների երկրորդ ծրագրի երրորդ փուլի դրամաշնորհային ծրագրի ուղեկցող միջոցառման համար նախատեսված շուրջ 492.2 մլն դրամի միջոցների դիմաց հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է 314.1 մլն դրամը՝ պայմանավորված դրամաշնորհային միջոցներից Գերմանիայի զարգացման վարկերի բանկ ներկայացված 132,285.5 եվրո գումարի մասհանման հայտը հաստատված չլինելու հանգամանքով, ինչպես նաև ծրագրի ավարտի հետ կապված միջոցների տնտեսմամբ: Միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել գույքի կառավարման բազայի ծրագրային ապահովման, տեխնիկական վերազինման և աշխատակազմի վերապատրաստման ծառայություններ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրու) և Լոռու (Վանաձորի) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի երկրորդ փուլի համար նախատեսված համապատասխանաբար 398.9 մլն դրամի և 230.6 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, քանի որ նախատեսված շինարարական աշխատանքների համար հայտարարված մրցութային գործընթացները հաշվետու տարում չեն ավարտվել:

2019 թվականին պետական բյուջեից 1.4 մլրդ դրամ է տրամադրվել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սուբսիդավորմանը՝ ապահովելով 100% կատարողական: Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սակագների մեղմացման նպատակով նախատեսված սուբսիդիայի գումարը տրամադրվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին 2018 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ

մատուցված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների դիմաց:

Հաշվետու տարում 3.3 մլրդ դրամ ֆինանսական աջակցություն է տրամադրվել խմելու ջուր մատակարարող ընկերությունների առողջացման նպատակով: Գումարն ուղղվել է «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների գույքը, ՀՀ կառավարությանը՝ ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի, նվիրատվությամբ հանձնելու արդյունքում գույքի մնացորդային արժեքի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի վերաձևակերպումից առաջացած ԱԱՀ-ի և տույժի գծով պարտավորությունների մարմանը:

Կապիտալ ներդրումային ծրագրի շրջանակներում ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների համար հատկացված 296.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Այն ՀՀ կառավարության որոշումներով նվիրաբերության պայմանագրով տրամադրվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ ՀՀ մարզերում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծահետազոտական փաստաթղթերի (թվով 50 նախագիծ) ձեռքբերման համար:

Կոյուղագծերի կառուցման աշխատանքների համար օգտագործվել է 19.7 մլն դրամ (ծրագրի 99.6%-ը) և տրամադրվել ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քըրք Քըրքորյան և Այգեստան 2 թաղամասերի կոյուղագծերի կառուցմանը:

Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգմանն ուղղվել է 128.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 28.5%-ը: Աշխատանքների ծավալներից ելնելով՝ 2019 թվականին սկսված աշխատանքներն ամբողջությամբ չեն ավարտվել, հայտարարվել է ձմեռային դադար, աշխատանքները նախատեսվում է ավարտել 2020 թվականին: 2019 թվականին իրականացվել են 6863.5 մ ջրագծի կառուցման, 564 մ տնային միացումների, 96 հատ անհատական ջրաչափական դիտահորերի հիմնանորոգման, 15 հատ փականային հորերի հիմնանորոգման աշխատանքներ:

2019 թվականին *Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայությունների* ծրագրի շրջանակներում ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման դիմաց «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 14.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 83.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորած է նրանով, որ տնօրենի պաշտոնավարումը հունիս ամսից ժամանակավորապես դադարեցվել է, և աշխատավարձը չի վճարվել: Ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները. հաշվառված երկրաբանական ուսումնասիրությունների և ընդերքօգտագործման իրավունքների հաշվառում, օգտակար հանածոների պաշարների շարժի

վերաբերյալ տարեկան հաշվետվությունների կազմում և պետական հաշվեկշռում հաշվառվող հանքավայրերի հաշվառում, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում ստացած տեղեկությունների ընդունում, պահպանում, թվայնացում և կայքում տեղադրում:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրի շրջանակներում օգտագործվել է պետական բյուջեից հատկացված միջոցների 99%-ը՝ կազմելով 630.2 մլն դրամ: Մասնավորապես՝ 624 մլն դրամը (ծրագրի 98.9%-ը) ուղղվել է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի միջոցառմանը, 6.2 մլն դրամը (ծրագրի 100%-ը)՝ արտասահմանյան պաշտոնական գործուղումներին:

Հաշվետու ժամանակահատվածում *Ջրային տնտեսության ոլորտում ծրագրերի համակարգման և մոնիտորինգի* ծրագրի շրջանակներում օգտագործվել է 366 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.1%-ը: Մասնավորապես՝ ջրային տնտեսության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի համար օգտագործվել է 361.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 98.3%-ը, որը պայմանավորված է խնայողություններով: Ջրային կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավմանն ուղղվել է 4.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 82.8%-ը, որը նույնպես պայմանավորված է տնտեսումներով: 14 հազար դրամ (100%) կազմել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները:

Հաշվետու ժամանակահատվածում *Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման* ծրագրի շրջանակներում նախատեսված 13.5 մլրդ դրամից օգտագործվել է 5 մլրդ դրամը կամ 37.1%-ը: Բնագավառում ներդրումներն ամբողջությամբ իրականացվում են արտաքին աջակցությամբ: Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող ներդրումները կազմել են 1.7 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 29.9%-ը՝ պայմանավորված աշխատանքների և սարքավորումների մատակարարումների ժամանակացույցերի փոփոխությամբ: «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին 2015 թվականի փետրվարի 5-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության համաձայն՝ ծրագրի ավարտման ժամկետը նախատեսվում է երկարաձգել մինչև

2021թ. դեկտեմբերի 31-ը: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են ծրագրի իրականացման նպատակով գլխավոր կապալառուի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի կանխավճարների և սահմանված կարգով նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ում կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման և պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցման նպատակով ներդրումների շրջանակներում օգտագործվել է 2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 59%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ էներգահամակարգի աշխատանքային ռեժիմների հետ կապված՝ չեն ավարտվել որոշ օդային գծերի օպտիկամանրաթելային ճոպանների տեղադրման աշխատանքները, որոնք տեղափոխվել են 2020 թվական: Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման խորհրդատվական և կառավարման ծառայությունների դիմաց վճարվել է 311.9 մլն դրամ կամ նախատեսվածի 48.8%-ը Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են աշխատանքների վերահսկողության և կառավարման խորհրդատվական ծառայությունների, վարկային միջոցներից օգտագործված գումարների նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների, ինչպես նաև նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց: Ծախսերի կատարողականը պայմանավորված է կապալառուի կողմից իրականացվող աշխատանքների երկարաձգմամբ, քանի որ խորհրդատուն պետք է իրականացնի ծրագրի կապալառուի կողմից իրականացվող աշխատանքների վերահսկողություն և կառավարման ծառայություններ, ուստի խորհրդատուի կողմից նախատեսված աշխատանքների մի մասը նույնպես տեղափոխվել է 2020 թվական: Բացի այդ, խնայողություններ կան նաև տոկոսավճարների գծով՝ պայմանավորված վարկային միջոցների պակաս օգտագործմամբ:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ «Աշնակ» և «Արարատ-2» ենթակայանների վերակառուցման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում իրականացված ներդրումները 2019 թվականին կազմել են 241.1 մլն դրամ կամ նախատեսվածի 18.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ երկարաձգվել է ծրագրի շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտման ժամկետը, միևնույն ժամանակ, անհրաժեշտությունից ելնելով, կրճատվել են պայմանագրով նախատեսված հրդեհաշիջման ինքնավար համակարգի նախագծման, մատակարարման և տեղակայման աշխատանքների ծավալները: Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում գլխավոր կապալառուի

կողմից կատարված որոշ շինմոնտաժային աշխատանքների դիմաց հաշիվ-ապրանքագրեր չեն ներկայացվել: Միևնույն ժամանակ նախատեսված էր «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման համար միջազգային մրցույթի արդյունքներով գլխավոր կապալառուի ընտրություն, պայմանագրի կնքում և կանխավճարի տրամադրում: Սակայն մրցույթը չի հայտարարվել, քանի որ մրցութային փաստաթղթերը գտնվել են Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի դիտարկման փուլում:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Աշնակ» ենթակայանի վերակառուցման ծրագրի խորհրդատվական ու կառավարման ծառայությունների շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 10.9%-ը՝ 3.8 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրի խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետի երկարաձգմամբ 2018 թվականի դեկտեմբերի 8-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Բացի այդ, խորհրդատուի մատուցած խորհրդատվական ծառայությունների դիմաց ներկայացված հաշիվ-ապրանքագրերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչի պատճառով դրանք չեն ընդունվել պատվիրատուի՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումները տեղափոխվել են 2020 թվական:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի կառուցման նպատակով ներդրումների և խորհրդատվական ու կառավարման ծառայությունների համար օգտագործվել է համապատասխանաբար նախատեսված միջոցների 61.4%-ը՝ 514.5 մլն դրամ և 43.6%-ը՝ 60.1 մլն դրամ: Ցածր կատարողականները պայմանավորված են այն հանգամանքով, որ նախատեսվում էր ծրագրի շրջանակներում իրականացնել լրացուցիչ աշխատանքներ, սակայն ծրագրի իրականացման ընթացքում նման անհրաժեշտություն չի առաջացել, և համապատասխան վճարումներ չեն իրականացվել: Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի կառուցման աշխատանքներն ավարտվել են, և ենթակայանը դրվել է լարման տակ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ-ում «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման նպատակով ներդրումները կազմել են բյուջեով հատկացված միջոցների 0.5%-ը՝ 5.3 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է կապալառուի կողմից աշխատանքները ոչ պատշաճ կատարելու պատճառով պայմանագրի լուծման հանգամանքով: Ենթակայանների վերակառուցման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով ներկայումս ընթանում են բանակցություններ հնարավոր կապալառուների հետ: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են սարքերի ու սարքավորումների ներկրման դիմաց սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի գծով:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման կառավարման ծառայությունների շրջանակներում օգտագործվել է հատկացված միջոցների 72.6%-ը՝ 160.4 մլն դրամ: Խորհրդատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում ծառայություններ չեն մատուցվել՝ պայմանավորված կապալառուի կողմից շինմոնտաժային աշխատանքների դադարեցմամբ: Միևնույն ժամանակ, ծրագրի իրականացման ժամանակացույցում առկա շեղումների հետևանքով վարկային միջոցներն օգտագործվել են նախատեսվածից փոքր ծավալով, որի արդյունքում վարկային միջոցներից օգտագործված գումարների նկատմամբ հաշվեգրվել է նախատեսվածից պակաս տոկոսագումար: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են վարկային միջոցներից օգտագործված գումարների նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների վճարման նպատակով:

Ռադիոակտիվ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսված 34.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ն իրականացրել է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումն ըստ առաջացած և հայտնաբերված թափոնների, մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից:

<u>ՀՀ առողջապահության նախարարության</u> պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են 12 ծրագրեր, որոնց ուղղվել է շուրջ 97.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 95.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ու Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակման ծրագրերի կատարողականով:

2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից 4.3 մլրդ դրամ տրամադրվել է *Հանրային առողջության պահպանման* ծրագրին՝ կազմելով նախատեսվածի 95%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Իմունականխարգելման ազգային ծրագիր» միջոցառման կատարողականով:

2019 թվականին պետական բյուջեից ավելի քան 1.8 մլրդ դրամ է օգտագործվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են հիվանդությունների վերահսկմանը և կանխարգելմանն ուղղված ծառայությունների մատուցում, ընթացիկ հակահամաճարակային և սանիտարահիգիենիկ նշանակության հետազոտություններ, վարակների

օջախների համաճարակաբանական հետազոտություններ, իմունականխարգելման հիգիենիկ ուսուցման և քարոզչության ծառայությունների ապահովում: Հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 452666 հետազոտություններ՝ կանխատեսված 542000-ի դիմաց:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 90.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացների արդյունքում պատվաստանյութերի՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ, փոխարժեքի փոփոխության արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև պատվաստումների թվով: Միջոցառման շրջանակներում ազգաբնակչության, ինչպես նաև նախազորակոչիկների և զորակոչիկների համար ձեռք են բերվել հնգավալենտ, վեցավալենտ, ռոտավիրուսային և պնևմակոկային ԱԿԴՓ և ԱԴՓ-Մ (դիֆթերիա, հեպատիտ Բ, փայտացում, կապույտ հազ, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակ, ռոտավիրուսային վարակ, պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ, խոզուկ և տուբերկուլոզ հիվանդությունների դեմ) պատվաստանյութեր, կառավարելի վարակիչ հիվանդությունների դեպքերի կանխարգելման և կայուն հակահամաճարակային իրավիճակ ապահովելու համար: Միջոցառման շրջանակներում իրականացվել է 881322 պատվաստում՝ նախատեսված 954500-ի դիմաց:

Արյան հավաքագրման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 258.3 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Միջոցառման շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց խնդիրն է արյան հավաքագրումը, բացթողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի մարզերում: Երևան քաղաքը սպասարկել է «Ռ.Յոլյանի անվան արյունաբանության կենտրոնը», որի առաջնային խնդիրներից են եղել դիսպանսեր հսկողության տակ գտնվող՝ արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլենով ապահովումը:

Առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 16.9 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Միջոցառման շրջանակներում իրականացվել են 900352 հանրային իրազեկման միջոցառումներ առողջապահության համակարգի գործունեության վերաբերյալ: Մասնավորապես՝ 2019 թվականին պատրաստվել և հեռարձակվել է 96 առողջապահական հեռուստահաղորդում, մշակվել և մամուլում հրապարակվել են բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ 256 մեթոդական ձեռնարկներ, տպագրվել են ՀՀ առողջապահության նախարարություն կողմից տրամադրվող 900000 ձևաթղթեր:

Հաշվետու տարում շուրջ 100 մլն դրամ է տրամադրվել ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի իրականացման նպատակով՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացվել են 8 միջոցառումներ: Մասնավորապես՝ պատրաստվել և հեռարձակվել են հակածխախոտային քարոզչական հոլովակներ, տպագրվել են պաստառներ, որոնք բաշխվել են առողջապահական կազմակերպություններին, զորամասերին, պատրաստվել են գովազդային վահանակներ, որոնք տեղադրվել են միջմարզային ճանապարհներին, Երևան քաղաքի բոլոր համայնքների բանուկ փողոցներում, միջմարզային և քաղաքային երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցներում, պատրաստվել են հակածխախոտային ուղղվածության գրաֆիտի նկարներ, հեռուստատեսային հաղորդումներ:

Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագրի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 55.5%-ը: Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվել է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ու դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում օգտագործվել են համապատասխանաբար 438.1 մլն դրամ և 218.1 մլն դրամ միջոցներ՝ ապահովելով 40.4% և 64% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է վարկային ծրագրի շրջանակներում շենքային պայմանների բարելավման ծախսերի կատարողականով, որը կազմել է 31.2% կամ 277.1 մլն դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ՀՀ Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում նոր մոդուլային տիպի բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոնների շինարարական աշխատանքների պայմանագրերի կնքման ուշացումով, որի պատճառ է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից լիցենզիաների ստացման կարգի փոփոխությունը: Վարկային ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 161.1 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 81.7%-ը՝ պայմանավորված Համաշխարհային բանկի հետ ձեռք բերված համաձայնությամբ, ըստ որի սկրինինգային աշխատանքների դիմաց վճարումներն իրականցվելու են այլ ծրագրի միջոցներով: Բացի այդ, մի շարք խորհրդատվական աշխատանքներ տարվա երկրորդ եռամսյակից վճարվել են դրամաշնորհային միջոցներից: Դրամաշնորհային ծրագրի կատարողականը պայմանավորված է 2019 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում կատարված հետազոտությունների դիմաց վճարումները 2020 թվական տեղափոխելու հանգամանքով, որոնք կիրականացվեն վարկային միջոցներից, քանի որ դրամաշնորհային ծրագիրն ավարտվել է 2019 թվականի դեկտեմբերի 31-ին:

2019 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Սքրինինգային հետազոտություններ: 2019 թվականին իրականացվել է 443687 սքրինինգային հետազոտություն: Կանանց մոտ իրականացվել է 46.8 հազար ՊԱՊ թեստ (արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման հետազոտություն), շուրջ 127.9 հազար քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն, շուրջ 253.8 հազար քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 14.5 հազար մեզի և արյան երրորդ հետազոտություն:

● Մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացում և որակի բարելավում: ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային նոր մասնաշենքի շինարարական և ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման՝ 2018 թվականին ավարտված աշխատանքների դիմաց վճարումները կատարվել են 2019 թվականին: Իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հեմոդիալիզի ծառայության ստեղծման նպատակով հեմոդիալիզի սարքերի և բազկաթոռների տեղադրման, բժշկական սարքավորումներով հագեցման աշխատանքներ: Իրականացվել են նաև ՀՀ Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի հիվանդանոցային համակարգերի՝ Եղեգնաձոր և Մարտունի քաղաքներում նոր մոդուլային տիպի բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոնների կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

Բացի այդ, ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատությունների համար ձեռք է բերվել 620 հատ պայուսակ՝ առաջին բժշկական օգնության և սպասարկման հավաքածուներով, և համակարգչային տեխնիկա ՀՀ առողջապահության նախարարության համար:

Հայաստանի Հանրապետությունում Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 6.5%-ը՝ 26.5 մլն դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է մամոգրաֆիայի շարժական սարքի ձեռք բերման կրկնակի մրցույթ անցկացնելու հանգամանքով, որի հետ կապված՝ պայմանագիրը կնքվել է երրորդ եռամսյակի վերջում, արդյունքում սարքի մատակարարումը տեղափոխվել է 2020 թվական: Մամոգրաֆիայի շարժական սարքի ձեռքբերման ուշացման հետ կապված՝ հետաձգվել են նաև հանրային իրազեկման քարոզարշավի և գործնական ուղեցույցների մշակման, ինչպես նաև համապատասխան բուժանձնակազմի ուսուցման ու վերապատրաստման գործընթացները: 2019 թվականին վճարումներն ուղղվել են ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահական

ծրագրերի իրականացման գրասենյակի՝ ծրագրի աշխատանքներին մասնակցած աշխատակիցների աշխատավարձերի ու հավելավճարների վճարմանը և պահպանման ծախսերին:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 578.3 մլն դրամ՝ ապահովելով 64.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կարիքների վերագնահատման արդյունքում առաջացած տնտեսումներով, գնումների մի մասը հաջորդ տարի տեղափոխելու հանգամանքով, մաքսազերծման ծախսերի տնտեսումներով, ինչպես նաև խոցելի խմբերի հետ աշխատող հասարակական կազմակերպությունների մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով՝ մասնակիցների կողմից ներկայացված ցածր գնային առաջարկով: Ծրագրի նպատակն է նպաստել հանրապետությունում ՄԻԱՎ համաճարակի նվազեցմանը՝ հակառետրովիրուսային բուժում տրամադրելով բոլոր նրանց, ովքեր ունեն վերջինիս կարիքը, հղի կանանց և ընդհանուր բնակչության համար ապահովելով խորհրդատվության և թեստավորման հասանելիությունը, իրականացնելով ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումներ դատապարտյալների և տեղաշարժվող բնակչության շրջանում, տրամադրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվություն, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը:

2019 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՄԻԱՎ վարակի հայտնաբերման և ախտորոշման համար նախատեսված թեստ-հավաքածուների ձեռքբերում,
- ՄԻԱՎ վարակի հակառետրովիրուսային բուժման համար նախատեսված դեղամիջոցների ձեռքբերում,
- ՄԻԱՎ վարակների բուժման համար նախատեսված դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում,
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության (ԽՀ) կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում,

● ՀՀ ԱՆ կախվածությունների բուժման ազգային կենտրոնում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, Սյունիքի մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, ինչպես նաև 9 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում,

● ՀՀ քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ-ի հետազոտության իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում 2190 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 498 թմրամիջոց գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում: Իրականացվել է 1340 դատապարտյալների և կալանավորների ՄԻԱՎ հետազոտություն, հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ ՄԻԱՎ նկատմամբ խոցելի խմբերի շրջանում իրականացվել է ավելի քան 9600 հետազոտություն, խնամք և աջակցություն է տրամադրվել թվով 688 ՄԻԱՎ վարակակրի:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 736.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 85.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է մաքսազերծման ծախսերի տնտեսումներով՝ պայմանավորված որոշակի առողջապահական սարքերի ավելացված արժեքի հարկից ազատված լինելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի ընթացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

● իրականացվել են վարակի վերահսկման ուժեղացման միջոցառումներ,

● տուբերկուլյոզով հիվանդներին բուժման խրախուսման նպատակով տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ դրամային փոխանցումների տեսքով,

● ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում, դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով, հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,

● իրականացվել են պերիֆերիկ լաբորատորիաներից խորխի տեղափոխման, տուբերկուլոզային ծառայությունների մոնիտորինգի և գնահատման, հաշվետվական էլեկտրոնային համակարգի կիրարկման միջոցառումներ,

● բժշկական (տեղաշարժման) հակացուցումներ ունեցող հիվանդների համար կազմակերպվել է տնային բուժում,

● աջակցություն Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝ խոցելի խմբերի շրջանում տուբերկուլոզի ակտիվ հայտնաբերման աշխատանքների իրականացման նպատակով,

● տուբերկուլոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով հակատուբերկուլյոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ, գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ: Բուժում է ստացել տուբերկուլոզով 1000-ից ավելի հիվանդ, և շուրջ 50-ը ստացել է սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում *Առողջության առաջնային պահպանման* ծրագրի շրջանակներում պետական բյուջեից օգտագործվել է շուրջ 25.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.2%-ը: Ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների գծով ծախսերը, որոնք կազմել են 24.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական բնակավայրերից նեղ մասնագիտացված խորհրդատվության և լաբորատոր-գործիքային հետազոտությունների ուղեգրման ծախսերի ցածր կատարողականով, ինչպես նաև բնակչության սոցիալական հատուկ խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի ծախսի տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի, հղիների, նախածննդյան և հետծննդյան հսկողություն իրականացնող մանկաբարձ-գինեկոլոգների, դիսպանսերային և նեղ մասնագետների կողմից բժշկական օգնություն և սպասարկում է (ներառյալ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները) իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է դեղորայք: Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների մասով ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված 214 բժիշկ-փորձագետների և 23 բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է 163.5 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության ծառայությունների միջին գնի նվազմամբ: Ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ցանկի 8842 դեպքի դիմաց 2019 թվականին իրականացվել է 9945 դեպքի բժշկական օգնություն: Բյուջեով նախատեսվածի համեմատ դեպքերի գերազանցումը փոխհատուցվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սկրինինգի անցկացման նպատակով տրամադրվել է 277.6 մլն դրամ՝ ապահովելով 98.3% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության ծառայությունների միջին գնի նվազմամբ: Նորածնային սկրինինգներն ուղղված են բնածին, ժառանգական հիվանդությունների հնարավորին վաղ ախտորոշմանը, ինչի շնորհիվ հնարավոր է հասնել հիվանդության բուժման կամ ախտաբանական վիճակի շտկման: Միջոցառումով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին իրականացվել է 125233 սկրինինգային հետազոտություն՝ նախատեսված 125203-ի դիմաց: Բյուջեով նախատեսվածի համեմատ դեպքերի գերազանցումը փոխհատուցվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Նեղ մասնագիտացված կենտրոններում ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 98.6%-ը՝ 264.5 մլն դրամ: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին իրականացվել է 96180 հետազոտություն՝ նախատեսված 160331-ի դիմաց: Միջոցառման կատարողականը պայմանավորված է ավելի թանկարժեք և ինֆորմատիվ հետազոտությունների իրականացմամբ:

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են 35 մլն դրամ՝ ապահովելով 81.4% կատարողական, որը պայմանավորված է միջոցառումն իրականացնող կազմակերպությունների կողմից մատուցված բժշկական օգնության ծառայությունների՝ նախատեսվածից փոքր ծավալով: Միջոցառման շրջանակներում հետազոտվել է 29205 երեխա՝ բյուջեով նախատեսված 35864-ի փոխարեն:

Հաշվետու տարում ավելի քան 2.6 մլրդ դրամ է օգտագործվել *առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի* նպատակով՝ կազմելով ծրագրի 67.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է առողջապահական կազմակերպությունների վերազինման ծախսերի կատարողականով:

«Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» և «Առողջապահության նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումների շրջանակներում տրամադրվել է համապատասխանաբար 1 մլրդ դրամ և 8.5 մլն դրամ, որոնք կազմել են նախատեսված ցուցանիշի 99.8%-ը և 94.2%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ:

Առողջապահության նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավման միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել օդորակիչներ (10 հատ) և համակարգչային սերվերներ (2 հատ):

«ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» և «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» միջոցառումների ծախսերը նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով համապատասխանաբար 160 հազար դրամ և 9.9 մլն դրամ:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային նոր տնօրենի ընտրության քարոզարշավի ընթացքում իրականացված ծախսերի փոխհատուցման նպատակով տրամադրվել է 13.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Հաշվետու տարում համաժողովների իրականացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 77.3%-ը: Շեղումը պայմանավորված է ծառայությունների՝ ավելի ցածր գներով մատուցմամբ: Միջոցառման շրջանակում կազմակերպվել են առողջապահության ոլորտի թիրախային խնդիրների վերաբերյալ համաժողովներ՝ ապահովելով լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակումը:

Առողջապահական կազմակերպությունների վերազինման շրջանակներում 2019 թվականին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 51.7%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնման պայմանագրերը կնքվել են տարեվերջին, և ֆինանսավորումն ամբողջ ծավալով հնարավոր չի եղել կատարել՝ կապված մատակարարվելիք սարքավորումների թանկարժեքությամբ և ներքին շուկայում վերջիններիս բացակայությամբ: Միջոցառման շրջանակներում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մանկական նյարդավիրաբուժության ծառայության հասանելիության և որակը բարձրացնելու նպատակով ձեռք են բերել ժամանակակից սարքավորումներ, բարձրացվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» և «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների տեխնիկական հագեցվածությունը:

Առողջապահական կազմակերպությունների կառուցման և վերակառուցման նպատակով 2019 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 72 մլն դրամ կամ նախատեսվածի 22.9%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնումների գործընթացով նախատեսված որոշ մրցույթներ չեն կայացել մասնակիցներ չլինելու պատճառով, ինչպես նաև կնքված պայմանագրերի հիման վրա կատարված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պայմանագրերի շրջանակներում ներկայացված փաստացի կատարողականների հիման վրա կատարված վճարումներով:

«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման և միջազգային ստանդարտներին համապատասխանության ապահովման նպատակով տրամադրվել է 120 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Հաշվետու տարում շտապ օգնության մեքենաներով հագեցվածության բարելավման նպատակով նախատեսված 295.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Բնակչությանը որակյալ շտապ օգնության ծառայություններ մատուցելու նպատակով ձեռք են բերվել 7 գծային տիպի շտապ օգնության մեքենաներ և 3 ռեանիմոբիլ:

«*Պաթանատոմիական, գենետիկ և դատաբժշկական փորձաքննություններ*» ծրագրի իրականացման նպատակով օգտագործվել է շուրջ 532.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է երկու միջոցառում:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 480.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Ծրագիրը կապված է ՀՀ դատախազության, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության որոշումներին համապատասխան, հատուկ և վտանգավոր պայմաններում աշխատանքի (դիահերձում, արտաշիրիմում և այլ հետազոտական աշխատանքներ) հետ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացվել են 55519 հետազոտություն՝ նախատեսված 23521-ի փոխարեն: Բյուջեով նախատեսվածի համեմատ հետազոտությունների թվի գերազանցումը փոխհատուցվել է ծառայությունների միջին գնի նվազման հաշվին:

«Պաթանատոմիական ծառայություններ» միջոցառման գծով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 51.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 97%-ը: Միջոցառման շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով: Միջոցառման շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացվել է 9654 հազարի հետազոտություն՝ կանխատեսված 5315-ի փոխարեն: Բյուջեով նախատեսվածի համեմատ հետազոտությունների թվի գերազանցումը փոխհատուցվել է ծառայությունների միջին գնի նվազման հաշվին:

Դեղապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2.6 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրով նախատեսված ցուցանիշի 96.3%-ը: Նշված գումարից ավելի քան 2.5 մլրդ դրամը տրամադրվել է ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 96.2%-ը: Շեղումը պայմանավորված է դեղորայքը նախահաշվային գներից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով

և հատուկ խմբերում ընդգրկված բնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: 2019 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով դեղ ստացող հիվանդների թիվը նախատեսված 175000-ի փոխարեն կազմել է 234747: Ընթացիկ տարում դեղերով 100%-ով ապահովվել են հոգեկան հիվանդություններ (հոգեմետ դեղեր), շաքարային և ոչ շաքարային դիաբետ (ինսուլին, հակադիաբետիկ դեղեր), պարբերական հիվանդություն (կոլխիցին և/կամ համարժեք այլ դեղեր), քրոնիկ երիկամային անբավարարություն (երիկամային փոխպատվաստման և/կամ ծրագրային հեմոդիալիզի դեպքերում՝ էրիթրոպետին), տուբերկուլոզ ((հակատուբերկուլոզային և հակավիրուսային դեղեր), անհաս նորածինների շնչառական խանգարում, չարորակ նորագոյացություններ (ցավազրկող դեղեր, թմրադեղեր, ցիկլոսպորին և արյունաբանական դեղեր), էպիլեպսիա (հակացնցումային դեղեր) ունեցող հիվանդները: 2019 թվականին շարունակվել է մանկական ինսուլինային ծրագիրը, որի արդյունքում 0-22 տարեկան տարիքային խմբում ընդգրկված հիվանդներն ապահովվել են ինսուլինային գրիչներով, նորագույն ինսուլիններով, արյան մեջ գլյուկոզայի որոշման համար անհրաժեշտ սարքերով և թեստ երիզներով:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններին տրամադրվել է 84.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Մատուցվել են մարդասիրական օգնության կարգով ստացված դեղերի և բժշկական պարագաների բեռների ստացման, մաքսազերծման և պահպանման 175 հազար ծառայություններ:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցության և հետազոտությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 700.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 90.4%-ը՝ հիմնականում պայմանավորված «Էլեկտրոնային առողջապահության համակարգի պահպանում» միջոցառման կատարողականով:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցությանը և հետազոտություններին տրամադրվել է 205.2 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Միջոցներն ուղղվել են 2019 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2019 թվականի տարեկան զեկույցի կազմման, 2019 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական նորմատիվ փաստաթղթերի մշակման (2019 թվականին մշակվել է 74 փաստաթուղթ՝ նախատեսված 56-ի դիմաց), կազմակերպչամեթոդական օգնության աշխատանքներին:

Գիտաբժշկական գրադարանային ծառայությունների ֆինանսավորմանը 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 43.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Միջոցառման շրջանակներում մատուցվել են բժշկագիտական գրադարանային ծառայություններ,

կենսաբժշկական տեղեկատվություն է տրամադրվել բուժաշխատողներին, գիտնականներին, պրակտիկ բժիշկներին, ուսանողներին, ՀՀ քաղաքացիներին:

Հաշվետու տարվա ընթացքում բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 24.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին ՀՀ մարզային 10 առողջապահական կազմակերպություններ են ուղեգրվել 22 բժիշկ-մասնագետ՝ նախատեսված 20-ի դիմաց: Կադրային քաղաքականության շնորհիվ մարզերը որոշ չափով համալրվել են մասնագետներով, և նվազել են մարզերից բժիշկ-մասնագետների՝ մարզ ուղեգրման հրատապ պահանջի հայտերը:

Էլեկտրոնային առողջապահության համակարգի պահպանմանը տրամադրվել է 426.5 մլն դրամ՝ ապահովելով 85.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է համակարգից օգտվողների (ստոմատոլոգիական կենտրոնների և ապահովագրական ընկերությունների)՝ նախատեսվածից փոքր թվով. 2019 թվականին համակարգից օգտվել է 430 կազմակերպություն՝ նախատեսված 470-ի փոխարեն: Միջոցառման նպատակը «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի կողմից առողջապահական կազմակերպություններին էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգին միանալու ծառայությունների մատուցման ծախսերի փոխհատուցումն է:

2019 թվականի ընթացքում *Մոր և մանկան առողջության պահպանման* ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 17.5 մլրդ դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական:

Հաշվետու տարում ավելի քան 6.9 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 98.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ արձանագրվել է բուժօգնության ծառայությունների միջին գնի նվազում: Միջոցառման շրջանակներում տրամադրվում է բուժօգնություն ծննդաբերության հետ կապված՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների դեպքում: Ծառայությունների միջին գնի նվազման շնորհիվ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին ծառայություններից օգտվելու դեպքերի թիվը կազմել է 51811՝ բյուջեով կանխատեսված 49685-ի դիմաց:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է 339.6 մլն դրամ կամ նախատեսվածի 92%-ը: Շեղումը պայմանավորված է բուժօգնության ծառայությունների միջին գնի նվազմամբ: Միջոցառման շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին բուժօգնություն է տրամադրվել 4631 հիվանդի՝ բյուջեով կանխատեսված 4509-ի

դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանն ուղղվել է ավելի քան 9.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում առաջին կիսամյակում մինչև 7 տարեկան, իսկ երրորդ եռամսյակից՝ մինչև 18 տարեկան երեխաներին տրամադրվել է հիվանդանոցային բուժօգնություն՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին բուժօգնություն է ստացել 89078 հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 74575-ի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի համեմատ ավել արձանագրված դեպքերի փոխհատուցումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին:

Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 305.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 95.6% կատարողական՝ պայմանավորված մատուցված ծառայությունների քանակով: Ծրագրի շրջանակներում մատուցվել է բժշկական օգնության և սպասարկման 79004 ծառայություն՝ բյուջեով կանխատեսված 84851-ի դիմաց:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 32 մլն դրամ կամ նախատեսվածի 71.2%-ը: Շեղումը պայմանավորված է հատկացված օրթեզների և կորսետների փաստացի պահանջով: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին պատրաստվել է 459 օրթեզ և 92 կորսետ՝ բյուջեով կանխատեսված համապատասխանաբար 925-ի և 114-ի դիմաց:

2019 թվականին անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են 138.1 մլն դրամ կամ նախատեսվածի 72.7%-ը՝ պայմանավորված միջոցառումը 2019 թվականի սեպտեմբեր ամսից գործելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին իրականացվել է 3267 հետազոտություն՝ բյուջեով կանխատեսված 4824-ի դիմաց, բուժօգնություն է մատուցվել 184 զույգի՝ բյուջեով կանխատեսված 276 զույգի դիմաց:

2019 թվականին *Շտապ բժշկական օգնության* ծրագրի շրջանակներում օգտագործվել է 4 մլրդ դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Ավելի քան 3.9 մլրդ դրամ է տրամադրվել շտապ բժշկական օգնության ծառայություններին՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 98.9%-ը: Շեղումը պայմանավորված է ցածր արժեքով կանչերի մեծ թվով: Միջոցառման շրջանակներում պետության

կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին սպասարկվել է 493711 կանչ՝ բյուջեով կանխատեսված 476300-ի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի համեմատ գերազանցումը պայմանավորված է բուժօգնության ցածր արժեքով կանչերի քանակով, ինչպես նաև գերակատարված կանչերի մասնակի հատուցմամբ:

Հարկային պարտավորությունների փոխհատուցման ծառայություններին տրամադրվել է 76.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևանի ենթակայության «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից շահութահարկի գծով առաջացած հարկային պարտավորությունների փոխհատուցմանը:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 12.5 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերով, որոնք կազմել են ավելի քան 4.4 մլրդ դրամ՝ 96.5%, որը պայմանավորված է բուժօգնության ծառայությունների միջին գնի նվազմամբ: 2019 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անհետաձգելի բուժօգնություն է ստացել 25326 հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 23740-ի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի քանակի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: Միջոցառումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի, գործում է համավճարի սկզբունքով փոխհատուցման մեխանիզմը:

Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2019 թվականին կազմել են ավելի քան 2.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Հատկացված միջոցներով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին իրականացվել է 140680 հազար սեանս՝ նախատեսված 146709 հազար սեանսի դիմաց:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 2.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժում: Միջոցառման շրջանակներում բուժօգնություն է ստացել 7923 հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 6494-ի դիմաց:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 99%-ով՝ կազմելով ավելի քան 2.9 մլրդ դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվել է չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդությունների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնար պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում: 2019 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բյուջեով կանխատեսված 17901 հիվանդի դիմաց բուժօգնություն է ստացել 17969 հազար հիվանդ: Բյուջեով կանխատեսված դեպքերի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

Հարկային պարտավորությունների փոխհատուցման ծառայություններին հատկացվել է 51.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից առաջացած հարկային և այլ պարտավորությունների փոխհատուցմանը:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնության ծրագրի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում օգտագործվել է շուրջ 22.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 98.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայություններ» և «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների կատարողականներով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 15.2 մլրդ դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.1% կատարողական: Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2019 թվականին բուժօգնություն է ստացել 189620 հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 158251-ի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի համեմատ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության (հիմնականում՝ սրտի վիրահատությունների) միջին գնի նվազման հաշվին:

Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում օգտագործվել է 486.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Շեղումը պայմանավորված է շահառուների քանակով: Միջոցառման շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 151936՝ բյուջեով կանխատեսված՝ 173500-ի փոխարեն:

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 3.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 93.5% կատարողական: Միջոցառման շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 37264 հիվանդի՝ բյուջեով կանխատեսված 32065-ի դիմաց: Բյուջեով կանխատեսված դեպքերի նկատմամբ ավել դեպքերը, ինչպես նաև ծախսերի՝ ծրագրից շեղումը պայմանավորված են բուժօգնության միջին գնի նվազմամբ:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 3.8 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Միջոցառման շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2019 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից հատուցվել է 28116 դեպք՝ կանխատեսված 25214-ի դիմաց: Միաժամանակ իրականացվել են սոցիալական փաթեթի 80459 շահառուների կանխարգելիչ քննություններ՝ կանխատեսված 100000-ի դիմաց:

Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում նախատեսված 222 հազար դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված դեպքերի բացակայությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 2.5 մլրդ դրամ է օգտագործվել *Վարակիչ հիվանդությունների կանխարգելման* ծրագրի շրջանակներում՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.3%-ը: Տվյալ ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են 3 միջոցառումներ:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններին տրամադրվել է 262.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2019 թվականին ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության, համաճարակաբանական հետազոտության և ՄԻԱՎ 1/2 հակամարմինների հայտնաբերման ուղղությամբ կատարվել են 32423 հետազոտություններ՝ կանխատեսված 35674-ի դիմաց:

2019 թվականին տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են 956.8 մլն դրամ՝ 99%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Միջոցառումը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում: Միջոցառման շրջանակներում բուժօգնություն ստացած հիվանդների թիվը 2019 թվականին կազմել է 1789՝ բյուջեով կանխատեսված 2710-ի դիմաց:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2019 թվականին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝

ապահովելով 99.3% կատարողական:Միջոցառման շրջանակներում 2019 թվականին բուժօգնություն է ստացել 15234 հիվանդ՝ բյուջեով կանխատեսված 10900-ի դիմաց: Բյուջեով նախատեսված դեպքերի նկատմամբ ավել դեպքերի փոխհատուցումը հիմնականում ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին:

ՀՀ արդարադատության նախարարությանը 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 19.1 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 95.7%-ը: Հատկացված միջոցների հաշվին իրականացվել է պետական բյուջեի 8 ծրագիր: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Աջակցություն արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերին», «Քրեակատարողական ծառայություններ» ու «Դատական և հանրային պաշտպանություն» ծրագրերի կատարողականով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններին տրամադրվել է 313.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 96.3%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին տրամադրվել են 161349 վկայականներ և տեղեկանքներ՝ նախատեսված 121000-ի դիմաց:

Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացման ծրագրին տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 97%-ը: Նախատեսված միջոցների գերակշիռ մասը՝ 1.2 մլրդ դրամը բաժին է ընկել «Արդարադատության ոլորտում քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի, գնման և աջակցության իրականացում» միջոցառմանը, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 98.8%-ը: Տնտեսումը պայմանավորված է հաստիքների կրճատմամբ և նախատեսվածից ցածր գներով ծառայությունների և ապրանքների ձեռքբերմամբ:

Դատահրավական բարեփոխումների ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել է 7.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 25.5%-ը: Միջոցառման գծով գումարը նախատեսված էր ՀՀ արդարադատության նախարարության «Դատահրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է 2019 թվականի հունիսի 15-ից գրասենյակի գործունեության դադարեցմամբ:

Անձնական տվյալների պաշտպանության իրականացմանը տրամադրվել է 38.3 մլն դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 94.5%-ը: Տնտեսումը պայմանավորված է թափուր հաստիքներով: Միջոցառման շրջանակներում ապահովվում է անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կազմել են 56 հազ. դրամ (100%):

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին և արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների ծախսերը կազմել են համապատասխանաբար 12.9 մլն դրամը և 6.1 մլն դրամն՝ ապահովելով ծրագրային ցուցանիշների 89.3% և 93.5% կատարողական: Գործուղման ծախսերի խնայողությունը պայմանավորված է գործուղվողների կողմից գիշերավարձից հրաժարվելու հանգամանքով: Պատվիրակությունների ընդունելությունների համար նախատեսված միջոցները տնտեսվել են նախատեսված որոշ ծառայություններ ձեռք չբերելու, ծառայությունների մի մասն էլ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու արդյունքում:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև ՀՀ արդարադատության նախարարության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսերը, որոնք կազմել են 18.2 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել վարչական սարքավորումներ:

Դատական և հանրային պաշտպանության ծրագրի ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ՝ ապահովելով 94.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է 2008 թվականի մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության ծախսերի կատարողականով, որը կազմել է 79.9% կամ 575 մլն դրամ և պայմանավորված է ոչ բոլոր շահառուների կողմից փաստաթղթերի ներկայացմամբ: Միջոցառման շրջանակներում միանվագ դրամական աջակցություն է տրամադրվել 10 զոհված անձանց հարազատներին, առողջությանը ծանր վնաս հասցված 8 անձանց և առողջությանը միջին ծանրության վնաս հասցված 31 անձանց:

377.3 մլն դրամ է հատկացվել հանրային պաշտպանության ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման նպատակն է հանրային պաշտպանի գրասենյակի զարգացման և գործառույթների արդյունավետ իրականացման պայմանների շարունակական բարելավումը՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և հաշվարկով տրամադրվող դրամական միջոցների շրջանակներում: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ հանրային պաշտպանների գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեից, որոնք ներառում են հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափը և հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսեր: Վարույթ ընդունված քրեական գործերի թիվը նախատեսված 7184-ի փոխարեն կազմել է 7183, քաղաքացիական գործերի թիվը՝ նախատեսված 9689-ի փոխարեն՝ 8608:

Սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերման շրջանակներում անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց օրենսդրությամբ նախատեսված օժանդակության և փոխհատուցումների նպատակով 2019

թվականի պետական բյուջեից տրամադրվել է 22.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98%-ը: Միջոցները տրամադրվել են 745 ավարտված գործի համար՝ յուրաքանչյուր գործի համար 30 հազ. դրամ:

Փորձաքննությունների ծառայությունների համար նախատեսված 243.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցները տրամադրվում են քրեական հետապնդում, վարչական վարույթ իրականացնող մարմինների կամ քրեական գործերով դատարանների որոշումների հիման վրա փորձագիտական հետազոտությունների իրականացման և դրա արդյունքում փորձագետի եզրակացությունների տրամադրման նպատակով: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են 6806 փորձաքննություններ՝ նախատեսված 7245-ի դիմաց:

Իրավական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.4%-ով՝ կազմելով 379.9 մլն դրամ: Միջոցներն ուղղվում են արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերմանը, որոնց թիվը 2019 թվականին կազմել է 3:

Դատական և հանրային պաշտպանության ծրագրի շրջանակներում շուրջ 1.2 մլրդ դրամ ուղղվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին և որոշումներին համապատասխան դրամական հատուցումների տրամադրմանը, որը կազմել է ծրագրված հատկացումների 99.4%-ը: Շեղումը պայմանավորված է փոխարժեքով և մի շահառուի կողմից փաստաթղթերը չներկայացնելու հանգամանքով:

Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններին տրամադրվել է 60.5 մլն դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 99.8%-ը: Միջոցներն ուղղվել են ներդրումային արբիտրաժային վեճի շրջանակներում Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների ձեռքբերմանը:

Դատական գործունեության իրականացման ապահովման նպատակով տրամադրվել է 74.1 մլն դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 100%-ը և ուղղվել է արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար վարույթի հետ կապված ծախսերի փոխհատուցմանը:

Քրեակատարողական ծառայությունների ծրագրին տրամադրվել է 10.5 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է 97.5%:

Ծրագրի գերակշիռ մասը բաժին է ընկնում «Քրեակատարողական ծառայություններ» միջոցառմանը, որոնց ուղղվել է 9.3 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 99.1%-ը: Շեղումը

պայմանավորված է ծառայությունում առկա թափուր հաստիքներով, ինչպես նաև կոմունալ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի տնտեսմամբ:

Պրոբացիայի ծառայություններին տրամադրվել է 464.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 90.4%-ը: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ և որոշ ապրանքներ ու ծառայություններ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: Պրոբացիայի տակ գտնվող շահառուների թիվը 2019 թվականին կազմել է 3320՝ նախատեսված 4600-ի դիմաց:

Կալանավայրերում պահվող ազատազրկվածներին դեղորայքով ապահովման նպատակով տրամադրվել է 70.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 92.8%-ը: Տնտեսումը պայմանավորված է դեղորայքը նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացման նպատակով հատկացվել է 36.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառմամբ նախատեսված գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերում ընդգրկված իրավախախտում կատարած 110 շահառուների փոխարեն փաստացի դասընթացներին մասնակցել է 166 անձ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին տրամադրվել է 2.1 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկվածներին բժշկական ծառայությամբ ապահովման ծախսերը կազմել են 197.4 մլն դրամ, որոնք նույնպես կատարվել են նախատեսված ծավալով: Միջոցառման շրջանակներում առաջնային և մասնագիտացված բնույթի բուժօգնություն ստացողների թիվը կազմել է 139031, հոսպիտալային բուժօգնություն ստացողների թիվը՝ 950:

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով հատկացված 3.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավման նպատակով տրամադրվել է 84.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 47.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է գնման մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով:

Քրեակատարողական հիմնարկների տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տրամադրվել է 334.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 90.6%-ը՝ պայմանավորված գնման մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Հատկացված

միջոցներով ձեռք են բերվել 12-ական ռենտգեն սարքեր ու մետաղի դետեկտորներ և 1 էլեկտրատեխնիկական սարք:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տրամադրվել է 8.1 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 69.5%-ը՝ պայմանավորված գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի երկարատև տեսակցության սենյակների կահույքի, ջերմային տպիչների (պլաստիկ քարտեր տպող սարք), անվտանգության ապահովման սարքերի (բջջային կապի խլացուցիչ սարքեր) և հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթի ձեռքբերմանը:

Քրեակատարողական բժշկության կենտրոնի կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով օգտագործվել է բյուջեով հատկացված միջոցների 99.7%-ը՝ շուրջ 4 մլն դրամ: Միջոցներն ուղղվել են վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Իրավական իրազեկման և տեղեկատվության ապահովման ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները գրեթե ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 689.3 մլն դրամ: Նշված գումարից 428.4 մլն դրամը տրամադրվել է հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններին, որը կազմել է տարեկան ծրագրի 99.9%-ը: Միջոցառման շրջանակներում ապահովվում է իրավական ակտերի պաշտոնական հրատարակումը և վերահրատարակումը, պետական մարմիններին բաշխումը, Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգի՝ «ԱՐԼԻՍ» ծրագրի պահպանումը, կառավարումը և սպասարկումը, ինկորպորացիայի ենթարկված իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածուի ստեղծումը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժիններում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի (գրանցամատյաններ, ձևեր, ձևաթղթեր) ձեռքբերման աշխատանքները:

Հաշվետու տարում թարգմանչական ծառայություններին պետական բյուջեից հատկացվել է 260.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում ապահովվում է ՀՀ, ԵՏՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի, այլ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ հարաբերությունների շրջանակներում դատական ակտերի և հարակից փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների կատարումն ու

ժամանակին ներկայացումը շահառու մարմիններին: 2019 թվականին իրականացվել է 25577 էջ թարգմանություն:

Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 593 մլն դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 99.8%-ը:

Հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով հատկացվել է 313.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականին վերապատրաստում և հատուկ ուսուցում անցած ծառայողների թիվը կազմել է 2525:

Դատավորների, դատախազների, դատավորների ու դատախազների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններին տրամադրվել է շուրջ 240 մլն դրամ (100%): Դասընթացների մասնակիցների թիվը 2019 թվականին կազմել է 1163՝ նախատեսված 1315-ի դիմաց:

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 5.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 98%-ը: Հաշվետու տարում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման 50 պատասխանատուների փոխարեն հաստատված ժամանակացույցով և մասնակցության հայտերով դասընթացներին պատշաճ մասնակցել են 49 ունկնդիրներ:

Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակի գծով ծախսերը կազմել են 34.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97.1%-ը: Հաշվետու տարում նախատեսված 56 ունկնդրի փոխարեն կրթաթոշակ վճարվել է 51-ին: Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ քննությունների անցողիկ շեմը հաղթահարել են նախատեսվածից պակաս թեկնածուներ, բացի այդ, իրավաբան-գիտնականները դասընթացներին միանում են 2րդ փուլով և այդ ընթացքում կրթաթոշակ չեն ստանում:

Հարկադիր կատարման ծառայություններին հաշվետու տարում տրամադրվել է ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 95.6%-ը: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ և որոշ ծառայություններ ու ապրանքներ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

Արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերին աջակցության ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 82.6%-ը: Ծրագիրը ֆինանսավորվել է ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին: Ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկել հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ապահովմանն աջակցությանը, որը կազմել է 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 79.3%-ը:

Տարբերությունը պայմանավորված է որոշ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտության բացակայությամբ, ինչպես նաև որոշ ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ:

Ներկայացուցչականության ապահովման և խրախուսման նպատակով տրամադրվել է 323.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 96%-ը: Շեղումը պայմանավորված է որոշ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտության բացակայությամբ:

Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանն աջակցությունը կազմել է 35.6 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 87%-ը: Տնտեսումը պայմանավորված է թափուր հաստիքներով և որոշ ծառայություններ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

Դատական գործերի փաստաթղթերի թվայնացման նպատակով տրամադրվել է 18.3 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 96.8%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Միջոցներն օգտագործվել են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրում Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: 2019 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել է տեխնիկական առաջադրանքի ծառայությունների մատուցման վերջին՝ 4-րդ փուլը, որը ներառում է համակարգի ներդրման, ձեռնարկների մշակման և օգտագործողների ուսուցման, թեստային համակարգի շահագործման և սխալների շտկման ծառայությունները:

Արտաբյուջետային միջոցներից քրեակատարողական ծառայությունների կատարմանն աջակցությանը հատկացված 904.5 հազ. դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են միջազգային պայմանագրերով սահմանված կարգով դատապարտյալի փոխանցման ծախսերի փոխհատուցմանը:

Փորձագիտական ծառայություններին հատկացված 790 հազ. դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցները տրամադրվել են նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունն ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները դիմորդների կողմից ստանալու և փորձագետներին տալու նպատակով:

Հարկադիր կատարման ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տրամադրվել է 20.1 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 66.9%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ վարչական սարքավորումների մի մասը ձեռք է բերվել

նախատեսվածից ցածր գներով, մի քանի վարչական սարքավորումներ էլ հնարավոր չի եղել ձեռք բերել՝ կապված ժամկետների հետ:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականին կատարվել է պետական բյուջեի 14 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են նախատեսված միջոցների 57.4%-ը՝ 12.5 մլրդ դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Ներդրումների և արտահանման խթանման, Գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման, ինչպես նաև Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրերի կատարողականով:

2019 թվականին *Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի* ծրագրին ուղղվել է 993.3 մլն դրամ՝ ապահովելով 93% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ու Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում (ԱՀԿ) և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործման միջոցառումների կատարողականով:

Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի միջոցառման ծախսերը հաշվետու տարում կազմել են 794.7 մլն դրամ՝ ապահովելով 95.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի համար նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև գնման գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

ԱՀԿ-ում և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված միջոցառման ծախսերը կազմել են 121.6 մլն դրամ կամ նախատեսվածի 80.1%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև), Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) և ՉԺՀ (նստավայրը՝ Պեկին) պահպանմանը: Համեմատաբար ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում և Բելգիայի Թագավորությունում նշանակված առևտրային ներկայացուցիչների ծախսերի տնտեսմամբ: Նշենք, որ 2019 թվականի սեպտեմբեր ամսից դադարեցվել են Բելգիայի Թագավորությունում նշանակված առևտրային ներկայացուցչի լիազորությունները:

Տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների նպատակով կատարվել են 19.9 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 72.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի որոշ հաստիքների ժամանակավորապես թափուր լինելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են տնտեսության տարբեր ոլորտներին և ճյուղերին առնչվող մակրո և միկրո մակարդակներում բազմապրոֆիլ տնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ հետազոտական և վերլուծական աշխատանքները՝

- Ապրանքային արտահանման մշտադիտարկման իրականացում, արտահանման կառուցվածքի և դինամիկայի վերլուծության իրականացում, արտահանման որակական տեղաշարժերի գնահատում, արտահանման միտումների գնահատում, որոնց շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են թվով 12 զեկույցներ.
- Ապրանքային ներմուծման մշտադիտարկման իրականացում, ներմուծման կառուցվածքի և դինամիկայի վերլուծության իրականացում, ներմուծման միտումների գնահատում, որոնց շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են թվով 12 զեկույցներ.
- Աշխատանքային շուկայի վերլուծությունների իրականացման նպատակով R ծրագրային փաթեթի միջոցով կառուցվել է մոդել, որը հնարավորություն է տալիս data scraping-ի միջոցով հավաքագրել աշխատանքի առցանց հայտարարությունները և վերլուծել դրանք: Այս աշխատանքների շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են թվով 9 զեկույցներ.
- Eviews, R և Python ծրագրային փաթեթների միջոցով կառուցվել են մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումային մոդելներ, մասնավորապես՝ ARIMA, seasonal ARIMA, Long Short-Term Memory մոդելները ադապտացվել են ՀՆԱ-ի և արտահանման կանխատեսումների իրականացման համար.
- Մակրոտնտեսական իրավիճակի ընթացիկ գնահատման նպատակով մշակվել է մակրոտնտեսական զեկույց, ինչպես նաև իրականացվել են մակրո մակարդակում մի շարք վերլուծություններ և հետազոտություններ: Արտահանման կառուցվածքում որակական տեղաշարժերի գնահատման և մոնիթորինգի իրականացման նպատակով հաշվարկվել են բացահայտված հարաբերական առավելության ինդեքսը (Revealed Comparative Advantage), տնտեսական կատարելագործվածության ինդեքսը (Economic Complexity Index).
- Իրականացվել են այլ հետազոտական և վերլուծական աշխատանքներ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների և արտասահմանյան պատվիրակություն-ների ընդունելությունների ծախսերը կազմել են համապատասխանաբար 38.2 մլն դրամ և 18 մլն դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 99.8% և 98.3% կատարողական:

Ամբողջությամբ իրականացվել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները, որոնք կազմել են 821.5 հազար դրամ:

Ստանդարտների մշակման և հավատարմագրման համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են երկու միջոցառումներ, որոնց ծախսերը կազմել են 28 մլն դրամ կամ նախատեսվածի 91%-ը: 13.9 մլն դրամ աջակցություն է տրամադրվել ՀՀ հավատարմագրման համակարգին, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 83.3%-ը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ ծախսերում նախատեսվել է նաև ավելացված արժեքի հարկի գումարը, իսկ միջոցառումն իրականացվում է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից, որը չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող, ուստի նշված միջոցները տնտեսվել են:

Միջոցառման շրջանակներում կատարվել են Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

● Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման նպատակով ներկայացված հավատարմագրման գործընթացի կազմակերպման աշխատանքները, մասնավորապես՝ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման, հավատարմագրման ընդլայնման, համապատասխանության գնահատման մարմինների կողմից ներկայացված փաստաթղթերի փորձաքննության (այդ թվում՝ լրացուցիչ փորձաքննություն), ըստ գործունեության իրականացման վայրի՝ արտահերթ և պարբերական գնահատման, ինչպես նաև դադարեցման, կասեցման և մերժման գործընթաց.

● Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացման նպատակով Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրներում ներառվել են 8559 համապատասխանության հայտարարագիր և 753 համապատասխանության սերտիֆիկատ: Փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) և սերտիֆիկացման մարմինների Մաքսային միության միասնական ռեեստրում ներառվել են 5 փորձարկման լաբորատորիա և 2 սերտիֆիկացման մարմին.

● Վարվել է ՀՀ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրը, որում ներառվել են 574 համապատասխանության հայտարարագիր և 70

համապատասխանության սերտիֆիկատ: Համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրում ներառվել են 5 փորձարկման լաբորատորիա, 3 սերտիֆիկացման մարմին, 1 տրամաչափարկման լաբորատորիա և 4 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին: «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականին անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել և որակավորման վկայագրեր են ստացել 36 կազմակերպություններից ընդհանուր թվով 70 ներկայացուցիչներ:

Ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են 14.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցառման շրջանակներում իրականացվել են ազգային ստանդարտների մշակման, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և ստանդարտների ազգային ֆոնդի վարման ու տեղեկատվական սպասարկման աշխատանքներ: Ազգային ստանդարտների մշակման աշխատանքների շրջանակում 2019 թվականին մշակվել են թվով 30 ազգային ստանդարտների նախագծեր, որոնք ընդունվել և հաստատվել են տեխնիկական հանձնաժողովների ու աշխատանքային խմբերի կողմից և գործողության մեջ են դրվել ՀՀ ստանդարտացման ազգային մարմնի հրամաններով: Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման շրջանակներում իրականացվել են միջազգային (ԻՍՕ) թվով 138 հատ և միջպետական (ԳՕՍՏ) թվով 384 հատ ստանդարտների նախագծերի փորձաքննություն, միջազգային (936 հատ) և միջպետական (872 հատ) ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն, ԱՊՀ երկրների ստանդարտացման միջպետական խորհրդի, Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) հետ աշխատանքների կազմակերպում: Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների շրջանակներում իրականացվել են. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի համալրում և հաշվառում (թվով 1564 հատ), ընդունված ազգային ստանդարտների գրանցում (թվով 409 հատ), Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում, ստանդարտացման բնագավառում ՀՀ կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում, «Ստանդարտ» տեղեկատվական-որոնման ավտոմատացված համակարգի համալրում և վարում, ՀՀ-ում ընդունված և գործողության մեջ դրված ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային բազայի) ստեղծում, հաշվառում և պահում, ինչպես նաև ազգային ստանդարտների կատալոգի, թվով 4 եռամսյակային տեղեկատուի և 12 տեղեկատվական թերթիկների նախապատրաստում և հրատարակում:

Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության ծրագրին 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 148.2 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 71.2%-ը, որն օգտագործվել է

ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգման և կառավարման միջոցառման շրջանակներում: Հատկացված միջոցներն ուղղվել են ծրագիրն իրականացնող հիմնական կառույցի՝ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի անձնակազմի և փորձագետների վարձատրությանը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ: Շեղումը հիմնականում պայմանավորված է միջոցառումն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթն ուշ կայանալու հանգամանքով. արդյունքում պայմանագիրը կնքվել է 2019 թվականի սեպտեմբերի 5-ին: Բացի այդ, լրացուցիչ 25 մլն դրամ հատկացված գումարը չի օգտագործվել՝ պայմանավորված պայմանագիրը դեկտեմբեր ամսին կնքելու հանգամանքով: 2019 թվականին Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվել է 8305 աջակցություն շուրջ 3500 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների, որոնց 7.1 %-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 92.9 %-ը՝ ՀՀ մարզերում:

Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են շուրջ 882.8 մլն դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 18.9%-ը, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ծառայությունների և սարքավորումների ձեռքբերման միջոցառումների կատարողականով, որը կազմել է 0.9%՝ 31.8 մլն դրամ: Ծրագրի նպատակն է՝ հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնարկություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2019 թվականի ընթացքում կատարվել է վարկային ծրագրի աուդիտ, ինչպես նաև վճարումներ խորհրդատուների կողմից իրականացված խորհրդատվական ծառայությունների դիմաց: 2019 թվականի համար ծրագրված աշխատանքների թերակատարումը գլխավորապես պայմանավորված է 2016 թվականից վարկային ծրագրի սառեցմամբ: 2019 թվականին ՀՀ կառավարությունը Համաշխարհային Բանկի հետ պարբերաբար քննարկել է ծրագրի վերակառուցման և բաղադրիչների փոփոխության հնարավորությունը: 2019 թվականի հուլիս և դեկտեմբեր ամիսներին Համաշխարհային Բանկի առաքելական այցելությունների ընթացքում երկկողմ պայմանավորվածություն ձեռք բերվեց ծրագրի վերջնական կառուցվածքի և ժամկետի երկարաձգման վերաբերյալ: Վարկային համաձայնագրի փոփոխությունը ստորագրվել է 2020 թվականի փետրվար ամսին:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 850.9 մլն դրամ՝ ապահովելով 79.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, օտարերկրյա պետություններում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման նպատակով կազմակերպվող գործարար համաժողովների (ֆորումների)՝ նախատեսվածից պակաս քանակով, ինչպես նաև 2019 թվականի մայիս ամսից «Բիզնես Արմենիա» հիմնադրամում պետական մասնակցության դադարեցմամբ: Ծրագիրն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: 2019 թվականին միջոցառման շրջանակներում իրականացվել 10 կազմակերպությունների վարկերի մասնակի սուբսիդավորում (վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվել են 683 մլն դրամ վարկեր), օտարերկրյա պետությունում կազմակերպվել է հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) թվով 1 միջոցառում, ապահովվել է հայկական ընկերությունների մասնակցությունը միջազգային թվով 8 ցուցահանդեսի, կազմակերպվել և ապահովվել է հայկական ընկերությունների մասնակցությունը թվով 3 գործարար համաժողովների (ֆորումների), գործարար կապերի հաստատման նպատակով Հայաստան են այցելել արտասահմանյան ընկերությունների 131 ներկայացուցիչներ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում «EXPO 2020 Dubai» ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության պատշաճ մասնակցության ուղղությամբ: Ապահովվել է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի բնականոն գործունեությունը: 2019 թվականի ընթացքում հավանության են արժանացել 57 ծրագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 212 մլրդ դրամ, որի շրջանակներում տրամադրվել է 14.8 մլրդ դրամի մաքսատուրքից ազատման արտոնություն: Նախատեսվում է 3320 աշխատատեղերի ստեղծում: 13 ծրագրերի տրվել են նաև ավելացված արժեքի հարկը հետաձգելու արտոնություն 10.1 մլրդ դրամի չափով:

Հաշվետու տարում *Զբոսաշրջության զարգացման* ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 78.9% կատարողական: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի կատարողականով, որը կազմել է 82.1% կամ ավելի

քան 1.7 մլրդ դրամ: Ցածր կատարողականը ծրագրի կառավարման մասով պայմանավորված է աշխատավարձի, տրանսպորտային նյութերի և գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նշված ծախսերը կազմել են 34.7 մլն դրամ կամ 62.6%: Ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցառումների գծով ծախսերը կազմել են 1.7 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 82.6%-ը: Շեղումը պայմանավորված է երեք շինարարական օբյեկտներում առաջացած խնդիրներով, մասնավորապես՝ մեկ շինարարական օբյեկտում շինթույլտվության ուշացմամբ, իսկ մյուս երկու օբյեկտում՝ կնքված պայմանագրերում կատարվող փոփոխություններով: Ծրագիրը սկսվել է 2016 թվականի վերջին և շարունակվելու է մինչև 2021 թվականի ապրիլը: Ծրագրի նպատակն է՝ բարելավել ենթակառուցվածքի ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները Հայաստանի ընտրված տարածաշրջաններում՝ տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող արդյունքի ավելացման նպատակով: Ծրագրի գործունեության արդյունքում ակնկալվում է, որ կշահեն Հայաստանի վեց մարզերի (Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք, Լոռի և Շիրակ) տեղաբնակները, զբոսաշրջիկները և տնտեսավարողները: Ծրագրի արդյունքում սպասվում է վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքների մատչելիության և որակի աճ, տարածաշրջանում մասնավոր հատվածի ներդրումների ծավալի, ինչպես նաև փոքր և միկրո ձեռնարկությունների քանակի աճ, ՀՀ կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների գոհունակության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալություններում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և ակտիվների շահագործման ու պահպանման համար կարողությունների զարգացման առումով:

Ծրագիրն իրականացվում է երեք բաղադրիչներով.

- ժառանգության կենտրոնների վերածնում և զբոսաշրջության երթուղիների զարգացում, որը բաղկացած է չորս ենթաբաղադրիչներից՝ ժառանգության կենտրոնների վերածնում, զբոսաշրջության երթուղիների զարգացում, հանրային ենթակառուցվածքների տրամադրում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով, նախագծում և շինարարության վերահսկողություն,
- ինստիտուցիոնալ զարգացում,
- արձագանք չնախատեսված արտակարգ իրավիճակներին:

Ծրագրի շրջանակներում ավարտվել են Տաթև համայնքի՝ դեպի Տաթևի վանական համալիր տանող 6000 մետր երկարությամբ ճանապարհի վերակառուցման, Գյուլագարակ համայնքի՝ դեպի «Սոճուտ» դենդրոպարկ տանող 2800 մետր երկարությամբ ճանապարհի վերակառուցման և Գյումրի համայնքի՝ «Կումայրի պատմական թաղամասի» 6 փողոցների վերականգնման աշխատանքները:

Ընթացքի մեջ են գտնվում Գառնու զբոսաշրջային գոտու ենթածրագրի շրջանակներում դեպի «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձան տանող՝ 2147 մետր երկարությամբ ճանապարհի վերականգնման և հարակից տարածքի բարեկարգման, ինչպես նաև Խոր Վիրապ վանքի տարածքի բարեկարգման աշխատանքները:

Ծրագրի «Տեխնիկական աջակցություն» բաղադրիչի շրջանակում իրականացվում են Զբոսաշրջության կոմիտեի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքների հիման վրա խորհրդատուներ վարձելու գործընթացի, դեպի Տաթևի վանական համալիր տանող ճանապարհի՝ սողանքային տեղամասը շրջանցող հատվածի երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտության աշխատանքներ: Կարևորելով ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը՝ նախատեսվում է ծրագրի վերակազմավորում, ինչի արդյունքում Համաշխարհային բանկին կներկայացվեն մինչև 2022 թվականն իրականացվող նոր նախագծեր, ինչպես նաև կգնահատվեն Տավուշի և Գեղարքունիքի մարզերի ներգրավման հնարավորությունները:

Զբոսաշրջության զարգացմանն աջակցության միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 60.2%-ը՝ 217.3 մլն դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Զբոսաշրջության զարգացման հիմնադրամի պահպանման համար նախատեսված 86.4 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ կապված երկրորդ եռամսյակում վերջինիս լուծարման հետ: Բացի այդ, չեն օգտագործվել նաև ԱԱՀ-ի գծով նախատեսված գումարները, քանի որ մատակարար կազմակերպությունները չեն հանդիսացել ԱԱՀ վճարող: Միջոցառման շրջանակներում իրականացվել են զբոսաշրջային ոլորտի հետևյալ ենթամիջոցառումները.

- Ակտիվ և թիրախային մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում,
- Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում,
- Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում,
- Միջազգային համագործակցություն՝ իրավապայմանագրային պարտավորությունների իրականացում, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցություն:

Զբոսաշրջության զարգացման ոլորտում պետական քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի պլանավորման, մշակման, իրականացման և մոնիտորինգի (վերահսկման) ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 95.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 89.6%-ը: Միջոցներն ուղղվել են Զբոսաշրջության պետական կոմիտեի պահպանմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով, ինչպես նաև թափուր հաստիքները չհամալրվելու հանգամանքով:

Զբոսաշրջության կոմիտեի կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով կատարվել են 2.3 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 94.9%-ը: Միջոցներն ուղղվել են համակարգչային և վարչական սարքավորումների ձեռքբերմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքները նախատեսվածից ցածր գնով ձեռք բերելու հանգամանքով:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման համար նախատեսված 15 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված մարզային կառույցների հետ հողահատկացման խնդիրների առկայությամբ: Միջոցառման շրջանակներում նախատեսվել էր մարզերում ստեղծել զբոսաշրջային մարզային հանգրվաններ, որոնց կառուցման համար նախատեսվել էր նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների կազմում:

Մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանության աջակցության ծրագրի գծով 2019 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 240.2 մլն դրամ կամ նախատեսվածի 62.4%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են երկու միջոցառումներ: Շեղումը հիմնականում պայմանավորված է մտավոր սեփականության օբյեկտների գրանցման համար կատարված ծախսերով, որոնք կազմել են 208.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 61.6%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության պահպանմանը: Շեղումը պայմանավորված է նախատեսված պահուստային միջոցներ չօգտագործելու, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ:

«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման շրջանակներում կատարվել են 31.5 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 68.1% կատարողական: Միջոցներն ուղղվել են համակարգչային և վարչական սարքավորումների ձեռքբերմանը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

Հաշվետու տարում *Գյուղատնտեսության խթանման* ծրագրին ուղղվել է 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով 86.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության և Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերի կատարողականով:

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության նպատակով նախատեսված 250 մլն

դրամի դիմաց օգտագործվել է 302.6 հազար դրամ (0.1%-ը): Միջոցները նախատեսվել են փորձնական ծրագրին մասնակից տնտեսավարողների ապահովագրավճարի մասնակի սուբսիդավորման նպատակով: Կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է միջոցառման իրականացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների (Գյուղատնտեսությունն ապահովագրողների ազգային գործակալության (ԳԱԱԳ) հիմնում, վնասի գնահատման դասընթացի կազմակերպում, բրոքերային ընկերության ստեղծում) ուշ մեկնարկով, ինչպես նաև ծրագրի ուշ հաստատմամբ (2019 թվականի հոկտեմբերի 24-ին): 2019 թվականին միջոցառման շրջանակներում նախատեսված 4500 շահառուի փոխարեն ապահովագրական պայմանագիր է կնքվել ընդամենը 5 շահառուի հետ:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 61.3%-ը՝ կազմելով 367 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ վարկի միջին չափը հաշվարկվել էր 360 մլն դրամ և նախատեսվել էր նաև կանխավճարի տրամադրման հնարավորություն, մինչդեռ շահառուները կանխավճարի տրամադրման հնարավորությունից չեն օգտվել, իսկ հաստատված վարկերի միջին չափը կազմել է շուրջ 110 մլն դրամ: Միջոցառման համար նախատեսված շուրջ 18 մլրդ դրամ վարկային պորտֆելի դիմաց հաստատվել է 9.9 մլրդ դրամի վարկ: Միջոցառման շահառուների թիվը նախատեսված 50-ի փոխարեն կազմել է 91՝ պայմանավորված միջոցառման նկատմամբ պահանջարկով: Հաշվի առնելով նշված հանգամանքը, ինչպես նաև միջոցառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քննարկվում է ծրագրի ընդգրկման շրջանակի ընդլայնման հնարավորությունը սպանդանոցների կողմից գյուղատնտեսական կենդանի կենդանիների մթերման ուղղությամբ: Բացի այդ, ծրագրում կատարվել են մի շարք լրացումներ և փոփոխություններ, համաձայն որոնց սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին նպատակային վարկերը տրամադրվել են 0 տոկոս տոկոսադրույքով, ծրագրով նախատեսված վարկավորման առավելագույն 1.5 մլրդ դրամի շեմն ավելացվել է մինչև 1.8 մլրդ դրամ՝ գյուղատնտեսական հումքի մթերման սեզոնում առանձին դեպքերում առաջացած խնդիրները լուծելու, մասնավորապես՝ ընթացիկ տարում ՀՀ Վայոց ձորի մարզում արտադրված «Արենի» սորտի խաղողի մթերումների դիմաց վճարումներն արագ կատարելու նպատակով:

Գյուղատնտեսության խթանման ծրագրի շրջանակներում Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման համար հատկացվել է շուրջ 2.3 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականի ընթացքում միջոցառման շրջանակներում նախատեսված 8380 միավոր վարկի փոխարեն տրամադրվել է 8841 միավոր վարկ, ինչը

պայմանավորված է միջոցառման նկատմամբ բարձր պահանջարկով, վարկային պորտֆելի ավելացմամբ, հավաստագրերի տրամադրման կարգի ժամանակավոր փոփոխությամբ: Միջոցառման նպատակն է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:

Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինչին բնակավայրում տեղի ունեցած հրդեհի հետևանքով պատճառված վնասի մասնակի փոխհատուցման նպատակով նախատեսված 23.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

Շուրջ 431.2 մլն դրամ ուղղվել է Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցմանը, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 98.5%-ը: Միջոցներն օգտագործվել են ՀՀ թվով յոթ մարզերում կարկտահարության, ցրտահարության պատճառով տուժած հողօգտագործողներին աջակցության տրամադրման նպատակով: Շեղումը պայմանավորված է փաստացի հաշվարկների արդյունքում առաջացած տնտեսումներով:

Գյուղատնտեսությամբ զբաղվողներին ուղղակի աջակցության տրամադրման համար նախատեսված 434.6 հազար դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառուցվածքային փոփոխություններով, որոնց արդյունքում նպատակահարմար է գտնվել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հատկացված շուրջ 2 մլրդ դրամի միջոցները գրեթե ամբողջությամբ վերաբաշխել այլ ծրագրերի միջև:

Հաշվետու տարում *Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների* ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են երեք միջոցառումներ, որոնց համար կատարված ծախսերը կազմել են 120.8 մլն դրամ կամ նախատեսվածի 70.3%-ը: Տվյալ ծրագրում ընդգրկված մեկ միջոցառման՝ Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների համար նախատեսված 10 մլն դրամի միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ, իսկ մյուս երկու միջոցառումների գծով առկա են շեղումներ: Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների միջոցառումն իրականացվում է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որը 2019 թվականին կատարել է 959 լաբորատոր փորձարկում (մանրէաբանական, ծանր մետաղների հայտնաբերման, ֆիզիկաքիմիական և այլն)՝ 176 լաբորատոր նմուշների նկատմամբ:

Բուսական ծագման մթերքներում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մնացորդների մոնիթորինգի նպատակով օգտագործվել է 20.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 45%-ը, որը պայմանավորված է միջոցառման ուշ

մեկնարկով: Միջոցառման նպատակն է մոնիթորինգի ենթարկել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բուսական ծագման մթերքում պեստիցիդների, նիտրատների և ծանր մետաղների մնացորդային քանակները: Միջոցառման ուշ մեկնարկով պայմանավորված՝ լաբորատոր հետազոտության ենթակա նմուշները ուշ են տրամադրվել միջոցառումն իրականացնող՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարա-կան և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին: Միջոցառման շրջանակներում միջոցների գերակշիռ մասն ուղղվել է լաբորատոր նյութերի և պարագաների ձեռքբերմանը: Միջոցառման շրջանակներում կատարվել են 330 փորձարկման ենթակա նմուշառումներ, որոնց մեջ բուսական ծագմամբ մթերքների մեջ մնացորդային նյութերի փորձաքննությունների քանակը կազմել է 2046:

Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգի իրականացման համար օգտագործվել է 90.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 77.7%-ը, որը պայմանավորված է միջոցառման ուշ մեկնարկով: Միջոցառման նպատակն է մնացորդային նյութերի հսկողության իրականացումը ձկան, մեղրի, մսի և կաթի մեջ մնացորդային նյութերի հայտնաբերման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացումը: Միջոցառման ուշ մեկնարկով պայմանավորված՝ լաբորատոր հետազոտության ենթակա նմուշները ուշ են տրամադրվել միջոցառումն իրականացնող՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին: Միջոցառման շրջանակներում կատարվել է 7512 փորձարկում:

Բուսաբուծության խթանման և բույսերի պաշտպանության ծրագրի ծախսերը կազմել են 280.8 մլն դրամ կամ նախատեսվածի 77.8%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 7 միջոցառումներ:

Հաշվետու տարում 94.5 մլն դրամ է տրամադրվել բուսասանիտարիայի ծառայությունների մատուցմանը՝ ապահովելով 84.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է իրականացված աշխատանքների՝ նախատեսվածից փոքր ծավալով: Միջոցառումն իրականացվել է «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, սակայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի թիվ 985-Ա որոշման համաձայն ՊՈԱԿ-ը լուծարվել է, արդյունքում նախատեսված 315000 հա-ի փոխարեն մոնիտորինգ է իրականացվել 251650 հա տարածքներում:

Հաշվետու տարում բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 23.9 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 58.2%-ը: Շեղումը պայմանավորված է թունաքիմիկատների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերման արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև կատարված աշխատանքների՝ նախատեսվածից փոքր

ծավալով: Միջոցառման շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ պայքար է տարվել 50838 հա տարածքի վրա՝ նախատեսված 53282.5 հա-ի փոխարեն, որը պայմանավորված է մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված վարակված տարածքների նվազմամբ՝ կապված եղանակային փոփոխությունների հետ: Միջոցառման շրջանակներում տարվել է մկնանման կրծողների և մորեխների դեմ պայքար, որի շրջանակներում ՀՀ մարզերի հողօգտագործողներին հատկացվել են անհատույց թունաքիմիկատներ:

Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 47.1 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանի վարման, օրիգինատորի հաշվառման, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմման, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացման և դաշտային փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 12278 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում (լաբորատոր փորձաքննության ենթարկված սերմերի խմբաքանակների նմուշների թիվը՝ 495): Իրականացվել են 15 հատ սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, գրանցամատյանի վարում, օրիգինատորների հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում, 115 հատ բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի և դաշտային փորձարկումներ: Տարեվերջին հրապարակվել է բույսերի նոր սորտերի տեղեկագիրը և գրանցամատյանը:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության համար նախատեսված 4.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ նախկինում այն կատարվել է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության վերակազմակերպմամբ որպես ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին:

Գյուղատնտեսական մշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննության միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 27.8 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Միջոցառման շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների ախտորոշման, վնասատուների հայտնաբերման, ինչպես նաև բույսերի պաշտպանության միջոցների (բուժանյութերի) որակի (ազդող նյութի քանակի) ստուգման նպատակով իրականացվել են 5500 լաբորատոր փորձարկում, որից 5000-ը՝ գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների ախտորոշման և

վնասատուների հայտնաբերման մասով, իսկ 500-ը՝ բույսերի պաշտպանության միջոցների (բուժանյութերի) մասով: Գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների ախտորոշման, վնասատուների հայտնաբերման նպատակով իրականացվել են միջատաբանական, բուսախտաբանական, հելմինթոլոգիական, մոլախոտաբանական, իսկ բույսերի պաշտպանության միջոցների ազդող նյութի քանակի որոշման նպատակով՝ բարձր արդյունավետության հեղուկային քրոմատոգրման և տիտրացիոն մեթոդներով լաբորատոր փորձարկումներ:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 65.2 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Նշված միջոցառումների նպատակն է բարձրացնել հողի բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող՝ սննդատարրերի (ազոտ, ֆոսֆոր, կալիում) պարունակությունը, որն էական փոփոխություն է կրում 5 տարվա ժամանակահատվածում: Վերջինս կախված է մշակաբույսերի բերքի հետ դուրս եկող սննդանյութերի քանակից և պարարտացման մակարդակից: Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող 850 համայնք: Հաշվի առնելով 5 տարվա ընթացքում հողի վերարտադրության ցուցանիշների փոփոխությունը՝ յուրաքանչյուր տարի ագրոքիմիական հետազոտության են ենթարկվում 170 համայնքի վարելահողերն ու բազմամյա տնկարկները, և 5 տարվա պարբերականությամբ հանրապետության բոլոր համայնքներին տրվում են հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ ու մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 172 համայնքներում, հետազոտված 90097 հա տարածքից 30032 վերցված հողանմուշներում կատարվել են 75981 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի՝ (սննդատարրեր) պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 172 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, որոնցում հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմերը՝ ըստ կուլտուրաների, պարարտացման ժամկետները:

Հայաստանի Հանրապետությունում խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության և նոր այգիների հիմնման ծրագրի նպատակն է ֆիլոքսերիայի հետագա տարածման և զարգացման դեպքում պայմաններ ստեղծել խաղողագործությունը ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների վրա պատվաստված տնկանյութով կազմակերպելու համար: Միջոցառմամբ նախատեսվում է խաղողի տեղական սորտերի պատվաստված կոլեկցիոն այգու հիմնում և խնամք, ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների մայրուտի խնամք: Միջոցառման շրջանակներում նախատեսված 6.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը

պայմանավորված է նրանով, որ խաղողի ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալներով հիմնված այգին նախատեսվում է հանձնել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին, որի բյուջեով արդեն իսկ նախատեսված են այգու խնամքի համար անհրաժեշտ միջոցները:

ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում լոլիկի հարավամերիկյան ցեց վնասատուի դեմ պայքարի միջոցառումների իրականացման պիլոտային ծրագրին հատկացված միջոցները կազմել են 11.2 մլն դրամ, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքներում իրականացվել է ընդհանուր 10 հա մակերեսով (յուրաքանչյուր համայնքում 5-ական հա) հողերում լոլիկի ցեցի բացահայտման, զարգացման փուլերի տևողության, պոպուլյացիայի խտության, ինչպես նաև տնտեսական վնասակարության շեմի որոշման աշխատանքներ, և ըստ զարգացման փուլերի համապատասխան արդյունավետ պատրաստուկների կիրառման ժամկետների որոշման համար տեղադրվել են թվով 4 ֆերոմոնային թակարդներ իրենց լրակազմով և կատարվել է մոնիթորինգ: Մարզային գյուղատնտեսների կողմից գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է խորհրդատվություն՝ ցեցի դեմ քիմիական պայքար կազմակերպելու վերաբերյալ, կազմակերպվել են սեմինարներ: Ծրագրի արդյունքը (հարավամերիկյան ցեցի դեմ պայքարի արդյունավետությունը հասցնել 70%-ի) կատարվել է ամբողջությամբ՝ միջատասպան պատրաստուկների կիրառման արդյունավետությունը հասցնելով 95-99%, ցեցի վնասակարությունը հասցնելով 30%: Մշակվել և 5000 տպաքանակով գունավոր տպագրության է տրվել «Լոլիկի հարավամերիկյան ցեցը և պայքարը դրա դեմ» տեղեկատվական գրքույկ:

Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցության ծախսերը կազմել են շուրջ 11.1 մլն դրամ, որոնք կատարվել են 24.6%-ով: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2019 թվականին միջոցառման իրականացումը նախատեսվել է առաջին անգամ, և ֆինանսավորման նախնական հաշվարկի համար հիմք են վերցվել միջին վիճակագրական ցուցանիշները, սակայն միջոցառման իրականացման ժամանակ փաստացի ցուցանիշներն ամբողջությամբ կատարելու արդյունքում առաջացել է տնտեսում: Միջոցառման նպատակը հանրապետության տարածքում աշնանացան ցորենի, գարնանացան գարու, ոլոռի, ոսպի, սիսեռի, առվույտի և կորնգանի սերմնաբուծության ու սերմարտադրության զարգացումն է, որի արդյունքում կավելանան հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնանյութի արտադրական ծավալները, կբարձրանա տեղական սերմնանյութով ինքնաբավության մակարդակը: Միջոցառման շրջանակներում իրականացվել է ծրագրով

նախատեսված առաջին բաղադրիչը, որի շրջանակներում հիմնվել են 4 տեղական սերմարտադրող ֆերմերների կողմից 3.145 հա առաջին տարվա տնկարաններ:

Հաշվետու ժամանակահատվածում *Գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի* ծախսերը կազմել են 943.9 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի միջոցառման ծախսերով, որոնք կատարվել են 95.1%-ով՝ կազմելով 932.8 մլն դրամ: Վերջինս պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով, ինչպես նաև աշխատավարձի համար նախատեսված միջոցների տնտեսմամբ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին և ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներին ուղղվել է համապատասխանաբար 1.9 մլն դրամ և 2.9 մլն դրամ, որոնք կատարվել են նախատեսված ծավալով:

«ՀՀ ԳՆ տեխնիկական կարողությունների բարելավում» միջոցառման շրջանակներում օգտագործվել է 6.3 մլն դրամ՝ ապահովելով 80.6% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: Միջոցներն օգտագործվել են մեքենաների, սարքավորումների և գրասենյակային գույքի ձեռքբերման համար:

2019 թվականին *Գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման* ծրագրի շրջանակներում ծախսվել է 834.2 մլն դրամ՝ 31%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Ծրագիրն իրականացվել է արտաքին աջակցությամբ:

287.1 մլն դրամ օգտագործվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և/կամ զարգացման նպատակով տրանսֆերտների տրամադրման նպատակով, որոնք կազմել են ծրագրված ցուցանիշի 27.5%-ը: Վարկային համաձայնագիրը (23 մլն ԱՄՆ դոլար) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին, ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 23-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2020 թվականի մայիսի 31-ը: Միջոցառման նպատակներն են՝ արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականության և կայունության հետագա բարելավումը թիրախային համայնքներում, գյուղատնտեսական տեխնիկայի գնումը, պետական

կառույցների կարողությունների հզորացումը, անասնաբուժական սպասարկման կենտրոնների հիմնումը: Վերոհիշյալ նպատակների ձեռքբերման համար նախատեսվում է բարձրադիր տարածքների թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության և կայունության բարելավմանն ուղղված մասնակցային կառավարման պլանների մշակում և ներդրում, օժանդակություն պետական համապատասխան կառույցների զարգացմանը: Միջոցառման իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման մեծապես աճող միտման կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Ծրագրված ցուցանիշի նկատմամբ ծախսերի շեղումը պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի լուծարման և ՀՀ գյուղատնտեսության նախարարության վերակազմակերպման հետևանքով նախատեսված աշխատանքների հետաձգմամբ: Արդյունքում՝ շինարարական աշխատանքների իրականացման և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման մրցույթներն ուշացել են նախատեսված ժամկետներից: Շինարարական աշխատանքների իրականացումը (արոտների ջրարբիացում, փարախների և հովվի տնակների կառուցում, արոտ տանող ճանապարհների բարելավում, անասնաբուժական սպասարկման կենտրոնների կառուցում), գյուղտեխնիկայի և սարքավորումների գնման աշխատանքները շարունակվում են 2020 թվականի ընթացքում: Միջոցառման շրջանակներում ծախսերն ուղղվել են ՀՀ 7 մարզերի 16 բնակավայրերում 25.4 կմ ջրագծերի, 31 հատ խմոցների, 4 հատ փարախների և 3 հատ հովվի տնակի կառուցմանը: ՀՀ տարբեր մարզերի 23 համայնքների սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են 71 միավոր գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ: Ծրագրի համակարգման և ղեկավարման ծախսերը կատարվել են 63.8%-ով՝ կազմելով 511.5 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի լուծարման և ՀՀ գյուղատնտեսության նախարարության վերակազմակերպման հետևանքով նախատեսված աշխատանքների հետաձգմամբ: Միջոցառման նպատակն է ընտրված սննդամթերքի արժեշղթաներում բարձրացնել տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկաներ մուտք գործելու համար: Միջոցառմամբ նախատեսվել է նաև իրականացնել գործառնական ծախսերը, ինչպես նաև աշխատաժողովների կազմակերպման, լրացուցիչ տեխնիկական մասնագետների ընդգրկման, ազդեցությունների գնահատման և խորհրդատվական ծախսերը: Միջոցառման շրջանակներում միջոցներն ուղղվել են թվով 23 արտադրական կոոպերատիվներին, ասոցիացիաներին և գյուղական

ձեռնարկություններին «Արժեշղթայի զարգացման» բաղադրիչի նպատակային ֆինանսավորման համար:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 732.1 մլն դրամի դիմաց օգտագործվել է 5.5 մլն դրամ (0.8%-ը): Ծրագրի ընթացիկ ծախսերի գծով նախատեսվել էր ֆինանսավորել խորհրդատվական ծառայությունները և գործառնական ծախսերը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով՝ համակարգիչների, տպիչների, հեռակառավարման սարքավորումների և համակարգչային ծրագրերի ձեռքբերումը: Սակայն ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի լուծարման և կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ծրագրի մեկնարկը հետաձգվել է: Ծրագրի ոչ ֆինանսական ակտիվների գծով նախատեսված աշխատանքների կատարումը տեղափոխվել է 2020 թվական: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին կատարվել են վճարումներ ծրագիրն իրականացնող թիմի ու վիճակագրության և տվյալների բազայի խորհրդատուին: Ծրագրի նպատակն է՝ ուժեղացնել մոնիտորինգի և գնահատման ունակություններն ու համակարգը՝ հնարավորություն տալու համար վարել գյուղատնտեսության ոլորտում ապացուցահեն քաղաքականության մշակում և վերլուծություն:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 30 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 27.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում միջոցների խնայողաբար օգտագործման հանգամանքով: Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղացիներին վարկ տրամադրելու միջոցով զարգացնել գյուղատնտեսությունը: Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճով պայմանավորված՝ գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը իրականացվում է ոռոգման համակարգերի ընդլայնմամբ՝ որակի բարելավման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերության ավելացման հնարավորություններ ստեղծելու միջոցով: ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակման պլանի համաձայն, ծրագրի կառավարման խմբի միջոցով իրականացվել է ծրագրի շարունակության կառավարումը և վերահսկումը: 2019 թվականին ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են, շեղումը պայմանավորված է ծախսերի խնայողաբար օգտագործմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *Անասնաբուժական ծառայությունների* ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.6 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 95.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների պատվաստման միջոցառման կատարողականով, որը կազմել է 95.9% կամ 1.2 մլրդ դրամ: Վերջինս հիմնականում պայմանավորված է անասնագլխաքանակի նվազման, ինչպես նաև գնումների գործընթացի

արդյունքում դեղամիջոցների և պարագաների՝ նախատեսվածից ցածր գնով ձեռքբերելու հանգամանքով: Բացի այդ, էմկար պատվաստանյութը ուշ է ստացվել, ինչի արդյունքում նախատեսված միջոցառումը մասնակիորեն է իրականացվել: Միջոցառման շրջանակներում ծախսերն ուղղվել են կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմանը:

Անասնաբուժական միջոցառումների կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 55.7 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 81.2%-ը, որը պայմանավորված է «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարման արդյունքում վերջինիս պահպանման ծախսերի տնտեսմամբ. չօգտագործված միջոցներն ուղղվել են լրացուցիչ պատվաստանյութերի ձեռքբերմանը: Միջոցառման շրջանակներում կատարվել են հաշվետվությունների ընդունման, ամփոփման, մարզերին պատվաստանյութերի բաշխման և ախտահանության կազմակերպման աշխատանքներ:

Տվյալ ծրագրում ընդգրկված երկու միջոցառումների գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝ Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների ծախսերը կազմել են 259.6 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, ինչպես նաև կենդանական ծագման հումքի և նյութի ախտորոշման նպատակով իրականացվել է 801377 լաբորատոր փորձարկում, որի գերակշիռ մասը կազմել է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության ախտորոշումը՝ 796502 փորձարկում: Բացի բրուցելոզի ախտորոշումից, կատարվել են նաև կենդանիների լեյկոզ, սիբիրախտ, կատաղություն հիվանդությունների ախտորոշում, ինչպես նաև կենդանական ծագման հումքի և նյութի մանրէաբանական փորձարկումներ, որոնց ընդհանուր թիվը կազմել է 4875:

Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառման ծախսերը կազմել են 10.2 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են 4400 նմուշների (որից խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 2325 նմուշ, մանր եղջերավոր կենդանիներ՝ 2075 նմուշ) լաբորատոր փորձարկումներ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների դաբաղ հիվանդության ախտորոշման նպատակով: Նմուշները վերցվել են բարձր ռիսկային գոտիներից (սահմանակից համայնքներ Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին և Իրանին):

2019 թվականին *Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության* ծրագրի ծախսերը կատարվել են 20.8%-ով՝ կազմելով 402.4 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է արտաքին աջակցությամբ: Մասնավորապես՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ

իրականացվող Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 912.4 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ առաջարկվել է ծրագրի իրականացումը փոխանցել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը, սակայն ԳՋՄՀ-ի կողմից առաջարկը մերժվել է: Դրանով պայմանավորված՝ ծրագիրը ուշ է մեկնարկել: Ծրագրի շրջանակներում ֆինանսական փաթեթների տրամադրման նպատակով մրցույթը հայտարարվել է 2019 թվականի դեկտեմբեր ամսին, և ծրագրի իրականացումը տեղափոխվել է 2020 թվական: Ծրագրի շրջանակում կվերականգնվեն համայնքային սեփականության ներքո գտնվող դեգրադացված հողերը՝ կներդրվի հողերի կայուն կառավարման և արդյունավետ շահագործման համակարգ: Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի դրամաշնորհով ֆինանսավորվող հողերի կայուն կառավարման բաղադրիչը նաև ուղղված է ոռոգման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և լրացնում է ծրագրի շրջանակում իրականացվող ոռոգման երրորդային բաշխիչ համակարգերի կառուցման կամ վերականգնման աշխատանքները՝ ջրամատակարարումը բարելավելու և փոքր հողատերերի ոռոգվող հողակտորների արտադրողականությունը բարձրացնելու նպատակով և ոռոգելի տարածքներն ընդլայնելով: Ծրագրի այս բաղադրիչը կզարգացնի անհատ ֆերմերների, ֆերմերային ասոցիացիաների, կոոպերատիվների, ջրօգտագործողների ընկերությունների, քաղծառայողների և մյուս տեղական շահառուների՝ կայուն գյուղատնտեսական համակարգերի և տեխնոլոգիաների որդեգրման, էկոլոգիական վերականգնողական պլանների նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև կայուն արժեշղթաների զարգացման կարողությունները՝ հաշվի առնելով հողի և ջրի պահպանության, կլիմայական ռիսկերի նվազեցման հիմնահարցերը:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության վարկային ծրագրի շրջանակներում ոռոգման և ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նպատակով նախատեսված 528.3 մլն դրամից օգտագործվել է 276.1 մլն դրամը կամ 52.3%-ը, ինչը պայմանավորված է հայտարարված շինարարական աշխատանքների իրականացման մրցույթի ուշ մեկնարկով: Ծրագրի նպատակն է՝ բարելավել ջրամատակարարման և ոռոգման համակարգերը հանրապետության 7 մարզերի՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի գյուղական համայնքներում՝առաջնահերթություն տալով աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող տարածքներին: Ջրամատակարարման ծրագրերի ընտրության ժամանակ դիտարկվում են նաև անասնապահության զարգացման հնարավորությունները և տնամերձ հողատարածքների արտադրողականության բարձրացումը: Ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականների ընթացքում ավարտվել են շինարարական աշխատանքները 37 օբյեկտներում, այդ թվում՝ ջրամատակարարման գծով՝ 29 օբյեկտներում և ոռոգման ցանցերի վերակառուցման գծով՝ 8

օբյեկտներում: Ծրագրի իրականացման արդյունքում կօգտվեն շուրջ 75141 գյուղաբնակներ: 2019 թվականին նախատեսված էր իրականացնել շինարարական աշխատանքներ թվով 6 համայնքներում, շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրերը կնքվել են թվով 4 համայնքներում, որից 2-ին տրամադրվել են կանխավճարներ: Շինարարական աշխատանքների իրականացումը կշարունակվի 2020 թվականին, մյուս 2 համայնքներում շինարարության մրցույթը չի կայացել մասնակիցներ չլինելու պատճառով: 59.5%-ով են օգտագործվել տվյալ ծրագրի կառավարման և համակարգման համար նախատեսված միջոցները՝ կազմելով 77.2 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է խնայողություններով: Միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել են ԾԻԳ-ի գործառնական ծախսերը:

Չեն օգտագործվել նաև Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 187.3 մլն դրամի միջոցները: Նշված միջոցներից 158.5 մլն դրամը նախատեսվել էր սառնարանային տնտեսությունների կառուցման նպատակով, որոնք չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ ԳՀՄՀ-ի կողմից պահանջ է ներկայացվել կատարել միջպետական համաձայնագրի փոփոխություն ֆինանսական կատեգորիաների ուղղությամբ, որից հետո կթույլատրվի շինարարական մրցույթի իրականացումը: Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմամբ մշակվելու և իրականացվելու են պիլոտային ծրագրեր՝ ծրագրի շրջանակում վերականգնված ոռոգման ենթակառուցվածքներից օգտվող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների կողմից գյուղատնտեսական հողատեսքերի հողօգտագործման արդյունավետությունը կայուն գյուղատնտեսական համակարգերի ներդրման միջոցով բարձրացնելու նպատակով: 2019 թվականի ընթացքում իրականացվել է շահառու համայնքների ընտրություն, որի արդյունքում հաստատվել են Շիրակի մարզի Հոռոմ և Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքներում սառնարանների կառուցումը: 2019 թվականի ընթացքում իրականացվել է նախագծանախահաշվային կազմակերպության ընտրության մրցույթ, և հաղթող կազմակերպության կողմից մշակվել և ներկայացվել են մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթեր: Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 28.8 մլն դրամ էր նախատեսվել Հոռոմ և Վարդենիկ համայնքներում կառուցվող սառնարանների շինարարության ընթացքում հեղինակային և տեխնիկական հսկողության համար, որի իրականացումը կսկսվի շինարարության մեկնարկից հետո:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի

շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 28.4%-ը՝ 49 մլն դրամ, ինչը պայմանավորված է ծրագրի այլ միջոցառումներով նախատեսված աշխատանքների դանդաղ ընթացքով: Նշված միջոցառմամբ հիմնականում նախատեսվել էր իրականացնել ԾԻԳ-ի գործառնական ծախսերը:

Հաշվետու տարում *Գյուղատնտեսության արդիականացման* ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 868.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 62.4%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 13 միջոցառումներ:

94.3 մլն դրամ են կազմել գյուղական խորհրդատվական ծառայությունների ծախսերը՝ 96.2%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի լուծարմամբ, որը հանդիսանում էր միջոցառման իրականացնողը: Միջոցառման շրջանակներում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից տնտեսվարողներին մատուցվել է 2500 խորհրդատվական ծառայություն՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և միջազգային փորձի, գյուղատնտեսության արդյունավետ վարման և աջակցության ծրագրերի հասանելիության բարձրացման, դրանց արդյունավետության մոնիթորինգի իրականացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման համար պետական աջակցության ծախսերը կազմել են 328.5 մլն դրամ կամ նախատեսվածի 91.3%-ը: Խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվել են 2019 թվականի համար հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված բոլոր միջոցառումները: Շեղումը պայմանավորված է նրանով, որ հիմնադրամի և միջազգային գործընկերների հետ համագործակցության արդյունքում որոշ միջոցառումներ իրականացվել են վերջիններիս հետ համատեղ ֆինանսավորմամբ, արդյունքում առաջացել են տնտեսումներ: Ծրագրով նախատեսված միջոցառումները՝ աշխարհագրական նշումով գինիների համակարգի ներդրումը, կոլեկցիոն այգու և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների մայրուտի մշակումը և պահպանումը, կոլեկցիոն այգու լրացումը նոր սորտերով, խաղողի և գինու որակի բարձրացման խթանումը, միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին և մրցույթներին հայկական ընկերությունների մասնակցությունը, աջակցությունն ագրոպարենային ոլորտի մասնագիտական կարողությունների զարգացմանը, խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպությանը (OIV) Հայաստանի անդամակցությունից բխող գործառույթներն ամբողջությամբ իրականացվել են Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից՝ միջազգային մի շարք կառույցների ներգրավմամբ:

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին նախատեսված 52.2 մլն դրամի աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Միջոցներն ուղղվել են Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի լուծարման հետևանքով աշխատանքից ազատված աշխատողներին վերջնահաշվարկի և ազատման նպաստի, ինչպես նաև այլ ծախսերի կատարմանը:

Գյուղատնտեսական տեխնիկայի մաքսազերծման և պահպանման ծախսերի գծով աջակցության համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 33.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 97.9%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 272.4 մլն դրամ արժեքով 3 միավոր տրակտորների մատակարարման վերաբերյալ կնքված հաշտության համաձայնագրով ստանձնած ֆինանսական պարտավորությունների կատարմանը, մասնավորապես՝ մաքսազերծման, բրոքերային և պատասխանատու պահպանության ծառայություններին:

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են ավելի քան 44.6 մլն դրամ կամ նախատեսվածի 72.2%-ը: Ցածր կատարողականը կապված է ծրագրին դիմող տնտեսավարողների ցածր վարկունակությամբ պայմանավորված ֆինանսական կառույցների կողմից կանխատեսվածից քիչ հայտերի բավարարման հետ: Միջոցառման նպատակն է այգետնկումների խթանմամբ հանրապետությունում զարգացնել պտղաբուծությունը և խաղողագործությունը, ավելացնել խաղողի, պտղի և հատապտղի արտադրության, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինման ու արտահանման ծավալները: Միջոցառման շրջանակներում նախատեսված 12 տոկոս վարկից տնտեսավարողը վճարում է 2 տոկոսը, իսկ 10 տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից: Սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին և կոոպերատիվներին վարկերը տրամադրվում են 0 տոկոս տոկոսադրույքով:

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծախսերը կազմել են 9 մլն դրամ կամ նախատեսվածի 13.5%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրի ուշ մեկնարկով, որի արդյունքում այգեհիմնումները հիմնականում չեն կատարվել: Միջոցառման շրջանակներում տնտեսավարողին տրամադրվում է ծախսերի մասնակի փոխհատուցում այգու հիմնման փաստացի կատարված ծախսերի 50 տոկոսի չափով: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին տրամադրվել են խորհրդատվություններ, իսկ այգեհիմնումներն իրականացրել են թվով երկու տնտեսավարողներ:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծախսերը կազմել են ավելի քան 146.4 մլն դրամ կամ նախատեսվածի 76.1%-ը: Ցածր կատարողականը մասամբ պայմանավորված է գյուղատնտեսական տեխնիկայի՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով, մասամբ էլ՝ լիզինգի արտոնյալ ժամկետի (լիզինգառուն հնարավորություն ունի օգտվելու տարեկան մինչև 6 ամիս արտոնյալ ժամկետից) առկայությամբ: 2019 թվականին ծրագրից օգտվել է 217 շահառու՝ նախատեսված 130-ի փոխարեն, ինչը պայմանավորված է տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացման, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել 364 միավոր գյուղատնտեսական տեխնիկա:

Ցածր կատարողական է արձանագրվել Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի ծախսերում, որոնք կատարվել են 32.3%-ով՝ կազմելով 48.6 մլն դրամ: Վերջինս պայմանավորված է ծրագրի առանձնահատկությամբ. հայտը ստանալուց հետո ֆինանսական կառույցի կողմից մատակարարի հետ կնքվում է պայմանագիր, դրան հետևում է առաքումը, որը կարող է տևել մինչև 6 ամիս, իսկ լիզինգը հաստատվում է սարքավորումը Հայաստան հասնելուց և լիզինգառուին տրամադրելուց հետո: Բացի այդ, լիզինգի միջին չափը հաշվարկվել էր 85 մլն դրամ՝ հիմք ընդունելով ծրագրի մշակման փուլում կատարված հարցումները, սակայն շահառուները սարքավորումները ձեռք են բերել նախատեսվածից ցածր գներով: Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2019 թվականին ծրագրում կատարվել են հետևյալ լրացումները և փոփոխությունները.

- ձեռք բերվող սարքավորումների արժեքի վերին շեմը՝ 230 մլն դրամի չափը, բարձրացվել է մինչև 450 մլն դրամ,
- ծրագրի շրջանակներում ընդգրկվել է նաև կաթի տեղափոխման իզոթերմիկ ցիստերնների ձեռքբերումը,
- սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին լիզինգը տրամադրվել է 0 տոկոս տոկոսադրույքով,
- ծրագրից օգտվելու հնարավորություն է տրվել նաև ֆիզիկական անձանց,
- ջրային ռեսուրսների այլընտրանքային օգտագործման և Արարատյան հարթավայրի արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից ձեռք բերվող

ջրախնայողության համակարգերի սարքավորումների համար սուբսիդավորվում է անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 50 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 6 մլն դրամը:

Միջոցառման շրջանակներում 2019 թվականին ֆինանսական կառույցների կողմից հաստատվել է անասնաբուծության, ձկնաբուծության, թռչնաբուծության, բուսաբուծության և ագրովերամշակող արդյունաբերության ոլորտի տնտեսավարողների լիզինգի տրամադրման 100 հայտ՝ շուրջ 2.6 մլրդ դրամի չափով, որոնց շրջանակներում լիզինգով ձեռք է բերվել 364 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: Միջոցառմամբ նախատեսված 40 շահառուի դիմաց օգտվել է 100 շահառու՝ պայմանավորված ծրագրի նկատմամբ բարձր պահանջարկով:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և տնտեսավարողների կողմից կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցառումների շրջանակներում օգտագործվել են համապատասխանաբար 45.8 մլն դրամ և 9 մլն դրամ՝ ապահովելով 63.7% և 12.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝

- տնտեսավարողների ավելի լայն շրջանակի ծրագրից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով լրամշակված ծրագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2019 թվականի մարտ ամսին,
- որոշման ընդունումից հետո ընթացող ԳՖԿ-ի ու ծրագրի շրջանակներում համագործակցող ֆինանսական կառույցների միջև համաձայնագրերի վերակնքման գործընթացը որոշակի ժամանակ է պահանջել,
- վերը նշվածով պայմանավորված՝ 2019 թվականի հունվար-մարտ ամիսներին հայտեր չեն ներկայացվել,
- ոռոգման ջրով ապահովվածության իմաստով տարին բավականին բարենպաստ էր, և չնայած տեղերում ու բազմաթիվ այլ հարթակներում ոռոգման արդիական համակարգերի՝ մակերևութային ոռոգման նկատմամբ առավելությունների վերաբերյալ հողօգտագործողների իրազեկմանն ուղղված աշխատանքներին, վերջիններիս մոտ դեռևս ցածր է վստահության մակարդակն, ու նրանք նախընտրում են ոռոգման ավանդական եղանակը,
- տնտեսավարողների շրջանում իրազեկվածության դեռևս ցածր մակարդակ,
- տնտեսավարողների ցածր վարկունակություն, փոքր հողատարածքների համար համակարգերի ներդրման բավական մեծ ծախսատարություն, ծախսերի փոխհատուցման ոչ գրավիչ տոկոսադրույք,
- շահառուների կողմից ներկայացված փաստաթղթերում փոխհատուցման ենթակա գումարները նախատեսված ծախսերից քիչ են կազմել՝ տոկոսների բավական բարձր

լինելու պատճառով: Ծրագրում փոխհատուցման գումարը հաշվարկելու համար հիմք ընդունված գումարներից սեփական ուժերով ոռոգման արդիական համակարգ ներդնելու համար առավելագույն հաշվարկի գումարը նախատեսված է 1 հա-ի համար 1.6 մլն դրամ, իսկ կապալառուի միջոցով ներդնելու համար՝ 2.2 մլն դրամ:

Միջոցառումների շրջանակներում 2019 թվականին երկու բաղադրիչներով միասին նախատեսվել էր ոռոգման արդիական համակարգի ներդրում 780 հա տարածքում, սակայն համակարգը փաստացի ներդրվել է 380 հա հողատարածքում:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են ավելի քան 27.7 մլն դրամ կամ նախատեսածի 55.4%-ը: Շեղումը պայմանավորված է ծրագրի ուշ մեկնարկով, ինչպես նաև կարկտապաշտպան ցանցերի բարձր գնով, տնտեսավարողների ֆինանսական միջոցների բացակայությամբ և ցածր վարկունակությամբ: Միջոցառման նպատակն է մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրումը, արդյունքում՝ պտղատու և խաղողի այգիների՝ կարկուտից արդյունավետ պաշտպանությունը, տնտեսավարողների եկամուտների պահպանումն ու այգեգործության արդյունավետության բարձրացումը: Ծրագրի շրջանակներում վարկերի 12 տոկոս տոկոսադրույքից 2 տոկոսը վճարվում է տնտեսավարողի կողմից, իսկ 10 տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից: Ծրագրի շրջանակներում սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին և կոոպերատիվներին վարկը տրամադրվում է 0 տոկոս տոկոսադրույքով:

Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովմանը պետական աջակցության համար նախատեսված 164 մլն դրամի դիմաց օգտագործվել է 14.5 մլն դրամ (8.8%-ը): Վերջինս պայմանավորված է ծրագրի ուշ մեկնարկով: Ծրագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2019 թվականի ապրիլին, շահառուների հետ պայմանագրերը կնքվել են 2019 թվականի օգոստոս ամսին: Ծրագրին մասնակցության քայլերի հաջորդականությունը հետևյալն է.

- Միջոցառման մասնակցության պարտադիր պայման է հանդիսանում տնտեսավարողների կողմից դիմումների ներկայացումը,
- հավաստագրի առկայությունը, որը ստանալու համար նախքան շահառուների հետ պայմանագրի կնքումը, համաձայն շահառուի դիմումի, կազմակերպվում են երկշաբաթյա վճարովի դասընթացներ,
- կնքվում է պայմանագիր տնտեսավորողի հետ (վերջինիս կողմից նախագիծը և հավաստագիրը ներկայացնելուց հետո),

- շինարարության ավարտից հետո շահառուն դիմում է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ կցելով շինարարության ավարտական ակտերը: Հնգօրյա ժամկետում իրականացվում է մոնիթորինգ, որի դրական եզրակացությունից հետո տասնօրյա ժամկետում փոխհատուցման ենթակա գումարի 50%-ը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին:

Միջոցառման հիմնական նպատակն է Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովմանը պետական աջակցության միջոցով բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2019-2021 թվականներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, արժեքը կազմում է շուրջ 3.2 մլրդ դրամ: Մեկ անասնաշենքի կառուցման կամ վերակառուցման համար անհրաժեշտ փոխհատուցման հաշվարկման հիմքում դրվել է 3 մոդելի կառուցման կամ վերակառուցման համար նախատեսված միջին գումար՝ 23 մլն դրամի չափով: Միջոցառման համար նախատեսվել է իրականացնել կառուցման կամ վերակառուցման աշխատանքներ 8 անասնաշենքի համար, սակայն կնքվել են 24 պայմանագրեր՝ պայմանավորված քաղաքացիների կողմից ծրագրի պահանջներին համապատասխան փաթեթներ ներկայացնելու հանգամանքով: Իրականացված մոնիթորինգի արդյունքում վերջնական փոխհատուցման ենթակա են եղել 2 շահառուների ներկայացված հայտերը:

Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ծախսվել է 14 մլն դրամ: Ծրագիրը կատարվել է 70.1%-ով՝ պայմանավորված դրա ուշ մեկնարկով. այն հաստատվել է 2019 թվականի մարտին: Միջոցառմամբ նախատեսված գումարների տրամադրումն իրականացվել է տարվա վերջին ամիսներին, գումարի մնացած մասը փոխանցվել է 2020 թվականի հունվար ամսին: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռք բերման նպատակով տրամադրել պետական աջակցություն՝ տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով: Միջոցառման ընդհանուր բյուջեն 2019-2028 թվականների համար կազմում է 3.1 մլրդ դրամ: Միջոցառման շրջանակներում տրամադրված աջակցությամբ 2019 թվականին ձեռք է բերվել 300 գլուխ տոհմային կենդանի:

ՀՀ արտաքին գործերի նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականին կատարվել է պետական բյուջեի 8 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 16.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.7%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում առաջացել է Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ու Օտարերկրյա

պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպման և իրականացման ծրագրերում:

Հաշվետու տարում շուրջ 69.7 մլն դրամ հատկացվել է ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցին՝ *Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստման և վերապատրաստման* ծրագրի շրջանակներում, որն ամբողջությամբ օգտագործվել է: Դիվանագիտական դպրոցի նպատակներն են՝ դիվանագետների, պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների վերապատրաստումը, դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով, միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը, այլ ուսումնական ծրագրերի իրականացումը: Ծրագիրը նպաստում է նոր և որակյալ մասնագետներով դիվանագիտական ծառայության համալրմանը, պետական ծառայության, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների բարելավմանը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին վերապատրաստվել է 75 մասնագետ՝ նախատեսված 50-ի փոխարեն:

Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակման և իրականացման ծախսերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ներկայացուցչական ծախսերի համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագրի նպատակն է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացումը, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցությունը: Մասնավորապես, շուրջ 1.8 մլրդ դրամ օգտագործվել է կառավարության արտաքին քաղաքականության մշակման և իրագործման միջոցառման շրջանակներում՝ կազմելով ծրագրված միջոցների 98.8%-ը: 32.3 մլն դրամ (նախատեսված միջոցների 100%-ը) ուղղվել է ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացմանը, որոնց շրջանակներում նախատեսված 94660 ՀՀ մուտքի վիզաները, 50000 ՀՀ վերադարձի վկայականները և 20000 պաշտպանված ձևաթղթերն ամբողջությամբ տպագրվել են: Եվս 49.5 մլն դրամ և 1.2 մլն դրամ համապատասխանաբար հատկացվել է արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններին և պաշտոնական գործուղումներին՝ կազմելով ծրագրային ցուցանիշների 99.5%-ը և 96.3%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 2.4 մլրդ դրամ ուղղվել է *Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության* ծրագրին՝ 95.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Գումարը հիմնականում ուղղվել է միջազգային կազմակերպություններին ՀՀ

անդամակցության վճարներին, որոնք կատարվել են 95.8%-ով: Շեղումն առաջացել է անդամակցության պայմանագրերի գումարների ճշտման, որոշ կազմակերպություններից հայտերի բացակայության, ինչպես նաև ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի բնակարանի վարձակալման պայմանագրի չեղարկման արդյունքում: Հաշվետու տարվա ընթացքում նախատեսված 103 կազմակերպություններից 11-ի կողմից հայտեր չեն ներկայացվել, և ավելացել է 1 լրացուցիչ կազմակերպություն: Ծրագրի շրջանակներում 9.6 մլն դրամ տրամադրվել է ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովմանը, որը կատարվել է 100%-ով:

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպման և իրականացման ծախսերը կազմել են 10.7 մլրդ դրամ՝ 99.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 10.6 մլրդ դրամն ուղղվել է օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացմանը՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.3%-ը: Ծախսերի՝ ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է Լիոնում ՀՀ գլխավոր հյուպատոսության պահպանման ծախսերի 9 ամսվա գումարի տնտեսմամբ, որը մինչև 2019 թվականի հոկտեմբեր ամիսը ֆինանսավորվել է նվիրատվության հաշվին: Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանություններ, գլխավոր հյուպատոսություններ, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչություններ) միջոցով ապահովել է երկկողմ և բազմակողմ արտաքին կապերի պահպանումը, մատուցել է հյուպատոսական ծառայություններ: Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել աշխարհի 176 երկրների հետ, արտերկրում ՀՀ-ն ունի 41 ռեզիդենտ դեսպան, ովքեր հավատարմագրված են ընդհանուր առմամբ 73 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 11 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում է ՀՀ 9 գլխավոր հյուպատոսություն: 2019 թվականին ոչ ռեզիդենտ դեսպան է նշանակվել Թունիսի Հանրապետությունում և Մարոկկոյի Թագավորությունում (նստավայրը՝ Երևան):

Քաղաքացիներին օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացու վավերական անձնագիր տալու կամ այն փոխանակելու համար պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքում չգանձված պետական տուրքի գումարը վճարողների փոխարեն հատկացվում է ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ այն պետական բյուջե փոխանցելու նպատակով: 2019 թվականի ընթացքում տրամադրվել է օտարերկրյա պետություններում վավերական 408 անձնագիր ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայ այն օտարերկրյա քաղաքացիներին, որոնք ձեռք են բերել ՀՀ քաղաքացիություն և դիմել են առաջին անգամ ՀՀ անձնագիր ստանալու համար: Այս միջոցառմանը

պետական բյուջեից հատկացվել է 50.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության և արտերկրում ՀՀ դեսպանությունների շենքային պայմանների ապահովման նպատակով օգտագործվել է համապատասխանաբար 11.4 մլն դրամ և 35.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի համապատասխանաբար 96.6%-ը և 100%-ը:

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացման նպատակով օգտագործվել է 413.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 98.7%-ը: ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունն իր հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, 2019 թվականի ընթացքում իրականացրել է ՀՀ Նախագահի, ՀՀ Վարչապետի, փոխվարչապետների և ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ ՀՀ–ում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների, օտարերկրյա պետությունների կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների ու նրանց ուղեկցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն այցերի պատշաճ մակարդակով նախապատրաստումն ու իրականացումը: Մասնավորապես շուրջ 178 մլն դրամն օգտագործվել է Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացման, 234.1 մլն դրամն՝ արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության, իսկ 1.7 մլն դրամը՝ Արարողակարգի ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման համար, որոնք կազմել են ծրագրային ցուցանիշների համապատասխանաբար 97.2%-ը, 100%-ը և 83.8%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին ֆինանսավորվել է 3 ծրագիր, որոնք նախատեսված ծավալով կատարվել են: Մասնավորապես՝ 919.9 մլն դրամի *աջակցություն է տրամադրվել օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության կազմակերպմանը և իրականացմանը*, որից 741.9 մլն դրամ՝ ՀՀ դեսպանությունների ընթացիկ գործունեության իրականացմանը, 98.8 մլն դրամ՝ տրանսպորտային սարքավորումների և 79.2 մլն դրամ՝ վարչական սարքավորումների ձեռք բերման նպատակով:

12.8 մլն դրամի աջակցություն է տրամադրվել *արվեստների* ծրագրին, որից 7.1 մլն դրամը՝ «Կամրջելով Արևելքը Արևմուտքի հետ. Հովհաննես Թումանյանը և հեքիաթների թարգմանության արվեստը» գիտաժողովի իրականացում» միջոցառման շրջանակներում, իսկ 5.7 մլն դրամը՝ «Կոմիտաս վարդապետի երկերի անգլերեն թարգմանությամբ և լատինական ՀՄԲ գիտական տառադարձությամբ երկհատորյակի հրատարակություն» միջոցառման շրջանակներում:

18.1 մլն դրամ են կազմել *ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնակցության ծրագրի շրջանակներում Հայաստանում կրթական ծրագրին աջակցության* ծախսերը, որից շուրջ 8.6 մլն դրամ՝ ՀՀ Շիրակի,

Լոռու և Գեղարքունիքի մարզերի պետական ոչ բժշկական ուսումնական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ կրթության և ուսուցման որակի բարելավման նպատակով սեմինար-վարժանքների և շուրջ 9.6 մլն դրամ՝ դասընթացավարների վերապատրաստման, Հայաստանում կանանց դերակատարության և սեռի հատկանիշով խտրական ընտրության նվազեցման խթանման միջոցառումներին:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել են պետական բյուջեի 6 ծրագրեր, որոնց գծով ծախսերը կազմել են շուրջ 5.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 76.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման ու Անտառների կառավարման ծրագրերի կատարողականով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և մոնիթորինգի ծրագրին ուղղվել է 385.9 մլն դրամ՝ 96.2%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումներով: Մասնավորապես՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության միջոցառման իրականացման նպատակով օգտագործվել է 38.1 մլն դրամ՝ նախատեսվածի 84.2%-ը: 2019 թվականին շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ներկայացվել թվով 231 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: Տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 63 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերին: Փորձաքննության գործընթացում են գտնվել 59 նախատեսվող գործունեությունների, հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: 2019 թվականին տրամադրվել է նախատեսվող գործունեությունների և հիմնադրույթային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների 119 փորձագիտական եզրակացություն:

317.2 մլն դրամ ուղղվել է շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ապահովմանը՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.5%-ը: Միջոցառման շրջանակներում 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 19 դիտակետից իրականացվել է մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգ, 11 քաղաքներում՝ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ, 6 ջրավազանային կառավարման տարածքի 100 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ և թափոնների հաշվառում, դասակարգում և վերլուծություն:

Արարատյան դաշտի ապօրինի շահագործվող, ինքնաշատրվանող և բացասական մակարդակով հորերի լուծարման և կոնսերվացման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 30.6 մլն դրամ, ինչի շրջանակներում 2019 թվականին Արարատյան դաշտում լուծարվել է 8 խորքային հոր՝ խնայելով 500 լ/վրկ ջուր, կոնսերվացվել է 43 խորքային հոր՝ խնայելով 828.8 լ/վրկ ջուր:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 1.2 մլրդ դրամ է օգտագործվել *Բնապահպանության ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի* ծրագրի շրջանակներում, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 96.4%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով:

Համայնքներում բնապահպանական ծրագրերի իրականացման ծրագրի շրջանակներում 8 համայնքների տրամադրվել են 149.5 մլն դրամ սուբվենցիաներ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 83.7%-ը, որը պայմանավորված է համայնքների կողմից ներկայացված կատարողականներով: Նշված գումարից 111.5 մլն դրամը կազմել են կապիտալ սուբվենցիաները, 38 մլն դրամը՝ ընթացիկ սուբվենցիաները:

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման ծրագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում օգտագործվել է նախատեսված միջոցների 55.9%-ը՝ ավելի քան 1.7 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագրի և վերջինիս շրջանակներում Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ-ների), անտառային տարածքների, ոլորտի պետական կառույցների տեխնիկական կարողությունների բարելավման ծրագրի ցածր՝ համապատասխանաբար 38.4% (361.7 մլն դրամ) և 0.9% (3 մլն դրամ) կատարողականով, ինչպես նաև Սյունիքի մարզի ԲՀՊՏ-ների հարակից բնակավայրերի կարողությունների բարելավման նպատակով նախատեսված 442.3 մլն դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով: Առաջինը պայմանավորված է նախատեսված միջոցառումների իրականացումն ամփոփող փաստաթղթերի և ծրագրերի գնահատման, ՀԿ սեկտորի համար նախատեսված Փոքր դրամաշնորհային 3-րդ բաղադրիչի գնահատման (166 հայտ) և պայմանագրերի/ընթացակարգերի համաձայնեցման ժամանակատարությամբ և դրանով պայմանավորված՝ 2019 թվականի տարեվերջի համար նախատեսված կանխավճարների տեղափոխմամբ 2020 թվականի սկիզբ, ինչպես նաև ԲՀՊՏ-ների աշխատակիցների վերապատրաստման դասընթացների հետաձգմամբ 2020 թվական:

Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ-ների), անտառային տարածքների, ոլորտի պետական կառույցների տեխնիկական կարողությունների բարելավման

ծախսերի կատարողականը պայմանավորված է պետական կառույցների կարողությունների զարգացման համար նախատեսված գույքի և սարքավորումների ցանկերի քննարկման և համաձայնեցումների ստացման ժամանակատարությամբ, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի մշակման համար հայտարարված մրցույթներին դիմողների բացակայությամբ:

ԲՀՊՏ-ների կառավարման և պահպանման ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի ԲՀՊՏ-ների հարակից բնակավայրերի կարողությունների բարելավման նպատակով նախատեսված 442.3 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված շինարարության և վերանորոգման աշխատանքների մեկնարկման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման համար հայտարարված մրցույթներին մասնակցելու համար դիմողների բացակայությամբ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի 16 բնակավայրերում ֆինանսավորվել են ընտանեկան փոքր ծավալի 95 մեկնարկային բիզնես ծրագրեր՝ յուրաքանչյուրը մոտ 1300 եվրոյի չափով, որոնք ուղղված են աշխատատեղերի ստեղծմանը և սոցիալ-տնտեսական զարգացմանը, էներգախնայողությանը, զբոսաշրջության զարգացմանը:

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար պետական բյուջեից տրամադրվել է 114.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 99.9%-ը: 2019 թվականին «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել է մինչև ծովի մակերևույթից 1901.5 բացարձակ նիշն ընկած տարածքների մանրամասն ուսումնասիրություններ և գնահատում, ինչպես նաև ընտրված տեղամասերի համար հանույթ անօդաչու թռչող սարքերի միջոցով: Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված էր 2019 թվականին մաքրել ընդհանուր 98 հա տարածք, որից 4-ը՝ ջրածածկ: Լիարժեք մաքրված տարածքները կազմում են 52 հա, ևս 46 հա անտառածածկ տարածքներում հիմնականում ավարտվել են ծառերի, թփերի հատման աշխատանքները: Անտառածածկ տարածքների աննախադեպ խտությունը, անկանխատեսելի խորությամբ ճահճուտները, եղանակային անբարենպաստ պայմանները նախատեսվածից ավելի կոճղերի առկայությունը լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծել աշխատանքները պայմանագրով նախատեսված ժամկետում ավարտելու համար:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման համար պետական բյուջեից տրամադրվել է 6.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրված միջոցների 87.7%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում հաշվառվել են սիգի, արծաթափայլ լճաճանի և Սևանի իշխանի պաշարները,

ինչպես նաև կատարվել են Սևանա լճի և էնդեմիկ ձկնատեսակների համար ձվադրավայր հանդիսացող 7 գետերի մանրակրկիտ հիդրոէկոլոգիական հետազոտություններ, ուսումնասիրվել է դրանց էկոլոգիական վիճակը, բացահայտվել են բնական ձվադրությանը խոչընդոտող գործոնները:

«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարման համար հատկացվել է 372.7 մլն դրամ, որն ամբողջ ծավալով օգտագործվել է: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր 6.1 հա տարածքի վրա իրականացրել է անտառտնկման աշխատանքներ, ինչպես նաև հսկողություն ապօրինի ձկնորսության, անտառային օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման և հայտնաբերման ուղղությամբ:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարման համար հատկացվել է 201.5 մլն դրամ, որը նույնպես ամբողջ ծավալով օգտագործվել է: «Դիլիջան» ազգային պարկում կատարվել են անտառվերականգնման աշխատանքներ (հաճարենու և կաղնու սերմերի ցանքս)՝ 120 հա տարածքում և անտառապատման աշխատանքներ՝ տնկվել է շուրջ 2000 տնկի: Որսագողության, ապօրինի հատումների, արածացումների, ապօրինի շինությունների, հողազավթումների և հրդեհների դեմ պայքարելու նպատակով քաղաքում և գյուղական համայնքներում ազգաբնակչության հետ կազմակերպվել են հանդիպումներ և ժողովներ, կատարվել են 2019 թվականի գարնանային և աշնանային հերթական, արտահերթ և ստուգողական ստուգայցեր: Կենսաբազմազանության բազայում գրանցվել է 93 անուն բույսերի արեալների և 14 անուն կենդանատեսակների հետքերի վերաբերյալ տեղեկատվություն: Կատարվել են 35 անուն նոր հերբարիումների պատրաստման աշխատանքներ:

Արգելոցապարկային համալիր ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարման համար օգտագործվել է 190.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 93.5%-ը: Շեղումը պայմանավորված է միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումով, որը վերադարձվել է պետական բյուջե: Միջոցառման շրջանակներում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության Ստեփանավանի «Սոճուտ», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ», Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկերում, «Ջրվեժ» անտառպարկում, «Էրեբունի» պետական արգելոցում և «Որդան կարմիր» արգելավայրում իրականացվել են պահպանության, պաշտպանության և գիտական ուսումնասիրությունների գծով աշխատանքներ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման համար հատկացվել է 188.5 մլն դրամ, որն ամբողջությամբ

օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են «Խոսրով», «Խաչաձոր», «Գառնի», «Կաքավաբերդ» տեղամասերի և «Խոր Վիրապ» ու «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի պահպանությանը: Իրականացվել են հակահրդեհային նշանակության բազմաբնույթ աշխատանքներ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների կատարման համար հատկացվել է 73.9 մլն դրամ, որը նույնպես ամբողջ ծավալով օգտագործվել է: «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքներում պարբերաբար իրականացվել են հերթական և վերստուգիչ ստուգումներ, որոնց արդյունքում էական ապօրինի գործողություններ չեն արձանագրվել: Հաշվետու ժամանակահատվածում «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում տնկվել է 0.2 հա անտառ:

«Զիկատար» պետական արգելավայրի պահպանության համար օգտագործվել է 15.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 96.8%-ով կատարում: Շեղումը պայմանավորված է միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսմամբ: «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում իրականացվել են բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքներ, պետական արգելավայրի ընդհանուր մակերեսով 150 հա տարածքներում պահպանության միջոցառումներ: Արգելավայրի առավել հրդեհավտանգ տարածքներում իրականացվել է հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով (հողի վերին շերտի հեռացում): Իրականացված միջոցառումների արդյունքում ապահովվել է տարածքի հրդեհաանվտանգությունը:

201.3 մլն դրամ օգտագործվել է Զանգեզուր կենսոլորտային համալիր ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարման համար՝ կազմելով ծրագրված միջոցների 96.9%-ը: Միջոցառման շրջանակներում ուսումնասիրվել են ողնաշարավոր կենդանիների որոշ տեսակների (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ, եվրոպական այծյամ, փորսուղ, եվրոպական նապաստակ, գայլ, անտառային կատու և այլն) ինչպես ձմեռային կենսակերպը, այնպես էլ սեզոնային փոփոխությունների հետ կապված նրանց միգրացիան, տարիքային և քանակային կազմը: Իրականացվել են պահպանության աշխատանքներ 79038.7 հա բնության հատուկ պահպանվող տարածքներում:

Հաշվետու տարում 7 մլն դրամ (100%) աջակցություն է տրամադրվել Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղին՝ գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների գծով ծախսերի փոխհատուցման նպատակով:

2019 թվականին շուրջ 1.8 մլրդ դրամ է օգտագործվել *Անտառների կառավարման* ծրագրի շրջանակներում՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 86.5%-ը: Շեղումը հիմնականում

պայմանավորված է անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կատարողականով և անտառկառավարման պլանների կազմման համար նախատեսված միջոցները՝ 113.7 մլն դրամը, չօգտագործելու հանգամանքով: Վերջինս պայմանավորված է միջոցառման համար պատասխանատու լիազոր մարմնի փոփոխության վերաբերյալ կառավարության որոշման նախագիծը չընդունելու հանգամանքով, ինչի արդյունքում նախատեսված աշխատանքները չեն իրականացվել:

Անտառային ոլորտում քաղաքականության մշակման և աջակցության ծառայությունների, ծրագրերի համակարգման նպատակով օգտագործվել է 170.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 79.9% կատարում: Շեղումը պայմանավորված է Անտառային կոմիտեին և «Հայանտառ» ՊՈԱԿ-ին հատկացված տարածքի համատեղ օգտագործմամբ, ինչի արդյունքում մի շարք ծախսեր կոմիտեի կողմից տնտեսվել են: Առկա են նաև թափուր հաստիքներ:

Անտառների կառավարման ծրագրի շրջանակներում 1.2 մլրդ դրամ ուղղվել է անտառպահպանական ծառայություններին, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսությունների կողմից կազմվել են 393 անտառխախտման արձանագրություններ, որից մեկն անասունների ապօրինի արածեցման, 4-ը՝ 0.2069 հա անտառային տարածքի հողազավթման և 388-ը՝ անտառխախտման արձանագրություն 15198 ապօրինի հատված ծառերի վերաբերյալ: Կազմված բոլոր անտառխախտման արձանագրություններից 261-ն ուղարկվել է ոստիկանության մարզային տարածքային բաժիններ, իսկ 132-ը՝ մարզերի տարածքային բնապահպանության և ընդերքի տեսչական մարմիններ: Անտառային կոմիտեն և «Հայանտառ» ՊՈԱԿ-ը ապօրինի հատումների դեմ պայքարն իրականացնում են՝ համագործակցելով ոստիկանության, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: 2019 թվականին արձանագրվել է անտառային հրդեհների 80 դեպք՝ 2409.34 հա ընդհանուր տարածքով, որից անտառածածկ՝ 1876.02 հա, իսկ ոչ անտառածածկ՝ 533.32 հա:

Շուրջ 12 մլն դրամ տրամադրվել է անտառների կադաստրի վարման ծախսերի ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 79.8%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքարի շրջանակներում օգտագործվել է 10.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 23.8%-ը: 2019 թվականի գարնանը Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Անտառտնտեսության մասնաճյուղերի կողմից իրականացվել են անտառպաթոլոգիական հետազոտություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառածածկ տարածքներում առկա են շուրջ 9230 հա տերևակեր վնասատուներով և 5272 հա՝ մասնակի հիվանդություններով համատեղ վարակված տարածքներ: Անտառային

վնասատուների և հիվանդությունների դեմ ավիաքիմիական պայքարի աշխատանքներ իրականացնելու համար հայտարարված մրցույթը չի կայացել, քանի որ անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն պայքարի աշխատանքների իրականացման համար համապատասխան սարքավորումներով կահավորված ուղղաթիռի բացակայության պատճառով ոչ մի հայտ չի ներկայացվել: Հաշվետու տարում ձեռք է բերվել 2700 կգ թունաքիմիկատ (միջատասպան պրեպարատ):

49.3 մլն դրամ՝ ծրագրված ցուցանիշի 93.5%-ը, ուղղվել է Անտառային պետական մոնիտորինգին, որի շրջանակներում իրականացվել են արբանյակային և անօդաչու թռչող սարքով պատկերների վերծանման արդյունքում հայտնաբերված փոփոխված անտառածածկ տարածքների, 2019 թվականին հատկացված հատատեղերի, փայտանյութի մթերման, անտառվերականգնման, ապօրինի հատումների, հիվանդություններով վարակված օջախների, անտառային պահաբաժինների ստուգումների արդյունքների հավաստիության, հակահրդեհային անվտանգության միջոցառումների վերաբերյալ ուսումնասիրություններ: Ծախսերի ծրագրից շեղումը պայմանավորված է խնայողություններով:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է 549.9 հազ. դրամ:

3.5 մլն դրամ օգտագործվել է Բնապահպանության նախարարության Անտառային կոմիտեի տեխնիկական կարողությունների ընդլայնման նպատակով: Ծրագրից 31%-ով շեղումը պայմանավորված է նրանով, որ գույքի ձեռքբերման մրցույթը չի կայացել մասնակիցների՝ սահմանված գնից էականորեն բարձր գին առաջարկելու պատճառով:

Հաշվետու տարում 346.3 մլն դրամ տրամադրվել է անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների համար, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 81.6%-ը: Շեղումը պայմանավորված է աշխատանքների՝ նախատեսվածից ուշ մեկնարկով: Նշված աշխատանքների շրջանակներում իրականացվել են ցանք և տնկում՝ 150 հա, բնական վերաճի օժանդակում՝ 200 հա և կոճղաշիվային վերաճի օժանդակում՝ 460 հա: Հիմնադրվել է տնկարան 7.4 հա: Ձեռք են բերվել 8 տրակտոր՝ իրենց կոմպլեկտ սարքավորումներով:

5.9 մլն դրամ տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Երևանի անտառպետության տարածքում կաթիլային ոռոգման համակարգի ներդրմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 98.3%-ը: Միջոցներն օգտագործվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով:

Բնագիտական նմուշների պահպանության և ցուցադրության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում օգտագործվել է 340.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 97%-ը: Շեղումը պայմանավորված է «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» միջոցառման կատարողականով, որի շրջանակներում օգտագործվել է 37.9 մլն

դրամ կամ նախատեսվածի 78.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի վճարման նպատակով նախատեսված գումարը չօգտագործելու հանգամանքով, քանի որ տվյալ ՊՈԱԿ-ը ազատված է ԱԱՀ-ից:

302.4 մլն դրամ հատկացվել է կենդանաբանական այգու ցուցադրությունների ֆինանսավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Հաշվետու տարում կենդանաբանական այգում իրականացվել են կենդանիների ազատավանդակներում «էլեկտրոնային հովիվ» համակարգի ներդրման, վերանորոգման, ինչպես նաև այգու տարածքի բարեկարգման աշխատանքներ, կենդանիների ազատավանդակներում կոտրված դռների, բետոնե աստիճանների կառուցման, արգելապատնեշների հիմնային հատվածների ցանցապատման, ճաղավանդակների ձևափոխման և ուժեղացման, ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերանորոգման և արդիականացման աշխատանքներ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում իրականացվել են 24 ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է ավելի քան 157.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 93.3% կատարողական, ընդ որում, գրեթե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ:

Հաշվետու ժամանակահատվածում 11.9 մլրդ դրամ է տրամադրվել *Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* ծրագրին՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 92.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման և միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի միջոցառումների կատարողականով:

ՆՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծման ծախսերը 2019 թվականին կազմել են ավելի քան 82.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 89.4%-ը: Միջոցառման նպատակն է մասնագիտության ընտրության հարցում դպրոցականներին դեպի աշխատաշուկա ուղղորդումը՝ բացահայտելով նաև նրանց անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները, ինքնագնահատման և մոտիվացիայի մակարդակն ու հնարավորությունները, և աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանն ու առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելուն աջակցումը: Ծախսերի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ կազմակերպություններում կարիերայի աշխատակիցների մի մասի հետ պայմանագրեր կնքվել են տարբեր ամիսների համար: 2019

թվականին սովորողների տարեկան փաստացի թիվը կազմել է 10711՝ կանխատեսված 7000-ի փոխարեն:

2019 թվականի ընթացքում ավելի քան 2.1 մլրդ դրամ է տրամադրվել նախնական մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 357.7 մլն դրամ՝ նախնական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99.8%-ով և 93.3%-ով՝ պայմանավորված նախատեսվածից պակաս թվով ուսանողների ընդունելությամբ: 2019 թվականին գործել է 22 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ, և նպաստ է տրամադրվել 6533 ուսանողի համար, որոնք ստացել են նաև կրթաթոշակ՝ կանխատեսված 6870-ի դիմաց:

Միջին մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստացող ուսանողներին տրամադրվել է ավելի քան 610 մլն դրամ կրթաթոշակ, որը կազմել է նախատեսված հատկացումների 82.9%-ը՝ պայմանավորված ուսանողների՝ կանխատեսվածից պակաս թվով ընդունելությամբ: 2019 թվականին գործել է 73 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատություն, և կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 10572՝ կանխատեսված 12902-ի դիմաց:

2019 թվականին ավելի քան 6.8 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների վճարմանը, որը կազմել է նախատեսված հատկացումների 91.7%-ը, որը նույնպես պայմանավորված է ուսանողների՝ կանխատեսվածից պակաս թվով ընդունելությամբ և նպաստ ստացող ուսանողների՝ կանխատեսվածից փոքր թվով: 2019 թվականին նպաստ ստացող ուսանողների տարեկան թիվը կազմել է 18859՝ կանխատեսված 19085-ի դիմաց:

Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սփյուռքահայ ուսանողների ուսման վճարի փոխհատուցման նպատակով հատկացվել է 1.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականի ընթացքում ուսումնական վճարի փոխհատուցում է ստացել 14 սփյուռքահայ ուսանող:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման միջոցառման ծախսերը կազմել են ավելի քան 1.8 մլրդ դրամ կամ 93.1%, որը հիմնականում պայմանավորված է գնման պայմանագրերի ուշ կնքմամբ, որի արդյունքում թվով 3 նախագծերի գծով կատարողականներ չեն ներկայացվել, և նախատեսված 11 ՆՄԿՈՒ հաստատություններից նախագծերը կազմվել են միայն 3-ի համար, իսկ մնացած 8-ինը նախատեսվել է ավարտել 2020 թվականին: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի և Գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման

աշխատանքները, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի պրոֆ. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծահետազոտական աշխատանքները:

Թվով 1 նախնական (արհեստագործական) և 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման նպատակով տրամադրվել է 22 մլն դրամ, որը կազմել է նախատեսված հատկացումների 66.8%-ը՝ պայմանավորված կնքված պայմանագրերի շրջանակներում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր «Երևանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի և «Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման համար:

2019 թվականին *Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության* ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 9.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 91%-ը: Կատարողականը հիմնականում պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման և բուհական հաստատություններում հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման միջոցառումների կատարողականով:

2019 թվականին պետական բյուջեից 47.3 մլն դրամ է հատկացվել ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում, հիմնվելով Եվրոպական կրթական չափորոշիչների վրա, տրամադրվել է ավարտական փաստաթղթերի ու դիպլոմների փոխճանաչման վկայականների 1252 հատ խորհրդատվական տեղեկանք՝ կանխատեսված 502-ի դիմաց: Որակավորումների ճանաչման նպատակն է օտարերկրյա որակավորումը համադրելի դարձնել Հայաստանի Հանրապետության բուհերի շնորհած որակավորումների հետ և հակառակը:

ԵՊՀ 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառմանը հատկացվել է 18 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի տոնական միջոցառումներին մասնակցության նպատակով 21 երկրներից Հայաստան են ժամանել գիտական և կրթական ոլորտների 84 ներկայացուցիչներ: Միջոցառման շրջանակներում տեղի է ունեցել ԵՊՀ գիտական խորհրդի հանդիսավոր նիստ, որի ընթացքում ընդունվել է Ակադեմիական ազատության մասին հռչակագիրը, և իրականացվել է պարգևատրման արարողություն, «Բարձրագույն կրթությունը, հետազոտությունը և նորարարությունը 21-րդ դարում» թեմայով միջազգային խորհրդաժողովը և

պաշտոնական հանդիսավոր արարողությունը Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 783.3 մլն դրամ՝ ապահովելով 89.2% կատարողական, որը պայմանավորված է նախատեսվածից պակաս թվով ուսանողների ընդունելությամբ: 2019 թվականին կրթաթոշակ ստացող ուսանողների տարեկան փաստացի թիվը կազմել է 6449՝ կանխատեսված 7508-ի դիմաց:

2019 թվականին հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակը բուհական հաստատություններում կազմել է 215.1 մլն դրամ՝ ապահովելով 90.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից պակաս թվով ուսանողների ընդունելությամբ: 2019 թվականին կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 466՝ կանխատեսված 523-ի դիմաց:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների վճարման համար 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 18.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրված հատկացումների 65.2%-ը: Շեղումը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների՝ կանխատեսվածից փոքր թվով: 2019 թվականին փաստացի կրթաթոշակ են ստացել 84 ուսանողներ՝ կանխատեսված 102-ի դիմաց:

Ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծախսերը կազմել ավելի քան 7.7 մլրդ դրամ՝ ապահովելով 93.1% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է նախատեսվածից պակաս ընդունելությամբ և «Պատիվ ունեմ» ծրագրին մասնակցությամբ, ինչպես նաև օրենքով սահմանված արտոնություններից օգտվող, սոցիալապես անապահով ընտանիքների և սահմանամերձ համայնքների ուսանողների թվով: 2019 թվականին ուսանողական նպաստներ ստացող ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 10735՝ կանխատեսված 12114-ի դիմաց:

Բուհական հաստատություններում հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծախսերը 2019 թվականին կազմել են 510.3 մլն դրամ կամ ծրագրի 81.4%-ը: Ծախսերի կատարողականը պայմանավորված է ասպիրանտուրա ընդունված և օտար լեզվի, ինֆորմատիկայի ու տեղեկատվահաղորդակցական հիմունքների դասընթացներին մասնակցած ուսանողների՝ կանխատեսվածից փոքր թվով: 2019 թվականին ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 1501՝ կանխատեսված 1603-ի դիմաց:

2019 թվականին գիտակրթական հաստատություններում հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծախսերը կազմել են 29.2 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 70.7%-ը՝ պայմանավորված դասընթացներին նախատեսվածից պակաս դիմորդների մասնակցությամբ: 2019 թվականին ուսանողների տարեկան փաստացի միջին թիվը կազմել է 173՝ կանխատեսված 212-ի դիմաց:

Երևանում մարզաբնակ ուսանողներին բարձրագույն կրթության հասանելիության ապահովման միջոցառման շրջանակներում տրամադրվել է 24.7 մլն դրամ՝ 82.1%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն ուղղվում են ուսանողներին զեղչված գներով հանրակացարանային պայմանների տրամադրմանը: Ծախսերի շեղումը պայմանավորված է բնակիչների փաստացի թվով, որը կազմել է 156՝ նախատեսված 190-ի դիմաց:

2019 թվականին ուսանողներին ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցման նպատակով տրամադրվել է 54.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8% կատարողական: Միջոցառման շրջանակներում իրականացվում է ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում 2 տոկոսային կետի չափով, բարձր առաջադիմության դեպքում՝ 3 տոկոսային կետի չափով: 2019 թվականին ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 11869՝ կանխատեսված 1750-ի դիմաց:

Արտասահմանում սովորող ուսանողներին աջակցության նպատակով նախատեսված 94.6 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, որը պայմանավորված է վճարման հայտերն ուշ ներկայացնելու հանգամանքով:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող սփյուռքահայ ուսանողների ուսման վճարի փոխհատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2019 թվականի ընթացքում ուսման վճարի փոխհատուցում է ստացել 25 սփյուռքահայ ուսանող:

2019 թվականին բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի շենքային պայմանների բարելավման նպատակով տրամադրվել է 59.1 մլն դրամ՝ 86.4%-ով ապահովելով ծրագիրը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 245.2 մլն դրամ է տրամադրվել *Սփյուռքի հայապահպանության ծրագրին*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 68.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններից հետո ժամանակի սղության պատճառով հնարավոր չի եղել բոլոր միջոցառումներն ամբողջությամբ իրականացնել:

«Ուսումնական և հանրամատչելի գրականության մշակման աջակցություն և առաքում սփյուռքի համայնքներ» միջոցառման նպատակով նախատեսված 16 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ գրքերը ձեռք են բերվել տարեվերջին և, ժամկետներով պայմանավորված, հնարավոր չի եղել իրականացնել առաքում:

Կրթամշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 29.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 48.9%-ը: Ցածր կատարողականը

պայմանավորված է այն հանգամանքով, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններից հետո ժամանակի սղության պատճառով հնարավոր չի եղել միջոցառումն ամբողջությամբ իրականացնել: 2019 թվականին նախատեսված միջոցառումներից իրականացվել է միայն Մերձավոր սփյուռքի համայնքներին աջակցությունը, որը կատարվել է 100%-ով:

2019 թվականին «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում պետական բյուջեից տրամադրվել է 111.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 69.2%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ միջոցառման շրջանակներում նախատեսված 4 փուլերից իրականացվել են 2-ը, և չի իրականացվել նախատեսված 100 ուսուցիչների վերապատրաստումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են սփյուռքի հայ երիտասարդության և պատանիների ճանաչողական այցելություններ Հայաստան: 2019 թվականի ընթացքում միջոցառման մասնակից երիտասարդների և ուղեկցողների փաստացի թիվը կազմել է 385՝ նախատեսված 1000-ի դիմաց:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրման ծախսերը կազմել են 86.8 մլն դրամ կամ 94.7%: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններից հետո ժամանակի սղության պատճառով միջոցառումն ամբողջությամբ հնարավոր չի եղել իրականացնել: 2019 թվականի ընթացքում, պահանջարկով պայմանավորված, սփյուռքի հայկական կրթական հաստատություններին փաստացի տրամադրվել է 62.8 հազար ուսումնական գրականություն՝ նախատեսված 57 հազարի դիմաց:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության նպատակով նախատեսված 10 մլն դրամը չի օգտագործվել: Միջոցառումը չի իրականացվել, քանի որ գումարը Վրաստան փոխանցելու համար անհրաժեշտ էր դրամաշնորհի տրամադրման միջնորդ օղակ, որն առկա չէր:

Հաշվետու տարում 4 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով, որն իրականացվել է նախատեսված ծավալով:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում Վրաստանում գործող Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնին հատկացվել է 14 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Կրթության և գիտության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրին 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 903.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 8 միջոցառում:

«Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ» և «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումների շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 786.8 մլն դրամ և 13.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշների 98.1%-ը և 66.7%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ, ինչպես նաև գործուղումների գծով ծախսերի տնտեսմամբ:

Լեզվի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայությունների իրականացման նպատակով տրամադրվել է 87.8 մլն դրամ՝ ապահովելով 96.1% կատարողական՝ պայմանավորված է գնումների գործընթացների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ, ինչպես նաև ներքին գործուղումների գծով ծախսերի տնտեսմամբ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների և արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 12.7 մլն դրամ և 1.1 մլն դրամ, որոնք կատարվել են համապատասխանաբար 100%-ով և 94.5%-ով:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 393.7 հազար դրամ:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 1.3 մլն դրամ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով նախատեսված 2.4 մլն դրամը գրեթե չի օգտագործվել՝ պայմանավորված Լեզվի կոմիտեի կարիքների վերանայմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 88.9 մլրդ դրամ է օգտագործվել *Հանրակրթության ծրագրի* շրջանակներում՝ ապահովելով 98.7% կատարողական: Ծրագրում ընդգրկված են 29 միջոցառումներ, որոնցից 6-ն իրականացվել են ամբողջությամբ:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով 79.3 մլրդ դրամ, որից 26.6 մլրդ դրամը

(99.8%) կազմել են տարրական, 37.4 մլրդ դրամը (99.8%)՝ հիմնական, 15.2 մլրդ դրամը (99.7%)՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2019 թվականին տարեսկզբին գործել է 1379 դպրոց, իսկ տարեվերջին 1381 դպրոց: 2019 թվականին ընդհանուր հանրակրթության համակարգում սովորողների փաստացի թիվը կազմել է 361925՝ կանխատեսված 370773–ի դիմաց: Հաշվետու տարում 149823 աշակերտներ են սովորել (նախատեսված 149955-ի դիմաց) տարրական ընդհանուր կրթության դասարաններում, 163723 աշակերտներ՝ (նախատեսված 163649-ի դիմաց) հիմնական ընդհանուր կրթության դասարաններում, 48379 աշակերտներ՝ (նախատեսված 57169-ի դիմաց) միջնակարգ ընդհանուր կրթության դասարաններում:

2019 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ հատուկ հանրակրթության ծախսերը կատարվել են 95.6%-ով՝ կազմելով շուրջ 2.1 մլրդ դրամ, որից 566.4 մլն դրամն (99.7%) ուղղվել է տարրական, 910.1 մլն դրամը (98.8%)՝ հիմնական, 578.8 մլն դրամը (87.4%)՝ միջնակարգ հատուկ հանրակրթական հաստատություններին: Շեղումը պայմանավորված է հատուկ դպրոցները տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերակազմակերպելու հանգամանքով, ինչպես նաև հատուկ կրթական հաստատությունների աշակերտների՝ կանխատեսվածից պակաս թվով: Միջոցառման շրջանակներում հատուկ դպրոցների փոխարեն գործել են մանկավարժահոգեբանական կենտրոններ, որոնց հիմնական գործառույթն է սովորողի կարիքի գնահատումը, ըստ անհրաժեշտության կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհատական ուսումնական պլաններով կրթության կազմակերպումը: Հանրակրթության համակարգում 2019 թվականին գործել է 7 հատուկ դպրոց՝ ուսուցում ստացած սովորողների միջին թիվը կազմել է 1325՝ նախատեսված 1354-ի դիմաց: Մասնավորապես՝ տարրական հատուկ հանրակրթության դասարաններում սովորողների թիվը կազմել է 425 (կանխատեսված 442-ի դիմաց), հիմնական հատուկ հանրակրթության դասարաններում՝ 647 (կանխատեսված 626-ի դիմաց), միջնակարգ հատուկ հանրակրթության դասարաններում՝ 253 (կանխատեսված 286-ի դիմաց):

2019 թվականին տարրական, միջին և ավագ ներառական կրթության ծախսերը կատարվել են 98.8%-ով՝ կազմելով շուրջ 1.1 մլրդ դրամ, որից 437.4 մլն դրամը (98.3%)՝ տարրական, 561.3 մլն դրամը (99.4%)՝ միջին և 55.7 մլն դրամը (96.7%)՝ ավագ դպրոցներում իրականացվող ներառական կրթության ծախսերն են: Ծրագրային ցուցանիշներից շեղումները հիմնականում պայմանավորված են անվճար սննդից որոշ երեխաների հրաժարվելու հանգամանքով: 2019 թվականին ներառական կրթության համակարգում սովորողների փաստացի թիվը կազմել է 1960՝ նախատեսված 1958–ի դիմաց: Մասնավորապես տարրական ներառական կրթության դասարաններում սովորողների թիվը կազմել է 825 (նախատեսված 824-ի դիմաց), միջին ներառական կրթության դասարաններում

սովորողների թիվը՝ 1030 (նախատեսված 1032-ի դիմաց), ավագ ներառական կրթության դասարաններում՝ 105 (նախատեսված 102-ի դիմաց):

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման նպատակով օգտագործվել է շուրջ 2.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 84.1%-ը: Մասնավորապես՝ 275.1 մլն դրամն (89%) ուղղվել է տարրական, 1.2 մլրդ դրամը (97.8%)՝ հիմնական, 1.4 մլրդ դրամը (74.5%)՝ միջնակարգ կրթական հաստատություններին: Ծրագրային ցուցանիշներից շեղումները պայմանավորված են ուսուցիչների և սովորողների փաստացի թվով: 2019 թվականին համակարգում գործել է յոթ մասնագիտացված դպրոց, սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 3197՝ կանխատեսված 3299-ի դիմաց: Մասնավորապես 345 աշակերտներ են սովորել (նախատեսված 350-ի դիմաց) տարրական մասնագիտացված հանրակրթական դպրոցներում, 1550 աշակերտներ (նախատեսված 1542-ի դիմաց)՝ հիմնական մասնագիտացված հանրակրթական դպրոցներում, 1302 աշակերտներ՝ (նախատեսված 1407-ի դիմաց)՝ միջնակարգ մասնագիտացված հանրակրթական դպրոցներում:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից կրթությանը հատկացված միջոցներից 835.1 մլն դրամն ուղղվել է նախադպրոցական կրթությանը՝ ապահովելով 97.8% կատարողական: Կատարողականը հիմնականում պայմանավորված է մանկավարժների և երեխաների փաստացի թվով: Միջոցառումն ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: 2019 թվականին երեխաների միջին տարեկան թիվը կազմել է 6780՝ կանխատեսված 6847-ի դիմաց:

Հանրակրթությունում նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացման նպատակով հատկացվել է շուրջ 117 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման նպատակն էր հեղինակային կրթական ծրագրերի վերամշակումը և իրականացումը, անհատի օժտվածության զարգացման բաց համակարգի ստեղծումը, ստեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացումը: Սաների փաստացի թիվը կազմել է 15262՝ կանխատեսված 6000-ի դիմաց: Կրթահամալիրում իրականացվում է թվով 7 հեղինակային և թվով 14 լրացուցիչ կրթական ծրագիր՝ նախատեսված 14-ի դիմաց: Սովորողների՝ նախատեսվածից մեծ թիվը պայմանավորված է իրականացված ծրագրերի, նախագծերի, փոխանակման ծրագրերի, ստուգատեսների, արշավների քանակով:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են 56.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.9%-ը: Միջոցառման շրջանակներում անցկացվել են 16 հանրապետական առարկայական օլիմպիադաներ և ապահովվել է մասնակցությունը 6 միջազգային առարկայական օլիմպիադաներին՝ նախատեսված համապատասխանաբար 16-ի և 7-ի դիմաց. «Աշխարհագրություն» առարկայի միջազգային օլիմպիադային մասնակցելու նպատակով թիմ չի

ձևավորվել: Միջազգային առարկայական օլիմպիադաներում մասնակիցներից 17-ն արժանացել են մեդալների (4 արծաթե և 13 բրոնզե)՝ կանխատեսված 10-ի դիմաց:

Կրթական հաստատությունների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման միջոցառման շրջանակներում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից կատարվել են 920.5 մլն դրամ ծախսեր՝ 99.7%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Միջոցառման շրջանակներում տարրական դասարանների սովորողներին նախատեսված 951964 դասագրքերը և վարժությունների տետրերն ամբողջությամբ հատկացվել են:

Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 77.8 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 30.4%-ը: Ցածր ցուցանիշը պայմանավորված է նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված և պահեստավորված մեդալների, ոսկե հուշամեդալների ու հավաստագրերի առկայությամբ, ինչպես նաև նրանով, որ պարբերական հրապարակումների մասով գնման գործընթացը մասամբ է կայացել, իսկ ուսուցողական գրքերի մասով՝ չի կայացել: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել 64650 հատ ավարտական փաստաթղթեր, 26568 հատ դասամատյաններ, 55000 հատ գովասանագրեր և 1 անուն մանկավարժական և կրթական պարբերականներ:

Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման նպատակով ծախսվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.5%-ը՝ պայմանավորված նախատեսվածից պակաս բացված խմբակների և ներդրված լաբորատորիաների քանակով: 2019 թվականին դպրոցներում ռոբոտաշինության խմբակների թիվը կազմել է 31՝ նախատեսված 74-ի դիմաց, ինժեներական լաբորատորիաների թիվը կազմել է 540՝ նախատեսված 632-ի դիմաց:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման նպատակով նախատեսված 7.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին վերապատրաստվել են դպրոցների 150 ուսուցիչներ՝ նախատեսված 100-ի դիմաց: Միջոցառման նպատակն է մշակույթի պահպանման, հանրայնացման, պարուսուցման ոլորտի համակարգված գործունեության ապահովումը, սովորողների ազգային ոգու ամրապնդումը:

Երեկոյան դպրոցում միջնակարգ հանրակրթության միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է ՀՀ Շիրակի մարզի երեկոյան դպրոցը, որին հատկացվել է 15.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականին երեխաների միջին տարեկան թիվը կազմել է 33: Միջոցառման շրջանակներում իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարության Արթիկի քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված և միջնակարգ կրթություն չունեցող անձանց շրջանակում հանրակրթական ծառայությունների մատուցում:

«Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամին օժանդակության նպատակով հատկացված 35.1 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Միջոցառման շրջանակում աջակցություն է ցուցաբերվել «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամի սպասարկմանը, կառավարմանը և շահագործմանը:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով տրամադրվել է 44.8 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 99.2%-ը: Միջոցառման շրջանակներում գործուղված մանկավարժների միջին թիվը 2019 թվականին կազմել է 257՝ նախատեսված 237-ի դիմաց:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նպատակով տրամադրվել է 76.2 մլն դրամ՝ ապահովելով 96.3% կատարողական՝ պայմանավորված տրանսպորտային փոխհատուցում ստացած փաստացի շահառուների թվով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է մարզերում տեղակայված հանրակրթական դպրոցների մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը: 2019 թվականի ընթացքում 197 հանրակրթական դպրոցների՝ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստացած դպրոցահասակ երեխաների և մանկավարժների թիվը կազմել է համապատասխանաբար 1323 և 1162՝ նախատեսված համապատասխանաբար 1318-ի և 1166-ի դիմաց:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման ծախսերը հաշվետու տարում կազմել են 26.8 մլն դրամ՝ 86%-ով ապահովելով կատարողականը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծախսերն իրականացվել են «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի» կողմից ներկայացված դասագրքերի փաստացի ցանկի հիման վրա: 2019 թվականի ընթացքում դասագրքերի վարձավճարի փոխհատուցում ստացած անապահով ընտանիքների երեխաների թիվը կազմել է 328, իսկ սահմանամերձ համայնքների դպրոցների և վերջիններիս 5-12-րդ դասարանների սովորողների թիվը կազմել է համապատասխանաբար 46 և 5022:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին տրամադրվել են 266.2 մլն դրամ հավելավճարներ՝ կազմելով ծրագրի 78.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից պակաս ատեստավորված ուսուցիչների թվով: 2019 թվականին որակավորման տարակարգի համար հավելավճար է ստացել 1733 ուսուցիչ՝ նախատեսված 2564-ի դիմաց:

2019 թվականին հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակներում մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակների վճարմանը տրամադրվել է համապատասխանաբար 2.2 մլն դրամ և 15.7 մլրդ

դրամ, որոնք կատարվել են համապատասխանաբար 67.6%-ով և 87.1%-ով: Կատարողականը պայմանավորված է կրթաթոշակ ստանալու պայմաններին բավարարող երեխաների փաստացի թվով: 2019 թվականին հիմնական ընդհանուր կրթության մակարդակում կրթաթոշակ ստացողների միջին տարեկան թիվը կազմել է 57՝ կանխատեսված 72-ի դիմաց, իսկ միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակում կրթաթոշակ ստացողների միջին տարեկան թիվը կազմել է 311՝ կանխատեսված 366-ի դիմաց:

Ուսումնական հաստատություններում ներդրումների նպատակով նախատեսված շուրջ 14 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրի ծախսերը 2019 թվականի ընթացքում կազմել են ավելի քան 4.1 մլրդ դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Ծրագրում ընդգրկված են 12 միջոցառումներ, որից 6 միջոցառումների համար նախատեսված 752.5 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ:

Հաշվետու տարում ծրագրին հատկացված միջոցների հիմնական մասը՝ ավելի քան 2.8 մլրդ դրամը, ուղղվել է արտադպրոցական դաստիարակության ֆինանսավորմանը, որը կատարվել է 99.2%-ով: 2019 թվականին Հայաստանի 44 մարզադպրոցներում, ստեղծագործական և արտադպրոցական դաստիարակության այլ կենտրոններում արվեստի, երաժշտության, սպորտի դասընթացների մասնակիցների միջին տարեկան թիվը կազմել է 20020՝ նախատեսված 19458-ի դիմաց:

Մանկապատանեկան մարզական խաղերի անցկացմանը տրամադրվել է 9.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2019 թվականին մանկապատանեկան մարզական խաղերում և ԱՊՀ երկրների առաջնություններում ներգրավված է եղել 22551 մասնակից՝ կանխատեսված 21349-ի դիմաց:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 32.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին անց են կացվել դպրոցականների հանրապետական սպորտային խաղերը՝ 9 մարզաձևերից, որոնց մասնակցել է 2752 դպրոցական՝ նախատեսված 2551-ի դիմաց:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ծախսերը կազմել են 487.6 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 7970 երեխաների ամառային հանգիստը և փոխհատուցվել են տրանսպորտային ծախսերը:

Հասարակական կազմակերպությունների կողմից արտադպրոցական դաստիարակության միջոցառման շրջանակներում նախատեսված 626.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված միջոցների հաշվին 3 հասարակական կազմակերպությունների կողմից 22 մանկապատանեկան մարզադպրոցներում պատրաստվել են 4734 մարզիկներ՝ կանխատեսված 5097-ի փոխարեն:

Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման ծախսերը 2019 թվականին կազմել են 4.3 մլն դրամ կամ նախատեսվածի 59.2%-ը: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է վերապատրաստվող մարզիչ-մանկավարժների՝ սննդից չօգտվելու հանգամանքով, ինչպես նաև միջոցառմանը փաստացի մասնակցած մարզիչ-մանկավարժների թվով: 2019 թվականին վերապատրաստվել են 174 մարզիչ-մանկավարժներ՝ կանխատեսված 176-ի դիմաց:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով նախատեսված 7.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականին կրթահամալիրում սովորել է 383 երեխա:

Գրադարանային ֆոնդի համալրման ծախսերը 2019 թվականին կազմել են 39 մլն դրամ կամ նախատեսվածի 88%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցները նախատեսվել են հանրապետության դպրոցներից յուրաքանչյուրին 5-6 անուն հանրամատչելի գրականությամբ ապահովման նպատակով: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին 1400 դպրոցների գրադարանային ֆոնդը համալրվել է 7700 գրքով:

«Քո արվեստը դպրոցում» միջոցառմանը տրամադրվել է 5.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 52.2%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրին մասնակցող արվեստագետների փաստացի թվով, ինչպես նաև միջոցառումների քանակով: Նախատեսված 43 մշակութային գործիչներից միջոցառմանը մասնակցել են 39-ը: Միջոցառումների նպատակն էր հանրակրթության ոլորտում մշակութային կրթության բաղադրիչի բացը լրացնել, մեծացնել հետաքրքրությունը ընթերցանության, դասական երաժշտության և կերպարվեստի նկատմամբ, խթանել կրթական հաստատություններում քննադատական, վերլուծական և ստեղծագործ մտքի զարգացումը: Միջոցները հատկացվել են «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրի շրջանակներում 13.6 մլն դրամը՝ նախատեսվածի 91.9%-ը, տրամադրվել է «Դպրոցականների շախմատի աշխարհի առաջնություն» ծրագրի իրականացմանը: Շեղումը պայմանավորված է առաջնությանը ԱՊՀ երկրներից 3 թիմերի չմասնակցելու հանգամանքով (պետական բյուջեից տրամադրվում են օրապահիկի և գիշերակացի գումարները): 2019 թվականի դպրոցականների շախմատի աշխարհի առաջնությանը նախատեսված

73-ի դիմաց մասնակցել են 65 մասնակից 7 երկրներից (Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Բուլղարայի Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն, Հնդկաստանի Հանրապետություն, Ուկրաինա և Ռուսաստանի Դաշնություն):

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների ամառային ճամբար ծրագրի անցկացման ծախսերը կազմել են շուրջ 14.2 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ամառային ճամբարում ներգրավված է եղել Վրաստանից ժամանած 10-18 տարեկան 50 մասնակից, անցկացվել են դասընթացներ «Երաժշտություն», «Եռաչափ մոդելավորում», «Ծրագրավորում», «Ռոբոտաշինություն», «Գրաֆիկական դիզայն», «Նկարչություն», «Լուսանկարչություն» ուղղություններով:

Շուրջ 62.6 մլն դրամ է հատկացվել «Ուսումնամարզական գործընթացի իրականացում մարզադպրոցներում» միջոցառմանը՝ ապահովելով 100% կատարողական: 2019 թվականի ընթացքում մարզադպրոցներում սովորել է 754 երեխա:

2019 թվականին պետական բյուջեից ավելի քան 13.7 մլրդ դրամ է տրամադրվել *գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրին*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 90.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող գիտական ենթակառուցվածքի արդիականացման միջոցառման կատարողականով: Ծրագրում ընդգրկված են 19 միջոցառումներ, որից 6-ի գծով նախատեսված 1 մլրդ դրամն օգտագործվել է ամբողջությամբ:

«Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ», «ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում» և «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում» միջոցառումների շրջանակներում տրամադրվել է համապատասխանաբար 189 մլն դրամ, 3.3 մլն դրամ և 50 մլն դրամ, որոնք կազմել են նախատեսված ցուցանիշների 98.9%-ը, 86.6%-ը և 83.3%-ը: Նշված կատարողականները պայմանավորված են շարունակական ծախսերի տնտեսմամբ և գնումների գործընթացների արդյունքում առաջացած խնայողություններով:

Գիտական ենթակառուցվածքների արդիականացման ծախսերը կազմել են 8.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 88.4%-ը: Կատարողականը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Միջոցառման նպատակն է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացումը, ծրագրերի իրականացումը, գիտական սարքավորումների արդիականացումը, միջազգային համագործակցությանն աջակցությունը: 2019 թվականի ընթացքում «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման շրջանակներում փաստացի

ներգրավված են եղել թվով 72 կազմակերպություն, համագործակցել են թվով 11 գիտական կառույց, իրականացվել են թվով 90 միջազգային գիտական ծրագրեր, Հայաստանն անդամակցել է թվով 3 միջազգային գիտական կառույցների, պետական բյուջեից ֆինանսավորել է թվով 25 երաշխավորված գիտական միջոցառում, պետական բյուջեից ֆինանսավորման է երաշխավորվել երիտասարդ գիտնականների թվով 12 դպրոց, գիտական գործուղումների թիվը կազմել է 47: Կատարվել է նաև թվով 300 գիտական հայտերի փորձաքննություն (1714 անկախ փորձագետների /այդ թվում՝ արտասահմանյան/ միջոցով, փորձաքննությունների աշխատանքների կազմակերպման համար ստեղծվել է թվով 13 հանձնաժողով): «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն են ստացել թվով 5 կազմակերպություն, իսկ «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում» ծրագրի շրջանակներում՝ 1 գիտական կենտրոն:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության ծախսերը կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.1%-ը ՝ պայմանավորված ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: 2019 թվականի ընթացքում միջոցներն ուղղվել են ազգային արժեք ներկայացնող 5 գիտական օբյեկտների՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Բյուրականի աստղադիտարանի, Հայկենսատեխնոլոգիայի կենսաբանական թանգարանի, ԵՊՀ գրադարանի պահպանմանը:

Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների գծով ծախսերը 2019 թվականին կազմել են 1.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 92.7%-ը, որը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: 2019 թվականի ընթացքում պետական բյուջեից ֆինանսավորվել են թվով 246 գիտական թեմաներ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) աջակցության ծրագրերի և հետազոտությունների ֆինանսավորում, ասպիրանտներին անհատական աջակցության տրամադրում, Արցախի հետ համագործակցության ծրագիր, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրում, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող գիտական թեմաների ֆինանսավորում, Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական թեմաների ֆինանսավորում:

Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններին տրամադրվել է 125 մլն դրամ կամ նախատեսվածի 86.8%-ը՝ պայմանավորված

կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի թվով: 2019 թվականի ընթացքում ֆինանսավորվել են 10 նպատակային-ծրագրային հետազոտություններ (ներառյալ՝ «Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտանգության ապահովման համար», «Հայկական գենոֆոնդի ուսումնասիրությունը և քարտեզագրումը», «Կլիմայի փոփոխման և Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող լճային էկոհամակարգի վիճակի և նրա կենսառեսուրսների կարիոլոգիական հետազոտում» ծրագրերը)՝ նախատեսված 11-ի դիմաց:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման ծախսերը կազմել են 74.3 մլն դրամ կամ նախատեսվածի 83.3%-ը: Շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: 2019 թվականին միջոցառման շրջանակներում հրատարակվել են 18 ամսագրեր և մենագրություններ:

Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 846.7 մլն դրամ: Միջոցառման հիմնական նպատակն է ֆիզիկայի բնագավառում արդիական գիտական ներուժի ապահովումը, ենթակառուցվածքի պահպանումը և զարգացումը: Միջոցները տրամադրվել են «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամին:

«Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում» միջոցառման նպատակով տրամադրվել են 324.5 մլն դրամ կամ նախատեսվածի 98.2%-ը: Շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Միջոցառման հիմնական ուղղությունը գիտական թեմաների իրականացումն է ««ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «ԱՐԵԱԼ» գծային արագացուցչի վրա: «ԱՐԵԱԼ» նախագիծը կարևոր գիտական ու կիրառական նշանակություն ունի ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի և նյութագիտության բնագավառների առաջատար փորձարարական հետազոտությունների համար:

Ամբողջությամբ օգտագործվել են «Անտենային էտալոնների պահպանում և զարգացում» միջոցառման համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 54 մլն դրամ:

Գիտական գրադարանային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 122.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 83.3%-ը: Շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Միջոցառման նպատակն է գրադարանային հավաքածուների պահպանումը, համալրումը, ընթերցողների սպասարկումը և գրադարանային միջոցառումների կազմակերպումը: 2019 թվականի ընթացքում միջոցառման շրջանակներում իրականացվել է գրադարանների համալրում 4621 միավոր

գրականությամբ, բացվել է 735300 գրքատածք, առցանց՝ 170000: ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանն իրականացրել է գրականության թվայնացում և տեղադրել գրադարանի կայք-էջում՝ ընթերցողին հնարավորություն ընձեռելով առանց գրադարան այցելելու գտնել ցանկացած նյութը, հետևաբար՝ ֆիզիկական այցելությունների քանակը պակասել է, իսկ առցանց այցելություններն՝ ավելացել: 2019 թվականին ընթերցողների թիվը կազմել է 17 հազար մարդ՝ նախատեսված 18 հազարի դիմաց:

Գիտատեխնիկական գրադարանային ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 152 մլն դրամ կամ նախատեսվածի 94.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պահպանման թափուր հաստիքների առկայությամբ: 2019 թվականի ընթացքում ձեռք է բերվել 386 օրինակ գիտատեխնիկական գրականություն՝ նախատեսված 380-ի դիմաց, էլեկտրոնային քարտարանները համալրվել են 17.2 հազար գրառմամբ՝ նախատեսված 16 հազարի դիմաց, գրադարանային հիմնապաշարների միջին տացքը կազմել է 179.8 հազար՝ նախատեսված 160 հազարի դիմաց, պատրաստվել են 70 մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր՝ նախատեսված 40-ի դիմաց, կազմակերպվել է 61 նոր գրականության ցուցահանդես՝ նախատեսված 40-ի դիմաց: Բոլոր փաստացի արդյունքային ցուցանիշները գերազանցել են կանխատեսվածները՝ պայմանավորված ընթերցողների շրջանակներն ընդարձակելու և թիրախային սպասարկում իրականացնելու անհրաժեշտությամբ, ընթերցողների կողմից ներկայացված պահանջարկի աճով:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների հարկային պարտավորությունների փոխհատուցման համար նախատեսված 78.3 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Միջոցներն ուղղվել են «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-հիմնադրամի հարկային պարտավորությունների փոխհատուցմանը:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 1.7 մլն դրամ:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 791.5 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 99.5% կատարողական: 2019 թվականին հավելավճարներ են տրամադրվել 82 կազմակերպության համապատասխան գիտաշխատողների:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրման ծախսերը կազմել են 152 մլն դրամ՝ ապահովելով 83.3%

կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է պատվովճարներ ստացած գիտաշխատողների փաստացի քանակով: Ծրագրի շրջանակներում վճարվել են 96 իսկական և թղթակից անդամների պատվովճարներ՝ նախատեսված 101-ի դիմաց:

Հայագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում իրականացվում են հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդում, թեզերի պաշտպանում և զեկույցների պատրաստում: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս անցկացրել է դասախոսություններ Զալցբուրգի համալսարանում, վերապատրաստվել են 60 ուսուցիչներ 17 երկրներից:

Արտասահմանյան համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 20.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում 6 դասախոսներ անցկացրել են հայոց լեզվի դասընթացներ 40 մասնակիցների համար Բուխարեստի, Պրահայի և Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարաններում:

Հաշվետու ժամանակահատվածում 1.1 մլրդ դրամ է օգտագործվել *«Ապահով դպրոց»* ծրագրի շրջանակներում, որը կատարվել է 59.4%-ով: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման ծախսերի կատարողականով: Ծրագրում ընդգրկված են 11 միջոցառումներ, որոնցից 4-ի համար նախատեսված 64 մլն դրամը չի օգտագործվել ժամանակի սղության պատճառով:

2019 թվականին 13.6 մլն դրամ տրամադրվել է դպրոցների համալիր անվտանգության ապահովման նպատակով, որը կատարվել է 95.5%-ով՝ պայմանավորված մրցութային գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: 2019 թվականին աղետների ռիսկի կառավարման պլանների իրականացման համար օժանդակություն է ստացել 6 հանրակրթական ուսումնական հաստատություն:

Գոշի միջնակարգ դպրոցի սանհանգույցի արտաքին կոյուղագծի ընթացիկ նորոգման, Արծվաբերդի միջնակարգ դպրոցի հատակի և արտաքին սալվածքի վերանորոգման և Գոշի հիմնական դպրոցի արտաքին սանհանգույցի կառուցման համար նախատեսված միջոցները՝ համապատասխանաբար 478.7 հազ. դրամ, 6.3 մլն դրամ և 2.9 մլն դրամ, չեն օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության կողմից գումար հատկացնելու մասին որոշումն ուժի մեջ է մտել դեկտեմբերի երկրորդ կեսին:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով 2019 թվականին օգտագործվել է 21.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 46.9%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հետ միջազգային համաձայնագրի վերակնքմամբ, որի գործողությունը դադարել էր 2019 թվականի հուլիսից: 2019 թվականին ծրագրից

օգտվող սովորողների թիվը կազմել է 49112՝ նախատեսված 60563-ի դիմաց, որոնց սննդով ապահովելու նպատակով կատարվել է 1590 տոննա սննդամթերքի ներքին փոխադրում, պահեստավորում և բեռնում/բեռնաթափում:

Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման ծախսերը կազմել են 913.8 մլն դրամ՝ 65.3%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ցածր կատարողականը պայմանավորված է գնումների գործընթացով, որի հետ կապված՝ որոշ օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար պայմանագրեր չեն կնքվել, ինչպես նաև որոշ մրցույթներ չեն կայացել ժամանակի անբավարարության պատճառով: Միջոցառման շրջանակներում ներդրումներ են կատարվել 66 կազմակերպություններում՝ նախատեսված 141-ի դիմաց:

Կրթական օբյեկտների շենքային ապահովվածության բարելավման ծախսերը կազմել են 24.2 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 23.7%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է գնման պայմանագրերն ուշ կնքելու հանգամանքով, որի արդյունքում 2019 թվականին վճարվել են կանխավճարներ նախագծային աշխատանքների համար: 2019 թվականի ընթացքում կազմվել են նախագծեր 5 ավագ դպրոցներում՝ Երևանի թիվ 109 ավագ դպրոցում, Երևանի Կ.Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոցում, ՀՀ Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոցում, ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոցում և ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 10 ավագ դպրոցում, շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Հաշվետու տարում փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման նպատակով տրամադրվել է 48.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.4%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին 22 դպրոցների համար իրականացվել են նախագծահետազոտական աշխատանքներ:

Ավագ մակարդակի կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման նպատակով օգտագործվել է շուրջ 20 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 70.6%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին ավագ մակարդակի կրթություն իրականացնող 10 ուսումնական հաստատությունների համար իրականացվել են նախագծահետազոտական աշխատանքներ:

Կրթական օբյեկտների կառուցման ծախսերը 2019 թվականին կազմել են 19.8 մլն դրամ կամ ծրագրի 23.9%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ, ինչպես նաև մեկ պայմանագիր տարեվերջին կնքելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականցվում են ՀՀ Արարատի մարզի «Մասիսի թիվ 5 ավագ

դպրոց» ՊՈԱԿ-ի և ՀՀ Արագածոտնի մարզի «Վարդենիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքները:

Հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների նոր մարզադահլիճների կառուցման նպատակով նախատեսված 54.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, որը պայմանավորված է կառուցվող ուսումնական հաստատությունների ցանկի ճշտման, մրցույթի հայտարարման և համապատասխան գնման գործընթացներն իրականացնելու ժամանակատարությամբ:

Հաշվետու տարում *Կրթության որակի ապահովման* ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 49.1%-ը՝ շուրջ 3.3 մլրդ դրամ: Ծրագրում ընդգրկված են 14 միջոցառումներ, որից երեք միջոցառումների համար նախատեսված 805.3 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» միջոցառման շրջանակներում օգտագործվել է ավելի քան 116.3 մլն դրամ կամ նախատեսվածի 75.2%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ երեք ամիսների համար ֆինանսավորումն իրականացվել է «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի (ԿԱԻ) լուծարման արդյունքում առաջացած մնացորդի հաշվին: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին մշակվել և վերանայվել է պետական կրթական 24 չափորոշիչ, մշակված չափորոշիչներին համապատասխան՝ 24 ուսումնական և մոդուլային ուսումնական ծրագիր: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատությունների՝ վերապատրաստում անցած ղեկավարների, մանկավարժների, փորձագետների և աշխատողների թվաքանակը կազմել է 602՝ նախատեսված 465-ի դիմաց:

Նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայությունների գծով նախատեսված 81.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականի ընթացքում կազմակերպվել է մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ 22 հավատարմագրում, մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի 9 մշտադիտարկում, մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտական կրթական ծրագրերի 2 հավատարմագրում, մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատման չափանիշների և մեթոդների մշակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում 2 աշխատաժողովի միջոցով, հիմնադրամի 10 աշխատակիցների վերապատրաստում, «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության վերաբերյալ հասարակությանը 61 իրազեկում, ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերի և փորձնական ծրագրային հավատարմագրում անցած մասնագիտությունների 10 մշտադիտարկում:

Իրականացվել է հիմնադրամի տարեկան ինքնավերլուծություն, որը նպատակաուղղված էր հիմնադրամի ուժեղ և թույլ կողմերի վերհանմանը, կանխատեսելու հետագա գործողությունները և բարձրացնելու որակի ապահովման մասին հասարակության իրազեկվածությունը:

«Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ» միջոցառման շրջանակներում օգտագործվել է 6.1 մլն դրամ կամ նախատեսվածի 21.7%-ը: Ցածր ցուցանիշը պայմանավորված է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման հետաձգմամբ, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին հետամուտ լինելու համար ստեղծված աշխատանքային խմբերի հանդիպումների կազմակերպման ծախսերի տնտեսմամբ:

Գիտական որակավորման պարբերական գործընթացի համակարգման և մոնիտորինգի նպատակով 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 74.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.1%-ը: Շեղումը պայմանավորված է ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի գործունեության ապահովման շարունակական ծախսերի տնտեսմամբ:

Հաշվետու տարում «Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառմանը տրամադրվել է 45.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 71.3%-ը: Շեղումը պայմանավորված է դիմողների թվով. 2019 թվականին շնորհվել է 243 գիտական աստիճան՝ կանխատեսված 390-ի դիմաց, 169 գիտական կոչում՝ կանխատեսված 490-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 421.3 մլն դրամ էր հատկացվել Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման միջոցառմանը, որը չի կատարվել՝ պայմանավորված «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի լուծարման գործընթացով:

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների ատեստավորման ծառայություններին հատկացված 4 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված ատեստավորման գործընթացի կասեցմամբ: Նախատեսվել էր մինչև 2021 թվականը «Բնագիտական առարկաների դասավանդման փորձնական ծրագրի» շրջանակներում վերամշակել ուսումնական համապատասխան պլաններ, առարկայական ծրագրեր, դասի պլաններ, գնահատման ձևեր և դասագրքեր STEM առարկաների մասով, իսկ Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրով նախատեսված են հանրակրթական մյուս առարկայական ծրագրերի վերանայման աշխատանքներ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նախագիծ է մշակվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին և ուսուցիչների վերապատրաստումներ ու ատեստավորում իրականացնել 2022 թվականից, սակայն նախագիծը չի ընդունվել, և բյուջեով նախատեսված գումարը չի ծախսվել:

Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և շարունակականության ապահովման նպատակով նախատեսված 229.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականի ընթացքում

իրականացվել է ՏՀՏ ներդրում 1420 ուսումնական հաստատությունում՝ կանխատեսված 1662-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում 494.7 մլն դրամ հատկացվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման նպատակն է քննական թեստերի և հարցաշարերի մշակումն ու փորձարկումը, դպրոցների ավարտական և բուհերի ընդունելության միասնական քննությունների կազմակերպումը և անցկացումը, սովորողների գիտելիքների արտաքին ընթացիկ գնահատումը, ազգային ստուգատեսների անցկացումը: 2019 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում մասնակիցների թիվը կազմել է՝ միջնակարգ դպրոցի ավարտական քննություններին՝ 17803, հիմնական դպրոցի ավարտական քննություններին՝ 30962, «Պատիվ ունեմ» ծրագրին՝ 763, իրականացվել է 20018 արտաքին ընթացիկ գնահատում, 5790 TIMSS/PIRLS-2019 փորձնական փուլ, 3486 ազգային ստուգատես:

Ուսուցիչների որակի բարձրացմանն ուղղված ատեստավորման նոր համակարգի ներդրման նպատակով նախատեսված 862.4 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ուսուցիչների որակի բարձրացմանն ուղղված ատեստավորման նոր համակարգի ներդրման ընթացակարգը գտնվել է մշակման փուլում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման վարկային ծրագրի շրջանակներում ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում (ԿՏԱԿ) կապիտալ ներդրումների ծախսերը կազմել են համապատասխանաբար 569.1 մլն դրամ (նախատեսվածի 83.2%-ը) և 1.6 մլրդ դրամ (նախատեսվածի 53.2%-ը): Վարկային ծրագրի շրջանակներում ծառայությունների ձեռքբերման ծախսերի կատարողականը պայմանավորված է նորարարությունների մրցակցային հիմնադրամից օգտվող բուհերի կողմից ներկայացված հայտերի գնահատման գործընթացի ուշ մեկնարկով՝ բուհերի կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրերը գնահատող փորձագետների ընտրության մրցույթների չկայացման և պարբերաբար մրցույթների հայտարարությունների ժամկետների երկարաձգման պատճառով: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին ստեղծվել է 18 նախակրթարան՝ նախատեսված 17-ի դիմաց, 9 ԲՈՒՀ-եր օգտվել են նորարարությունների մրցակցային հիմնադրամից՝ նախատեսված 5-ի դիմաց, վերապատրաստվել են 1510 ուսուցիչներ ու ադմինիստրատիվ աշխատակիցներ՝ նախատեսված 1500-ի դիմաց, և լրամշակվել են 6 առարկայական բնագավառի չափորոշիչներ ու ծրագրեր՝ նախատեսված 9-ի փոխարեն: Կապիտալ ներդրումների գծով ծախսերի կատարողականը հիմնականում պայմանավորված է մրցութային գործընթացների հետ կապված խնդիրներով: Մասնավորապես՝ 2019 թվականի երրորդ եռամսյակում նախատեսվում էր ՀՀ 99 ավագ դպրոցների տրամադրել բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) գծով լաբորատոր սարքավորումներ և

լաբորատորիաների կահավորման համար անհրաժեշտ կահույք, սակայն մինչ մրցույթի հայտարարումն անհրաժեշտություն է առաջացել վերանայել կահույքի և լաբորատոր սարքավորումների (աշխարհագրություն առարկայի) տեխնիկական հատկորոշիչները, ինչը հանգեցրել է ժամանակացույցից շեղումների: Բացի այդ, չի կայացել կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթը՝ մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկներն այդ գույքի համար նախատեսված ֆինանսական միջոցներն էականորեն գերազանցելու պատճառով: Ծրագրի կապիտալ ներդրումների շրջանակներում իրականացվել է 8 ավագ դպրոցների հիմնանորոգում, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի համար ձեռք են բերվել համակարգչային և գրասենյակային սարքավորումներ ու կահույք, իսկ ավագ դպրոցների և հանրակրթական ուսումնական հաստատությունների համար՝ լաբորատոր սարքավորումներ և պրոյեկտորներ:

Հայկական կրթօջախներում դասավանդման որակի բարելավմանն աջակցման նպատակով տրամադրվել է 31.4 մլն դրամ կամ նախատեսվածի 92.9 %-ը՝ պայմանավորված վերապատրաստած ուսուցիչների՝ նախատեսվածից փոքր թվով: 2019 թվականին վերապատրաստվել է 17 երկրներից ժամանած 56 ուսուցիչ՝ նախատեսված 60 ուսուցչի դիմաց:

Կրթության և գիտության ոլորտի այլ միջոցառումների շրջանակներում նախատեսված 480.2 մլն դրամը չի օգտագործվել՝ միջոցառումը կատարող լիազոր մարմնի հաստատման վերաբերյալ կառավարության որոշման բացակայության հանգամանքով պայմանավորված:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում 2019 թվականին պետական բյուջեից օգտագործվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 93.2%-ը: Շեղումն առաջացել է ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների գծով ծախսերում, որոնք կազմել են 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.6%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Շիրակի և Արագածոտնի մարզերի տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնները ստեղծվել են օգոստոս ամսին և սկսել են գործել 2019-2020 ուսումնական տարվա սկզբից՝ հունվարի փոխարեն: 2019 թվականին փաստացի գործող մանկավարժահոգեբանական աջակցության 17 կենտրոններում աջակցության ծառայություններ են ստացել 4300 երեխաներ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվել են 4000 երեխաներ, ներառական կազմակերպման համար մշակվել, հրատարակվել և ձեռք է բերվել 2 անվանում նյութ:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայություններին տրամադրվել է 75.5 մլն դրամ՝

ապահովելով 100% կատարողական: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին մատուցվել են կրթաբուժական ծառայություններ թվով 65 երեխաների:

Ուսուցիչների՝ ներառող դասավանդման կարողությունների զարգացման միջոցառման շրջանակներում տրամադրված 17 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Ուսուցիչների մասնագիտական որակի և մասնագիտության վարկանիշի բարձրացման նպատակով վերապատրաստվել են 1200 ուսուցիչներ՝ նախատեսված 600-ի դիմաց:

Հայաստանում ներառական կրթության համակարգի հզորացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 24.8 մլն դրամ կամ նախատեսվածի 44.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով և կապալառուների կողմից կատարողական ակտերն ուշ ներկայացնելու հանգամանքներով: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցության շրջանակներում: Ծրագրի շրջանակներում իրականացվում է մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում, թվով 10 հանրակրթական ուսումնական հաստատություններում փոքրածավալ ենթակառուցվածքների հարմարեցում:

«Հորիզոն-2020. հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» դրամաշնորհային ծրագրի ներդրման համար նախատեսված 501.1 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ Եվրոպական հանձնաժողովի և ՀՀ կառավարության միջև արտաքին գործողությունների մասին նոր դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվել է տարեվերջին՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ին: Ընթանում են բանակցություններ ԵՄ պատվիրակության հետ՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ: Ծրագրի նպատակն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության գիտական, գիտատեխնոլոգիական կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և, առհասարակ, իրավաբանական անձանց մասնակցությունը Եվրոպական միության գիտության և տեխնոլոգիաների շրջանակային Հորիզոն 2020 ծրագրին՝ որպես ասոցացված երկրի ներկայացուցիչներ, այն է՝ ունենալ նույն իրավունքները, ինչ որ Եվրոպական միության անդամ երկրների կազմակերպությունները: 2016-2019 թվականների ընթացքում (2019թ. հունիսի դրությամբ) Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններից և բուհերից ներկայացվել է Հորիզոն 2020-ի քննարկման ենթակա մասնակցության 103 հայտ, որից 26-ը բավարարվել է, այսինքն՝ այսպես կոչված հաջողության գործակիցը կազմում է 14.2%, ինչն ամենաբարձր ցուցանիշն է Արևելյան գործընկերության երկրների, այդ թվում՝ նաև Հորիզոն 2020 ծրագրին ասոցացված երկրների (Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան, Հայաստան) մեջ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության 2 կազմակերպություն՝ Երևանի պետական բժշկական համալսարանը և ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, 2019 թվականին շահել են «Twinning» ծրագրեր:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերը կատարվել են 92.9%-ով՝ կազմելով 761.2 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Կինոնկարների արտադրություն» միջոցառման կատարողականով:

Հաշվետու տարում կինոնկարների արտադրությանը տրամադրվել է ավելի քան 464 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 91.1%-ը: Շեղումը պայմանավորված է «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի կինոնախագծերի ֆինանսավորման մրցութային երկու փուլում մուլտարտադրության մասով համապատասխան հայտադիմումների բացակայությամբ: 2019 թվականին նկարահանվել են 37 խաղարկային, 12 վավերագրական և 10 մուլտիպլիկացիոն ֆիլմեր:

Կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին հատկացված 8.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին վերականգնվել (պատճենահանվել) և թվայնացվել է 8 ֆիլմ՝ նախատեսված 7-ի դիմաց:

Ծրագրում ընդգրկված «Ազգային կինոծրագրերի իրականացում» և «Փաստավավերագրական կինոծրագրերի իրականացում» միջոցառումների համար նախատեսված համապատասխանաբար 160.1 մլն դրամը և 47.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել են: Միջոցներն ուղղվել են համապատասխանաբար «Հայաստանի ազգային կինոկենտրոն» և «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ների գործունեության ապահովմանը:

Կինոարվեստին աջակցության ծախսերը կազմել են 77 մլն դրամ կամ նախատեսվածի 85.6%-ը: Շեղումը պայմանավորված է դրամաշնորհային ծրագրերով ֆինանսավորվող միջոցառումների մասով համապատասխան մրցութային հայտերի, ինչպես նաև փառատոներին մասնակցության համար անհրաժեշտ դիմումների՝ նախատեսվածից փոքր թվով: 2019 թվականին Հայաստանում կազմակերպվել են 8 միջազգային կինոփառատոներ՝ նախատեսված 5-ի փոխարեն, որոնց մասնակցել են 10 երկրների 64 կինոնկարներ՝ նախատեսված 36 երկրի և 200 կինոնկարի փոխարեն:

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի տարածքի վերակառուցման համար հաշվետու տարում պետական բյուջեից հատկացված 4.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որն ուղղվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ֆինանսավորմանը:

Մշակութային ժառանգության ծրագրին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 3.4 մլրդ դրամ՝ ապահովելով 91.8% կատարողական: Հատկացումների գերակշիռ մասը բաժին է ընկել թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների միջոցառման իրականացմանը՝ կազմելով ավելի քան 2.4 մլրդ դրամ և ապահովելով 96.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև միջոցառումների

իրականացման արդյունքում գումարների տնտեսմամբ: 2019 թվականին թանգարանների այցելուների թիվը կազմել է 1404760 մարդ՝ կանխատեսված 929293-ի դիմաց: Այցելուների թվի ավելացումը պայմանավորված է բաժանորդային համակարգի ներդրմամբ և թանգարանների կողմից կազմակերպվող միջոցառումներով: 21 թանգարաններում կազմակերպվել է 322 ցուցահանդես՝ կանխատեսված 342-ի փոխարեն, ինչը պայմանավորված է կանխատեսված փոքր ցուցահանդեսների փոխարեն Հայաստանում, Արցախում և արտերկրում մի շարք խոշոր և կարևորագույն ցուցահանդեսների կազմակերպմամբ: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, մշակութային ժառանգության թվայնացումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումն ու վերականգնումը:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նախատեսված 111 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Միջոցառման նպատակներն են մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրությունը, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 200 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 70 հուշարձանների դասակարգման և ցուցակագրման, 120 հուշարձանների հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի թվայնացման աշխատանքներ: Կատարվել են նաև վտանգված և վերականգնվող պատմամշակութային անշարժ հուշարձանների 2 պեղումներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի մեկ հատորը, իրականացվել են հուշարձանների կադաստրային 10 աշխատանքներ:

Հաշվետու տարում մշակութային արժեքների փորձաքննության ծառայություններին տրամադրվել է 29.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 88.1%-ը՝ պայմանավորված ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: 2019 թվականին պատրաստվել է մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների 2225 փորձագիտական եզրակացություն, իրականացվել են 1000 մշակութային արժեքների փորձաքննության տվյալների թվային մուտքագրման և արխիվացման աշխատանքներ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 59.5 մլն դրամ աջակցություն, որը կատարվել է 100%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է 403

պատմամշակութային հուշարձանի վավերագրում արտերկրում (Հնդկաստանում և Արևմտյան Հայաստանում):

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով օգտագործվել է 35 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 72.9%-ը: Շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման, զարգացման և հանրահռչակման 32 միջոցառում և փառատոն, Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է 3 միջազգային միջոցառումների: Մասնավորապես՝ իրականացվել է 20-րդ դարի Հայաստանի բանավոր պատմությունների հավաքագրում և հանրայնացում, «Արար» հայ արվեստի պահպանման ծրագիրը, Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի կիրարկման կարիքների գնահատում» ծրագրի կազմակերպումը, Հայկական զարդանախշերով ասեղնագործության և փայտագործության դասընթացը: Աջակցություն է տրամադրվել տիկնիկագործ վարպետ Ա. Սարգսյանի մասնակցությանը Հնդկաստանում արհեստների 33-րդ միջազգային փառատոնին և «Վարք Հայոց» ավանդական երգի խմբի մասնակցությանը Ռումինիայում և Սերբիայում կայացած միջազգային ֆոլկլորային փառատոներին:

Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների նախագծման շրջանակներում հատկացվել է 5.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Մասնավորապես՝ 2 մլն դրամը հատկացվել է Մարտի 1-ի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի նախագծային աշխատանքների իրականացման նպատակով, 3.3 մլն դրամը՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի տարածքում Կարեն Դեմիրճյանի արձանի նախագծային աշխատանքների իրականացման նպատակով:

2019 թվականին հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 70.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 27%-ը: Կատարողականը հիմնականում պայմանավորված է հայտարարված մրցույթների չկայանալու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 5 հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ՝ կանխատեսված 12-ի դիմաց, 3 ուսումնասիրման (այդ թվում՝ հետախուզման և պեղման) և նախագծման աշխատանքներ՝ կանխատեսված 14-ի փոխարեն, 7 հրատապ միջամտություն պահանջող աշխատանքները չեն կատարվել:

Թանգարանների և պատկերասրահների հիմնանորոգման համար ներդրումների նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 94.1%-ով՝ կազմելով 57.7 մլն դրամ, որն ուղղվել է ք.

Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգմանը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով:

Մշակութային ժառանգության ծրագրում ընդգրկված հինգ միջոցառումների համար նախատեսված 652 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Մասնավորապես՝ 604 մլն դրամ հատկացվել է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի շենքի օդափոխության համակարգի անցկացման համար ներդրումներին, 13.6 մլն դրամ՝ «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգման, 9.8 մլն դրամ՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի «Ա. Սարգսյան և Հ. Կոջոյան տուն-թանգարան» մասնաճյուղի շենքի վերանորոգման, 4 մլն դրամ՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում «Բաղնիք» և «Խճանկար» հուշարձանների նորոգման և ամրակայման, 20.7 մլն դրամ՝ հուշարձանախմբերի կամ առանձին զբոսաշրջային գրավչության տարածքներում QR կոդերով բազմալեզու ցուցանակների տեղադրման աշխատանքների ֆինանսավորմանը:

Թանգարանների տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը կատարվել են 37.2%-ով՝ կազմելով 1.1 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ մասնակիցների բացակայության պատճառով չի կայացել գնումների 2-րդ չափաբաժնի հայտարարված մրցույթը:

Գրքի և գրչության ծրագրին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 93.2%-ը:

Գրականության հրատարակման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 54.5%-ով՝ կազմելով 12.5 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքներով. 3 անուն գրքի գնման գործընթացը հայտարարվել է չկայացած՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով: 2019 թվականին հրատարակվել են գիտամշակութային գրականության 6 անուն, քննադատական տեսություն պարունակող գրականության 5 անուն և դասական գրողների հոբելյանական հրատարակությունների 1 անուն գրքեր՝ նախատեսված համապատասխան 8 անուն, 6 անուն և մեկ անուն գրքերի դիմաց: Հրատարակվել է նաև Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանին նվիրված գրականության երկու անուն գիրք:

2019 թվականին գրականության հրատարակմանն աջակցման նպատակով տրամադրվել է ավելի քան 49.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 77.5%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Հատկացումների հաշվին հրատարակվել է Էլեկտրոնային 19 անուն գիրք և 16 թարգմանական ծրագիր:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 52.1 մլն դրամ կամ նախատեսվածի 76.1%-ը: Միջոցառման շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական

մամուլին, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև նրանով, որ «Իվերիա» վրացական բարեգործական համայնք» ՀԿ-ն հրաժարվել է ֆինանսական աջակցությունից թերթի հրատարակման դադարեցման պատճառով, իսկ «Անդին Ա» և «Գարուն» ՍՊԸ-ների հետ պայմանագրեր չեն կնքվել նախորդ տարվա պարտավորությունները չկատարելու պատճառով:

Գրքի և գրչության ծրագրի շրջանակներում ծախսված միջոցների գերակշիռ մասը՝ ավելի քան 1.4 մլրդ դրամը, տրամադրվել է գրադարանային ծառայություններին, որը կազմել է ծրագրային հատկացումների 95.4%-ը: Հաշվետու տարում 12 գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել գրադարանների գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանմանը, մատենագիտական տեղեկույթի պետական պաշարների համալրմանը, օգտվողներին մատենագիտական տեղեկույթով ապահովմանը, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Լոռու մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: Հայաստանյան գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակում 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Ծախսերի կատարողականը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև վերապատրաստման ու հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով նախատեսված գրքերի համալրման մասով դրամաշնորհի մրցութային հանձնաժողովի կողմից «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտի չընդունման հանգամանքով անվանակարգին չհամապատասխանելու պատճառով: 2019 թվականին ընթերցողների թիվը կազմել է 107931:

Գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանն աջակցության համար օգտագործվել է 75.2 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 89.5%-ը: Միջոցառման կատարողականը պայմանավորված է դրամաշնորհային մրցույթների արդյունքում առաջացած տնտեսմամբ, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում Հայաստանում իրականացվել են 10 գրական ծրագրեր, հայաստանյան պատվիրակությունները մասնակցել են գրքի միջազգային 5 ցուցահանդեսների:

Հաշվետու տարում հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման համար ծախսվել է 7.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 88.2%-ը, որը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ: Իրականացվել է համայնքային 4 գրադարանների վերազինում:

Մշակույթի բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 623 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 92.4%-ը: Հաշվետու ժամանակահատվածում «Մշակույթի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ու «ՀՀ մշակույթի նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումների շրջանակներում տրամադրվել է համապատասխանաբար 592.2 մլն դրամ և 1.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշների 92.1%-ը և 82.8%-ը: Առաջին միջոցառման կատարողականը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում և ՀՀ կառավարության «Կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով 3 նախարարությունների միավորման արդյունքում հաստիքների կրճատման հետևանքով առաջացած տնտեսումներով: «ՀՀ մշակույթի նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման ծախսերի կատարողականը նույնպես պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում միջոցների տնտեսմամբ:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով համապատասխանաբար 1.5 մլն դրամ և 8.6 մլն դրամ:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին

աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 18.9 մլն դրամ:

Ազգային արխիվի ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 1.4 մլրդ դրամ, որի շրջանակներում 591.6 մլն դրամ հատկացվել է արխիվային ծառայություններին, 792 մլն դրամ՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի հարկային պարտավորությունների փոխհատուցմանը: Ազգային արխիվի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանությանը, համալրմանը, հաշվառմանը, արխիվային փաստաթղթերի վերանորոգմանը, փաստաթղթերի գիտատեխնիկական մշակմանը, ՀՀ ազգային արխիվային հավաքածուի փաստաթղթերի թվայնացման աշխատանքների իրականացմանը, ֆիլմերի թվայնացմանը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացմանը, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովմանը: 2019 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ արխիվային հավաքածուի պահպանում, ապահովում՝ 4324339 գործ, փաստաթղթերի գիտատեխնիկական մշակում և թերթերի մշակում՝ 115000 հատ, փաստաթղթերի թվայնացում՝ 218371 էջ, վերանորոգվել են արխիվային փաստաթղթեր՝ 325000 թերթ, ախտահանվող և կազմապատվող արխիվային գործերի ընդհանուր քանակը կազմել է 29500 գործ, կատարվել են տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքներ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ՝ 100000 քարտ:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 9 մլրդ դրամ է տրամադրվել *Արվեստների ծրագրին*՝ ապահովելով 94.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Մշակութային միջոցառումների իրականացում», «Թատերական ներկայացումներ» և «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» միջոցառումների կատարողականներով:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու տարում տրամադրվել է ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցառումն իրականացվել է օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Փաստացի ներկայացումների քանակը 2019 թվականին կազմել է 93, հանդիսատեսի թիվը՝ 53598, նոր և վերականգված բեմադրությունների թիվը՝ 6:

Ամբողջությամբ օգտագործվել է նաև ազգային ակադեմիական թատերարվեստի ներկայացումների համար նախատեսված 350.5 մլն դրամը: Միջոցառումն իրականացվել է «Գ.

Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովման, ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Փաստացի ներկայացումների քանակը 2019 թվականին կազմել է 118, հանդիսատեսի թիվը՝ 47531, նոր ներկայացումների քանակը՝ 3:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են 95.3%-ով: Կատարողականը պայմանավորված է «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագիրը չկնքվելու, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքներով: Միջոցառումն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Հատկացումներն ուղղվել են 14 թատրոնների գործունեության ապահովմանը: Փաստացի ներկայացումների քանակը 2019 թվականին կազմել է 2857, հանդիսատեսի թիվը՝ 462315 և նոր ներկայացումների քանակը՝ 87:

2019 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների միջոցառման ծախսերը կազմել շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.1%-ը: Միջոցառման կատարողականը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Միջոցառումն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Միջոցներն ուղղվել են 12 համերգային կազմակերպությունների գործունեության ապահովմանը: 2019 թվականին կազմակերպվել են 543 համերգներ, նոր համերգային համարների քանակը կազմել է 30:

Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 82.1%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև դրամաշնորհային մրցութային ծրագրերի արդյունքում առաջացած տնտեսումներով: 2019 թվականին պետական աջակցությամբ իրականացվող ստեղծագործական ծրագրերի թիվը կազմել է 47, կազմակերպվել է 95 միջոցառում՝ արտասահմանյան երկրներում հայկական մշակույթի և արվեստի ներկայացման, ինչպես նաև Հայաստանում արտերկրների մշակույթի ու արվեստի ներկայացման ուղղությամբ, 75 միջոցառում

միջազգային համագործակցության շրջանակներում (Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի, ԱՊՀ երկրների համապատասխան կառույցների հետ, միջազգային կառույցների հետ), 17 հանրապետական փառատոն, մրցույթ, ցուցահանդես, ստուգատես, 28 միջոցառում՝ Հայաստանում սփյուռքահայ արվեստագետների ներկայացման և սփյուռքում հայ արվեստագետների ներկայացման ուղղությամբ, 17 մանկապատանեկան մշակութային միջոցառումներ:

Ազգային ակադեմիական խմբերգային համերգների միջոցառման շրջանակներում նախատեսված 316.8 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովմանը, խմբերգային արվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երգչախմբային արվեստին հաղորդակցմանը, խմբերգային արվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Փաստացի համերգների քանակը 2019 թվականին կազմել է 13՝ նախատեսված 10-ի դիմաց, սպասարկված հանդիսատեսի ընդհանուր թիվը՝ 10950:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարի և վերջինիս վճարման ծառայությունների համար տրամադրվել է համապատասխանաբար 33.9 մլն դրամ և 160.8 հազար դրամ, որոնք կազմել են ծրագրային հատկացումների 80.2%-ը և 38.1%-ը: Առաջին ցուցանիշը պայմանավորված է պատվովճարի իրավունք ձեռք բերած շահառուների՝ հանրապետությունից բացակայելու հանգամանքով, իսկ երկրորդը՝ բանկերի միջոցով իրականացվող վճարումների թվի աճով:

Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակի հոբելյանական միջոցառման իրականացմանը հատկացված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 13.9 մլն դրամ: Միջոցառումն իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղում:

Մարզահամերգային համալիրի պահպանության համար տրամադրվել է 182.8 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ:

«Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ-ի հարկային պարտավորությունների փոխհատուցման համար նախատեսված 18.5 մլն դրամը նույնպես օգտագործվել է ամբողջությամբ:

«Քաղաքացու օրվան» նվիրված և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձին նվիրված միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են համապատասխանաբար 123 մլն դրամ և 235.5 մլն դրամ, որոնք օգտագործվել են 99.1%-ով և 98.9%-ով: Կատարողականները պայմանավորված են տնտեսումներով:

Տիգրան Մանսուրյանի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային փառատոնի իրականացման նպատակով «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ին

տրամադրվել է 44.8 մլն դրամ՝ ապահովելով 89.8% կատարողական, որը պայմանավորված է միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսմամբ:

Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակների հոբելյանական միջոցառումների շրջանակներում օգտագործվել է ծրագրված միջոցների 96.5%-ը՝ 164.4 մլն դրամ: Իրականացվել են 16 միջոցառումներ Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս:

2019 թվականի հոկտեմբերի 9-ին Երևանում կայացած Արևելյան գործընկերության 10-ամյակին նվիրված «Ապրել խելացի. հզորացնել երիտասարդներին» համաժողովի կազմակերպման և անցկացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 17.5 մլն դրամ՝ ապահովելով 98% կատարողական: Շեղումը պայմանավորված է միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսմամբ:

2019 թվականի հոկտեմբերի 6-9-ը Երևանում կայացած Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման և 2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման օրերին մշակութային միջոցառման կազմակերպման նպատակով նախատեսված համապատասխանաբար 5.3 մլն դրամը և 449.8 մլն դրամն օգտագործվել են ամբողջությամբ:

Հաշվետու տարում թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման շրջանակներում Երևանի մնջախաղի պետական թատրոնի վերանորոգման համար պետական բյուջեից կատարվել են 46.1 մլն դրամի ներդրումներ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.7%-ը:

Եվս 13.6 մլն դրամ տրամադրվել է «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգմանը, 650,0 հազար դրամ՝ «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կաթսայատան և ջերմամեխանիկական մասի արդիականացմանը, 24.4 մլն դրամը՝ «Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգմանը: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի ծախսերը կատարվել են 28%-ով՝ կազմելով 75.7 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար համայնքներին աջակցության գծով նախատեսված 117.5 մլն դրամը չօգտագործելու հանգամանքով՝ կապված միջոցառումը կատարող լիազոր մարմնի հաստատման վերաբերյալ կառավարության որոշման բացակայության հետ:

Հայաստանի Հանրապետության մարզերում մշակութային միջոցառումների իրականացման համար տրամադրվել է 31.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 78.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև մի շարք

միջոցառումների հետաձգմամբ: ՀՀ մարզերի 224 համայնքներում կազմակերպվել են 55 մշակութային միջոցառումներ, որոնց մասնակցել են 199 խմբեր:

Հաշվետու տարում համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման ծախսերը կազմել են 44.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 83.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: 2019 թվականին մշակույթի և ժամանցի կենտրոններում իրականացվել է 48 համերգ և ներկայացում, փաստացի հանդիսատեսի քանակը կազմել է 15453: Նշված գումարից շուրջ 37 մլն դրամը հատկացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնին՝ վերջինիս գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով: Միջոցներ են տրամադրվել նաև Սյունիքի և Կոտայքի մշակույթի կենտրոնների, Եղեգնաձորի մշակույթի տան ստեղծագործական գործունեությանն աջակցմանն ու խթանմանը:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրին հաշվետու տարում տրամադրվել է 614.2 մլն դրամ՝ ապահովելով 92.2% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է «Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» միջոցառման կատարողականով: Նշված միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 37.7%-ը՝ 27.3 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նախարարության դրամաշնորհային ծրագրերով ֆինանսավորվող միջոցառումների շրջանակներում համապատասխան մրցութային հայտեր չունենալու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը մեթոդիստ-մանկավարժների և հանրապետության առաջատար մասնագետների միջոցով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների մանկավարժներին և սովորողներին ցուցաբերել է մեթոդական օգնություն: Ուսումնամեթոդական աշխատանքներին մասնակցած փաստացի աշակերտների և ուսուցիչների թիվը կազմել է համապատասխանաբար 6611 և 1942:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի հատկացումների գերակշիռ մասը բաժին է ընկել ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցմանը՝ կազմելով ավելի քան 548.8 մլն դրամ և ապահովելով 99.6% կատարողական: Ուսման վարձավճարի փոխհատուցում է հատկացվել ազգային, փողային և լարային նվագարանների գծով թվով 2358 սովորողների համար:

2019 թվականի պետական բյուջեով երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակման և հրատարակման համար նախատեսված 13 մլն

դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին տպագրվել են 12 անուն ուսումնական ձեռնարկներ:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 10.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 67.7%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի մասնակիցների կողմից ներկայացված ցածր գնային առաջարկներով: Միջոցառման շրջանակներում երաժշտական դպրոցների համար ձեռք է բերվել 14 տեսակի 87 երաժշտական գործիք:

2019 թվականին շնորհալի պատանի երաժիշտ կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանն աջակցության նպատակով նախատեսված 14.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցման շրջանակներում ընդգրկված 15 շնորհալի պատանի երաժիշտ-կատարողներ 2019 թվականին մասնակցել են Հայաստանում կազմակերպվող միջազգային և հանրապետական մրցույթներին, փառատոներին, իրականացրել են համերգային գործունեություն, ինչպես նաև նախապատրաստվել և մասնակցել են օտարերկրյա պետություններում կազմակերպվող հեղինակավոր միջազգային մրցույթներին, փառատոներին, վարպետության դասընթացներին:

Մեծ նվաճումների սպորտի ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 2.7 մլրդ դրամ, որոնք կատարվել են 90.2%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններին, ինչպես նաև մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման և ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման միջոցառումների կատարողականով:

Մեծ նվաճումների սպորտի ծրագրի ծախսերում բարձր տեսակարար կշիռ ունեն ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը, որոնց կատարողականը կազմել է 96.2% կամ ավելի քան 1.3 մլրդ դրամ: 2019 թվականին Հայաստանում գործող թվով 35 ֆեդերացիաներ կազմակերպել են 99 ՀՀ առաջնություններ, որոնց մասնակցել է 9660 մասնակից, 147 ուսումնամարզական հավաք՝ 2700 մասնակցով, 195 միջազգային միջոցառում՝ 2060 մասնակցով: Շեղումը պայմանավորված է թիմերի չհամալրման պատճառով ռեգբիի ՀՀ պատանիների առաջնությունը չանցկացնելու հանգամանքով:

ՀՀ 33 հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովելու նպատակով տրամադրվել է 81.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 6.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 74.8%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 4 հաշմանդամային ՀԿ-ների համար նախատեսված գումարը ծախսվել է մասամբ՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի կողմից 5 մարզական միջոցառման փոխարեն իրականացվել է 2-ը («Խուլերի միավորում» և «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ների միջև ծագած դատական վեճի պատճառով), իսկ «Հայկական հատուկ օլիմպիադա» ՀԿ-ի կողմից 2 միջոցառման փոխարեն անցկացվել է 1-ը (հատուկ դպրոցների լուծարման պատճառով թիմեր չեն ձևավորվել): Սույն միջոցառման շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց՝ ինքնադրսևորվելու և լիարժեք ինտեգրվելու հասարակության մեջ: 2019 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել է 5 միջոցառում, որոնց մասնակցել է հաշմանդամություն ունեցող 125 անձ:

Հաշվետու տարում սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայությունների ձեռք բերմանը տրամադրվել է 107.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 82.3% կատարողական: Միջոցները տրամադրվել են «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Միջոցառման շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունից միջազգային մրցաշարերին մասնակցող բոլոր մարզիկների խորացված բժշկական հետազոտում, բժշկական սպասարկում 33 մարզաձևերի համար, որտեղ ներգրավված են եղել 7800 մարզիկ: Ծրագրային ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքներով, գործուղումների, տրանսպորտային նյութերի, ավտոմեքենաների վերանորոգման ծախսերով:

Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանն աջակցության ծախսերը 2019 թվականին կազմել են 12.9 մլն դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը, որը պայմանավորված է ավիատոմսերի՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Մարզաձևի զարգացման գծով իրականացվել է 6 միջոցառում, որին մասնակցել են 453 մարզիկ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության 2019 թվականի մարզական միջոցառումների օրացուցային պլանով նախատեսված միջոցառումները, մարզիչների և մրցավարների համար կազմակերպվել են մրցավարական սեմինարներ: 2019 թվականին հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևն ուսուցանվել է Երևանի և Արցախի

մարզադպրոցների սամբոյի, ձյուդոյի, հունա-հռոմեական ըմբշամարտի և ազատ ոճի ըմբշամարտի խմբերում, օլիմպիական հերթափոխի Գյումրու և Երևանի պետական մարզական քոլեջներում:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է շուրջ 5.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Կազմակերպվել է 1 միջոցառում, որին մասնակցել է 5 մարզիկ՝ շահելով 3 ոսկե, 1 բրոնզե մեդալ, ինչպես նաև արժանանալով լավագույն արդյունքի համար անվանական գավաթի:

Հաշվետու տարում շախմատիստների պատրաստման նպատակով 145.5 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են՝ Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման ճանապարհով շախմատի մասսայականացումը: Նշված նպատակների իրագործման համար մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնցից են՝ մարզերում շախմատային խմբակների ստեղծումը, որտեղ երեխաներն անվճար ուսանում են շախմատ, լավագույնները մասնակցում են մրցաշարերի, ստանում որակավորում, միջազգային և ազգային մրցաշարերի կազմակերպումը, մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների կազմակերպումը, որտեղ արտերկրից հրավիրվում են փորձառու մարզիչներ՝ իրենց փորձը կիսելու և շախմատային գիտելիքներ հաղորդելու համար, լավագույն սաների համար հավաքների կազմակերպումը: 2019 թվականին շախմատի ակադեմիայում սովորել են 1000 ուսանող, միջազգային մրցաշարերի մասնակցության նպատակով պատրաստվել է 1 շախմատիստ, կազմակերպվել է 4 միջազգային մրցաշար, մարզիչների վերապատրաստում, միջազգային մրցաշարերում ակադեմիայի սաներն ունեցել են 8 հաղթանակ և մրցանակային տեղեր:

«Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններ» և «2019 թվականի շախմատի աշխարհի առաջնությանը Լևոն Արոնյանի նախապատրաստում և մասնակցության ապահովում» միջոցառումներին 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվել է համապատասխանաբար 16.5 մլն դրամ և 64.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

2020 թվականին Լոզանում կայանալիք 3-րդ ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 11.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 77.8%-ը՝ պայմանավորված օլիմպիական խաղերին նախատեսվածից քիչ թվով մարզիկների մասնակցությամբ՝ կապված համապատասխան վարկանիշ չունենալու հետ:

«2020 թվականի Տոկիոյի 32-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովում» և «2-րդ Եվրոպական օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում»

միջոցառումների համար նախատեսված համապատասխանաբար 27.9 մլն դրամը և 47.8 մլն դրամը օգտագործվել են ամբողջությամբ:

Եվրոպայի երիտասարդական օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովման համար օգտագործվել է 16.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 84.5%-ը: Շեղումը պայմանավորված է Հայաստանի մարզիկների հավաքականի՝ Բաքվում կայացած փառատոնին չմասնակցելու հանգամանքով: Կանխատեսված 2 միջոցառման փոխարեն հայկական կողմը մասնակցել է 1 փառատոնի:

2019 թվականին Բելառուսում կայացած խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 5.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 63%-ը՝ պայմանավորված օլիմպիական խաղերին նախատեսվածից պակաս թվով մարզիկների մասնակցությամբ: Նախատեսված 14 մասնակցի փոխարեն առաջնությանը մասնակցել է 8 հոգի:

2019 թվականին Երևանում կայանալիք սպորտային պարերի մինչև 21 տարեկանների աշխարհի առաջնության անցկացման ապահովման նպատակով տրամադրվել է 14.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 98.5%-ը՝ պայմանավորված նախատեսված վարկանիշային մուծումների տնտեսված գումարով: Առաջնությանը մասնակցել է 1000 մասնակից:

ՀՀ հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններին, ինչպես նաև մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման ծախսերը 2019 թվականին կազմել են 316.7 մլն դրամ կամ նախատեսվածի 60.5%-ը, որը պայմանավորված է գնման գործընթացի մասնակիցների կողմից ներկայացված ցածր գնային առաջարկներով և 18 չափաբաժինների մրցույթները չկայանալու հանգամանքով:

Հաշվետու տարում 2019 թվականի սեպտեմբերի 5-8-ը Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում կայացած ՀԱՊԿ երկրների սամբոյի պատանեկան միջազգային փառատոնին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 1.5 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 84.1%-ը՝ պայմանավորված ճանապարհածախսի համար հատկացված միջոցների տնտեսմամբ: Միջազգային փառատոնին մասնակցել է 13 մարզիկ, որոնք արժանացել են 1 ոսկե, 1 արծաթե և 4 բրոնզե մեդալների:

2019 թվականին Երևանում կայացած արևելաեվրոպական երկրների լողափնյա վոլեյբոլի տղամարդկանց առաջնության կազմակերպման և անցկացման ապահովման նպատակով ծախսվել է 7.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Առաջնությանը մասնակցել է 58 մարզիկ:

2019 թվականի հուլիսի 13-20-ը Ղազախստանի մայրաքաղաք Նուրսուլթանում կայացած պարափաուերլիֆտինգի աշխարհի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ծախսերի փոխհատուցման համար 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 544 հազար դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Առաջնությանը մասնակցել է 2 մարզիկ:

2019 թվականի օգոստոսի 17-26-ը Հունգարիայի Սեգեդ քաղաքում կայացած պարականոեի աշխարհի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման համար նախատեսված 1.7 մլն դրամի ծախսերը չեն կատարվել՝ պայմանավորված գումար հատկացնելու մասին ՀՀ կառավարության որոշման ուշ ընդունմամբ:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով հատկացվել է 271.9 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: 2019 թվականին տարեվերջյան պարգևատրման են ներկայացվել 224 մարզիկներ ու մարզիչներ և 9 բժիշկ:

ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացման նպատակով տրամադրվել է 47.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: 2019 թվականին փաստացի պատվովճար է հատկացվել 19 գլխավոր ու ավագ մարզչի և 34 աշխարհի չեմպիոնի:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ վարչապետի անվանական թոշակ հատկացնելու նպատակով նախատեսված 197.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2019 թվականին ՀՀ վարչապետի անվանական թոշակ է հատկացվել 89 մարզիկի և 120 մարզչի:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն ու Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով 2019 թվականին պետական բյուջեից տրամադրվել է համապատասխանաբար 4.8 մլն դրամ և 4 մլն դրամ, որոնք օգտագործվել են ամբողջությամբ:

Սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 374 մլն դրամ, որոնք կատարվել են 86.3%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 4 միջոցառում:

Հաշվետու ժամանակահատվածում «Սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» և «Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումների շրջանակներում տրամադրվել է համապատասխանաբար 366.8 մլն դրամ և 3.6 մլն դրամ, որոնք կազմել են նախատեսված ցուցանիշների 86.3%-ը և 80.3%-ը: Շեղումը հիմնականում

պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում և ՀՀ կառավարության «Կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով 3 նախարարությունների միավորման արդյունքում հաստիքների կրճատման հետևանքով առաջացած տնտեսումներով:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը կազմել են 1.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 100%-ը:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 2.3 մլն դրամ:

Հաշվետու տարում *Երիտասարդության ծրագրի* իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված հատկացումների 87.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կատարողականով: Նշված միջոցառման շրջանակներում օգտագործվել է հատկացված միջոցների 58.6%-ը՝ 158.2 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև քննարկումների և բանակցությունների արդյունքում կանխատեսված միջոցառումների փոփոխությամբ: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է 15 միջոցառում, որին մասնակցել է 23500 մարդ՝ նախատեսված 21 միջոցառման և 26890 մասնակցի դիմաց: Մասնավորապես՝ իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- ««ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում Վանաձորում տեղի է ունեցել տեղական և միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված համաժողով, որի նպատակն էր զարգացնել տեղական և միջազգային երիտասարդական համագործակցությունը, խթանել երիտասարդների շարժունությունը, բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը տեղական և միջազգային ծրագրերի վերաբերյալ: Կազմակերպվել են «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական հանձնաժողովի և կազմկոմիտեի անդամների այցելությունները «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ՝ տեղերում ուսումնասիրությունների արդյունքում հայտերի փորձագիտական գնահատման նպատակով, կազմակերպվել է կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկությունը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման

նպատակով: Վանաձորում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողությունը.

- «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ծրագիրը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանք կատարող մարդկանց համակարգված մոտեցման որդեգրումը.
- «Երիտասարդական պորտալի պահպանում» ծրագիրը, որի նպատակն էր հավաքել տեղեկատվություն երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ, ապահովել երիտասարդական պետական քաղաքականության թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Պորտալին կարելի էր միանալ www.erit.am, www.youtharmenia.am, www.youthweb.am, www.cragrer.am ինտերնետային հասցեներով.
- «Դասընթաց Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների համար» ծրագիրը, որի նպատակն էր խթանել Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեությունը և զարգացնել հասարակական կազմակերպությունների կարողություններն ու հմտությունները.
- «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2019» ծրագիրը, որի նպատակն էր խթանել հանրային կյանքին երիտասարդների մասնակցությունը, 2019 թվականի ընթացքում նշանակալի հաջողություններ ցուցաբերած երիտասարդների, երիտասարդական խմբերի և երիտասարդական հասարակական կազմակերպությունների խրախուսումը, նրանց ձեռքբերումների արժևորումը.
- «Երիտասարդության միջազգային օրը երիտասարդական մայրաքաղաքում» ծրագիրը, որի նպատակն էր համախմբել երիտասարդներին Երիտասարդության միջազգային օրվա առթիվ, օրը երիտասարդների համար տոնի վերածել.
- «Ճանաչողական և համագործակցության այց Հայաստան» ծրագիրը, որի նպատակը հայկական արժեքների քարոզման միջոցով վիրահայ երիտասարդներին Հայաստանն առավել ճանաչելի դարձնելն ու հայապահպանությանն օժանդակելն էր:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է ավելի քան 7.1 մլն դրամ կամ նախատեսվածի 74.2%-ը՝ պայմանավորված ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումները չօգտագործելու հանգամանքով և տնտեսումներով: 2019 թվականին փաստացի իրականացվել է 2 միջոցառում, որին մասնակցել է 10225 մարդ:

54.5 մլն դրամ է հատկացվել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի պահպանմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Տարվա ընթացքում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից իրականացվել են կրթական, գիտական, մշակութային, երիտասարդների

սոցիալական, առողջապահական, զբաղվածության հիմնախնդիրների լուծմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր:

Երիտասարդ ընտանիքներին աջակցության նպատակով «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 95.4%-ով՝ կազմելով 919.2 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է շահառուների թվով: Ծրագրի շրջանակներում սուբսիդավորումն իրականացվում է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: 2019 թվականին նախատեսված 5161 շահառուի դիմաց ծրագրում փաստացի ընդգրկվել է 4343 շահառու:

2019 թվականին *Մասսայական սպորտի* ծրագրին ուղղվել է 676.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 91.2%-ը, ընդ որում, գրեթե բոլոր միջոցառումներում արձանագրվել են շեղումներ՝ հիմնականում պայմանավորված գնումների գործընթացների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ:

ՀՀ մարզերում և ԱՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման ծախսերը կազմել են 6.3 մլն դրամ կամ նախատեսվածի 90.4%-ը: Մարզական փառատոնին մասնակցել են Հայաստանի Հանրապետության 43 քաղաքային, 5 գյուղական համայնքներ և Արցախի Ստեփանակերտ քաղաքը: Մասնակիցների թիվը կազմել է շուրջ 20200 մարդ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով օգտագործվել է շուրջ 45.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.2%-ը: 2019 թվականին անցկացված մրցույթին 6 մարզաձևերում փաստացի մասնակցել է 571 մարզական ընտանիք: Միջոցառումն անցկացվել է 2 փուլով՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում, Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում: Մրցույթի 1-ին փուլին մասնակցել է 571 ընտանիք, 2-րդ փուլին՝ 69 ընտանիք: Մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվել է հուլիսի 23-28-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի գլխավոր մարզահամալիրում:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է շուրջ 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.6%-ը: Ռազմամարզական խաղերն անցկացվել են 4 փուլով՝ ներդպրոցական, ՀՀ տարածաշրջանային և Երևան քաղաքի վարչական շրջանների միջև, ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, և եզրափակիչ փուլը՝ Երևան քաղաքում: 2019 թվականին 6 մարզաձևերում փաստացի մասնակիցների թիվը կազմել է 26500՝ նախատեսված 22000-ի փոխարեն:

«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 16.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98%-ը: Միջոցառմանը նախատեսված 192 մասնակցի փոխարեն մասնակցել են լսողական, տեսողական,

հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր սահմանափակումներ ունեցող 300 անձինք՝ 7 մարզաձևերում:

«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացման համար տրամադրվել է ավելի քան 18.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 92.7%-ը: Ծրագիրն անցկացվել է 4 փուլով. առաջինը՝ հաստատություններում, այնուհետև՝ համայնքային, մարզային, և եզրափակիչ, որոնց մասնակցել են ՀՀ մարզերի և Արցախի Ստեփանակերտ քաղաքի 400 նախադպրոցական հաստատությունների 10900 մասնակիցներ՝ նախատեսված 4800-ի դիմաց:

«Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացման համար տրամադրվել է 4.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 89.6%-ը: Մրցույթին մասնակցել են 12 հաստատությունների 321 մասնակիցներ՝ նախատեսված 250-ի դիմաց:

Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացման համար տրամադրվել է 11.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 58.3%-ը: Մարզական խաղերն անցկացվել են 7 մարզաձևերից, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 2500 ուսանողներ՝ նախատեսված 3000-ի դիմաց:

ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԱՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է ավելի քան 23.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 75.6%-ը: ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադան անցկացվել է 4 փուլով 5 մարզաձևերում, որին ընդհանուր առմամբ մասնակցել է 28500 աշակերտ՝ նախատեսված 32000–ի դիմաց:

ՀՀ մարզերի, Երևանի քաղաքի և ԱՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման համար տրամադրվել է ավելի քան 26.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 92.5%-ը: Սպորտլանդիան անցկացվել է 4 փուլով, 10 մարզաձևերում փաստացի մասնակցել է 126498 աշակերտ՝ նախատեսված 113000–ի դիմաց:

ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացման համար տրամադրվել է 5.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 93.7%-ը: Գյուղական մարզական խաղերն անցկացվել են 3 փուլով: Միջոցառմանը մասնակցել է 4550 մարդ՝ նախատեսված 5000-ի փոխարեն:

«Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացմանը տրամադրվել է 691.2 հազար դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.7%-ը: Մրցույթին մասնակցել են 32 պետական մարմինների 217 աշխատակիցներ:

Տարեցների հանրապետական խաղերի անցկացման համար տրամադրվել է 9.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97%-ը: Միջոցառումն անցկացվել է 3 փուլով՝ Հայաստանի

Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում: Մրցույթի 1-ին փուլին մասնակցել են 571 ընտանիքներ, 2-րդ փուլին՝ 69 ընտանիքներ: Մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվել է սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի գլխավոր մարզահամալիրում: Խաղերն անցկացվել են 5 մարզաձևերում, ընդհանուր առմամբ մասնակցել է 1600 մարզիկ:

Ուսանողական մարզական միջոցառումներին հաշվետու տարում հատկացված 20.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Մարզական խաղերն անցկացվել են 13 մարզաձևերից: Խաղերին ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 5000 ուսանողներ, եզրափակիչ փուլին՝ 1000 ուսանողներ:

Հայաստանում զբոսաշրջության զարգացմանն աջակցության նպատակով հատկացվել է 5.4 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման համար մարզական հագուստ ձեռք բերելուն աջակցելու նպատակով օգտագործվել է շուրջ 5.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին 6 մարզաձևերի գծով մասնակցել է 190 ընտանիք:

Հաշվետու տարում համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման աջակցման համար տրամադրվել է 23.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 70.5%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի մարզադպրոցի շինարարության աշխատանքները ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորելու հանգամանքով:

2019 թվականին 427.2 մլն դրամ է հատկացվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 95.7% կատարողական: Միջոցառման շրջանակներում իրականացվել են Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: Կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նախագծահետազոտական աշխատանքների մեկ պայմանագիր կնքվել է տարեվերջին:

Մարզական օբյեկտների հիմնանորոգման նպատակով հատկացվել է շուրջ 19 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 58.9%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքները և «Թիավարության մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի նախագծահետազոտական աշխատանքները:

ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականին կատարվել է պետական բյուջեի 7 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 307.4 մլրդ դրամ կամ նախատեսածի 94.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության կողմից կատարված ծախսերի գերակշիռ մասը կազմող ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի կատարողականով:

2019 թվականին *Ռազմական ուսուցման և վերապատրաստման* ծրագրի ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 91.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով: Միջոցներն օգտագործվել են արտերկրների ռազմական ուսումնական հաստատություններում նեղ մասնագետների պատրաստման և վերապատրաստման նպատակով: 2019 թվականին արտերկրի ռազմական ուսումնական հաստատություններն ավարտած կուրսանտների և սպա-ունկնդիրների թիվը կազմել է 99՝ նախատեսված 100-ի դիմաց:

Հաշվետու տարում *ՀՀ պաշտպանության ապահովման* նպատակով ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է ավելի քան 301 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 94.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման երկրորդ վարկի հաշվին ռուսական արտադրության անհրաժեշտ ինժեներական և ավտոմոբիլային տեխնիկայով ապահովման ծախսերի կատարողականով, որոնք կազմել են 31.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 73.3%-ը: Վերջինս պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով:

Ռազմական կարիքների բավարարման և ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավմանն ուղղված ծախսերը կազմել են համապատասխանաբար 186.9 մլրդ դրամ և 78.6 մլրդ դրամ՝ ապահովելով 98.4% և 98% կատարողական:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման ծառայություններին ուղղվել է ավելի քան 88.9 մլն դրամ՝ ապահովելով 88.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով:

99.7% կատարողական է արձանագրվել Ռազմական նշանակության համակարգերի պահպանման ծախսերի գծով, որոնք կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 5.5 մլն դրամ:

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցման համար տրամադրվել է 16.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 21.9%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ «Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գործունեությունը սկսվել է 2019 թվականի նոյեմբեր ամսին, որից հետո անհրաժեշտ մասնագետների համալրումը մասնակիորեն է կատարվել:

Վարկի տոկոսագումարների սուբսիդավորման նպատակով օգտագործվել է 8.8 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 11.8%-ը: Շեղումը պայմանավորված է սուբսիդավորման համար դիմողների փոքր քանակով:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած նախկին զինծառայողներին բնակարանով ապահովման և նույն ծրագրի բնակարանների բարելավման նպատակով կատարված ծախսերը կազմել են համապատասխանաբար 821.3 մլն դրամ և 2.1 մլրդ դրամ, որոնք կատարվել են 100%-ով:

Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների ծրագրի ծախսերը կազմել են 320.2 մլն դրամ՝ ապահովելով 94.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով:

Միջազգային ռազմական համագործակցության ծրագրի ծախսերը կազմել են 735.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն օգտագործվել են 12 երկրներում և 5 միջազգային կազմակերպություններում համապատասխանաբար 10 (որոնցից 2-ը՝ համատեղությամբ) և 5 ՀՀ ռազմական կցորդների և ներկայացուցիչների պահպանման նպատակով:

Ռազմաբժշկական սպասարկման և առողջապահական ծառայությունների ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 89.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին դեղորայքի տրամադրման ծախսերով, որոնք կազմել են 1.2 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 90%-ը: Վերջինս պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով: Տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են վեց միջոցառումներ, որոնցից երկուսի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ: Մասնավորապես՝ զինծառայողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին ու Հայաստանի Հանրապետությունից դուրս զինծառայողի բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է համապատասխանաբար 100 մլն դրամ և 9.4 մլն դրամ:

Հաշվետու տարում Հիգիենիկ և համաճարակային փորձագիտական ծառայություններին տրամադրվել է 30.8 մլն դրամ՝ ապահովելով 95.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են սննդի, սննդամթերքի, ջրի և զորամասերի սպասարկման ոլորտի աշխատակիցների 40500 կանխարգելիչ հետազոտություններ:

Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման ծառայությունների գծով ու հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրման ծախսերը

կազմել են համապատասխանաբար 3.5 մլն և 151 մլն դրամ՝ ապահովելով 8.7% և 94.8% կատարողական: Առաջին միջոցառման կատարողականը պայմանավորված է սարքավորումների կարիքի բացակայությամբ, երկրորդ միջոցառման կատարողականը՝ տնտեսումներով:

Հաշվետու տարում *ՀՀ ՊՆ կողմից իրականացվող ծրագրերին աջակցության* ծրագրի շրջանակներում իրականացվել են երկու միջոցառումներ, որոնց գծով կատարված ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 90%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ռազմական կարիքի բավարարման ծախսերի կատարողականով, որը կազմել է 88% կամ 2.1 մլրդ դրամ: Վերջինս պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով: ՊՆ անձնակազմի խրախուսմանն ուղղվել է շուրջ 498.1 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական:

ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության կողմից իրականացվող ծրագրին աջակցության ծախսերը կազմել են ավելի քան 174.3 մլն դրամ՝ ապահովելով 79.2% կատարողական: Տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են երեք միջոցառումներ, որոնց գծով առկա են շեղումներ, ինչը պայմանավորված է սահմանված հիմքերով և ընթացակարգերով հաշվառման մեջ պարտավորությունների ձևակերպումների բացակայության հանգամանքով: Մասնավորապես՝ ՀՀ ՊՆ-ի ռազմաբժշկական հաստատությունների գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ դեղերի, պարագաների, բժշկական սարքերի և այլ միջոցների ու անհրաժեշտ բժշկական սարքերի ձեռքբերման համար օգտագործվել են համապատասխանաբար 9 մլն դրամի և 19.8 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 28.2% և 51.7% կատարողական, իսկ բժշկական օգնություն և սպասարկում իրականացրած անձնակազմի խրախուսման համար՝ 145.4 մլն դրամի միջոցներ կամ նախատեսվածի 97.2%-ը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականին իրականացվել է պետական բյուջեի 16 ծրագիր, որոնց ընդհանուր առմամբ տրամադրվել է շուրջ 454 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 97.5%-ը: Բոլոր 16 ծրագրերում առկա են շեղումներ: Առանձնապես խոշոր շեղումներ են արձանագրվել կենսաթոշակային ապահովության, անապահով սոցիալական խմբերին աջակցության, սոցիալական փաթեթների ապահովման, սոցիալական ապահովություն և սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների ծրագրերում:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից ավելի քան 11.3 մլրդ դրամ տրամադրվել է *Պարգևավճարների և պատվովճարների* ծրագրի ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 93.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է զինծառայողներին, ՀՄՊ մասնակիցներին, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցներին, զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին, ընտանիքներին տրվող պարգևավճարների

գծով ծախսերի կատարողականով, որոնք կազմել են 10.9 մլրդ դրամ կամ 93.6%՝ հիմնականում պայմանավորված պարգևավճարի իրավունք ձեռք բերած շահառուների՝ նախատեսվածից պակաս քանակով: Հաշվետու տարում պարգևավճար է ստացել 34995 ընտանիք՝ նախատեսված 37652-ի փոխարեն:

Հայրենական մեծ պատերազմի վետերաններին առողջարանային բուժման ուղեգրերի տրամադրման ծախսերը կազմել են 3.6 մլն դրամ կամ 83.3%: Տնտեսումը պայմանավորված է գնումների արդյունքում առավել մատչելի ծառայություն ձեռք բերելու հանգամանքով: Հաշվետու տարում վետերաններին տրամադրվել է 30 առողջարանային ուղեգիր:

«Վետերանների պատվովճարներ» միջոցառման գծով ծախսերը կազմել են 258 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.2%-ը: 2019 թվականին պատվովճար ստացած վետերանների թիվը կազմել է 310՝ նախատեսված 397-ի փոխարեն;

Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճարի գծով ծախսերը կազմել են 163.4 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Հաշվետու տարում պարգևավճար է ստացել 103 ընտանիք: Իսկ նշված պարգևավճարների վճարման ծառայությունների ձեռքբերման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 77.3%-ը՝ 603 հազ. դրամ, ինչը պայմանավորված է պարգևատրումն անկանխիկ եղանակով ստացող շահառուների թվի ավելացմամբ:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծախսերը կազմել են 32.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրված ցուցանիշի 93.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների կատարողականով, որոնց տրամադրվել է 31.4 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 93.9%-ը՝ պայմանավորված վարչարարության արդյունքում շահառուների թվի նվազմամբ: Հաշվետու տարում ծրագրված շուրջ 93733 ընտանիքի փոխարեն նպաստ է ստացել 93397 ընտանիք:

Նպաստառուների թվի նվազման արդյունքում տնտեսվել են նաև ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 314.2 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.2%-ը:

Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովման նպատակով տրամադրվել է 486.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.6%-ը, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ, որոշ գնման մրցույթներ չկայանալու, ինչպես նաև գնված ապրանքների միավորների գները նախատեսվածից պակաս լինելու հանգամանքներով: Սույն

ծրագրով պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով, նշված համայնքների աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային բաժինների գործունեության կազմակերպման համար ֆինանսավորվում են նրանց պահպանման ծախսերը և 237 հաստիքային միավորների աշխատավարձերը:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրության համար օգտագործվել է 5.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 75.1%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթի արդյունքում ձևաթղթերի միավորի՝ նախատեսվածից ցածր գնով, ինչպես նաև 9 տեսակի ձևաթղթերի մրցույթները չկայանալու հանգամանքով:

Հաշվետու տարում *Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման* ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 9.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 87.2%-ը, ինչը պայմանավորված է թափուր հաստիքներով, ինչպես նաև շահառուների՝ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման այլ պատճառներով: 2019 թվականին սոցիալական փաթեթից օգտվել է 128599 շահառու՝ նախատեսված 147493-ի փոխարեն:

18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների ծրագրի շրջանակներում 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 2.5 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 95.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների գծով ծախսերի կատարողականով, որը կազմել է 95.6%՝ շուրջ 2.1 մլրդ դրամ: Տնտեսումը պայմանավորված է նախարարության համակարգի՝ տարեցների շուրջօրյա խնամք և սպասարկում իրականացնող 5 կազմակերպությունների կողմից նախատեսվածից պակաս թվով տարեցներ սպասարկելու, ինչպես նաև որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու հանգամանքներով: Հաշվետու տարում բնակչության շուրջօրյա խնամքի սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց փաստացի թիվը կազմել է 1168՝ նախատեսված 1210-ի դիմաց:

Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկում իրականացնելու նպատակով տրամադրվել է 126.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 97.1%-ը: Տնտեսումը պայմանավորված է փաստացի սպասարկվող շահառուների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու և տնտեսումների հանգամանքներով: Հաշվետու տարվա

ընթացքում «Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սպասարկվող անձանց թիվը կազմել է 1182՝ նախատեսված 1350-ի փոխարեն:

Միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում իրականացնելու նպատակով տրամադրվել է 204.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.2%-ը: Ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով. «Առաքելություն» ՀԿ-ի միայնակ տարեցների 3089 շահառու հաշմանդամներին տնային պայմաններում և ցերեկային կենտրոնում սպասարկելու նպատակով փոխհատուցվել են 171 աշխատողների նվազագույն աշխատավարձերը, ինչպես նաև 1608 շահառու տարեցներ ապահովվել են օրական մեկանգամյա սննդով: Տնտեսումը պայմանավորված է սննդամթերքից օգտվող շահառուների՝ նախատեսվածից պակաս թվով: Ծրագրի շրջանակներում սպասարկվող անձանց թիվը կազմել է 3089՝ նախատեսված 3440-ի փոխարեն:

Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում իրականացնելու նպատակով տրամադրվել է 24 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 100%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Վանաձորի տարեցների տուն» ՀԿ-ին տարեցների խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով վճարվել է 27 հաստիքային միավորների աշխատավարձը: Տարեցների տանը խնամվողների թիվը հաշվետու տարում կազմել է 47՝ նախատեսված 55-ի փոխարեն:

Հաշվետու տարվա ընթացքում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների շրջանակներում 52.1 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ին, որն իրականացրել է 99 անօթևանների շուրջօրյա խնամք և սպասարկում՝ նախատեսված 100-ի փոխարեն: Պետական բյուջեի միջոցներով փոխհատուցվել են կազմակերպության 28 հաստիքային միավորների աշխատավարձերը, սննդամթերքի և կոմունալ ծախսերը: Ծախսերը կազմել են տարեկան ծրագրով նախատեսված գումարի 99.1%-ը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով 2019 թվականին տրամադրվել է 11.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 87.4%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ում գործող ցերեկային կենտրոնում խնամքի ծառայություններ է ստացել 14 անձ:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 20 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված 16 կառույցներում 2019 թվականին բնակվել է 320 անձ:

Մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնման ծառայությունների ծախսերը կազմել են 18 մլն դրամ կամ նախատեսվածի 97.6%-ը: Տնտեսումը պայմանավորված է սպասարկված շահառուների թվով, որը կազմել է 14՝ նախատեսված 15-ի փոխարեն:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների ծախսերը կազմել են 12.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Հաշվետու տարում սպասարկվող անձանց թիվը կազմել է 15՝ նախատեսված 16-ի փոխարեն:

Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայությունների ծախսերը կազմել են 5.7 մլն դրամ կամ նախատեսվածի 85.3%-ը, որը պայմանավորված է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նախատեսված 57 տարեցի փոխարեն փաստացի 41 միայնակ տարեցի սպասարկելու հանգամանքով, ինչպես նաև որոշ ծախսային հոդվածների գծով առկա տնտեսումներով:

Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 98.6%-ը՝ շուրջ 14.5 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է երեխայի ծննդյան միանվագ նպաստի ծախսերով, որոնք կազմել են 11.7 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.6%-ը, ինչը պայմանավորված է իրավունք ձեռք բերած նպաստառուների թվով, այդ թվում՝ կարգաթվերի գծով նախատեսված և փաստացի ցուցանիշների միջև տարբերությամբ: 2019 թվականին նորածինների թիվը կազմել է 35448՝ նախատեսված 40583-ի փոխարեն:

2019 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են 2.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99%-ը: Միջոցառման շրջանակներում փաստացի երեխայի խնամքի նպաստ է ստացել ամսական միջին հաշվով 12629 երեխա՝ նախատեսված 12754-ի դիմաց:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովման նպատակով օգտագործվել է 12.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 66.6%-ը՝ պայմանավորված անկանխիկ եղանակով ստացողների թվի ավելացմամբ:

Անաշխատունակության դեպքում սոցիալական աջակցության ծրագրի ծախսերը կազմել են 12.3 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 96.3%-ը: Շեղումը պայմանավորված է մայրության նպաստի ծախսերի կատարողականով, որը կազմել է 95.5% կամ 9.5 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է ՊԵԿ-ի կողմից ամսական տեղեկանք-պահանջների հիման վրա կանխատեսված գումարի մեծության և փաստացի ծախսի տարբերությամբ, ինչպես նաև միջին օրական նպաստի չափի նվազմամբ: Մայրության նպաստ ստացող չաշխատող անձանց թիվը 2019 թվականին նախատեսված 27426-ի դիմաց կազմել է 23621:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի գծով ծախսերը կազմել են 2.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 75%-ով, որոնք կազմել են 981.1 հազար դրամ: Շեղումը պայմանավորված է մրցույթի արդյունքում տնտեսված գումարով:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման նպատակով 2019 թվականին տրամադրվել է 70.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 91.7%-ը: Շեղումը պայմանավորված է փոխհատուցման իրավունք ձեռք բերած շահառուների թվով. նախատեսված 383 անձի փոխարեն հաշվետու տարում փոխհատուցում է ստացել 351 անձ:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից *Զբաղվածության ծրագրի* միջոցառումներին տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 85%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 17 միջոցառումներ:

Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 30.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 48%-ը: Ծրագրի թերակատարման պատճառը մրցույթներին ուսուցում իրականացնող կազմակերպությունների պասիվ մասնակցությունն էր, որը պայմանավորված էր ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից համաձայնեցված մոդուլային ծրագիր ունենալու պարտադիր պահանջով: Միաժամանակ ծրագրի իրականացման համար խոչընդոտ էր հանդիսանում նաև առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակ ունենալու նախապայմանի սահմանումը: Առկա խնդրից ելնելով՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1616-Ն որոշմամբ ծրագրից հանվեց առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակ ունենալու նախապայմանը: Վերոհիշյալ խնդիրներով պայմանավորված՝ 2019 թվականին ծրագրում ընդգրկվել է 369 շահառու՝ նախատեսված 700-ի փոխարեն:

2019 թվականին աշխատանքի տոնավաճառի կազմակերպման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 98.6%-ով՝ կազմելով 6.9 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 10 տոնավաճառ Իջևան, Հրազդան, Վեդի, Գյումրի, Վանաձոր, Աբովյան, Երևան (2 անգամ), Արմավիր, Եղվարդ քաղաքներում: Տոնավաճառներին մասնակցել է 367 գործատու, 13500 աշխատանք փնտրող, հավաքագրվել է տեղեկատվություն՝ 3800 թափուր և 1300 սպասվելիք աշխատատեղերի մասին: Ծրագրի արդյունքում աշխատանքի է տեղավորվել 788 աշխատանք փնտրող, որից 160-ը հաշվառված է եղել ԶՏԿ-ներում:

Հաշվետու տարվա ընթացքում «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությանն աջակցության տրամադրում» ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 8.2 մլն դրամ կամ նախատեսվածի 55%-ը: Տարվա ընթացքում ծրագրում ընդգրկվել է 98 շահառու, որից 79-ի հետ կնքվել է պայմանագիր: Ուսուցման և խորհրդատվության ծառայությունները կնքվել են երկու առանձին պայմանագրերով, որտեղ խորհրդատվության ծառայության ժամանակահատվածը նախատեսվում է 12 ամիս: Քանի որ ծրագրերի մեծ մասն իրականացվել է 4-րդ եռամսյակում, խորհրդատվության մասով գումարի մի մասը տեղափոխվել է 2020 թվական, որով էլ պայմանավորված է ցածր կատարողականը:

Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 750 հազ. դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Հաշվետու տարում ծրագրում ընդգրկվել է 30 շահառու:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրումը կազմել է 46 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 67.8%-ը: Միջոցառման շրջանակներում իրականացվել է 79 ծրագիր՝ նախատեսված 75-ի դիմաց: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ 3-րդ եռամսյակում նախատեսված ու չիրականացված, ինչպես նաև լրացուցիչ ծրագրերն իրականացվել են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, որոնց ֆինանսավորումը տեղափոխվել է 2020 թվական:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 8.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 58.8%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է իրականացված ծրագրերի մի մասի՝ նախատեսվածից ցածր արժեքով: Ծրագրում ընդգրկված՝ աշխատանքի ընդունված աշխատաշուկայում անմրցունակ, հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 38՝ նախատեսված 40-ի դիմաց, իսկ ուղեկցողներ չեն ընդգրկվել՝ կարիքի բացակայությամբ պայմանավորված:

Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծախսերը կազմել են 10.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 81.2%-ը: Տնտեսումը պայմանավորված է ծրագրում պակաս թվով շահառուների ընդգրկմամբ, որոնց թիվը կազմել է 11՝ նախատեսված 15-ի փոխարեն:

Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին տրամադրվել է 88.8 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 99.9% կատարողական: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին աջակցություն է ստացել 398 գործազուրկ՝ նախատեսված 400-ի փոխարեն:

Հաշվետու տարվա ընթացքում աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին միանվագ փոխհատուցումներ տրամադրելու նպատակով օգտագործվել է 146.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 90.2%-ը: Հաշվետու տարում ծրագրում ընդգրկված աշխատաշուկայում անմրցունակ անձանց թիվը կազմել է 770՝ նախատեսված 805-ի փոխարեն:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 192.8 մլն դրամ աջակցություն՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 83%-ը: Շեղումը պայմանավորված է ծրագիրը հուլիս ամսին սկսելու հանգամանքով, որի արդյունքում նախատեսված 2400 ծրագրի փոխարեն իրականացվել է 1514 ծրագիր:

Գործատուներին այցելության համար աշխատաշուկայում անմրցունակ անձանց ծախսերի փոխհատուցումը կազմել է 9.1 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 30.1%-ը: Թերակատարումը պայմանավորված է շահառուների, ինչպես նաև այցերի՝ նախատեսվածից փոքր թվով: 2019 թվականին ծրագրում ընդգրկվել է 1032 գործազուրկ՝ նախատեսված 1205-ի փոխարեն, իսկ այցերի թիվը կազմել է 1820, այսինքն՝ միջինում 1.8 այց՝ նախատեսված 5-ի փոխարեն:

Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի ծախսերը կազմել են 23.9 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 41.3%-ը: Ծրագրի թերակատարման պատճառը մի կողմից ուշ հայտարարված մրցույթներն էին, մյուս կողմից՝ կազմակերպված մրցույթներին կազմակերպությունների պասիվ մասնակցությունը՝ կապված ծրագրի իրականացման ընթացակարգի դժվարությունների, ինչպես նաև առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակ ունենալու նախապայմանի սահմանման հետ: Հաշվետու տարում ծրագրում ընդգրկվել է 369 շահառու՝ նախատեսված 700-ի փոխարեն:

Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ծախսերը կազմել են 349.7 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 90%-ը: Ծրագրում ընդգրկվել է 448 շահառու՝ նախատեսված 472-ի փոխարեն:

Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 43.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 68.2%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարեվերջին մեկնարկած ծրագրերի ֆինանսավորումների մի մասը տեղափոխվել է 2020 թվական:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով տրամադրվել է 126.1 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.4%-ը: Տնտեսումը պայմանավորված է նրանով, որ տարվա ընթացքում որոշ ծրագրեր իրականացվել են նախատեսվածից ցածր արժեքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են 97 ծրագրեր՝ նախատեսված 90-ի դիմաց:

Ցածր կատարողական է արձանագրվել նաև վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովման ծախսերի գծով, որոնք կազմել են 51.5 հազ. դրամ կամ ծրագրված ցուցանիշի 5.7%-ը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ֆինանսավորումը 2020 թվական տեղափոխելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են 96 ծրագրեր՝ նախատեսված 60-ի դիմաց, որոնցում ընդգրկվել է 915 գործազուրկ՝ նախատեսված 480-ի դիմաց:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար տրամադրվել է 630.9 մլն դրամ աջակցություն, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 92%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրերի մի մասը մեկնարկել է հիմնականում դեկտեմբեր ամսին: Միջոցառման շրջանակներում իրականացված ծրագրերի թիվը կազմել է 1098՝ նախատեսված 80-ի դիմաց, իսկ դրանցում ընդգրկված շահառուների թիվը՝ 1098՝ նախատեսված 1000-ի դիմաց:

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում 2019 թվականի պետական բյուջեից օգտագործվել է ավելի քան 3.8 մլրդ դրամ՝ ապահովելով 90.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման ու բնակարանային պայմանների բարելավման ծախսերում, որոնք կազմել են 122.7 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 24.5%-ը: Վերջինս պայմանավորված է շահառուների կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը սահմանված կարգին չհամապատասխանելու հանգամանքով: Բնակարանային ապահովման և պայմանների բարելավման նպատակով աջակցություն ստացող շահառուների թիվը կազմել է 24՝ նախատեսված 62-ի փոխարեն:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով տրամադրվել է 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Միջոցներն ուղղվել են 315 բնակարանի ձեռքբերմանը (նախատեսված 319-ի դիմաց), որից 22-ը՝ Արագածոտնի մարզում, 191-ը՝ Լոռու մարզում, 102-ը՝ Շիրակի մարզում:

Հայաստանի Հանրապետության մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովման ծախսերը կազմել են 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին բնակարանով ապահովվել է 86 շահառու՝ նախատեսված 301-ի

փոխարեն, ինչը պայմանավորված է բյուջեից միջոցներ հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը 2019 թվականի նոյեմբերին ընդունելու հանգամանքով:

2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ 320.7 մլրդ դրամ, տրամադրվել է *Կենսաթոշակային ապահովության* ծրագրի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատանքային կենսաթոշակների և մասնակցի կենսաթոշակային հաշվին կուտակային հատկացումների գծով ծախսերի կատարողականով:

Աշխատանքային կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերը կազմել են 220.2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.3%-ը: Շեղումը պայմանավորված է կենսաթոշակի իրավունք ձեռք բերած և փաստացի կենսաթոշակ ստացող շահառուների թվի տարբերությամբ, ինչպես նաև շահառուների՝ հանրապետությունից բացակայելու հանգամանքով: 2019 թվականին աշխատանքային կենսաթոշակառուների թիվը կազմել է 446195՝ նախատեսված 459050-ի փոխարեն:

Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին հատկացումները կազմել են 68 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.5%-ը: Հաշվետու տարում համակարգի մասնակիցների թիվը կազմել է 364231՝ կանխատեսված 307600-ի դիմաց:

Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների գծով ծախսերը 2019 թվականին կազմել են 27.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3% կատարողական: Միջոցառման շահառուների թիվը կազմել է 30905՝ նախատեսված 32886-ի փոխարեն:

ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների գծով ծախսերը կազմել են 2.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Միջոցները հատկացվել են «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտոններում պաշտոնավարած անձանց կենսաթոշակի տրամադրմանը: Միջոցառման շրջանակներում կենսաթոշակառուների թիվը կազմել է 663՝ նախատեսված 671-ի փոխարեն:

Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկման և շահագործման ծախսերը կազմել են 46.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 54.1%-ը, որը պայմանավորված է նախատեսված 3 տեղեկատվական համակարգերից 2-ի գծով նախատեսված ծառայությունների չկատարման արդյունքում պայմանագրերի միակողմանի լուծմամբ:

Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովման նպատակով տրամադրվել է 1.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 90.3%-ը, որը պայմանավորված է անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացողների՝ նախատեսվածից մեծ թվով:

Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրության նպատակով տրամադրվել է 490 հազ. դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 77.3%-ը: Հաշվետու տարում նախատեսված կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ 55000 հատ ձևաթղթերն ամբողջությամբ տպագրվել են, իսկ ծախսերի շեղումը պայմանավորված է տնտեսումներով:

Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներին տրամադրվել է 9.9 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 100%-ը:

Աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու համար աշխատանքների իրականացման ապահովման նպատակով հաշվետու տարում օգտագործվել է շուրջ 23.4 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 31.8%-ը, որը պայմանավորված է գործատուների կողմից աշխատանքային գրքույկները Սոցիալական ապահովության ծառայություն չներկայացնելու հանգամանքով, ինչի արդյունքում չի ապահովվել աշխատանքների նախատեսված ծավալը: Հաշվետու տարում պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան են ներմուծվել 117110 հատ աշխատանքային գրքույկների տվյալներ՝ նախատեսված 350000-ի փոխարեն:

1.1 մլն դրամ է հատկացվել սոցիալական ապահովության ծառայության տեխնիկական հագեցվածության ապահովմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել ծառայության գործունեության համար անհրաժեշտ վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի միջոցառումներին 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 5.6 մլրդ դրամ՝ ապահովելով 90.7% կատարողական:

Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայությունների միջոցառմանը տրամադրվել է 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է պահպանման էլեկտրաէներգիայի և կապի ծառայությունների գծով ծախսերի խնայողությամբ և մրցույթների արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսմամբ:

Սոցիալական պաշտպանության առանձին ծրագրերի իրականացման ապահովման ծախսերը կազմել են 2.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 96%-ը: Միջոցներն ուղղվել են պետական կենսաթոշակային ապահովության բնագավառում քաղաքականության իրականացմանը:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացման նպատակով օգտագործվել է 10.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված միջոցների 47.4%-ը: Սույն ծրագիրը հնարավորություն է ստեղծում օպերատիվ և մատչելի տեղեկատվություն տրամադրելու հանրությանը, ներկայացնելու աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող լայնածավալ բարեփոխումները, արագ արձագանքելու տեղի ունեցող գործընթացներին, ապահովելու հետադարձ կապ բնակչության

խոցելի խմբերի հետ, մեղմացնելու սոցիալական լարվածությունը: Շեղումը պայմանավորված է գնումների ընթացակարգով: Ծրագրով նախատեսված հեռուստահաղորդումները չեն պատրաստվել՝ պայմանավորված հայտարարված մրցույթները չկայանալու հանգամանքով: Սակայն ստեղծվել են տեսանյութեր, որոնք հեռարձակվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆեյսբուքյան էջում և այլ սոցցանցերի միջոցով:

Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները հաշվետու տարում կազմել են 314 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված միջոցների 100%-ը: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են սոցիալական պաշտպանության ոլորտի 14 տեղեկատվական համակարգերի վարում, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, Սոցիալական ապահովության պետական ծառայության և նրա տարածքային բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների շուրջ 6000 համակարգչային տեխնիկայի սպասարկման ու վերանորոգման ծառայությունների մատուցում և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող թվով 7 վեբկայքերի սպասարկում:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին հատկացված 12.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

Նախատեսված ծավալով ծախսվել են նաև ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 1.8 մլն դրամ:

Սոցիալական ապահովության ծառայության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով տրամադրվել է 112.5 մլն դրամ՝ ապահովելով 73.2% կատարողական, որը պայմանավորված է մրցույթների արդյունքում առկա տնտեսումներով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության բնակելի տների և բնակարանների ձեռքբերման ու դրանց կահավորման նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 53.7 մլն դրամ և 20.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշների 25.6%-ը և 34.9%-ը: Նշված միջոցառումների ցածր կատարողականը պայմանավորված է գնման հայտարարված մրցույթներն ուշ կայանալու հանգամանքով:

Մրցույթները չկայանալու պատճառով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և նախարարության ենթակայության կազմակերպություններում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ու ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության կազմակերպություններում տրանսպորտային սարքավորումների ձեռքբերման միջոցառումները չեն կատարվել, որոնց համար նախատեսվել էր համապատասխանաբար 22 մլն դրամ և 30 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության կազմակերպություններում գույքի ձեռքբերման նպատակով օգտագործվել է ծրագրված միջոցների 6.1%-ը՝ 7 մլն դրամ՝ պայմանավորված է հիմնականում հայտարարված մրցույթները չկայանալու կամ ուշ կայանալու հանգամանքով:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից *Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության* ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 86.5%-ը:

Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ծրագրված միջոցների 93.6%-ը՝ 1.9 մլրդ դրամ, որը պայմանավորված է շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունների կողմից փաստացի պակաս թվաքանակով երեխաներ խնամելու հանգամանքով՝ նախատեսված 649 երեխայի փոխարեն 603 երեխա, ինչը կապված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին այլընտրանքային խնամքի ծառայությունների տրամադրման և երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու գործընթացի հետ:

ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններին (բեռնաթափում) տրամադրվել է 23.3 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 99.7%-ը: Միջոցառման շրջանակներում «Առավոտ» ՀԿ-ի միջոցով ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել է 25 երեխայի վերադարձ կենսաբանական ընտանիքներ, և կանխարգելվել է 95 երեխաների մուտքը խնամքի շուրջօրյա հաստատություններ:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցության և խորհրդատվության միջոցառման շրջանակներում նախատեսվել էին 1.4 մլն դրամի ծախսեր՝ շրջանավարտների համար 4 բնակարանների վարձակալման նպատակով, որը չի իրականացվել՝ պայմանավորված հայտարարված մրցույթը չկայանալու հանգամանքով:

Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով օգտագործվել է 211.3 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 88.8%-ը: Շեղումը պայմանավորված է սոցիալական հոգածության 3 ցերեկային կենտրոնների կողմից նախատեսվածից պակաս թվով՝ 300 երեխայի փոխարեն 283 երեխաների սպասարկելու և գնումների գործընթացի արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսման հանգամանքներով:

Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններին տրամադրվել է 426.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 86.3%-ը, որը պայմանավորված է նախարարության համակարգի 4 գիշերօթիկ հաստատություններում (որոնցից 3-ը ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1507-ն որոշմամբ լուծարվել են) նախատեսվածից պակաս թվով՝ նախատեսված 350 երեխայի փոխարեն միջին հաշվով ամսական 177 երեխա սպասարկելու, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսման հանգամանքներով:

Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների գծով նախատեսված 74.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով «Հույսի կամուրջ» ՀԿ-ին Տավուշի մարզի 4 ցերեկային կենտրոններում 250 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով փոխհատուցվել են 84 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայությունների շրջանակներում օգտագործվել է 29.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 86%-ը, որը պայմանավորված է նախատեսված 17 երեխայի փոխարեն 13 երեխա խնամելու հանգամանքով, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում ֆինանսական միջոցների տնտեսմամբ:

Ներառական մանկապարտեզում հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների ֆինանսավորմանն ուղղվել է 30.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 80.2%-ը: Միջոցառման շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում իրականացվել է 16 երեխայի սպասարկում՝ նախատեսված 24 երեխայի փոխարեն, իսկ Գավառի N5 մանկապարտեզում՝ 19 երեխայի սպասարկում՝ 22 երեխայի փոխարեն: Սպասարկումն իրականացնելու նպատակով փոխհատուցվել է 26 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձը:

Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 223.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 73.6%-ը, որը պայմանավորված է ցերեկային կենտրոն հաճախող 450 երեխայի փոխարեն 294 երեխա սպասարկելու, որից արտակենտրոնում՝ 150 երեխայի փոխարեն 8 երեխա սպասարկելու հանգամանքով, ինչպես նաև երեխաների ուղեվարձի կանխիկ վճարման խնդիրներով:

Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների ծախսերը կազմել են 8.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 43.5%-ը, որը պայմանավորված է միջոցառումն իրականացնող «Հույս և օգնություն» ՀԿ-ի հետ պայմանագիրն ուշ կնքելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում սոցիալ-

հոգեբանական վերականգնողական ծառայություններ են մատուցվել թրաֆիքինգի զոհ դարձած 4 անձի՝ նախատեսված 8-ի փոխարեն: Պետական բյուջեի միջոցների հաշվին համաֆինանսավորման սկզբունքով փոխհատուցվել են ՀԿ-ի 10 հաստիքային միավորների աշխատավարձերը և տարածքի վարձակալության ծախսերը:

Ընտանեկան փոքր տներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի տրամադրման ծառայությունները կազմել են 4.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 62.9%-ը, որը պայմանավորված է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի հետ պայմանագիրն ուշ կնքելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 7 երեխաների շուրջօրյա խնամք՝ նախատեսված 10-ի փոխարեն: Պետական բյուջեի հաշվին փոխհատուցվել են կազմակերպության 4 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող սոցիալական հոգածության ծառայությունների միջոցառումը չի իրականացվել՝ դրամաշնորհների տրամադրման համար հայտարարված մրցույթը չկայանալու հանգամանքով պայմանավորված: Միջոցառման գծով պետական բյուջեով նախատեսվել էր 4.4 մլն դրամ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին համայնքային ծառայությունների մատուցման համար տրամադրվել է 3.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 75%-ը, որը պայմանավորված է «Երեխաների աջակցության հիմնադրամ» ՀԿ-ի հետ պայմանագիրը ուշ կնքելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է 130 երեխայի խնամք: Պետական բյուջեի հաշվին փոխհատուցվել են կազմակերպության 5.5 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը:

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար համայնքային ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 4.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 68.6%-ը, որը պայմանավորված է «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ պայմանագիրը ուշ կնքելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է 130 հաշմանդամ երեխայի խնամք՝ նախատեսված 150-ի, փոխհատուցվել են 8 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը:

Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպման և անցկացման համար նախատեսված 762.2 հազ. դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված գնման գործընթացը չիրականանալու հանգամանքով:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության ծախսերը կազմել են 3.1 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 53.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է դպրոցում

սովորող նախատեսված 195 երեխայի փոխարեն 101 երեխայի դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 33.1 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 94.1%-ը: Սույն ծրագիրը հանդիսանում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» միջոցառման բաղադրիչ մասը: Միջոցառմամբ նախատեսվել էր օժանդակության փաթեթ տրամադրել 120 շահառուի կենսաբանական ընտանիքներին, մասնավորապես՝ երեխաների ընտանիքներին փոխհատուցել էլեկտրաէներգիայի ծախսերը՝ ամսական 3951 ՀՀ դրամի չափով, տրամադրել սննդի զամբյուղ ամսական 9374 ՀՀ դրամի չափով և տարեկան հատկացնել 44000 ՀՀ դրամ՝ հագուստի, կոշիկի, դպրոցական պայուսակների, գրենական պիտույքների և դասագրքերի ձեռքբերման համար: Տնտեսումը պայմանավորված է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հայտարարված մրցույթների արդյունքում սննդամթերքի գները նախատեսվածից ցածր լինելու հանգամանքով:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 450 հազ. դրամ կամ նախատեսվածի 75%-ը: Միջոցառման շրջանակներում «Վանաձորի մանկատուն» և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ներում փաստացի հաշվառված 18 տարին լրացած 9 շրջանավարտների (նախատեսված 12-ի փոխարեն) տրամադրվել է դրամական օգնություն 50 հազարական դրամի չափով:

Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության ծախսերը կազմել են 67.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 44%-ը: Միջոցառման շրջանակներում նախատեսված է երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության բարենպաստ պայմանների ստեղծում՝ նրանց խնամատար ընտանիքներ տեղավորելու միջոցով: Տնտեսումը պայմանավորված է նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս թվաքանակով երեխաների խնամք իրականացնելու հանգամանքով: Հաշվետու տարում խնամատար ընտանիքներում խնամք ստացող երեխաների թիվը նախատեսված 94-ի փոխարեն կազմել է 47:

Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման ծախսերը կազմել են 1.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 71.4%-ը: Տնտեսումը պայմանավորված է թրաֆիքինգի և շահագործման ենթարկված 6 անձի կրած վնասների մասնակի դրամական փոխհատուցման հանգամանքով՝ նախատեսված 7 անձի փոխարեն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններում շենքային պայմանների բարելավման աշխատանքներին աջակցության համար հատկացված 43.3 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված հայտարարված մրցույթը չկայանալու հանգամանքով:

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագրի շրջանակներում 2019 թվականին օգտագործվել է 114.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 89.3%-ը:

92.5 մլն դրամ ուղղվել է մեթոդաբանական ձեռնարկների մշակմանը, հետազոտությունների անցկացմանը և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստմանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 88.7%-ը: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից պակաս թվով հետազոտությունների անցկացմամբ և տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է 8 հետազոտություն՝ նախատեսված 9-ի փոխարեն, մշակվել են ձեռնարկներ և կազմակերպվել սոցիալական ոլորտի 700 աշխատողների մասնագիտական ուսուցում:

Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է 22.1 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 92.1%-ը՝ պայմանավորված մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ վերապատրաստումների և սուպերվիզիայի ծառայությունների թերակատարմամբ: Միջոցառման շրջանակներում իրականացվել է համալիր սոցիալական ծառայությունների և զբաղվածության տարածքային կենտրոնների 124 աշխատողների վերապատրաստում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ և 255 մասնագետների սուպերվիզիայի ծառայությունների մատուցում՝ նախատեսված համապատասխանաբար 140 և 300 շահառուի փոխարեն:

Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է հատկացված միջոցների 90.8%-ը՝ 1.1 մլրդ դրամ:

Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններին տրամադրվել է 90.5 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 81.2%-ը: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջոցառման շրջանակներում իրականացվել է հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով 409 անձանց՝ 3 հիվանդատեսակների գծով վերականգնողական բուժում՝ նախատեսված 500-ի փոխարեն:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին տրամադրվել է 56.8 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 81%-ը: Միջոցառման շրջանակներում իրականացվել է 263 հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց ստացիոնար բուժում 3 հիվանդատեսակների գծով՝ նախատեսված 318-ի փոխարեն:

Տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններին հատկացված 9.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում հաշմանդամների համար տպագրվել են 69750 հատ ամենամսյա «Բյուլետեն» թերթեր, 42327 թերթ բրայլյան գրքեր, 320 հատ բրայլյան տետրեր և իրականացվել է 1600 ժամ խոսող գրքերի ձայնագրություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ծրագրի իրականացման ապահովման ծախսերը կազմել են շուրջ 3 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 86.8%-ը: Միջոցառման շրջանակներում տպագրվել են 305726 հատ ԲՍՓ ձևաթղթեր՝ նախատեսված 308830-ի փոխարեն: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ձևաթղթերի միավորի գները նախատեսվածից ցածր լինելու հանգամանքով:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններին հատկացված 28.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն միջոցառման շրջանակներում «Փրկություն» ՀԿ-ին 50 հաշմանդամ դեռահասների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով ՀՀ պետական բյուջեից փոխհատուցվել են 24 հաստիքային միավորների աշխատավարձերը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, կապի և տրանսպորտային նյութերի ծախսերը:

Ցերեկային կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցության ծախսերը կազմել են 11.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Սույն միջոցառումը նույնպես իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով: Հատկացված միջոցների հաշվին «Լիարժեք կյանք» ՀԿ-ին 60 հաշմանդամ դեռահասների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով փոխհատուցվել են 13 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը:

Նախատեսված ծավալով իրականացվել է նաև աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրումը ցերեկային կենտրոնում, որի գծով ծախսերը կազմել են 26.7 մլն դրամ (100%): Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն միջոցառման շրջանակներում «Աուտիզմ Ազգային Հիմնադրամ» ԲՀԿ-ին 18 տարին լրացած աուտիզմ ունեցող 80 դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման նպատակով փոխհատուցվել են 30 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը:

Լսողական սարքեր և հաշմանդամի սայլակներ ձեռքբերելու համար հավաստագրերի տրամադրման նպատակով 2019 թվականին օգտագործվել է 120 մլն դրամ կամ ծրագրված

միջոցների 92.6%-ը: 2019 թվականին տրամադրվել է 583 անվասայլակ՝ նախատեսված 850-ի փոխարեն, և 1223 լսողական սարք՝ նախատեսված 1248-ի փոխարեն, որը պայմանավորված է դիմած քաղաքացիների փաստացի թվով:

Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող տեխնոլոգիաներով ապահովման և դրանց վերանորոգման նպատակով տրամադրվել է 726.9 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 91.8%-ը: Հաշվետու տարում նախատեսված 10913-ի փոխարեն տրամադրվել է 9180 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, որը պայմանավորված է փաստացի դիմած հաշմանդամների՝ նախատեսվածից պակաս թվով:

Ավանդների փոխհատուցման ծրագրի շրջանակներում 2019 թվականին տրամադրվել է 1.17 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 96.7%-ը: Նշված գումարից 1.16 մլրդ դրամը կազմել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը, որոնք կատարվել են 96.7%-ով: Շեղումը պայմանավորված է փոխհատուցման ենթակա ավանդատուների փաստացի թվով, որը նախատեսված 7000-ի փոխարեն կազմել է 5878: Նշված պատճառով 96.7% կամ 11.6 մլն դրամ կատարողական է արձանագրվել ավանդների փոխհատուցման վճարման ծառայությունների ձեռքբերման ծախսերի գծով:

Սոցիալական ապահովության ծրագրին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 34 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 96.7%-ը: Գումարի հիմնական մասը բաժին է ընկնում ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների միջոցառման ծախսերին, որոնք կազմել են 21 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.5%-ը: Միջոցառման շրջանակներում նպաստառուների փաստացի թիվը կազմել է 65209՝ կանխատեսված 68692-ի փոխարեն: 2019 թվականին նպաստի նվազագույն չափ է սահմանվել 25500 դրամը:

Շուրջ 4.5 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 91.5%-ն են կազմել կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ծախսերը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռների համաձայն կերակրողը կորցրած անձանց կրած վնասի փոխհատուցումը կազմել է 7.2 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 100%-ը: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին փոխհատուցում է ստացել 3 ընտանիք:

Աջակցությունը հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին կազմել է 79.3 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 18.9%-ը: Միջոցառման շրջանակներում միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ են հատկացվել ՀՀ պաշտպանության, փրկարարական ծառայության և ՀՀ քննչական կոմիտեում ծառայության ժամանակ հաշմանդամ

դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին: Ցածր կատարողականը պայմանավորված է աջակցության փաստացի պահանջով:

Զոհվածների ընտանիքներին աջակցության ծախսերը կազմել են 270.9 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 49.3%-ը: Միջոցներն ուղղվել են վարժական հավաքների և զինծառայության և փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցմանը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի և Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի վճիռների համաձայն կերակրողը կորցրած անձանց վնասի փոխհատուցումը կազմել է 4.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Միջոցառման շրջանակներում փոխհատուցում է ստացել 3 ընտանիք:

ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցությունը կազմել է 4.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 18.9%-ը: Միջոցառման շրջանակներում իրականացվում է նշված անձանց տրամադրված սպառողական վարկերի տոկոսագումարների մասնակի փոխհատուցում: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է սպառողական վարկերից փաստացի օգտվող շահառուների թվով, որը կանխատեսված 4000-ի փոխարեն կազմել է 848:

ԱՊՀ տարածքում Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և մասնակիցներին օդային տրանսպորտով մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցումը կազմել է 15 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 68.2%-ը: Շեղումը պայմանավորված է փոխհատուցում ստացած ուղևորների փաստացի թվով, որը կանխատեսված 74-ի փոխարեն կազմել է 45:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման նպատակով 2019 թվականին Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին տրամադրվել է ավելի քան 8 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների ծրագրի շրջանակներում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 696.7 մլն դրամ կամ նախատեսվածի 37.8%-ը: Տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվում են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի գծով նախատեսված միջոցառումները: Մասնավորապես՝ նշված ծրագրի շրջանակներում սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին ուղղված խորհրդատվական և այլ ծառայությունների ձեռքբերման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 42.4%-ը կամ 231.8 մլն դրամ:

2019 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 9 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) Արթիկի, Աբովյանի, Եղեգնաձորի, Վայքի, Ջերմուկի, Աշտարակի, Վաղարշապատի, Արաբկիրի և Բերդի համար նախագծող կազմակերպություններին տրամադրվել են նախագծային առաջադրանքները.
- Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող փորձնական ընտրված ծրագրերի առաջնային շահառուների կարիքների և այդ ծրագրերի մասին նրանց կարծիքի ուսումնասիրության, մշտադիտարկման և գնահատման համակարգի համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքման, համակարգի ներդրմանն ուղղված առաջարկների մշակման աշխատանքներն ավարտվել են: Ընթանում են սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի իրականացման և արդյունավետության գնահատման անձնագրերի, տեղեկանքների, մոնիթորինգային ցուցիչների և ցուցանիշների լրամշակման ու գնահատման աշխատանքները.
- Կնքվել են թվով 3 պայմանագրեր՝ 1. Աշտարակի, Ապարանի և Աբովյանի, 2. Գորիսի, Կապանի, Մեղրիի և Սիսիանի, ինչպես նաև 3. Գավառի, Մարտունու և Սևանի ՀՍԾՏԿ-ների շինարարությունների տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ:

Միջոցառման շրջանակներում ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է պլանավորված հիմնանորոգումների հետաձգմամբ: Հետաձգվել են հիմնանորոգումների տեխնիկական հսկողության կազմակերպությունների ընտրության մրցույթները: Մեկ խորհրդատվական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը լուծվել է:

Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգման ծախսերը կազմել են 407.2 մլն դրամ կամ նախատեսվածի 51.8%-ը: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ավարտվել են թվով 5՝ Հրազդանի, Տաշիրի, Ախուրյանի, Շենգավիթի, Ծաղկահովիտի ՀՍԾՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքները.
- Սկսվել են թվով 6՝ Ստեփանավանի, Մեղրիի, Սևանի, Մարտունու, Գորիսի և Ապարանի ՀՍԾՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքները.
- Հայտարարվել են թվով 6՝ Գյումրիի, Կապանի, Գավառի, Դիլիջանի, Ալավերդու և Իջևանի ՀՍԾՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքների մրցույթները.
- Ընթանում են Սպիտակի ՀՍԾՏԿ-ի համար հատկացված տարածքի պետական գրանցման աշխատանքները.

- Քննարկվում են Նոր Նորքի ՀՍԾՏԿ-ի համար առաջարկված տարածքների կամ վերջինս Քանաքեռ Զեյթունի ՀՍԾՏԿ-ի համար հատկացված տարածքում տեղակայելու հարցերը.
- Ընթանում են Քանաքեռ-Զեյթունի ՀՍԾՏԿ-ի համար հատկացված տարածքի վերագրանցման աշխատանքները: Այդ կենտրոնի հետ կապված առկա է Երևանի քաղաքապետարանի հետ հողային սահմանների հստակեցման խնդիր.
- Սիսիանի ՀՍԾՏԿ-ի համար հատկացված շենքը սեյսմիկ ամրացման կարիք ունի: Նկատի ունենալով այդ ՀՍԾՏԿ-ի շինվերանորոգման համար ՍՊՎԾ II-ի շրջանակներում նախատեսվող ֆինանսական միջոցների սղությունը՝ Սիսիանի համայնքապետի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել նախատեսվող շենքի տանիքը և 3-րդ հարկը վերանորոգել համայնքային բյուջեի միջոցներով, իսկ ծրագրի շրջանակներում հատկացված գումարով իրականացնել սեյսմիկ ամրացման աշխատանքները:

Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է ՀՍԾՏԿ-ների ստեղծման համար սահմանված չափորոշիչների փոփոխություններով, որոնց արդյունքում փոփոխվել են արդեն պատրաստ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները: Հաշվետու ժամանակահատվածում ընթանում են թվով 6՝ Ստեփանավանի, Գորիսի, Սևանի, Մարտունու, Ապարանի, Մեղրիի, ավարտվել են թվով 5՝ Տաշիրի, Ծաղկահովիտի, Ախուրյանի, Հրազդանի, Շենջավիթի ՀՍԾՏԿ-ների հիմնանորոգման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացման նպատակով օգտագործվել է 57.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 11.3%-ը: Միջոցառման շրջանակներում 2019 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Էլեկտրոնային սոցիալական ծառայությունների մեկ միասնական տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման աշխատանքներն իրականացնող կազմակերպության ընտրության տեխնիկական հանձնարարականը մշակման փուլում է: Այս համակարգը կընձեռի անհրաժեշտ արտաքին տեղեկատվական շտեմարանների հետ տեղեկատվության փոխանակման հնարավորություն, ինչի արդյունքում սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները կարող են առցանց ձեռք բերել և ստուգել շահառուների մասին անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ նվազագույնի հասցնելով ծառայությունների ստացման համար շահառուների կողմից լրացուցիչ տեղեկությունների ներկայացումը.
- Գնահատվել են Զբաղվածության պետական ծառայության համար համակարգչային տեխնիկայի գնման մրցույթի մասնակիցների փաթեթները.

- Իրականացվել են ՀՍԾՏԿ-ների համար տեսահսկման և հերթագրման սարքերի գնման մրցույթի հայտարարման նախապատրաստական աշխատանքները.
- Հայտարարվել է ՀՀ զբաղվածության ոլորտի զարգացմանն աջակցող միջոցառումների իրականացման տեխնիկական առաջադրանքների մշակման և ծրագրային ապահովման փաթեթի ստեղծման ծառայությունն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթը, փաթեթները բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 17-ին:

Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է հիմնանորոգող կազմակերպությունների ընտրության մրցույթների հետաձգման արդյունքում ապրանքների ձեռքբերման մրցույթների հետաձգմամբ: Ծաղկահովիտի ՀՍԾՏԿ-ի կահույքի գնման մրցույթը չեղյալ է համարվել, ընթանում են տեխնիկական բնութագրերի փոփոխման աշխատանքներ, որից հետո կանցկացվի մրցույթ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 5 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են շուրջ 5.3 մլրդ դրամ կամ նախատեսածի 93.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների ծրագրի կատարողականով:

2019 թվականին *Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման* ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 328.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 83.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հայաստանի SS ոլորտի մրցունակության բարձրացմանն աջակցության ծախսերի կատարողականով, որոնք կազմել են 143.8 մլն դրամ՝ 73.8%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի, ինչպես նաև համակարգչային ծառայությունների և այլ ծախսերի տնտեսմամբ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ Քաթարի պետության Դոհա քաղաքում 2019 թվականի հոկտեմբերի 29-31-ը տեղի է ունեցել Մերձավոր Արևելքի խոշորագույն տեխնոլոգիական գիտաժողով-ցուցահանդեսը (QITCOM)՝ «Անվտանգ խելացի քաղաքներ» խորագրի ներքո: Միջոցառմանը Հայաստանն առաջին անգամ մասնակցություն է ունեցել «Հայաստան» միասնական տաղավարով, որտեղ ներկայացվել են 11 հայկական տեխնոլոգիական ընկերություններ: Գիտաժողով-ցուցահանդեսն ընդգրկել էր տեխնոլոգիական վերջին ձեռքբերումներն ու հաջողությունները՝ նպաստելով ինովացիաներ և խելացի լուծումներ առաջարկող ձեռնարկությունների և ստարտափերի միջև համագործակցությանը, ինչպես նաև խելացի քաղաքներին առնչվող լուծումների և կիբեռանվտանգության տեխնոլոգիաների տարածմանը: 2019 թվականի հոկտեմբերի 29-31-ը Հայաստանը միասնական տաղավարով մասնակցել է նաև Տաշքենդում կայացած «INNOWEEK.UZ – 2019» միջոցառմանը: «Նորարարական գաղափարների շաբաթ» ամենամյա համաժողովը, որը կազմակերպվել և անցկացվել էր

Ուզբեկստանի նորարարական զարգացման նախարարության կողմից, միավորել էր տարբեր երկրների հետազոտական և նորարարական կենտրոնների, ներդրումային ֆոնդերի, տեխնոլոգիական գործակալությունների, տեխնոլոգիական պարկերի և բիզնես ինկուբատորների ներկայացուցիչների: «INNOWEEK.UZ-2019»-ի կարևոր բաղկացուցիչն էր կազմել տեխնոլոգիական ցուցահանդեսը, որն անցկացվել էր 3 թեմատիկ ուղղություններով՝ նախաձեռնողական բիզնես, նորարարական լուծումներ և համագործակցային հարաբերություններ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հայկական կրթական ծրագրերը Ուզբեկստանի դպրոցներում և բուհական լաբորատորիաներում ներդնելու հետ կապված մի շարք հարցեր: Արդյունքում «YEA Engeneering»–ի հետ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ուսումնական լաբորատորիաները Ուզբեկստանի դպրոցներում և բուհերում ներդնելու վերաբերյալ: Փոխըմբռնման մեկ այլ հուշագիր ստորագրվել է «ERP Smart System»-ի հետ CRM համակարգի համագործակցության վերաբերյալ:

2019 թվականին Տեխնոլոգիական կենտրոնների գործունեությանն աջակցության նպատակով նախատեսված 149.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծախսերը կատարվել են 72.6%-ով՝ կազմելով 34.9 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ կատարվել է անդամավճարի երաշխիքային կանխավճարի հետ վերադարձ: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբերի 6-9-ը կազմակերպվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը (WCIT-2019):

Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրի ծախսերը կազմել են 802.1 մլն դրամ՝ 96.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսերի տնտեսմամբ, որոնք կազմել են 77.8 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 77.1%-ը: Միջոցներն օգտագործվել են վարչական գույք և սարքավորումներ ձեռքբերելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պետական քաղաքականության մշակման, խորհրդատվական, մոնիտորինգի և աջակցության ծառայությունների ու ծրագրերի համակարգման ծախսերը կազմել են 660.4 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը կազմել են համապատասխանաբար 24 մլն դրամ և 39.9 մլն դրամ՝ ապահովելով 96% և 100% կատարողական:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ ու վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կազմել 1.7 հազար դրամ՝ 98.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը:

Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.6 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 93.4%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով, ինչպես նաև որոշ պայմանագրերի լուծմամբ և վերակնքմամբ: Գումարն ուղղվել է «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացմանը:

Հեռահաղորդակցության ապահովման ծրագրի ծախսերը կազմել են 411.4 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են երկու միջոցառումներ: Ծրագրում մեծ տեսակարար կշիռ ունեն հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծախսերը, որոնք կազմել են 289.5 մլն դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Միջոցառման շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիտորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության անցկացման, էլեկտրամագնիսական համատեղելիության, կոորդինացման համար նախատեսված, հեռարձակման գոտիների, խանգարումներից զերծ մնալու ծրագրային հաշվարկներ իրականացնելու, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման, բոլոր ծառայությունների հաճախականությունների և կապուղիների միջազգային կոորդինացման և գրանցման հաշվարկների, միջազգային շտեմարանում ներկայացնելու համար անհրաժեշտ նյութերի մշակման և պլանավորման, ինչպես նաև ՀՀ և միջազգային ստանդարտներին, ոլորտը կարգավորող իրավական և տեխնիկական նորմատիվ ակտերին համապատասխանության համար նախատեսված գործառույթները:

Թվային հեռուստահեռարձակման ապահովման ծառայությունների համար նախատեսված 121.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Գումարը հատկացվել է արբանյակային ունակության վարձակալության նպատակով:

Հայրենադարձության ծրագրի շրջանակներում իրականացվել են երկու միջոցառումներ, որոնց շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 159.9 մլն դրամ կամ նախատեսվածի 92%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացման միջոցառման համար նախատեսված 13.8 մլն դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով: ՀՀ կառավարության կառուցվածքային

փոփոխություններով պայմանավորված՝ նշված միջոցառման իրականացման ապահովումը ՀՀ Սփյուռքի նախարարության պատասխանատվությունից փոխանցվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությանը: Քանի որ Միգրացիոն ծառայությունն արդեն իսկ ուներ իրականացվող փախստականների ինտեգրման ծրագիր, որի ներքո աջակցություն են ստացել փախստական ճանաչված սիրիահայերն ու իրաքահայերը, նպատակահարմար գտնվեց վերոնշյալ միջոցներն ուղղել Հայաստան հարկադիր վերադարձողների աջակցության տրամադրմանը: Աջակցությունը տրամադրվելու է շուրջ 38 վերադարձողի բնակարանային հարցի լուծման նպատակով բնակարան վարձելուն, 6 ամիս ժամկետով, ամսական 60 հազար դրամ կտրվածքով: Աջակցության տրամադրման կարգը լրամշակման փուլում է:

Շուրջ 136.5 մլն դրամ ուղղվել է «Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների ստարտափ ծրագրին, որը կատարվել է 100%-ով: Ծրագիրն իրականացվել է 2019 թվականի դեկտեմբերի 16-20-ը Դիլիջանի «UWC» միջազգային դպրոցում: Չորսօրյա տևողությամբ ծրագրին մասնակցել են աշխարհի 17 երկրներից ընտրված 47 տեխնոլոգիական ստարտափ ընկերություններ՝ ընդհանուր թվով 100 մասնակիցներով: Հաղթող ստարտափ ընկերություններին տրամադրվել են 15-30 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամաշնորհներ:

Պետական բյուջեից 23.4 մլն դրամ (ծրագրված ցուցանիշի 99.8%-ը) տրամադրվել է ««Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում, VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառման կազմակերպմանը և իրականացմանը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհների ծրագիրը, որի նպատակն է ոգեշնչել ձեռներեցության զարգացումը տեխնոլոգիական ոլորտում և նպաստել այդ ոլորտի նորարարական գաղափարների առևտրայնացմանը: Մրցույթին ներկայացվող ծրագրերը պետք է ուղղված լինեն նոր, առևտրային տեսանկյունից կենսունակ տեխնոլոգիական արտադրանքի, գործընթացների կամ ծառայությունների ստեղծմանը և/կամ հետագա զարգացմանը: Դրամաշնորհային ծրագրով ֆինանսական օժանդակություն է տրամադրվել բարձր տեխնոլոգիական ոլորտի թիմերին և նորաստեղծ ընկերություններին:

<u>ՀՀ ֆինանսների նախարարության</u> պատասխանատվության ներքո նախատեսված 4 ծրագրերի շրջանակներում 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 161.1 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 98.3% կատարողական: Հատկացված միջոցների գերակշիռ մասը բաժին է ընկել *Պետական պարտքի կառավարման* ծրագրին, որի ծախսերը կազմել են ավելի քան 158.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին վարկերի մասով ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի

կատարողականով, որոնք կազմել են 49.6 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.9%-ը: Տնտեսումները հիմնականում պայմանավորված են եղել 2018-2019 թվականների ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների ծրագրային ցուցանիշների էական թերակատարմամբ, ինչպես նաև 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR կանխատեսումային և 2019 թվականին վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերությամբ:

Պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման նպատակով տրամադրվել է 7.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 83.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում չի վճարվել ծառայության դիմաց նախատեսված ԱԱՀ-ի գումարը:

Արտարժութային պետական պարտատոմսերի իռլանդական ֆոնդային բորսայում ցուցակման ծառայությունների համար նախատեսված 1.7 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ ծառայության վճարը կատարվել է 2019 թվականի սեպտեմբերին նոր արտարժութային պետական պարտատոմսերի գլխավոր տեղաբաշխողների կողմից: Ցուցակվող արտարժութային պարտատոմսերի թողարկումների քանակը նախատեսված 2-ի դիմաց կազմել է 3՝ պայմանավորված 2019 թվականի սեպտեմբերին նոր արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխմամբ:

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով տրամադրվել է 29.4 մլն դրամ՝ ապահովելով 94.7% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման նպատակով տրամադրվել է 28.5 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական, որը պայմանավորված է փոխարժեքի փոփոխությամբ:

Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսերը կազմել են 530.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.7%-ը: Միջոցներն ուղղվել են նոր արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխումների կազմակերպման, իրավական սպասարկման, վարկանշման ծառայությունների դիմաց վճարումներին:

Պետական գանձապետական պարտատոմսերի մասով ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 69.7 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է կանխատեսվածի համեմատ փաստացի եկամտաբերության տարբերության և կանխատեսածի համեմատ ավելի փոքր ծավալով հետգնումների իրականացմամբ:

Մուրհակների սպասարկման նպատակով տրամադրվել է 63.2 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Տարբերությունը պայմանավորված է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի անվամբ թողարկված մուրհակի մարումից հետո մուրհակատիրոջ կողմից 89.7 հազար դրամ տոկոսագումարի վերադարձով:

Արտարժութային պետական պարտատոմսերի մասով ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 38.1 մլրդ դրամ: Արտարժութային պետական պարտատոմսերի գծով 2019 թվականի համար նախատեսված վճարումները կատարվել են թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում և ամբողջ ծավալով: Հատկացված գումարից 20.7 մլրդ դրամն ուղղվել է 2020 թվականին մարման ենթակա պարտատոմսերի սպասարկմանը, 17.4 մլրդ դրամը՝ 2025 թվականին մարման ենթակա պարտատոմսերի սպասարկմանը:

2019 թվականին 14.4 մլն դրամ է տրամադրվել *Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստմանը* ապահովելով 60.6% կատարողական, որը պայմանավորված է գնման գործընթացի կազմակերպման արդյունքում առաջացած տնտեսումներով և փաստացի անցկացված դասընթացների ու վերապատրաստված մասնագետների թվով:

Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրին տրամադրվել է 2.8 մլրդ դրամ՝ ապահովելով 95.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրման և պլանավորման, բյուջետավորման, գանձապետական ծառայությունների, պետական պարտքի կառավարման, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակման ու մոնիտորինգի ծախսերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 36.9 մլն դրամ և 2.5 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 36.9%-ը և 97.9%-ը: ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրման ծախսերի կատարողականի ցուցանիշը պայմանավորված է «Ֆիթչ Ռեյթինգս» վարկանիշային գործակալության կողմից վճարման պահանջ չներկայացնելու հանգամանքով, քանի որ վերջինիս կողմից վարկային դեֆոլտի (երկարաժամկետ և կարճաժամկետ, դրամային և արտարժույթային) վարկանիշների նախատեսված վերանայումները չեն իրականացվել: Պլանավորման, բյուջետավորման, գանձապետական ծառայությունների, պետական պարտքի կառավարման, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակման և մոնիտորինգի ծախսերի կատարողականը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայությունների ծախսերը կազմել են 214.9 մլն դրամ՝ ապահովելով 90.4% կատարողական, որը պայմանավորված է բանկերի կողմից փաստացի մատուցված ծառայություններով:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների և արտասահմանյան պատվիրակություն-ների ընդունելությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են համապատասխանաբար 35 մլն դրամ և 879 հազ. դրամ, ամբողջությամբ օգտագործվել են:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 26.4 մլն դրամ:

Հաշվետու տարում ՀՀ ֆինանսների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 48.3%-ով՝ կազմելով 2.1 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման ծախսերը 2019 թվականին կազմել են 113.9 մլն դրամ՝ ապահովելով 91.7% կատարողական, որը պայմանավորված է Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկման ծախսերի կատարողականով, որոնք կազմել են շուրջ 100 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 90.7%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկման և գնումների գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 8 մլն դրամ և 5.9 մլն դրամ, որոնք իրականացվել են նախատեսված ծավալով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատասխանատվությամբ 2019 թվականին կատարվել է պետական բյուջեի 7 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 14.6 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության ծախսերի գերակշիռ մասը կազմող «Փրկարարական ծառայություններ» ծրագրի կատարողականով:

Հաշվետու տարում պետական բյուջեից շուրջ 1.3 մլրդ դրամ է տրամադրվել *Հիդրոօդերևութաբանական ծառայություններին*, որոնց ծրագիրը կատարվել է 99.2%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Գումարն ուղղվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացմանը:

Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծրագրին 2019 թվականին հատկացվել է 212.2 մլն դրամ, որն օգտագործվել է ամբողջությամբ: Տրամադրված միջոցներն ուղղվել են տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայությունների ֆինանսավորմանը: Միջոցառումն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացման ծրագրին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 113.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմի և մասնագետների վերապատրաստմանը, բնակչությանն անվտանգության կանոնների ուսուցմանը: Միջոցառման շրջանակներում ուսուցման և վերապատրաստման ծրագրերին մասնակցել են 2000 մասնակիցներ:

Սեյսմիկ պաշտպանության ծրագրի ծախսերը կազմել են 880.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն օգտագործվել են «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից սեյսմիկ վտանգի մոնիտորինգի ապահովման, դրա հետ կապված այլ երկրորդային վտանգների գնահատման, ՀՀ տարածքում և տարածաշրջանում տեղի ունեցող երկրաշարժերի գրանցման, մշակման և դրանց մասին հաղորդագրությունների տրամադրման նպատակով:

Հաշվետու տարում պետական բյուջեից շուրջ 10.7 մլրդ դրամ տրամադրվել է *«Փրկարարական ծառայություններ»* ծրագրին՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 96.1%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 14 միջոցառումներ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱԻՆ փրկարար ծառայության շենքի ապահովվածության և պայմանների բարելավման համար կատարված ծախսերով, որոնք կազմել են 925.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 78.9%-ը: Վերջինս պայմանավորված է նախատեսվածից ցածր սակագներով պայմանագրերի կնքման արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում կապիտալ վերանորոգվել են թվով 32 օբյեկտներ և 2 հրշեջ փրկարարական ջոկատի շենքեր:

«Փրկարարական ծառայություններ» միջոցառման ծախսերը կատարվել են 98.8%-ով՝ կազմելով 9.5 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է որոշ հոդվածների գծով ծախսերի խնայողություններով:

Նշենք, որ 5 միջոցառումների շրջանակներում արձանագրվել է ծրագրի 100% կատարողական: Մասնավորապես՝ 18.7 մլն դրամ են կազմել ԱԻՆ փրկարար ծառայության աշխատակիցներին բուժօգնության ծառայությունների տրամադրման ծախսերը: 7.7 մլն դրամ են կազմել արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպման ծախսերը, որի շրջանակներում միջոցներն ուղղվել են ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնի պահպանմանը:

8 մլն դրամ են կազմել արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը, 32.5 մլն դրամ՝ սողանքային և քարաթափման երևույթների ուսումնասիրման ծախսերը: Վերջինիս շրջանակներում կատարվել են Տավուշի մարզի Լճկաձոր համայնքի տարածքում, Վանաձոր-Բագրատաշեն Մ-6 միջպետական ավտոճանապարհի 86-րդ կմ և Լոռու մարզի Մարց-Աթան ավտոճանապարհի 25-րդ կմ հատվածներում ակտիվացած սողանքային և քարաթափման երևույթների ուսումնասիրման (ինժեներա-երկրաբանական, երկրաֆիզիկական և հիդրոերկրաբանական հետազոտություններ) և կանխարգելիչ աշխատանքներ: 4 մլն դրամ են կազմել փրկարար ծառայության շենքային պայմանների բարելավման ծախսերը: Միջոցներն օգտագործվել են թվով 5 շարժական տնակներ ձեռքբերելու նպատակով:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպման ծախսերը կազմել են 8.3 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 62.1%-ը: Միջոցառման շրջանակներում փոխհատուցվել են ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված ունկնդիրների ճանապարհածախսի և կրթաթոշակի ծախսեր: Շեղումը պայմանավորված է թվով 2 ուսանողների՝ ուսումն ավարտելու հանգամանքով, ինչի արդյունքում ուսանողների և նրանց ընտանիքի անդամների ճանապարհածախսերի ու կրթական նպաստի համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել, բացի այդ կատարվել են տնտեսումներ մնացած 4 ունկնդիրների ճանապարհածախսի գծով: Միջոցառման շահառուների թիվը կազմել է 4՝ նախատեսված 6-ի փոխարեն:

Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովման ծախսերը կազմել են 921.9 հազար դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ԱԻՆ փրկարար ծառայության շենքային պայմանների բարելավման ծախսերը կազմել են 5.8 մլն դրամ՝ ապահովելով 92.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից ցածր սակագներով պայմանագրեր կնքելու արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում գազաֆիկացվել են Տավուշի մարզում տեղակայված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության քաղաքացիական պաշտպանության թվով 10 հենակետեր:

Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի շենքային ապահովվածության բարելավման համար ծախսվել է 124.8 մլն դրամ՝ ապահովելով 68.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից ցածր սակագներով պայմանագրեր կնքելու արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում կատարվել են «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» միջկառավարական ոչ առևտրային կազմակերպության (ՄՈԱԿ) տարածքում 10 դարպասով տեխնիկայի շվաքարանի և ցանկապատի կառուցման,

տարածքի բարեկարգման, 0.4 կՎտ մալուխային ցանցի և էլեկտրական լուսավորության աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱԻՆ փրկարար ծառայության շենքային պայմանների բարելավման նպատակով ՀՀ պետական բյուջեից ծախսվել է 6.3 մլն դրամ: Միջոցառումը կատարվել է 64%-ով, ինչը պայմանավորված է նախատեսվածից ցածր սակագներով պայմանագրեր կնքելու արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում կապիտալ վերանորոգման են ենթարկվել թվով 32 օբյեկտներ:

ԱԻՆ փրկարար ծառայության շենքային ապահովվածության բարելավման նպատակով ՀՀ պետական բյուջեից ծախսվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով 72.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից ցածր սակագներով պայմանագրեր կնքելու արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում իրականացվել է Փրկարար ծառայության Մարտունու և Գավառի հրշեջ փրկարարական ջոկատների շենքերի և շինությունների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

Փրկարար ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը կազմել են շուրջ 16.1 մլն դրամ՝ ապահովելով 72.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից ցածր սակագներով պայմանագրեր կնքելու արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են համակարգչային սարքավորումների, տեսախցիկների և գրասենյակային գույքի ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակահատվածում *Ռազմավարական նշանակության պաշարների կառավարման* ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 335 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական:

Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակման, խորհրդատվական ծառայությունների տրամադրման և մոնիտորինգի իրականացման ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.4%-ը:

Ամբողջությամբ օգտագործվել են արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը, որոնք կազմել են կազմել են 11.1 մլն դրամ:

Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով ծախսվել է շուրջ 7.6 մլն դրամ՝ ապահովելով 90.3% կատարողական: Միջոցներն օգտագործվել են համակարգչային և գրասենյակային սարքավորումների ձեռքբերման նպատակով: Շեղումը պայմանավորված է ցածր գնային առաջարկների արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ վիճակագրական կոմիտեի պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 2 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 76.9%-ը:

Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրության և տարածման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2 մլրդ դրամ, որը կազմում է բյուջեով հատկացված միջոցների 95.9%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է վիճակագրության քաղաքականության մշակման և իրականացման, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակման, արտադրման և տարածման, ինչպես նաև հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացման ծախսերում և պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Մասնավորապես՝ 1.3 մլրդ դրամ (ծրագրված ցուցանիշի 96.1%-ը) օգտագործվել է վիճակագրության քաղաքականության մշակման և իրականացման, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակման, արտադրման և տարածման նպատակով: Շեղումը պայմանավորված է խնայողություններով, ինչպես նաև որոշ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտության բացակայությամբ:

616.7 մլն դրամ (ծրագրի 99%-ը) ուղղվել է վիճակագրական տեղեկատվության հավաքմանը, որի շրջանակներում իրականացվել են «Հացահատիկի մշակաբույսերի՝ ցորենի և գարու բերքահավաքի ընթացքում առաջացած կորուստներ», «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն», «Տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի հետազոտություն» վիճակագրական հետազոտությունները, սպառողական շուկայի ապրանքների և ծառայությունների գների դիտարկման, գյուղատնտեսական և սոցիալ-տնտեսական բնույթի այլ սկզբնական տեղեկատվության հավաքագրումը:

98.2 մլն դրամ (ծրագրի 79.2%-ը) ուղղվել է հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացմանը: Միջոցներն ուղղվել են 2019 թվականի փորձնական մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքներին: Փորձնական մարդահամարն անցկացվել է պլանշետների միջոցով, ինչի արդյունքում տնտեսվել են բյուջեի միջոցները:

2.9 մլն դրամ տրամադրվել է արտասահմանյան պաշտոնական գործուղումների ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.5%-ը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը կազմել են 23.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 91.7%-ը: Միջոցներն ուղղվել են հերթական մարդահամարը նախապատրաստող և անցկացնող ստորաբաժանման համար համակարգչային սարքավորումների և գրասենյակային գույքի ձեռքբերմանը: Շեղումը պայմանավորված է խնայողություններով:

Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի իրականացման համար օգտագործվել է հատկացված միջոցների 27.4%-ը՝ 221.9 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ: Մասնավորապես՝ դրամաշնորհային ծրագրի ծառայությունների մատուցման միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 38.1%-ը՝ 221.9 մլն դրամ: Իրականացվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կենտրոնական գրասենյակի և 4 մարզային գրասենյակների վարչական շենքերի վերանորոգման աշխատանքների նախագծման և կորպորատիվ ու տեղական SS ցանցերի արդիականացման նախագծման աշխատանքներ, ինչպես նաև Թվիննինգ գործընկերության ներքո 29 գործողություններ: Շեղումը պայմանավորված է Թվիննինգ գործընկերության շրջանակում ներառված որոշ գործողությունների իրականացումը 2020 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում նախատեսված՝ վիճակագրական կոմիտեի շենքային պայմանների բարելավման համար հատկացված 163.7 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի հետ համաձայնեցման գործընթացի ձգձգման արդյունքում վերանորոգման աշխատանքների իրականացումը 2020 թվական տեղափոխելու հանգամանքով: Չի օգտագործվել նաև վիճակագրական համակարգի զարգացման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վիճակագրական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման համար նախատեսված 62.6 մլն դրամը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ առցանց հաշվետվությունների ծրագրային ապահովման և սարքավորումների տեխնիկական հանձնարարականի մշակման պայմանագիրը ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 30-ին, ուստի համակարգչային սարքավորումների ձեռքբերումը տեղափոխվել է 2020 թվական:

<u>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին</u> Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ծրագրի շրջանակներում 2019 թվականին տրամադրվել է 785.5 մլն դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 97.6%-ը:

Նշված գումարից 771.7 մլն դրամն օգտագործվել է «Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում» միջոցառման շրջանակներում՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 97.6%-ը: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև որոշակի ծախսեր կատարելու անհրաժեշտության բացակայությամբ:

Շուրջ 13.8 մլն դրամ է տրամադրվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավմանը, որը կատարվել է 93.6%-ով, որը նույնպես պայմանավորված է տնտեսումներով: Նշված միջոցառման շրջանակում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա, գրասենյակային և տնտեսական գույք:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կազմել են 94 հազ. դրամ (100%):

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 672.5 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 52.4%-ը: Հատկացումների հաշվին ֆինանսավորվել են երկու ծրագրեր՝ «Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում» և «Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրում, ընտրական վարչարարության բարձրացում, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինում և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրատարակում»:

Ընտրական գործընթացների համակարգման, կանոնակարգման և տեղեկատվության տրամադրման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 660.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 57.2%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման ծախսերով, որոնք կազմել են 292.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 39.8%-ը: Միջոցները հատկացվել են 2019 թվականի փետրվարի 17-ին, հունիսի 9-ին, սեպտեմբերի 29-ին և դեկտեմբերի 12-ին կայացած ՏԻՄ ընտրությունների կազմակերպման համար: Ծախսերի ցածր ցուցանիշը պայմանավորված է տնտեսումներով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովման և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայությունների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է 342.2 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 94.8% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման համար օգտագործվել է 24.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 43%-ը: Ծախսերի ֆինանսավորումը կատարվել է դասընթացների համար դիմած քաղաքացիների խմբերի փաստացի թվի հիման վրա, որը նախատեսված 557-ի փոխարեն կազմել է 287: Դասընթացների մասնակիցների թիվը 2019 թվականին կազմել է 11205՝ նախատեսված 22258-ի դիմաց:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը կազմել են 1.4 մլն դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրատարակման ծախսերը հաշվետու տարում կազմել են 11.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 9.2%-ը: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում

պայմանավորված է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավման համար նախատեսված 82.4 մլն դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով, քանի որ վարչական սարքավորումները ձեռք են բերվել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից ու տրամադրվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Նույն հանգամանքով է պայմանավորված նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարիքների համար համակարգչային ծրագրային ապահովման ծախսերի կատարողականը, որոնք նախատեսված 20.6 մլն դրամի փոխարեն կազմել են 600 հազ. դրամ կամ 2.9%:

Ընտրական գործընթացների համակարգման, նախապատրաստման, իրականացման, հաշվետվական համակարգի կազմակերպման, վերլուծության, վերահսկողության, ընտրական պաշտոնյաների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 11.1 մլն դրամ՝ կազմելով տարեկան ծրագրի 44.6%-ը, որը տնտեսումների արդյունք է: Միջոցառումը նախատեսված է արտասահմանյան երկրներում սեմինարներին, հանդիպումներին, միջազգային խորհրդակցություններին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների և աշխատակազմի աշխատակիցների մասնակցության ապահովման և դիտորդական առաքելության իրականացման նպատակով: Միջոցներն ուղղվել են արտասահմանյան գործուղումների ֆինանսավորմանը:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին 2019 թվականին տրամադրվել է շուրջ 394.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 96.8%-ը: Հատկացված միջոցներից շուրջ 381 մլն դրամն ուղղվել է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակման և վերահսկողության ծախսերին, որոնք կատարվել են 96.8%-ով՝ հիմնականում պայմանավորված տնտեսումներով: Բացի այդ, չեն կատարվել շենքի ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների համար նախատեսված ծախսերը՝ կապված հանձնաժողովի՝ այլ տարածք տեղափոխվելու հետ:

12.2 մլն դրամ (ծրագրային ցուցանիշի 96.4%-ը) տրամադրվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավմանը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն օգտագործվել են գրասենյակային գույք և համակարգչային տեխնիկա ձեռք բերելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների համար նախատեսված 600 հազար դրամն օգտագործվել է ամբողջությամբ:

Արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը կազմել են 605.8 հազար դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

ՀՀ կադաստրի կոմիտեի պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել է «Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում» ծրագիրը, որի գծով ծախսերը կազմել են 3.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում» միջոցառման կատարողականով, որը կազմել է 93.8% կամ 3.3 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում նախատեսված 36-ի դիմաց իրականացվել են թվով 1668 հանրային իրազեկման միջոցառումներ՝ պայմանավորված սոցիալական ցանցերում ինտերնետային հարթակների բացման և ՀՀ կադաստրի կոմիտեի պաշտոնական կայք-էջում նորությունների տեղադրման հանգամանքով:

ՀՀ թվային տեղագրական քարտեզների՝ երկրատեղեկատվական համակարգի միջավայրում ստեղծման աշխատանքներին ուղղվել է ավելի քան 214.5 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: 2019 թվականի ընթացքում նշված միջոցառման շրջանակներում իրականացվել են օդալուսանկարների հիման վրա 3138.9 հա կառուցապատ տարածքների 1:2000 մասշտաբի հատակագծերի վերծանման և ստեղծման աշխատանքներ, ինչպես նաև կազմվել է 1-ական տեխնիկական նախագիծ և տեխնիկական հաշվետվություն (ք. Վաղարշապատի վերաբերյալ):

Շուրջ 129.8 մլն դրամ օգտագործվել է Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով՝ ապահովելով 81.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է մրցույթի արդյունքում ձեռքբերված ապրանքների՝ նախատեսվածից ցածր արժեքով: Միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել 1469 հատ համակարգչային սարքավորումներ, 234 հատ այլ սարքավորումներ, 628 հատ գրասենյակային կահույքի միավոր:

Հաշվետու ժամանակահատվածում թեմատիկ քարտեզագրության աշխատանքների համար նախատեսված 32.2 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Նշված միջոցառման շրջանակներում իրականացվել են Հայաստանի Ազգային ատլասի ռուսերեն լեզվով տարբերակի 163 էջի նախապատրաստման (նյութերի թարմացում, թարգմանություն, խմբագրում, քարտեզների ձևավորում և սրբագրում) աշխատանքներ:

Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավման նպատակով օգտագործվել է 16 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Հատկացված միջոցներով ձեռք է բերվել 2 հատ տրանսպորտային սարքավորում:

Նախագծահետազոտական փաստաթղթերի կազմման աշխատանքների ֆինանսավորման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 36%-ը՝ 14.4 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ նպատակահարմար չի գտնվել Վանաձոր Բանակի 8 հասցեում նախատեսված արխիվային տարածքի կառուցումը, ուստի աշխատանքները չեն իրականացվել, և դրանք վերանայվել են այլ տարածք տեղափոխելու նպատակով: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել 1 նախագծահաշվային փաստաթուղթ՝ նախատեսված 2-ի փոխարեն:

Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման աշխատանքների համար նախատեսված ծախսերն ապահովել են 99.9% կատարողական՝ կազմելով շուրջ 14 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են քարտադարանի վարման և թարմացման, ինչպես նաև Հս. Ամերիկայի և Հրվ. Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների 300-ական տեղեկատուների նախապատրաստման աշխատանքներ:

2019 թվականին անշարժ գույքի կադաստրի ծառայությունների մատուցման համար ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 6.3 մլն դրամ՝ ապահովելով 62.9% կատարողական: Միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել 2 ծրագրային փաթեթներ: Ծախսերի կատարողականը պայմանավորված է մրցույթի արդյունքում դրանք նախատեսվածից ցածր արժեքով ձեռքբերման հանգամանքով:

Ամբողջությամբ օգտագործվել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 180 հազար դրամ:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի պատասխանատվությամբ իրականացվել է Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կանոնակարգման ծրագիրը, որի կատարողականը կազմել է 97.9% կամ 309.4 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ՝ հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) 11-րդ տարեկան հանդիպումը չկայանալու արդյունքում, ինչպես նաև էներգետիկ և կապի ծառայությունների խնայողությամբ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 3 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են ավելի քան 28.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.4%-ը:

Հարկային և մաքսային ծառայությունների ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 21 մլրդ դրամ՝ ապահովելով 96% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավման միջոցառման

կատարողականով, որի համար օգտագործվել է շուրջ 3.8 մլրդ դրամ: 85.4% կատարողականը պայմանավորված է գնման գործընթացով, որի արդյունքում պայմանագրերը կնքվել են նախատեսված ժամկետից ուշ (2019 թվականի սեպտեմբերի 20-ին): Բացի այդ, շինարարական աշխատանքներն ամբողջ ծավալով չեն կատարվել՝ պայմանավորված շինարարական նորմերի պահանջներով և եղանակային պայմանների վատթարացման հետևանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքներ (ք.Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 2/41 հասցեում):

Նշված ծրագրում ընդգրկված՝ «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման ծախսերը կազմել են 10 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով, ինչպես նաև որոշ վարձակալված տարածքների հետ վերադարձով:

Հաշվետու ժամանակահատվածում դրոշմապիտակների և ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման միջոցառումների համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով համապատասխանաբար 4.5 մլրդ դրամ և 1.9 մլրդ դրամ: Միջոցառումների շրջանակներում ձեռք են բերվել 1180630 հազար հատ դրոշմապիտակներ, 18070 հազար հատ ալկոհոլային խմիչքների ակցիզային դրոշմանիշեր և 480000 հազար հատ ծխախոտի արտադրանքի դրոշմանիշեր:

2019 թվականի ընթացքում հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծախսերը կազմել են 164.6 մլն դրամ կամ նախատեսվածի 87.2%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում նախատեսված 2240-ի փոխարեն վերապատրաստվել են 1945 հարկային և մաքսային ծառայողներ:

Հաշվետու տարում փորձաքննության ծառայությունների ձեռք բերման նպատակով ծախվել է 10.8 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Միջոցառման շրջանակներում կատարվել են 412 փորձաքննություններ, որից 60-ը՝ շինարարատեխնիկական, 228-ը՝ տնտեսագիտական, 124-ը՝ ապրանքագիտական:

Ամբողջությամբ օգտագործվել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների ու արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 165.1 մլն դրամ և 1.5 մլն դրամ:

2019 թվականին ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծախսերը կազմել են ավելի քան 346.8 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Շեղումը

պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Միջոցներն օգտագործվել են «Rapiscan» ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման համար:

ՀՀ ՊԵԿ-ի տեխնիկական հագեցվածության բավարարման ծախսերը կազմել են 170.8 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 79.5%-ը: Միջոցներն ուղղվել են վարչական սարքավորումների (այդ թվում՝ համակարգչային տեխնիկա և կահույք) ձեռքբերմանը: Կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ ապրանքների ձեռքբերումն իրականացվել է նախատեսվածից ցածր գներով:

ՀՀ ՊԵԿ-ի շենքային պայմաններով ապահովման և ՀՀ ՊԵԿ շենքային տարածքի ընդլայնման համար նախատեսված համապատասխանաբար 2.2 մլն դրամի և 9.7 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ուշ ընդունվելու հանգամանքով: Նշված միջոցառումներով նախատեսվել էր միջոցներն օգտագործել շինության և հողատարածքի ձեռքբերման համար:

Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ, 2019 թվականին օգտագործվել է 4.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 10%-ը: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրով նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՊԵԿ-ի հիմնական ՏՀՏ ենթակառուցվածքում հույժ կարևոր ներդրումները, որպեսզի կոմիտեին հնարավորություն ընձեռվի արդիականացնել իր բիզնես գործընթացները, ընդլայնվի էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև ներդնել առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարություն՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- Գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2019 թվականին ծախսված միջոցներն ուղղվել են ծրագրի 2018 թվականի տարեկան աուդիտի դիմաց վճարմանը և փորձագետների վարձատրությանը: Կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ 2019 թվականին ծրագրի շրջանակներում նախատեսված խորհրդատվական ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգերի մշակման ու ներդրման ուղղությամբ նախատեսված աշխատանքներն իրականացվել են 2018 թվականի տարեվերջին, և ծրագիրն ավարտվել է 2019 թվականի հունվարի 31-ին:

Հաշվետու տարում *ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերին աջակցությանն* ուղղվել է շուրջ 7.8 մլրդ դրամ՝ ապահովելով 94% կատարողական: Ծախսերը ֆինանսավորվել են ՊԵԿ արտաբյուջետային միջոցներից:

Ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային ծառայությունների ծախսերը կազմել են 7.3 մլրդ դրամ՝ ապահովելով 95.3% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշ վարձակալված տարածքների հետ վերադարձմամբ, հսկիչ գնումների կրճատման հետևանքով կանխիկ դրամի տնտեսմամբ, ընդհանուր բնույթի որոշ ծառայությունների ավելի մատչելի գներով ձեռքբերումների արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ ՊԵԿ կարիքի բավարարման միջոցառման համար նախատեսված 449.3 մլն դրամից օգտագործվել է 372.4 մլն դրամ կամ 82.9%-ը: Միջոցներն օգտագործվել են վարչական սարքավորումների (կահույք և համակարգչային տեխնիկա) ձեռքբերման համար: Շեղումը պայմանավորված է նրանով, որ որոշ համակարգչային սարքավորումներ ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով:

Ազատ տնտեսական գոտիների ընդլայնման համար նախատեսված 12 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տարածքի սեփականատիրոջ («Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ) հետ վերջնական պայմանավորվածությունը ձեռք է բերվել տարեվերջին, ուստի գնման գործընթաց չի իրականացվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավման ծախսերը կազմել են 138.5 մլն դրամ՝ ապահովելով 74.3% կատարողական: Միջոցառման շրջանակներում իրականացվել են ՀՀ ՊԵԿ-ի Արարատյան 90 հասցեում գտնվող վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, որոնք ավարտվել են: Ծախսերի ծրագրից շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կապալառուին չի վճարվել պայմանագրի արժեքի 5%-ը. այն կվճարվի ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպումից հետո:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության պատասխանատվությամբ 2019 թվականի հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 4 ծրագրերի շրջանակներում կատարվել են շուրջ 33.7 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 98.7%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում առաջացել է «Ազգային անվտանգություն» և «Պետական պահպանության ապահովում» ծրագրերում:

Պետական պահպանության ապահովման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է 3.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 98.2%-ը:

Մասնավորապես՝ շուրջ 3.4 մլրդ դրամ է տրամադրվել պետական պահպանության ծառայությունների ապահովմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 98%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների

տնտեսմամբ, արտասահմանյան գործուղումների քանակի նվազմամբ, ինչպես նաև տրանսպորտային միջոցների թարմացմամբ պայմանավորված՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման ծախսերի կրճատմամբ:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական:

Հաշվետու տարում Պետական պահպանության ծառայությանը տրանսպորտային միջոցներով ապահովվածության և տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով հատկացվել է համապատասխանաբար 492.2 մլն դրամ (99.7%) և 11.1 մլն դրամ (89.7%): Շեղումը պայմանավորված է պետական գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Ազգային անվտանգության ծրագրի շրջանակներում օգտագործվել է 29.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.8%-ը: Մասնավորապես՝ հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպման ծախսերը կազմել են ավելի քան 22.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի և կապի ծախսերի խնայողությամբ՝ կապի օպերատորների փոփոխության արդյունքում սակագնի նվազմամբ, թարգմանությունների՝ նախատեսվածից փոքր թվով, ինչպես նաև չկայացած մրցույթներով:

Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերման ծախսերը կազմել են 20 մլն դրամ կամ նախատեսվածի 74.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական գնումների գործընթացի արդյունքում առաջացած խնայողություններով և որոշ մրցույթների չկայացմամբ՝ 32 անվանում դեղորայքի մասով հայտարարված մրցույթին լաբորատոր փորձաքննության դրական եզրակացություն չունենալու պատճառով մասնակիցների բացակայությամբ:

Հաշվետու տարում ավելի քան 6 մլն դրամ է տրամադրվել ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններին, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 43.1%ը: Ցածր կատարողականը պայմանավորված է մատուցված ծառայությունների փաստացի ծավալով:

Պաշտպանության բնագավառի այլ ծախսերին հատկացվել է ավելի քան 7 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության նպատակով հաշվետու տարում օգտագործվել է 41.1 մլն դրամ կամ կատարվել է 99.1%-ով:

Հաշվետու տարում 109.6 մլն դրամ է տրամադրվել Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով՝ ապահովելով 74.2% կատարողական,

որը պայմանավորված է պետական գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով և 21 չափաբաժինների մրցույթները չկայանալու հանգամանքով:

Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավման նպատակով ծախսվել է 208.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.9%-ը:

Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավման և ազգային անվտանգության համակարգի կողմից ծառայությունների մատուցման ապահովման համար ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով հատկացված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով համապատասխանաբար 49.5 մլն դրամ և 6.8 մլն դրամ:

Բնագավառի *այլ ծախսերին* ուղղվել է 150.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 100%-ը:

Ազգային անվտանգության ապահովման ծրագրերին աջակցության ծրագրի ծախսերը կազմել են 54.1 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 16.3 մլն դրամ ծախսեր, որոնք ապահովել են ծրագրված ցուցանիշի 99.9%-ը:

Հատուկ նշանակության կապի սարքավորումներով ապահովման նպատակով հատկացվել է 25 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Հաշվետու տարվա ընթացքում տրանսպորտային սարքավորումներով ապահովման նպատակով ծախսվել է 12.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ ոստիկանության պատասխանատվությամբ 2019 թվականին իրականացվել են 10 ծրագրեր, որոնց տրամադրվել է ավելի քան 64.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 93.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն աջակցության, Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակման, կառավարման, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի ու վերահսկողության և ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ծառայությունների մատուցմանն աջակցության ծրագրերի կատարողականով:

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից շուրջ 28 մլրդ դրամ է տրամադրվել Հասարակական *անվտանգության ապահովման* ծրագրին, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99%-ը: Նշված գումարից 24.1 մլրդ դրամը կազմել են հասարակական կարգի պահպանության, անվտանգության ապահովման և հանցագործությունների դեմ պայքարի միջոցառման ծախսերը, որոնք կատարվել են

99.2%-ով՝ հիմնականում պայմանավորված գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Պետական պահպանության ծառայությունների կազմակերպման և իրականացման նպատակով տրամադրվել է 3.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 97.4%-ը, որը նույնպես պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում ապահովվել է պետական և իրավաբանական ու ֆիզիկական անձանց պատկանող 180 օբյեկտների պահպանությունը՝ նախատեսված 177-ի փոխարեն:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները կազմել են 11.3 մլն դրամ:

ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների բավարարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 7.8 մլն դրամ:

Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարման ծրագրին հաշվետու տարում տրամադրվել է ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներն ուղղվել են անձնագրերի և վիզաների տրամադրմանը, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարման համար՝ անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցմանը, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրմանը:

Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանման ծախսերը կազմել են 949.3 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 98.4%-ը: Հատկացված միջոցների գերակշիռ մասը բաժին է ընկել առողջապահական ծառայությունների տրամադրմանը, որին ուղղվել է 889.4 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.3%-ը: Տնտեսումն առաջացել է գործուղումների արդյունքում:

Ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերը կազմել են 59.9 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 86.9%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

Ոստիկանության կրթական ծառայությունների ծրագրի շրջանակներում 2019 թվականին օգտագործվել է 1.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 94.4%-ը, որը պայմանավորված է դիմորդների թվի նվազմամբ և անբավարար առաջադիմությամբ սովորողների հեռացման հանգամանքով:

Նշված գումարից 822.5 մլն դրամը տրամադրվել է բարձրագույն մասնագիտական կրթության ծառայության միջոցառմանը՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 94.3%-ը: Միջոցառման շրջանակներում բակալավրիատի կրթական ծրագրով առկա ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվը կազմել է 143՝ նախատեսված 212-ի փոխարեն:

Միջին մասնագիտական կրթության ծառայության միջոցառմանը տրամադրվել է 349.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 94.3%-ը: Միջոցառման շրջանակներում միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում է ստացել ՀՀ ոստիկանության 70 ծառայող՝ նախատեսված 119-ի փոխարեն:

Նախնական մասնագիտական կրթության ծառայության միջոցառման ծախսերը կազմել են 221.9 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 94.9%-ը: Միջոցառման շրջանակներում Նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում է ստացել ՀՀ ոստիկանության 48 ծառայող՝ նախատեսված 60-ի փոխարեն:

Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակման, կառավարման, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության ծրագրի գծով ծախսերը կազմել են 9.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 90.7%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հիմնականում ուղղվել են «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառմանը: Բացի այդ, 720 հազ. դրամ է հատկացվել ՀՀ ոստիկանության կարիքի բավարարման նպատակով 4 համակարգչային սարքավորումների ձեռքբերմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նպատակով հաշվետու տարում օգտագործվել է նախատեսված միջոցների 99.3%-ը՝ 3.2 մլրդ դրամ: Միջոցների գերակշիռ մասը՝ 3 մլրդ դրամը տրամադրվել է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման միջոցառմանը, որն ամբողջությամբ կատարվել է: Միջոցառման շրջանակներում իրականացվում են ճանապարհային երթևեկության կարգավորում, անվտանգության ապահովում, ճանապարհապարեկային ծառայություն, ճանապարհատրանսպորտային պատահարների և տվյալ բնագավառում վարչական իրավախախտումների պետական հաշվառում, վարորդական վկայականների տրամադրում:

Հաշվետու տարում 213.6 մլն դրամ է տրամադրվել տրանսպորտային միջոցների պետական հաշվառմանը՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 90.4%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում իրականացվում է տրանսպորտային միջոցների պետհամարանիշերի տրամադրում:

ՀՀ ոստիկանության բժշկական վարչության կողմից ծառայությունների մատուցմանն աջակցությունը կազմել է 12.6 մլն դրամ կամ նախատեսվածի 94.1%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Մասնավորապես՝ 2.4 մլն դրամ ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների տրամադրմանը, որը կազմել է ծրագրված միջոցների 75.5%-ը: Միջոցառման շրջանակներում իրականացվում է ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող ծառայողների (անձանց) հոսպիտալային բուժապահովում:

ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով նախատեսված 10.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որի հաշվին ՀՀ ոստիկանության աշխատանքային պայմանների բարելավման համար ձեռք է բերվել 2 վարչական սարքավորում:

ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ծառայությունների մատուցմանն աջակցության ծախսերը կազմել են ավելի քան 7.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.6%-ը: Միջոցների հիմնական մասը՝ 7.18 մլրդ դրամը տրամադրվել է ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից պետական պահպանության ծառայությունների մատուցմանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 93.4%-ը: Շեղումը պայմանավորված է Պետական պահպանության գլխավոր վարչության (ՊՊԳՎ) վերակազմավորման արդյունքում պահպանվող օբյեկտների քանակի և հաստիքների թվի կրճատման, ինչպես նաև գնումների արդյունքում միջոցների տնտեսման հանգամանքներով: Միջոցառման շրջանակներում պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվը կազմել է 3879՝ նախատեսված 4086-ի փոխարեն:

29.6 մլն դրամ տրամադրվել է պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարմանը, որը կազմել է ծրագրված միջոցների 68%-ը: Միջոցներն ուղղվել են պետական պահպանության ծառայություններ մատուցող ստորաբաժանումների համար վարչական ու այլ սարքավորումների և գույքի ձեռքբերմանը: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է ՊՊԳՎ կարիքները տարվա ընթացում ճշտելու և գնումների արդյունքում տնտեսումներ առաջանալու հանգամանքով: Արդյունքում նախատեսված 591 միավոր սարքավորումների և գույքի փոխարեն ձեռք է բերվել 219-ը:

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության շենքային պայմանների բարելավման նպատակով հատկացված 55 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված կարիքը վերանալու հանգամանքով:

Աջակցությունը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանը կազմել է 12.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 85%-ը: Միջոցների հիմնական մասը՝ 11.1 մլրդ դրամը տրամադրվել է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհա-

տրանսպորտային պատահարների կանխարգելման միջոցառմանը, որը կատարվել է 89%-ով՝ պայմանավորված գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 69.9%-ը: Շեղումը պայմանավորված է տարվա ընթացքում կարիքների վերանայմամբ և գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում նախատեսված 3343 միավոր վարչական սարքավորումների և գույքի փոխարեն հաշվետու տարում ձեռք է բերվել 1458-ը:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության շենքային պայմանների բարելավման նպատակով օգտագործվել է 27.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 8.2%-ը՝ պայմանավորված աշխատանքների հետաձգմամբ և միջոցների տնտեսմամբ:

Աջակցությունը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ծառայությունների մատուցմանը կազմել է 722.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 89.1%-ը:

Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցման, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տրամադրվել է 537.3 մլն դրամ կամ նախատեսվածի 93.1%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարման ծախսերը կազմել են 168.5 մլն դրամ կամ նախատեսվածի 80.2%-ը: Շեղումը պայմանավորված է տարվա ընթացքում կարիքները ճշտելու հանգամանքով, ինչպես նաև տնտեսումներով: Միջոցառման շրջանակներում նախատեսված 1685 միավոր վարչական սարքավորումների և գույքի փոխարեն ձեռք է բերվել 1604-ը :

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության շենքային պայմանների բարելավման նպատակով օգտագործվել է 16.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 71.2%-ը: Շեղումը պայմանավորված է մեկ օբյեկտի՝ Կապանի անձնագրային բաժանմունքի կապիտալ վերանորոգման աշխատանքների գծով միջոցների տնտեսմամբ և 3 օբյեկտի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման կարիքը վերանայելու հանգամանքով:

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ծրագրի շրջանակներում 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 8.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.7%-ը: Ծրագրում ընդգրկված միջոցառումների մեծ մասի գծով ծախսերն իրականացվել են 100%-ով,

բացառությամբ «Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ» և «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառումների:

Միջոցների գերակշիռ մասը՝ շուրջ 6 մլրդ դրամը, տրամադրվել է Հեռուստատեսային ծառայություններին: Միջոցառման շրջանակներում իրականացվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի և Միջազգային ալիքի եթերներում, յուրաքանչյուրում 8748.1 ժամ տևողությամբ:

Շուրջ 942.4 մլն դրամ է հատկացվել ռադիո ծառայություններին, որը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցառման շրջանակներում իրականացվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագրի», «Երկրորդ ծրագրի» և «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքի եթերներում, յուրաքանչյուրում 8760 ժամ տևողությամբ, և ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի ու հարևան երկրներում հաղորդումների հեռարձակում՝ 829.25 ժամ տևողությամբ:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններին հատկացված 233.5 մլն դրամն ուղղվել է հոգևոր-մշակութային հեռուստատեսային հաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը, որոնց տևողությունը 2019 թվականին կազմել է 6570 ժամ:

Հաշվետու տարում 46.2 մլն դրամ է հատկացվել Հեռարձակողների եվրոպական միությանը Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության անդամակցության վճարների վճարման նպատակով:

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 14.9 մլն դրամ, իսկ կենտրոնի շրջանառության հարկի (ներառյալ՝ տույժերի և տուգանքների) գծով առաջացած պարտավորությունների վճարմանը հատկացվել է 17.9 մլն դրամ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության ավելացված արժեքի հարկի (ներառյալ՝ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների փոխհատուցման նպատակով հաշվետու տարում տրամադրվել է 1.3 մլրդ դրամ:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերը կազմել են 37.5 մլն դրամ, իսկ ընկերության շահութահարկի և ավելացված արժեքի հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարմանը՝ 105.7 մլն դրամ:

Հանրային հեռուստառադիոընկերության կառավարման, համակարգման և մոնիտորինգի միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 89.4%-ը՝ 134.4 մլն դրամ: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է ժամանակավոր թափուր հաստիքների առկայությամբ և կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերի խնայողությամբ:

Տեխնիկական վերազինման նպատակով ներդրումները կազմել են 62.9 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 83.3%-ը: Միջոցներն ուղղվել են հեռուստատեսային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը: Տնտեսումը պայմանավորված է նրանով, որ այս միջոցառմանը տրամադրվող գումարը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման:

ՀՀ հաշվեքննիչ պալատին Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն իրականացնելու նպատակով հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված միջոցների 97.9%-ը: Միջոցների գերակշիռ մասը՝ 1.08 մլրդ դրամը տրամադրվել է Հաշվեքննիչ պալատի գործունեության և հաշվեքննության իրականացման ծառայություններին, որի կատարողականը կազմել է 98%՝ պայմանավորված տնտեսումներով:

Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդին հատկացված 18.8 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

Հաշվեքննիչ պալատի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 84%-ը՝ 10.3 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Հատկացված միջոցների հաշվին իրականացվել է Հաշվեքննիչ պալատի գործունեության համար անհրաժեշտ վարչական սարքավորումների և գույքի ձեռքբերում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 512.6 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 95.5%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են 2 ծրագրերի իրականացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանության ծրագրի ծախսերը 2019 թվականին կազմել են 474.3 մլն դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրման միջոցառման գծով առաջացած տնտեսումներով: Նշված միջոցառման կատարողականը կազմել է 98.7% կամ 466.3 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվում են մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մոնիտորինգ, բողոքների լուսաբանում և հասարակական իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլ աշխատանքներ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման ծախսերին ուղղվել է 480 հազար դրամ՝ ապահովելով 78.7% կատարողական:

Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված 3 մասնագիտական խմբերի փոխարեն կազմակերպվել են դասընթացներ 2 մասնագիտական խմբերի համար և վերապատրաստվել են 12 պետական ծառայողներ՝ նախատեսված 30-ի փոխարեն՝ կապված օրենսդրությամբ սահմանված վերապատրաստման ենթակա ծառայողների թվի փոփոխության հետ (նախատեսված պետական ծառայողների պաշտոնից ազատվածների փոխարեն նշանակված ծառայողների աշխատանքային ստաժը տվյալ պաշտոնում պակաս է եղել 6 ամսից):

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը կազմել են 7.6 մլն դրամ՝ ապահովելով 88% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնման գործընթացի արդյունքում ապրանքների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: Հատկացված միջոցներն օգտագործվել են վարչական սարքավորումների ձեռքբերման համար:

Հաշվետու ժամանակահատվածում արտաբյուջետային միջոցներից ֆինանսավորվող՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերին աջակցության ծախսերը կազմել են 38.3 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 69.8%-ը: Շեղումը հիմնականում կապված է արտաքին աջակցությամբ իրականացվող երկու դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսված որոշ գործողությունների կատարումը 2020 թվական տեղափոխելու հետ: Մասնավորապես՝ Մարդու և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման բնագավառում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 7 մլն դրամի դիմաց օգտագործվել է 213.2 հազար դրամ (3%-ը): Ծրագիրն իրականացվում է Բուլղարիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ: Միջոցառման շրջանակներում իրականացվող ծրագրի նպատակների մասին հանրությանն ու շահագրգիռ կառույցներին իրազեկելու, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրները քննարկելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Հայաստանում Բուլղարիայի դեսպանության հետ համատեղ կազմակերպել է մեկնարկային հանդիպում՝ տվյալ ոլորտի շահագրգիռ կառույցների մասնակցությամբ: Կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ երկկողմ համաձայնությամբ ծրագրի գործողությունների մնացած մասը տեղափոխվել է 2020 թվական: 49.8% կատարողական է արձանագրվել Հայաստանի կանխարգելման ազգային մեխանիզմի վերաբերյալ ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի առաջարկությունների իրականացման և ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի առաջարկությունների իրականացման հարցում պետության աջակցության ծախսերի գծով, որոնք նախատեսված 10.4 մլն դրամի դիմաց կազմել են 5.2 մլն դրամ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Կանխարգելման ազգային մեխանիզմների գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի փոխանակման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 4 ներկայացուցիչ ուսումնական այց են կատարել Էստոնիա՝ Տալլին.

● Կազմակերպվել են վեցօրյա վերապատրաստումներ հոգեբուժական հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց համար.

● Տպագրվել են «Ոստիկանության ծառայողի իրավունքների ապահովումը նրա նկատմամբ քրեական հետապնդման իրականացման դեպքում» ու «Երեխաների և անգործունակ չափահասների՝ որպես պացիենտների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության և այլ իրավունքներ»-ի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցները.

● Պատրաստվել է կանխարգելման ազգային մեխանիզմի դերի և գործունեության վերաբերյալ տեղեկատվական հոլովակ, որը կհեռարձակվի 2020 թվականի ընթացքում.

● Պատրաստվել և տպագրվել են կանխարգելման ազգային մեխանիզմի դերի, կարգավիճակի և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ թռուցիկներ (500 օրինակ) հոգեբուժական կազմակերպություններում տարածելու նպատակով:

Կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ երկկողմ համաձայնությամբ ծրագրի գործողությունների մնացածը մասը տեղափոխվել է 2020 թվական:

Ֆինլանդիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Կայուն զարգացման նպատակների իրականացմանն աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը՝ որպես մարդու իրավունք» միջոցառման ծախսերը կազմել են 1.2 մլն դրամ կամ նախատեսվածի 59.7%-ը, որը պայմանավորված է խնայողություններով: Միջոցառման հիմնական գործողություններն իրականացվել են 2018 թվականի ընթացքում: Միջոցառման շրջանակում նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիության մշտադիտարկում իրականացնելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից այցեր են իրականացվել Երևանի և մարզերի 201 ուսումնական և նախակրթական ուսումնական հաստատություն՝ 121 դպրոց և 80 մանկապարտեզ: Մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրների վերաբերյալ մշակվել է արտահերթ հրապարակային զեկույց «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ»: Զեկույցում բարձրացվել են նաև օրենսդրական խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ ներկայացվել են կոնկրետ առաջարկներ: 2019 թվականի ընթացքում իրականացվել է միջոցառման ավարտական փուլը՝ թարգմանվել և տպագրվել է

«Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» զեկույցը:

2019 թվականին Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից հատկացված միջոցներից «Ազգային կանխարգելման մեխանիզմի վերաբերյալ ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի առաջարկությունների իրականացում և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում» միջոցառման ծախսերը կազմել են 2.4 մլն դրամ կամ նախատեսվածի 78.7%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Կազմակերպվել են 6 հատուկ դասընթաց-քննարկումներ քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների, այդ թվում՝ բժիշկների, հոգեբանների, ազատությունից զրկված անձանց հետ անմիջականորեն շփում ունեցող անվտանգության ապահովման բաժնի և հերթապահ խմբի աշխատակիցների համար.

● թարգմանվել և տպագրվել են «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ», «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգի վերաբերյալ», «Պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքների վերաբերյալ» և «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցները:

Բուլղարիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վարչական կարողությունների զարգացման ծախսերը կազմել են 14.1 մլն դրամ՝ ապահովելով 96.6% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել է Բուլղարիայի օմբուդսմանի աշխատակազմի աշխատակիցների և փորձագետների չորսօրյա այցը Հայաստան.

● Կազմակերպվել է երկօրյա միջազգային գիտաժողով՝ նվիրված գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանը: Գիտաժողովին մասնակցել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Բուլղարիայի օմբուդսմանի, Վրաստանի հանրային պաշտպանի, ՀՀ

պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտի փորձագետներ, ԱԺ պատգամավորներ.

● Պատրաստվել և հեռարձակվել են թվով 11 հոլովակներ 1.5 րոպե տևողությամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների, դերի, մասնավոր ոլորտին առնչվող նոր գործառույթների, ինչպես նաև սպառողների իրավունքների, դրանց պաշտպանության մեխանիզմների և Պաշտպանին դիմելու սահմանադրական իրավունքի իրացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով.

● Պատրաստվել և հրապարակվել է արտահերթ հրապարակային զեկույց՝ նվիրված ՀՀ օրենսդրության համապատասխանությանը ՄԱԿ-ի կայուն զարգացման 6-րդ նպատակին.

● Պատրաստվել և հրապարակվել է թեմատիկ ուղեցույց հարկ վճարողների հարկային ստուգումների վերաբերյալ:

2019 թվականին Նիդերլանդների Թագավորության դեսպանատան կողմից հատկացված միջոցներով իրականացվող «Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման մոնիթորինգի իրականացում և գնահատում» միջոցառման շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից օգտագործվել է 926.4 հազար դրամ կամ նախատեսված միջոցների 99.6%-ը: Միջոցառման նպատակը պրոբացիոն համակարգի, ինչպես նաև դրա օրենսդրական բացերի և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ հանրության և իրավասու պետական մարմինների շրջանում իրազեկվածության բարձրացումն է: Միջոցառման հիմնական գործողությունները իրականացվել են 2018 թվականին: 2019 թվականին իրականացվել է միջոցառման ավարտական փուլը. կազմվել է պաշտպանի արտահերթ զեկույց՝ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայության շրջանակում էլեկտրոնային միջոցներով մոնիտորինգի իրականացման հնարավորությունների վերաբերյալ:

Երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերին արձագանքելու համար ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման միջոցառման շրջանակներում օգտագործվել է 7.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 79.7%-ը, ինչը պայմանավորված է երկկողմ համաձայնությամբ միջոցառման գործողությունների մնացածը մասը 2020 թվական տեղափոխելու հանգամանքով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

● Հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար մշակվել է երեխաների իրավունքների վերաբերյալ ձեռնարկ.

● Գյումրու և Վանաձորի տարածաշրջանների հանրակրթական դպրոցների հասարակագիտության ուսուցիչների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ երեխաների իրավունքների պաշտպանության թեմայով.

● Սկսվել է որոշումների կայացման գործընթացին երեխաների մասնակցության թեմայով ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի մեթոդաբանությունը: Վերջնական զեկույցը պատրաստ կլինի 2020 թվականին.

● ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների բարձրացման նպատակով պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ երեխաների իրավունքներին վերաբերող թեմաներով.

● Երեխաների իրավունքների մոնիտորինգի նպատակով իրականացվել են այցելություններ Լոռու, Շիրակի մարզերի և Երևան քաղաքի՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ:

Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման ծախսերը կազմել են 3.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

● Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում փախստականների, ապաստան հայցողների և տեղահանված այլ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը, ոլորտի օրենսդրական կարգավորումները և դրանց գործնական կիրարկումը.

● Իրավիճակի ուսումնասիրության և վերլուծության, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով այցելություններ են կատարվել ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված հատուկ կացարաններ և «Հատուկ կացարան» ՊՈԱԿ, որտեղ բնակվում են ապաստան հայցող անձինք: Այցերի ընթացքում, բացի մշտադիտարկումից, առանձնազրույցներ են տեղի ունեցել կացարանի բնակիչների հետ, ինչպես նաև վերջիններիս համար կազմակերպվել են մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, ոլորտում աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ.

● Ըստ անհրաժեշտության այցեր են իրականացվել նաև այն քրեակատարողական հիմնարկներ, որտեղ ազատությունից զրկված են փախստականները և ապաստան հայցող անձինք: Դրանք հիմնականում պայմանավորված են եղել պաշտպանին հասցեագրված անհատական դիմումներով, ինչպես նաև ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից ստացված տեղեկությամբ.

● Կազմակերպվել է փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ համաժողով, որին մասնակցել են պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև ոլորտում գործող պետական մարմինների, միջազգային և հասարակական

կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառմանը մասնակցել է նաև Եվրոպայի խորհրդի կողմից հրավիրված փորձագետ, ով ներկայացրել է ոլորտին առնչվող միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի իրավաբանությունը.

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Իսպանիայի Թագավորություն ուսուցողական այցին, որի շրջանակներում ուսումնասիրվել է տեղի փորձը փախստականների և ապաստան հայցող անձանց վերաբերյալ.
- Տարբեր համալսարանների ուսանողների համար կազմակերպվել են մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, ոլորտում մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև կատարված աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ.
- Թարգմանվել և տպագրվել են պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի, մանդատին վերաբերող տեղեկատվական թերթիկ և պաստառ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով հատկացվել է 3.3 մլն դրամ կամ նախատեսվածի 84.9%-ը: Շեղումը պայմանավորված է ծախսերի մի մասը 2020 թվական տեղափոխելու հանգամանքով, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել համակարգչային և այլ տեխնիկական միջոցներ ու գրասենյակային գույք:

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին հատկացված միջոցներով 2019 թվականի ընթացքում իրականացվել է Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորման ծրագիրը, որի կատարողականը կազմել է 98.3% կամ 321.6 մլն դրամ: Մասնավորապես՝ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանման համար ծախսվել է հատկացված միջոցների 99.2%-ը՝ 320.4 մլն դրամ: Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների գծով ծախսերը կազմել են համապատասխանաբար 449.9 և 741.5 մլն դրամ: Ճառագայթային չափումների ռեֆերենսային լաբորատորիա ստեղծելու նպատակով հատկացված 3 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից ներկայացվել է օբյեկտի տեղակայման այլընտրանքային առաջարկ, և խնդիրը գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացված «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2019 թվականին կատարվել են շուրջ 8.1 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 97.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրի ծախսերի հիմնական մասը կազմող՝ Քրեական գործերով վարույթի իրականացման ծախսերի կատարողականով, որը կազմել է 97.9% կամ 7.6 մլրդ դրամ և պայմանավորված է որոշ ապրանքների մատակարարման և

ծառայությունների մատուցման գծով տնտեսումներով: 10.6 մլն դրամ (ծրագրի 51.8%-ը) օգտագործվել է վերապատրաստման և պատրաստման կազմակերպման միջոցառման շրջանակներում: Շեղումը հիմնականում պայմանավորված է վերապատրաստմանը փաստացի մասնակցող ունկնդիրների քանակով, ինչպես նաև ատեստավորման արդյունքներով լրացուցիչ վերապատրաստման անհրաժեշտություն չառաջանալու հանգամանքով: 101 մլն դրամ (ծրագրի 99.5%-ը) օգտագործվել է ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդից: 212.6 մլն դրամ (ծրագրի 96.7%-ը) ուղղվել է փորձաքննությունների ծառայությունների տրամադրմանը, 13.1 մլն դրամ (ծրագրի 100%-ը)՝ արտասահմանյան պաշտոնական գործուղումներին և 26.3 մլն դրամ (ծրագրի 99.8%-ը)՝ ՀՀ քննչական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավմանը: Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրներին տրամադրվող կրթաթոշակի գծով ծախսերը կազմել են 29.6 մլն դրամ կամ ծրագրի 69.1%-ը: Շեղումը պայմանավորված է քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ժամաքանակի և ուսումնառության ժամկետի տևողության կրճատմամբ: ՀՀ քննչական կոմիտեի շենքային պայմանների բարելավման ծախսերը կատարվել են 69.8%-ով՝ կազմելով 81.5 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է կապիտալ վերանորոգման աշխատանքների համար հայտարարված մրցույթների արդյունքում նախահաշվային գնից ցածր գնային առաջարկներով կնքված պայմանագրերով:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանատվությամբ 2019 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 2 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են ավելի քան 5.6 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 71.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կոմիտեի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ Բնակարանային շենքային համալիրից պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի կատարողականով:

ՀՀ պետական ծառայողների կյանքի որակի բարելավման, հանրային կառավարման բնագավառում ՀՀ պետական ծառայողի դերի բարձրացման, ինչպես նաև ՀՀ պետական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտիվացիոն դաշտի ապահովման նպատակով 2014 թվականից մեկնարկել է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում պետության և «Միկշին» ՍՊԸ միջև կնքվել են Երևան քաղաքի Ադոնց փողոցի NN6/1, 6/2, 6, 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների բնակարանների առքուվաճառքի պայմանագրեր՝ ՀՀ պետական ծառայող հանդիսացող շահառուներին շուկայականից ցածր գնով և հիփոթեքային արտոնյալ պայմաններով դրանք տրամադրելու նպատակով: Ծրագրի իրականացման համար բացված արտաբյուջետային գանձապետական հաշվեհամարների մուտքերն են հանդիսացել շահառուների կողմից պետությանը կատարվող կանխավճարները, կառուցապատողին

տրամադրված կանխավճարի դիմաց ստացված տոկոսները, իսկ ելքեր են հանդիսացել կառուցապատողին կատարվող կանխավճարները և ծրագրի շահառուների կատարած կանխավճարի գծով օգնության (միայն Ադոնցի փ. N6/1շ. համար) գումարների վճարումները: Այս ծրագրի շրջանակներում կատարվել է շուրջ 4.7 մլրդ դրամի ծախս, որը կազմել է ծրագրվածի 69%-ը՝ պայմանավորված նրանով, որ վճարման 2-րդ փուլը նախատեսվել էր ավարտել հաշվետու տարվա ընթացքում, սակայն նախնական պայմանագրերի կնքման գործընթացը նախատեսվածից ավելի ուշ ավարտվելու պատճառով 2-րդ փուլի վճարումների հիմնական մասը տեղափոխվեց 2020 թվական:

Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացման և կանոնակարգման համար նախատեսված 1.1 մլրդ դրամի դիմաց օգտագործվել է 952.8 մլն դրամ: Մասնավորապես՝ քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման, պլանավորման, մոնիտորինգի, կապիտալ ծրագրերի կատարման, պետական գնումների իրականացման ծառայության ծախսերը կազմել են 601.1 մլն դրամ կամ նախատեսվածի 95.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարական տուն 3 շենքի 4-րդ հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների գնման գործընթացի ուշ մեկնարկով:

Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և տեղայնացման միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 16.5%-ը՝ 3.3 մլն դրամ: Հաշվետու տարում նախատեսվել էր թվով 4 շինարարական նորմերի մշակում (տեղայնացում), սակայն պետական գնման պայմանագիր է կնքվել միայն 1-ի համար, իսկ մնացած նորմերի մշակման աշխատանքների մասով սահմանված կարգով 4 անգամ հայտարարված մրցույթները չեն կայացել՝ հայտեր ներկայացված չլինելու պատճառով:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման միջոցառման շրջանակներում օգտագործվել է 303.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 73.8%-ը: Մրցութային գործընթացներով պայմանավորված՝ նախագծող կազմակերպությունների հետ պետական գնման պայմանագրերը հիմնականում կնքվել են 4-րդ եռամսյակում, պայմանագրերի օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների ավարտման ժամկետը նախատեսվել է 2020 թվականը, և վճարումները կատարվել են պայմանագրով նախատեսված բանկային երաշխիքով ապահովված կանխավճարների տեսքով: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի մասով նախագծող ընկերությունների կողմից կանխավճարի ապահովումը հանդիսացող բանկային երաշխիքը ուշ է ներկայացվել (30.12.2019թ.), իսկ ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի մասով՝ չի ներկայացվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները, քաղաքացիական ծառայողների կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրությունը և արտասահմանյան պաշտոնական գործուղումների գծով ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով համապատասխանաբար 99.5 հազար դրամ, 24.3 մլն դրամ և 2.6 մլն դրամ:

Քաղաքաշինության կոմիտեի կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսերը կազմել են 18.1 մլն դրամ կամ նախատեսվածի 95%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կնքված երկու պայմանագրերին կից վճարման ժամանակացույցը սահմանող համաձայնագրերը ժամանակի սղության պատճառով չեն կնքվել, և պայմանագրերի կատարումը տեղափոխվել է հաջորդ տարի:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պատասխանատվությամբ 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից կատարվել են շուրջ 104.7 մլն դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 40.2%-ը: Հատկացված միջոցներն ուղղվել են *Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովման* ծրագրի շրջանակներում «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» միջոցառմանը, որը կատարվել է 42.7%-ով: Ցածր կատարողականը պայմանավորված է հանձնաժողովի՝ տարեվերջին (19.11.2019թ.) ձևավորվելու հանգամանքով, որի հետ կապված՝ հաստիքներն ամբողջությամբ չեն համալրվել, ինչպես նաև գործունեության համար նախատեսված տարածքը շահագործման չի հանձնվել: Նույն հանգամանքով պայմանավորված՝ չեն օգտագործվել «Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանք» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառումների համար նախատեսված միջոցները՝ համապատասխանաբար 10.3 մլն դրամի և 5.1 մլն դրամի չափով:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը պետական վերահսկողական ծառայությունների մատուցման նպատակով 2019 թվականի ընթացքում տրամադրվել է շուրջ 563.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 83.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով և թափուր հաստիքների առկայությամբ:

Հատկացված միջոցներից 541.2 մլն դրամն ուղղվել է ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովման ծախսերին, որոնք կատարվել են 83.5%-ով: Միջոցառման շրջանակներում իրականացված վերահսկողությունների թիվը կազմել է 92՝ նախատեսված 65-ի դիմաց:

Ավելի քան 22.4 մլն դրամ տրամադրվել է ՀՀ պետական վերահսկողական ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով: Միջոցներն օգտագործվել են 93.3%-ով և ուղղվել են համակարգչային ու այլ սարքավորումներ, ինչպես նաև գրասենյակային գույք ձեռքբերմանը: Շեղումը պայմանավորված է որոշ գնման առարկաների կարիքի բացակայությամբ, ինչպես նաև նախատեսվածից ցածր գներով ձեռքբերման արդյունքում առաջացած տնտեսումներով:

Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային պետական կառավարում իրականացնելու նպատակով ծրագրերի շրջանակներում մարզպետարաններին 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ընդհանուր առմամբ տրամադրվել է ավելի քան 6.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 96.2%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է մարզպետարանների կողմից «Տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառման ծախսերում, որոնց ուղղվել է նախատեսված միջոցների 96.3%-ը կամ շուրջ 6.1 մլրդ դրամ, և պայմանավորված է շարունակական ծախսերի ու թափուր հաստիքների առկայության արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի տնտեսմամբ: Խնայողություններ կան նաև մարզպետարանների տեխնիկական հագեցվածության ապահովման միջոցառման ծախսերում, որոնք կազմել են 54.5 մլն դրամ կամ նախատեսված ցուցանիշի 86.6%-ը՝ պայմանավորված գնումների գործընթացում ապրանքներն ավելի ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների համար նախատեսված 5.4 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված ՀՀ կառավարության կողմից գումարի հատկացման վերաբերյալ որոշումն ուշ ընդունելու հանգամանքով: Արտասահմանյան պաշտոնական գործուղումներին է ուղղվել 4.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 100%-ը:

Հատկացումներն ըստ մարզերի բաշխվել են հետևյալ կերպ.

- Արագածոտնի մարզպետարանին՝ 556.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97%-ը,
- Արարատի մարզպետարանին՝ 565.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 94.2%-ը,
- Արմավիրի մարզպետարանին՝ 587.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.3%-ը,
- Գեղարքունիքի մարզպետարանին՝ 788.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 96%-ը,
- Լոռու մարզպետարանին՝ 640.7 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.3%-ը,
- Կոտայքի մարզպետարանին՝ 628.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97.7%-ը,
- Շիրակի մարզպետարանին՝ 704.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97.5%-ը,
- Սյունիքի մարզպետարանին՝ 603.2 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.8%-ը,
- Վայոց ձորի մարզպետարանին՝ 466 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 96.8%-ը,
- Տավուշի մարզպետարանին՝ 598.3 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.3%-ը:

ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ», «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և

պաշտոնական գործուղումների կազմակերպում» և «Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպում» ծրագրերի գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսվել էին ընդհանուր առմամբ 9.4 մլրդ դրամի միջոցներ, որոնք սահմանված կարգով հատկացվել են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորմանը՝ հատկացումների չափով ավելացնելով համապատասխան ծրագրերի և միջոցառումների գծով նախատեսված գումարները, ինչպես նաև բյուջեով չնախատեսված ելքերի ֆինանսավորմանը՝ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման մեջ ավելացնելով նոր ծրագրեր և/կամ միջոցառումներ՝ ելնելով այդ ելքերի ուղղություններից, նպատակներից, ակնկալվող արդյունքներից և դրանց համար պատասխանատու պետական մարմիններից: Նշված 9.4 մլրդ դրամից վերոհիշյալ սկզբունքով կատարված վերաբաշխումներից հետո մնացել են 2.2 մլրդ դրամի միջոցներ: Մասնավորապես՝ «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրին հատկացված 8.8 մլրդ դրամից մնացել է 2.1 մլրդ դրամը, «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և պաշտոնական գործուղումների կազմակերպում» ծրագրին հատկացված 550 մլն դրամից՝ 51.7 մլն դրամը, «Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպում» ծրագրին հատկացված 56 մլն դրամից՝ 21.1 մլն դրամը:

Հույժ գաղտնի

ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեն կատարվել է 63.9 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 41.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է եկամուտների համեմատ ծախսերի ավելի ցածր կատարողականով, որով մասամբ բացատրվում է ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված՝ բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսվածից 3.3 անգամ ավել աճը, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ներգրավված վարկային միջոցների 72% կատարողականը: 2018 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 105.4 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2018 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 39.3%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2019 թվականին կազմել է 1%՝ կանխատեսված 2.2%-ի և 2018 թվականի 1.8%-ի դիմաց: 2018 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 65.8 և 34.2 տոկոսը, ապա 2019 թվականին նշված ցուցանիշները կազմել են -20.8 և 120.8 տոկոս՝ պայմանավորված ներքին աղբյուրներում ազատ միջոցների զգալի աճով: Վերջինս կազմել է 98.6 մլրդ դրամ՝ ծրագրված 30.1 մլրդ դրամի փոխարեն, որը պայմանավորված է ինչպես եկամուտների համեմատ ծախսերի ավելի ցածր կատարողականով, այնպես էլ արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված զուտ միջոցները կայունացման դեպոզիտային հաշվին ուղղելու հանգամանքով:

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -13.3 մլրդ դրամ, արտաքին աղբյուրները՝ 77.3 մլրդ դրամ՝ նախատեսված համապատասխանաբար 14.6 մլրդ դրամի և 139.2 մլրդ դրամի դիմաց:

Հաշվետու տարում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեն ֆինանսավորվել է 101.1 մլրդ դրամով՝ ապահովելով 114.8% կատարողական: 101.9 մլրդ դրամ է կազմել պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին պակասուրդի ֆինանսավորումը՝ 14.7%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: 2019 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ տեղաբաշխվել են 209,889.35 մլն դրամի պարտատոմսեր, տեղաբաշխումից ստացված մուտքը կազմել է 217,250.48 մլն դրամ, իսկ պարտատոմսերի մարմանը/հետգնմանն ուղղվել է 115,300.63 մլն դրամ:

2019 թվականի տեղաբաշխվել են 3,343.05 մլն դրամի խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որից մուտքը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 3,302.16 մլն դրամ:

Կատարված գործառնությունների արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական գանձապետական պարտատոմսերը բնութագրող ցուցանիշները եղել են հետևյալը.

- միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 11.78% (2018թ.՝ 12.28%): Եկամտաբերության նվազումը պայմանավորված է եղել 2016 թվականին պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության նվազմամբ, որի միտումը շարունակվել է 2017, 2018 և 2019 թվականների ընթացքում: Եկամտաբերության նվազմանը նպաստել են նաև բարձր եկամտաբերությամբ պետական գանձապետական պարտատոմսերի մարումը և հետգնումը.
- մինչև մարումը մնացած միջին ժամկետայնությունը կազմել է 3734 օր (2018թ.՝ 3308 օր).
- մարման բեռի բաշխվածությունը մինչև 2047 թվականն է.
- շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 681 մլրդ դրամ (2018թ.՝ 588.1 մլրդ դրամ), որի 3.5%-ը (23.8 մլրդ դրամը) կազմել են կարճաժամկետ պարտատոմսերը, 32.1%-ը (218.6 մլրդ դրամը)՝ միջնաժամկետ պարտատոմսերը, 63.4%-ը (431.9 մլրդ դրամը)՝ երկարաժամկետ պարտատոմսերը և 1%-ը (6.7 մլրդ դրամը)՝ խնայողական պարտատոմսերը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի 99.5%-ը (677.7 մլրդ դրամ) ձեռք է բերվել ռեզիդենտների կողմից, 0.5%-ը (3.3 մլրդ դրամ)՝ ոչ ռեզիդենտների կողմից:

883.8 մլն դրամ հատկացվել է մուրհակների մարմանը՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.8%-ով կատարում:

Ֆինանսական զուտ ակտիվների հաշվին ֆինանսավորումը կազմել է -114.4 մլրդ դրամ՝ ծրագրված -73.4 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 2019 թվականին արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսված ՀՀ ռեզիդենտներին շուրջ 61.5 մլրդ դրամ վարկերից տրամադրվել է 35.7 մլրդ դրամը: Մասնավորապես՝ 34.5 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում՝ էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիությունը, թողունակությունը բարելավելու և էլեկտրաէներգիայի կորուստները նվազեցնելու նպատակով, որից շուրջ 22.5 մլրդ դրամը ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում տրամադրվել է «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ին՝ նախատեսված 47.6 մլրդ դրամի փոխարեն: Շեղումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերումների մասով դրանց պատրաստման ցիկլի չնախատեսված երկարաձգմամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է էլեկտրաէներգիայի գեներացման համակարգերի արդիականացմանն ուղղված մոնտաժման և շահագործման հանձնելու, ինչպես նաև ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման և սարքավորումների մատակարարումների ժամանակացույցերի փոփոխություններով: Բանակցություններ են ընթանում ծրագրի ավարտման ժամկետը մինչև 2021

թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգելու ուղղությամբ: Հաշվետու տարում կատարված վճարումներն իրականացվել են էներգաբլոկի ուսումնասիրման խորհրդատվական ծառայությունների, կատարված շինարարական աշխատանքների, մատակարարված սարքավորումների, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 5 մլրդ դրամ տրամադրվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում՝ նախատեսված 5.6 մլրդ դրամի դիմաց: Շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով, մասնավորապես՝ «Վանաձոր-1» ենթակայանում ընթացող վերակառուցման աշխատանքների դանդաղ տեմպերով, «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման ծրագրի շրջանակներում գլխավոր կապալառուի կողմից շինմոնտաժային աշխատանքներ չկատարվելու և հաշիվ-ապրանքագրեր չներկայացվելու, ինչպես նաև «Զովունի» ենթակայանի վերակառուցման գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցույթ չհայտարարվելու հանգամանքներով: Ծրագրերի շրջանակներում նախատեսվել է վերակառուցել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3», «Վանաձոր-1» 110 կՎ և «Զովունի» 220 կՎ ենթակայանները, ինչպես նաև մոտ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերը: Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են ծրագրի 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի, կապալառուների իրականացրած շինարարական աշխատանքների, սարքավորումների ներկրման, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում 390.7 մլն դրամ ենթավարկ էր նախատեսվել տրամադրել «Երևան ՋԷԿ» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ներին: Ծրագրի շրջանակներում նախատեսված չափորոշիչները հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են, և տրամադրվել է 382 մլն դրամ՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսվել է 2016-2021 թվականների ընթացքում ՎԶՄԲ-ից ներգրավել 30 մլն ԱՄՆ դոլար վարկ՝ «ՀԱԷԿ» (վարկի գումարի 28.5%) և «Երևանի ՋԷԿ» (վարկի գումարի 71.5%) ՓԲԸ-ների առևտրային վարկերի ու «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հանդեպ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի բնական գազի գծով պարտքի մասնակի մարման համար: Վարկից մասհանված գումարներն ուղղվել են «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների առևտրային վարկերի մարմանը, ինչպես նաև «Գազպրոմ

Արմենիա» ՓԲԸ-ի հանդեպ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի բնական գազի գծով պարտքի մասնակի մարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագրի շրջանակներում շուրջ 6.7 մլրդ դրամ ենթավարկ է տրամադրվել «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին, որը կատարվել է 99.7%-ով: Ծրագրի շրջանակներում «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն նախատեսում է Որոտան համալիրի (Տաթև ՀԷԿ, Շամբ ՀԷԿ, Սպանդարյան ՀԷԿ) էլեկտրական և մեխանիկական համակարգերի հինգ (բացառությամբ Սպանդարյան ՀԷԿ-ի) էներգաբլոկների ամբողջական վերականգնում: Աշխատանքների նպատակն է կայանների աշխատանքի արդիականացումն ու ավտոմատացումը՝ հնացած սարքավորումները փոխարինելով ժամանակակից սարքավորումներով, և էներգամատակարարման անվտանգությունը և կայունությունը՝ ապահովելով էլեկտրաէներգիայի արտադրությունը վերականգնվող էներգետիկ ռեսուրսների միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են Որոտան ՀԷԿ-երի համալիրի վերականգնման ծրագրի աշխատանքները իրականացնող կապալառուներին կանխավճարների վճարման, ինչպես նաև խորհրդատվական և ինժեներական ծառայություններ մատուցող կազմակերպության ծառայության դիմաց վճարմանը:

2019 թվականին շուրջ 1.2 մլրդ դրամ է տրամադրվել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.7%-ը, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակում շեշտը դրված է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավմանը, վերաֆինանսավորման և ներդրումային գործիքների տրամադրմանը: Բաղադրիչի շրջանակում նախատեսված է ֆերմերների համար ուսուցման կազմակերպում գործարար և ֆինանսական պլանավորման, գյուղատնտեսական առաջավոր փորձի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Ծրագրի շրջանակներում ԳՖԿ-ի միջոցով մասնակից ֆինանսական հաստատություններին տրամադրվում են ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով ուղղվում են փոքր տնտեսություն վարողներին, փոքր և միջին ձեռնարկություններին՝ իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով, Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի միջոցով՝ ներդրումների և փոխառությունների, ինչպես նաև տարբեր տեսակի կառավարման և տեխնիկական աջակցության տեսքով աջակցություն է տրամադրվում աղքատ գյուղական արտադրողների հետ ամուր կապեր ունեցող, գյուղատնտեսական արժեշղթայի շրջանակներում գործող փոքր և միջին մասնավոր

ընկերություններին: Նշված միջոցառման շրջանակներում միջոցներն ուղղվել են Գյուղական ֆինանսավորման կառույցի և Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի ներդրումային կապիտալի ավելացմանը:

Նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 19.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 109.4%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի և այլ վարկերի գծով նախատեսվածից ավելի չափով միջոցների վերադարձով, որոնք կազմել են համապատասխանաբար 5.3 մլրդ դրամ և 1.2 մլրդ դրամ՝ 21.4%-ով (928.1 մլն դրամով) և 112.2%-ով (637.1 մլն դրամով) գերազանցելով ծրագրված մուտքերը: Առաջին դեպքում շեղումը պայմանավորված է նախորդ տարվա թերի վճարված գումարի մարման, իսկ երկրորդ դեպքում՝ հիմնականում վարկերի ժամկետից շուտ մարման հանգամանքներով: 3.8 մլրդ դրամ վերադարձվել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից, որը 1.9%-ով գերազանցել է ծրագրված ցուցանիշը՝ պայմանավորված փոխարժեքի փոփոխությամբ: Շուրջ 5 մլրդ դրամ (100%) է վերադարձվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի գծով:

2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի արտաքին ֆինանսավորումը կազմել է 77.3 մլրդ դրամ՝ ծրագրված 139.2 մլրդ դրամի դիմաց: Արտաքին աղբյուրներից պակասուրդը 132.7 մլրդ դրամի չափով ֆինանսավորվել է փոխառու զուտ միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 67.5%-ը: Արտաքին վարկատուների կողմից տրամադրվել են 173.1 մլրդ դրամ վարկային միջոցներ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 72%-ը: Մասնավորապես՝ 91.8 մլրդ դրամ ստացվել է միջազգային կազմակերպություններից, 81.3 մլրդ դրամ՝ օտարերկրյա պետություններից: Արտաքին վարկերից 73.6 մլրդ դրամը (151.2 մլն ԱՄՆ դոլար) ներգրավվել է բյուջետային աջակցության շրջանակներում՝ 99.4%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, իսկ նպատակային վարկերի գծով փաստացի մասհանումները կազմել են 99.5 մլրդ դրամ (208 մլն ԱՄՆ դոլար)՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 59.8%-ը, որը պայմանավորված է ծրագրերի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման աստիճանով: Նախորդ տարվա համեմատ մասհանումների գումարն աճել է 12%-ով կամ 18.6 մլրդ դրամով: Մասնավորապես՝ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի գծով մասհանումներն աճել են շուրջ 11.1 մլրդ դրամով կամ 22.9 մլն ԱՄՆ դոլարով, իսկ դրանց մասնաբաժինն աճել է 0.6 տոկոսային կետով: Օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերի գծով մասհանումներն աճել են 7.5 մլրդ դրամով կամ 16.6 մլն ԱՄՆ դոլարով: Կատարված մասհանումների 95%-ը բաժին է ընկել չորս վարկատուների՝ Ռուսաստանի Դաշնությանը (50.6 մլրդ դրամ կամ 105.8 մլն ԱՄՆ դոլար), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (43.5 մլրդ դրամ կամ 89.9 մլն ԱՄՆ դոլար), Ասիական զարգացման բանկին (41.4 մլրդ դրամ կամ 85.6 մլն ԱՄՆ դոլար), Գերմանիային (29.1

մլրդ դրամ կամ 60.1 մլն ԱՄՆ դոլար): 2019 թվականի կատարված մասհանումների կառուցվածքում 46.1% են կազմել լողացող տոկոսադրույքով տրամադրված վարկերի գծով մասհանումները:

2019 թվականին արտաքին պարտքի մարմանն ուղղվել է 81.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 95.9%-ը: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է առանձին վարկային ծրագրերի գծով ստացումների կատարողականներով: Նախորդ տարվա համեմատ արտաքին վարկերի մարմանն ուղղված փաստացի վճարումներն աճել են 17.9%-ով կամ 12.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է եղել մի շարք վարկերի գծով արտոնյալ ժամկետների ավարտով և հերթական մարման ենթակա գումարի (մասնաբաժնի) ավելացմամբ, ինչպես նաև արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությամբ (մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը բյուջեում կանխատեսված 483.06-ի դիմաց կազմել է 486.55):

Մայր գումարի մարումների կառուցվածքում միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի մարումների մասնաբաժինը կազմել է 73.4% (59.9 մլրդ դրամ), օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերի մարումների մասնաբաժինը՝ 25.6% (20.9 մլրդ դրամ), իսկ 1%-ը (847.5 մլն դրամ) առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի մարումների մասնաբաժինն է:

Կատարված մարումների 76.8%-ը բաժին է ընկնում թվով 4 վարկատուների՝ Զարգացման միջազգային ընկերակցությանը (35%), Արժույթի միջազգային հիմնադրամին (16.6%), Ասիական զարգացման բանկին (13.4%), Ռուսաստանի Դաշնությանը (11.9%): Կատարված մարումների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի գծով վճարումների տեսակարար կշիռը կազմել է 9.7%, ֆիքսված տոկոսադրույքով վարկերի գծով վճարումների տեսակարար կշիռը՝ 90.3%:

2019 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետությունը միջազգային կապիտալի շուկայում հաջողությամբ տեղաբաշխեց 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի մարման ժամկետով արտարժութային պետական պարտատոմսեր՝ 4.2% եկամտաբերությամբ և 3.95% արժեկտրոնային եկամտաբերությամբ: Տեղաբաշխման ցածր եկամտաբերությունը հիմնականում պայմանավորված էր երկրի ռիսկի՝ ներդրողների կողմից տրված ցածր գնահատականով: Եթե 2015 թվականի մարտին թողարկված 10 տարի մարման ժամկետով պարտատոմսերի եկամտաբերության ձևավորման մեջ երկրի ռիսկի բաղադրիչը գնահատվել էր 551.8 բազիսային կետ (5.518 տոկոսային կետ), ապա նոր թողարկված նույն ժամկետայնությամբ պարտատոմսերի համար ներդրողների կողմից երկրի ռիսկը գնահատվել է 242.8 բազիսային կետ (2.428 տոկոսային կետ): Արդյունքն արտացոլում է Հայաստանի Հանրապետության բարելավված միջազգային ընկալումը: Սա Հայաստանի կողմից միջազգային կապիտալի շուկայում երրորդ արտարժութային պետական պարտատոմսերի թողարկումն էր, որի նպատակը 2020 թվականին մարվող եվրապարտատոմսերի

վերաֆինանսավորումն էր: Եվրապարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում պետական բյուջե է մուտքագրվել 231 մլրդ դրամ: Նոր թողարկմանը զուգահեռ Հայաստանը հայտարարել էր իր՝ 2013 թվականին թողարկված պարտատոմսերի հետգնում, որի արդյունքում հետգնվեց շրջանառության մեջ առկա ծավալի ավելի քան 80%-ը (402,415,000 ԱՄՆ դոլար կամ 189.8 մլրդ դրամ): Արդյունքում եվրապարտատոմսերի թողարկումից պետական բյուջեի զուտ մուտքը կազմել է 41.2 մլրդ դրամ, որն ուղղվել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում արտացոլվող կայունացման դեպոզիտային հաշվի համալրմանը:

Արտաքին ֆինանսական զուտ ակտիվների հաշվին պետական բյուջեի ֆինանսավորումը հաշվետու տարում կազմել է -55.4 մլրդ դրամ՝ 96.5%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Մասնավորապես՝ 57.8 մլրդ դրամ հատկացվել է Արցախի Հանրապետությանը՝ որպես միջպետական վարկ, որը կազմել է ծրագրով նախատեսված միջոցների 100%-ը: Վրաստանի կողմից ՀՀ նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը նույնպես ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 735.2 մլն դրամ: Ամբողջությամբ օգտագործվել է բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով նախատեսված 753.4 մլն դրամը, որն ուղղվել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարմանը: Հաշվետու տարում 2.4 մլրդ դրամ օգտագործվել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդի հաշվին՝ ծրագրով նախատեսված 417.2 մլն դրամի փոխարեն:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,513.4 մլրդ դրամ (7,324.2 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 53.6%-ը: ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՀ պետական պարտքի ցուցանիշներն աճել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար 4.9%-ով և 5.8%-ով: Դա պայմանավորված է եղել 2018 թվականի տարեվերջի և 2019 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքների տարբերությամբ. փոխարժեքը նվազել է 0.84%-ով՝ 483.75-ից մինչև 479.7: ՀՀ պետական պարտքում 3,278.7 մլրդ դրամը (6,834.9 մլն ԱՄՆ դոլարը) կամ ՀՆԱ-ի 50%-ը կազմել է ՀՀ կառավարության պարտքը, 234.7 մլրդ դրամը (489.3 մլն ԱՄՆ դոլարը) կամ ՀՆԱ-ի 3.6%-ը՝ ՀՀ ԿԲ պարտքը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 164.6 մլրդ դրամով (401.7 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով, որը կազմել է 6.4%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը նվազել է 11.8%-ով:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 5,787.4 մլն ԱՄՆ դոլար (2,776.2 մլրդ դրամ), որը նախորդ տարվա համեմատ աճել է 251.1 մլն ԱՄՆ դոլարով (98 մլրդ դրամով) կամ 4.5%-ով, իսկ դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի

կառուցվածքում նվազել է 1 տոկոսային կետով՝ կազմելով 79%: Ընդ որում, հիշյալ աճն արձանագրվել է ի հաշիվ ՀՀ կառավարության արտաքին պարտքի, որն աճել է 311.8 մլն ԱՄՆ դոլարով:

Արտաքին պարտքի հիմնական մասը՝ 2,541.5 մլրդ դրամը (5,298.1 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 234.7 մլրդ դրամը (489.3 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները: Մասնավորապես՝

- արտաքին վարկերի և փոխառությունների ծավալը կազմել է 2,067.3 մլրդ դրամ,
- ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 3.3 մլրդ դրամ,
- ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 467.1 մլրդ դրամ,
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված արտաքին երաշխիքների ծավալը կազմել է 3.8 մլրդ դրամ:

2019 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2018 թվականի 4915.2 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 5016.2 մլն ԱՄՆ դոլար: Սակայն նվազել է ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2018 թվականի 39.5%-ի դիմաց կազմելով 36.8%, ինչպես նաև ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2018 թվականի 104.6%-ից հասնելով 95.1%-ի:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 737.2 մլրդ դրամ (1,536.7 մլն ԱՄՆ դոլար), այդ թվում՝

- ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 677.7 մլրդ դրամ,
- ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 59.5 մլրդ դրամ,

Նախորդ տարվա համեմատ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող արտարժութային պետական պարտատոմսերի ծավալն աճել է 97.585 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 1,097,657.0 մլն ԱՄՆ դոլար, որից 97,657.0 մլն ԱՄՆ դոլարը կազմել են 2020 թվականին մարման ենթակա 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ արտարժութային պետական պարտատոմսերը, 500 մլն ԱՄՆ դոլարը՝ 2025 թվականին մարման ենթակա 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ արտարժութային պետական պարտատոմսերը, 500 մլն ԱՄՆ դոլարը՝ 2029 թվականին մարման ենթակա 3.95% արժեկտրոնային եկամտաբերությամբ արտարժութային պետական պարտատոմսերը: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող արտարժութային պետական պարտատոմսերի 11.1%-ը (121.7 մլն ԱՄՆ դոլար) գտնվել է ռեզիդենտների մոտ: